

Тем, что эта книга дошла до Вас, мы обязаны в первую очередь библиотекарям, которые долгие годы бережно хранили её. Сотрудники Google оцифровали её в рамках проекта, цель которого – сделать книги со всего мира доступными через Интернет.

Эта книга находится в общественном достоянии. В общих чертах, юридически, книга передаётся в общественное достояние, когда истекает срок действия имущественных авторских прав на неё, а также если правообладатель сам передал её в общественное достояние или не заявил на неё авторских прав. Такие книги – это ключ к прошлому, к сокровищам нашей истории и культуры, и к знаниям, которые зачастую нигде больше не найдёшь.

В этой цифровой копии мы оставили без изменений все рукописные пометки, которые были в оригинальном издании. Пускай они будут напоминанием о всех тех руках, через которые прошла эта книга – автора, издателя, библиотекаря и предыдущих читателей – чтобы наконец попасть в Ваши.


Правила пользования
Мы гордимся нашим сотрудничеством с библиотеками, в рамках которого мы оцифровываем книги в общественном достоянии и делаем их доступными для всех. Эти книги принадлежат всему человечеству, а мы – лишь их хранители. Тем не менее, оцифровка книг и поддержка этого проекта стоят немало, и поэтому, чтобы и в дальнейшем предоставлять этот ресурс, мы предприняли некоторые меры, чтобы предотвратить коммерческое использование этих книг. Одна из них – это технические ограничения на автоматические запросы.

Мы также просим Вас:


- **Не использовать файлы в коммерческих целях.** Мы разработали программу Поиска по книгам Google для всех пользователей, поэтому, пожалуйста, используйте эти файлы только в личных, некоммерческих целях.
- **Не отправлять автоматические запросы.** Не отправляйте в систему Google автоматические запросы любого рода. Если Вам требуется доступ к большим объёмам текстов для исследований в области машинного перевода, оптического распознавания текста, или в других похожих целях, свяжитесь с нами. Для этих целей мы настоятельно рекомендуем использовать исключительно материалы в общественном достоянии.
- **Не удалять логотипы и другие атрибуты Google из файлов.** Изображения в каждом файле помечены логотипами Google для того, чтобы рассказать читателям о нашем проекте и помочь им найти дополнительные материалы. Не удаляйте их.
- **Соблюдать законы Вашей и других стран.** В конечном итоге, именно Вы несёте полную ответственность за Ваши действия – поэтому, пожалуйста, убедитесь, что Вы не нарушаете соответствующие законы Вашей или других стран. Имейте в виду, что даже если книга более не находится под защитой авторских прав в США, то это ещё совсем не значит, что её можно распространять в других странах. К сожалению, законодательство в сфере интеллектуальной собственности очень разнообразно, и не существует универсального способа определить, как разрешено использовать книгу в конкретной стране. Не рассчитывайте на то, что если книга появилась в поиске по книгам Google, то её можно использовать где и как угодно. Наказание за нарушение авторских прав может оказаться очень серьёзным.

О программе
Наша миссия – организовать информацию во всём мире и сделать её доступной и полезной для всех. Поиск по книгам Google помогает пользователям найти книги со всего света, а авторам и издателям – новых читателей. Чтобы произвести поиск по этой книге в полнотекстовом режиме, откройте страницу `http://books.google.com`.


10




Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-13 10:59 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google


ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱՓՈՒՆԵՑԱՑԻ
Կարգաթիւ 40


Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-13 11:00 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google



Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-13 11:00 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google



Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-13 11:01 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google



Digitized by Google

Original from
UNIVERSITY OF MICHIGAN

Generated on 2015-03-16 06:01 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Zarbhanalian, Garegin.
Patmutiwn...
562

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

ՅՈՒՆԱՑ, ՀՌՈՎՄԱՑԵՑՒՈՑ

ԵՒ

ՀԱՐՑ ԵԿԵՂԵՑՒՈՑ

835 p.

Ի ՊԷՏՍ ՈՒՍՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ

ՎԱՐԺԱՐԱՆԱՑ



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

1856


Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-13 11:01 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ՑԻՀԱՏԱԿ

ՅԵՒՈՒՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ

ԵՒ ԵՂԲՕՐ ՆՈՐԱ ԲԱՂՏԱՍԱՐԱՑ

ՆԵՓԻՍԵԱՆՑ



Digitized by Google

Original from
UNIVERSITY OF MICHIGAN

Generated on 2015-03-16 06:03 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

STAND
ERTD
1b c
02105/9

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Քաղաքական պատմութեան ուսանողը վերջերեակայել ընտիր երկասիրութիւնք ազգերուն մէջ երևնալէն եաքը՝ մարդկային ազգին պատմութիւնն ամբողջացընելու համար՝ ընդհանուր մտաւորականութեան պատմութիւն մը կը պակսէր. և այս պակասը լեցընելու դիտմամբ ձեռք զարկինք համառօտ երկասիրութեանս։

Ազգային ուսման մը հարկաւորութիւնը վերայ իսկին աչերուդ կը սեպենք։ Վասն զի եթէ պատմութիւնը՝ իրաւամբ ամենահարկաւոր սեպուած է՝ իբրև ամենուսում դաստիարակ մը, անոր մտաւորական մասին գիտութիւնը՝ գրեթէ ալ աւելի հարկաւոր է միաք հրահանգելու համար. մանաւանդ զի առջինը՝ իր գոյութիւնն աս երկրորդիս պարտական է։ Իր քաջութեամբը նշանաւոր եղող ինքնակալ մը՝ բոլորովին մոռացութեան մէջ պիտի կրնար եթէ ժամանակակից կամ իրմէն ետքն եկող պատմագիր մը՝ իր հանճարովը անոր գործքերուն գարէ գար անցնելուն պատիւը չտար։ Ասով մտաւորական պատմութիւնն անհամեմատ գերազանցութիւն կառնէ քաղաքականին նկատմամբ. վասն զի անոր մնունդ և յատուկութիւն տուողն է։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 06:04 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Բայց ինչպէս և ուսկից սկսիմ գրութեան արուեստը։ — Ասիկայ անանկ հարցում մըն է՝ որուն պատասխանը շատերը չգիտնալով ուսումնական աշխարհի մէջ անօգուտ և անպիտան բեռներ յաշխատեր են, անանկ գրքերով որոնց չերևնալն աւելի օգտակար էր։ Վասն զի թէպէտ միտք և հանճար ամենուն տրուած են, բայց ինչպէս արուեստաւոր մը որ և իցէ գործքի ձեռք չզարկած հարկ է որ տեղեակ մը աշակերտի և անոր առաջնորդութեանն անասյ, սանդկ ալ գրութեան արուեստին մէջ. և ասիկայ է ՈՒսուցման կոչուածը, որ ամենահարկաւոր է միտք և սիրտ կրթելու համար։ Եւրոպայի մէջ բարեկարգ վարժարան մը չկայ՝ յորում աշակերտեալք՝ հին և նոր մատենագրաց գրքերը կարդալու և զանոնք քննելու եռանդ չըլլան. և ամենօրեայ փորձով տեսնուած է որ ուշքի մատիկրութեամբ և խնամով ըլլայ աս քննութիւնը՝ այնչափ աւելի բարգաւաճանաց կերպարանք առած է գրութեան արուեստը։

Սակայն աս գրուածոց վրայ քննութիւն ընելէն առաջ հարկ է գիրերնք ճանչնալ։ Ասոր համար ամենահարկաւոր է անոնց հեղինակացը ժամանակին, վարուցն ու գրուածոց վրայ տեղեկութիւն ունենալը. և աս գիտութեանց ամբողջութիւնն ընդհանուր անուամբ Մատենագրական պատմութիւն կամ նոյն ուսմանը նախաշաւիղ կը կոչուի։

Ասիկայ է ահաւասիկ մեր աս երկասիրութեան ալ նպատակը։ Համառօտ ոճով մը՝ բայց առանց կարևոր գիտելիքները դուրս թողնելու՝ աւանդել

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 06:04 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ազգերուս ընդհանուր մատենագրութեան պատմութիւն մը. ճանչցընել թէ ո՛րչափ անուանի մարդիկ երևցած են՝ որոնք իրենց հանճարովն ան-մահական անուն ստացան: — Յունաց ազդին մատենագրութեանը պատմութենէն սկսանք. ան նշանաւոր ազգին մասաւոր պատմութենէն՝ զոր մեր մէջ ալ անուանի հանճար մը Նայր Ա պայեակ ազնուական Խոսրովից[1] կոչած է: Իրաւ է որ մինչդեռ պեղատգեանք՝ Յունաց ազգին նախահայրը, ա-նանգութեան պատմածին համեմատ՝ անտառաց մէջ արմատներ ուտելով կապրէին, կրթեալ ազ-գի գաղթականութիւնք զիրենք բարբարոսութե վիճակէն դուրս հանեցին, բայց իրենց քաղա-քակրթութեան յառաջադիմութիւնը մանաւոր քայլ մը առած է, Ժողովրդեան բարուց յատուկ քայլ մը. և թէպէտ կրօնական գրութիւննե-նուն մէջ այլևայլ նմանութիւնք տեսնուին ե-գիպտական, փիւնիկեցի և ինչուան հնդկային գա-ղափարաց, սակայն պէտք է խոստովանինք թէ յունական և արևելեան մատենագրութեան մէջ մեծապէս տարբերութիւն կը տեսնուի: Ա-ման զի ուրիշ ազգերէ ժառանգած ճոխութիւննին այն-պիսի ճարտարութե մը իրենց տեսակցեցին, որ օտար ստացուածք ըլլալու հետքն ալ չերևնար:

Յունաց մատենագրութեանը պատմութենէն հետքը դրինք Հռովմեականը, իրենց գրականու-թեանը սկզբնաւորութենէն ինչուան Քրիստոսի ելոյթը գալը, յորում տէրութիւններնուն հետ

1 Գրիգոր Տղայ:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 06:04 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մատենագրութիւնին ալ ընկաւ, և քրիստոնէական սուրբ կրօնքն որ ինչուան ան ատեն սափսպուած էր կռապաշտութեան հետ պատերազմելու՝ յաղթանակելով երևցուց Սրբազան մատենագրութիւնը: Ասիկայ է մեր երկասիրութեան երրորդ մասին նիւթը: Բայց որովհետև սրբազան մատենագրութեան պատմութիւնն անմիջական վերաբերութիւն ունի աստուածաշունչ գրոց հետ, հարկ համարեցանք եկեղեցւոյ մատենագրաց վրայ չխօսած՝ համառօտիւ մը նոյն աստուածազգեցիկ գրքին վրայ ալ խօսիլ, թէպէտև առանց մանր քննութեան իջնելու:

Ասկէց վերջը ելլելու հատորներուն մէջ Ազգային, Մինչև գարու և Նոր ազգաց մատենագրութեանը վրայ պիտի խօսինք:

Յուսանք որ աս համառօտ և դոյզն աշխատասիրութիւնս իրեն վախճանին հասնելով՝ ազգային դպրոցաց մէջ բանասիրական ուսմանց յառաջադիմութեանը նպաստաւոր ըլլայ, և առաջնորդ մը՝ ազգերնուս գրաւորական ախորժակը կրթելու:

Իբրև նախաշաւիղ տեղեկութիւնք հարկ էր որ քանի մը բան ալ զուրցէինք այլևայլ տեսակ ոճերու վրայ. բայց որովհետև ուրիշ զանազան գրոց մէջ բաւական տեղեկութիւնք տրուած են անոնց վրայ, հոն կը խրկենք բանասէր ընթերցողը [1]:

1 Ճարտասանութիւն կոչի բոլոր գործ. — Աստիճան ճարտասանութիւն և բանասիրութիւն:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 06:04 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԴԳՈՐ ԱՊԱՃԵԱՆ
Կարգ ..... թիւ .....

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Բնական եակներն ազգեցութեան ունին զգայութեանց վրայ: Ա՛ս եակաց ստացուածքը՝ հանճարին կամ խելամտութեան իմացումները կը պրգռեն: Խելամտութիւնը՝ իր իմացմունքն իրեք կերպով կը գործածէ, և որոնք իր իրեք գլխաւոր յատկութեանցը կամ բարեմասնութեանց արգասիք են. և են Յիշողութիւն, Բան կամ Միտք և Երևակայութիւն: Հանճարը՝ կամ յիշողութեան ձեռքով իրեն իմացմանցը պարզ թուարկութիւնը կընէ, կամ բանիւը կը քննէ զանոնք, կը բաղդատէ և կարգի կը դնէ, և կամ եռևէ կըլլայ նմանութեանց երևակայութեամբ: Ասանկով մարդկային գիտութեանց ընդարձակութիւնը իրեք ընդհանուր մասն կը բաժնուի. այսինքն Պատմութիւն՝ որ Յիշողութեան կը վերաբերի, Իմաստասիրութիւն՝ որ Մտքէ առաջ կու գայ, և Բանաստեղծութիւն՝ որ Երևակայութեան արգասիք է:

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ ուսկից ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Պատմութիւնը դիպաց յիշատակութիւնն է. և դէպք՝ կամ Անցուածոյ են, կամ Մարդկան և կամ Բնութեան: Անտուածոյ վերաբերեալ դէպքերը՝

Generated on 2015-03-16 06:05 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

Սբբոցն պատմութիւնը կը կազմեն, մարդկանցը՝ վարդապետին պատմութիւնը, և բնութեան վերաբերածները մը Բնական պատմութիւնը:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա. ՍՐԲԱԶԱՆ. — Բ. ՔԱՂԱՔԱԿԱՆ. — Գ. ԲՆԱԿԱՆ

Ա. Սրբազան պատմութիւնը կը բաժնուի Սբբոցն և Եկեղեցական պատմութիւն, և պատմութիւն մարգարեութենից՝ յորում պատմութիւնը դէպքէն առաջ է:

Բ. Քաղաքական պատմութիւնը ընդհանուր պատմութեան այն մասն է՝ որուն հաւատարմութեանը յանձնուած են հնոց օրինակները, իրաց փոփոխութիւնքը, քաղաքական իշխանութեանց հիմունքը, և ւրաքանչիւր մարդկանց անունն ու համբաւը. և իրենց նիւթին համեմատ կը կոչուի կամ Բուն քաղաքական պատմութիւն և կամ Մասնաւոր պատմութիւն:

Գիտութիւնք՝ մարդկանց բնական լուսոյն և խորհրդածութեանցն արգասիք են: Անոր համար իւրաքանչիւր ոք անոնցմէ դիւրանալեան պէտքն իր գիտութեանց յառաջադիմութեանը վրայ գրած հռչակաւոր մատենին մէջ ըսելու թէ Աշխարհիս պատմութենն առանց իմաստնոց պատմութեան՝ Պոլիւֆիեմեայ արձանին կը նմանի՝ որուն մէկ աչքը փորուած էր[1]:

1 Կիկղոպեանց մէջ ամենէն հռչակաւորն էր Պոլիֆեմոս, զոր առասպելը՝ Պիսիդոնի և Թոոսայ յաւերժահարսին որդի կանուղէ: Հասակաւ հսկայ, յայնուէը ահարկու և գծնէպէմ. ոտան մէկ աչք մը ունէր ճակտին վրայ:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 06:05 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Քաղաքական պատմութիւնն ալ կրնայ տասը բաժանուիլ Յիշապակարան, Հնութիւն և Ամբողջ պատմութիւն: Թէ որ Աշմարիտ նմանութեամբ զուրցուած սեպհնք ան իսկքը՝ Թէ պատմութիւնը անցեալ ժամանակաց նկարն է, ասոր նկարին մէջ հնութիւնք ամենէն առեղն վրան կրողներն են, և բուն պատմութեան նկարն ալ՝ Յիշատակարանաց քննութեամբը՝ կամ ըսենք մատակարարած այլևայլ գոյներովը կազմուած է:

Գ. Բնական պատմութեան բաժանումն ալ կը կազմուի՝ բնութեան դիպաց զանազանութիւններէն. բնութեան դիպաց զանազանութիւնքն ալ՝ բնութեան վիճակին փոփոխութիւններէն: Բնութիւնը՝ կամ միակերպ և կանոնաւոր շրջան մը ունի, ինչպէս երկնային մարմոց, կենդանեաց և բուսոց նկատմամբ, կամ ստիպուած է իր կանոնաւոր շրջանէն խոտորիլ, ինչպէս հրեղէնքոց մէջ, և կամ այլևայլ կիրառութեանց յարմարիլ, ինչպէս տրոնոպիոյ մէջ: Բնութիւնն է ամէն բան գործող՝ կամ իր կանոնաւոր և սովորական ընթացքովը, կամ պարտաղրութեամբ և կամ հիւրասիրութեամբ:

Բնութեան հետ համաձայնութիւն, բնական պատմութեան առաջին մասը. վրիպանք կամ խոտորուածք բնութեան, երկրորդ մասը. Կիրառութիւն բնութեան երրորդ մասը: Ա՛ս վերջինս կրնայ կերպով մը քաղաքական պատմութեան մասն սեպուիլ. որով հետև արուեստք՝ ընդհանրապէս մարդկային հանճարոյ արգասիք են, և իրեն պիտոյից կամ վայելչից համար հնարուած:

Բնութեան հետ համաձայնութիւն ունեցող պատմութիւնը՝ իրեն այլևայլ նիւթերուն նկատմամբ կը բաժնուի՝ երկնային կամ Ասպեղոյ պատմութիւն, անոնց չարժման և երևման պատմութիւն, բայց առանց այլևայլ դրութեամբք և կարծեօք՝

Generated on 2015-03-16 06:06 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

պատճառները քննելու, որն որ Աստեղաբաշխութեան սեպհական ուսումն է: Պոփոռնիան օդերևոյթից, ինչպէս հովից, անձրևի, որոտմանց, կայծականց, և այլն: Պոփոռնիան երկրի և ծովու ինչպէս լերանց, գետոց, անտառաց, և այլն: Պոփոռնիան հանգոց, բոլոց, կենդանեաց: Ասոնց մէ եղքը կու գայ Տարբերց պոփոռնիան ինչպէս հրոյ, երկրի, օդոյ և ջրոյ:

Վրիպեալ կամ Հրեշաւոր բնութեան պատմութիւնն ալ կրնայ նոյն բաժանման տակն իյնալ. վասն զի բնութիւնը կրնայ այլևայլ զարմանալիք ցցընել յերկինս, յօդս, երկրիս վրայ, խորը, ծովուց յատակը, և այլն:

Կիւրաւեալ կամ Գործածուած բնութիւն պատմութիւնն ալ զանազան բաժանում ունի և ընդարձակութիւն, մարդկանց՝ Աստուածոյ, ճարտարութեանց և Զեռագործոց մէջ ըլլած այլևայլ կիրառութեանց համեմատ: Մարդկային ճարտարութեան արդիւնք մը չկայ՝ զոր կարենանք բնութեան մէկ արգասեաց հետ ունեցած վերաբերութենէն դուրս ձգել:

Ասոնք են ահաւասիկ մարդկային գիտութեանց պատմական մասը, որոնք Յիշողութեան կը վերաբերին, և իմաստասիրական ուսմանց առաջնին նիւթը կը կազմեն:

ՄԻՑՔ, ուսակից ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Իմաստասիրութիւնը կամ գիտութեանց՝ բանականութեան հետ անմիջապէս վերաբերութիւն ունեցող մասը՝ խիստ ընդարձակ է: Գրեթէ զպայտանաց գիտողութեան տակ ընկող նիւթ մը չկայ՝ որուն քննութիւնը նոր գիտութիւն մը չերևցընէ: Բայց այսչափ նիւթոց մէջ անանկներ ալ կան՝ ո-

Generated on 2015-03-16 06:07 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

լոնք իւրեանց հարկաւորութեամբը մեծ մտադրութեան արժանի են, և որոնց կրնան վերաբերիլ ամենայն գիտութիւնք: Անոնք են ԱՍՏՈՒԱԾ՝ որուն էութիւնը կը ճանչնանք արբազան և բնական պատմութենից օժանդակութեամբը. ՄԱՐԴ՝ որ իր գոյութեանը վրայ ստուգակայս չունի, խղճի կամ նեբքին զգայարանաց վկայութեան անխոտոր առաջնորդութեամբը. ԲՆՈՒԹԻՒՆ՝ որուն պատմութիւնը կը սորվինք արտաքին զգայարանաց օժանդակութեամբը: Արդ իմաստասիրութեան կամ բուն գիտութեան ընդհանուր բաժանում տուողներն են Ապոլոժ, Մարդ և Բնութիւն. որով իմաստասիրութիւնը կըլլայ՝ գիտութիւն Ապոլոժոյ, գիտութիւն Մարդոյ և գիտութիւն Բնութեան:

ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ կամ ԲՈՒՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

Ա. Գիտութիւն Ապոլոժոյ. — Բ. Գիտութիւն Մարդոյ. — Գ. Գիտութիւն Բնութեան:

Մարդկային հանճարոյն յառաջադիմութեան բնական է մանաւորին դէպ 'ի ստեսակն երթալ, ստեսակէն դէպ 'ի սեռն, մերձաւոր սեռէն՝ հեռաւորը, և ամէն քայլին մէկ գիտութիւն մը կազմել, և կամ արդէն կազմուորուած գիտութեան մը վրայ նոր ճիւղ մը աւելցընել: Բնութիւնը մեզի կը սորվեցնէ, և Արբազան պատմութիւնն ալ կը հաստատեցնէ թէ անոտհման, անաստեղծ իմացականութիւն մը կայ. ուրիշ իմացականութիւն մըն ալ կը նկատենք մարդկային մարմնոյն հետ միացած, որուն ստեղծուիլն ու վախճանն աչքերնուս առջեւ կը ներկայանայ. որով կենդանագրենք թէ իմացականութիւն մը կայ ստեղծուած և վախ-

Generated on 2015-03-16 06:07 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ձանաւոր, որ մարմին չունի, և անկէց՝ հոգւոյ վրայ ընդհանուր տեղեկութիւն մը կառնենք։ Ասկէ զատ՝ թէ հոգեղէն և թէ մարմնաւոր էակաց ընդհանուր յատկութիւնքն ըլլալով գոյաւորութիւն, կարելութիւն, աւականութիւն... կը քննենք ասս յատկութիւնքն և անով կը կազմենք գիտութիւնը։ Ասանկով յետադարձ կարգով մը նախ առջևնիս կելլէ Էակաբանութիւն, եաքն Գիտութիւն հոգւոյ կամ Հոգեբանութիւն. որն որ կը բաժնուի Գիտութիւն Ասպծոյ կամ բնական աստուածաբանութիւն, որուն Աստուած՝ արքութիւն կամ տէրգութիւն տուած է Յայտնութեամբ և յորմէ առաջ եկած է կրօնք կամ Բուն ասպծոյ գաբանութիւն, և անոր գործմամբը ձեւացած է Աստուածպաշտութիւն։ Գիտութիւն բարի և չար ոգւոյ կամ Հրեշտակաց և Դիւաց, ուսկից Ըղձութիւն և Սոգութիւն։ Գիտութիւն հոգւոյ, որն որ կրնայ աստղաբաժանութիւ՝ Գիտութիւն բանաւոր հոգւոյ և Զգայական հոգւոյ։

Բ. Գիտութիւն մարդոյ. Մարդկային գիտութեց բաժանումն իրեն կարողութեանցը Թուումէ է։ Մարդուս գլխաւոր կարողութիւնքն են Միտք կամ Իմացականութիւնն և կամք։ Իմացականութիւնը ակնաբ է ուղղել առ ճշմարտութիւն, կամքն ալ յԱռաքինութիւն։ Տրամաբանութեան կամ Բանական արուեստին նպատակն է առջինը, երկրորդն ալ Բարոյականէ։

Բանական արուեստը կրնայ բաժնուիլ Արուեսպ խորհելոյ, Արուեսպ ունելոյ առ իր գիտութիւն, և Արուեսպ հաղորդելոյ ցայնոսիկ։

Որչափ որ իմացականութիւնը գլխաւոր գործողութիւնք ունի, խորհելու արուեստն ալ նոյնչափ ճիւղեր։ Իմացականութեան մէջ չորս գլխաւոր գործողութիւնք կընշմարենք։ Ըմբռնողութ, Դա-

Generated on 2015-03-16 06:07 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

պոռն, Մխիթ և կարգ: Ըմբռնման կրնայ վերաբերիլ գաղափարաց վերջապէսութիւնը կամ իմացմանը. դատման՝ ընդհանրութենանց վերջապէսութիւնը. մտաց և կարգի ալ՝ հմազման և ցուցման:

Արուեստ ունելոյ առ իւր զնոյնհոգուդս կոչուածն ալ՝ երկու ձիւղ կը բաժնուի, այսինքն գիտութիւն յիշողութեան և գիտութիւն ըմբռնման յիշողութեան: Յիշողութիւնը՝ զոր առաջ իբրև պարզ կրաւորական կարողութիւն մը ենթադրեցինք, հոս իբրև նեղգործական կարողութիւն՝ որ խնդրոյ կրնայ հատարելագործուիլ, կամ քնական է և կամ արուեստական: Բնական յիշողութիւնը՝ մարդկային մարմնոյ գործարանացը արտադրութիւններէն առաջ կու գայ. իսկ արուեստականը՝ մեծաւալս կօժանդակուի ցոյցերով և նշանակներով:

Արուեստական պատկերները յիշողութեան ընդարձակ կը կազմեն: Առնցմէ մէկն է գրութիւնը, ուսկից առաջ կու գան կարդալու և գրելու արուեստները և ընդհանրագրութեան գիտութիւնը:

Մտածմունքնիս այլոց հաղորդելու արուեստն ալ կը բաժնուի գիտութիւն հաղարտութեան բանին, և գիտութիւն տպաւորութեանց բանին: Առջինը կը կոչուի քերականութիւն, իսկ երկրորդը Հռետորութիւն կամ ճարտասանութիւն, որունք այլևայլ բաժանումներ ունին:

Բարոյականը՝ զոր մարդկային գիտութեան երկրորդ մասը կոչեցինք, թէ ընդհանուր կրնայ ընդունիլ և թէ մասնաւոր: Կը բաժնուի բնական, Աւանդին և քաղաքական իրաւունք: Բնականն է գիտութիւն մարդկային պարտուց՝ իբրև առանձինն մարդ: Աւանդինն է՝ տեղեկութիւն այն պարտուց զոր ունի առ ընտանիս. իսկ քաղաքականն է՝ զոր ունի իբրև մաս ընկերութեան: Բայց բարոյականը անկա-

Generated on 2015-03-16 06:08 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

սալ ուսումն կըլլար՝ թէ որ սահմանէ առաջ քարո-
վէինք ան գիտութիւնը՝ որ հասարակ անուամբ
ընդհանուր բարոյական կը կոչուի:

Գ. Գիտութիւն բնութեան: Բնութեան գիտու-
թիւնն երկուքի կը բաժնենք բնական և Հափբէ-
րական, և որոնց զանազան ստուգաբանութիւնները
պիտի դնենք եռևի ցուցակին մէջ:

ՆՐԵՒԱԿԱՑՈՒԹԻՒՆ ուսկից ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Պատմութեան նպատակն է ներկայ եղող ան-
ձանց և կամ արդէն եղողներուն վարքն ընել. իսկ
բանաստեղծութեան յատուկ է երևակայեալ ան-
ձինք ստեղծել պատմականներուն նմանութեամբ:
Ասոր զարմանք չէ որ սահմանով՝ բանաստեղծու-
թեան բաժանումն ալ պատմականին հետ կընդ-
նանայ: Բայց բանաստեղծութեան այլևայլ տե-
սակներուն ևնիւթոց զանազանութեամբք՝ երկու
ամենաբնական բաժանմունք առջևնիս կելլեն:
Ուրդ որ և իցէ բանաստեղծութեան նպատակը
կամ սրբազան է և կամ արուսքին. բանաստեղծը
կամ անցած գացած բաներ կը պատմէ, և կամ զա-
նոնք իբրև ներկայ մէջ կը բերէ, և կամ վերացեալ
և իմանալի արարածոց ոգի կուտայ: Առնցմէ
առջինը կըսուի Պոփոական, երկրորդը Թափբոական,
իսկ երրորդը Անթոնական:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄԱԿԱՆ. — ԹԱՏԵՐԱԿԱՆ. — ԱՑԼԱԲԱՆԱԿԱՆ

Բանաստեղծութիւն ըսելով հոս ուրիշ բան չենք
հասկընար՝ բայց միայն գիհեղծիա: Եւ որովհետև
կրնայ ըլլալ առաջաբանութիւն առանց բանաստեղ-

Generated on 2015-03-16 06:10 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ծուլեան, և բանաստեղծուլիւն առանց տա-
ղաչափուլեան, ուսոի լաւ սեպեցինք՝ տաղա-
չափուլիւնն ոՀոյ մէկ տեսակ սեպելով հռետո-
րական արուեստին հետ միացընել. իսկ ընդհա-
կառակին՝ բանաստեղծուլեան մաս կը սեպենք
զՀարտարապետուլիւն, զերաժշտուլիւն, զնը-
կարչուլիւն, զքանդակագործուլիւն, զփորա-
գրուլիւն . . . որովհետև հաւասարապես Հըշ-
մարիտ է ըսելը թէ նկարիչ մը քերթող է, և
քերթող մը նկարիչ. արձանագործի և փորա-
գրողի մը Համար ըսելը՝ թէ քարի և պղնձի վը-
րայ նկարող է, և այլն: Քերթողը, նկարիչը, ար-
ձանագործը, փորագրողը, երաժիշտը կը նմանին
բնուլեան կամ կը ձևացընեն զանիկայ. բայց ա-
բանիս Հասնելու Համար մէկը խօսքը կը գործածէ,
մէկը զքար և այլն. իսկ երաժիշտը գործիք մը կամ
իր ձայնը:

Ինչպես բնուլիւն՝ ասանկ ալ բանաստեղծու-
լիւն իր կարգէ գուրս երևոյթներն ունի. ասոնց
կարգը սեպելու են որ և իցէ անկանոն երևակայ-
ուլեններ առաջ եկած արտադրուլիւնք:

Ա՛ս ամէն զուրցածներս աւելի բացայայտ կը տես-
նուի հետագայ ցուցակին մէջ:

Generated on 2015-03-16 06:11 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆ

ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ

ԽԵԼԱՄՏՈՒԹԻՒՆ *կամ* ՀԱՆՃԱՐ

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍՐԲԱԶԱՆ.
Մարդաբէութեանց պատմութիւն.
Եկեղեցւոյ պատմութիւն.
ԿԱՂԱՔԱԿԱՆ. *Հին և նոր*
Բուն քաղաքական պատմութիւն.
Յիշատակարանք.
Հնութիւնք.
Մատենագրական պատմութիւն.
ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՁԱՅՆ ԸՆԴ ԲՆՈՒԹԵԱՆ

Պատմութիւն երկնից.
” *Մէտէորայից կամ Օդերևութից.*
” *Երկրի և Ծովու.*
” *Հանքոց.*
” *Բուսոց.*
” *Կենդանեաց.*
” *Տարբոց.*

ԱՐՏՈՒՂՈՒԹԻՒՆՔ ԲՆՈՒԹԵԱՆ

Զարմանալիք երկնայինք.
” *Օդերևութականք.*
” *Երկրի և Ծովու.*

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 06:11 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

» Հանքայց .
» Բուսոյց .
» Կենդանեայց .
» Տարերայց .

ԿԻՐԱՌՈՒԹԻՒՆ ԲՆՈՒԹԵԱՆ

Արուեստք .

Մ Ի Տ Ք

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ .

Իակաբանութիւն .

ԳԻՏՈՒԹԻՒՆՔ ԶԱՍՏՈՒՆՈՑ

Բնական Աստուածաբանութիւն .
Տեսական Աստուածաբանութիւն .
Կրօնք , որոն պէղծմամբը՝
Աւելորդապաշտութիւն .
Գիտութիւնք բարի և չար ոգւոյ .
Կիսութիւն .
Մոգութիւն .

ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ
ԳԻՏՈՒԹԻՒՆՔ ԶՄԱՐԴՈՑ

Հոգեբանութիւն .
Գիտութիւն բանաւոր հոգւոյ .
» զգայական հոգւոյ .

ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Արուեստ խորհելոյ .
Ըմբռնումն .
Գիտութիւն գաղափարաց .
Դատումն .
Գիտութիւն առաջարկութեանց .

Generated on 2015-03-16 06:11 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ՉՕՐՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԵՐԵՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Բուն զօրութենական մեքենաբանութիւն.
Ձգաբանութիւն.
Չրազօրութենական մեքենաբանութիւն.
Չրաբաշխութիւն.
Նաւուղղութիւն.
Ծովային ճարտարապետութիւն.

ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ԱՍՏԵՂԱԲԱՐՀՈՒԹԻՒՆ

Տիեզերագրութիւն.
Երկնագրութիւն.
Երկրագրութիւն.
Չրագրութիւն.
Ժամանակախօսութիւն.
Աստուերաչափութիւն.

ԲՆԱՉԱՓԱԲԵՐԱԿԱՆՔ

Տեսաբանութիւն.
Բուն տեսաբանութիւն.
Ընդհայեցողութիւն.
Ընդօրինակութիւն.
Հայելաբանութիւն.
Ձայնագիտութիւն.
Ընչագիտութիւն.

ՄԱՍՆԱՒՈՐ ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Կենդանաբանութիւն.
Անդամաձննութիւն.
Պարզ.
Բաղադրեալ.
Մարդակազմութիւն.
Բժշկութիւն.
Առողջութիւն.

Generated on 2015-03-16 06:11 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

Ուղղավարժութիւն .
Մարմնակրթանք .
Ախտաբանութիւն .
Նշանաբանութիւն .
Բուժական ապաքինութիւն .
Վիրաբուժութիւն .
Դեղագործութիւն .
Արուեստ պայտառութեան .
Ձիավարժութիւն .
Որսորդութիւն .
Ձկնորսութիւն .
Հաւորսութիւն .

ԲՆԱԿԱՆ ԱՍՏԵՂԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Աստղագիտութիւն .
Գուշակական աստղագիտութիւն .
Բնական աստղագիտութիւն .
Օդերեւութաբանութիւն .
Տիեզերախօսութիւն .
Երկնախօսութիւն .
Օդախօսութիւն .
Երկրախօսութիւն .
Ջրախօսութիւն .
Բուսաբանութիւն .
Երկրագործութիւն .
Դարմանի պարտիզայ .
Հանքաբանութիւն .
Տարրալուծութիւն .
Բուն տարրալուծութիւն .
Մետաղագործութիւն .
Ալքիմիա .
Բնական մոգութիւն .

Generated on 2015-03-16 06:21 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ԵՐԵԻԱԿԱՅՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ · Սրբազան . – Աւտաքին .
Պատմական .
Վիպասանութիւն .
Մանրերգակ .
Վէրատեսութիւն .
Վէպ կամ Ռոման .
Թատերական .
Ողբերգութիւն .
Կատակերգութիւն .
Տաղերգութիւն .
Հովուերգութիւն . . .
Այլաբանական .
Այլաբանութիւն .
Երաժշտութիւն .
» Տեսական .
» Գործնական .
» Ձայնական .
» Գործիական .
Նկարչութիւն .
Արձանագործութիւն .
Քաղաքական Ճարտարապետութիւն .
Փորագրութիւն :

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 06:22 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

ՅՈՒՆԱՑ

ԳԼՈՒԽ Ա.

Յունական դպրութեանց պատմութեան գլխաւոր կէտերը:

Գլխաւոր վեց ժամանակ կամ դարագլուխ ունի յունական դպրութեանց պատմութիւնը:

ՆԱԽՆԱԿԱՆ կամ ԴԻՑԱՋԱՆՑ ԺԱՄԱՆԱԿ, որուն սկիզբը առասպելական, և վախճանն ալ Իլիոնի կամ Տրոյիոյ առմամբը կըլլայ: Ան գէպքն է որ Յունաց քաղաքական պատմութեան նախնական գոյութիւնը տուած է. վասն զի ինչուան նոյն աշխարհահռչակ պատերազմին ժամանակ պատմուած գէպքերուն շատը բոլորովին առասպելք են:

ԵՐԿՐՈՐԴ ԺԱՄԱՆԱԿԸ Է ՅՈՒՆԱԿԱՆ ԴԱՐ, Տրոյիոյ առմանէն ինչուան Սողոնի իշխանութիւնը, յորում կըսկսի յոյն դպրութեանց ծագումը բանաստեղծութեամբ: Թէպէտ շատ ազգաց մատենագրութեան սկիզբը քերթութեամբ եղած է, բայց Յունաց մէջ իր խանձարուրքէն զգալի յառաջադիմութիւն մը ունեցաւ բանաստեղծու-

Generated on 2015-03-16 06:22 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

թիւնը։ Սակայն դպրութիւնք միշտ անկատար կը սեպուին, ինչուան որ արձակ գրուածք չյաճախեն. և այս տեսակ գրուածքը՝ որչափ ալ քերթողութենէ պարզ սեպուի, ինչուան Սոլոնի ժամանակ անծանօթ էր Յունաց։ Այս օրէնսդիրը՝ Քրիստոսէ 594 տարի առաջ՝ իրեն սահմանադրութիւնքը տուաւ աթենացւոց. և նոյն տարուան մէջ յունական դպրութիւնք կերպարանափոխ եղան արձակ գրուածոց յաճախութիւնը։

Երրորդ ժամանակին է ԱՏՏԻԿԵԱՆ ԴԱՐ, Սոլոնէն ինչուան մեծին Աղեքսանդրի թագաւորելը։ Ան երրորդ ժամանակին մէջ իրեն գլխաւոր պայծառութիւնն ստացաւ յունական մատենագրութիւնը։ Յունաստան մանր իշխանութիւններ և պետութիւնք բաժնուած, ինչպէս քաղաքականութեամբ, նոյնպէս ալ ուսումնական բարգաւաճանաց իրարու նախանձընդդէմք էին. սակայն մանաւանդ կերպով մը Աթենքի, այն հռչակաւոր աշխարհաքաղաքին մէջ սկսան յաճախել դպրութիւնք. որով գրեթէ արուեստից և գիտութեանց կեդրոն մը սեպուեցաւ։ Արձակ գրող մատենագրաց մէջ առջինը կը սեպուի Հերոդոտ. և իրմէն ետքը Ճարտարախօսութիւնն, իմաստասիրութիւնն ու պատմութիւնն սկսան երևնալ, և քիչ ատենուան մէջ մեծ յառաջադիմութիւն ցցուցին։ Թատերական քերթութիւնն ան աստիճան պայծառութեան հասաւ, որ բանաստեղծութիւն ուրիշ սեռակներէն, քնարականն ու վիպասանականը, կարծես թէ խաւարեցան անոր լուսոյն առջև։ Սակայն երբոր Փերիկղէսի պատերազմով յունական անկախութիւնը վերցուեցաւ, ազատութեան հետ միկտեղ դպրութիւնք ալ նախնական փայլը կորուսին, մանաւանդ Փիլիպպոսի մահուընէն ետքը Աղեքսանդրի թագաւորութիւնը։

Generated on 2015-03-16 06:22 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

Աթէնք իր նախագահութեան փառքէն զրկուե-
լով, մակեդոնական տէրութեան երկրորդական
քաղաքներէն մէկը սեպուեցաւ, և առջի հանճար-
ները անկէ ետքը չկրցաւ ընծայել: Աղեքսանդրի
մահուընէն ետքը յունաստան Մակեդոնիոյ մարզ
կը սեպուէր, և իրեն յաջորդացը փառասիրու-
թեան պատճառաւ կտոր կտոր բաժնուեցաւ.
միայն Պաղոմեանք եկան՝ որոնց քով դպրութիւնք
ապաստանելու տեղ մը ունեցան: Եւ իրենցմէ
կըսկսի դպրութեանց չորրորդ դարաշրջանը՝

ԱՂԵՔՍԱՆԴՐԵԱՆ ԴԱՐ, որովհետև Աղեքսան-
դրիա քաղաքին մէջ՝ որ Պաղոմեանց աթոռանիստն
էր, սկսան ծաղկիլ դպրութիւնք և արուեստք,
ինչպէս չափաբանական և աշխարհագրական հըմ-
տութիւնք, և ամենէն աւելի բանագատութիւնը
(critique) շատ կատարելագործուեցան. և թէ-
պէտ Քրիստոսէ 146 տարի առաջ յունաստան
հռովմայեցւոց իշխանութեան տակ ընկաւ, սա-
կայն Աղեքսանդրիա քաղաքը իրեն պայծառու-
քեան փառքը չկորսընցուց: Բայց երբոր հռով-
մայեցիք կորնթոսի ալ տիրեցին, դպրութեանց
օգտակարութիւնը տեսնելով սկսան իրենք ալ
անոնց եռեւէն խնալ, և քիչ շատ յաջողութիւն
ալ ունեցան. որով իրենց մատենագրութեանն
ալ սկզբնաւորութիւնն եղաւ Քրիստոսէ 150
տարի առաջ:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԺԱՄԱՆԱԿԻՆ Է ՅՈՒՆ — ՀՌՈՎՄԷՈՒ-
ԿԱՆ ԴԱՐ, կորնթոսի առմանէն ինչուան մեծին
Կոստանդիանոսի օրերը (146 Քրիստոսէ առաջ —
306 Քրիստոսէ ետքը): Ա 450 տարուան մի-
ջոցին մէջ յունաստան՝ հռովմայեցւոց ընդար-
ձակած աւազ տէրութեան մէկ պզտի նահանգը կը
սեպուէր. և ան երկարատև գերութեան ատեն
ինչպէս ազգութեան ոգին, սանկ ալ մտաւո-

Generated on 2015-03-16 06:23 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

յական հանճարը դրեթէ բոլորովին կոյսընցուց։ Ան ժամանակ է հռովմայեցւոց Ոսկեդարը, ինչպէս եղքը իրենց մատենագրութեան պատմութեանը մէջ պիտի տեսնենք։

Վեցերորդ ժամանակն է Բիւզանդեան դար, կոստանդիանոսէն ինչուան Հալէոլոգ կայսրը կամ կոստանդնուպոլսոյ առումը Օսմանեանց։ Ան տեսներս յունաստան նոր թագաւորութեամբ մը բարգաւաճիլ ու ծաղկիլ սկսաւ, երբոր կոստանդիանոս իր թագաւորութեան աթոռը հռովմէն Բիւզանդիոն փոխադրեց. և թէպէտ առջի բերանը արքունեաց լեզու հռովմայեցւոց կամ լատին բարբառը կը սեպուէր, բայց եղքը ուղերորդ դարուն դարձեալ յունարէնն սկսաւ յաճախել։ Եղան այնպիսի կայսերք ալ որ մեծ ջանք ունեցան գիտութեանց յառաջադիմելուն. սակայն ջանքերնին բաւական չեղաւ ժողովուրդը իրեն ժմրութենէն արթընցնելու։

ԳԼՈՒԽ Բ.

ԱՌԱՍՊԵԼԱԽՈՍՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Յունաստանի առջի բնակիչը։ — Անոնց վիճակը Տրոյեայ պատերազմէն առաջ։

Յունաստանի առջի բնակիչը. — Յունաստանի առջի բնակիչքը պեղասգեանք կը սեպուին, հին ազգ և ժողովուրդ մը, որոնց ծագմանը վրայ շատ կարծիք ունեցած են բանասէրք։ Ասոնք անծանօթ ժամանակներ նախ Եւրոպայի քաղցրաշունչ կլիմային տակ կը բնակէին. և երբոր ակսան

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 06:23 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

բազմանալ՝ Թեսսալիա և Բէոտիա ալ ցրուեցան, Քրիստոսէ 1800 տարի առաջ։ Զանազան ցեղեր բաժնուած էին Պելազգեանք, որոնք գրեթէ մեկմեկէ բոլորովին անկախ, ոչ քաղաքական և ոչ կրօնական կապով մը իրարու հետ միաբանած էին. այլ ամէն ցեղին գլուխը մանաւոր չանք կընէր իր իշխանութեան հպատակ եղող ժողովրդոց քաղաքականութեանը, և իրենց մանաւոր անուն մը կու տար։

Ընդհանուր կարծիք է թէ Պելազգեանք՝ ի սկզբան բիրտ և կրթութենէ զուրկ ազգ մը եղած ըլլան։ Սակայն իրենց կրօնական գրութիւնը ունէին, և հռչակաւոր պատգամատեղի մը՝ ի Դոդոնէ. և կերևնայ թէ ժամանակին այլևայլ ցեղերուն մէջ մանաւոր պատիւ կամ քահանայապետութիւն ալ ունեցած ըլլան, և թէ ան պատճառաւ է Հոմերոսի զիրենք ապուածայկն կոչելը։ Աւանդութիւնը իրենց քանի մը ճարտարապետական շինուածք կընծայէ, և թէ հմուտ եղած ըլլան նաւարկութեան և զինուորական արուեստի և բերդեր շինելու և ամրացընելու, զորոնք մանաւոր անուամբ Լպիսա կը կոչէին։ Հաւանական է թէ այբուբեն ալ ունէին, թէպէտև տձև և անկերպարան։

Քրիստոսէ քսան և տասնըվեց դար առաջ՝ յունաստանի մէջ օտար գաղթականութիւններ սկսան յառաջել Եգիպտոսէն և Փիւնիկէէն, և պելազգեանց քաղաքակրթութեանը մեծապէս նպաստաւոր երևցան։ Առջի եգիպտական գաղթականութենէ առաջնորդը Ինաքոս եղաւ, Քրիստոսէ 1986 տարի առաջ որ փիւնիկեցւոց և եգիպտացւոց իրարու հետ ունեցած արիւնռուշտ պատերազմներէն ձանձրացած՝ հայրենիքը թողուց ու յունաստան առանձնացաւ. և հոն քա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 06:24 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ղաք մը կառուցանելով Ինաքիա կոչեց, որ ետքը փորձեցաւ իր որդւոյն և յաջորդին տեսնը Արգոս ըսուեցաւ, և հոն զանազան իշխողք նստան, որդւոց որդի, ինչուան Գելանոր. որուն տեսնը Դանաւոս Լիբիոյ կողմերէն ուրիշ գաղթականուի մը բերելով, իշխանութիւնը ձեռքէն յափշտակեց (1572)։ Դանաւոսի դստերքը սորվեցուցին Պելասգեանց Տեմոսփուրեան հանդիսատօնքը, որ Եգիպտոսի մէջ Ի·պատիւ Խսիսի կը կատարուէին. իսկ իրենք սահմանեցին որ Դեմետրեայ կամ երկրագործութեան դիցուհւոյն համար ըլլուին. ասկէ զատ՝ Աթենասայ և Ափրոդիտեայ պաշտամունքը մտուցին։ Կրօնական դիտութիւններէ զատ ուրիշ քաղաքակրթական արուեստներու ալ տեղեկութիւնը տուին անոնց։ Եւ որովհետև ան տեսնն սկսան Արգոսի բնակիչքը Դանայեանք կոչուիլ, Պելասգեան անունը Արկադիոյ բնակչացը սեփականեցաւ։

Երկու տարի ետքը կեկրոպս՝ Եգիպտոսի Սայիս քաղաքէն ելլելով յունաստան հասաւ, և իրեն իշխանութեան աթոռը Ակաէսսի մէջ դրաւ, որ Պելասգեանց մեկ մասնաւոր ցեղին բնակութիւնն էր, զորոնք հաստատեր էր Ովգիգես (1796) և Ելևսիս քաղաքը կառուցեր։ Իսկ կեկրոպս Ատտիկէի մէջ առանձին իշխանութիւն մը սահմանեց, բնակիչքը ժողվելով՝ զանազան դասաւորութիւններ դրաւ անոնց մէջ, Արամազդայ սեղան մը կառոյց, և անոր դստեր՝ Աթենասայ պաշտօնը աւելի յաճախեց, ոստայնանկութիւնն ու ձիթենւոյ մշակութիւնը սորվեցուց։

Կեկրոպսէն ետքն է կադմոս եգիպտացին (1550), որ կրեաէ, Թասոս, Սամոթրակէ և Թրակիան անցնելով, յունաստան եկաւ ու կադմէա քաղաքը շինեց, որ ետքը Թեբէ կոչուեցաւ։ Յու-

Generated on 2015-03-16 06:24 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

նաստանի համար ամենէն աւելի օգտակար՝ Կադմոսի գաղթականութիւնն եղաւ. որովհետեւ ինքը բերաւ փիւնիկեցւոց այբուբենը և Յունաց լեզուին յարմարցուց, և շատ գլխաւոր և էական արուեստներու տեղեկութիւնը տուաւ անոնց: Ա՛ս օգտին գլխաւոր պատճառն ան էր որ ուրիշ գաղթականք՝ իրենց ապաւինի տեղ մը փնտռելու համար՝ կամ բռնութիւններէ ձանձրացած էկան յունաստան. իսկ Կադմոսի և հետն եղող փիւնիկեցւոց վախճանը՝ իրենց շահավաճառը տարածել էր:

Ա՛յսպիսի վիճակի մը մէջ էր յունաստան՝ երբոր Քրիստոսէ 1542 տարի առաջ Դեւկալիոն անունով մէկը այն անդորը խաղաղութիւնը տակնուվրայ ըրաւ: Ինքը քանի մը ժողովրդոց գլուխ կենալով՝ պառնասոս լեռան վրայ Լիգորեա քաղաքը շինեց, ուսկից իր հպատակները մօտակայ աշխարհաց մէջ ցրուելով՝ փոկէացիք և Դորացիք ըսուեցան: Եաքը Դեւկալիոն թեսաղիոյ ալ տիրելով՝ Ամֆիկտիոնեան ըսուած դաշնակցութիւնը հաստատեց, և նոր օրէնքներ և քաղաքականութեան իրաւունք սահմանելով՝ իր Ելլենա գաստեր անունովը բոլոր ան ժողովուրդը Ելլադացիք կամ Հելլենացիք կոչեց: Ի սկզբան Պելազգեանք և Հելլենացիք մէկմէկու հետ թշնամութեամբ էին, և Հոմերոս կըսէ թէ Իլիական պատերազմին առեն Պելազգեանցմէ ալ կը գտնուէին Պրիամոսի օգնական Յունաց դէմ մարտնչելու: Բայց որովհետեւ երկայնժամանակեայ պատերազմէ մը եաքը Ելլադացիք, Տրոյիոյ իշխեցին, անկէ վերջը նաև թեսաղիոյ, Պելոպոնեսի և մերձակայ ազգաց ալ տիրելով՝ բոլոր ան տէրութիւնքը Ելլադա կոչեցին, և օր օրուան վրայ թէ իշխանութեամբ և թէ կրթութեամբ զարմանալի յառաջադիմութիւն ունեցան:

Generated on 2015-03-16 06:25 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ԳԼՈՒԽ Գ.

ՅՈՒՆԱՑ ՍՐԲԱԶԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ

Լինոս. — Պամֆոս. — Ոզիմպոս. — Եմոլպոսի. — Մելամպոս. — Որֆեոս. — Մուսա. — Պապգամախօսի. — Թոռն կամ Տրիոմֆիպոս։

Գեղեցիկ գպրութեանց մէջ իրաւամբք նախապատիւ սեպուող բանաստեղծութիւնը՝ Յունաց դիւցազանց ժամանակներն սկսաւ ծագիլ մէջերնին։ Առջի բերան աս արուեստը պարի և երաժշտութեան ընկերմը սեպուած էր, վասնզի ու զգայուն սրտի մը զեղմունքը բացատրելու համար. բայց քիչ ատեն անցաւ, սկսան յոյնք իրենց քաղաքակրթութեանը գլխաւոր օժանդակ սեպել։ Քուրմերն ալ այլևայլ մոլութիւնք կը շարադրէին քերթողութեամբ, որպէս զի ժողովուրդը՝ աստուածոց ծննդեամբ ատենները երգէ. և ան եղաւ սկզբնապատճառ մը իրենց ամենուն առջև ունեցած մեծարանացն ու պատուոյն։

Յունական գպրութեանց բազմահռչակ Մուսայքը Թեսպիոյ մէջ երևցան, որոնց սրբավայրը սեպուած էին Ոլիմպոս, Ելիկոն, Պառնասոս և Պինդոս, մերձակայ լերինքը. և հոն նախ գանուեցան քնարն ու տաւիղը։ Թրակիոյ և Բիսալտիոյ, այս երկու գաւառաց մէջ, ապրիլ, գեան, բլուր կամ անտառ մը չկայ, որոնց բանաստեղծականը լեզուն նոր կամ յափշտակիչ յատկութիւն կամ անուն մը տուած չըլլայ. հոն կը խոխոջար Պենէոս գետը, հոն էր Տեմպեայ հովիտը և Ոսսա

Generated on 2015-03-16 06:25 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

լեռը. Ապոլոն, բանաստեղծից և երաժշտաց հայրը, երբոր երկնքէն աքսորուեցաւ, հոն՝ ի Թեստալիա հաստատեց իր բնակութիւնը, և խաղաղութիւն սիրող խաշնադարման հովուաց մէջ երջանիկ կեանք մը անցուց. և հոն Տիտանեանք կամ Հսկայք՝ աստուածոց դէմ պատերազմ բացին:

Նախնական երգեր. — Ինչպէս Յունաց մէջ Ադամմինոնէն և Աքիլլեսէն առաջ քաջեր երևցած են, սանակ ալ իրենց արուեստները գովող քերթողներ պակաս չէին: Անոնց շատին գրուածքը չկայ. եղածներուն ալ հարազատութեանը վրայ քննաբանք կը տարակուսին: Ա՛ս տեսակ քերթողաց մէջ գլխաւոր կը սեպուի

ԼԻՆՈՍ կաղքիացին, որ ըստ առասպելոյ՝ Ապոլոնի առաջին երաժշտին ու կայլևսպէ Մուսային ուղին էր. և իրեն տանը տարուէ տարի կը կատարէին Թեբացիք: Ոմանք ալ կըսեն թէ Արգոլիսի մէջ երիտասարդ հովիւ մըն էր Լինոս, և վայրենի շները զինքը պատառտեցին: Աւոբէոս յոյն մատենագիրը իր հովուերգութեանցը մէջ՝ Լինոսի քերթուածներէն տասուերկու տող ա՛ւանդած է մեզի. և ուրիշ 200 տող քերթուածմըն ալ մէջ կը բերէ ապոլոնիոս ղօրունեան վրայ: Բայց կերևնայ թէ Լինոսի քերթուածները չըլլան անոնք: Պաւսանիաս ալ կըսէ թէ Լինոս՝ Ընուրհայց (խարխիայք), Անահտայ ու Պիսիդոնի վրայ քերթուածներ շարադրած ըլլայ:

Լինոսի աշակերտն էր ՊԱՄՓՈՍ անուանեալն, որուն համար կըսեն թէ հնչակաւոր քերթող էր. և անոր ոտանաւորներէն երկու տող կը յիշատակէ Փիլոստրատ: Ի պատիւ Լիկոմիդեան ազգատոհմին այլևայլ երգեր շարադրեր էր Պամփոս, որոնք որդւոց որդի Եվմոլպեան խորհրդատո-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 06:26 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նից քրմապետութեան պաշտօնն ունէին։ Ա ե ր գ ե ր է ն մէկը Սիրոյ վրայ էր, ուրիշներն ալ Ընորհաց, Անահտայ ու Պղուտոնի վրայ։

ՈՂՒՄՊՈՍ միւսացի, Մարսիաս քերթողին աշակերտը, որ երաժշտութիւնը կատարելագործեց իրեն հնարած մանաւոր ձայնական գործիքներովը։ Անոր աշակերտքն էին Կրատէս և Հերաքս։

Առնցմէ ետքը կու գան երկու ԵՒՄՈԼՊՈՍՔ. որոնցմէ երէցը Թրակացի էր ու Ելևսեան խորհրդաւոնքը գաւոնքը ինքը հաստատեց. իսկ կրտսերը Մուսայից որդի, և Ելևսեան փոքր խորհրդաւոնքը սահմանեց՝ ի քաւութիւն Հերակլէսի որ Նեսոսի արիւնը թափեր էր։ Դիոդորոս սիկիլեացին ասվերջինին՝ ի պատիւ Դիոնիսեայ չինած երգերուն մէկ տողը մէջ կը բերէ. Սուիդաս ալ կը յիշատակէ թէ Դեմետրեայ խորհրդաւոնից հանդէսներուն սկզբնաւորութեանը վրայ 3000 տող քերթուածիւն մը շարադրեր է։

ՄԵԼԱՄՊՈՍ, Ամիթաւոնի որդին, որ քերթող, երաժիշտ, գուշակ ու բժիշկ էր միանգամայն. Արգոլիսի մէջ Դիոնիսի կամ Բագոսի տօնը հաստատեց, ու բագոսեան ըսուած ընթացքը կարգի դրաւ, որ իրեք տարին մէյմը կը հանդիպէր։ Կըսեն թէ ինքը և իր եղբայրը Բիանոէս հնարած ըլլան հաւահարց ըղձուածիւնը. և թէ իրենց ցեղէն էր Ամֆիարաւոս, զորն որ Հոմերոս կը յիշատակէ, իբրև Արամազդայ և Ապոլոնի սիրելի։

Առնցմէ շատ հնոց մէջ սրբազան երգիչք կը յիշատակուին Փիլամմոն գեղվացի, Տամիրիս Թրակացի, Մելանոպոս կումացի, և Պաղեփատ՝ զոր Սուիդաս՝ աթենացի կը համարի։

Բայց առնցմէ շատ աւելի համբաւաւոր քերթող եղաւ

ՈՐՓԷՈՍ որ Թրակիոյ Լէպեթրէա քաղքէն էր,

Generated on 2015-03-16 06:26 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

1400 տարի Քրիստոսէ առաջ, Էագրոս Թագաւորին ու Կալլիոպէ Մուսային որդին: Ինքը կը սեպուի Յունաց քերթողահայրը և անոնց դիցաբանութեան կարգաւորող: Մարդազոհերը խափանեց, ու արգիլեց Թրակիոյ մէջ եղած ժառանգութեան համար արիւնահեղ պատերազմները: Երբոր Եւրիդիկէ իր կինը մեռաւ, քնարը ձեռքը դժոխք ինջաւ, ու կատաղիքը՝ երգովը քաղցրութեամբն զմայլեցընելով, կրցաւ իր ըծակիցը անոնց Թագաւորութեան սահմաններէն հեռացընել: Կը պատմեն թէ մահուընէն ետքը՝ Որփէոսի քնարը Թրակացիք Հեբրոս գետը ձգեցին, և ջրին աղիքներն առին Լեսբոս կղզին ձգեցին, որ ետքը քնարերգակ քերթողաց հայրենիք և ուխտատեղի սեպուեցաւ: Անուանի երաժիշտ ալ էր Որփէոս, և իր քերթուածոցը մէջ ըստ մեծի մասին ուղիղ Աչմարտութիւնք կը սեռնուին աշխարհքիս առեղծմանն, Աստուծոյ գոյութեան, հոգւոյ անմահութեան վրայ. և հաւանական կերևնայ թէ եգիպտացւոցմէ սորված ըլլայ ան բաները, որոնց քիչ շատ սուրբ գրոց մէջ աւանդած Աչմարտութիւնքը ծանօթ էին: — Որփէոսի անուամբը գտնուած քերթուածներուն շատը թէ որ իրենն ալ չըլլան, բայց կերևնայ թէ իր ժամանակացոցը մեկուն են:

Ե. Աւգեայ նաւահանգիստի վրայ դիւցազներգակ քերթուածներ մը 1384 տող: Այս քերթուածը ոմանք Որփէոսի կրօտոնեցւոյ կընծայեն, որ սիկիւեան դպրութեանց ժամանակի քերթողներէն մէկն էր:

Զ. Ութսունըրուերը երգ այլևայլ նիւթոց վրայ, վեցաչափ դիւցազնական ոտքով: Այս քերթուածէն հեղինակ ոմանք Պիսիստրատեայ ժամանակակից Ոնոմակրիտոս անունով քերթող մը կը համարին, ոմանք ալ Խպիաս իմաստակը:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 06:26 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Գ. Յաղագս տաճարին. վարդապետական քերթուած դիւցազնական չափով, 768 տող, որուն մէջ քարանց ու ադամանդից յատկութեանը վրայ կը խօսի:

Դ. Յաղագս ջրծխան երկրի, համառօտ քերթուած մը. զոր ոմանք Հերմէս Տրիսմեգիստոսի կընծայեն:

ՄՈՒՍԱՅ. — Ինչպէս Որփէոսի համար ըսինք, Մուսայի վրայ ալ զուրցուածներուն շատը առասպելախառն, շատն ալ ստուգութեան կարօտ են: Պղատոն կըսէ թէ Սիլենէի որդին էր Մուսա, ուրիշներն ալ Լունոյ զաւակ կը համարին, ոմանք ալ յաւերժհարսի մը տղայ կը սեպեն: Հայրենեացը վրայ ալ շատ տարակոյսներ ելած են. ոմանք Աթենքի մէջ ծնաւ կըսեն, ոմանք Եղեսիա, ուրիշներն ալ Աստիկէ. աւելի հաւանական է թէ Թրակացի էր Մուսա, ու հարուստ և ազնուական տոհմէ. որունք ցեղով աստուածոց նուիրուած ու ժառանգութեամբ քրմապետութիւն կընէին: Ոմանք Որփէոսի աշակերտ կը համարին զՄուսա. ուրիշներն ալ՝ թէ քոյն Մուսայքը Որփէոսի մահուընէն ետքը անոր գնալը ծովեզերքը բացը ձըգած տեսնելով Մուսայի յանձնեցին: Երկար աւտեն Աթենքի մէջ բնակեցաւ Մուսա. և հոն իր շարադրած երգերովը Որփէոսի հաւատար և կամանկէ ալ մեծ սեպուեցաւ: Աստեն անցնելէն ետքը իր քերթուածքը մէջ այլևայլ փոփոխութիւնք մտան, նոր բանաստեղծութեան՝ յունական ըսուած քերթուածեան հետ խառնուելուն պատճառաւը. սակայն մեզի և ոչ անոնք հասան, բայց եթէ քանի մը մանր մունր երգեր, որունց հատազատութեանը վրայ կը տարակուսին քննադատք:

Հին մատենագրաց մէջ յիշուած Մուսայի խոտագիրներն են

Պապիաս. Հերոդոտոս կաւանդէ թէ Մուսա

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 06:27 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մարգարէացեր էր Յունաց Սալամինայի պատերազմին յաղթութիւնը: Ասոր նման ուրիշ երկու իրեք տուներով պատգամներ կան Մուսայի անուամբը:

Մուրգոյնոնի, որոնք կրօնական քերթուածներ էին:

Երգ ընդդէմ Խօնոնեանց, զորոնք Արիստոփան և Եւսաստիոս ալ կը յիշատակեն:

Երինագոնք. սասեղաբաշխական քերթուած մը:

Ծնոնդք ասպուածոց. (Théogonie).

Յաղագս պապերազին Տիփանեանց, որուն երրորդ գիրքը միայն կը յիշատակուի:

Խրագք ա՝ որդին Ե-մ-կոս, բարոյական 4000 տող քերթուած, ինչպէս Սուիդաս կըսէ. գուցէ իտրհրդական ծաները լաւ կերպով կատարելու վարդապետութիւնք էին:

Կրագիր կամ Խառն-ուրք: Սերուխոս միայն կը յիշատակէ աս քերթուածը. և կըսէ թէ Մուսայի առաջին երկասիրութիւնն է, զոր ոմանք Որփէոսի կը համարէին:

Ի պատիւ Դիմէթրէայ երգ մը, որուն համար Պաւսանիաս կը զրուցէ թէ Մուսայի անուամբը եւած քերթուածներուն մէջ ամենէն հարազատը և իրեն հանձարոյն արժանաւոր աս երգն է:

Ի պատիւ Հնծանէան ապուծոյն կամ Դիոնիսոսի ուրիշ երգ մը:

Ի վերայ Տէոպրոպեանց:

Ուրիշ պատգամախօսներու և քրմաց անուամբը երգեր ալ կը յիշատակուին, որ աս ժամանակներուս կիյնան. ինչպէս Ամփիկտիոն ակառնանացի, Դիոպիթէս, Քսենոկրէս, Փեմոնէ՝ գելփական մեհենին առաջին գիտուհին, որ վեցաչափ դիւցազնական ոտքը (hexamètre) ծաղկեցուց. Սիբիլլայք, և այլն:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 06:27 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Տրոյիոյ պատերազմէն երկու կամ իրեք գար առաջ կը սեպեն ոմանք նաև Թոթ կամ Հերմէս Տրիամեգիստոս (Եռամեծ) եգիպտացին, որուն համար կըսեն թէ առջի գիր գտնողն եղաւ. և ուրիշ շատ հարկաւոր գիւտեր հանձարեց։

ԳԼՈՒԽ Դ.

ՀՈՄԵՐՈՍ ՓԻԼԹՈՂԱՀԱՑՐ

Ինչ բանաստեղծութիւն. — Հոմերոս. — Իր վէպ եղած կարծիները. — Իլիականն ու Ոդիսականը. — Հոմերոսի ուրիշ գրուածները։

Ինչ բանաստեղծութիւն. — խորհրդական բանաստեղծութիւնը (poésie mystique) Յունաց առաջապետական ժամանակաց մէջ՝ քերթողի մը սիրելի պարապմունքն էր. աստուածոց փառքը երգելով՝ ժողովրդեան մը բարոյականութեան և հանգստութեան պատճառ ըլլալ, և զանիկայ մուտք և տխուր անտառներուն մէջէն հանելով՝ հրահանգել և ընդհանրացընել։ Անոր քնարին ձայնովը կրթուած ժողովուրդը՝ քիչ առեն անցնելէն ետքը խորհրդական բանաստեղծութենէն ձանձրանալով, աստուածոց թարգման և անոնց բարեկամ սեպուող քերթողը սոխպուեցաւ թողնել իր գերագոյն պաշտօնը, և երգովքը զբօսեցընել ժողովուրդը։ Թէ թագաւորաց և թէ հասարակ ժողովրդեան հաճոյական զբօսանք մը եղաւ ասիկայ. որով քերթողը մեծարգոյ պաշտամամբ մը փառաւորուած՝ քալքէ քաղաք, գաւառէ գաւառ կանցնէր, խուռն բազմութիւն մը ունկնդրաց և գովչաց հե-

Generated on 2015-03-16 06:27 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ոը պորացընելով : Ասիկայ է ահաւասիկ նոր բա-
նաստեղծութիւնը :

Հին քերթողութեան խանձարուրք թեսսալիա
եղաւ . իսկ նորը Յունիոյ զաւարթ երկինքին տակը
ծնաւ ու պայծառացաւ : Քաղցրաշունչ կլիմայ
մը , կիրթ ազգաց մերձաւորութիւն , քնաքէյց
հարստութիւնը և անդորրաւէտ խաղաղութիւնը ,
մինչդեռ եւրոպակողմեան յուշատետանը խռովու-
թեամբք կը յուզուէր , իրեն բարգաւաճանացը
մեծապէս ատար եղան : Նոյն գաւառին մէջ քեր-
թողաց վարժարան մը հաստատեցին , որոնց պարտ-
քըն էր յօրինել կամ յղկել ան երգերը՝ որոնք
քաղաքական կամ կրօնական հանդիսից մէջ պի-
տի երգեցուէին : Ա՛ս վարժարանէն ելան ան քեր-
թողքը որ առեն անցնելեն տոքը Հպաներգուք
կամ Ռափսոտք (Rhapsodes) կոչեցան , և որոնք
“ի սարդենի մահակէ պար գոլով , կըսէ Մա-
գիստրոս , երգէին զհոմերական քերթուածն ,, :

Դիցաբանութիւնը , իբրև անսպառ գանձարան ,
այլևայլ նիւթեր կը մատակարարէր քերթողաց ,
իրենց երկասիրութիւնքը հաճոյ և փոփոխական
ընելու . վասն զի կրնային ինչուան աստուածոց
ծնունդը կամ աշխարհարարութեան սկիզբը եր-
գել : Տիտանեաց և Հսկայից՝ աստուածոց դէմ
տուած պատերազմունքը կերգէին , և կիսաս-
տուածոց քաջութիւնքը դրուատելով Յունաց
մէջ եղած երևելի ազգատոհմներուն ծագումը
անոնցմէ կը ցցընէին : Ան առեններէրը շարա-
դրուած են Հերակլեանք , Արգոյ նաւորդք , Թէսէյ-
եանք , Մարք Եպիգոնեայ ըսուած վիպասանա-
կան քերթուածքը , որոնք միանգամայն Յունաց
դիցաբանական պատմութիւնքն են : Ա՛ս առաս-
պելախառն գէպքերը մինչև՛ ի տրոյական պատե-
րազմը հասցընելով՝ ռապսոդեաց կամ վիպոյն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 06:28 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ընդան կը կոչէին: Իսկ Տրոյիոյ պատերազմին վերաբերեալ ամէն դէպքերը, Հեղինեայ յափշտակումնէն մինչև Ոդիսեւսի մահը կը կոչէին ընդան պրովական: Ա՛ս ընդանին կը պատկանին նաև Կիպրեան, Պափէրպ կամ Ա՛եր՛ոն Տրոյիոյ, Վախճան Իլիանոյն Յունոյ որ առին պիէին ըսուած քերթուածները:

Այս քերթողութիւնը իրաւամբ կրնանք Նոր կամ Արտաքին սեպել, առջի հնոյն հետ բաղդատելով. որովհետև լինչպէս ըսինք՝ վախճանը բոլորովին տարբեր, քանի որ ոյան լեզուին մէջ ալ շատ զանազանութիւն կայ: Իրենք եղան վերջաւորի առջի կատարելութիւն առողը, որ մեծվայելչութեամբը, պարզութեամբը և վսեմութեամբը՝ ինչուան մեր օրերս դիւցազնական չափ սեպուեցաւ:

Նոր քերթողութեան հայրը և առաջնին հեղինակ՝ հիներուն զՀոմերոս կը համարին:

Հոմերոսի վրայ. — Հնութիւնը մեծութեան մէջ ծանծկած ըլլալով քերթողահայրը Հոմերոսին վարքը, ասոյգ տեղեկութիւն մը չեն կրցեր տալ բանասէրք. մանաւանդ որ նախնի ելլադացիք իրենց սովորութեանը համեմատ, այսպիսի անուանի մարդկանց փառքը մեծցնելու վախճանաւ չանացեր են որ անոնց ծագումը յաստուածոց ցցընեն: Ասանկ ալ զՀոմերոս ունին աստուածազարմ հռչակել են, ունին Լինոսի և Որփեոսի՝ առաջնին երաժշտաց ցեղէն, ունին ալ Զմիւռնիոյ Մելէս գետէն ծնած, և այն պատճառաւ Մելէսիգենին կոչուած:

Հերոդոտոս կը պատմէ թէ երբոր Զմիւռնիոյ մէջ հասակն առաւ Հոմերոս, փեսիոս անունով անուանի մարդու մը վարժարանին մէջ դաստիարակութիւն ընելով Զմիւռնիոյ պարծանքը կը յաճախէր, և բոլոր ցոյնք հոն կը վազէին իրմէն հրա-

Generated on 2015-03-16 06:28 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

հանգելու։ Նոյն առեններըը Մենտիոս անունով նաւապետ մը Ջմիւռնիա եկած ըլլալով, Հոմերոսի համբաւը լսեց, և իրեն հանձարոյն վրայ սքանչանալով, խնդրեց իրմէ որ հետը Ճամբորդութիւն ընէ։ Սիրով յանձն առաւ Հոմերոս ասոնց առաջարկութիւնը, որովհետև միտքը գրեթէ երկրի Իւլիական և Ոդիսական քերթուածները շարադրել, և ան բանին համար անհրաժեշտ հարկաւոր կը սեպէր այս Ճամբորդութիւնը։

Բոլոր Իտալիա, Սիկիլիա և Սպանիա քալեց Հոմերոս. և Իթակէ կղզւոյն մէջ Մենտոր անունով հարուստ և իմաստուն մարդէն մեծապէս ընդունելութիւն և հիւրասիրութիւն տեսնելով, սէր կապեցին իրարու վրայ։ Ինքը Մենտոր տեղնիտեղը պատմեց, ինչ որ գիտեր Ոդիսեւս Թագաւորին կրած վշտաց և հալածանաց վրայ։ Հոմերոս Եգիպտոս և Փիւնիկէ ալ գնաց, և Ջմիւռնիա անցնելով հոն գրեց իր Իլիական քերթուածը. և արդէն հռչակուած անունը, ան քերթուածով ամենուն ցանկալի եղաւ։ Բայց ինքը Գիոս կղզին առանձնացաւ, ուր վարժարան մը բանալով Իլիականը ամէն քաղաքներէ ժողվուած մարդկանց սկսաւ կարդալ։ Հոն՝ի Գիոս գրեց իր միւս Ոդիսական քերթուածը, որուն մէջ իրեն երախտապարտ և բարեկամ անձանց՝ Փեմիոսի, Մենտոսի և Մենտորի անուանքը անմահացուց։ Գիոսէն կուզէր Սմիւռնք անցնիլ. բայց երբոր Սամոսէն Յով կղզին եկաւ, հիւանդանալով մեռաւ։ Բնակիչքն ալ այնպիսի անուանի մարդու մը գերեզման տալը մեծ պատիւ սեպելով, փառօք թաղեցին ու հոյակապ շիրիմ մը կանգնեցին իր յիշատակին։

Ոմանք կը պատմեն Թէ Հոմերոսի երկրորդ Ճանապարհորդութեան առեներ՝ նաւաստիք անոր ուղեցած մեծութեանցը աչք անկելով զինքը կուր-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:07 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ցուցին, ու անծանօթ աեղ մը ցամաքը հանելով իրենք ձգեցին փախան և Հոմերոս ալ յուսահատութեամբ՝ քնար մը ձեռքը քաղաք քաղաք կը պտրտէր, ու իր քերթուածիններն երգելով հազիւ առօրեայ ապրուստը կը ճարէր: Բայց սա կարծիքը հաւանականութիւն չունի:

Հոմերոսի ժամանակը. — Հոմերոսի որ սաեն եղած ըլլալուն վրայ որոշ սեղեկութիւն մը չունինի քննաբանք: Հերոդոտոս կաւանդէ թէ իրմէն 400 տարի առաջ եղած ըլլան Հոմերոս և Հեսիոդոս. որով Հոմերոս՝ Լիկուրգոսի ժամանակակից կըլլայ, ու Տրոյիոյ առմանէն իրեքհարիւր տարի ետքը: Բայց ոմանք աւելի հին կը համարին, Քրիսոոսէ գրեթէ 1000 տարի առաջ, և աւելի անոր համար հաւանական կը սեպեն սա կարծիքը, որ հին պատմութեանց մէջ աւանգութեամբ կը զուրցուի թէ ինքը Լիկուրգոս նախ եռևէ եղած ըլլայ Հոմերական քերթուածինը ժողվելու: Իսկ Եւսեբիոս իր ժամանակագրութեանը մէջ՝ Դաւթի վերջին տարիները, կամ անոր որդւոյն Սողոմոնի թագաւորութեան ժամանակ կը համարի զՀոմերոս և զՀեսիոդոս: Նոյն գրոց մէջ ուրիշ սեղ՝ հրէաստանի Ազարիա և Յուդայի Յոթոթամ թագաւորաց սաեները կը դնէ, Եսայի մարգարէին ժամանակակից:

Նոյնպէս ալ Հոմերոսի ուր սեղացի ըլլալուն վրայ մեծ խնդիր է, հին սաեներէն՝ի վեր. վասն զի եօթը քաղաք՝ Կողոփոն, Յով, Արգոս, Սալամինա, Աթէնք, Գիոս և Զմիւռնիա երկայն իրարու հետ վէճ ունեցեր են՝ Հոմերոսի խանձարրուրք տալու պարծանքը յափշտակելու համար: Բայց հաւանականագոյն կերևնայ թէ Զմիւռնիա ծնած և երկար սաեն Գիոս կեցած ըլլայ:

Իպիկանին նիւթը. — Ա՛ս սքանչելի վիպասանա-

Generated on 2015-03-16 07:07 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

կան քերթուածին գլխաւոր նիւթն է Ագամեմ-
նոնի և Աքիլլեայ իրարու հետ ոխութիւնը :
Յոյնք՝ Տրոյեայ մօտերը եղած քանի մը քաղաքնե-
րուն ափրելով Խրիսանոյշ և Բրիսանոյշ կոչուած
երկու վայելչադէմ օրիորդք ալ գերեցին , որոնց
առջինը Ագամեմնոնի և երկրորդը Աքիլլեսի իրենց
զօրավարաց ընծայեցին , իբրև փոխարէն անոնց
քաջարութեանցը : Սակայն եաքը Ագամեմնոն հը-
նարքով մը Բրիսանոյշ օրիորդը Աքիլլեսի ձեռ-
քէն առաւ . Աքիլլես ալ իրեն եղած արհամար-
հանացը վրայ զայրանալով միաքը դրաւ որ ամե-
նևին պատերազմի մէջ չմտնէ . եաքը իր թեսիս
մօրը գնաց ընկաւ , աղաչելով որ Յուպիտերայ
վրէժխնդրութիւն ուզէ առ նախատանացը : Ար-
ժանդ ալ թետեայ աղաչանացը դէմ չկրնալով
դնել , սկսաւ տուա յոյսերով և ակնկալութեամբք
Ագամեմնոնը խաբել . ան ալ սիրտ առած ոյոյա-
ցւոց դէմ պատերազմ հրատարակեց : Սակայն
Աքիլլեսի անգործ կենալուն և անոր պատե-
րազմի մէջ մտան չունենալուն վրնան սկսաւ մե-
կին խմանալ . որովհետև Աքիլլեսի առաջնոր-
դութեան տակը Յոյնք միշտ յաղթող էին . և
Թշնամիք Իլիոնի պարսպին դուրս չէին կրնար
ելլել . բայց առանց իրեն վախնալ սկսան , ու զօ-
րութիւնին քանի տեղ չիդնել : Քիչ մը ատեն
զինադադարուամ ըրին , որպէս զի երկու կողմին
ալ պատերազմի մէջ ընկածները կարենան թա-
ղել : Զինադադարուամբ լմընալէն եաքը երբոր
նորէն պատերազմիլ սկսան տրոյացիք յաղթելով
Յոյները ստիպուեցան փախչել . Հեկտոր Պրիամու
որդին տրոյացւոց կողմէն՝ Թշնամեաց եռևէն կը-
նալով ինչուան արևուն մտնելը սաստիկ կոտո-
րած մը ըրաւ Յունաց մէջ : Ա ձախորդութեանց
վրայ՝ Յունաց սիրտը բոլորովին կոտրեցաւ , ու յոյա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:08 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նի կը տեսնէին թէ Աքիլլէս միայն կրնայ զերծնիք փրկել. ուստի պատգամաւորք խրկեցին սիրսոր առնելու համար. սակայն Աքիլլէս անողոքելի և իր մտացը վրայ հաստատուն մնաց:

Երկրորդ առտուն նորէն պատերազմը սկսաւ. և Յունաց մէջ քաջագոյնքը բոլոր վիրաւոր ընկան: Այն խեղճ տեսարանը մեծ տպաւորութիւն ըրաւ Աքիլլէսի սրտին վրայ. Պատրոկղէս իր բարեկամը խրկեց, որ երթայ լաւ տեղեկութիւն մը առնէ ան ցաւալի անցիկ հանդամանացը վրայ: Սակայն Յոյնք Հեկտորի արութեան դէմ չկրնալով դնել, երկրորդ անգամ ալ յաղթուեցան: Պատրոկղի սիրտը բոլորովին տակնուվրայ եղած՝ եկաւ ալաչեց Աքիլլէսի որ ալ մէկդի դնէ սրտին ցաւը, և հայրենեաց ու ազգակցաց փրկութիւնը ամէն բանէ վեր տեսէ: Աքիլլէս անով ալ չհակըցաւ. միայն թոյլ տուաւ Պատրոկղի որ երթայ իր տեղը պատերազմի: Պատրոկղ՝ Աքիլլէսի զէնքերը վրան առաւ, ու քաջութեամբ իրենները տուն օգնութեան կը վազէր, առանց գիտնալու թէ ինքզինքը մահուան վտանգի մէջ կը ձգէ, գրեթէ աստուածոց զօրութեան դէմ պատերազմիլ ուզելով. Ապոլոն իր զէնքերէն մերկացուց զինքը, Եւփարիոս վիրաւորեց, Հեկտոր ալ սպաննեց: Ան աննկուն ախոյեանին մահուամբը աւելի սիրտ առին որովայնք: Անտիլոքոս առ որ տեսաւ՝ յուսահատութենէն ինքզինքը կորսնցուցած՝ վազեց գոյժ տալու Աքիլլէսայ, և անոր սիրելի բարեկամին մահը պատմելու: կարճ ու արցունքի անծանօթ զօրավարը առ գոյժն որ լսեց, տղու մը պէս սկսաւ լալ. մէկ կողմէն ցաւը, մէկալ կողմէն ալ Պատրոկղի մահուան վրէժը խնդրելու փափաքը զինքը կը տագնապէին: Մխիթը դրաւ որ ալ պատերազմի ձեռք զարնէ. սակայն զէնքերը յա-

Generated on 2015-03-16 07:08 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

փրշտակուեր էին : Պատնշին մօտ եկաւ , ու իրեք անգամ ահագին ձայնով պոռաց , կրակ քերթողը , և որոյացիք ահաբեկ մնացին : Սիրա առին Յոյնք , Աքիլլեսի պատերազմին մէջ գործակցութիւնը տեսնելով , և Պատրոկլի դիակը ապահով տեղ մը դրին :

Նոյն գիշերը երբոր որոյացիք խորհրդի հետ էին , Աքիլլես ալ իրենները խորհրդի կանչեց , ու հոն Աթիդեայ որդւոյն Ագամեմնոնի հետ հաշտուեցաւ . Հեփեստոս ալ՝ Աքիլլեսի մօրը աղաչանքովը իրեն համար մատնաւոր զէնքեր ու զրահներ գարբնեց : Աքիլլես վրան առաւ ան զէնքերը , ու որոյացւոց հետ պատերազմիլ սկսաւ . և ան ահեղ կոտորածին մէջ Հեկտոր՝ Աքիլլեսի բարկութենն ու վրէժխնդրութենէ զոհ եղաւ : Անոր վրայ հրամայեց որ Պատրոկլի փառաւոր յուղարկաւորութիւն մը ըլլայ : Պրիամոս՝ Հեկտորի ծերոնի հայրը՝ իր որդւոյն մահը լսելով սիրտ ըրաւ , երթալ Աքիլլեսէն խնդրելու որ գէթ դիակը ուներնալու վախճարութենէն զինքը ջղրկէ : Աքիլլես արդէն իր կատաղութիւնը առած , մտիկ ըրաւ Պրիամոսի աղաչանացը . ու տուաւ Հեկտորի մարմինը . ան ալ բերաւ Տրոյիա , ուր իրենց դիւցազին յուղարկաւորութեան հանդէսը կատարեցին անհնարին ցաւօք ու տրտմութեամբ : Ա և ահաւասիկ Իլիականին համառօտութիւնը :

Հոմերոս աս գրքով յիսունըմեկ օրուան միջոցի մէջ անցած գէպքերուն պատմութիւնը կընէ , Աքիլլեսի և Ագամեմնոնի մէջ եղած գժտութենէն ինչուան Հեկտորի յուղարկաւորութիւնը : Գլխաւոր նիւթը թէպէտ Աքիլլեսի ոխութիւնն առած է քերթողը , բայց անով առջևը լայն ասպարէզ մը կը բանայ . իր աշխոյժը և հանճարը ցուցընելու թէ կենդանի տպորագրութիւններով և թէ բանից կորովութեամբ :

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:08 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ա յիսունըմէկ օրուան մէջ պատահած դէպ-
քերը ասանկ կարգի մը վրայ առած է Հոմերոս։
Առջի օրը Խրիւսէս Ապողոնի պաշտօնեայն կարհա-
մարհուի, իր Խրիսանոյշ աղջկան յափշտակուելնէ
պատճառաւը։ Տասներորդ օրը Աքիլլես Ագա-
մեմնոնէն կը նախատուի. տասուերկու օր անցնե-
լէն ետքը Թետիս Արամազդայ կաղաչէ որ իր որ-
դւոյն եղած արհամարհանացը վրէժ խնդրուի. և
երկրորդ օրը, որ քսանըմէկերորդ օրն է, Ագա-
մեմնոն պատերազմ կը հրատարակէ։ Նոյն օ-
րուան պատերազմին մէջ մեռածները՝ հետևեալ
օրը կը թաղուին։ Քսաներհինգերորդ օրը կրկին
անգամ պատերազմով իրարու հետ կը զարնուին,
և միւս օրը երրորդ պատերազմը կըլլայ՝ ուր կը
մեռնի Պատրոկղ։ Քսաներորդ եօթներորդ օրը
Աքիլլես և Ագամեմնոն իրարու հետ կը հաշ-
տուին, և չորրորդ պատերազմը կըլլայ։ Քսան-
երորդ ութերորդ օրը Պատրոկղի յուղարկա-
ւորութիւնը կը կատարուի. և երկրորդ օրը, ի
պատիւ իրեն, չիրմին քով խաղարկութիւններ ը-
նել կու տայ Աքիլլես։ Տասուերկու օր երկու
կողմէն ալ լռութիւն կըլլայ. և ետքը քառասնե-
րորդ առաջներորդ օրը Հեկտոր կը մեռնի և դիա-
կը կարհամարհուի. նոյն օրը աստուածք ալ կըսկը-
սին ասոր արիւնռուշտ պատերազմին գործակցու-
թիւն ընել։ Պրիամ ալաչանքով կազատէ իր որ-
դւոյն դիակը, ու տասն օրէն ետքը կը թաղէ, ո-
րով կըլլայ յիսունըմէկ և վերջին օրը։

Ոդիսականին համառօտութիւնը. — Ոդիսականը
Իլիականին շարայարութիւն մը կրնայ սեպուիլ,
և Հոմերոսի հանճարոյն արժանաւոր և իրեն ան-
մահ փառաց առիթ քերթուածիւն մը։ Իլիակա-
նին մէջ խօսող անձը՝ ինքն իսկ քերթող Հոմե-
րոսն է, իբրև պարզ պատմիչ մը. իսկ Ոդիսա-

Generated on 2015-03-16 07:09 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

կանին մէջ գիւցազնն Ոդիսեւս կարգաւ կը պատմէ իրեն գլխէն անցած դէպքերը, Տրոյեոյ աղետալի պատերազմին վերջանալէն՝ ինչպէս իր կալիփսէի կղզին մեկնելը։ Հոմերոս՝ երբոր Ոդիսականը կըսկսի, արդէն Տրոյեա առնուած, և Ոդիսեւս փափաքանօք կը ցանկայ իր Թագաւորութեան երկիրը նորէն տեսնել։ Պենելոպէ իր կինն ալ չի գիտեր ինչ կերպով աղատիլ տարփածուաց ձեռքէն որ կուզէին զինքը համոզել թէ արդէն Ոդիսեւս Տրոյեոյ պատերազմին առեղծուածը վերջացուցած է, և թէ հարկ է որ նորէն ուրիշ մը հարսնանայ։ Պենելոպեայ և Ոդիսեւսի որդին Տելեմաքոս՝ իր մօրն եղած նախատանացը չկրնալով համբերել, Աթենասայ տուն տալովը բոլոր մեծամեծքը խորհրդի կը կանչէ, և անոնց առջևը բողոքեց իր հօրը արքունեաց մէջ եղած անկարգութիւններուն դէմ։ Անկէ ելաւ Պիւղոս ու Լակեդեմոն գնաց, որ իր հօրը բարեկամ Մենելաւոսի և Ներստորի հարցնէ, և Ոդիսեւսի ուր կամ ինչ վիճակի մէջ ըլլալուն որոշ տեղեկութիւն մը առնէ։

Իսկ Ոդիսեւս Ովիդէ կղզւոյն մէջ իր հայրենեաց կարօտովը կը հալէր ու կը մաշէր. որովհետև Կալիփսէ աստուածուհին Թող չէր տար որ կարենայ Իթակէ դառնալ։ Մտածեց որ առանց մէկու մը իմացընելու ծածուկ փախչի. ուստի իր ձեռքովը լաստ մը շինեց, ու անով ան Թշնաւոր կղզինէն հեռացաւ։ Սակայն Ներստուն կամ Պիսիդոն՝ հողմոց և ջրոյ աստուածը առեղծուածներով Ոդիսեւսի դէմ, հողմ մը հանեց, ու ալեաց բռնութենէն լաստափայտը խորտակեցաւ։ Հազիւ ազատեցաւ Ոդիսեւս ան վտանգէն. և յոգնած ու քաղցած՝ փեակեանց երջանիկ գաւառը հասաւ, ու Ալկինոս Թագաւորն իր արքունեացը

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:09 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մէջ մարդասիրաբար հիւրընկալեց: Հոն տեղնիատեղը փէակեանց պատմեց Ոդիսեւս իր գլխէն անցած վտանգները, և թէ ինչպէս հոլմակոծուելեամբ Լոտոսասակերաց և Կիկլոպացց գաւառներն ընկաւ. Պոլիփեմեայ ձեռքը դերի իյնալը, և թէ ինչպէս իր ընկերներէն շատը ան սոսկալի հրէշին կերակուր եղան, և ինքը միայն քանի մը հոգւով՝ ճարտարուելեամբ անոր ձեռքէն խալըսեցաւ, և այլն:

Փէակեանք աս ամէն՝ բաները լսելով՝ Ոդիսեւսի վրայ մեծ մարդասիրութիւն ու գուշ ցցուցին. և զանազան պարգեւներէն և ընծաներէն զատ՝ մասնաւոր նաւ մըն ալ տուին իրեն որ երկիրն երթայ: Երբոր նաւն իջակէ հասաւ, փէակեցի նաւաստիքը զինքը ցամաք հանեցին առանց իրեն իմանալուն, ուներցած գանձերն ալ մէկտեղ, և իրենք ելան գնացին: Արթընցաւ Ոդիսեւս, և ինքզինքը իր հայրենեաց մէջ տեսնելով, ուրախութեամբ վազեց իրեն հաւատարիմ Եւմէոս ծառան գտաւ, և անկէ իմացաւ՝ ինչ որ իր հեռանալէն ետքը պատահեր էին արքունեացը մէջ: Նոյն առեն Տելեմաք ալ իրեն ձանապարհորդութենէն դառնալով գտաւ զԵւմէոս, Ոդիսեւս ինքզինքը յայտնեց որդւոյն, ստիպելով որ մէկու մը չիզրուցէ:

Եւմէոս զՈդիսեւս իմակէ բերելով՝ ինչուան ան պալատը կը տանի՝ ուր որ Պենելոպեայ տարփածուներն Ոդիսեւսի ունեցածը չունեցածը չըռայլութեամբ կը վատնէին: Եւ որովհետեւ Ոդիսեւս մուրոլի զգեստս հագած էր, ոչ ոք կրցաւ զինքը ճանչնալ. միայն շուն մը ու Եւրիկլէ աղախինը ճանչցան իրենց առջի տէրը. սակայն Ոդիսեւս աղախնոյն ալ պատուիրեց որ լուռ կենայ: Պենելոպէ ձանձրացած իր տարփածուներէն,

Generated on 2015-03-16 07:09 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

խոստացաւ որ անոր հետ կը պատկուի, որն որ մենամարտիկ կռուոց մէջ յաղթող հանդիսանայ. Ոդիսեաս ալ ուզեց մասնակից ըլլալ այն կռուոյն, և յաղթեց իր Տելեմաք որդւոյն օգնութեամբը. եաքը անոր և Եւմեոսի հետ մէկ ըլլալով՝ պեներլոպեայ տարփածուներէն իր վրէժն առաւ. և իր առջի գեղեցկութիւն ու վայելչութիւն տանալով՝ ինքզինքը ծանօթացուց Պենելոպեայ: Սակայն երկրորդ օրը իր հակառակորդաց կատաղութենէն ազատելու համար հարկ եղաւ որ Լայերտաս իր պապն քով ապաստանի անոր գեղի տանը մէջ. սակայն Թշնամիք հոն ալ հասան, և երկու կողմէն պատերազմը սկսաւ. ինչուան որ աստուածոց միջնորդութեամբը խաղաղութիւն եղաւ: Ասով կը լմննայ Ոդիսական քերթուածը:

Հոմերոսի մանր գրուածները. — Իլիականէն ու Ոդիսականէն զատ Հոմերոսի անուամբը ուրիշ զանազան գրուածներ ալ կը գտնուին, կամ հնոց մէջ կը յիշատակուին, որոնցմէ շատին հարատեւութիւնը վրայ հմուտ քննաբաններըը կը տարակուսին: Ա՛ս երգերը կերևնայ թէ յառաջաբան կամ սկզբնաւորութիւնք (proëme) են ան դիւցազնական տաղերուն զոր հապնեղգուք կերգէին:

Առնց մէջ գլխաւոր և ամբողջ երկախրութիւն կրնայ սեպուիլ

Գորգոնամնամարքութիւն ըսուած ծիծաղաշարժ քերթուածը, որ Իլիականին նմանութեամբը գրուած է. և թէպէտ հատարակօրէն Հոմերոսի կընծայուի, բայց աւելի շատերը և հմտագոյնք կըսեն թէ Հոմերոսի ոճէն բոլորովին տարբեր քերթուածիւն մըն է, և յունական գպրութեանց նախահօրն անպատուութիւն այնպիսի անյարդար և անոճ գրուածիւն մը իրեն ընծայելը: Պլուտարքոս կաւանդէ թէ կարիացի Պիգրեստես անու-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:10 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նով հետևակ քերթողի մը աշխատասիրութիւնն ըլլայ։

Երգ ե՞ս ։ Առնք ալ Հոմերոսի անուամբ կը յիշատակուին, թէպէտև բանասէրք հարազատութիւններնուն վրայ կը տարակուսին. բայց՝ի Ապոլոնի վրայ չինուած երգէ մը, զոր Թուկիտիդէս ալ Հոմերոսի կը համարի։

Հոմերոսի վրայ եղած այլաբայ կարծիքները. — Հոմերոսի պէս անուանի մարդու մը քերթուածիքը քննութեանց նիւթ առնուլ բանասէրք՝ զարմանք չէ որ այլևայլ տարակոյսներ հանեն վրան, որով հետև ինչպէս ըսինք, հնութիւնը քիչ բան աւանդած է այսպիսի հոյակապ անձի մը վրայ։ Ա՛ս խնդրոց մէջ երկուքն աւելի նշանաւոր են. նախ թէ արդեօք ինքը Հոմերո՞ս գրեր է Իլիական և Ոդիսական քերթուածիքը, որոնց քսանըուեցը գալէ՝ի վեր հեղինակ կը ճանչցուի։ Երկրորդ թէ աս քերթուածիքն արդեօք բոլորովին իրե՞նն են, թէ այլևայլ անձանց աշխատասիրութիւնք, զորոնք իմաստուն բանադատ մը մէկտեղ հաւաքեր է։

Փլաւիոս Յովսեպոս հրեայն յայտնապէս կըսէ թէ ինքը Հոմերոս գրած չըլլայ իր քերթուածիքը, և թէ շատ դարեր՝ միայն բերնէ բերան անցնելով՝ աւանդութեամբ մնացեր են։ Բայց իրեն աս խօսքը ոչ ոք մտադրութեան արժանի սեպեր էր մինչև՝ի 1769, յորում իմաստուն անգլիացի մը Հոռոբերդոս Վուտ՝ ցցուց թէ Հոմերոս չէր կրնար գրել իր քերթուածիքը, քանի որ ան աստեն անծանօթ էր գրութեան եղանակը։ Եւ զոյացածին ապացոյց զնոյն ինքն Հոմերոս մէջ կը բերէ, որուն երկու քերթուածներուն մէջ ալ կըսէ գրութեան յիշատակը չկայ. մանաւանդ թէ ա՛նոր հակառակը կերևնայ Իլիականին մէջ երկու տեղ։ կը պատմէ (Գիրք է) թէ Ցոյնք Հեկտորի

զօրութիւնը տեսնելով՝ չէին գիտեր զով հանել այնպիսի քաջ զօրավարի մը ախոյեան. մոռածեցին որ վիճակ ձգեն. ու ամէն մարդ մէյմէկ նշանաւոր պիտակ տալով, Ագամեմնոնի սաղաւարտին մէջ ձգեցին: Նեստոր շարժեց սաղաւարտը, և անուն մը հանելով՝ ոչ ոք կրցաւ ճանչնալ, մինչև որ Այաքսայ բերին, և իր գրուածն ըլլալը իմացաւ: Որով կիմացուի թէ պարզ նշան մըն էր և ոչ գիր. ապա թէ ոչ՝ գրել գիտնալնէն եաքը՝ հարկ էր որ կարենային կարդալ: Ուրիշ տեղ ալ (Ձ) կըսէ թէ Պրեաոս ուզելով զԲելլերոփոն սպաննել, զանիկայ իր աներոջը քով խրկեց՝ ի Լիկիա, և ձեռքը պախպահ մը տուաւ, կըսէ քերթողը. որուն վրայ նշանակեր էր իր կամքն ու դիտաւորութիւնը:

Գերմանացի անուանի բանասէրը Փրէդերիկ Աւգ. Վոլֆ 1794ին Հոմերոսի գրոց տպագրութիւն մը ընելով, շատ բանի մէջ Վուտի ձայնակից գտնուեցաւ: Թէպէտ, կըսէ, Հոմերոսէն առաջ գրութեան եղանակը կար, և քանի մը արձանագրութեանց մէջ ալ գործածուեր էր, բայց ոլիմպիական խաղերէն առաջ անոնց գործածութիւնը սովորական չէր. Սոլոնի ժամանակ, որ ըստ հաւանականագոյն կարծեաց, Հոմերոսէն 400 տարի եաքը կկնայ, գրութեան յառաջադիմութիւնը այնչափ քիչ էր որ ամենացոյց օրէնսդիրը ուզելով իր սահմանադրութիւնքը ծանօթացընել՝ ստիպուեցաւ քարի վրայ արձանագրել տալու. որով յայտնապէս կերևնայ, կըսէ Վոլֆ, թէ Հոմերոս գրած պիտի չըլլայ իր քերթուածները, և թէ Յովսեպոսի գիտողութիւնը ստոյգ է:

Բանասիրաց մէջ չլուծուած խնդիր մը ըլլալով ասիկայ, թէ ձայնակիցքը և թէ հակառակախոհքը ունի. բայց Փաբրիկիոս իր յունական մատե-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:10 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նադարանին մէջ կը ցցընէ այլևայլ առաջադրու-
թեամբ՝ թէ ինքը Հոմերոս՝ի գիր անցուցեր է իր
քերթուածները։

Հոմերոսի վրայ եղած երկրորդ խնդիրն աւելի
հետաքրքրական ու զարմանալի է, թէ արդեօք
Իլիական և Ոդիսական քերթուածները բուն
Հոմերոսի՞ են թէ այլևայլ անձանց երկասիրու-
թիւնք։

Կարոլոս Փէռոյ և Օպինեաք գաղղիացիք առ-
ջինն եղան որ աս տարակոյսը հանեցին. Օպի-
նեաք պնդեց ալ և ուզեց ցցընել թէ անանկ ա-
նուամբ և ոչ մարդ եղեր է աշխարհքիս վրայ։ Ա-
ստոնց կարծեացը ըստ իմիք հեռուզք եղան պէնե-
լէյ անգլիացին և Ցովհաննէս Մկրտիչ Վիքոյ ի-
տալացին։ Վոլֆ գերմանացին ալ իր ամէն ճիգը
և համառութիւնը թափեց ցցընելու թէ աս երկու
աշխարհահռչակ քերթուածիք այլևայլ քերթո-
ղաց երկասիրութիւնք են, և անոնց մէջ քիչ բան
է Հոմերոսի գրաւած մասը։ Բերած գլխաւոր
պատճառներն են՝ երկու քերթուածոց ոճոյն
իրարմէ բոլորովին տարբերութիւնը, և այսպիսի
մեծ քերթուածներ գրելու անկարողութիւնը,
քանի որ գրի գործածութիւնը հասարակ չէր։
Պատմական ապացոյցք ալ գտաւ իր զուրցածնե-
րը հաստատելու համար։ Երբոր Լիկուրգոս, կը-
սէ, աս գրքերն յունաստան բերաւ, հագներ-
գուք արտաշարժ և աւելի հետաքրքրական հա-
տուածները բերնուց սերտեր և կերգէին. Պիսիս-
տրատեանց ժամանակ աս հատուածները կարգի
գրուելով՝ երկու մեծ քերթուած ձևացան, և
թերևս ան ատեն ալ գրուեցան։ Տուղլիոս Կի-
կերոն ալ կըսէ թէ "Հոմերոսի գրքերը կարգի
վրայ առնուլ՝ նախ Պիսիստրատեանք եղան, և այն-
պէս մեր ձեռքը հասան"։

Generated on 2015-03-16 07:11 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

Բայց ըստ Համոգման բանասիրաց անտեղի կե-
րևնան ասոնք խնդիրները, որովհետև հնոց մէջ մեկը
չէ ունեցեր այսպիսի տարակոյս, և մեծարանօք
Հոմերոսի և անոր գրուածոցը վրայ խօսեր են։
Իրաւ է որ Իլիական և Ոդիսական քերթուա-
ծոց մէջ եղած տարբերութիւնքը քիչ չեն, սա-
կայն նիւթերնուն զանազանութիւնը՝ ի հարկէ
տարբեր լեզու ալ կը պահանջէ։ Իլիականը ցուրտ
կըլլար թէ որ Ոդիսականին պարզութեամբը գը-
րուէր. Ոդիսականն ալ բնականութիւնը կը կոր-
սընցընէր թէ որ առջինին կրակն ունենար։

Հոմերոսի գրուածոց յարգը. — Կարգէ դուրս
հանճարը զարմանք չէ որ իրեն համեմատ մեծա-
րանք ու պատիւ գտնէ։ Սահնկ բազդի մը հան-
դիպեցաւ Հոմերոս հին աշխարհին՝ ի վեր, ոչ միայն
իրեն ազգակից Յունաց մէջ, հապա բոլոր հին և
նոր ուսումնական աշխարհքի։ Չմիւռնացիք տա-
ճար կառուցին իրեն պատուոյն. արգոսացիք ալ
Ապոլոնէ եռքը երկրորդ պաշտպան կը սեպէին
զՀոմերոս։ Սողոն, յունաստանի ամենէն սւեղի
քաղաքակիրթ միաքը, հրաման ըրեր էր որ անոր
գիրքը վարժարանաց մէջ կարդան համբակք. Եւ-
քիղէս, Սոփոկղէս և Եւրիպիդէս, յունական ող-
բերգութեան նախահարքը՝ իրեն հետևիլը պար-
ծանք սեպեցին. Արիստոտէլ՝ հնոց մէջ ընարեալ-
գոյն բանագատը՝ ըսաւ թէ վիպասանական քեր-
թութեան ծնունդ, աճումն և կատարելութիւն
տուողը Հոմերոսի հանճարն եղաւ. որովհետև իր-
մէն եռքը եկող ամէն վիպասան քերթողք թէ
նիւթոյն առաջարկութեամբը և թէ քերթուա-
ծոյն կարգաւորութեամբը չկրնացին օրինակել
զՀոմերոս։ Աղեքսանդր մեծ թագաւորն ալ՝ որ
փառասիրութեամբ լցուած բոլոր Ասիոյ մեծու-
թիւնն իրեն սւաւր առաւ, միայն Աքիլլեսի վրայ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:11 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կը նախանձէր, որ իր քաջութիւնքը գովող այնպիսի քերթող մը գտաւ, և կը փափաքէր անոր Իլիականին մէջ Թերսիտէս (ամենէն անարգ անձը) ըլլալ, քան ուրիշ քերթողաց գրուածոցը մէջ Աքիլլես: Իր սուրն ու Հոմերոսի գիրքը քովէն չէր հեռացըներ, ինչուան քնուն մէջ ալ բարձին տակը կը դնէր կըսեն: Դարեհի յաղթեց, ու իրմէ ժառանգած բազմագանձ ճոխութիւնքը մէջ ականակուռ տուփ մը գտաւ. հոն ամփոփեց Հոմերոսի գիրքը. "Անանկ գանձ մըն է, կըսէր, ասիկայ, որ ամէն բան կարժէ,,: Լոնգինոս առնուանի բանասէրը, Հոմերոսի բաղդատելով ուրիշ ամէն մատենագրաց լեզուն, մարդկեղէն կը համարէր. միայն անորը աստուածային:

Իսկ մեր Խորենացին, որ իր բոլոր մատենագրական հմտութիւնն և ուսումնականութիւնը յունական գիրքերով ստացեր էր, ու անոնց ինքզինքը մեծապէս երախտապարտ կը սեպէր, Հոմերոսի քերթուածքը այնչափ մեծարգոյ և ազնիւ կը համարի, որ այնպիսի քերթուած մը, կըսէ, Հոմերոսէն ետքը եկողները լսելու իսկ արժանաւորութիւն չունէին[1]:

1 Խորենացւոյն և Մագիսթրոսի և ուրիշ փոնի մը մէջ մատենագրաց լօսէրէն, որոնցմով զՀոմերոս կը մեծարէն, կարծիք ունեցեր են ոմանք ընդ նախնիք ըստգմանած ըլլան իրեն հրաշալեաց փերլուրեանց գէրմէկ մասը: Բայց այսպէս հնագիտական և ոճաբանական խուզարկութիւններէն էսթը փեղ մը չգտնուելնին, բաւական հաստատուին կը կարծելու ընդ ասիկայ պարզ ֆոֆոտ մըն է: Զեռուելնիս միայն փոնի մը պազ հասած է, որուն դնենք հոս: Ասոնցմէ առջինը Աղէքսանդրի պապմուելեան մէջ կը գտնուի, յորում աքանչելի երգիչ կը կոչուի Հոմերոս. իսկ էրէրուդն ու էրուդիտ՝ փիլոնի Յալագա նախանամուելեան ըսուած ճառերուն մէջ.

Generated on 2015-03-16 07:12 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

Հոմերոսի մեկ գլխաւոր յատկութիւնն ալ իր ընտիր բարոյականն է. կրթել և զուարճացընել, սա եղած է միայն իրեն նպատակը. որով և հեռու նոր ազգաց շատ քերթողներու երևակայութենէն. ուստի և իրաւամբ զուրցած է սուրբն Բարսեղ թէ "Հոմերոսի բովանդակ քերթուածքը ուրիշ բան չեն, բայց եթէ առաքինութեան գովեստ և մոլութեան պարսաւ ,,:

Ա. "Եւ կապուտակային յօնաքն ակնարկեաց Զբուսանեան,
Եւ աքանչելի աստուածային վարսքն շարժեցան
Ցանմանէ գլխոյ Թագաւորին. և մեծապէս շարժեալ աստանեցաւ Ողիմպոս ,,:

(Իղիակ. Հատն. Ա 528):

Բ. "Թէ ոչ յիշես, յորժամ կախեալ էիր 'ի բարձու զտանէ,
Եւ ապա երկուս արկի զտիցդ, և 'ի ձեռաց կապեաս արկի
Ոսկիս առանց հատանելոյ. իսկ դու յորմին և յամպս
Կախեալ կայիր. և աղաչէին աստուած յերկայնն Ողիմպոսի
Եւ լուծանել ոչ կարէին ,,...

(Իղիակ. ԺԵ. 191):

Երրորդ հատուածին ալ Ոդիսականէն.

Գ. "Ի Կիկղոպացց յերկիրն յամենարհաւատից, յանօրինաց յանհաւատից. հասաք,
Որք յաստուածս պանծացեալ վստահք են յանմահս.
Ոչ տրնկեն ձեռաք տունկ և ոչ վարեն.
Այլ այնպէս անսերմն և առանց վարելոյ ամենայն բուսանէր.
Ցորեանք և գարիք և որթք, որք բերեն գինի քաջողկոյզ,
Եւ յանկարծօրէն անձրև աճեցուցանէ ,,:

(Ոդիս. Թ. 106–111).

Բայց հոմերոսեր ազգայնոց փափաքը գոհ ըլա՛ բաղմարդեան լուրգմանիչ վենետկոյ Մխիթարեան Ա՛խպա՛թմատճանեան Հ. Եղիա վարդապետը, որ հայկական լուրգմանութենէն նախ՛ի լոյս ընծայեց Իղիականը (1843) և էպէը Ոդիսականը (1848): Ազգային բանաստեղծ՛ մեր զարդացնելէն ետք ա՛ելին կրնան գտնել՝ թարգմանչին յաւաջաբան փեղկուածքն ու հմուտ ծանօթութիւնք մէջ:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:12 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԼՈՒԽ Ե.

ՀԵՍԻՈԴՈՍ

ՀԵՍԻՈԴԵԱՅ ՎԱՐՔԸ. — ՔԵՐԹՈՒԹԻՒՆԸ. — ԳՐՈՒԵԱՆ ՕՃԸ։

ՀԵՍԻՈԴԵԱՅ ՎԱՐՔԸ. — ԻՆՉՊԷՍ ՀՈՄԵՐՈՍԻ, ԱՍԱՆՔ ԱԼ ՀԵՍԻՈԴԵԱՅ ԺԱՄԱՆԱԿԸ ՈՐՈՇ ՉԻ ԳԻՏՑՈՒԻ. ԲԱՅՑ ՀԱՒԱՆԱԿԱՆ ԿԵՐԵՒՆԱՅ ԹԷ ԱԹԵՆԱՑՒՑ ՀԻՆ ԹԱԳԱՒՈՐԱՑ ԱԱԵՆՆ ԷՐ, ԻՆՉՊԷՍ ԻՐ ԽՕՍՔԵՐԷՆ ԱԼ ԿԸ ԳՈՒՇԱԿՈՒԻ. ՈՄԱՆՔ ԿԸՍԵՆ ԹԷ ՀՈՄԵՐՈՍԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ Է, ԻՆՉՊԷՍ ՀԵՐՈԴՈՏՈՍ ՊԱՏՄԱԳԻՐԸ. ՈՄԱՆՔ ԱԼ ԻՐՄՔ ՀԻՆ ԿԸ ՍԵԱՊԵՆ։

ՀԵՍԻՈԴՈՍ ԲԻՈՎԵՒՈՅ ՄԷՋ ՀԵԼԻԿՈՆ ԼԵՌԱՆ ՄՕԹ ԱԿՐԱ ՔԱՂԱՔԸ ԾՆԱԾ Է ԸՍԱ ՈՄԱՆՑ. ԻՍԿ ՀԱՅՐԸ ԿՈՒՄԱՅԻ, ՈՐ ԲԱՂԴ ՎԱՍՏԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԻՐ ՀԱՅՐԵՆԻ ԵՐԿՐԷՆ ԴՈՒՐՍ ԵԼԱԾ, ԵՒ ՏՈՒԺԱՒՈՐՈՎ ԲԱԶԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ ՁԵՌՔ ՃԳԵԼԷՆ ԵՒՔԸ ԱԿՐԱ ՔԱՂԱՔՆ ԵԿԱԾ ՀԱՍՏԱՏՈՒԵԼՈՒ։ ՀՆՈՑ ՄԷՋ ԱԵԼԻ ԲԱՆ ՄԸ ՉԱՒԱՆԴՈՒԱԾ ՀԵՍԻՈԴԵԱՅ ՎԱՐՈՒՑԸ ՎԱՅ։

ՎՍՓՍԿ Ե ՍՏՈՒՑ ՓԵՐԹՈՒԵԱՆԸ. — ՀԵՍԻՈԴՈՍ ԻՐ ԱՍ ՔԵՐԹՈՒԹԵԱՆ ԱԿԻՂԸՆ ԱՐԱՄԱԶԴԱՅ ՎԱՅ ՀԱՄԱՌՕԱ ԳՈՎԵՍՏ ՄԸ ԸՆԵԼԷՆ ԵՒՔԸ, ԿԸՍԿԱԾ ՑԸՑՆԵԼ ԹԷ ԱՇԽԱՐՀԻՍ ՄԷՋ ԵՐԿՈՒ ՏԵՍԱԿ ՆԱԽԱՆՁԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԿԱՅ, ՈՐՈՆՑՄԷ ՄԿԸՆ ԳՈՎԵԼԻ Է ԵՒ ՄԻՒՍՆ ՊԱՐԱՍԱՒԵԼԻ. ՈՐՈՎՀԵՒԱՒ ԱՆՈՆՑՄԷ ՄԿՈՒՆ ՊԱՏՃԱՌԱԲԸ ԿԱՄ ԹԵԼԱԴՐՈՒԹԵԱՄԲ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ, ԱՇԽԱՐՀԱԿՈՐԾԱՆ ԹՇՈՒԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ, ԱՆՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒ ՄԱՀՈՒՆՔ ԿԸԼԱՆ։ ԻՍԿ ԵՐԿՐՈՐԴ ՆԱԽԱՆՁԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԳԻՇԵՐՈՅ ՈՐԴԻ Է, ԶՈՐ ՍԱ-

Generated on 2015-03-16 07:12 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

տուրնեայ զաւակը (Աբրահամդ) երկրիս խորը դրաւ, ուզելով որ մարդկան ամէն տեսակ վատ տակոց ինքն ըլլայ երախայրիք: Անով է որ ինչուան անհոգ մարդիկ գրեթէ բոնի աշխատութեան կը յորդորուին. որովհետև աղքատը՝ իրեն դրացի մեծատունը տեսնելով քրտինքի և աշխատութեան չի խնայեր անոր երջանկութեանը կը ցորդ ըլլալու. մեծատունն ալ չի դադրիր աշխատանքէ, որ չըլլայ թէ աղքատն իրեն հաւասարի: Ա՛ նախանձաւորութիւնը, կրսէ, աղէկ և օգտակար բան է. և իրմով է որ ամէն արուեստաւորք մէկզմէկ գերազանցելու փոյթ ունին:

Անկէ ետքը լաւ կերպով կրսկսի ցցընել չէ սիոդոս թէ աշխատութենէ և առաքինութենէ ետ կեցող մարդիկ հարկ է որ թշուառ և իրենք իրենց վրայ տժգոհ ըլլան. կը նկարագրէ թէ ոսկեղէն գարուն ժամանակներէն մինչև հիմայ ինչ աստիճանի կերպարանափոխութիւն կրած է աշխարհք. որովհետև Պանդովրայ տուփը, որուն մէջ աստուածք ամէն չարիքը գոցեր պահեր էին, բացուեցաւ, և վիշտք և նեղութիւնք լցին զաշխարհքս: Իր ժամանակը Հինգերորդ կամ երկաթի դար կը կոչէ, և աչքովը տեսած խեղճութիւններն ու թշուառութիւնները ստորագրելէն ետքը, կը յուսայ թէ իրմէ վերջը եղած ժամանակը լաւագոյն պիտի ըլլայ, և ինքը չկարենայ տեսնել: Իշխանաց բռնութիւնները վար կը զարնէ. բայց կը յորդորէ զաղքատս որ մտադիւրութեամբ հնազանդին անոնց: Խրատ կու տայ մարդկանց որ ամէնքը իրենց պարտքը կատարելու անփոյթ չըլլան. վասն զի աստուածք շատ անգամ մէկու մը պակասութեան համար բոլոր քաղաքը կը պատժեն կրսէ: — Ո՛մանք կը համարին թէ աս գործը մեծ քերթուղեան մը համառօտութիւն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:12 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կամ առանձին մասունքն են, որոնք եռքը մասնաւոր անձի մը աշխատասիրութեամբը հաւաքուեր և զատ քերթուած մը ձևացեր են։

Ծննդոց աստուածոց. — Հեսիոդեայ երկրորդ քերթուածին է. բայց ոմանք ասոր հարազատութեանը վրայ կը տարակուսին, և ինչուան պատանիայ ատենն ալ ուրիշի կընծայուէր աս քերթուածը։ Ասոր մէջ աստուածոց ծննդաբանութեան և իրենց իրարու հետ ունեցած պատերազմացը վրայ կը խօսի Հեսիոդոս։ Հերմանն իմաստուն գերմանացի մը՝ աս քերթուածին համար ալ նոյնը կը զուրցէ, ինչ որ ուրիշները վասն Թէոգոնիա բանաստեղծութեան համար ըսին թէ մանաւանդ քերթուածներէ առանձին գիրք մը ձևացած ըլլայ։

Դիոգենաբանութիւն կամ Վահան Հերակլէ. — Կիսատուածոց պատմութիւն մը կը սեպուի Հեսիոդեայ աս երրորդ երկասիրութիւնը։ Աս քերթուածին մէկ մասն է Հերքիւլեայ կամ Հերակլէի՝ Կիւգնոսի հետ ըրած պատերազմին ստորագրութիւնը, ուր տեղիտեղը Հերակլեայ վահանին նկարագիրը կընէ, աս պատճառաւ է որ ամբողջ քերթուածին ալ Վահան Հերակլէի կոչուեր է։

Հեսիոդեայ սրիկ գրուածները. — Հիներն ուրիշ զանազան գրուածներ ալ կընծայէին Հեսիոդեայ, որոնց հիմա միայն անունը մնացած և իրենք բոլորովին կորսուած են։ Ասոնց կարգէն կը սեպուին երկու վարդապետական քերթուածք, որոնցմէ մէկը Դոսփիրոնի կըսուէր, և միւսը Թըռնախօսութիւն, և կամ Թռչնոց խօսքերէն հանդերձեալը գուշակելու արուեստին վրայ տեղեկութիւն։ — Մելամպոկան, որ դիւցազնական քերթուած մըն էր՝ ի պատիւ Մելամպոսի արգոսացւոյ։ — Եգինոս, նոյնպէս ուրիշ դիւցազնական

Generated on 2015-03-16 07:13 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

քերթուածին մը համանուն դորացի կտրըճի մը վրայ, որ Հերքիւլէսի բարեկամն ու սրտակիցն էր: Ասոնցմէ զատ՝ Հեսիոդեայ կընծայուին ուրիշ քանի մը քերթուածները, մանաւանդ թէ դիւցազներգակ քերթուածոյ հատուածները, ինչպէս Հերսանիթ Սֆիթոյ, Հերսանէկան Պելէոսի և Թէլեգոնի՝ Պերիւնեայ՝ ի դծոյս, և այլն: Բայց հաւանական կերեւնայ թէ բեռվոյացի զանազան և այլևայլ ժամանակաց քերթողք իրենց երկասիրութեանցը յարդ մը տալու դիտաւորութեամբ՝ Հեսիոդեայ անունը դրեր են անոնց վրայ. և սա պատճառաւ է որ հիմայ յիշատակուած քերթուածոյ համառօտութիւնը վրայ կը տպրակուին քննաբանք:

Հեսիոդեայ ոճը. — Կուինտիլիանոս հռովմայեցի անուանի բանասէրը այսպիսի դատաստան մը կընէ Հեսիոդեայ ոճին ու քերթուածոյ վրայ. "Քիչ անգամ, կըսէ, վսեմ ոճ կը բանեցընէ Հեսիոդոս. և գրուածոցը մեծ մասը գրեթէ յատուկ անուանք բռնած են. բայց որովհետև բանասիրական շատ օգտակար խրատներ կը բովանդակուին գրոցը մէջ, և ոճն ալ մանաւանդ քաղցրութիւն մը ունի, ուստի և իրաւամբ կրնայ միջակ քերթողաց կարգը դասուիլ: Եւ յիրաւի. Հեսիոդոս առաջին կարգի քերթող չի կրնար սեպուիլ. և իրեն քերթուածքը՝ Հոմերոսի Իլիականին և Ոդիսականին հետ անկարելի է որ բաղդատուին. որովհետև ոչ անոր հանճարոյն արգասաւորութիւնն ունի և ոչ ստեղծական միտքը: Սակայն և այնպէս Տիտանեանց պատերազմին ստորագրութեան և աշխարհքիս անկերպարան էութեան վրայ գրուած ստղերը մեծ յարգ ունին քննաբանից առջև:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:13 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Փիլոն իմաստուն եբրայեցւոյն նախախնամութեան գլուխքերէն սա ևրկու տողս ունինք հետեւեալ քերթուղիւններէն։

“ Գառինս արածէր յԵլիկոնեայ յատուածաբնակ լերինն ,,.

“ Զայլոց վաստակս յիւրեանց որովայն մուծին ,, ։

(Ծննդ. ասք. 23)։

ԳԼՈՒԽ Զ.

ՆՂԵՐԵՐԳԱԿ ԵՒ ՄԵՆԱՎԵՐՋ ԿԵՐԹՈՒԹԻՒՆՔ

Եղէերգակ տերևութեան սկիզբը. — Կալլինոս. — Տիրթեոս. — Արխիլոքոս. — Սիմոնիդես ամորգոսացի։

Եղէերգակ տերևութեան սկիզբը. — Մարդ ինչպէս իր ուրախութեանցը կցորդ՝ նոյնպէս ալ չատ անգամ ցաւոցը օժանդակ և ընկեր կառնէ բանաստեղծական քնարը, և անոր խորհրդական լեզուն՝ վշտաց գառնութիւնը թեթևցընելով, անոյշ բարբառ մը կազդէ իրեն՝ ուրիշներուն իր սրտին տագնապը հասկըցընելու, և զանոնք իրեն մխիթարիչ ընդունելու համար։ Ա՛ս է ահաւասիկ եղէերգութիւն կամ եղէերգակ տերևութիւնը (élégie, poésie élégiaque) և իրեն վախճանը։ Բայց թէ պա տեսակ քերթուղեան առաջին հնարողն ով եղած է, Որատիոսի օրերէն՝ի վեր տարակուսած են բանասէրք [1]։ Հնգաչափ և վեցաչափ խառն ոտք էր եղէերգութեան սեպհական լեզուն, և ան պատճառաւ Որատ՝ անհաւասար փոշտ

1 Ուշտ. Արուեստ տերև. 76։

Generated on 2015-03-16 07:22 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

կը կոչէ։ Սակայն առեն անցնելով՝ Յոյնք սկսան նոյն չափը բանեցընելուն առ ուրախական և ամա֊ փական տաղերու մէջ. և ինչպէս հին պատմու֊ թենէ գիտենք, նոյնը գործածեցին Կալլինոս և Տերտէոս, թշնամեաց զօրութենէն ահաբեկած բանակները խրախուսելու և հայրենեաց սէրը ա֊ նոնց սրտին մէջ վառելու։

Կալլինոս. — Եփեսացի էր Կալլինոս, և հաւա֊ նական կերևնայ թէ Քրիստոսէ 700 տարի առաջ եղած ըլլայ։ Իր երգոցը մէջ տեղ մը յիշատա֊ կուած կը գտնենք առ իմաստը թէ "Հիմա մեր վրայ վազելու կը պատրաստուի կիմմերեանց ա֊ ւարառու բանակը,,։ Ա կիմմերեանք բարբա֊ րոս ցեղի մը ժողովուրդք էին, որ Գիւգէսի ա֊ տեն փոքր Ասիա արշաւելով, Լիւդիան ու բոլոր մերձակայ գաւառքը ոտնակոխ ըրին. Սարդիկէ, Մագնեսիա քաղաքները աւերշարկեցան. յոնիա֊ ցիք և լիւդացիք չկրնալով անոնց դէմ առնել՝ սահպուեցան իսոնարհիլ առջևնին։ — Անգործ ու ազատութիւնը կորսընցընելուն վրայ անտար֊ բեր հայրենեաց վշտերը նկարագրելու համար գրիչը ձեռք առաւ Կալլինոս. և գերութեան շըղ֊ թաներէն սկսաւ չիշարժող ժողովուրդ մը, անոր երգերովը կորսընցուցած փառքն ակսաւ արտա֊ սուել։

Նոյն եղերերգութեան մէկ աքանչելի մասը ա֊ ւանդած է մեզի Ստոբէոս. որն որ կերևնայ թէ երգին սկզբնաւորութիւնն ըլլայ. "Մինչև ցե՞րբ այդպիսի անհոգութեան մը մէջ պիտի ընկղմիք ձնաք, կը գոչէ, ով կուիձներ. մինչև ցե՞րբ դրա֊ ցի ապգայ ծաղուն և արհամարհանաց նիւթ ը֊ նէք ձեր հայրենիքը... Մինչդեռ խաղաղու֊ թեամբ կուզէք ձեր կեանքը անցընել, ահաւոր պատերազմ մը երկիրնիդ տակնուվրայ ընել կը֊

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:22 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

պառնայ . . . գէթ նետերը ձեռուընիս՝ այնպէս մեռնինք. Թշնամեաց դէմ հայրենեաց համար, որդւոց և կանանց վրայ պատերազմելով ինչալը՝ յաղթուելենէ շատ հեռու չէ: Մահուան գալուստը անհրաժեշտ է երբոր Պարկայք, (մարդկային կենաց Թելը մանող աստուածուհիք) սահմանած ըլլան: Հապա, առաջ վազեցէք քաջութեամբ. բաղդին դէմ դնել չենք կրնար: Շատ անգամ պատերազմին ահաւոր վտանգներէն սարսափողին հաճոյից մէջ, խաղաղաբեր անդորրութեան մը առեն մահը վրայ հասեր ու ամբողջ ժողովրդեան մէջ իր վախճանը լացող մը չէ գտած. բայց պատերազմի մէջ մեռնողին չնրիմը՝ բովանդակ հայրենիք իրենց երախտագէտ արտասուօքը կը քանան: Իսկ Թէ որ յաղթութեամբ պայծառացած՝ հայրենիքը և կեանքը միանգամայն ազատէ, իբրև կիսաստուած մը ամենէն պատիւ ու մեծարանք կընդունի ,,:

Եփեսացիք քերթողին խրախուսանօքը սիրտառին, և Կալլինոսի քնարն Եփեսոս ու Յոնիան գերութենէ առաջ եկած ահաւոր վտանգներէ ազատեց:

Տիրթէոս. — Կալլինոսի ժամանակակից էր Տիրտէոս. վասն զի երկրորդ մեսսենիական պատերազմը, որուն պատճառաւ այնչափ անուանի եղաւ Տիրտէոս, 625ին սկսաւ և 662ին լմընցաւ: Պատերազմին սկզբնաւորութեան ժամանակին Աթենքի մէջ էր, և կըսեն Թէ կաղ ըլլալով իր ապրուստը ձարելու համար ուրիշ արուեստ չէր կըրցած գտնել, և անոր համար տղաք կը կարդացըներ: Պատմութենէ գիտենք Թէ ինչպէս սպարտացիք աղետալից արիւնհեղութիւններէ ձանձրացած, աստուածոց պատգամ հարցուցին, ու իրենց Թշնամեացը, մեսսենիացւոց յաղթելու,

Generated on 2015-03-16 07:22 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

զօրութիւն կը խնդրէին : Հարցուկը հրամայեց որ Աթենքէն իրենց գլուխ և ապարապետ մը ուզեն : Որչափ ալ դժուարին ու արհամարհական էր ապարտացւոց առ բանս, աստուածոց հնազանդելու համար հարկ էր մոխիկ ընել. ասոնցմէ ալ զիրենք ծաղր ընելու համար Տիրտէոս կաղ բանաստեղծը խրկեցին : Ձէին գիտեր թէ առ խեղճ մարդը հանճարեղ քերթող ու անուանի ապարապետ մը ըլլայ :

Աթենքէն Լակեդեմոն եկաւ Տիրտէոս . ու ան արիւնուռուշ պատերազմներուն առեն ապարտացւոց մեծամեծ ծառայութիւններ ըրաւ : Գիտնալով թէ աերութեան կամ ազգի մը կործանման գլխաւոր պատճառ՝ իր ներքին երկպառակութիւնն է , շատ ջանքով ընտանի կռիւները դադրեցուց : Թէպետև ընդհանրապէս վայրենի ժողովուրդ մը կը սեպուէին լակեդեմոնացիք , բայց իրենց վրայ ալ մեծապէս ազդեցութիւն կը. նէր երգն ու երաժշտութիւնը , որոնք մարդուս սրտին հետ առանց խորելու խօսող լեզուներ են : Պլուտարքոս կը պատմէ թէ տարւոյն մէջ մանաւոր օրեր ունէին , յորում զանազան հասակէ ձևացած իրեք ազգ պարուց կը կազմէին . ծերերը կերգէին թէ " Մենք ալ առենով երիտասարդ ու կորիճ էինք ,, . երիտասարդք՝ թէ " Հիմա է մեր ուժին առենը . մօտ եկուր որ փորձենք ,, . մանկունք՝ թէ " Մենք ալ պիտի ըլլանք մէկ օր մը , և ձեզմէ ալ աւելի կորիճ պիտի ըլլանք ,, : Պինդարոս ալ կը զուրցէ թէ " Սպարտացիք երաժշտութեան և պատերազմի մեծ հակամիտութիւն կը ցցընեն . և շատ լաւ զուրցած է լակեդեմոնացի քերթող մը՝ թէ երկու բանով մարդուս ինչ ըլլալը կիմացուի , թէ որ առր կամ քնար կաւնայ գործածել ,, : Ա առանկ ըլլալով,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:23 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

զարմանք չէ որ պատմուԹիւնը այնչափ դիւրա-
զգած կաւանդէ զապարտացիս, և ԹԷ լինչպէս Տիր-
աէոսի քնարին ձայնովը խրախուսած մեսենիա-
ցւոց յաղԹեցին: Ձորս տաղ կամ երերերգու-
Թիւն մեր ձեռքը հասած է, որունք աւանդուԹիւ-
նը Տիրտէոսի կընծայէ. և արժանաւոր էն իրեն
հանճարոյն և հայրենասիրական զգածմանցը. և
անոնցմով կիմացուի ԹԷ իրաւամբք Որատիոս գրե-
ԹԷ Հոմերոսի կը հաւասարցընէ իր ՔերԹողա-
կան արուեստին մէջ:

Ցետ ոտքա մեծըն Հոմեր և Տիրտէոս՝ի նըւագս
երդոց
Զոգիս արիականս յարիսական վառեցին գոռ
(Որտ. Ար. ՔերԹ. 400):

Սպարտացիք յաղԹուԹեամբ զուարճացած՝ ի-
րենց բարերար քերԹողին արդիւնքը չիմոռցան.
քանի որ կապրէր, մեծապէս պատուասիրեցին
զինքը. մահուընէն ետքն ալ իրեն յիշատակը մա-
հարձաններով ապագայից աւանդեցին: Բոլոր
սպարտացիք Տիրտէոսի երգերը բերնուց աներեր
ու կերգէին. ու ամէն իրիկուն՝ կերակրէն և ա-
տուածոց սովորական մաղԹանքէն ետքը իրենց
միակ զուարճուԹիւն ան տաղերը կը սեպէին,
որոնցմով Արիստոմենեայ և մեսսենիացւոց յաղ-
ԹուԹեան յիշատակը և քերԹողին արդիւնքը
մոքերնին կը նորոգուէր:

Ար+Լ+ոս. – կալլինոսի և Տիրտէոսի ժամա-
նակակից կըլլայ Արքիլոքոս: Հռչակաւոր Տելե-
սիկլեայ որդին էր, որ Պարոս կղզիէն գաղԹակա-
նուԹիւն մը բերաւ՝ի Թասոս, Քրիստոսէ գրե-
ԹԷ 800 տարի առաջ: Արքիլոքոս Պարոսի մէջ
ծնաւ, գրեԹէ 680ին. և կերևնայ ԹԷ կենայը
վերջի տարիները Թասոսէն նորէն իր ծննդեան

Generated on 2015-03-16 07:23 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

տեղը գարձած ըլլայ . որովհետև Նաքսոսի քնակ-
չաց պարոսացւոց դէմ առած պատերազմին մէջ
մեռաւ : Քերթողական հանճարոյ տէր մարդ և
պատերազմաց ականատես , ինքն ալ քնարն Արե-
սի (մարախց աստուածոյն) նուիրեց . և իր եղեր-
երգուածիններէն մնացած քանի մը հատուած-
ները յայտնի կը ցցընեն թէ արժանաւոր ժա-
ռանգ եղած է Տիրաէոսի և Կալլինոսի : — Արքի-
լոքոս եղերերգուածնէ զատ՝ երգիծաբան քեր-
թուածներ ալ հայր կը ճանչցուի . և թէ որ ին-
քը չէ հնարած մեծավերջ չափը (jambe) , բայց
գլխաւոր և յաջողութեամբ գործածողներէն
մէկն եղած է , ինչպէս Որատիոս ալ կը խոստովա-
նի : Պարոսացի աղջիկ մը իր տեսքովը Արքիլոքոսի
սիրան ու միտքը իրեն գրաւեց . աղջկանը հայրն
ալ Լիկամբէս առաջ խոստացաւ զինքը քերթողին
ու եռքը խօսքը չկատարեց : Արքիլոքոս վերաւոր
սրտով գրիչն ու լեզուն Լիկամբէսի և աղջկանը
դէմ դարձուց , և բոլոր յունաստանի մէջ զիրենք
վատահամբաւեց . կըսեն թէ խեղճերն անանկ ա-
մօթով ընկան որ յուսահատութենէն իրենք զի-
րենք կախեցին :

Արքիլոքոս թէպէտ իր բոլոր ժամանակցաց առ-
ջևն ալ մեծարոյ սեպուած էր ոճովը ու իմաստ-
ներու առատութեամբը , սակայն կիրքը և յուսա-
հատ կատաղութիւնը ոչ երբեք կրնան արդարա-
նալ . " Ես ալ իրեն մեծավերջ չափը հռովմէա-
կան գպրութեանց մէջ մտուցի , կըսէ Որատիոս .
բայց ոչ իր կիրքը որով այնպէս զԼիկամբէս հա-
լածեց ,, :

Սիմոնիդէս ամորգոսացի . — Արքիլոքոսի առեն , և
իրեն սուր լեզուին և գրչին արժանի ժառանգ
երևցաւ Սիմոնիդէս ամորգոսացի , որն որ Քրիս-
տոսէ 660 տարի առաջ կկենայ : Ոմանք կըսեն թէ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:23 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

այլևայլ քաղաքներ չինած, և ետքը հետը գաղթականութիւն մը առած Ամորգոս եկած ըլլայ։ Հոն Արքիլոքոսի ոգեւոյն Որոդոգիդէս անունով պատուաւոր մարդու մը գէմ գրիչը սրելով մեծավէրջ չափով գառն երգիծաբանութիւն մը շարադրեց։ Սակայն Սիմոնիդեայ գլխաւոր պարծանքն ան է որ նոյն չավիղը բարոյական երգիծաբանութիւններ քերթողաբանելու գործածեց, և շատ լաւ յաջողեցաւ։ — Որոդոգիդէսի վրայ գրուած երգիծաբանութիւնէն բան մը չեռուբլնիս հասած չէ. միայն կանանց վրայ չինած մէկ քերթուխիւնը ունինք եռաչափ ոտքով (vers jambique sénaire, trimètre), որուն մէջ կանանց զանազան բնաւորութիւնները կըստորագրէ, և թէ ուսոի առաջ կու գան անոնք. և անգործ անապարձ և չարաբարոյ կանայքը վար զարնելու աստեն կը գովէ համեստ այրասէր և գործունեայ կանայքը։ Ա քերթուածը ոմանք վրիպակաւ Սիմոնիդեայ կէսցուոյ ընծայած են։

ԳԼՈՒԽ Է.

ՄՒՄՆԵՐՄ. — ՍՈՂՈՆ. — ՓՈԿԻԼԻԴԷՍ. — ԹԷՈԳՆԻՍ

Միմներմ. — Սողոն. — Սաղմինեան փերևոացի. — Եղերգուխեան յաղագս անիլեանութեան. — ի պոփօրինոյ փերևոխեան. — Փոկիլիդէս. — Թէոգնիս։

Միմներմ. — Եօթնեերորդ դարուն վերջերը Յոնիա խելաչ վիճակի մը մէջ ընկած էր, Լիւդիոյ թագաւորութեան մէկ մարզը սեպուելով. անոնց բռնութեան տակն էր նաև Զմիւռնիա։ Քերթողք

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:24 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

որ ինչուան ան ատեն ազատութեան յորդորելու և՝ ի պատերազմ գրգռելու գործածեր էին իրենց քնարն ու լեզուն, չէին կրնար նոյն արուեստը բռնութեան մը տակ բանեցընել. հարկ էր որ լեզուն փոխեն: Ասանկ եղաւ նաև Սիմեոմեայ զմիւռնիացւոյ: Ինքը հանճարեղ քերթող, արուեստանաց ու սիրոյ նպաստաւոր առաւ իր լեզուն, և առջինն եղաւ բանաստեղծութիւնը մեղկութեան ծառայեցընողներուն մէջ: Իր քերթուածքին թիւններէն թէպէտ քիչ բան ձեռնընիս հասած է, բայց անոնց մէջ ալ յայտնի կերևնայ թէ ինչպէս կրքով կուրացած միտք և սիրտ ունի:

Սողն. — Ա հռչակաւոր անձը ոչ միայն իր խորունկ քաղաքականութեամբն և տուած խնամտուն օրէնքներովին անուանի եղած է հին պատմութեանց մէջ, հապա նաև ուսմանց և քերթողութեան ունեցած ախորժակովը. մանաւանդ թէ բանաստեղծութիւնը ձեռք առաւ օժանդակ իր ընտիր օգտակար խորհուրդներուն:

Սալամինեան էրնութիւն. — Պլուտարքոս կը պատմէ թէ աթենացիք երկար ատեն Սալամինա կըզգլին ձեռք բերելու համար անօգուտ աշխատանք և պատերազմներ ընելէն ետքը, արգելք մը հանեցին որ այնուհետև մէկը չհամարձակի գրուածքով և կամ բերնով յորդորել զաթենացիս նոյն կղզւոյն տիրելու, և ընողին պատիժ՝ մահ սպառնացան: Սոլոն զայրացաւ այսպիսի վատասիրտ օրէնք մը հաստատելնուն վրայ. կը տեսնէր որ կարիճ երիտասարդք առթի մը կըսպասեին պատերազմը նորէն սկսելու. բայց գրուած օրէնքին խստութենէն ահաբեկած՝ չէին համարձակեր ձայն հանելու: Ասոր յիմարութիւն կեղծելով, բոլոր քաղքին մէջ և ինչուան ընտանեաց առջև խենթի անուն ձգեց. սակայն նոյն միջոցին մէջ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:24 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ծածուկ եղերերգուԹիւն մը չարագրեր և բեր-
նուց սերտեր էր. օր մը ելաւ ու վազելով գէպ
'ի հրապարակն սկսաւ երԹալ։ Բոլոր քաղաքա-
ցիք Սոլոնի եաւէն գացին. և հոն տեսան որ ա-
ւեննախօսաց բեմին վրայ ելած, սրտաշարժ եղեր-
երգուԹիւն մը կարտասաներ Սալամինան նո-
րէն ետ առնելու վրայ։ Եւ երբոր վերջին երկու
խրախուսական տողերը զուրցեց ԹԷ "ԵրԹանք
'ի Սալամինա, ելԹանք պատերազմելու ան սի-
րելի կղզւոյն վրայ, և յաղԹուԷլուն ամօԹը մեզ-
մէ փարատենք,, բոլոր աԹենացի երիտասարդք
մէկբերան աղաղակեցին. "ԵրԹանք 'ի Սալա-
մինա,,։ ՏէրուԹիւնն ստիպեցաւ իր առջի հրո-
վարտակը ետ առնելու. դիմեցին պատերազմի, ու
հարկ եղաւ որ մեգարացիք ելլեն ան կղզիէն։

ԵղերերգուԹիւն 'ի վերայ անիշխանուԹեան.—Պատ-
մուԹենէ գիտենք ԹԷ Սոլոնի օրէնքները հաստա-
տելէն առաջ ինչ խեղճ վիճակի մէջ էր Աթէնք,
անիշխանուԹենէ զօրանալուն պատճառաւը։ Հարկ
էր որ Սոլոն իր օրէնքները չհաստատուած ցցը-
նէ ժողովրդեան ԹԷ ինչու համար կուզէ ան նոր
սահմանադրուԹիւններն ընել։ Ան վախճանաւ
չարագրած է ՅաղափանիշխանուԹեան եղերերգու-
Թիւնը, յորում կոլբայ տէրուԹեան վերահաս
վտանգը և վնասները, կըստորագրէ ոամկավար
իշխանաց սւարատուԹիւնները, աղքատաց և գե-
րիներու խեղճուԹիւնը։ ԱնիշխանուԹեան չա-
րիքը նկարագրելէն ետքը կանցնի ճարտար դրչով
անոր հակառակը ցցընել, և ԹԷ որչափ բարիք ա-
ռաջ կու գան իմաստուն կարգադրուԹիւններէ։
Ասանկով կրցաւ Սոլոն միահեծան իշխանուԹիւն
մը ունենալ քաղաքակցացը սրտին վրայ, և իբրև
աստուծոյ մը՝ անանկ իրեն կը հնազանդէին։

Սոլոնի 'ի պոփխ օրինաց եղերերգուԹիւնները.—

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:25 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կըսեն թէ Սողոն կուզէ եղեր դիւցազնական չա-
փերու վրայ առնել իր օրէնքները և այնպէս ա-
ռանդել յետոյց, ինչպէս Պլուտարքոս ալ կը յի-
շատակէ. սակայն հաւանական կերևնայ թէ ետ-
քը միտքը փոխած ըլլայ, մեացորդ մը կամ ուրիշ
յիշատակութիւն չի գանելնուս համար. բայց եթէ
ուզենար, կրնար ընտիր իրատական բանաստեղ-
ծութեան ոճով շարադրել, ինչպէս իրմէ առաջ
յաջողութեամբ նոյնը ըրեր էր Զալևկոս:

Սողոն երբոր սահմանած օրէնքները հրատա-
րակեց և անոնց արգասիքը տեսաւ, կերևնայ թէ
ինքն ալ հաւնեցաւ ըրած բարեկարգութեանցը,
և սկսաւ նորանոր եղերերգութիւններ շարադրե-
լով իր արդիւնքը հռչակել. "Ժողովրդեան մը
համար հարկաւոր եղած իշխանութիւնը իր ձեռ-
քը յանձնեցի, կըսէր, առանց իր պատուոյն վը-
նաս մը տալու. մեծատանց և կարող մարդկանց
ալ արգիլեցի որ չկարենան անիրաւութիւն ընել:
Երկու կողմանէ ալ ձեռքը անյաղթելի վահաններ
տուի, որ իրարմէ չկարենան ընկճիլ,,:

Սողոնի ծերութեան գրաւածները. — Սողոն օրէնք-
ները գնելէն ետքը քիչ մը ատենուան համար հայ-
րենիքէն հեռացաւ: Բայց երբոր նորէն Աթէնք
դարձաւ, տեսաւ որ քաղաքն երկու բաժնուած,
ոմանք Մեգակլէսի՝ ուրիշներն ալ Պիսիստրա-
տեայ կուսակցութիւն կընէին: Պիսիստրատ իր
կուսակցաց բազմութեամբը զօրացած՝ շատ աշ-
խատութիւն չունեցաւ իր թշնամին ընկճելու, և
իբրև թագաւոր մը՝ Աթենքի իշխեց: Սողոն ատ
բանին վրայ զայրացած՝ նորէն գրիչը ձեռք ա-
ռաւ, և զաթենացիս ընդդեմ Պիսիստրատեայ կը
գրգռէր. և երբոր իր բարեկամներէն ոմանք կա-
պաչէին որ լեզուին սանձ դնէ, օրպէս զի բռնա-
ւորն առիթ մը չգանէ գլխուն չարիք հասցընե-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:25 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

լու, "Ծերացած մարդու մը համար, կլաէր, մեծ ամօթ է մահուընէ վախնալը ,, : Բայց Պիսիսթրատ որ բռնաւորութեանը հետ խորագիտութիւն ալ ունէր, որպէս զի աթենացւոց աչերէն չվրիպայ, ամենայն մեծարանօք կը պատուէր զՍողոն. և ոչ միայն իր սահմանած օրէնքներուն դէմ չբրաւ, հապա նաև խստիւ կը պատուհասէր զանցառութիւն ընողները: Այսպիսի վարպետութեր զՍողոն լռեցուց, և իրեն բարեկամ ըրաւ:

Ձենք գիտեր թէ երբ կամ ինչ առթով չարագրեր է Սողոն ի պոռնկատեաց եղերերգութիւնը, որն որ իր գրուածոց մէջէն ամբողջ ձեռնիս հասած է: Այ եղերերգութիւնն ընտիր բարոյական մըն է, յորում կըստորագրէ թէ ինչպէս մարդիկ խղճմտանաց ձայնին մտիկ չընելով, կուրութեամբ իրենց կրիցը կը հեաևին. կը նկարագրէ անոնց խաբուսիկ փառասիրութիւնը և ակնկալութիւնները, քաշած նեղութիւններին և վերջապէս աչխարհքէ ելլելնին. և կը կնքէ թէ իմաստութիւնն է միակ և առաջին և գերազանց բարի: Ընտիր խրատներ կը պարունակէ սա քերթուածը, և թէ ինչպէս արժան է որ բարեկամաց, ընտանեաց և ծշնամեաց հետ վարուինք. "Այո, կը գոչէ, ես ալ կուզեմ հարուստ ըլլալ, բայց չեմ փափաքիր որ դիզած ճոխութիւնները անիրաւութեամբ ժողվուած ըլլան. վասն զի գիտեմ թէ անանկով ձեռք բերուած ճոխութիւնը՝ քիչատեն չշուառութեր կը ծնանի ,,:

Առանցմէ շատ ուրիշ քանի մը մասներ քերթութիւնք կը յիշատակուին Սողոնի անուամբը, ինչպէս Ափլանտական ըսուածը, որոնք իրեն քաղաքական հանճարոյն և կիրթ մտացը հայելին կրնան սեպուիլ:

Փոլիտիէս. — Որովհետև Սողոնի քերթուածից

մէջ շատ ընտիր բարոյական խօսքեր և վճիռներ կան, ուստի իրաւամբ խրատական ըսուած քերթողներէն (poète gnomique) կրնայ սեպուիլ։ Բայց նոյն տեսակ քերթուածիւնը շատ ծաղկեցուց Փոկիւլիդէս միլեսացին, որ դրեթէ Սողոնի ժամանակակից կամ անկէց քիչ մը եառքը կը սեպուի. և իրեն քերթուածոց ամէն մէկ տողը կարծես թէ մէյմէկ պատգամներ էին։ Համառօտախօս ոճը յարգելով, ինչպէս բնական է ամէն խմաստասէր մտաց, իրմէ առաջ եղած ուրիշ շատ քերթողներուն գրուածքը համառօտի կը վերածէր, ընդունայն զարդերն ու խօսքերը դուրս թօթափելով. սանկ Սիմոնիդեայ ամորգոսացւոյ երգիծաբանութիւնը ուղիղ տողի մէջ միայն բովանդակեց։ Սակայն Փոկիւլիդեայ անուանքը հիմա գտնուած խրատական խօսքերուն հարազատութեանը վրայ կը տարակուսին բանասէրք։ — Հապնեղգուք Հոմերոսի, Հեսիոդեայ և Արքիլոքեայ քերթուածոց հետ ասոր շարադրածներն ալ կերգէին. այնչափ մեծարոյ էր Ցունաց առջևն իր անունը, և երկասիրութիւնքն ախորժելի։

Թէոգնիս. — Փոկիւլիդէս իր բարոյական առածները յեանոց աւանդելու համար ընդհանրապէս դիւցազնական չափը գործածեց. իսկ Թէոգնիս, խրատական քերթողաց մէջէն գլխաւորաց մէկը, եղեերգակ ոճ բանեցուց։ Իր առեղը պատահած անցիցը վրայ շատ քերթուածիւններ շարադրած է Թէոգնիս, որոնցմէ քիչ բան ձեռնընիս հասած, և անոնք ալ ժամանակին հնութեամբը և տգիտաց ձեռքով հաւանական կերևնայ թէ մեծ փոփոխութիւն կրած ըլլան։

Մեգարացի էր Թէոգնիս, ու վեցերորդ դարուն վերջին կիսուն մէջ կապրէր. ու կերևնայ թէ ինչուան մարական երկրորդ պատերազմին

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:27 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ականատես եղած ըլլայ։ Թէոգենէս ժողովրդենէ օգնութիւն գտնելով, եկաւ Մեգարայի ալ տիրեց, ու քաղքին ազատութեանը պաշտպան ու ցանկացող Թէոգնիս քերթողը իր հայրենական ժառանգութիւններէն զրկելով՝ օտար աշխարհք մը արտասահմանեց։ Հաւանական կը կարծուի թէ՝ ի թերեւ մեռած ըլլայ Թէոգնիս, թէպէտեւ հաստատուն տեղ մը չէր բնակեր. և իր երգոցը մէջ կը յիշատակէ Սպարտա, Սիկիլիա և Եւբէա ըրած ճանապարհորդութիւնները։

Թէոգնիսի խրատական առածները. — Ընտիր ոճով ընտրեալ գործոյ քարոյական առածներ աւանգած է Թէոգնիս, որոնք հեթանոս մարդու մը բերանը իր վարուցը լաւութեան նշանակներն են։ Նախ գանգըտիլ կը ցցընէ Աբրամազդայ թէ ինչպէս ան մեծ աստուածը, որ ամէն մարդուն ինչ ըլլալը լաւ գիտէ, թող կու տայ որ անօրէնք և իրենց օրինաց դէմ եկողք՝ հանգիստ ու հանդարտ կեանք մը ունենան, մինչդեռ օրինապահը և բարեխրատ ընեղութեան, տառապանաց և վշտաց մէջ կը տուայտի։ — Հին գանգատ մը որ շատ մարդու բերնէն լսուած է և կը լսուի։ — Թէոգնիս իմաստութեամբ կը պատասխանէ, և կը լռեցընէ այսպիսի գանգատ ընողները. կը ցցընէ թէ ինչպէս մարդուս պարտքը կրել ու համբերել ըլլալով, ընդհանուր իր արժանը կը կատարէ, մինչդեռ հաճոյից մէջ ընկղմած անօրէնը մարդկութենէ գուրս անբան մըն է, և ոչ Աբրամազդայ մտադրութեանը արժանաւոր։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:27 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԼՈՒԽ Ը.

ԽԵՂԿԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐ ԵՒ ԱՌԱԿՔ

Հիպոնաքս. — Անիանոս. — Աթաղիս. — Եղվէոս։

Հիպոնաքս. — Ըստ համբաւ ունեցաւ հնոց մէջ Հիպոնաքս մեծավէրպ եռաչափ կամ անհաւասար քերթուածեանց մէջ մտուցած նորութեամբը. որովհետև Արքիլոքեայ, Սիմոնիդեայ և Սոլոնի գործածած եռաչափը դեռ զանազան տակաւութիւններ ունէր։ Հիպոնաքսի ատ նորոգութիւնը յունական առումով կոչ ընծաւէրպ (choliambe) բառեցաւ. և ինքը նոյն չափը բանեցուց կատակաբան դիւցազներգութիւններ (parodie) շարադրելու. և ատ ոճով յօրինած երգիծաբանութիւններէն քիչ բան ձեռնրնիս հասած են։

Ինքը Հիպոնաքս Յոնիոյ Եփեսոս քաղաքը ծնած էր, Կրիտոսէ առաջ վեցերորդ դարուն վերջն կիսուն։ Ամենագորաս և կոմաս բռնաւորք երբոր զինքը հայրենիքէն վերժեցին, Կղազոմեն քաղաքը քաշուեցաւ, և հաւանական կերևնայ թէ հոն անցուցած ըլլայ կեանցը վերջն տարիները։ Թէպէտ յոնիացի էր Հիպոնաքս, բայց ոտպտական ժուժկալ չափաւորութիւն մը վրան կերևնար. հայրենեաց ազատութեան սիրով վառուած՝ երբոր կը տեսներ որ ուրիշները նոյն մեռածութիւնքը չունին, և աւելի կախորժին գերութեան մէջ հանգիստ կեանք մը անցընել քան թէ պատերազմներով ան խազաղութիւնն ալ կորսընկրնել, որուն ցաւէն սկսաւ իր հայրենակցացը

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:27 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ախտերն ու մոլութիւնները վար զարնելով վի-
րենք նախատեէ։

Կը պատմեն թէ Հիպոկռնաքսեայ տգեղութիւ-
նը իրենց շահու առիթ մը առնելով, գիտացի
երկու արձանագործք, անոր դիմացը նկարագիրը
ժողովրդեան ծաղուն նիւթ մը ըրին։ Ան քանս քեր-
թողին բարկութիւնը գրգռեց. և չիկրնալով ու-
րիշ կերպով մը վրէժն առնել անոնցմէ, հարկ
եղաւ որ Արքիլոքեայ և Սիմոնիդէսի ամորգոսա-
ցւոյ պէս՝ իր երգիծաբան գրչովը ու լեզուովը հե-
տերնին պատերազմի։ Վախճանին ալ հասաւ.
Լիկամբեայ պէս իրենք ալ յուսահատութենէն
ինքզինքնին կախեցին։

Անիանոս. — Հիպոկռնաքսեայ աշակերտ՝ և իրեն
բաւական յաջողութեամբ հետեւող՝ երգիծաբան
քերթող էր նաև Անիանոս։ Ուր տեղացի ըլլալը
չի գիտցուիր. անկէց է որ ոմանք կը կասկածին
թէ ասոր անուամբը յիշատակուած քերթու-
թիւնք ալ Հիպոկռնաքսի ըլլան։

Առակ. — Առակը (apologue) որ հասարակ ժո-
ղովրդեան կրթութեանը համար դիւրին և ամե-
նայարմար միջոց մըն է, յունական դպրութեանց
մէջ նախ Հեսիոդեայ գրոցը մէջ կը գտնենք, և
քանի մը հատուածներ ալ Արքիլոքեայ քերթու-
թեամբը. սակայն իբրև առանձին ազգ քերթու-
թեան ծաղկիլը վեցերորդ դարուն մէջ եղած կե-
րևնայ, Հիպոկռնաքսէ և Անիանոսէ ետքը։ Յոյնք
առաջին գտիչ և ծաղկեցուցիչ զԵզովբոս կը հա-
մարին, որ իրակացի մըն էր։ Սակայն Եզովբոսի
գոյութիւնը ոմանք տարակուսի տակ ձգած են,
ոմանք ալ վրան այլևայլ առասպելներ շարադրած։
Մենք աս անուանի առակախօսին վրայ մանաւոր
զուրցելիք մը չունինք, որովհետև ազգերնուս թէ
իր վարքը և թէ առակները շատոնց ծանօթացած

Generated on 2015-03-16 07:34 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

կրկին Թարգմանութեամբ, գրաբառ և աշխարհաբառ, և գպրոցներու մէջ Թէ դասախարակութեան հրահանգիչ և Թէ զուարճութեան նիւթ մը սեպուած են: Միայն քանի մը բան կուզենք յիշեցընել Թէ հայերէն աշխարհաբառ Թարգմանուած Եզովբոսի վարուցը մէջ, որ Բլանուա անունով յոյն կրօնաւորի մը երկասիրութիւնն է, շատ անտեղի ու չհաւատալի բաներ կը պատմուին, որոնց հարազատութիւնը միաբան կը մերժեն բանասէրք: Եւ երկրորդ՝ որ նոյն գրոց մէջ աւանդուած ամէն առակները Եզովբոսի չեն. այլ մանաւանդ Թէ շատերն ուրիշ յոյն քերթողաց երկասիրութիւնք, որոնք եաքը ամէնը մէկէն Եզովբոսի անուամբը ծանօթացեր են: Անանկ եղած է ուրիշ շատ ազգաց մէջ. ինչպէս արաբացիք ամէն առակ Լոգմանայ կընծայեն, հին քերթողի մը, և օսմանեանք՝ ամէն կարգէ դուրս դիպուածք և զուրցուածք Նասրատտինի, անծանօթ մարդու մը:

Եզովբոսի առակներէն երեսունի չափ հինհախնեաց Թարգմանած ունինք ընտիր հայկաբանութեամբ, որոնք Ղոմխիանոս անունով յոյն մատենագրի մը կընծայուին: Հարկաւոր քննութիւնը հարկ է որ հայերէն դպրութեանց պատմութեան մէջ ըլլայ:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:35 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԼՈՒԽ Թ.

ԵՒՈՂԱՑԻ ՓՆԱՐԵՐԳԱԿ ՓԵՐԹՈՂՔ

Տէրպանդը. — Յոռնական էրաքլուձ-ն. — Տէրպանդրի յաջորդները. — Անձեռի խաղաղավար էրգերը. — Քնար. էրգակ էրևուելիները. — Սաֆֆով. — Երինաս. — Արեան:

Տէրպանդը. — Առաջ ալ յիշեցինք Թէ Լեսբացւոց աւանդութիւն է որ երբ Որփէոս քերթողահայրը մեռաւ, աեղւոյն բնակիչքը անոր գլուխն ու քնարն առին ու Հեբրոս գետին մէջ ձգեցին, զորոնք գետին ջուրն ու հոլմունքը առին ինչուան Լեսբոս կղզւոյն ափունքը տարին: Անտիսացիք ալ իրենց երկրին մէջ գերեզման մը կը ցցընէին հաստատելով Թէ հոն ամփոփուած ըլլան Թրակացի քերթողէն ճնացած աս ցանկալի գանձերը: Իր և քնարին զօրութիւնն է, կըսէին, որ այնպէս գեղեցիկ կը Թրթռացընէ եւռլայի քերթողաց քնարին լարերը, և ինչուան անբան արարածք, Լեսբեայ անտառներուն մէջ բնակող սոխակները ձայնաւոր երաժիշտ կընէ:

Լեսբացւոց աս պարծանքը բոլորովին անհիմն չէր. որովհետև նոյն կղզւոյն բնակիչքը հին Իւնովտիայէն եկած էին, ան աշխարհէն՝ որուն հին մուսայքը և Թրակացի երգիչք պարծանք եղեր էին, և անոնց հանճարոյն ժառանգ, յիշատակնին ալ մեծարանօք կը պատուէին. և աս պատճառաւ եղած են Որփէոսի վրայ հռչակուած առասպելքը: Հոն լրեղոց գաւառին մէջ Քրիսատես 700 տարի առաջ երևցաւ Տերպանդը, Կալլինոսի և

Տիրտէոսի ժամանակակից. ինքը կը սեպուի գտիչ եօթնաղի քնարին, հայր քնարերգակ քերթողաց և յունական երաժշտութեան դրութեանը (système): Ինչ որ ասանուանի երգչին վրայ կը պատմուին՝ յայտնի կը ցցընեն թէ որչափ մեծարոյ էր իր համբաւը ամենուն առջև: Երբոր յունաստանի մէջ ճամբորդութիւն կընէր, ամէն քաղաք յաղթանակաւ կընդունէին զինքը. լակեդեմոնացիներն իր երգերովը զարմացուց, և՛ի պատիւ Ապողոնի եղած քերթողական հանդէսներու մէջ միշտ ինքն ընդունեցաւ յաղթութեան մրցանակը. ափսոս որ իր երգերէն բան մը ձեռնընիս հասած չէ:

Յունական երաժշտութիւնը. — Տերպանդրի վրայ խօսելու առեննիս հարկ է որ քանի մը բան ալ յունական երաժշտութեան վրայ զուրցենք: Իրեք ցեղ երաժշտութիւն կար մէջերնին. դորեցի, ֆռիգիացի և լիւդացի: Առնց մէջ դորացին քուն ազգային երաժշտութիւն կը սեպուէր, իրեն ծանր ու մեծավայելուչ և այրական կերպին համար. փռիւգացին զօրաւորագոյն և աւելի կիրք շարժելու յարմար էր. իսկ լիւդական երաժշտութեան ձայները աս երկուքէն բարձր ըլլալով, աւելի կանանց և աղջկանց կը յարմարէր. որով առջիններէն աւելի քաղցր ու ներդաշնակ և սիրտ շարժող թէ ուրախական և թէ մանաւանդ սրտնրական եղանակներովը: Արիստոտէլ որ իր քաղաքավարութեան (politique) գրքին մէջ շատ ընտիր պատուէրներ աւանդած է տղայոց դաստիարակութեան վրայ, լիւդացի երաժշտութիւնը ամենէն աւելի յարմար կը սեպէ անոնց մտաւոր կրթութեանը: Փռիւգացի և լիւդեան երգերը յունաստանի մէջ մոցընողներն եղան լեսբացի քերթողք և Տերպանդր, որով Յոյնք յաջողեցան

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:36 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

վեցալին քնարը գտնելու, որուն Թրթռալը և ա-
նուշ ձայնը ամենայարմար սեպուեցաւ մարդու
սրտին ամէն զգացմունքը բացատրելու։

Տէրպանդրի յաջորդները.— Տերպանդրի յաջորդ-
քը Թէ Յոյնք և Թէ օտարք, կերևնայ Թէ պարզ
գործիաւոր երաժիշտք էին. որովհետև անոնցմէ
և ոչ մէկուն վրայ կը յիշատակուի Թէ քերթողու-
Թեան եռևէ հղած ըլլան։ Իսկ Լեսբոսի վարժա-
րանը երկարժամանակեայ անշուշտ լուսաւորեալ ե-
քը, եօթնեւրորդ դարուն վերջերը Որփէոսի ժա-
ռանգ երկու քերթողք ընծայեց, զԱլկէոս և զՍա-
ֆիփով.

Ալկէոս.— Ազնուական տնէ էր Ալկէոս, և ան
պատճառաւ շատ վերաբերութիւններ ունեցաւ
ան քաղաքական գործողութեանց մէջ, որոնցմով
քիչ տարուայ միջոցի մէջ Մեթիմնէի բազդը զա-
նազան կերպարանափոխութիւններ կրեց։ 612ին
Տրովադայ մէջ կը պատերազմէր աթենացւոց դէմ,
որոնք Սիգէոն քաղաքը իրենց իշխանութեան տակին
առեր էին։ Նոյն միջոցին իր երկու եղբարքը, Ան-
տիմենիդէս և Գիդիս միաբանած՝ Մեթլանդրոս
բռնաւորը Մեթիմնէի մէջ ապաննեցին։ Սակայն
չկրցան վախճաններնուն հասնիլ. որովհետև
ռամկապետականք ոչ միայն չվախցան իրենց պա-
հանջմունքներէն ետ կենալու, հապա նաև գըլ-
խաւորներնուն մահուանը վրէժը խնդրելու խրա-
խուսեցան։ Յաղթեցին, և գլուխ վերցնողներէն
շատը սպաոտեցին. անոնց մէջ էր նաև Ալկէս իր
Անտեմենիդէս եղբօրը հետ. որն որ գնաց Բաբե-
լոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորին հետ միա-
ցաւ, ու Եգիպտոսի Նէքաւով Թագաւորին վրայ
քալեց պատերազմով. իսկ Ալկէոս ան միջոցին
զանազան աշխարհքներ պտըտեցաւ։ Աւեն անց-
նելէն ետքը իր եղբօրը հետ գարձեալ Լեսբոս ե-

Generated on 2015-03-16 07:36 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

կաւ, և իրենց գլուխը ժողվելով նաև մեկալ աք-
սորեալքը, մոքերնին դրած էին զինքը ձեռնուը-
նին մտնել 'ի Մելիտինէ: Սակայն հարկ եղաւ որ
իրենց անտեղի պահանջմունքներէն ետ կենալով՝
քաղաքացւոց հետ հաշտուին, և հանդարտու-
թեամբ պարտքերնուն եռևէն ըլլան. անով յան-
ցանքնին մոռցուեցաւ:

Ալէքսի Հաղափական Երգերը. — Ալեքսս գործու-
նեայ և կողմնակցութեան մարդ ըլլալով, բա-
նասաեղծութիւնն իբրև զօրաւոր զէնք մը ձեռքն
առաւ իր քաղաքական թշնամեացը դէմ, և շատ
անգամ զիրենք դողացուց: Սակայն իր քերթու-
թիւններէն կիմացուի թէ ընդհանրապէս իրեն
թեւադիր կիլլքն էր. անկէց է որ մէջը կծու երգի-
ծանքներև աշխոյժ նկարագրութիւններ չեն պակ-
սիր. բայց խորունկ փիլիսոփայութիւն և հաստա-
տուն պատճառներ, որոնցմով որ և իցէ գործ կըր-
կին յարգ կառնէ, քիչ են: Ալեքսս միտքը դրեր
էր թէ աղնուապետական իշխանութեան վերնա-
լովը, տէրութեան կամ թագաւորութեան մը ժո-
ղովրդոց բաղդը տնօրինելու ամէն միջոց կը պակ-
սի. և չէր գիտեր թէ շատ անգամ ժողովուրդը
ազնուականաց դէմ գրգռողն ասս վերջիններուն
չափազանց շռայլութիւնը և անյագ փառասիրու-
թիւնն եղած է: Ընոր համար է զՊիտտակոս այն-
չափ արհամարհելը, և ինչուան նորանոր բա-
ցատրութիւններ և բառեր փնտրելը զինքը նա-
խատելու:

Սակայն եթէ Ալեքսսի գրուածքը կրնէ ուզե-
նանք բաժնել, ընտիր քերթող մը կը գտնենք զին-
քը: Բարձր մտածութիւններ ունի. և երբոր ի-
րեն նիզակակից զինուորելոց հետ կը խօսի, կար-
ծես թէ հին դիցապաշտ լեզուս մըն է բանեցու-
ցածը: Սպարտացւոց պէս կը սորվեցնէր թէ քա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:37 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

զաքի մը համար ամուր պարիսպ մարդիկներն են. անսկրտ քաղաքացւոց ընդունայն են իւրանելը, փոսերև լայն պարիսպներ: Մէկ անգամ մը միայն կեանքը փառքէն աւելի նախադաս սեպեց իր պատանեկութեան առեղծը, երբոր աթենացւոց գէմ գումարուած Սիգէոնի պատերազմին մէջ էր:

Անէոսի ոսկի երգերը. — Անկեոսի անուամբը ոսկի երգեր ալ կը գտնուին, որոնցմով յոյնին կերևնայ թէ բոլորովին քաղաքական զբաղմանց մէջ ընկղմած չէր. հապա գիտէր իր հաճոյքին ալ եռևէ ըլլալ: Բաքոսի կամ գինւոյ աստուծոյն վրայ շարադրած երգեր ունի, նոյնպէս սիրոյ տաղեր ուղղուած առ Սափփով քերթողուհի. որոնց, ինչպէս լսինք, միայն հատուածները կան: Մասնաւոր չափ և ոտք սահմանած ալ էր գլուխեան, որ իր անուամբը ալէոն ըսուած կը յիշատակուի հնոց մէջ: Ոլատիոս լսելին քերթողը շատ բանի մէջ հետևած է Անկեոսի ոճին, իր գրչութիւնը ուժ և կորով մը տալով յոյն քերթողին երգոցը մէջ եղեալ մեղկութիւններուն:

Սափփով. — Ան կարգէ գաւրս հանճարոյ տէր քերթողուհին կերևնայ թէ Անկեոսէն քիչ ատրի եսքը ծնած է: Չի գիտցուիր թէ ինչ պատճառաւ 576ին աւեններէն Մեղիսինէին հեռացաւ, և երկար տեն Սիկիլիա կեցաւ: Հերոդոտոս կսանդ է թէ Սափփովայ ընտանիքն անուանի էին Մեղիսինէի մէջ ազնուականութեամբ և ընչիք: Սափփովի վարուցը վրայ զանազան բաներ կը պատմուին. ոմանք միայն իրեն հանճարը, ուրիշներն ալ հանճարոյն հետ նաև վարքը գովելով. սակայն հաւանական կերևնայ թէ վարքը այնչափ գովելի եղած չըլլայ. մանաւանդ թէ զանազան կրից գերի եղած, վերջը վերջը, յուսահատութեամբ ինքզինքը լեւկադեան ատրէն վար նետելով սպաննուելէն մահ մը ունեցաւ:

Generated on 2015-03-16 07:37 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

Սափփովայ էրիտուխէտը. – Ոչ միայն սիրոյ, հապա ուրիշ զանազան նիւթերու վրայ ալ այլևայլ քերթուղիներ շարադրած ըլլալով Սափփով, Յունաց դպրութեան պատմութեանցը մէջ նշանաւոր տեղ մը բռնած, ու ինչուան պոռնէրոյ Տուսոյ ըսուելու պատուոյն արժանաւոր եղած է: Բայց իր երկասիրութիւններէն շատը կորսուած, միայն քանի մը հարսանեաց կամ առագաստի երգերու (épithalame) պատառիկներ ձեռնընկած են, արժանաւորք իրեն հանճարոյն և համբաւոյն: Հաւանական կերևնայ թէ Կատուլլոս, հռովմայեցի քերթողը, իր երկու առագաստի երգերը Սափփովայ նմանութեամբը շինած ըլլայ: Սողն իր ծերութեանը առեն իր եղբօրորդւոցը մէկուն բերնէն Սափփովայ քերթուղեանց հատուած մը լսելով, մէկէն ուզեց բերնուց առել. "Ամէն է, կըսէր, որ առանկ հատուած մը չիգիտցած մեռնիմ":

Երիննա. – Սափփովայ քերթուղիներէն և վարուցը պատմութենէն կիմանանք թէ ուրիշ կանայք ալ կային նոյն առեններըը իրեն հետ քերթողուհեամբ մրցողք: Բայց ատոնց մէջ հռչակաւորագոյն էր Երիննա, որ իր ծաղկէ ատոցը, տասնըուրը տարուան հասակին մէջ մեռաւ, և Սափփովէն գատահարակուղիւն առնող և գաս լսող աղջկանցմէ էր: Իւ կամ աղէկսս (ըոք) ըսուած երեքհարիւր տող մեծաչափ վանկով քերթուղիւն մը շարադրած էր Երիննա, անանկ համբաւաւոր գեղեցկութեամբ, որ իր ժամանակակից քը հռոմերուն վիպասանական քերթուղեանցը հաւասարապատիւ կը սեպէին: Երիննայի կընծայուէր նաև 'ի պատիւ զօրութեան աստուծոյն եւողեան բարբառով և սափփովեան չափով գրուած երգ մը:

Արիոն. – Լեսբոսի Միթեմնա քաղաքէն էր Ա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:37 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

բիոն, և Ալկէոսի, Սափփովայ և Երիննայ ժամանակակից: Հերոդոտոս ասոր համար կը պատմէ թէ անանկ ճարտար նուագահար էր, որ ինչուան ծովային նհանգք ալ ախորժելով կու գային իրեն երգոցը քաղցրութեամբ զմայլելու: Դիպուածով ծովէն ընկաւ Արիոն, և երբոր մահուան վերահաս վտանգին մէջ էր՝ իրեն երգերովն զմայլած դելփին մը եկաւ կռնակին վրայ առաւ ու ցամաքը ձգեց կենդանի: Թէպէտև իբրև առաստակ մը ուզենանք ընդունիլ աս պարագան, սակայն և այնպէս իրեն ճարտարութեանը մեծ ցոյց է, որով կրցեր է անանկ առաստակելի արժանի ըլլալ:

Հին մատենագիրներէն շատը կը վկայեն թէ ինքն Արիոն եղաւ երկդունեին կամ՝ ի պատիւ Դիոնիսոսի երգուած տաղերը ծաղկեցընողը, որով հետև իրմէ առաջ ամենևին երաժշտական կարգաւորութիւն մը չունէին. և Արիոնի ջանքովը ան անկերպարան տաղերը վայելչութեի և ընորհք առին:

ԳԼՈՒԽ Ժ.

ԴՈՐՅԱՑԻ ՓՆԱՐԵՐԳԱԿ ՓԵՐԹՈՂՔ

Ալկման և իր երգոց յատկութիւնները. — Քէրնոզական լափը. — Սթեսիքոր. — Իբիկոս. — Լասոս. — Կորինա:

Ալկման և իր երգոց յատկութիւնները. — Կերևնայ թէ Քրիստոսէ առաջ վեցերորդ կամ եօթներորդ դարուն մէջ էր Ալկման, որովհետև իր քերթուածութեանցը մէջ պիւթիսեան կղզեաքը կը յիշէ, որոնք ան ժամանակներէն առաջ ծանօթ չէին Յունաց:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:38 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Լիւդիոյ Սարդիկէ քաղաքը ծնած էր Ալկման, ի-
նեղէ և աղքատ ծնողաց զաւակ։ Ագեսիլայոս ա-
նունով սպարտացի մը իր պատանեկութեան ա-
տենը սարկով գնեց զինքը, ու հետը հայրենիքը
Լակեդեմոն բերաւ, ուր որ Ալկման սպարտացի
սիրա և հոգի ստացաւ. անով սիրելի եղաւ իր տի-
րոջը, ու գերութենէ ազատելով՝ հանձարոյն հա-
մար քաղաքացի գրուելու պատուոյն արժանաւոր
սեպուեցաւ։ Ինքզինքը բանաստեղծութեան տը-
ւաւ Ալկման, և իրեն երգերովը և հնարած քեր-
թողական չափովն արժանաւոր համբաւ և պա-
տիւ ստացաւ։ Ինչուան իր ատենը դորացի բար-
բառը բրտաձայն սեպուելուն համար անյարմար
կը գտսուէր քերթողական փափուկ խմաստներ
բացատրելու. Ալկման չանքովն ու խնամքովն ա-
նանկ ներդաշնակութեան հասուց ան լեզուն որ
հաւասարապատիւ սեպուեցաւ յոնիական և եօ-
ղական բարբառոց։

Թէպէտ Ալկմանայ քերթուածներէն քիչ
բան ձեռնրնիս հասած է, բայց անոնցմով ալ
կիմացուի վարպետ գրչով և սրտով քերթող մը,
սիրող բնութեան և մարդկութիւնը ալեկ ձանչ-
ցող։ Իր չարադրած երգերը պարերգութեանց
մէջ ընդհանրապէս երիտասարդ աղջկունք երգե-
լով, հինեերն ան երգերը կոսոկան կոչեր են։

Ալկմանայ հնարած փերթողական չափը. — Ալկման
իրեն ուրիշ զանազան նիւթոց վրայ շարադրած
երգերուն քերթողական չափին մէջ իրմէ առաջ
եղողներուն չհետևելով՝ շատ անգամ ազատու-
թեամբ նոր չափ կը գործածէ. Թէպէտև երբեմն
ալ իրմէ առջիններուն հնարածին կը հետևի։

Սպեսիգոր. — Ալկմանայ ժամանակակից էր Սպե-
սիգոր, ու Սիկիլիոյ Հիմերա քաղաքը ծնած Քրիս-
տոսէ 640 կամ 630 տարի առաջ. իսկ իրեն ըն-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:38 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ատանքը մեռուսրացիք էին, որ մինչեւ Խաղիսի մէջ լսկրեցաց ձեռքով շինուած քարէ մըն է։ Հիմերայի մէջ որովհետեւ թէ յունիայի և թէ դորեայի քնակչաց յաձախութիւն կար, ան պատճառաւ թուն քաղաքացւոց լեզուն ալ խառնուրդ մը կրնար ստեպհիլ աս երկու ազգաց լեզուներէն. և ահա սոյն բարբառը գործածեց Սոեսիգոս իր քերթուածեանցը մէջ, որ Հոմերոսի լեզուին հետ շատ նմանութիւն ունէր։ Կատանդեն հնուներն իր ազգատոհմին համար թէ միշտ անուանի եղած բերան երաժշտութեամբ և քերթողութեամբ։ Սոեսիգոս կենացը մեծ մասը Սիկիլիա և մեծն յունաստան անցուց, և ինչուան խորին ծերութիւն ապրեցաւ։ Երբոր Փաղարիս բռնաւորն իրեն իշխանութեան տակն առեր էր Ակրագանդ և ուրիշ քաղաքները, և բնակիչք կուզէին խռովութիւն հանել և ապստամբիլ, Սոեսիգոս խոհեմութեամբ խրատեց զնուներնք անանկ գահավէժ խորհուրդներ զգուշանալու. պատմեց այն առակը թէ ինչպէս ձին եղջերուէն վրէժ խնդրել ուզելով՝ մարդու օգնութեանը դիմեց, և փոխանակ օգուտ մը առնելու՝ անոր գերին և ծառան եղաւ։

• Սոեսիգոսյ փերնունեանց յոգնութիւնը. — Քնարերը՝ Ակհեոսի ձեռքը գործի մը եղեր էր կուսուց և պատերազմի. Սափիով իրեն կրիցը և սիրոյն գերի ըրաւ, Ակհիան իր շահուն օգնական, իսկ Սոեսիգոս հին յունական պատմութեան փառացը նուիրեց. որովհետեւ ոչ երբէք իրեն կրիցը կամ կենաց ստորագրութիւնն ըրաւ, այլ մեծարոյ ոճով իրատաւիք հին դիւցազանց անցքերն ու պատմութիւնները, զանոնք գիր կանցընէր պանծալի քերթողութեամբ. ինչպէս Հերքիւլեսյ՝ Հսկայից և Տիտանեանց դէմ տուած պատերազմը, Լիմոնի աւերումը, նոյն պատերազմը առաջ

Generated on 2015-03-16 07:38 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ամենոր դիւցազանց իրենց հայրենիքը գառնալը, Որեաեայ պատմութիւնը, Ամիխարաւոսի և իր հարսին գլխէն անցած դէպքերուն պատմութիւնը, Ե-ըոպեան լսուած քերթուածքը մը, որ կը կարծուի Թէ կազմուի գաղթականութեան նկարագիրն ու պատմութիւնն էր. և ասոնք քերթուածներէն ոմանք կերևնայ Թէ բառական ընդարձակութիւն ունեցած ըլլան: Սակայն ցաւալին ան է որ միայն Սաեսիգորի անունը մեզի հասած, իսկ անոր ընտիր երկասիրութիւններէն բան մը ձեռնիս չունինք: Կուինտիլիանոս հռովմայեցին այսպէս կը մեծարէ զՍաեսիգոր. "Իր հանճարոյն մեծ կարողութիւնը, կըսէ, ինչուան նիւթոցը ընտրութեան մէջ ալ կերևնայ. որովհետև մեծամեծ պատերազմներու և զօրավարաց պատմութիւնը կընէ. և իր քնարին վրայ վիպասանական քերթութեան դէզ մը կայ: Անանկ որ եթէ սա քերթողը կարենար ինչպէս լեզուն՝ սանդակ ալ քերթողական վայելուչ ջափ մը ունենալ, շատ մօտեցած կը սեպուէր Հոմերոսի,,:

Իբիկոս. – Հռեգիոնացի էր Իբիկոս, և կերևնայ Թէ Սաեսիգորայ նախանձոտ. որովհետև ոչ միայն անոր քերթողական ջափերը կը գործածէ ընդհանրապէս, հապա նաև նոյն տեսակ դիւցազներգութիւններ կանացած է շարադրել, և նոյն բառերը բանեցընել: Այնչափ մեծ է Սաեսիգորայ և Իբիկոսի քերթութեանց մէջ եղած նմանութիւնը որ Կուինտիլիանոս կըսասիսղուի մի և նոյն գովութեան խօսքերը զուրցել երկուքին համար ալ:

Ան սաեններէը մեծ անուն հանած էր բոլոր աշխարհքի մէջ իր բարեբաղդութեամբն ու ճոխութեամբը Սամոսի բռնաւորը Պողիկրատես: Հարստութեամբը հռչակաւոր, փառասիրութենէ շարժած սկսաւ յունաստանի երևելի քերթողներն

իր պալատը կանչել ու զանոնք մեծարել, որպէս զի անոնցմէ գովուի։ Հոն հրաւիրուեցաւ նաև Իբիկոս, և Պողիկրատեայ շատ սիրելի եղաւ իր հանճարոյն համար։ Հաւանական կերևնայ թէ՝ ի Սամոս շարադրած ըլլայ Իբիկոս Սիրոյ վրայ երգերը, որոնք հնոց մէջ շատ յարգի սեպուած էին։

Լասոս.— Հերմիոնացի էր Լասոս, և Պինդարոս՝ ան մեծ քնարերգակ քերթողին վարժապետ. կըսեն թէ ինքը նախ մտուցած ըլլայ Ա֊թենքի մէջ երկդռնեին տալից գործածութիւնը. ոմանք ալ անոնց առաջին հեղինակ կամ սկզբնահայրը զԼասոս կը համարին, որ հաւանական չէ. բայց ասյայտնի է որ անոր կատարելագործութեանը համար շատ աշխատելէ է։ Իրեն երկասիրութիւններէն գլխաւոր բան մը ձեռնըմխա հասած չէ։

Կորինա.— Բիովտիոյ Տանագրա քաղաքէն էր Կորինա, հռչակաւոր քերթողուհին. որուն հաւմար կաւանդեն թէ հինգ անգամ բանաստեղծականի մրցանաց մէջ Պինդարոս յաղթած ըլլայ. թէպէտ ոմանք ալ կրսեն թէ գաւառորաց աչք գոցելուն և աշառանացը սպառճառաւ արժանի եղեր է ասս պատուոյն, քան իրեն քերթողական հանճարովը։ — Կորիննա իր քերթուածներուն մէջ, Միւրտիս անունով ուրիշ բիովտացի կին քերթող մըն ալ կը յիշատակէ, որ նոյնպէս Պինդարոս հետ մրցանաց ելլելու կը խրախուսէր։ Բայց ասոնց երկուքին քերթուածներուն մէջ ալ թեբական գիցաբանութիւններ խիստ յաճախուած ըլլալուն, նոյն իսկ իրենց ժամանակակիցն անհաճոյ էին։ կը պատմեն թէ Պինդարոս այսպիսի քերթուած մը կարդալէն ետքը զուրցած ըլլայ թէ ''Դից վէպքը ձեռքով ցանելու է և ոչ լեցուն քսակներով,,։

Generated on 2015-03-16 07:39 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՑՈՆՈՒՑԻ ՓՆԱՐԵՐԳԱԿ ՓԵՐԹՈՂԸ

Անակլետեան փերևոաածոց հաւատոմը. — Անակլետի վարքը. — Իրեն հարպագա էվխարիստիտը. — Սիմոնի-դես կեացի. — Սիմոնիդեայ փնարերգակ հանճարը. — Իրեն եղերերգուհիները. — Վերպատուհիտը. — Տիմոկլեան. — Կալլիոպրապոս,

Անակլետեան փերևոաածոց հաւատոմը. — "Քերթողը, կրսէ Պղատոն, սլացական, բարձրաթռիչ ու աստուածային ոգի մըն է,,: Անուանի իմաստասէրը թէպէտ ասս խօսքս ընդհանրապէս անոնց համար կրսէ որոնք քերթողութեան մնանաւոր հանճար կունենան, բայց կարծես թէ առաւելագոյն կերպով մը Անակլետոնի կը յարմարին: Իր քերթուհեանցը մէջ քիչ կայ որ ամբողջ ձեռուբնիս հասած ըլլայ. բայց Անակլետոնի հարազատ քերթուհիւնքը կարդացողը, զանոնք արժէք չունեցող գանձ մը կը սեպէ. և լաւ կը հասկընայ թէ ինչպէս իրաւամբք մեծարոյ և զարմացման նիւթ եղած է հին և նոր բանասիրաց մէջ ասս անզուգական քերթողին անունը:

Սակայն շատ դժուարին է Անակլետոնի անուամբ բը գանուած քերթուհեանց մէջ ընտրուհիւն ընել թէ որն է բուն իր հանճարոյն գործը և որը իրեն հետևող քերթողաց, կամ անակլետեան ըստուած վարժարանին աշակերտելոց. որովհետև անոնց երկասիրուհիւնքն ալ՝ բանաստեղծուհիե հոգի տուող կատարելուհիւններն ունենալով՝

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:39 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

անարժան չէին սեպուած Անակլետոսի անուամբը հռչակուելու : Անակլետոսեան քերթուածոց հանգամանքն են՝ պարզութիւն, գեղեցկութիւն, ընորհք և սրտաշարժ իմաստներ :

Անուէնի վրդ. — Տէոսպի էր Անակլետոս. և թէպէտ իր ծննդեան ուրոյ թուականը չենք գիտեր, բայց կերևնայ թէ Հարբակոսի ան քաղաքն առնելէն և քնակչացը՝ Թրակիոյ Աբդերա քաղաքը առանձնանալէն շատ առաջ սկսած ըլլայ. ուրովհետև ատ դէպքը Քրիստոսէ 540 տարի առաջ հանդիպեցաւ, և ան ատեն Անակլետոս տարիքն առած, քերթուածեամբք և հանճարով անուանի ու Տէոսէն աքսորուածներուն մեկն էր : Քանի մը տարիէն ետքը Սամոս՝ Պոլիկրատէս բռնաւորին աթոռնիքն անցաւ, և հոն կեցաւ մինչեւ որ իրեն պաշտպան ու մեծարիմ բարեկամը՝ Պարսից կամբիւս թագաւորին Որեստէս նախարարին ձեռքովը մեռաւ. ան ատենը պիսիստրատեանք ուրիշ անուանի և հանճարեղ մարդկանց հետ զԱնակլետոն ալ Աթենք հրաւիրեցին : Անակլետոն երկար ատեն անոնց քով կենալէն ետքը՝ նորէն իր հայրենիքը դարձաւ. և երբոր Յոյնք Խսէոսի գրգռուածեամբը Դարեհի դէմ ելան, Անակլետոն Տէոսի մէջ էր. և հաւանական կերևնայ թէ հոն մեռած ըլլայ՝ ծանրացեալ հասակի մէջ,

Անուէնի հրտ. էրգերը. — Թէպէտ այլևայլ նիւթոց վրայ զանազան քերթուածներ շարադրած է Անակլետոն, բայց ոմանք երգոցը համար հրաշակուեցաւ, և անոնց համար մանաւանդ չափ ալ հնարեց՝ զոր քնարերգակք մեծավէրջ յանիկան կանուանեն. ատ տեսակ քերթուածին՝ հնարողին և ծաղկեցընողին անուամբը ատեն անցնելէն ետքը անակլետական կոչուեցաւ :

Հինները հաւաքմունք մը ըրած էին անակլետ-

Generated on 2015-03-16 07:39 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

նեան եղբոյ հինգ գրքի մէջ ամփոփուած , որն ու մեր ձեռքը չհասաւ . հիմակուան եղածը՝ տասներորդ դարուն մէջ յարմարցուած է՝ կոստանդին կեփալա բանասիրի մը ջանիւք , որ վերտառութեանց ծաղկաքաղ մը յօրինելով վաթսունի չափ համառօտ քերթուածիւնք կաւանդէ Անակրէոնի փեսոյ երգ+ խրախճանութեանց կոչելով , կամ Անակրէոնեան +երկութիւն+ , որով կիմացընէ թէ անոնց ամենուն հարազատութեանը չի կրնար երաշխաւոր ըլլալ . մանաւանդ որ անոնց քերթողական լեզուի և ոճոյն մէջ եղած զանազանութիւնքն ալ քիչ շատ ժամանակի տարբերութիւն կը ցցընեն :

Եօթի քերթողներէն շատը ուզեցին Անակրէոնի նմանիլ . բայց իրեն պարզութեանը , իմաստիցը փափկութեան մէկը չկրցաւ հաւասարիլ :

Սիմոնիդես կեցոի . — Սիմոնիդեայ ամրգոսացւոյ զոր առաջ յիշեցինք , Թեոն էր աս անուանի քերթողը , 55երորդ ոլիմպիագին ծնած . իր երկայնօրեայ կենացը շրջանին մէջ տեսաւ զՊիտտակոս և զպիսիստրատեանս ու Սպարտայի Պաւսանիան Թագաւորը , և աս ամէն անուանի մարդկանց մերձենալն ու բարեկամն էր , և Ցերոն ս Սիրակուսայի Թագաւորին արքունեացը զարդ իր հանճարովը և քերթողական աշխուժովը : Ցերոնի և Ակրագանդայ Թագաւոր Թերոնի մէջ գժտութիւն ըլլալով՝ ասոր միջնորդութեամբը հաշտուեցան : Պզատոն իր Հաստրակապէտութեան գրոցը մէջ իմաստուն մարդ կը կոչէ զՍիմոնիդես . իսկ Կիկերոն " Ոչ միայն քաղցրախօս քերթող մը եղաւ , կըսէ , այլ նովաւ քան զբազում իմաստունս իմաստնագոյն ,, : Պինդարոս ալ վարժապետութիւն ըրաւ Սիմոնիդես :

Ինչ կամ ոտանաւոր ըսուած եղերերգութեան հայրը կը սեպուի Սիմոնիդես . իրաւ է որ իրմէ առաջ կալլինոս և Միմներմ ալ եռակ եղած էին

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:39 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

անոր կատարելագործութեանը, բայց հինգ Սիմո-
նիդեայ յաջողութիւնը և սիրտ շարժելու ճար-
տարութիւնը շատ կը գովեն. "Մէկը չէ եղած,
կըսէ Անտիպատեայ ուղեղուներէն գրոց հեղինակ
գալղիացին, որ իրեն ալէտ լաւ ճանչցած ըլլայ
սիրտ շարժելու վարեմ և զուարճալի արուեստը,,:
Ստոբէոս՝ Սիմոնիդեայ մէկ եղերերգութենէ սկըզ-
բնաւորութիւնը աւանդած է մեզի, տասնե-
րեք՝ տասնըչորս տող քերթուածմը՝ յորում մայրդ-
կութեան մահկանացու ըլլալը կոլբայ: Ջանա-
զան վերստաւութիւնք կը գտնուին աս քերթողին
անուամբը, իրեն բարեկամացը կամ հայրենեաց
համար մեռնողդիւցազանց չիրմացը վրայ դրուե-
լիք, որունք մէյմէկ համառօտ եղերերգութիւնք
կրնան սեպուիլ:

Սիմոնիդէս ուրիշ արդիւնք մըն ալ ունի յու-
նական գրականութեան մէջ, անոնց այբուբենին
կատարելագործութեամբը: Կաւանդեն թէ Ցիւ-
դոնէան արուեսթի վրայ ալ գիրք մը շարադրած
ըլլայ:

Տիմոկրէոն. – Ըմբիշ ու միանգամայն քնարեր-
գակ քերթող էր Տիմոկրէոն հռոդացի, Սիմոնի-
դեայ սիներիմ թշնամին. առեղծուածեամբ էր նաև
Թեմիստոկղէսի հետ ու զԱրիստիդէս իրեն հա-
կառակորդացը դէմ կը պաշտպաներ: Պլուտար-
քոս Թեմիստոկղեայ վարուցը մէջ կը պատմէ թէ
Տիմոկրէոն հռոդացի իր երգերուն մէկին մէջ
ծանր խօսքերով վար կը զարնէ զԹեմիստոկղէս՝
թէ սուրկի համար չատերը յաքսորանաց դարձուց,
և նոյն արծաթոյ սիրովը կուլացած՝ իր բարեկա-
մը և հիւրը մատնեց. "Դուն թէ որ կուզես, կը-
սէր, գովէ զՊատսանիաս կամ զՔսանթիպպոս
կամ զԼեւտիքիդաս. ես զԱրիստիդէս միայն կը
դրուատեմ, ան առաքինի անձը որ բոլոր Աթէն-

Generated on 2015-03-16 07:40 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

քի պարծանք եղաւ : Բայց զԹեմիստոկղէս և ինքն իսկ Լատոմէն ասեց. որովհետև սուտակասպաս, անիրաւ ու մանիչ է[1] ,, :

Կը պատմեն Թէ Տիմոկրէոն Մարաց կուսակից ըլլալով աքսորանաց դատապարտուեցաւ. Թեմիստոկղէս ալ հաւանութիւն տուաւ ան վճռոյն : Քիչ առենէն եռքը երբոր ինքն իսկ Թեմիստոկղէս նոյն յանցանաց պարտաւոր գանուեցաւ, Տիմոկրէոն սա երգը շարադրեց. " Մինակ Տիմոկրէոն չէր Մարաց դաշնակիցը, ուրիշներն ալ կան. մինակ ես չեմ եղեր կաղացողը, հապա ուրիշ աղուսսունք ալ ,, : Ծանր ու խիստ ոճ ունեցող քերթող մը կերևնայ Տիմոկրէոն, բայց լի եռանդեամբ և աշխուժիւ :

Կալլիոպրպոս. — Հաւանական կերևնայ Թէ սա մեցի էր Կալլիսարատոս, որ Խպպարքոսը մեռցնողներուն պատուոյն երգ մը շարադրեց : Աթենացիք մոքերնին դրած էին Թէ Արմոդիոս և Արիստոգիտոն եղբարք Խպպարքոսը մեռցնելով՝ ազատութիւն տուին Աթենքի. մինչդեռ անով՝ Խպիասայ, Խպպարքոսի եղբօրը կասկածանքը աւելցաւ, փառասիրութիւնը շատցաւ ու բռնութիւնները բազմացուց : Բայց երբոր Խպիաս ալ ընկաւ՝ սկսան երգեր չինել, ու ան բռնաւորներն հայրենիքն ազատողները՝ արձաններով և քերթուածք անմահացընել : Այսպիսի քերթուածին մըն էր Կալլիսարատեայ յօրինածը, որ եռքը ազգային երգ մը դարձաւ ու ամենուն բերանն էր, մանաւանդ Համաթենական ըսուած տօներուն մէջ :

Ա տալս Աթենէոս մեզի հասուց, որն որ հայկական թարգմանութեամբն ալ ծանօթ է ազգերնուս[2] :

1 Պլուտարքեայ Զուգակիւտ, հատ. Ա. 463 :
2 Ողորմութիւն Անտ. Ա. 495 :

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:40 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԼՈՒԽ ԺԲ.

ՑՈՒՆԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Սոկրատէն առաջ եղած իմաստասէրական վարդապետները. – Թաղէս. – Պիւթագորաս. – Քսենոփանէս. – Զենոն Եղէացի. – Հերակլիտոս. – Դեմոկրիտոս. – Եմպեդոկլէս. – Անաքսագորաս. – Ո՞րին իմաստասէր, ինչո՞ւն Սոկրատ։

Սոկրատէն առաջ եղած իմաստասէրական վարդապետները. – Որ և իցէ հին իմաստասիրական դրութեց հեղինակներուն գլխաւոր և առաջին ջանքն եղած է բնութեան երևոյթից պատճառը քննել։ Ա եղաւ նաև յոյն նախնի իմաստասիրաց մեծ ու գրեթէ գլխաւոր պարապմունքը։ Ամէն բանի տարրը կոչելին գիտնալ, արարչագործութեան մեկնութիւնն մը տալ, քննել թէ ինչպէս ձևացած է աս աշխարհքս, ինչպէս կը պահպանի, այգեօք կայ մէկ շարժիչ մը և ոմվ է ասիկայ։ Այսպիսի գբաղմանց եռևէք ըլլալ ան առեն իմաստասէրք՝ միանգամայն բնագիտութիւնք, աստեղաբաշխիք և բնագէտք կըլլային։

Պատմութիւնը՝ յոյն իմաստասիրական դրութիւնք հաստատողաց մէջ հնագոյն զԹալէս կը համարի, որ Յունիոյ Միլետէ քաղաքէն էր. իմաստուն մարդ մը և մի յեօթանց՝ զորոնք աս անուան արժանի սեպեցին Յոյնք։ Երկրաչափական և աստեղաբաշխական շատ գիւտեր ձարտարեց, և արժանաւոր երևցաւ իր վարժապետացը, Եգիպտոսի քրմաց, որոնք ան առեն յառաջագէմ գիտութեան մը աւանդապահք կը սեպուէին։ Մեծ պա-

Generated on 2015-03-16 07:50 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ոիւ ունէր Թաղէս Յունաց մէջ, մանաւանդ երբոր արևու խաւարումը առաջուց գուշակեց, ամենուն զարմանքը և համարումն առաւելապէս շահցաւ: Կով կղզւոյն մէջ քանի մը մեծատուն միլեսացիք կային. ասոնք տեսնելով օր մը որ ձկնորսներ իրենց ուռկանը ծովը ձգելու կերթան, կանխիկ վճարելով գաշնագրեցան որ նոյն օրուան բոլոր որսացածնին իրենց ըլլայ: Ուռկաննին մէջ ձկանց հետ ոսկեղէն եռոտանի մըն ալ գտնուեցաւ, զոր կըսեն թէ Հեղինէ ձգած էր Տրոյիայէն գառնալու առեն: Նախ միլեսացիք ու ձկնորսները, ու ետքը երկու քաղաքներն ալ ցանկալն աւարին համար իրարու հետ կռուեցան. և երբոր արիւնահեղ պատերազմ մը բացուելու վրայ էր, պիւթեան Հարցուկը վճռը գաղրեցուց, իսրատ սալով որ ան գանձը Յունաց մէջ եղող ամենէն աւելի իմաստնագոյն մարդուն տան: Եռոտանին Թաղէսի խրկեցին, բայց ինքը չուզեց առնել, ու Բիաս պրիէնացի իմաստնոյն խրկեց. Բիաս ալ Պիտտակոսի, Պիտտակոս՝ Սոլոնի, Սոլոն՝ կղէոբուղեայ, կղէոբուղ՝ Միւսոնի, Միւսոն՝ Քիլոնի, որ նորին Թաղէսի դարձուց. ան տուեն Թաղէս՝ Բիտվոիոյ Թեբէ քաղքին մէջ եղած իմաստնեան Ապոլոնի տաճարին ընծայեց, իբրև իմաստնագունի և արժանաւորագունի:

Իր կրօնից պարտուցը հաւատարիմ էր Թաղէս. այլևայլ իմաստասիրական ու քաղաքական խոսքերուն մէջ, զոր հնութիւնը մեզի աւանդած է, խոհականութիւն և մտաց ազնուականութիւն մը կը տեսնուի, հաւատրակ մտածմունքներէ շատ գերազանց: Պերիանդր, Կորնթոսի իշխողը, Թաղէսի ճանապարհորդութեան առեն իր տունը կանչեց ղինքը, ու փառաւոր կոչունք մը տուաւ: Սեղանի վրայ ուրիշ իստակցութեանց մէջ յիշեցին

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:51 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թէ ինչպէս այլեւայլ իմաստասիրական հարցմունք խրկուեր էին զանազան իշխանաց, և Թէ անոնց մէ եկած պատասխաններուն մէջ ամենէն հանճարաւորը՝ Եթովպիոյ Թագաւորին իմաստուն խօսքերն էին: Թաղէս ուզեց լսել, ու չհաւնելով իրեն ալ պատասխանները զրկեց ու զամէնքը զարմացուց: Հետաքրքրական բան մը ըլլալուն՝ հոս կը գնենք Թէ հարցմունքները և Թէ երկուքին տուած պատասխանները.

ՀԱՐՑՄՈՒՆՔ	ԵԹՈՎ. ԹԱԳԱՒՈՐԻՆ	ԹԱՂԷՍԻ
Ո՞րն է ամենէն հինը	Ժամանակ	Աստուած
— մեծագոյնը	Աշխարհք	Տարածութիւն
— իմաստնագոյնը	Ճշմարտութիւն	Ժամանակ
— գեղեցկագոյնը	Լոյս	Աշխարհք
— սովորականը	Մահ	Ցոյս
— օգտակարագոյնը	Աստուած	Առաքինութիւն
— վնասակարագոյնը	Դեւք	Ախտք
— զօրաւորագոյնը	Բաղձ	Հարկ
— դիւրագոյնը	Հաճոյք	Բնութեան համեմատ գործերը:

Եւ քը մեկնեց Թաղէս իր խօսքերուն իմաստը. Աստուած յաւիտենական է. — Տարածութիւն՝ զաշխարհս ալ իր մէջը կը բովանդակէ. — Ժամանակ՝ ամէն բան կը գոցէ և ակռի գոցէ. — Ցոյս՝ ամենուն հաստատակ է, ուրիշ բան մը չունեցողին ալ. — Առաքինութիւնն է օգտակարագոյն. — Ախտ՝ ամենայն ինչ կապականէ. — Հարկն է մեզ այն անյաղթելի. — Հաճոյքը երբեմն զանց կառնենք, բայց ոչ բնութեան համեմատ գործերը:

Թաղէսի համբաւը քանի գնաց մեծցաւ, ու աշակերտներ ժողվելով սկսաւ իրեն համար մասնաւոր լսարան մը կանգնել. կը սորվեցընէր Թէ աշխարհքիս վրայ եղած ամէն բաները ջուրն ա-

Generated on 2015-03-16 07:51 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ռաջ եկած են, և թէ ջրին ալ ալարիչը՝ Ա-
ռուած է: Թէպէտ Թաղէսի բնաբանութիւնը
ճիշդ չէր, բայց պէտք չէ զարմանալ. որովհետև
իրեն ձեռքովը՝ առջի քայլը կառնէին բնական
գիտութիւնք՝ առասպելաց մթութենէն դուրս
ելլելով:

Անշահասէր էր Թաղէս, սաեցող իշխանու-
թեան և հարստութեանց, ու անաչառ. անով
շատ թշնամիներ ունեցաւ: Օր մը Եգիպտոսի Ա-
մասիս բռնաւորին դիմացն ելաւ, ու երբոր այլ-
ևայլ կենդանեաց բարուցը վրայ կը հարցնէր,
յոյն իմաստասէրն առանց վախնալու պատասխան
տուաւ թէ "վայրենի գազաններէն աւելի անբա-
նագոյն է բռնաւորը,,: Չինքը վար կը զարնէին,
իբրև անօգուտ բաներու ուսուցիչ, որոնցմով
մարդ բան չի վաստակիր. շատ չանաց հասկցընել
իրենց որ եթէ ուզենար՝ իր ձեռքն էր հարստա-
նալը. և երբոր չէին համոզուեր, Թաղէս՝ իր գի-
տութեամբն իմացաւ թէ նոյն տարին ձիթապտղոց
առատութիւն պիտի ըլլայ, քիչ մըկով թէ Մե-
լեսինէի և թէ Գիոսի ձէթի շահմարաններըը վար-
ձեց, ու եաքը ծախելով՝ անբաւ հարստութիւն
գիղեց:

Թաղէս իննսուն տարուան էր երբոր մեռաւ.
իրեն հայրենակիցքը արձան մը կանգնեցին անոր
պատուոյն, ոչ միայն առաջին իմաստասիրական
վարժարանը հիմնելուն համար, այլ նաև անոր
որ ցուրտց մէջ գլխաւոր եղաւ աստեղաբաշխա-
կան գիտութեանց:

Թաղէսի յաջորդք եղան իրեն իրեք աշակերտ-
քը, Անաքսիմանդր, Փերեկիդէս և Անաքսիմեն,
որոնք մեծապէս ստացր եղան գիտութեանց յա-
ռաջադիմութեանը՝ իրենց հետաքննին չանիւքը:

Առնցմէ եաքը կու գայ Պիւթագորաս, ան ա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:51 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նուանի մարդը, որուն թէ վարքը և թէ վարդապետութիւնքը խորհրդական առագաստով մը ծածկուած կերևնան։ Ինքը թէպէտ թաղէոսէն եղաւ, բայց վարքը աւելի անորոշ և առասպելախառն մեծութեամբ ծածկուած է. բայց մեծ համբաւ և ազդեցութիւն ունեցաւ. և իր անունը մինչև Սոկրատայ ժամանակ սիրելի էր և մեծարոյ թէ յունաստանի և թէ Խոալնոյ մէջ։

Պիւթագորաս Քրիստոսէ 600 տարի առաջ Սամոսի մէջ ծնաւ, որ ան տաճեն Պողիկրատեայ իշխանութեան տակն էր։ Հայրը վաճառական ըլլալով կուզէր որ տղան ալ նոյն արուեստին երևէն իմնայ, ու ան վախճանաւ ըլլած ձանապարհորդութեանցը ընկեր կառնէր զինքը. բայց քիչ առնէն իմացուեցաւ Պիւթագորայ ունեցած ուսման սէրը, և ան ձանապարհորդութիւնքը մեծապէս օգտակար եղան իրեն և այլևայլ տեղեկութիւնք առացաւ. որովհետև Եգիպտոս, Փիւնիկէ, փոքր Ասիա և բոլոր յունաստան քալեց, ու 'ի դարձին ուզեց իր հայրենեացը մէջ 'ի Սամոս՝ իմաստասիրական և չափաբերական ուսմանց վարժարան մը հաստատել. բայց տեսնելով թէ հոն իր նախանձորդքը կը յաձախեն ու սխալ չկարենայ խաղաղութիւն գտնել, յունաստանի կրոտոն քաղաքն առանձնացաւ։

Հոն իր վարդապետութիւնն ամենայն համարձակութեամբ կրցաւ ծաւալել. ունկնդիրքը այնչափ զարմացան անոր ուղիղ բարոյականին վրայ, որ զինքը քաղաքական մեծ պաշտօններու հաստատին, թէպէտև Պիւթագոր ամենևին չէր փափաքեր։ Խստակրօն կեանքը, ժուժկալութիւնը, նոյն իսկ արտաքին ձևը, որովհետև միայն ձերմակ պատմուձան մը կը հագնէր, ամենուն սրտին վրայ պատկառանք կազդէին. խօսքերն ալ այնչափ հա-

Generated on 2015-03-16 07:51 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ձոյ էին, որ խուռն կը դիմէր ժողովուրդը մուիկ ընելու. ամենուականք ալ իրեն աշակերտիլը մեծ պատիւ կը սեպէին: Պիւթագոր միակ նպատակ աս դրած էր, ժողովրդեան բարքը շտկել. համոզուած էր թէ անով միայն կրնայ ընկերական առաքինութիւնքը բարեկարգել. գիտէր թէ ժողովրդեան մը ազատութենէ տալէն առաջ՝ ան պարգևին արժանի ընելու է զանիկայ. և թէ աս բանին դարմանն է իշխանաց լաւ դաստիարակութիւն մը տալ և յորդորել զիրենք որ ընտիր օրէնքներ սահմանեն, և ան օրինաց պահպանութեանը ամենայն խնամք ունենան: Իրեն աշակերտեալ պաշտօնակալքը Պիւթագորայ խրատուցը հաւնելով՝ իրմէ խնդրեցին որ քաղաքի մը հարկաւոր կամ էական կարգեր սահմանէ: Իմաստասիրին առջի բանն եղաւ յորդորել զիրենք որ Մուսայից պատուոյն սաձար մը կանգնեն. իրաւ ուսաւ արդարութեան եռանկ ըլլալ, և թէ ամէն բանէ աւելի վտանգաւոր է անիշխանութիւնը, և թէ պետութեան մը բարեկարգութեան յոյսը ողջոյց դաստիարակութիւնն է: Քաղաքացւոց, կանանց և ողջոյց անգամ հարկաւոր խրատներ, ու իրենց վիճակին յարմար կանոններ կաւանդէր:

Պիւթագորաս գոհ չէղաւ իմաստասիրութեան լսարան մը սահմանելով, այլ աւետարանական ոգւոյ թելադրած վանական առանձնութեանց պէս՝ ինքն ալ միաբանութիւն մը սահմանեց, յորում իրեն ընտրելագոյն աշակերտքը ժողվուած էին. ուր իրենց ընտանիքն ալ հետերնին առնելով, հասարակաց շինուածքի մը տակ կը բնակէին ու խիստ կանոնաց կը հպատակէին. ի մսոյ, ի ձկանց և ի գինւոյ հրաժարեալ՝ օրերնին ուսմամբ ու կրօնական պաշտամունքներն կատարելով կանցընէին: Պիւթագոր իրեն վարդապետութեան գոլա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:52 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նիքը չյայտնած՝ խիստ ու երկայն փորձեր կը-
նէր վլանին. մանաւոր կանոններ կը սահմանէր
կերակրոյ, զգեստուց, քնոյ և հրահանգաց հա-
մար. կը պատուիրէր որ երկու կին ու ինչուան
հինգ տարի անդադար լռութեան մէջ՝ մտածմանց
պարապին: Անկէ ետքը կըսկսէր չափաբերութիւն
(mathématique) սորվեցընել, զոր որ ամենայն
գիտութեանց բանալի կը համարէր, և որուն յա-
ռաջադիմութեանը մեծապէս նպաստաւոր եղեր
էր իր ջանիքը: Ըստ Պիւթագորայ, թիւք ամե-
նայն ինչ կը բացատրեն, և նոյն իսկ առաքինու-
թիւնը ուրիշ բան չէ, բայց եթէ թուաբանական
գործողութիւն մը կամ երկրաչափական գրու-
թիւն: Ընտանի եղան Պիւթագորեանք, կամ
իտալական վարժարանի աշակերտք իրենց չափա-
ւորութեամբը, հմտութեամբ և հեթանոսական
առաքինութեամբ: Խոկմանց եռանդ ըլլալով հե-
թանոսութեան խաւարին մէջէն սկսեր էին ա-
զօտ լոյս մը տեսնել Ճշմարիտ կրօնից, հաւատա-
լով Աստուծոյ միութեանը, աշխարհքիս արարիչ
մը ունենալուն, հոգւոյ անմահութեան, և այլն:

Բայց հոգւոյ անմահութիւնն ընդունելով ու-
րիշ անտեղի կարծիք մը ունեցան, հոգեփոխու-
թեան վարդապետութիւնը. որուն առաջին գը-
տիչք՝ հին արևելեան ազգեր և մանաւորապէս
եգիպտացիք եղած են, և կերևնայ թէ անոնցմէ
սորվեր էր Պիւթագորաս: Հոգեփոխութիւնն է
մեռելի մը հոգին ուրիշի անցնիլը. և որովհետև
իրենք համոզեալ էին թէ կենդանեաց և բանա-
կան մարգու հոգւոյն մէջ տարբերութիւն չկայ,
ուստի ամենևին գժուարութիւն չէին քաշեր հաս-
տատելու թէ ամենամեծ գիւցազին կամ առաքինւոյ
մը հոգին՝ կրնայ անուր մեռնելէն ետքը էնչին կեն-
դանւոյ մը անցնիլ. ուստի և կըզգուշանային ա-

Generated on 2015-03-16 07:52 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

նոյն միտը ուսեալին, որ չըլլայ թէ մեկը անգիտու-
թեամբ իր ծնողացը և ազգականաց միան ուսէ։
Պիւթագորը, ան մեծ հանճարը, այնչափ համո-
զուած էր աս վարդապետութեանն ու մտքովը
պաշարուած՝ որ չէր ամընչնար ըսելու թէ աստեղ-
ները Եւդոքսին էր, Տրոյիոյ պաշարողներէն մե-
կը։ Բարի կամ չար գործոց հատուցման գաղա-
փարը չունենալնէն եաքը զարմանք չէ որ այսպիսի
անտեղի կարծեաց մէջ իյնան իմաստունագոյն և
հանճարեղ մարդիկ։

Անանկ իշխանութիւն մը ունեցեր էր Պիւթա-
գորը իր աշակերտացը մտքին վրայ, որ միայն վար-
դապետէն ասող խօսքը բաւական էր իրենց առջև
պատգամի տեղ անցընելու որ և իսկ կարծիք կամ
խօսք. անոնցմէ մեկը Պիւթագորէն յանդիմանու-
թիւն լսելուն՝ այնչափ ամընչցաւ որ յուսահատու-
թենէն ինքզինքը սպաննեց։ Բայց Պիւթագոր ոչ
երբեք հպարտացեր էր իրեն եղած մեծարանացը
վրայ. մանաւանդ թէ երբոր սմանք զինքը ինմա-
պատ կը կանչէին, հրաժարեցաւ ան պատուէն,
և սահմանեց որ իր հետևողքը ինմապատ կոչուին,
որովհետև առջինը Աստուծոյ միայն պատկանա-
ւոր կը սեպէր։

Պիւթագորայ բարեվարուքութիւնքը բաւական չե-
զան նախանձոտաց ձեռքէն զինքն ազատելու. մա-
մանաւանդ թէ իր կատարելութեանցը համար շա-
տերն սկսան զինքն ատելու աշկերտները հալածել
ցրուել. և կըսեն թէ ան ազմուկներուն մէջ Պիւ-
թագոր ալ կեանքը կորսընցուց։ Անաւանի իմաս-
տասէր է նաև Պիւթագորայ կինը Թեանով։ —
Պիւթագորայ վարդապետութիւնքը իրեն աշա-
կերտները գիր անցուցին, և հաւանական կերև-
նայ թէ անոնցմէ մեկին է որ Ռոկեղէն պատ Պիւ-
թագորայ ըսուած իմաստուն և ընտիր առակները ամ-
փոփեց։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:52 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Յունիական դպրոցը զոր թաղէս հիմնեց, բնու-
թեան գաղտնիքը մեկնելու կը զբաղէր. Պիւթա-
գորայ հաստատած իտալական վարժարանը՝ բա-
րոյականն կը ծաղկեցընէր, իբրև գլխաւոր և միակ
ուսմունք. իսկ եղէական վարժարանին, որուն
հիմնադիր եղաւ Քսենոփանէս, Յունիացի էր
Քսենոփանէս, որ յունիական վարժարանին աշա-
կերտացը պէս բնական երևոյթները կը մեկնէր,
ու պիւթագորականաց պէս իր փիլիսոփայու-
թեանը կրօնական հոգի մը կու տար, որով և նոր
գիտութեան մը վարդապետ եղաւ, բանական ա-
րո-էոփ կամ փրամաբանութեան (raisonnement logique): Իր գլուխէ հարիւրամեայ կենաց երկայն
ջրջանին մէջ՝ բազմաթիւ աշակերտներ ժողվեց,
ու իմաստասիրութիւնն ապրուեցընող անուանի ու-
սուցչաց մէկն եղաւ. Աստուծոյ յաւիտենակա-
նութիւնը ձանչցաւ, ու կը յորդորէր զմարդիկ
որ թէ բանիւք և թէ բարի գործքերով զանիկայ
փառաւորեն:

Իրմէ ետքը արժանի յիշատակութեան կը սե-
պուին Պարմենիդէս, որ իր ղգայարանացը ամե-
նևին չէր հաւատար, ու որ և իցէ աստուածութիւն՝
խոհականին թեչադրութեամբը կուզէր քննել:
Զենոն եղէացի, որ բանական արուեստի յառա-
ջադիմութեանը մանաւոր փոյթ ըրաւ, և ան գի-
տութիւնը միակ հնարք մը սեպեց որ և իցէ բանի
ճշմարտութիւնը ձանչնալու հակաճառութեամբ:
Զենոն յունիական վարդապետութեան մեծ թըշ-
նամին եղաւ. կըսեն թէ քաղաքական պաշտօ-
մանց մէջ ալ մտած ըլլայ, ու ինչուան գաւակից՝
հայրենիքը գերող բռնաւորի մը դէմ. բայց յայտ-
նութեամբ՝ դառն մահուամբ մեռած ըլլայ, առանց
խոն կուսակիցքը յայտնելու:

Generated on 2015-03-16 07:53 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

Ա՛ս առեննեբս կկ՛նայ ուբիշ իմաստասէր մըն ալ, որուն անունը խիստ յայտնի, բայց վարդապետութիւնքը անծանօթ են. ա՛ս իմաստասէրն է Հերակլիտոս եփեսացի, Քսենոփանեայ աշակերտը: Քաղաքական պաշտամանց մէջ մտնելու իրաւունք ունէր Հերակլիտոս. բայց ինքը առանձնութիւնն աւելի ընտրելով յօժարութեամբ իր եղբօրը յանձնեց ան ծանրութիւնը: Թէպէտև չափազանցութիւն կերևնայ, սակայն հիներն իբրև ճշմարիտ կաւանդեն թէ միշտ կարտասուէ եղեր մարդկային ախտից և անունց թշուառութեանցը վրայ: Օր մը փողոցի տղայոց հետ կը խաղար. և երբոր ժողովուրդը ա՛ս նորանշան բանին վրայ կը զարմանար, "Եփեսացիք, դարձաւ ըսաւ անոնց, աւելի կընտրեմ ա՛ս ընդունայն սեպուած զբաղութիւնը, քան թէ ձեզի պէս ապերախտ ժողովրդեան առջև քաղաքականել": Վերջապէս օրդին Դարեհ ա՛ս կարգէ դուրս իմաստասիրին համբաւը լսած ըլլալով իր տրբունքը կանչեց. բայց Հերակլիտոս չանձն չառաւ: Քանի որ տարիքը կառնէր, այնչափ աւ տրտմութիւնը կը յաճախէր. ուզեց մարդկանցմէ աւ հեռանալ, ու լեռներու մէջ առանձնանալով խոտեր և արմատներ ջրի մէջ կեփէր կուտէր, և ան էր իր սպրուսաը. բայց բնութիւնը չկրնալով դիմանալ, հիւանդացաւ, ու քաղաք դառնալով՝ հոն մեռաւ: Դիցաբանին բան մըն է Հերակլիտեայ վարդապետութիւնը սահմանել. երբեմն բոլորովին նիւթապաշտութեան հակամէտ կերևնայ, երբեմն աւ պիւթագորայ հետևող: Կրակին է իրեն համար ընդհանուր սկիզբը, մեզի միակ հարկաւոր գիտութիւն՝ անձին ճանաչումը կը համարի, և գլխաւոր իրաւ՝ չափաւորութիւնը կը պատուիրէ:

Ոչ ինչ ընդհատ քան զՀերակլիտոս համբաւա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:53 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ւոր է նաև Դեմոկրիտոս, զոր պատմութիւնը առ-
ջինին բոլորովին հակառակ բնաւորութեամբ մարդ-
մը կընծայեցընէ, ուրախ, զուարթ, որ մարդ-
կային խեղճութեանց վրայ կը խնդար։ Թրակիոյ
Աբդերա քաղաքը ծնած էր Դեմոկրիտոս քրիս-
տոսէ 470 տարի առաջ. հարուստ և ազնուական
ցեղէ. և որուն հօրը քով իջևաներ էր Պարսից
Թագաւորը Քսերքսէս երբոր յունաստան արշա-
ւելու ատեն Թրակիայէն կանցնէր։ Հօրը մահուա-
նէն ետքը անոր հարստութեան մեծ մասը ձամ-
բորդութեան ծախեց Դեմոկրիտոս, Եգիպտոս,
պարսկաստան, Հնդկաստան ու Եթովպիա քալե-
լով, ու մոգերէն և քալդէրէն շատ տեղեկութիւն
առաւ. բայց որովհետև անհնար գործածեր էր
ատակը, հազիւ կրցաւ մեծն յունաստան դառ-
նալ, ուր Լեւկիպպոս իմաստասիրին դասախո-
սութիւնը մտիկ կընէր, որն ու ախեզերաց գոյու-
թիւնը՝ ի հիւլէից և՝ ի դատարկութենէ կը քա-
րոզէր։ Անկէ Աթէնք գարձաւ, ինչպէս հաւա-
նական կերևնայ. ու երկու անուանի իմաստասի-
րաց, Անաքսագորայ և Սոկրատայ աշակերտե-
ցաւ, առանց ինքզինքը ճանչցընելու անոնց։ Եա-
քը անանկ ու աղքատացած՝ նորէն իր հայրենի
քաղաքը գարձաւ, ու Դամասիա եղբօրը տունը
առանձնացաւ։ Եւ որովհետև աբդերացիք օրէնք
ունէին որ հայրենի ժառանգութիւնը վատնողը
թաղման արժանի չէր ըլլար, Դեմոկրիտոս ա-
պատժէն ազատելու համար հրապարակաւ կար-
դայ իր ճառ յաղափ ՌԺԴ աշխատէն ըսուած գիր-
քը, որ կերևնայ թէ Լեւկիպպոսայ կարծեացը
ընդարձակ բացատրութիւնն էր։ Գաղափարիք
հասնեցան ասս գրութեանը, ու հեղինակը խրա-
խուսելու համար շատ տակ տուին իրեն, ար-
ձաններ կանգնեցին ու աղաչեցին որ գայ վրանին

Generated on 2015-03-16 07:53 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

իշխէ . բայց Դեմոկրիտոս՝ Հերակլիտեայ պէս հրաժարեցաւ , ու բազմազբաղ իշխանութեան մը չարաստանչ հոգերէն աւելի ընտրելագոյն սեպեց ուսման պարապիլը :

Ասպիսի անշահասիրութեան մը ու կարգէ դուրս ուսումնասիրութեան վրայ զարմացան աբդերացիք , բայց եաքը անոր անդադար ծիծաղիլը տեսնելով՝ կարծեցին Թէ մոաց հիւանդութիւն ունի , ուստի կով կղզիէն Հիպոկրատէս անուանի բժիշկը կանչեցին զարմանելու : Եկաւ Հիպոկրատէս , ու խնամատարին հետ տեսնուելով՝ յիմար ու հիւանդ գինքը կանխողնելը սեպեց . այնչափ զարմացաւ Դեմոկրիտեայ խնամատարութեանը վրայ :

Դեմոկրիտեայ վարդապետութիւնն ուրիշ բան չէր , ինչպէս ըսինք , բայց եթէ Լեւկիպպեայ կարծիքը , աւելի ձոխացուցած ու մեկնաբանած : Կըսէր Թէ բնութեան մէջ երկու սկիզբն կայ , դատարկութիւն և իւղէք . և աս իւղէից՝ գատարկութեան մէջ մշտնջենաւոր շարժմամբը՝ մարմնոց այլևայլ յարաբերութիւնք առաջ կու գան : Իսկ բարոյական վարդապետութեան միակ նպատակ՝ հոգւոյ անդորրութիւնը կը դնէր . և որպէս զի մարդիկ իրարու վնաս չընեն , կուզէր որ օրէնք համարձակութիւն տան ամենուն իրենց ուզածին պէս կեանքերնին անցընելու : Հանճարաւոր մարդ էր Դեմոկրիտոս և շատ գիտութեանց տեղեակ , որոնց վրայ այլևայլ գրքեր ալ շարադրած էր , որոնց միայն ցանկը մնացած է : Կիկերոն կըսէ Թէ Պղատոնի ոճոյն հաւասար էր նաև ատոր գրութեան եղանակը : Հարկաւ ինը տարուան , ինչպէս կաւանդեն , մեռաւ Դեմոկրիտոս :

Դեմոկրիտեայ ժամանակակից էր նաև Եմպեդոկլէս սիկիլեացի , որ պիւթագորեանց վարդա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:54 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ակտաբերթներէն մէկ քանին նորոգեց, ինչ-պէս աշխարհքիս սկզբնաւորութեան և հոգե-փոխութեան կարծիքները: Մանաւոր խմաստա-սիրական դրութիւն մը չունեցաւ Եմպեդոկլէս, այլ իրմէն առաջ եղողներուն կարծիքը կրկնեց քերթողական աշխուժիւ: Նախ բժիշկ էր և ան արուեստին մէջ շատ հռչակաւոր եղած: Կին մը քնափութեամբ (léthargie) հիւանդացած, ամե-նէն մեռեալ կը համարուէր. բայց Եմպեդոկլէս երատն օր աշխատելէն ետքը անոր կենդանու-թիւն տուաւ. ատով այնչափ մեծցաւ իր անունը՝ որ ինչուան իրեւ աստուած մը սկսան մեծարել զինքը: Եմպեդոկլէս ալ հպարտացած՝ ծիրանի սկսաւ հագնիլ, ոսկի գօտի կապել, ու գլուխը պիւթեան Ապոլոնի պատկին նման թագ դնել: Աշնուականութեամբն ու ճոխութեամբն ալ մե-ծարգոյ էր ժողովրդեան առջև. բայց չուզեց զի-րենք կառավարել, ու միայն ան ատեն քաղաքա-կան գործոց մէջ մտաւ՝ երբոր անխոչընդի հարկ տեսաւ ազատութիւնը պաշտպանելու: Ք.ի.ա.ա.-ան 403 տարի առաջ երբոր կարթագինեցիք Ակ-րագանդ քաղաքն առին, Եմպեդոկլէս Պելոպո-նես քաշուեցաւ և հոն մեռաւ: Շատ հաւանա-կան չերևնար ան պատմութիւնն որ իր վրայ կը զրպցուի թէ ետևնա հրաբուխն լեռան խառնա-րանին մէջ նետած ըլլայ ինքզինքը, պատմելով որ չկրնար անոր պատճառն ըմբռնել:

Մանաւոր յիշատակութեան արժանի է Ա-նաքսագորաս, որ Ք.ի.ա.ա.-ան 500 տարի առաջ Կլազոմէն քաղաքը ծնած էր: Իրեն ճոխութեանց և հայրենի տացուածոց հոգը ազգականաց ձգե-լով Անաքսիմեն միլետացւոյն աշակերտեցաւ, ու ան առնուան տվորութեան համեմատ՝ քսան տարի տդխս անդին ճանապարհորդութիւն ըրաւ:

Generated on 2015-03-16 07:54 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

Եաքը Աթէնք գարձաւ, ու հոն հաստատելով իր բնակութիւնը, սերտ բարեկամութիւն ունեցաւ ան քաղքին իշխող մեծին Պերիկլէայ հետ. ու հոն աշակերտեցան իրեն անուանի իմաստասէրք և քերթողք, ինչպէս Արքեղայոս, Եւրիպիդէս և այլք: Որովհետև բնական գիտութեանց օրինացը շատ տեղեկութիւններ առեր էր, ուստի սկսաւ խուզարման, երկրաչափի և բնական մեկնութիւնքը տալ, զորոնք ինչուան ան ատեն անըմբռնելի բաներ կը կարծէր ժողովուրդը և աստուածոց բարկութեանը նշանակ: Մէկ հոգի կամ գերազանց իմացականութիւն մը կը դներ, ուղղիչ և կարգադրիչ ամենեցուց:

Իմաստասիրաց մէջ ամենէն բարեպաշտօնը՝ իբրև անաստուած բամբասուեցաւ, ու կղէոն դատաստանի կանչեց զինքը. նոյն ինքն Պերիկլէս չկըրցաւ կոյր և անմիտ նախանձայուզութեան մը ձեռքէն ազատել իր բարեկամը. անանկ նախանձու մը՝ որուն քիչ ատենէն անուանի Սոկրատ ալ զոհ պիտի ըլլար: Ամփսուեցաւ Անաքսագորաս Աթենքէն տարտգրիլ 69 տարուան հասակին մէջ. ու Լամպսակոն քաշուելով՝ իրեք տարիէն մեռաւ: Երբոր հարցուցին թէ "կուզես որ ամփնդ հայրենիքդ փոխադրենք, պատասխանեց. ընդունայն մի աշխատիք, որովհետև դժոխոց (գերեզմանին) ճամբան ամեն դիէն ալ մէկ է":

Անաքսագորաս իբրև իմաստասէր, յոնիական վարժարանին կը վերաբերի. վասն զի անոր կարծիքներն աւելի պարզեց ու մաքրեց: Նոյն վարժարանէն կը սեպուին նաև ուրիշ իմաստասէրք ալ, ինչպէս Դիոգինէս ապողոնիացի և Արքեղայոս, որոնք Անաքսագորայ չեն հաւատարիր:

Թալէսէն ինչուան Զենոն էղէացի՝ ամեն յոյն իմաստասիրաց ջանքն եղած էր՝ գիտութեանց

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:54 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

յառաջադիմութիւնը. ուստի Թէպէտ սկզբունքներին ոչ միշտ ուղիղ՝ բայց կամքերնին ուղիղ և սրտերնին ընկերական գաղափարաց տէր էր: Ամենևին բանի մը չէին իրնայեր, ձեռքերնին ընկած դրամին ալ ժողովրդեան բարւոյն համար կը ծախէին: Ա՛ս չանքը և փոյթը ինչուան Պերիկղեայ ժամանակը դիմացաւ:

Բայց երբոր Պերիկղեայ յաջորդն Ալկիբիադէս եղաւ, ան Թեթևամիտ և անառակ զօրավարին իշխանութեան առեն՝ բոլոր յունաստանի բարուքը հետ իմաստասիրութիւնն ալ սկսաւ վատթարանալ: Ինանկ մարդիկ երևցան, որ գիտութիւնը շատ ատակ առուղին կը մատուցանէին, ու խօսքը և խորհուրդը իբրև շահավաճառ կը բանեցընէին. ատոնք էին Խոպոպէ, որոնք անանկ վարդապետութիւններ սկսան քարոզել՝ որոնցմով ժողովրդեան մը կիրքը ճարակ կառնէ և կը ծաւալի. և ամէն չանքերնին էր ճշմարիտը իբրև սուտ և սուտը իբրև ճշմարիտ ընդունելի ընել: Ատոնց վրայ եսքը մանաւոր գլխով պիտի խօսինք:

ԳԼՈՒԽ ԺԳ.

ՊԻՆԴԱՐՈՍ

Պինդարոս վրէժը. – Երգերը. – Ո՞ճը և Որափոսի իրեն վրայ ըրած դոփոփանը:

Պինդարոս վրէժը. – Յունաստանի քնարերգակ քերթողաց գերազանցը Պինդարոս Քրիստոսէ 522 տարի առաջ ծնած էր Բիովտիոյ գաւառին մէջ Թեբէ քաղքին քովերը: Նուագածուաց և երա-

Generated on 2015-03-16 07:54 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ժըշտաց տոհմին էր Պինդար, և իրեն հայրը կամ հօրեղբայրը անուանի արնդահար էր: Իսկ ինքը տղայութեան հասակին բնական բերումն կըզգար քերթողութեան, և քանի տարուան եղած ատենը ընտիր երգեր կը շարադրեր՝ի պատիւ ողիմպիական մրցողաց: Իրեն ուսուցիչն էր Լասոս հերմիոնացի, միջակ բանաստեղծ մը, բայց իր տարուսոյն վարդապետական մասին (théorie) լաւ տեղեկութիւն ունեցող:

Պինդար երբոր իր քերթուածքն սկսաւ շարադրել, բոլոր յունաստանի մէջ համբաւը հըռչակուեցաւ. Թերոն ակրագանդացի և Հերոն սիրակուսացի՝ Սիկիլիոյ բռնաւորքը, Կիւրենէի Թագաւորն Արկեսիլաս, Մակեդոնիոյ իշխողը Ամինտաս, ամեն ազատ քաղաքներ և ամեն հարուստ ընտանիք մեծ փափաք կը ցցընէին Պինդարոսէն գովուածներ, և մէկ երգի մը արժանի ըլլալու համար սորկի չէին խնայեր: Ամենացնիք զինքը Պոսէյդոն կամ իրենց քաղաքին հաստատիչ հիւր կոչեցին. կէսոսի բնակիչքն ալ մինչեւ իրենց քերթողքը ունէին, բայց հրապարակական հանդիսի մը համար մանաւանդ մեղմանք շարադրել տուին իրեն: Յունաստանի ամեն գլխաւոր քաղաքները պատեցաւ Պինդար, և ամեն տեղ կարգէ դուրս պատիւ և մեծարանք գտաւ: Յունաց սա սահմանն ալ Պինդարոս մեծարելուն պատճառն էր որ քերթողն իր անզուգական հանճարովը հակայաձև արձանի մը պէս կեցեր էր, հին և նոր ուսումնականութիւնը իրարմէ բաժնելու: Ինչպէս առանձին մարդկանց, ասանկ ալ ազգաց փառքը մեծնալու և խնալու ժամանակներն ունի. փառքը և ծաղկիլը՝ անփառութեան և չարութեան սկզբնաւորութիւն մըն է:

Ընդհանրապէս թերեւի մէջ էր Պինդարոս բնա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:55 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կութիւնը. և երբոր Ալեքսանդր մակեդոնացին ան հռչակաւոր քաղաքը կործանեց, քերթողին կեանքը մեծարելու համար հրաման ուսաւ որ միայն անոր տունը անկործան մնայ: Իսկ ինքը Պինդարոս ուրախուն տարուան հասակին մէջ մեռաւ, և իրեն կենդանութեան ատեն յարգը ձանձցողները մահուընէն ետքն ալ մեծ ցաւ ունեցան անանկ հանճարէ մը զրկուելնուն համար:

Պինդարոսեան պաղէր. — Ալևայլ տաղեր շարադրած է Պինդարոս, որոնք մէջերնին պարունակած խմաստին համեմատ զանազան անուանք առած են. ինչպէս Պարէնեան կամ կռուական տաղք, վան զի կռուանք և տղկունք կերգէին. Ողբերգականք, որ եղերերգութեան մէկ տեսակը կը սեպուէին. Նոսափ'ի պատիւ աստուածոց, և այլն: Բայց Պինդարոս զանազան գրուածներէն քիչ բան հասած է ձեռնընիս, այսինքն՝ յիշատակած երգերնուս քանի մը հատուածներ, և քառտունըհինգ յաղթական երգեր, որոնք ոլիմպիական խաղերու մէջ՝ ի պատիւ յաղթական մրցողաց շարադրած է: Ասոնց դասակարգութիւնը կը բաժնուին աս երգերը. Ողիմպեան էրգեր, յորեքտասան. Պիւթեան յաղթանակք, երկոտասան. Նեմեան յաղթանակք, տասնաւրեան. Իսթմեան յաղթանակք, ութ: Բայց աս բաժանումը Պինդարոսէն ետքը եղած է. վասն զի իրեն քերթուածքը կարգի առնողները մէջ առաջինն է Արիստոփան բիւզանդացի:

Ոլիմպիական խաղերու մէջ անուանի եղած քաջերուն յաղթական հանդէսը, կռուոյն եղած օրը կընէին իրիկուան դէմ: Եւ որովհետև չէին կրնար գիտնալ թէ ով կամ ինչ խաղի մէջ և քանի յաղթութիւնք պիտի ըլլան, ուստի շատ անգամ անանկ երգեր կը շարադրէին՝ որ ընդհանուր իմաստով մը՝ որ և իցէ խաղերու մէջ յաղ-

Generated on 2015-03-16 07:55 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

Թական երեցոլաց կրնային յարմարիլ : Պինդարոս երգերուն մէջն ալ կը գտնուին այսպիսիք : Բայց յաղթողին համար ուրիշ երկրորդ , ու աւելի մեծ ու փառաւոր հանդէս մըն ալ կընէին , յորում առաջնիկայ կըլլային իր ընտանիքը , բարեկամք , քաղաքացիք և ընկերք , վասն զի իր ծննդեան տեղը կըլլար հանդէսը : Պինդարոսի երգերէն շատը այսպիսեաց համար շինուած են : Ոմանք ալ յաղթուածներն տարիներ անցնելէն ետքը նոյն քաջին վերաբերեալ ուրիշ գիպուածի մը մէջ շարադրուած կերևնան , յորում իրեն նախնիքը և անոնց արուեստները կը գովէ , և այլն . յաղթողին իր քաջութիւնը և պարծանքը միտքը ձգելու և մոռնալու թէ ուրիշներուն մտքէն չհանելու համար :

Որպիսի Պինդարոս վերյ ըսած դպրոցը . — Որատիոս , ուրիշ անուանի քերթողահայր մը , և բանաստեղծութեան յարգը մեծապէս ճանչցող՝ սոսկ գոռոզոտան կրնէ Պինդարոս վրայ . ՙՙ Պինդարոս հեռ , կըսէ , մրցանաց ելլելը , Դեղալոսի պէս մոմով թևեր կպցուցած՝ երկինք ելլել ուզելու պէս բան մըն է : Վասն զի հեղեղ է Պինդարոսի հանճարը , որ որոտմամբք ուժգնութիւն առած , ահաւոր շառաչմամբ մը լեռներէն գետեր կը թափի նոր լեզուով մը , նոր հանճարով և աշխուժով իր երգած գիւցազանցը կամ աստուածոց այնպիսի յերկարակեցութիւն մը կուտայ , որուն հարիւրաւոր արձանք և կոթողք բաւական չէին : Ցաւոց և ուրախութեան , ամպերու մէջ և գժոխոց սեաւ յատակը՝ հաւասարապէս քաղցր կը հնչէ Պինդարոս քնարին ձայնը , լուսաւոր և զմայլական իր հանճարը ՙՙ :

Փլընի հեքիաթագիր Նախանամուխեան դրոցը մէջ հետևեալ հատուածը կը տեսնենք Պինդարոս քերթուխիւններէն :

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 07:55 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Փիլոն կըսէ Ալեքսանդրի. "Տեսանեմ ողբանուոյ ընդոստմամբ զանխմաստասիրելին լև արարը, այն որ նուագաւոր մատանց արուարչին եղև՝ քաջի պինդարոս, զպակասութիւն լուսոյ արեգականդ տեսանել. — "Քանզի ձառագայթ, ասէ, արեգականն համբակ բազմադէտ, մի տար զքեզ Թոյլ մարմնային աչաց. աստղ գեր՝ի վերագոյն կոչեցեալ՝ զոր եդիր Թագաւոր զօրութիւն: Զայնր զոր և իմաստութեան ճանապարհն խաւար անհետ եղեալ՝ վարել լիմն մանկագոյն քան Թէ յառաջն: Այլ զքեզ յԱրամազդայ ձի աստուածծ սլաչեմ անվնաս՝ի բարեխառնութիւն լիմն յեզմունք: Զոր երգեցից ով պանծալի պարկեշտ ամենահասարակ արուեստ,,:

ԳԼՈՒԽ ԺԴ.

ՀԵՐՈԴՈՏՈՍ – ՀԻՊՈԿՐԱՏԷՍ

Հերոդոսի վարքը. — Պապմաբեան գիրքը. — Հերոդոտեայ գրուածոց յարգը. — Հիպոկրատ և իր վարքը. — Գրուածները:

Հերոդոսի վարքը. — կարիոյ Աղիկառնաս քաղաքը ծնաւ Հերոդոտոս, Քրիստոսէ 484 տարի առաջ, Արտաշիսիա Թագաւորին իշխանութեանը ժամանակ, որ ինչպէս պատմութենէ գիտենք, Աթենացւոյն հռչակաւոր պատերազմին մէջ մեծ անուն ունեցեր էր իրեն քաջագործութիւններովը: Հերոդոտոսի հայրը Լիկէոս անէն չանք ըրաւ իր որդւոյն լաւ դաստիարակութիւն մը տալու համար, և մանաւոր գիտուն ուսուցչաց և դաս-

Generated on 2015-03-16 08:24 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

սխարակաց փուԹաջան խնամոցը յանձնեց զինքը։ ԹեպէԹ Յունաց Պարսից հետ ունեցած պատերազմներուն պատճառաւը դժուարին էր ձամբորդուԹիւն ընելը, բայց Հերոդոտոս բան մորվելու համար ամէն վիշտ ու ինչուան գերուԹիւնն ալ աչք առաւ, ու բոլոր Եգիպտոսը, Փիւնիկէ, Ասորիա, Բաբելոն և պարսկաստան քալեց, եաքը եւքսինեան Պոնտոսն ալ անցնելով, հոն տեղի բոլոր քաղաքները քննեց։ Հինգ տարի քշեց այս ձամբորդուԹիւնը, և երեսնամեայ հասակին մէջ Աղիկառնաս իր հայրենիքը դարձաւ, և պատմագրուԹեան համար ժողված անբաւ նիւԹերը սկսաւ կարգի դնել։ Բայց մէկ անակնուանելի դէպք մը Թէ իր բաղդը և Թէ հանգստուԹիւնը տակնուվայր ըրաւ։

Արտեմիսիա Թագուհւոյն մահուընէն վերջը՝ Լիկդամիս Թագաւորեց. որ ցած ու ամբարտաւան մտքի տէր ըլլալով բռնաւորական կառավարուԹիւն մը սկսաւ բանեցընել, և իրեն դէմ կեցողները կը պատժէր ու կը պատուհասէր. ուստի Պանիասիս քերԹողը, որ Հերոդոտոսի վարպետն էր, խղդել տուաւ, ու Հերոդոտոսի համար ալ պատուիրեց որ բռնեն սպաննեն. բայց անիկայ Աղիկառնասէն փախչելով կեանքը խալըսեց ու Սամոս կզմին առանձնացաւ (442)։ Հոն մէկ կողմանէ ուսման եաւէ կըլլար, ու մէկալ կողմանէ ալ ամէն ջանքն ան էր որ հայրենիքը բռնաւորին ձեռքէն խալըսէ։ Երկար տարի գերուԹեան մէջ ճնալէն եաքը հազիւ կրցաւ իր հայրենիքը դառնալ. բայց տեսաւ որ քաղաքն այնպիսի վիճակի մը մէջ էր որ ուսմունք ու հանգստուԹիւն սիրողի մը համար անկարելի էր երկար տարի հոն կենալը. անոր համար Աղիկառնասէն ելաւ, ու ապԹենացւոց հին Սիբարիս քաղաքին տեղը չինած

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 08:25 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թուրլի գեղը քաշուեցաւ ու հոն եղաւ իր մահը Քրիստոսէն 406 տարի առաջ։ Պատմութեանն սկիզբը ինքզինքը աղիկառնասցի կը կոչէ Հերոդոտոս, բայց ուրիշ շատ հինելը Թուրեցի կանուանեն։

Հերոդոտ մահուընէն առաջ ալ աթենացւոց առջևը մեծ համբաւ ստացեր էր իր պատմութեան դրքովը։ Երստունլվեց տարուան հասակին մէջ հանդիսին Ազինք ելաւ, ու բազմութեան առջևն իր պատմութիւնը կարդաց, որն որ ան ատեն դեռ շատ պակասաւոր կրնար սեպուիլ։ Աթենացիք զարմացան Հերոդոտեայ հանճարոյն վրայ, ուզեցին որ իր պատմութեան ինը գրոցը ինն մուսայից անունները դրուին, անկէ զատ տասը ատղանդ ալ իրեն պարգեւ ըլլին։ Ան հանդիսին առեն էր որ Թուկիդիդէս անունով տղան այնպիսի սրտաշարժ պատմութիւնները լսելով լալ սկսաւ. Հերոդոտոս ալ տղուն կիրճ ախորժակը և զգայուն սիրտը սեպնելով երանի տուաւ անոր հօրը, և գուշակեց թէ ատենով անուանի պատմագիր պիտի ըլլայ։

Հերոդոտոսի պատմութեանց գիրքը. — Հերոդոտեայ երկասիրութիւնը կը բովանդակէ իրեն ատեն երկրիս վրայ ճանչցուած ամէն ազգաց պատմութիւնը. բայց գլխաւոր նպատակն է ստորագրել ասիական մեծ պատերազմին պատմութիւնը ընդդէմ Յունաց։ Ան պատմութիւնը ստորագրելու համար գրեթէ քերթողական ճարտարութիւն կը բանեցընէ Հերոդոտ, նախընթաց ու յարակից հանգամանքները տեղն ի տեղը գրելով, ասանկով ինչուան Միկալեայ պատերազմին օրը կը հասցընէ։

Ինչպես ըսինք, ինը գիրք բաժնած է Հերոդոտոս իր պատմութիւնը։ Առջինին մէջ Յունաց և բարբարոսաց իրարու հետ ունեցած թշնամութեան գլխաւոր պատճառը կը փնտրէ Հերոդոտ,

Generated on 2015-03-16 08:26 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ու լուծացող վրայ կըսկսի խօսիլ. լուծացող Թագաւորութեան հաստատութիւնը պատմելով կը ցցընէ Թէ ան երկրին վրայ իրեք հարստութիւնք եռւէ եաև իշխեր են առաւիպեանք, հերակլեաններ և մեմնեբեանք: Մեմնեբեանց ցեղին հինգ Թագաւորացը վրայ կը խօսի, որոնց վերջինն եղաւ Կրեսոս, և Թէ ինչպէս գերվիեան պատգամախօսը խրատ տուաւ իրեն Յունաց հետ բարեկամութիւն ընելու. և ասոր առթով պատմագրական արտուղութիւն մը կընէ, և աթենացւոց ու սպարտացւոց վրայ կըսկսի խօսիլ: Կրեսոսի կիւրոսի հետ ունեցած վերաբերութեանց պատճառաւը Մարաց վրայ ալ խօսք կընէ, և Թէ ինչպէս պարսիկք անոնց Թագաւորութիւնը կործանեցին: Կիւրոսի պատմութեանց մէջ ալ Յունաց գաղթականութեանցը պատմութիւնը կընէ 'ի փոքր Ասիա, և ատոր ստանեայց Թագաւորութե կործանումը:

Երկրորդ գլխին մէջ Հերոդոտոս կը պատմէ ան ամէն բաները որ Եգիպտոսի մէջ տեսած էր, ու Մեմփիսի, Արեգ քաղքին (Հելիուպոլիս) և Թեբէի մէջ քրմերէն լսած. անոնց հետաքրքրական օրէնքները, սովորութիւնքը և կրօնքը. վերջը Եգիպտոսի վրայ իշխող Թագաւորաց պատմութիւնը կընէ սկիզբէն ինչուան Փսամմետիկոս, որուն ատենը Կիւրոսի որդին Կամբիւս Եգիպտոսի իշխեց:

Երրորդին մէջ Կամբիւսի, Շմերդի մոգին ու Վշտասպեայ որդւոյն Դարեհի պատմութեան մեկ մասը:

Չորրորդ գրոց մէջ Դարեհի սկիւթացւոց արշաւելը, և հոնտեղացւոց սովորութիւններն ու քնաւորութիւնները:

Հինգերորդ գլխով Յունաց և Պարսից մէջ ե-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 08:26 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ղած պատերազմին սկզբնաւորութիւնը կըսկսի, և թէ ինչպէս Մեգաբիս Դարեհի զօրավարը թլսակիոյ և Մակեդոնիոյ տիրելու եռանդ եղաւ. Ապիսատագորայ գրգռութեամբը յոնիացւոց ապստամբիլը, և անոր առթով աթենացւոց և պիսիստրատեանց վրայ ալ կը խօսի Հերոդոտոս. և թէ ինչպէս Սարդիկէի աւերմամբը յոնիական գրգռութիւնը խաղաղեցաւ, և Դարեհ միտքը դրաւ յունաստանի վրայ արշաւելու:

Վեցերորդին մէջ յունաստանի նեղքին վիճակին ստորագրութիւնը կընէ Հերոդոտոս. Դատ և Արտափեռն իշխանաց արշաւանացը և Մարաթոնի պատերազմին պատմութիւնը:

Երեքերորդ և ութերորդ գլուխներուն մէջ փաթըքսէսի յունաստան արշաւելը և ամօթով ետ քաշուիլը:

Իսկ իններորդ կամ վերջին գրոցը մէջ Պարսից կռուոյն շարժառիթները և ինչպէս Միկադեայ պատերազմին պատմութիւնը:

Հերոդոտոս գրաւածոյ չարքը. — Հերոդոտոս իր պատմութեան գլուխովը յայտնի կը ցցընէ որ թէ ալէտ պաշտօնապէս անձ մը եղած ըլլայ՝ բայց ոչ այնչափ դիւրահաւան: Իրաւ է որ երբեմն կարգէ դուրս բաներ կը պատմէ, բայց ոչ երբէք երկչոտութիւնը վրան առնելով: Ինչերկէն ոմանք, ինչպէս Պլուտարքոս, կասկածելի ուզեր են ցցընել զինքը. բայց աւելի իրենց անձնական կարծիք համար կիրք առպէրլու է ըսածնին, որովհետև ինչուան հիմա ճանապարհորդք որ ան կողմերը կը քալեն, Հերոդոտեայ ըսածներուն ստուգութիւնը կիմանան. նոյնպէս հնախուզական գիւտերը, արևելքի քաղաքաց աւերակներուն տակ գըտնուած չինքերը, խորհրդական կամ սրբազան տառից ընձեւլացուած յայտնի կը ցցընեն թէ Հերո-

Generated on 2015-03-16 08:26 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

դառաս ոչ երբեք չանք ունեցեր է ժողովրդոց տա-
րեգրութիւն մը առեղծելու, այլ տեսածը և լսա-
ծը իբրև ճշգրտապատում աւանդեր է: Ան և
այսպիսի հանգամանքներով՝ Հերոդոտոս հայր
պատմագրաց կոչուելու պարծանքն իրաւամբք գրա-
ւած է, և միանգամայն պատմութիւն գրելու ալ
ընտիր օրինակագիր եղած: Իր գրուածոց մէկ գլխ-
ւոր հանգամանքն ալ ասն է, որ և իւէ անցից
բարոյական հետեւութիւնը դուրս յառաջեցընելու
Չանքը. Յունաց մեծութիւնը պատմելու առեն
անոնց պակասութիւններն ալ կը ցցընէ, զգու-
շացընելով որ չըլլայ թէ անոնք փառքը կորսընց-
նելու առիթ ըլլան. Թագաւորութեանց կնճռոտն
պատմութիւնն ընելով առաուածոց մեծութիւնը
և անոնց երկրաւոր իշխանութեանց վրայ ունե-
ցած ազդեցութիւնը յայտնապէս կը բացատրէ:

Հերոդոտեայ և մեր քերթողահայր Մովսէս
խորենացւոյն (որուն աղբիւրն է Մարիբաս կա-
տինա) պատմութեանցը մէջ զանազան տարբե-
րութիւնք կը գտնուին թէ պատմութեան և թէ
ժամանակագրութեան նկատմամբ: Շահան չըր-
պետ և հայերէնագէտ Սէն-Մարթէն գալլիա-
ցին՝ մեր պատմչաց խօսքերովը սրբագրել ուզե-
ցին զՀերոդոտ, և անոր՝ եւրոպացի գիտնոց առ-
ջև այնչափ հռչակուած ճշմարտախօսութիւնը
տարակուսի տակ ձգել, իրենց Հնփոփնի հնփող-
պոլիթոնի ի վերայ հնոյ պարսկաստանի Ասիոյ (Recher-
ches curieuses sur l' histoire ancienne de l' Asie)
ըսուած գրքին մէջ որ յամի 1806 տպագրեալ է
ի Փարիզ: Սակայն շատ բանասէրք իրենց կարծի-
քը չփոխեցին, ու մանաւանդ չանացին մեր խո-
րենացին անհաւատարիմ ցցընել:

ՀԻՊՈԿՐԱՏ. Իր վրայ. — Ան աւեններն որ Հե-
րոդոտ պատմագրութեամբ մեծ անուն տասցեր

էր, հռչակաւոր եղաւ նաև բժշկական արուեստին առաջին հեղինակին Հիպոկրատէս, որ գրեթէ Հերոդոտէն 20 տարի եաքը ծնած է (460) կով կղզւոյն մէջ, ուր իր հայրն ալ բժշկականութեան եաւէն եղած էր. և կըսեն թէ սոյնց ցեղը համառօտաբար Ֆիլիփ ըսուած ասկղեպեայց անուանի տոհմէն առաջ եկած ըլլայ: Հիպոկրատ իր հօրը քով երկար տարի աշակերտութիւն ընելէն եաքը Թրակիա անցաւ, Աբդիկոս անունով բժշկի մը քով մնալու: Հաւանական կերևնայ թէ քաղաքէ քաղաք կերթար բժշկական արուեստը կատարելագործելու, և թէ Թեսալիոյ և Լարիսայ քաղաքներն ու Թասոս կղզին երկար տարի կեցած ըլլայ, ինչպէս նաև բարձր ու փոքր Ասիոյ քաղաքներն ալ պտըտած էր: Հիպոկրատ իր ծերութեանն տարին կով կղզին քաշուեցաւ, և հոն բժշկութեան վարժարան մը տարմանեց, և ինչուան իր մահը բոլոր քաղաքացւոց առջև մեծ պատիւ ունէր. թէպէտև ոմանք կըսեն թէ Թեսալիոյ Լարիսա քաղքին քովերը մեռած ըլլայ:

Կը պատմեն թէ պելոպոնեսական պատերազմին տարին մեծ ջարդ եղաւ Աթէնքի մէջ ժանտամահ տարակութեան պատճառաւը, և Հիպոկրատ իր դեղերովը և զգուշութեամբ մեծ օգտութիւններ ըրաւ իր հայրենակցացը. և որով հետև նոյն ցաւը Պարսից մէջ ալ շատ կատղած կընէր, Արտաշէս Թագաւորը մեծ խոստումներով ուզեց որ երթայ անոնց դարմանն ալ ընէ. բայց կըսեն թէ Հիպոկրատ չանձն առած ըլլայ: Ան դէպքս ոմանք անստոյգ կը սեպեն ժամանակագրութեան չյարմարելուն պատճառաւը: Ասկէ վատ ուրիշ շատ առասպելախառն կամ անհաւատալի բաներ կը պատմուին, որոնք տառապանք են:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 08:27 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Հիպոկրատեայ գրուածները։ — Ա հռչակաւոր մարդը սովորութիւն ունէր իր ձեռքովը բժշկուած հիւանդաց ցուցակը քովէն ունենալ, և թէ ինչ դեղերով կրցեր է անոնց հիւանդութեանցը դարման ընել։ Բաց ասոնցմէ՝ բժշկի մը ունեցած պարտաւորութեանցը և բժշկութեան և բնաբանութեան վրայ ալ շատ գրուածներ ունի։ Ոչը ընդհանրապէս համառօտ, բայց իմաստալից ալ է. և գրուածքը կերպով մը իր ազնիւ և կենցաղասէր բարուցը նկարագիրը կրնան սեպուիլ։ Անկեղծութեամբ՝ իր ձեռքովը բժշկուած հիւանդութեանց դարմանը ստորագրելէն ետքը, կը գնէ նաև անոնց ցուցակը որոնց հիւանդութեանը առջևը կամ չէ կրցեր առնել, և կամ թէ առեղծին պէտք եղած դեղը չէ տուած։ Ուրիշ տեղ մըն ալ կը պատմէ թէ 42 հիւանդաց մէջէն միայն 17ը կրցեր է բժշկել։ "Մարդուս կեանքը համառօտ է, կըսէր, և ստրվելու բաները շատ. անոր համար կրթութիւնը տղակուց սկսելու է։ Աշկերտ առնելու առեն անոր յարմարութիւնը փորձէ. և երբոր վրան աշխատասէր գործունէութիւն տեսնես, ան առեն յոյս առ անոր յառաջադիմութեանը վրայ։ Երբոր արուեստը իրեն վարդապետես և տեսնես որ բաւական ստրվեցաւ, մի մոռնար յիշեցընել իրեն թէ գիտութիւնը շատ անգամ միասակար կըլլայ առանց փորձառութեան, և թէ բնութեան ուսումը իրմէն ստրվելու է, չէ թէ իմաստասիրաց և օրէնագիտաց գրքերէն,,։ Ա և ասոնց նման երկար խրատական խօսքերէն ետքը՝ Ասուծոյ կը նմանցընէ ճարտար ու արուեստագէտ բժիշկը։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 08:27 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԼՈՒԽ ԺԵ.

ՅՈՒՆԱԿԱՆ ԹԱՏԵՐԱՑ ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

ԹԷՍՊԻՍԷՆ ԱՌԱՋ ՅՈՒՆԱԿԱՆ ԼԱՓԵՐՓԸ. — ԹԷՍՊԻՍ. — ԻՐԷՆ ՄԱՐԴԱԾ ՆՈՐԱՓԱՌԻՆՓԸ. — ԹԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍՅԱՆՓ. ՊԱՐ Ե ՊԱՐԷՐԳԱԿԻՓ. — ՅՈՒՆԱԿԱՆ ԼԱՓԵՐԳԱՌՈՒՅ ՎՐԱՅ ՓԱՆԻ ՄԸ ՀԱՐՅԱՒՈՐ ՓԷՂԷՒՈՒԻՆՓ. — ՓՐԻՆԻՓՈՍ, ԴԷՐԻԼՈՍ Ե ՊՐԱՓԻՆՈՍ ՈՂՔԷՐԳԱԿ ՓԷՐՈՂՓ:

ԹԷՍՊԻՍԷՆ ԱՌԱՋ ՅՈՒՆԱԿԱՆ ԼԱՓԵՐՓԸ. — *Ան առաջին ներկան որ Պիսիստրատա իր իշխանութեամբը զօրացած, Ալթենքի ազատասէր ժողովուրդը իրեն ծառայեցընելու հետ էր, թատերական քերթութիւնը սկսան մտնել մէջերնին, յորում կը գտովանդակուին քերթողութեան ամէն տեսակները, դիւցազներգակ վիպասանութենէն ինչուան ազհամարհոտ երգիծաբանութիւնը. և տասվ անմահացան Եսքիղէսի, Սոփոկլեայ, Եւրիպիդեայ, Արիստոփանեայ և Մենանդրի անունները: "Ան տեսիլները, կըսէ Պլուտարքոս, թեսպիս սկսաւ փոփոխութիւն մտցընել ոլլերգութեանց մէջ. ժողովուրդն ալ խուռն կը գիմէր ան տեղութիւնը ուր որ աս նոր խաղերը կը խաղցուէին: Սողոն լսասիրութեան և ուսումնասիրութեան հետ միանգամայն զբօսասիրութիւն ալ ունենալով, ինքն ալ կու գար ականատես ըլլալու ան տեսարանաց զորոնք թեսպիս անձամբ կը ձևացընէր, հինեբուն սովորութեանը համեմատ: Խաղը լմընալէն ետքը զթեսպիս իրեն կանչեց Սողոն, հարցուց թէ "Ի՞նչպէս չամչնչցար այնչափ բազմութեան առջև ստա*

Generated on 2015-03-16 08:27 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

խօսելու ,, : Ծիծաղեցաւ Թեսպիս ու " Ի՞նչ վը-
նաս ունի , ըսաւ , ժողովուրդը զբօսեցընելու
համար զուրցուած սուտը ,, : Ա՛ս որ լսեց Սոլոն ,
զայրանալով մը ձեռքի գաւազանը գետին զար-
կաւ . " Ա՛ս մեր վայրկենական զուարճութեան վը-
րայ քիչ ատենէն մենք ալ պիտի ղղջանք ,, ըսաւ :

Թեսպիսէն առաջ ողբերգութիւն ըսածնին
ուրիշ բան չէր , բայց եթէ 'ի պատիւ Դիոնիսոսի
կամ հնձանեան աստուծոյն երգուած գանձեր
ու տաղեր , որով ժողովուրդեան զբօսանք մը կը-
լար . և երգեցիկներէն ով որ քաջ և վարձուց ար-
ժանաւոր երևնար , հանգիստաեւք իրեն նոխազ
մը կընծայէին : Ասոր ալ սկիզբը կը պատմեն թէ
այսպիսի կերպով մը եղած ըլլայ : Իկարոս անու-
նով մէկը արտերուն մէջ իր այգեստանեայցը վը-
նաս տուող նոխազ մը գտնելով՝ զարկաւ սպան-
նեց , և իր մշակացը տուաւ որ ուտեն . անոնք ալ
ուրախանալով ու նոխազին չորս բոլորը պար բռե-
նելով ուրախութեամբ նստան կերան : Անկէ ետ-
քը սովորութիւն եղաւ որ ամէն աշնան այգե-
կութեի տեն՝ աշխատաւորք նոխազներ կը մոր-
թէին կուտէին , ու նոր գինւով զուարթացած ,
կառքերու մէջ կը մտնէին ու բոլոր քաղաքը կը
պտըտէին :

Թեսպիս աս անկերպարան հանգիսին վայել-
չութիւն ու ծանրութիւն մը տուաւ . տահմանեց
որ Դիոնիսեայ քաջութիւնները նուագող դերա-
նանք երբեմն երբեմն հանգիստ առնեն . և ան
իրենց հանգստեան միջոցը մէկը կելլեր գլուխը
դաչինիէ կամ լախուրէ պատկ մը գրած՝ հնձա-
նեան աստուծոյն և կամ ուրիշ գիւցազանց մե-
կուն քաջագործութիւնները կը պատմէր : Սո-
ղոն , ինչպէս վերն ըսինք , արդիւնեց Թեսպեայ որ
աս տեսակ խաղարկութեամբք ժողովուրդը զբօ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 08:27 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

սեղմնելէն ետև կենայ. բայց երբոր Պիսիտրատ սիրատեսեց, Թեսպիս սուելն փառաւոք պայծառացաւ անուսումնասէր իշխանին մանաւանդ ձեռնտուութեամբը, և նոր ողբերգութիւններ շարադրելով աթենացւոցմէ յաղթական ելաւ ընդունեցաւ։

Իրմով է ահաւասիկ, և ասոր կերտուած եղած է ողբերգութեան սկիզբը։ Ասանկ ազնուական արուեստին և ազնուագոյն հանճարոյ խրախուսիչ՝ գինեմոլ անձանց անատակ երգերն և անկարգ շարժմունքներն եղած են։ Քաղաքականութիւնը՝ որ ամէն բանի մէջ կարգը կը սիրուէ, ուզեց որ ժողովրդեան զբօսանքն ալ կրթութեան բարգաւաճանացը չէ թէ միայն արգելք, հապա նաև ձեռնտու ըլլայ։ Եւ յիրաւի թատերական հանդէսք ասանկ վախճանին համար սահմանուած ըլլալնուն, յառաջադիմութեան և լաւութեան կերպարանք առին։ Զբօսասէր ժողովուրդ մը ան քաղաքակիրթ տեղուանքը կը ժողվուէր. և հոն ազգային պատմութեան սրտաշարժ դէպքերը, անակնոնելի կրքեր, աչխարհաշէն կամ անոր հակառակ աչխարհակործան կռիւներուս պատմութիւնները, քերթողաց աչխուժովը գրեթէ իւրեանց հնութեան կամ մոռացութեան դարերուն չղթաներկն ազատած՝ նորէն կուգային կրկին անգամ թատերց վրայ աչխարհքիս մէջ հանդիսանալու։ Հոն եղող ականատես ամբոխին սիրտը երբեմն ուրախութեան երբեմն ալ տրտմութեան արցունքով՝ ան պատմութիւններկն քաղուելու արժանի խրատները կառնէին։

Ոյն վախճանաւ հաստատուած է նաև կատակերգութիւնը, կրթելով զուարճացընել ժողովուրդը, և իրեն բնական դարձած պակասութիւնները զգուշացընել։ Բայց կատակերգակ քերթո-

Generated on 2015-03-16 08:28 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ղաց չափազանց համարձակութեամբը կամ մատնաւոր կրքովը՝ շատ անգամ Սոկրատայ, Արիստիդէսի և փոկիոնի պէս առաքինի մարդիկ ալ ծաղր կըլլային. որով և օգտի տեղ՝ վնասուց պատճառ ըլլալով աս քերթուածիւնը, արժանապէս խափանել ուզեցին խաղաղութիւնը սիրող և առաքինութիւնը մեծարող իշխանք:

Թէսպէայ Պռոտոյածնորոգութիւնը. — Սղոնի առհաճութիւն պատճառով՝ Թեսպեայ ըրած նորոգութիւնքը տանք էին: Քերթողը՝ ի պատիւ հնծանեան աստուածոյն եղած տօնից մէկ վայելչութիւն և մէկ աւելի հրահանգիչ յատկութիւն տալու դիտմամբ՝ ուզեց որ նոյն հանդիսից մէջ հռչակուած խօսքերը՝ փոխանակ պարզ պատմութեան մը պէս աւանդուելու՝ իբրև գործ ձևանան: Պարերգակք կերգէին և կը պարէին. Թեսպիս զանոնք չխափանեց. այլ ուզեց որ երբեմն իրենք հանդիսաւ առնեն, և նոյն լուծութեան ժամանակ մէկը ելլէ կամ միայն խօսի, և կամ պարերգուաց երգերուն պատասխանը տայ արձակ բանիւք: Նախնիք կաւանդեն թէ Թեսպիս աս բանիս համար՝ միայն մէկ դերասան մը կը գործածէր, թէպէտև ոչ միշտ նոյն անձը: — Եսքիղեայ Աղալատուի ողբերգութիւնը կարդացողը քիչ չատ գաղափար մը կառնէ Թեսպեայ Թատերականի դրութեանը՝ ուր գանաւոտեանց պարին դիմաց՝ միայն մէկ դերասան մը կերևնայ:

Ամէն տարի աս հանդէսներն ի պատիւ Դիոնիսեայ քաղաքացիներն կը կատարուէին. միակերպութիւնը զարմանք չէր որ տաղտկալի ըլլայ ունկնդրաց. ուստի սոփեցան քերթողք նիւթերնին փոխել: Ինքն իսկ Թեսպիս սկսաւ աս փոփոխութիւնս ընել, որով իրեն գիւտին աւելի հետաքրքրական և զուարճալի յատկութիւն մը տալ:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 08:28 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թատերական հանդերձանք. — Քանի որ ողբերգութիւնը իրեն յատուկ մեծավայելուչ ձևն առած չէր, թատերական հանդերձանքը (appareil scénique) կատարեալն էր, յորում երգեցիկքը կը նըստէին և քաղաքէ քաղաք կը պտըտէին: Բայց երբոր ողբերգութիւնն սկսաւ ձևանալ, հանդերձանքն ալ անոր համեմատ վայելչացան, մանաւանդ խաղետղ սահմանելով:

Դիմակ գործածելու սովորութիւնն ալ հին էր. վասն զի սպանդարամետական ծոնից հանդիսադիրքը չճանչցուելու համար՝ իրենց երեսը մրով, կամ ինչպէս այլք կըսեն, ձիւթով կը ծեփէին: Բայց Եսքիղէս, որ ինչպէս ետքն ալ պիտի տեսնենք, զանազան բարեկարգութիւնները մտուց ողբերգութեան մէջ՝ պատուիրեց որ դիմակ անցընեն դերասանք, որով կը ճանչցուէր ան աստուածը կամ գլխաւոր անձը զոր կը ներկայացընէին: — Ա բանիս մէջ բնականէ կը զարտուղին ան հանճարաւոր մարդիկը, որ յամենայնի բնութեան կը ջանային հետևիլ: Ողբերգութեան ուժ տուողը՝ զուրցած խօսքերէն աւելի՝ դերասանին կիրքը և զգացումը պիտի ըլլայ. կրից հայելին ալ՝ մարդուս երեսն ու աչուըներն են:

Նոյն ինքն Եսքիղէս լայն պճնաւոր հանդերձ մըն ալ հրամայեց որ հագնին դերասանք, և բարձր կօչիկներ ոտուըրնին անցընեն, աւելի մեծվայելչութիւն մը ունենալու համար. մանաւանդ որ շատ անգամ խաղետղը հեռուն կիյնար հանդիսականաց բազմութեանը պատճառաւ, և հարկ էր որ դերասանք աւելի մեծ երևնային, քնաքանութիւնը չկորսընցընելու համար:

Պար և պարէգիւ. — Պարը (choeur) հարկաւոր մաս մը սեպուած էր յունական ողբերգութեանց մէջ. որովհետև իրենք կը սեպուէին միջնորդք ըն-

Generated on 2015-03-16 08:29 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

աստուածս և ընդ մարդիկ, և կրօնական սկզբունք կը ջանային տպաւորել վերջիններուն մըտքին մէջ, որպէս զի չարանչան աստուածոցմէ եւ կած որ և իցէ անբաղդութեան կամ թշուառութեան վրայ. խաղցողներուն կրքերը կը հանդարտեցընէին, կը մխիթարէին զիրենք, կը քաջալերէին ու կը խրախուսէին: Եւ որովհետև շատ անգամ ողբերգութեան կնճիռները յաճախելով՝ լուծելն ալ դժուարին կըլլար, ուստի պարերգուք հանդերձեալը գուշակելով կամ անցեալը մէջ բերելով, կամ աստուածեղէն զօրութեամբ մը անոնց մեկնութիւն տալով կը լուծէին: Աստր համար է որ երբեմն բնականէ զարտուղելով ա խորժելի չէին կրնար ըլլալ: Պարերգակք ոչ երբէք տեսարանէն կը հեռանային: Եւ երբոր թատրը պարապ մնար, իրենք իրենց երգը կըսկսէին առաջ տանիլ. և ասանկ շատ հարկաւոր էր նախնեաց, որովհետև իրենց ողբերգութիւնքը մերինները նման արարուած բաժնուած չէին:

Պարը կազմող անձինք կամ ծերունիք և կամ կոյս մանկամարդ աղջկունք կըլլային: Ի սկզբան բազմաթիւ էին. ինչուան Եսքիլէս իրեն ետևնեայց ողբերգութեան մէջ չիտուն հոգիէ ձևացած ահաւոր պար մը ներս խօթեր էր: Բայց որովհետև ան երկիւղալի տեսարանը ժողովրդեան վրայ մեծ տպաւորութիւն ըրեր, և ինչուան կանայք և վախկոտ տղայք մեռեր էին, պետութիւնը սահմանեց որ անկէ ետքը պարերգուաց թիւը 15էն աւելի չըլլայ:

Պարը երկու մասն կը բաժնուէր, որոնց երկուքն ալ իրենց պարապետը (coriphée) ունէին. բայց երկուքին վրայ ուրիշ պարապետ (χορηγὸς) մըն ալ կար: Պարերգութեան սկզբնաւորութիւնը կամ ինքը և կամ մեկալ երկու պարապետք

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 08:29 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կընէին. իսկ քնարական մասն ամէնքը միատեղ կերգէին՝ ձայնական երաժշտաց ներդաշնակութեամբը: Երբոր իրենց երգին տաեղը գար, ըստ որում մէկտեղ կաքաւարանը (orchestre) կու գային. իսկ մէկալներուն երգին կամ արարուածը առաջ տանելու ժամանակ՝ կաքաւարանին մէջ մտնուտուր տեղ մը կը քաշուէին:

Յունական ողբերգութենէն վերջ տանի մը հարկաւոր գիտենք. — Յունաց մէջ մէկ անգամ հրապարակաւ ժողովրդեան առջև ձեւացած թատերգութիւնը չէին կրնար երկրորդել, բայց եթէ նոյնը հեղինակին երկասիրութեամբը նոր կերպարանք և աւելի կատարելագործութիւն առնելով՝ արժանի ըլլար ժողովրդեան հաճութիւնը ունենալու որ մէյմըն ալ հանդիսանայ: Անկէ կրնայ իմացուիլ թէ յունական գրութիւններուն մէջ որչափ շատ են եղեր թատերական շարագրածք, և թէ հիմա որչափ քիչ բան ձեռնուրնիս հասեր է: Հինք՝ միայն երկու հարիւր ընտիր և հինգ հարիւր երկրորդական ողբերգութիւնք համրելով, նուազ յարգ ունեցող քերթողաց երկասիրութեանցը թիւ չկայ կրսեն: Նոյնչափ ալ գրեթէ կատակերգութիւնք կը յիշատակուին:

Որ և իցէ քերթող՝ երբոր թատերական քերթուածին մը շարադրէր, և ուզենար որ ժողովրդեան առջև հանդիսացընէ, հարկ էր որ երթայ դևսաւոր տեղին ներկայացընէ իր երկասիրութիւնը: Ան ալ նոյն քերթուածեան վրայ իմաստնոց և հմտից կարծիքը լսելով երբոր արժանաւոր սեպէր հրատարակութեան, իւրմէ մը պարերգուաց կը յանձնէր քերթողին, որպէս զի անոնց երգերովը և ներդաշնակութեամբն իր աշխատանքն աւելի յարգ և ընդունելութիւն գտնէ: Ա պարերգուաց և երգեցկաց ծախքը՝ ամենացի

Generated on 2015-03-16 08:29 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

հարուստ մը կը վճարէր. և ոչ միայն իրեն ծանրութիւն կամ դժկամակութեան առիթ մը չէր սեպուեր ասա բանս, այլ մանաւանդ պատիւ:

Քերթողը Թատերական քերթուած մը շարադրելով իր պաշտօնը լմընցուցած չէր սեպուեր. հարկ էր որ ինքը յարմար անձինք գտնէ նոյն ողբերգութիւնը հանդիսացընելու, անոնց ընկած մասը բաժնէ և հարկաւոր փորձերն ընէ: Ըստ անգամ իրենք ալ դերասանաց մէջ մտնելով՝ ամենէն գժուարին մասն իրենց վրայ կառնէին:

Փրինիքոս ողբերգակ. — Թեսպեայ շատերն եղան հետևող՝ և իրեն նորոգութիւնքը շարունակող: Ասոնց մէջ գլխաւոր կը սեպուի Փրինիքոս ամենայն, որուն համար կըսեն թէ առջինն եղաւ որ Թատերախաղուց մէջ կանայք ալ սկսաւ մտցընել: Ուրիշ բաներու մէջ գրեթէ յամենայնի Թեսպեայ հետևեցաւ: Հերոդոս կաւանդէ թէ Պարսից Միլեսէ քաղաքն առնելը՝ Թատեր վրայ հանդիսացընել տուաւ Փրինիքոս. որ թէպէտ շատ վարպետութեամբ և քերթողական ոգւով յարմարած էր, բայց ատենակալք հազար դահեկան (տրախմի) տուգանք դրին քերթողին վրայ՝ հայրենեաց թշնամութեան մը յիշատակին համար նուն մտքին մէջ նորոգել տալուն համար: Փրինիքոս՝ ամենացաւոց պարծանք եղող պատմութիւն մըն ալ ողբերգութեանցը նիւթ առաւ, Պարսից խորտակումը, և առջի թերութիւնը ալ չյիշուեցաւ: Կըսեն թէ տասը հետևած է Եսքիղէս իր Պարսից ըսուած ողբերգութեանը մէջ: Իրմէ եաքը ողբերգակ քերթողք կը յիշատակուին Գերիլոս և Պրատինաս:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 08:30 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԼՈՒԽ ԺԶ.

ԵՍՏՒՂԷՍ

Վարքը. — Ողբերգուներէնները. — Քերականը։

Եսթղէսի վարքը. — Թեսպիսի, Փրինիքոսի, Պրաթինայի և Գերիլոսի ջանքովը Թէսպէտ յունական ողբերգութիւնք սկսեր էին նոր կերպարանք մը առնել, բայց անոնց գլխաւորապէս ձև ու կաղապարելութիւն տուողն եղաւ Եսքիղէս, որ Քրիստոսէ 525 տարի առաջ Աստիկէի Ելեւսիս քաղաքը ծնած էր, Եւփորիոնի որդին ու Կիւնեգիրոս անուանի պատերազմողին եղբայրը. ինքն իսկ Եսքիղէս մեծ անուն ունեցեր էր Մարաթոնի պատերազմին մէջ ըրած յաղթութեամբքը, և երբոյն վերջը տարուան հասակին՝ ողբերգակ քերթողութեան սէր ձգեց։ Պրաթինաս քերթողին հետ մրցանաց ելաւ ու յաղթուեցաւ. բայց անով յուսահատելու տեղ սիրտ առաւ, և սկսաւ լաւագոյն ողբերգութիւններ շարադրել, որոնց յիսունուերկուքին համար աթենացւոցմէ գովութիւն և պսակ ընդունեցաւ։

Եսքիղէս իր մահուընէն իրեք տարի առաջ (460) Աթենքէն Սիկիլիա քաշուեցաւ. Ան առանձնութիւնը ոմանք կամաւոր էր, կըսեն, ուրիշներն ալ թէ աթենացիք աքսորեցին զինքը. բայց Եսքիղէս Սիրակուսայի մէջ ալ ինչուան մահը ողբերգութիւն գրելու զբաղած էր։ Մահուանը համար կը պատմեն թէ արծիւը կրիայ մը բռնած ու ձանկերովը օդը բարձրացուցած ըլլալով, Եսքիղէսի

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 08:30 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ճաղատ գլխուն վրայ ձգեր ու սպաններ է։ Բայց սա բանս չինծու և անհաւանական կերևնայ, թէ պէտև հիներէն ալ ոմանք կը պատմեն։ Վաթսունըրուինը տարուան էր Եսքիղէս երբոր մեռաւ, և գերեզմանը ողբերգակ քերթողաց նուիրական տեղ մը սեպուած էր. աթենացիք ալ իրեն պատուոյն պղնձէ արձան մը կանգնեցին, և Պաւսանիաս կը պատմէ թէ իր ատենը Աթենքի Թատերմէջ Եւրիպիդեայ և Սոփոկլէի պատկերացը քով նկարուած էր նաև Եսքիղեայ դէմքը։

Ողբերգութիւնները. — Հիները կաւանդեն թէ Եսքիղէս եօթանասուն ողբերգութիւն շարադրած ըլլայ. բայց մեր ձեռքը հասածները միայն եօթն են։

Ա. Պրոմիթէոս կապեալ. — Ա՛ս ողբերգութեան ամէն դերասանքը մէյմէկ աստուած են, որ մէկ տեղ կը խորհրդակցին մարդկանց լաւութեան և բարօրութեանը վրայ։ Գլխաւոր անձն է Պրոմիթեւս, զորն որ աստուածք իրեն յանդգնութեանը համար պատժեցին. վասն զի մարդուս աղէկութիւն ընել կարծելով երկնքէն կրակ գողցաւ ու զանոնք ոգեւորեց։ Լաւութեանցը հետ շատ թերութիւններ ալ կը գտնուին Եսքիղեայ աս ողբերգութեանը մէջ։ — Պրոմիթեայ ողբերգութիւնն իրեք մաս բաժնած էր Եսքիղէս, որոնցմէ երկրորդը մեզի հասած և առջինն ու երրորդը կորսուած՝ որոնք Պրոմիթևս կրակաբէր և Պրոմիթևս ազատեալ կըսուէին։

Բ. Եօթն Ղագաստրէ Թէբայ, կամ Թէբայիդեան. — Ասոր ալ նիւթն է եօթն իշխանաց Թեբէ քաղաքը պաշարելը, զորն որ Սաղամինայի պատերազմէն առաջ ձեւացուցին Յոյնք, Արիատիդեայ իշխանութեան ատենը։ Պլուտարքոս կը պատմէ թէ երբոր դերասանը արդար և իմաստուն մարդուն նկարագիրը կընէր, բոլոր ժողովրդեան աչքը Ա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 08:36 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

բիւտիդեայ վրայ դարձաւ : — Պրոմիթեայ պէս աս ողբերգուածին ալ իրեք մաս ունէր. Լայոս, Եդիպոս և Թէյիդեան :

Գ. Պոլինիկ. — Քաերքսեայ Պարսից Թագաւորին նաւամարտի մէջ յաղթուելուն վրայ շարադրած է Եսքիղէս, սաղամինեան պատերազմին ուրթ տարի ետքը : Թէպէտև իւրաւ է որ ողբերգուածին մը շատ աւելի զօրաւոր և կրակոտ կըլլայ Թէ որ նիւթը հին պատմուածիններէն առնուի, բայց երբեմն տեղւոյն հեռաւորութիւնն ալ նոյն տպաւորութիւնը կընէ, ըսած է Ռասին դաղղիացի ողբերգակ քերթողն իր Պայազիտ կոչուած ողբերգութեան յառաջաբանին մէջ : Ասանկ ըրած է նաև Եսքիղէս, Պարսից Շօշ Թագաւորական քաղաքը հանգիսաւոր ընտրելով աս ողբերգութեան : Դարեհ, որ կենդանութեան աւեներ չէր կրցած յաղթել Յունաց, գերեզմանէն դուրս կելլէ ու կը պատուիրէ որդւոյն որ աստուածներէ պաշտպանուած ժողովրդեան մը դէմ չելլէ : Շատ ընտիր յատկութիւններ ունի Եսքիղեայ աս ողբերգութիւնը :

Դ. Ագամեմոն. — Ագամեմոն երբոր Տրոյեոյ պատերազմէն դարձաւ, իր կինը Կլիտեմնեստրա՝ Եգիսթոս անունով սարսափածուին հետ խօսքը մէկ ընելով՝ իր այրը սպաննեց : Ան նիւթին վրայ է ահաւասիկ Եսքիղեայ ողբերգութիւնը : Անանկ կենդանի սարսափագրութիւններ և սիրտ շարժող խօսքեր կան մէջը, որովք ոչ միայն իր ողբերգութեանց գլխաւորը կը սեպուի, հապա նաև ամանք Հոմերոսի Իլիականին և Ոդիսականին կը հաւասարցընեն :

Ե. Որեսթէս. — Առջի ողբերգութեան շարունակութիւնն է Որեսթէս կոչուածը, որն որ Ագամեմոնի որդին էր ու հայրիւ վրէժխնդրութեամբ սպա-

Generated on 2015-03-16 08:36 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

տած մօրն անգութ ձեռքէն : Հասակն առնելով կը մեծնայ օտարութեան մէջ, ու աստուածներէն պատգամ կընդունի որ երթայ իր հօրը գաւաճաններէն սրէ անցընէ : Պիլատէս իր սիրելի բարեկամին հետ Արգոս կը դառնայ, կը տեսնէ իր հօրը գերեզմանը և անհաշտ վրէժխնդրութիւն կերդնու : Ան յոսահատ վայրենութեանը մէջ կը պատահի իրեն Էլեկտրա քոյրը, կը ճանչնան միմեանք, և հնարք կը մտածեն անօրէն Էգիսթոսը պատուհասելու : Ուսոի Որեստէս օտարական անձ մը կը ձևանայ, ու Կլիտեմնեստրայի ու Էգիսթեայ՝ Որեստի մահուան լուրը կիմացընէ. կընտանեկայ անոնց հետ, ու ժողովուրդը գըրգռելով զիրենք կըսպաննէ : Եւ երբոր արիւնաշաղախ սուրը ձեռքը կը վազէ ժողովրդեան իմաց տալու թէ ինչպէս Արգոս քաղաքը Էգիսթեայ բռնութենէն խալըսեցաւ, մայրասպանութեան ցաւը խելքը բոլորովին գլխէն կը տանի, ու կերթայ Դելփիս ապաստանելու :

Ա կարգէ դուրս ու սիրտ շարժող նիւթերը՝ ուրիշ շատ նոր ազգաց քերթողներու ալ աշխոյժը վառած են եպիկեայ նմանութեամբը ողբերգութիւններ շարադրելու. բայց անոնց մէջ ամենէն աւելի հնոց մաեցողն է Վիկտոր Ուգիէրի իտալացին :

Զ. Ակէց եռքը կու գայ եպիկեայ վեցերորդ ողբերգութիւնը՝ որ ան երկուքին շարայարութիւն է, և որուն արարուածները Դելփիսի տաճարին մէջ կը գործուին : Պիւթեան հարցուկը իր մարգարէաշունչ եռոտանուոյն վրայ կելլէ. մէյմըն ալ անհնարին տագնապ ու ցաւ մը զինքը կը յափշտակէ, վասն զի կը տեսնէ զՈրեստ արիւնաշաղախ ձեռքերով, որուն չորս կողմը առած են դժոխոց կատաղիքը : Ապողն կաւաչ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 08:37 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նորդէ Որեստեայ այնպիսի երկիր մը ուր կարե-
նայ հանգիստ ըլլալ կատաղեաց ձեռքէն. բայց
Կլիտեմնեստրայի ստուերը նորէն կը գրգռէ զա-
նոնք. սակայն ետքը Ապողոն իրեն սրբարանէն կը
մերժէ: Տեսարանը դելփական մեհենէն Ամե-
նատես տաճարն ու Ուրէսի բլուրները կը փո-
խուի, որ Աթենքի մէջ էին: Որեստէս խղճմտան-
քէն ու յուսահատ կատաղութենէն տագնապած,
Աթենասայ արձանին կը պլլուի, բայց եռևէն կը
հանին դժոխային հոգիք, ու աստուածուհւոյն
պաշտպանութեան տակէն յափշտակել կուզեն
իրեն որսը: Մէջ կը մտնէ Պալլաս երկու կողմին
ալ իրաւունք ընելու, և Որեստեայ ցաւը և աղա-
չանքը տեսնելով՝ իրեն կողմը կը կորէ դատաս-
տանը. և թէպէտ կատաղիք անով գոհ չեն ըլլար,
բայց Պալլաս իր ճարտար խօսքերովը կը համոզէ
զիրենք խոստանալով անոնց անուանը յիշատա-
կին տաճար մը կանգնել տալու Ատտիկէի մէջ.
անուննին ալ փոխելով Եւմենեայք կը կոչէ, որ
Բարեբար ըսել է: Ա՛ս ողբերգութեան մէջ Եսքի-
ղէս դժոխոց կատաղեաց պարը անանկ ահաւոր և
քաոմնելի կերպարանքով ձևացուցեր էր, որ կը
պատմեն թէ հանդիսականաց մէջէն շատ տղաք
վախերնէն մեռան, և կանանցմէ ալ ոմանք ընկան
մարեցան:

Է. Եսքիղեայ եօթնեերորդ ողբերգութենէն է Ա-
ղաւորք կամ Դանաւոսէանք, որոնց մէջ Դանաւոս
և իր դստերքը արգիացւոցմէ օգնութիւն կը խընդ-
րեն ընդդէմ Եգիպտոսի՝ Դանաւոսի եղբօրը.
բայց չկրնալով Եգիպտոսի դէմ դնել, կըստի-
պուին Արգոս փախչել, ուր հօրեղբնուն հետ խօս-
քը մէկ ըրած՝ դանայեանց դստերքն իրենց փե-
սաները կըսպաննեն:

Բաց՝ի սա եօթն ողբերգութիւններէն, հին

Generated on 2015-03-16 08:37 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

քերականաց գրուածոցը մէջ քանի մը ուրիշ քերթողական հատուածներ ալ կը գտնուին Եսքիղեսի անուամբը : Ինչպէս մեր նախնեաց գրքերուն կամ թարգմանութեանց մէջ շատ տեղ գովութեամբ յիշատակուած է սա քերթողը [1] :

Եսքիղեսէն առաջ ոտանը կամ ՀԷՊԸ երկրորդական մաս մը սեպուած էր թատերական քերթուածոց մէջ . ինքը նախնաբար հարկաւոր սեպեց , որով պարերգութեանց հետ ալ մանաւոր կապակցութիւն ունեցաւ : Անոր զգուշութիւնն ընելու համար հարկ էր որ թատեր վայ ուրիշ երկրորդ դերասան մըն ալ աւելցընէ , ինչպէս որ ըրաւ ալ : Եսքը տեսնելով որ իր փառաց նախանձորդը Սոփոկլէս իրեք դերասան սահմանեց , ինքը չորրորդ մըն ալ աւելցուց . որով անոնցմէ մէկը գլխաւոր անձ և ուրիշները երկրորդականք կը սեպուէին : Գլխաւոր սեպուած անձը ան էր որուն վրայ ընդհանրապէս կը դառնար ողբերգութեան նիւթը :

Եսքիղես դերասանաց երեսը դիմակներ ալ անցընել տուաւ , և ամէն մէկուն իրեն սահմանին

1 Փիլոնի նախախնամութեան գրքերը Եսքիղեայ ողբերգութիւններէն ալ երկու պող մեզի ասանդած են հնոց թարգմանութեամբ .

" Արամազդ չարագործաց յազգէն հանէ , և 'ի զկոտղէն օրհնէ 'ի բաց ,, : (Եր . 50) :

" Իսկ ժանտասպատուհասն զընդունայն զժողովրդակեր զկզակն շուրջ արկեալ ընու՝ մեռեալոց մարմինս թաղելով ,, : (Եր . 102) :

Ասոնք՝ բայց ալ նա և գիտուարագիտութ անուանք են այսպիսի բաներէն մեր հայկական գրականութեան . ասոնք հարկ է որ մանաւանդ չիշատակութեան արժանի ըլլան :

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 08:37 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

յարմար զգեստ հագուեցընելու սովորութիւնը մտուց։ Իրեն ոզբերգութիւնքն իրաւ է որ ընդհանրապէս ընտիր են, բայց շատ ալ թերութիւններ ունին. սակայն առաջնութեան պարծանքը նոյն թերութիւնները կարդարացընէ։ Բազդը կամ ճակատագիրը իրեն ոզբերգութեանցը մէջ ուզածը կը սահմանէ և կը գործէ. և շատ անգամ ալ աստուածները և կիսաստուածք կու գան մեկուն կամ մեկալին օգնելու։ Ա՛ս ամէն բաներս դժուարանձիւն խաղերուն կապերը լուծելու համար ըրած է քերթողը. բայց բնականէ դուրս ըլլալնուն՝ ախորժական, համոզիչ և պատրոյ չեն կրնար ըլլալ, որոնք ոզբերգութեան գլխաւոր յատկութիւններն են։

ԳԼՈՒԽ ԺԷ.

ՍՈՓՈԿԼԷՍ

Սոփոկլէսի վարքը. — Եօթիղէս և Սոփոկլէ ոճայն ոզբերգութիւնը. — Ոզբերգութիւնները։

Ինչպէս որ վերն յիշեցինք, երբոր Եսքիղէս իր ծերութեան հասակին մէջ չարաղրած ոզբերգութեամբքը մեծ համբաւ և անուն կրնտանար, փառացը և հանճարոյն արժանաւոր նախանձորդը ունեցաւ Սոփոկլէս կոլոփանեցին, որ Քրիստոսէ 598 կամ 593 տարի առաջ ծնած էր։ Ոմանք կրսեն թէ ազնուական ընտանեաց զաւակ էր, և թէ տղայութեան հասակին մէջ աղէկ դաստիարակութիւն առած։ Սալամինայի պատերազմէն ետքը, երբոր Սոփոկլ դեռ տասնըւեր տա-

Generated on 2015-03-16 08:38 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

բեկան պատանի մըն էր, աթենացիք ան յաղթա-
նակին փառացը համար մանաւոր խումբ մը ե-
րաժշտաց սահմանեցին, և զՍոփոկլ անոնց գլուխ
դրին. Սոփոկլէս ալ այնպիսի ճարտարահիւս
քերթուած մը շարադրեց՝ի պատիւ աթենացւոց
որ ամէնքը զարմացուց վրան: Նախ քնարերգակ
քերթուածեան եռանէ եղաւ, եռքը քանըրուածը
տարուան հասակին Եսքիղէսի հակառակորդ ե-
րևնալով յաղթեց անոր, ու գովուածեան և փա-
ռաց պսակն ընդունեցաւ: Թատեր վրայ երբոր
Եսքիղէսի և Սոփոկլեայ քերթուածիւննելը ձևա-
ցան, ժողովրդեան մէջ խառնաձայն աղաղակ
մը փրթաւ. և դատաւորք չէին գիտեր ինչ կեր-
պով և կամ որուն կողմը սահմանելու: Ան շփո-
թութեան մէջ կիմոն իր ինը ընկերօքը առաջ
անցաւ, և՝ի պատիւ Դիոնիսեայ կանգնած բագ-
նին գիմաց սահմանեալ զոհերն սկսաւ ընել, իշ-
խանութենէն չհրաժարած: Ժողովուրդը եր-
բոր ձայնը և աղաղակը կարեց, կիմոն դատաւոր-
ներ ընտրեց յաղթողը որոշելու համար. Սոփոկ-
լէս յաղթական երևցաւ, և Եսքիղէս սրտին ցա-
ւէն Սիկիլիա փախաւ կըսեն: Ակէ զատ ուրիշ
քանի անգամ ալ փառաց պսակը ժառանգած
է Սոփոկլ, և ոչ երբեք արհամարհուած են իր
քերթուածքը աթենացիներէն. իսկ երբոր իր
Անթիգոն ըսուած ողբերգութիւնը շարադրեց, ա-
թենացիք իրեն փոխարէն մը ընել ուզելով զինքը
զօրավար ընտրեցին ու Պերիկլէսի հետ գէպ՝ի
Սամոս իրենց թշնամեացը գէմ խրկեցին:

Կը պատմեն թէ ծերութեանն առեն Սոփոկլէ
որդին դատաստան բացաւ իր հօրը դէմ, ամբաս-
տանելով թէ անկարող է ու չի կրնար տանը տըն-
տեսութեան համար պէտք եղած խնամքն ունե-
նալ: Սոփոկլ փոխանակ ինքզինքը արդարացընե-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 08:38 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

լու, իր Եփիսոս՝ի կոչնէ ըսուած ողբերգուԹիւնը որ ան առեն կը շարադրէր, բերաւ ու դատաւորաց առջևը կարդաց։ Զարմացան դատաւորք, և ապերախտ որդին դատաստանի առեներէն վռընտելով, յայլԹանականաւ իր տունը դարձընել տուին ինննամեայ ծերուներին, որուն աչխոյժը դեռ կեն դանի էր և միտքը վառվռուն։ Երբոր իրմէն քիչ առաջ՝ ոտիսը Եւրիպիդես վախճանեցաւ, Սոփոկլէս ալ բոլոր աԹենացւոց հետ սուգի նստաւ և ան օրերը ձևացընել տուած ողբերգուԹեանը մէջ չուզեց որ գուսանաց գլուխը պսակ դրուի։

Եպիզէտ՝ Ս՝ Սոփոկի ոճոյն ը՝գովաբանիչը.— Սոփոկլ զանազան փոփոխուԹիւններ մտուց ողբերգուԹեան մէջ, և գլխաւորն ան եղաւ որ դերասանաց Թիւը կամաց կամաց չատցուց։ Եպքիղեայ և Սոփոկլի ոճոյն մէջ մեծ տարբերուԹիւն կը տեսնուի. վասն զի Եպքիղէսինը զօրաւոր և աչխոյժ հանճար կրնայ սեպուիլ, իսկ Սոփոկլէսինը հաճոյական և անուչ. ան պատճառաւ ալ է որ հնոց մէջ ամենէն մեծ և ամենէն կատարեալ ողբերգակ քերԹողը կը սեպուի, և Հոմերոս ոչխերգուներէն կըսուի, ինչպէս զՀոմերոս ալ փոխադարձաբար Ս՝ֆոկլէս տիւոպնէրգակ էբլուներէն կը սեպեն։ Իր ողբերգուԹեանցը մէջ գլխաւոր ճարտարուԹիւնն ան եղած է որ հարկաւոր կապակցուԹիւնները լաւ կերպով կը յարմարցընէ, և իր դերասանացը մեծավայելուչ և բուն դիւցազնական քայլք կու տայ։ Մարդկային կրից ճարտար նկարիչ մը կրնայ սեպուիլ Սոփոկլէս. անոր համար ալ Թէ հնոց և Թէ նորոց մէջ արժանապէս մեծարանք ու պատիւ գտած է իր հանճարոյն, ճարտարուԹեանը և քերԹողական լեզուին համար։ Կը պատմեն Թէ մեռնելու առեներն Ապողոնի աքաղաղ մը մորԹել հրամայեր է, որպէս զի անոր

Generated on 2015-03-16 08:38 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

երգելու ատենը մեռնելով՝ քերթողին արժանա-
ւոր մահ ունեցած սեպուի :

Սոփոկլի ողբերգութիւնները. — Սոփոկլի համար
կըսեն թէ հարիւրէն աւելի ողբերգութիւն շարա-
գրած ըլլայ. մեր ձեռքը հասածները հիմա եօթն
են թուով, որոնք իրեն հասուն հանճարոյն և ծե-
րութեան երկասիրութիւնքը կերևնան, և հնոց
մէջ ալ մեծ գովութեամբ կը յիշատակուին :

Ա. Անտիգոն. — Անտիգոն դիւցազն ու քաջա-
սիրտ օրիորդ մըն է, որ իր եղբօրը Պոլինիկեայ
յուղարկաւորութեան հանդէսը կատարելու հա-
մար մահը աչք կառնէ : Կրէոն թագաւորը Ան-
տիգոնեայ ասոր յանդգնութիւնն իրեն արհամար-
հանք սեպելով կը վճռէ որ մեռնի : Թէպէտ յո-
ժարակամ կընդունի ասոր հրամանը Անտիգոն,
բայց իր ծաղիկ հասակին օրերն ատանկ թշուա-
ռութեամբ լմընցնելուն համար ըրած սրտաչարժ
ողբերովը՝ ընթերցողաց սիրտը կը յափշտակէ :

Բ. Եւէկտրա. — Նոյն նիւթն է, որուն վրայ Ե-
քիլէս իր Որեստը շարադրեց. միայն թէ Սոփոկ-
լի ողբերգութեան մէջ գլխաւոր անձ սեպուած
է Եւէկտրա անոր քոյրը : Աղջկանը սիրտը հայրե-
նասէր առաքինութենէ զատ կատաղի վրէժխընդ-
րութեան ոգի մը դրած է քերթողը իր հօրը կե-
նացը գաւաճաններուն դէմ. և ատ բանիս յար-
մար գործի մը ձեռք կառնէ Որեստէս իր եղբայ-
րը : Ըստ սրտաչարժ է ան տեսիլը յորում Ո-
րեստէս և Եւէկտրա զիրար կը ճանչնան :

Գ. Տրաքինոհիէ կամ Մահ Հերակլէ. — Ա ող-
բերգութիւնը Սոփոկլի գրուածոց մէջ ամենէն
ստորինը կը սեպուի : Ատոր հեղուածը է Սենեկա
հռովմայեցին իր Հերակլէս Մոլեգին ըսուած ողբեր-
գութեան մէջ, և Ռոմեքու գաղղիացի իր Հերա-
կլէս օրհասականին :

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 08:38 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Դ. Եդեսիոս Խաֆաուր. — Ասոր մէջ շատ գժուարին պարագայ մը ընտրած է Սոփոկլէս ողբերգելու։ Ծանր յանցանք մը կը գործուի, ու յանցաւորը չի գանուելուն՝ անպատիժ կը մնայ. Թագաւոր մը իր իշխանութեան ամէն ուժը կը բանեցընէ իմանալու, և շատ աշխատելէն ետքը ինքզինքը կը գտնէ, որ իր հայրը սպաններ ու մայրը հարսնացուցեր է, թէպէտ անգիտութեամբ։ Սակայն ինքզինքը պարտաւոր կը սեպէ փառասիրութեան, յանդգնութեան ու ամբարտաւանութեանը հետևանքը, որոնցմով կուրացած չկրցաւ ճանչնալ իր հայրը։ Ա՛ս ողբերգութիւնը Սոփոկլեայ գլուխ գործոցը սեպուած է. և չենք գիտեր թէ ինչ պատճառաւ աթենացիք չհաւնեցան ցցուցին, ու քերթողին փիլոկտետ եղբօրորդւոյն տուին յաղթութեան մրցանակը։ — Ասոր նմանութեամբը յօրինած են Սենեկա, Պետրոս Քոռնէյլ և Վոլթէր իրենց համանուն ողբերգութիւնը։

Ա՛ս ողբերգութեան երկրորդ մասը կը սեպուի Ե. Եդեսիոս՝ի կաղճոն ըսուածը, որուն նիւթն է թէ Եդիպոս թագաւորութենէն վռնտուելով իր Անտիգոնէ դստեր առաջնորդութեամբը այնպիսի աշխարհ մը կուզէր երթալ որ իր հալածանացը ևնեղութեանց տեղեկութիւն ունեցող մը չի գիտցուի. ուստի Կաղմոն գնաց, և հոն եաժենեայց տաճարին քով հոգին փչեց։

Զ. Էա՛ս ըսուած ողբերգութիւնը թէպէտ ամենէն աւելի պարզը կրնայ սեպուիլ Սոփոկլէսի քերթուածներուց մէջ, բայց լի է կրկնութեամբ և ուժով։ Նիւթը ան է որ Տրոյիոյ պատերազմէն ետքը Յոյնք որոշեցին որ Ա՛քիլլէսի զինքերն Ոդիսեւսի տրուին։ Էաս ատ բանին վրայ զայրացած՝ երդում ըրաւ Յոյներէն վրէժը խնդրելու. Աթենաս ալ Էասայ խելքը գլխէն առաւ, որով սկսաւ փոխանակ մարդկանց վնասելու, վայրի կենդանեաց ետևէն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 08:39 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

լինալ ու հալածել, զանոնք ելլադացիները կար-
ծելով: Երբոր զգաստացաւ, իմացաւ իր նախա-
տինքը. ուստի Տրոյեոյ առջևը կենալը իրեն ար-
համարհանք կը սեպէր, և Սաղամինա իր ծերուն
հօրը քով գառնալն ալ ամօթ: Ան պատճառաւ
միտքը դրաւ որ ինքզինքը սպաննէ. և թէպէտ շատ
չանացին բարեկամներն այնպիսի անգութ խոր-
հրդէ մը զինքը ետ կեցընելու, բայց անկարելի
կըլլար: Ինքզինքը սպաննեց էսս, և երբոր իր եղ-
բայրը Տևկրէ՝ գառնացեալ հոգւով անոր Թշնա-
միններէն կուզէր վրէժ առնել՝ Ոդիսեւս վեհանձ-
նութեամբ մեռելին պաշտպան կեցաւ: Ասով կը
լմննայ ողբերգութեան հանդէսը:

Է. Փիլոկտէտ.—Որն որ Սոփոկլէս ծերութեան
առեղը շարադրած կերևնայ, և մեծ գովութեանց
արժանի եղեր է նաև ասոր համար. վասն զի իրեն
ողբերգութեանցը մէջ ամենէն աւելի սրատաշար-
ժը կրնայ սեպուիլ, ափսոս որ նիւթին պարզու-
թեանը պատճառաւ այնչափ մեծ ոպաւորու-
թիւն մը չըներ: Փիլոկտետ Յունաց զօրավարնե-
րէն մէկն էր, որ Տրոյեոյ պատերազմին առեղը
վիրաւորուած ըլլալուն երեսէ ձգեր էին զինքը
ելլադացիք. Փիլոկտետ ալ անծանօթ կղզի մը քա-
շուած, հոն իր օրսոյին առօրեայ պարէնը կը ճա-
րէր: Իմացան ելլադացիք ու Ագիլլեսի որդին
Նէոպտղոմէոսը խրկեցին որ զինքը ետ դարձնէ.
դիւցազնը՝ առանձնակեցութեան քաղցրութիւնը
և բազմաժողով կենաց վտանգները աչքին առջևն
ունենալով՝ չէր ուզեր ետ դառնալ, բայց անոր
սպանչանքն ալ արհամարհել չկրնալով՝ հազիւ
համոզուեցաւ: Գեղեցիկ և սրտաշարժ են Փիլոկ-
տետի ան խօսքերը որոնցմով իր ցաւերը և վիշտե-
րը կըսատորագրէ, և մանաւանդ ան կտորը յո-
րում կը կարծէ թէ Նէոպտղոմէոս ալ զինքը խա-
բելու եկած ըլլայ:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 08:39 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԼՈՒԽ ԺԸ.

ԵՒՐԻՊԻԴԷՍ

Եւրիպիդէայ վարքը. — Իւրեն գրուածքը. — Եւրիպիդէայ ոճը:

Եւրիպիդէայ վարքը. — Եւրիպիդէս սաղամինա-ցի էր, Քրիստոսի Թուականէն 486 կամ 480 տա-րի առաջ ծնած. և ըստ կայ Թէ ան օրը ծնաւ յորում Յոյնք Սաղամինայի պատերազմին մէջ Քսերքսէսի բոլոր ուժը կոտրեցին: — Նախ ըմբշա-մարտութեան եւևէ եղաւ Եւրիպիդէս, բայց վաւվռուն և աշխոյժ ոգւոյ տէր ըլլալով ուսման սէր ձգեց. ուսոի առաջ նկարչութեան եւևէ ե-ղաւ, ետքը ճարտարախօսութեան, անկէ վերջն ալ իմաստասիրութեան: Բայց իրեն ուսուցիչ Ա-նաքսագորաս փիլիսոփային կրած վնշտերն ու նե-ղութիւնները տեսնելով հնարած վարդապետու-թեանցը համար, բոլորովին պաղեցաւ իմաստա-սիրութենէ և թատերական քերթուածքի սկը-սաւ եւևէ ըլլալ (452). բայց հարկ եղաւ որ տա-ղը տարի տրվելէն ու աշխատելէն ետքը կարենայ մրցանակ առնել:

Սոփոկլի և Եսքիղեայ համեմատութեամբ քիչ անգամ յաղթութեան պսակն առած է Եւրի-պիդէս. և ասոնք պատճառը կամ ան է որ իր քերթուածները հաճոյական չէին ըլլար աթենա-ցւոց, և կամ որ աւելի հաւանական կերևնայ, նախանձորդները շատ ըլլալուն՝ Թող չէին տար որ իր հանճարոյն արդիւնքը յայտնի տեսնուի. որով

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 08:39 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

իրեն չարադրած իննսունուերկու ողբերգութիւն-
ներէն միայն հինգին համար պատկ ընդունեցաւ :
Կը պատմեն թէ Եւրիպիդեայ քանի մը ողբեր-
գութիւնները սեսարանի վրայ ձեացընելու առեն-
նին այնչափ անհաճոյ երեւցած ըլլայ հանդիսա-
կանաց որ բարձրաձայն արհամարհած ըլլան և
Թող չիտուած որ խաղն առաջ երթայ . սա նա-
խասինքը Սոփոկլէն և Եսքիղեայ ըրած չէին , որով
և Եւրիպիդէս պարտաւորուեցաւ մէյմը հանդի-
սացընել տուած ողբերգութիւնքը յարմարել և
սրբագրել և գրեթէ նորոգ չարադրել : Այսու ա-
մենայնիւ քանի գնաց Եւրիպիդեայ համբաւը
մեծցաւ . և երբոր իր մահուընէն երկու կամ ի-
րեք տարի առաջ մակեդոնացւոց Արքեղայոս Թա-
գաւորին քով գնաց , աթենացիք շատ ցաւեցան
անոր իրենց քաղաքէն հեռանալուն վրայ : Վասն
զի սա Արքեղայոս Թագաւորը Հերոնի և Արքի-
զասայ նմանելով , բոլոր բանաստեղծները , իմաս-
տասէրներն ու անուանի արուեստագէտները իր
արքունիքը կը կանչէր , ու առատապէս կը վար-
ձատրէր զանոնք :

Հոն'ի Մակեդոնիա մեռաւ Եւրիպիդէս 407ին ,
գրեթէ վեց ամիս Սոփոկլի մահուընէն առաջ :
Կըսեն թէ որովհետև Եւրիպիդէս իր ողբերգու-
թեանցը մէջ կանանց դէմ կը խօսէր ու երբեմն
կը նախատէր , մակեդոնացի կանայք զայրացած
բզիկ բզիկ ընելով սպաննեցին զինքը : Բայց սա
բանս անհաւանական է , և կերևնայ թէ ան պատ-
մութենէն ելած ըլլայ ուր կըսուի Եւրիպիդեայ
համար թէ իր ծերութեան առենը օր մը քանի
մը շներ վրան վազած ու սպաննած ըլլան : Եւրի-
պիդեայ մահուան լուրը բոլոր աթենացւոց վրայ
մեծ ազդեցութիւն ունեցաւ , և ինքն իսկ Սո-
փոկլէս լացաւ իր հայրենեաց պարծանքը :

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Եւրիպիդեայ գրուածքը. – Ինչպէս Եսքիլեայ և Սոփոկլէսի, սոյնպէս ալ Եւրիպիդեայ ողբերգուԹիւններէն շատը կորսուած են. վասն զի իր չինած այնչափ բազմաԹիւ խաղերէն տասնըհուԹը միայն ամբողջ մեր ձեռքը հասած, և սոյնք են.

Ա. Ալկեստ. – Ընակիր բարոյականին համար շատ արտաչարժ է Եւրիպիդեայ սա ողբերգուԹիւնը. վասն զի Ատմետ Թագաւորին կինը Ալկեստ իր երկանը կեանքը յերկարելու համար յօժարուԹեամբ կը մեռնի: Սակայն իրեն ամուսնական սէրը անվարձ չի մնար: Հերակլէս որ իր կրած նեղուԹիւններուն մէջ մեծ սէր և հիւրընկալուԹիւն տեսած էր Ատմետ Թագաւորէն, եղածը լսելուն պէս Աւեռնոն (դժոխք) կիջնայ, ու զԱլկեստ իր փեսային կը դարձընէ:

Բ. Մեդէա. – Յասոնէն խոստացեր էր Մեդեայ զինքն իրեն հարմնայցնելու. բայց կորնԹոս քաղաքը հասնելով միտքը փոխեց, ու տեղւոյն Թագաւորին աղջկան առնելու եռևէ եղաւ. Մեդէա Յասոնէի ապերախտուԹեանը վրայ զայրանալով՝ միտքը դրաւ որ վրէժն առնէ իրմէն: Ուստի Յասոնէի աչքին առջևն սպաննեց անոր տարփածուն և որդիքը. և Թող չիտուաւ որ կարենայ անոնց պատշաճական յուղարկաւորուԹիւնն ընելու: Այս ողբերգուԹեան գլխաւոր յատկուԹիւններն են նիւԹոյն պարզուԹիւնը և մեծուԹիւնը, և բուռց ճիշդ նկարագրուԹիւնը [1]:

1 Մեդէայի վրայ շատ ողբերգուԹիւններ շարադրուած են Թէ յոյն և Թէ լատին, և մանաւանդ անգղիացի, գաղղիացի ու իտալացի բերողներէն: Մեր մէջ գտնուած պիտոյից ըստուած գրքին հեղինակը, որ ԹերԹաւ Մովսես խորենացին է, կամ անոր համանուան ուրիշ վարդապետ մը, սոյնպէս մէջ գտնուած անպէտուԹիւնները պա-

Generated on 2015-03-16 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

Գ. Հիպպոդիքէ պահել. – Փեգրա անունով կին մը՝ Ասղկան գրգռելուէն ամուսնական պարտուցը անհաւասարիմ գտնուելով յանցանքը միշտ աչքին առջև յուսահատ մահուամբ մը կը մեռնի: Ա՛ս ողբերգուհեան Հիպպոդիքէ պահելըսուելուն պատճառն ան կերևնայ որ առաջին տեսլեան մէջ Հիւպպոդիտոս՝ Ասղկան պատկ մը կընծայէ. Եւրիպիդես առաջ Հիպպոդիքէ ծածկեալ կոչեր էր, եաքը փոխեց ու այնպէս թաաեր վասյ հանդիսացընել տուաւ Պիրիկղեայ մահուանը տարին[1]:

Դ. Յոնէ. – Ամենացուց Երիքթէոս թագաւորին գուստրը կրեւսա՝ Ապողոնէն Յոնէ անունով զաւակ մը ունեցաւ, զոր եաքը Հերմէս Դելփիս տարաւ: Կսուսոս անունով մէկը կրեւսան իրեն հարսնացուց, և տալյ չգոնենալով Յոնէը որպեգրեց, որ իր կնկանը որդին էր. Թէպէտ ոչ ինքը և ոչ կրեւսան սա բանս գիտէին: Կրեւսա փեսային վասյ անհաւատարմութեան կասկած առնելով, կուզէր դեղել զՅոնէ. բայց պիւթեան հարցուկը մէկէն իմացուց Յոնէին ով և ուսկից ըլլալը:

Ե. Հեկաբէ. – Պողիքսենան Յոյնք Աքիլլեսի ըստուերացը զոհեցին. Հեկաբէ ալ անհնարին սգոյ մէջ ընկած Թէ գերուհեան և Թէ որդիքներէն զրկուելուն պատճառաւ, Պրիամու կրտսեր որդին Պողիւնեստորն առաւ: Ա՛ս է գլխաւոր նիւթը Հեկաբէի, Եւրիպիդեայ ողբերգութեանցը մէջ ամենէն սուելի պակասաւորը կը գտնէ:

1 Ասոր հետևելով ընած է Ռասին գաղղիացի ողբերգուն իր Փեգրա ողբերգութիւնը: Իսկ Սենեկայի ընտրած սուելի խեղճապատուհան մը կընայ սեպհիլ ան Թէ ողբերգութեան:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կաքեայ անուամբը Եւրիպիդէսի գրած ողբերգուԹեանը, որ Քերսոնեսոն Թրակիոյ մէջ կը ձևանայ [1]:

Զ. Հերակլէան.— ԵւրիսԹէոս Հերակլէսի որդիքը հալածեց. բայց Թեսեայ որդին Դեմոփոն՝ իրենց աեղի ապաստանի տուաւ ԱԹենքի մէջ, և միաբան քաջուԹեամբ ԵւրիսԹէոսն սպաննեցին:

Է. Անդրոմ.— Հերմիոն՝ Պիւռոսի հեռաւորուԹեան ատեն՝ զԱնդրոմաք և իրեն Մոլոս որդին մեռցնել ուղեց. բայց Պեղէոս Պիւռոսի պապը, Հերմիոնի և իր Մենելաւոս հօրը վայրագուԹենէն զնուենք ազատեց: Աւելի լաւ ու սրտաշարժ ոճով նոյն նիւԹը գաղղիական Թատերաց վրայ հանդիսացուց Ռասին:

Ը. Աղէս.— Թեբեկի պաշարման ատեն պատերազմի մէջ ընկած արգիացւոց զօրավարներուն կանայքը աղաչեցին Թեսէոսի որ Թեբացւոց ձեռքէն առնէ անոնց դիակներն և իրենց պարգևէ, որպէս զի կարենան յուղարկաւորուԹեան սովորական հանդէսը կատարել վրանին. Թեսէոս ալ մտիկ ըրաւ անոնց աղաչանքին ու խնդրուքնին կատարեց: Կըսեն Թէ մանաւոր դիտամբ չարադրած ըլլայ Եւրիպիդէս աս ողբերգուԹիւնը, որպէս զի արգիացիք լակեդեմոնացւոց դաշնակցուԹենէն ետ կենան. բայց վախճանին չհասաւ:

Թ. Տրոյ.— Տրոյիոյ պատերազմէն ետքը գերեաց բաժանման հանդէսն է, ուր Ագամեմնոն իրեն համար կասանդրէ օլիորդն ընտրեց, Պողիքսենան Աքիլլէսի ատուերացը զոհեցին, Անդրոմաքն ալ Նէոպտղոմէոսի ընկաւ, Հեկաբէ՝ Ոդիսեւսի: ՔերԹողին բուն նպատակն եղած է աս

1 Աւոր հեքնուԹեամբը ջարդուած են Ռասին իր Իփիգենիան, և ՎոլԹէռ Մերոպէն:

Generated on 2015-03-16 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

վերջի օրիորդ Թագուհւոյն վշաերը նկարագրել. բայց ողբերգութեան մէջ միութիւն գործոց չի. տեսնուելուն՝ լաւ յաջողած չէ :

Ա. Եւրիպ. — Եսքիղեայ Որեստէսն է և Սոփոկլի Եղեկտրան :

Ա. Հէդինէ. — Եգիպտոսի մէջ է տեսարանը, ուր Մենեղաւոս իր Հեղինէ կինը գտաւ Տրոյիոյ կործանմանէն ետքը, իր պարտուցը հաւատարիմ մնացած. որովհետև Պարիս ուզեր էր հեռը Իլիոն տանիլ ու ինքը չէր հաւանած :

Ա. Իֆիգենիա 'ի Տաւրիա. — Իփիգենէ, Ագամեմնոնի աղջիկը կը ճանչնայ իր Որեստ եղբայրն ու անոր բարեկամ Պիլադէսը, զորոնք իրեն բերեր էին քահանայութիւն՝ աստուածուհւոյն զոհելու. իսկ. քը մեկ կրնէ անոնց հետ ու Տաւրիայէն կը փախչին:

Ա. Որեստէս. — Տեսարանը Արգոսի մէջ կը ձևանայ Կլիտեմնեստրայի սպանութենէն եօթը օր ետքը, յորում ժողովուրդը կը գումարուի զՈրեստ ու իր քոյրը զԵղեկտրա դատելու. որոնք բոլոր իրենց յոյսը Մենեղաւոսի վրայ դրած էին : Բայց Մենեղաւոս ուզելով Ագամեմնոնի յաջողել, ձեռքի տակէն ժողովուրդը կը գրգռէր որ մայրասպանքը պատժուին. և ըրաւ ջըրաւ, անոնց մահուան վճիռը հանել տուաւ : Սակայն անոնք Պիլադեայ օգնութեամբը Մենեղաւոսի և իրեն կուսակցացը դէմ ելան ու վրէժը կուզէին խընդրել. ինչուան աստուածք մէջ մտան և սարիգեանց տանը և Արգոսի մէջ նորէն խաղաղութիւն հաստատեցին :

Ա. Փիւնիկուհիք. — Նոյն նիւթն է ինչ որ ողբերգած է Եսքիղէս իր եօթն Ռափսոդք ընդդէմ Թեբայ քերթուլեան մէջ : Իսկ աս անուամբ կոչուելուն պատճառն ան է որ պարերգուքը փիւնիկեցի կանայք ձևացած են :

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԱԵ. ՀԷրՈՒԼԷՈՍ ՄՆԷԳԻՆ. — Հերակլէս դժուխքէն դառնալէն ետքը Լիկոսէն յաղթուեցաւ, որն որ Թեբէի թագաւորութիւնը յափշտակեր էր։ Հետյա վայրենութիւն մը ձգեց Հերակլէսի վրայ, որով իր կինը և որդիքն սպաննեց. ետքը զգաստացնալով երբոր ըրած չարիքն ու անօրէնութիւննեըը տեսաւ, ուզեց ինքզինքն ալ զարնել սպաննել։ Վրայ հասաւ Թեսէոս, միխիթարեց զինքն ու Աթենք բերաւ, ուր իր ականջ յանցանքը քաւեց։

Եւրիպիդեայ մահուընէն ետքը (406) իրեն իրեք ողբերգութիւննեըն ալ ձեւացուցին, զորոնք Մակեդոնիա առանձնացած ժամանակը շարադրեր էր։ Ատոնցմէ մէկն որ Անդէն կըսուի, հիմա կորսուած է. իսկ մէկալ երկուքը դեռ կան, որոնցմէ առջինը Բագոսեանք կըսուի, և միւսը Իփիգենիա յԱւլիս։ Բագոսեանք կոչուած ողբերգութեան մէջ պենտէոսի սոսկալի մահը կըստորագրէ Եւրիպիդես, որն որ դէմ կեցեր էր և չէր ուզեր որ յունաստանի մէջ Բագոսի պաշտօնը մտնէ։ Իսկ Իփիգենիա յԱւլիս ըսուածը Իփիգենիայ զոհուիլն է, զորն որ Անահիտ մահուընէ խլըսեց՝ տեղը ուրիշ փրկանակ զոհ մը դնելով։

Եւրիպիդեայ անուամբը ԺԵ ողբերգութիւն կը յիշատակուի Հեսիոն ըսուածը, որուն պատմութիւնը Իլիականին տասներորդ գլուխն առնուած է։ Բայց քննիչներուն ոմանք Եւրիպիդեսի չեն համարիր աս ողբերգութիւնը։

ԵՒՒՊԻԴԵՅ ԱՃԸ. — Խորենացին այսպիսի խօսքերով զԵւրիպիդես կը գովաբանէ Պիտոյից գլուխին մէջ. "Որ զմեծ յաղթանակ գովութեանցն առեալ տանի Եւրիպիդես Ճանաչի ողբերգակ, զի գորովագոյն իմն և գեղեցկայարմար դիւցազնականն ողբերգութեամբքն ուրախացուցեալ զոգիս մտատուացն, անչինչ յիշատակաւ՝ի նոսին և ըզ-

Generated on 2015-03-16 09:17 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

խրատուցն արձանագրեալ, անմահարար եղիզ արժանի յիշելոյ արուեստս։ Որ մինչև ցայժմ ևս զարմանալի սորայս անցեալ կենցաղօտակարագոյն պատմի հմտութիւն ,, ։ Ուրիշ տեղ մըն ալ. ,, Ցոյժ գերազանցեալ քան զամենեսեան Եւրիպիդես ձանաչէր ողբերգակ, որ ընդվզեալ ուռձանայր առասպելապատում ճառիւքն գեր զբազումն ի հոյլս քերթողական պարուցն ,, ։ Ինչպէս մեր խորենացին, սասնկ ալ ուրիշ մը կ՚ըսէ և թէ նոր քննիչք զարմացած են Եւրիպիդեայ պարզ, նուագաւոր և ձոխ ոճոյն վրայ. որով ողբերգակ քերթողութեան գլխաւոր պարծանքներն մէկը սեպուած է արժանապէս։ Սակայն գլխաւոր թերութիւն մը ունի, որ և իցէ հասարակ բան մը երկարախօսութեամբ բացատրելը. և ասպատճառ է որ բանասէր քննիչներն ոմանք խիստ դատապարտեն կ՚ընեն վրան։

Շրկսել անուանի գերմանացին ,, Երբոր, կըսէ, Եւրիպիդեայ ողբերգութիւնները ձեռքս առնելու ըլլամ, և իրմէ առաջ եղած ողբերգակ քերթողաց հետ չբաղդատեմ, մեծ գովութեանց արժանաւոր բանաստեղծ մը զինքը կը սեպեմ։ Սակայն երբոր գպրութեանց պատմութեանը մէջ գրաւած տեղը նայիմ, և զԵւրիպիդես իրեն վարդապետացը (Եսքիղէսի և Սոփոկլէսի) հետ բաղդատեմ, հարկ կըլլայ որ լեզուս փոխելով դառն դատապարտութիւն մը ընեմ վրան ,, ։ Եւ յիրաւի քիչ մտեներակիր եղած է զորն որ Եւրիպիդեայ պէս կարենայք գովել ու միանգամայն վար զարնել. ոչ թովհետև Եւրիպիդես զարմանալի հանճարոյ տէր մարդ ըլլալով, հարուստ և աշխոյժ միտք մը ունէր. բայց իրեն գրութեանցը մէջ կը պակսէր անվեմ բացատրութեան կերպը և խոհական խմաստութիւնը, որոնցմով Եսքիղէս և Սոփոկլ ան-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 09:17 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մահացան։ Ողբերգութեան մէջ երևցած անձին
քը հարկ չէ որ մարդկային թերութիւններէ
վերծ ըլլան. բայց Եւրիպիդես, ինչպէս Արիստո-
ւել ալ կըսէ, շատ անգամ առանց պատճառի իր
ողբերգուածը թերութիւններ տալով չի թողներ
որ հանդիսակից կարեկցութիւն զգան, ինչպէս
է Արեւտեայ խաղին մէջ Մենելաոս։ Քննիչը կը-
ամէն թէ Եսքիղէս իր ողբերգութեանցը մէջ մար-
դուս բնաւորութիւնները իրմէն վեհ սեպեր է,
Սոփոկլ՝ թէ ինչպէս արժան է որ ըլլայ մարդ,
իսկ Եւրիպիդես թէ ինչպէս են։ Անոր համար
առջի երկուքը չանային որ կրքերէ մաքուր և վերծ
ձևացընեն զմարդ. Եւրիպիդես կրից բռնութիւնը
ձեռք առաւ իր խաղերուն քնականութիւն և ուժ
տալու համար. և ինչուան Թագաւոր մը իր ար-
քունական բարձրութենէն խոնարհեցընելով յու-
սահատ ու լրեն գերեզման փնտրտուլ ապաստի
կերպարանք առաւ իրեն։ — Եսքիղէս և Սոփոկլ
իրենց ողբերգութեան նպատակին փութով հասնե-
լու ջանք մը կը ցցընեն. ան պատճառաւ գործոլու-
թիւնները քիչ, խօսակցութիւնները ալ ընդհանրա-
պէս վճռական և կարճ կըլլան. իսկ Եւրիպիդես
բազմական խօսքեր ու վայելուչ հանգոյցներ յա-
ճախելովը՝ աւելի քնականութիւն մը կու տայ և
աւելի ազդու նկատակ կը գործածէ խօսելու։
կըսեն թէ ողբերգութիւնները շարադրելու շատ
կաշխատէր. և կը պատմեն թէ անգամ մը զուր-
ցած ըլլայ թէ իրեք տող յօրինելու համար՝ իրեք
օր աշխատեր է։ Անդրէն հեռակ քերթող մը
պատասխան տուաւ թէ "ես այնչափ աւետնուան
մէջ հարիւր տող կը շարադրեի"։ Եւրիպիդես
ալ դարձեր, "Այդ քու շարադրած հարիւր տող
ոտանաւորդ ալ՝ իրեք օրուընէ աւելի կեանք չեր
ունենար" զուրցեր է։

Generated on 2015-03-16 09:18 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ԳԼՈՒԽ ԺԹ.

ՈՂԲԵՐԳՈՒԹԵՒՆ ԻՑՆԱԿԸ

Քրիսպոսէ առաջ՝ եւ դարուն մէջ երեցած ողբերգակ Եւրիպիդէս.— Դ դարուն ողբերգակ բանաստեղծները:

Քրիսպոսէ առաջ եւ դարուն մէջ երեցած ողբերգակ Եւրիպիդէս.— Եսքիղեայ ԹատերգուԹեան կարգ և կանոն տալէն ինչուան Եւրիպիդեայ մահը 100 տարուան միջոց էր. հաւանական կերևնայ Թէ ողբերգակ քերԹողք միայն մեր Ճանչցած իրեք անուանի բանաստեղծներն եղած պիտի չըլլան, հապա շատերն անոնց փառքը և գովեստը տեսնելով ու լսելով նախանձորդ երևցած են անշուշտ իրենց գրուածներովը, որպէս զի փառացն ալ հաղորդին: Բայց ասոնց չէ Թէ միայն գրուածները կորսուած, հապա նաև անուններին ալ անհետացած է. միայն Յոնէն ու Աքէոս երկու ողբերգակ քերԹողն անուն կը յիշատակեն Արիստարքոս և Արիստոփան բիւզանդացի, որոնց համար կըսեն Թէ շատ անգամ Սոփոկլէ և Եւրիպիդեայ հետ մրցանաց ելած ըլլան: Բայց ասոնց ալ գրուածքը չերևնար:

Յոնէն գիոսացի էր, սակայն իր կեանքը գրեԹէ բոլորովին ԱԹենքի մէջ անցուց: Իր ողբերգուԹեանց նիւԹերն ընդհանրապէս Հոմերոսի գլքերէն առնուած են, զոր ան իրեն քաղաքացի կը համարէր. սակայն ինչպէս որ կերևնայ, իր ողբերգուԹիւններըը ուժ և կորով չունէին: Բայց՝ ի ողբերգուԹիւններէն, եղերերգակ և քնարա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 09:18 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կան քերթուածիւնները ալ շարադրած էր Ցոփը, ինչուան պատմութեան գիրք մըն ալ արձակ յունական բարբառով, որուն մէջ իրեն ժամանակակից անուանի մարդկանց վարքը գրեր էր, կըսեն։

Աքէոս եւրետրացի՝ մեկ անգամ մը միայն յաղթող ելեւցաւ մրցանաց մէջ. բայց ողբերգուածիւնները աւելի երգիծաբան քերթուածեանց մէջ (drame satirique) անուանի էր կըսեն։ Ա՛ս երգիծաբանութիւնքը ողբերգութեան մասն կամ վերջաբան կը սեպուէին, առջիններուն ժոլովրդեան սրտին վրայ ըրած տխուր ազդեցութիւնը ծիծաղաշարժ խօսքերով փարատելու համար հնարուած։

Ասոնցմէ զատ կը յիշատակուին

Ագաթոն աթենացի, որ Սոկրատայ և Եւրիպիդեայ բարեկամ, և ողբերգակ քերթողութեան եռևէ եղած էր։ — Նեսփորոն սիկիոնացի, որուն համար կասանդեն թէ Մէդէա անունով ողբերգութիւն մը շարադրած ըլլայ, և թէ անով Եւրիպիդեայ հաւասարապատիւ սեպուեցաւ։ — Կարկինոս և իր որդիքը, զորոնք Արիստոփան իր կատակերգութեանցը մէջ կը ծաղրէ։ — Կրիտիաս, որ երասն բռնաւորաց մէկն էր։ — Եւէցն Դիոնեսիոս, որ բանաստեղծութեան սիրող էր, անգամ մըն ալ աթենացւոյմէ մրցանակ ընդունեցաւ իր չինած ողբերգութեանը համար, որ Ա. քիլլէսի վայրենութեանը և Հեկտորի մարմինը Տրոյեոյ չորս կողմը քաշկռտուելուն պատմութիւնն էր։ — Եւփորիոն և Բիոն, Եաքիղեայ որդիքը, Փիլոկլէս՝ իրեն եղբօրորդին, Մորսիմոս՝ Փիլոկլեայ որդին, Աստիդամաս՝ Մորսիմեայ որդին. Ցոփոն և Արիստոն Սոփոկլի որդիքը, և Արիստոնի որդին կրտսերն Սոփոկլ, ու Եւրիպիդես կրտսերն՝ որ Եւրիպիդեայ եղբօրորդւոյն տղան էր։ Ժամանա-

Generated on 2015-03-16 09:18 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

կակից մարդիկ կերևնայ թէ քիչ շատ ձանչցեր են անոնց քերթուածեան արդիւնքը. վասն զի սոսնկ- մէ շատերը զանազան անգամ պատկուած, և երբեմն իրենք նախընթաց անմահական յիշատակ ունեցող քերթողաց ձեռքէն ալ մրցանակը յա- փըշատակեր են: Ափսոս որ և ոչ մէկուն գրուած- քը ձեռնըմխիս հասեր է:

Դ դարուն ողբերգակ բանաստեղծները. — Արիս- տոտէլ կըսէ թէ չորրորդ դարուն առջի տարինե- ները կը ծաղկէր Քերեմոն, որ Թատերական քեր- թուածոց մէջ նորոգութիւններ մուծեր էր: Եւ թէպէտ ինքը քիչ շատ գովուածեամբ կը յի- շատակէ սա քերթողը, բայց ուրիշ քննադատք գովեսի արժանաւոր բան մը չկրնանըլնէն զատ՝ մեծ թերութիւններ ալ կը յիշատակեն վրան:

Անկէ ետքը կրնայ ըսուիլ թէ ողբերգութեան արուեստը բոլորովին ընկաւ, և թէպէտ ամէն տա- րի քերթողական արարուածներ կը պատկուէին, բայց անով ալ կիմացուէր թէ ժողովրդեան կիրթ ախորժակը պակսելու վրայ էր, որ այնպիսի քեր- թուածներ՝ պատկաց արժանաւոր կը սեպէր: Քերեմոնէն ետքը երևցաւ Թէոդեկտոս, որ չոր- րորդ դարուն ու կիսուն կը ծաղկէր. սորա քեր- թուածներն ալ աւելի վարդապետական բանաս- տեղծութիւնք կրնան սեպուիլ, որոնց մէջ դե- րասանք կելլեն բարոյական նիւթոց վրայ իրարու հետ կը խօսին:

Այսպիսի կերպերով ողբերգութեան վախճա- նը հասաւ, և չկրցաւ նորէն կենդանանալ. և թէպէտ աղեքսանդրեան ըսուած դարուն մէջ ո- մանք եռանդ եղան, բայց փուճ տեղը աշխատել- նուն վկայ կեցած են իրենց գրուածքը: — Սա- կայն Թատերական քերթուածոց հանճարը չկորսընցուցին Յոյնք, և ողբերգութեան աւե- րակներէն կատակերգութիւնն երևցաւ:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 09:19 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԼՈՒԽ Ի.

ՀԻՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

Կատակերգութեան սկզբնաւորութիւնը. — Սոսարիան. — Արիստոփան. — Կատակերգութիւնները:

Արիստոտէլ կըսէ թէ ողբերգութեան առաջին հնարողներուն և ծաղկեցընողներուն անունը կը գանուի, բայց ոչ նոյնպէս և կատակերգութեան, որովհետև առջի բերան աթենացիք ասոնց տեսակ քերթուածին մեծ բանի տեղ չէին սեպած: Բայց երբոր սկսաւ ձև և կերպարանք առնել, ան ատեն անոր եռւէն ընկնող անձանց անուններն ալ սկսան հռչակուիլ: Ուստի չի գիտցուիր թէ ով եղաւ հնարողը որ նախերգանքը (prologue) զուրցող դերասանը՝ դիմակով երեսը ծածկէ, և կամ ով անոնց թիւը շատցուց: Ա յայտնի է որ Եպիքարմոս և Փորմիս սիկիլեացիք կատակերգակ ատենդաբանութիւնը հնարեցին (fable comique.) Աթէնքի մէջ ալ կրատէս սահմանեց որ կատակերգակ քերթուածներուն մէջ ուրիշի պատուոյն դպչող կամ նախատալից խօսք չիզրցուի:

Սողոնի և Թեսպիսի ատեն հնարուած էր կատակերգութիւնը: Որ և իցէ ողբերգութեան մէջ երբոր դերասանը կը լռէր կամ արարուած մը կը լմընար, որպէս զի ողբերգութեան՝ հանդիսականաց սրտին վրայ ըրած տխուր ազդեցութեան դարման մը ըլլուի, այծամարդիկ թատեր վրայ կը հանէին և ողբերգութեանց մէջի անձինքը ա-

Generated on 2015-03-16 09:19 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

նոյց հետ զաւեշտական և զուարճալի խօսքերով կըզբօսնուին ու կըզբօսեցընէին ժողովուրդը : Ա-հա աս կերպով ակսած է կատակերգութիւնը (comédie), որուն վախճանը ողբերգութենէն քո-ղորովին տարբեր է . վասն զի ողբերգութիւնը մարդուս կրքերը արթընցընելու և սիրտը շարժելու համար հնարուած է, իսկ կատակերգութիւնը պարզ զուարճացընելու պատճառաւ :

Սոսարէոն . — Աթինկեցի էր Սուսարիոն, թեսպիսի ժամանակակից : Կըսեն թէ ինքը հնարած ըլլայ ան կառաց գործածութեան սովորութիւնը, որուն նախկին հնարիչ ոմանք զնոյն ինքն Թեսպիս կը համարին : Առաջ կատակերգութեց հանդէսները Աթինկէի գեղերուն մէջ կըլլային իբրև գիւղականաց անկիրթ բարուցը յարմար զըւարճութիւնք . բայց Աթենքի մէջ սովորութիւն չկար . և թէպէտ երբեմն կատակագուսանք կը համարձակէին քաղքէն ներս ալ մտնել, բայց պետութիւնը կամ բոլորովին կարգելէր, և կամ մանաւոր թոյլտուութիւն կուտար : Աւանկ եր-կար ատեն անծանօթ և գրեթէ իր ազգութեան վիճակին մէջ մնալով յանկարծ Սիկիլիոյ մէջ պայ-ծառանալ սկսաւ, ուր առաջ գալով ձև և կեր-պարանք առաւ և ժողովրդեան զուարճութեանը գլխաւոր առիթ մը սեպուեցաւ : Թէպէտ ժողո-վըրդեան զբօսանացը համար հնարեցաւ կատակ-երգութիւնը, սակայն ատեն անցնելով քեր-թողներէն շատը իրենց չարութեանը և կրից պատ-րուակ առին ան արուեստը՝ բարի և ժողովրդեան համարմանը արժանաւոր մարդիկը վար զարնե-լու . և ինչուան ան աստիճանի լրբութեան հա-սան, որ սկսան աստուածներն ալ թշնամանել ու արհամարհել : Ան պատճառաւ Պերիկղէս արգի-լեց կատակերգակ քերթուածները . բայց քո-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 09:19 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

լորովին խափանելն անկարելի եղաւ : Կառավարգական քերթողաց իշխան և գլխաւոր կը սեպուի Արիստոփանէս :

Արիստոփանէս ով էր կարծես. — Արիստոփանեայ ծնունդեան և մահուան տարին ուրոշ չի գիտցուիր . սա յայտնի է որ Աթենքի քաղաքացի սեպուած էր , ու 146 ողիմպիադին կապրէր , որ է ըսել 386 տարի Քրիստոսէ առաջ : Կատանգեն Թէ չիտունը. չորս կատակերգուԹիւն շարադրած ըլլայ . բայց տասնըմէկը միայն մեր ձեռքը հասած են , որոնք բուն սկզբնագիր ալ չեն երևնար . վասն զի Արիստոփան անունցմէ մէկքանին նորէն աչքէ անցուց , մէկալներուն ալ իրեն որդիքը Արատոս , փիլոտեր և Նիկոստրատոս նոր կերպարանք մը տուին :

Արիստոփանեայ կատակերգակ քերԹուԹիւնները են

ա . Ակառնանացիք . — Որ Քրիստոսէ 426 տարի առաջ ձևացընել տուաւ , ուԹտունըուԹը ողիմպիադին երրորդ տարին : Արիստոփանեայ վախճանն ըլլալով աԹենացիքը լակեդեմոնացւոց հետ հաշտեցընել , աղուոր յղլաբանուԹեամբ մը կը ցցընէ Թէ ինչպէս ընտրելի է խաղաղուԹիւնը քան զպատերազմ :

բ . Հեծեծք (424) . — Որ Ակառնանեանք ըստուած կատակերգուԹենէն տարի մը ետքը հանդիսացընել տուաւ : Աթենացիք Սիսակտերի երկայն պաշարմանէն ձանձրացած՝ կղէոն անունով անկարող և խառավարայ մարդը իրենց գլուխ դրին : Արիստոփան աս կատակերգուԹեամբ ուզեց զինքը ժողովրդեան արհամարհելի ցցընել և իր պակասուԹիւնները յայտնել : Բայց անանկ խիստ ոճով ծաղր կընէր զկղէոն և իրեն կաբասակիցքը , որ դերասաններէն մէկը չհամարձակեցաւ գլխաւոր մասը հանդիսացընել . ուստի հարկ եղաւ որ ինքն

Generated on 2015-03-16 09:19 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

Արիստոփանէս նոյն դիմակն առնէ և Թատեր վայ ելլէ [1]։

Գ. Ամպ. (423). — Ա կատակերգութեամբ իմաստակները կը ծաղրէ Արիստոփան, որոնք ան առեն իմաստասիրի անուամբ Աթենքի մէջ սկսեր էին բազմանալ, և ապականութիւն էին ամենուն։ Ասոնց հետ սեպած է նաև զՍոկրատ, որուն հետ կերևնայ թէ անձնական ընդդիմութիւն ունեցած ըլլայ Արիստոփանէս։ Կը պատմեն թէ երբոր կատակերգութեան հանդէսը լմընցաւ, և Սոկրատայ աշակերտներն իրենց վարդապետին դէմ եղած նախատանացը վրէժխնդրութիւն կուզէին ընել, իմաստասէրը զանոնք խաղաղցուց. "Քերթողին նկարագրածին համեմատ ախտաւոր և մոլի կըլլայի, ըսաւ, թէ որ ինքզինքս կրթելու փոյթ չունենայի։

Դ. Պիծակ. (422). — Երգիծանութիւն մըն է ընդդէմ կաշառակուրծ դատաւորաց։

Ե. Խաղաղութիւն (421). — Ականատեսներ ըսուած կատակերգութեան մէկ մասը կրնայ սեպուիլ ասիկայ. որուն մէջ կը ձևացընէ թէ Աթէնք և Լակեդեմոն իրարու հետ հաշտուած՝ կուզեն ուրիշ քաղաքներն ալ հաշտութեան յորդորել։

Զ. Թռչուն. (414). — Որ սիկիլեան պատերազմէն տարի մը առաջ հանդիսացընել տուաւ Արիստոփանէս։ Երկու աթենացիք իրենց քաղքին մէջ եղած երկպառակութիւններէն ձանձրացած կուզեն Թռչնոց աշխարհքն երթալ, որպէս զի իրենց համար քաղաք մը շինեն տան։ Կերևնայ թէ Արիստոփան սա կատակերգութեան յորդորել ուզած է զաթենացիս որ Սիկիլիոյ վայ արշաւանք

1 Ասոր հնախոսութեամբ ըսրապրած է Մուլիէռ գաղղիոյին իր Բժիշկ բռնի ըսուած կոպակերգութիւնը։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 09:20 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ընելու խորհրդէն ետ կենան։ Արիստոփանեայ ամենէն ընտիր երկասիրութիւնը կը սեպուի ասիկայ։

Է. Թէոմոթոբեան կամ կանայք հանդիսապիրք փոխիլ Դեմեթրեայ.— Աթենացի կանայք զայրացած Եւրիպիդէսի իրենց դէմ զուրցած նախատանացը համար, մտքերնին կը դնեն իրմէն վրէժ խնդրել Դեմետրեայ տօնին օրը։ Եւրիպիդես շատ չանք կրնէ անոնց ձեռքէն խալըսելու, բայց չկրնալով հարկ կըլլայ որ վերջապէս նեղուածն խնդրէ սրտերնին առնէ։

Ը. Լիսիսթրատէ.— Աթենուհիք մէջերնին խօսք կը դնեն ստիպելու զաթենացիս որ լակեդեմոնացւոց հետ հաշտութիւն ընեն. և կերդնուն որ ինչուան աս բանս չորոշուի՝ ամէն զրկանք յանձն առնեն. և Լիսիսթրատէ՝ աթենացւոց գլխաւորներուն մէկուն կինը կը համոզէ քաղքին ամէն կանայքը որ իրենց փեսաներէն բաժնուին, ինչուան որ խաղաղութիւն ըլլայ։

Թ. Գորգ (405).— Ան կատակերգութիւնը Թէպէս Պղատոն և փրինիկոս ալ չարադրեցին, բայց յաղթութեան մրցանակն Արիստոփանէս առաւ։ Եւ այնչափ հաճոյ եղաւ ժողովրդեան որ ստիպեցին զքերթողը երկրորդ անգամ ալ հանդիսացընել տալու։ Ատոր մէջ ողբերգութենէ եռևէ եղող բանաստեղծները կը ծաղրէ Արիստոփան, և առաւելապէս զԵւրիպիդէս որ ան ատենները մեռնելու վրայ էր. կը ձևացընէ թէ ինչպէս Բագոս՝ Սոխքա գետէն անդին կանցնի Եսքիլէսը փնտրտելու՝ Եւրիպիդեսէն վեր դասելով զինքը։

Ժ. Ժողովակ կանանց (388).— Ատով ալ Պղատոնի հասարակապետութեան օրէնքները կը ծաղրէ, որն որ Լիկուրգոսի սահմանածէն աւելի ճշդութեան եռևէ ըլլալով՝ ամէն բանի մէջ հաւասարութիւն կուզէր մտցընել։

Generated on 2015-03-16 09:20 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ԺԲ. Պղուտոս. – Աթենացւոյն մէկը ձամբան կոյր մարդու մը հանդիպելով՝ կառնէ քովը կը պահպանէ. և աս կոյրն է Պղուտոս՝ ճոխութեան առասուածը։ Ակզեպեայ առձարին մէջ պառկելով իր աչքին կուրութիւնը կանցնի, և Ողիմպոսի մէջ տեղ կունենայ։ Աւով արհամարհել ուզած է Արիստոփանէս իր հայրենակցաց ընչաքաղց ագահութիւնը։

Արիստոփանեայ ոճը. – Արիստոփանեայ ոճոյն վրայ քննիչք խօսելով, վար կը զարնեն անոր չափազանց համարձակախօս լեզուն, որով շատ անգամ բարեաց պատճառ ըլլալու տեղ՝ մեծամեծ վնասներ ծագած են թէ ժողովրդեան բարուց աւրուելովը և թէ առաքինի մարդիկ ծաղր ընելուն համար. որպէս զի աթենացիք անոնց ուղղութեանը ոչ միայն չհետևին, հապա նաև արհամարհեն ալ։ Աւիկայ արժանապէս մեծ պակասութիւն մը սեպուած է քերթողին և իրեն հանճարոյն նախատինք. միայն անով կրնայ քիչ մը արդարանալ՝ որ ժամանակի ազատութեան գըլխաւոր մասն սեպուած ըլլալով աս բանս, նոյն համարձակութիւնը կը գործածէր Արիստոփանէս աթենացւոց սխտեղն ալ դատուելու, և անոնց փոփոխական յեղամտութիւնը ցցընելու։ Իրաւամբք զուրցած են բանասէրք թէ Արիստոփանեայ քերթուածոց յարդը իմանալու համար կամ՝ ան առեներուան աթենացւոց մէջ եղած զեղծմունքներն և սովորութիւններն ալէկ գիտնալու է, և կամ աթենացի մը ըլլալու. վասն զի կատակերգութեան գլխաւոր վախճանն ըլլալով ժամանակացց թերութիւնները չակել՝ աս սեռակ քերթուածոց ուժն ու զօրութիւնը հասկընալու և զուարճանալու համար՝ ժամանակակից մարդ ըլլալու է։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 09:20 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Արիստոփանէս ժամանակակից ուրիշ կոմպէրգակ
ֆէրնաղներէ. — Արիստոփան իր հանճարոյն և քեր-
թողական ոգւոյն շատ նախանձորդներ ունեցաւ.
սոնց մէջ կը յիշեն նախնիք բաց ի կրատինոսէն
և Եւպոլիսէն նաև զՓրինիքոս կատակերգակ,
Մագնէս, Հերմիպպոս, Ամիպսիաս և ուրիշնե-
րը, որոնք երբեմն Արիստոփանեայ մրցանակին ալ
յափշտակեցին, թէպէտև ընդհանրապէս իրմէն
շատ վար տեսուած են: Ոմանք սոնց կարգը կը
տեսեն նաև զՊղատոն և զՓերեկրատես: Բայց գըլ-
խաւոր կատակերգակ քերթողք համարուած են
կրատինոս, Եւպոլիս և Արիստոփան:

Ամենացաւոց ընտրելագոյն և քաղաքակիրթ
մասը թէպէտև շատ ջանք ըրաւ կատակերգակ
քերթողաց համարձակախօսութեամբն առաջ ե-
կած վնասուցը գարման մը ընել, բայց ձար չե-
ղաւ լինչուան ամկավար տէրութեան վերցուի-
լը: Լամակոս, երեսուն յոռնաւորաց մէկը, Քրիս-
տոսէ 404 տարի առաջ արգիլեց որ կենդանի
մարդկանց անունը ամենևին նախատանօք չեխ-
շուի կատակերգութեանց մէջ. և անով նոր դա-
րագլուխ մը սկսուեցաւ յունական թատերաց,
դէյն ըսուած կատակերգութեամբ, որ լինչուան
Մենանդրի ժամանակը տևեց: Ասոր վրայ եօթը
առանձին պիտի խօսինք:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 09:21 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԼՈՒԽ ԻԱ.

ՊԵՐԻԿԼԷՍԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՔԵՐԹՈՂՔ

Պանիասխ. — Քէրիւս սոմոսոյի. — Կրիպիա։

Պանիասխ. — Թէպէտև Պերիկղեայ ատենը Թատերական քերթուածքը շատ առաջ գնացած էին, և ամէնքը ան տեսակ բանաստեղծութեան եռևէ կըլլային, սակայն եղան և ոմանք ալ հին քերթուածեց հետևողք։ Անոնց մէջ գլխաւոր կը սեպուի Պանիասխս սամեցի (կամ ալիկառնացի) Հերոդոտեայ հօրեղբայրը, որ Հերակլէան ըսուած դիւցազնական քերթուածին մը շարադրած է Հերակլէսի վրայ։ Հինները կը հաստատեն Թէ սա Թեքասի դիւցազնին վրայ շարադրած ամէն քերթողութիւններէն աւելի ընտիրը կը սեպուի Պանիասխեայ երկասիրութիւնը, Թէպէտև իրեն Թերութիւններն ալ ունէր։

Քէրիւս սոմոսոյի. — Համանուն ողբերգակ քերթողէն զատ է ասիկայ, որ վիպասանական քերթուածեանց եռևէ եղած է։ Իր քերթուածեանց գլխաւոր նպատակն էր ստորագրել մարդական երկրորդ պատերազմը։ Մակեդոնացւոց Արքեղայոս Թագաւորը՝ քերթողին ծերութեան ժամանակ իր արքունիքը կանչեց, և կաւանգեն Թէ օրը 4 ճնաս (360 ֆռանք) իրեն հաստատ կապեց։ Աթենացիք ալ զմայլելով իրեն պոէտական ըսուած քերթուածեան գեղեցկութեանը վրայ, պատուիրեցին որ համաթենական ոճնից ատեն՝ բոլոր ժողովրդեան առջևը կարդացուի ամէն տարի. և ա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 09:21 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մեն մեկ տողին համար մեյմեկ ոսկի դահեկան հե-
ղինակին պարգևեցին :

Անփմփոս կլոթոսոյէ. — Որ ընդհանրապէս կո-
ղոփանեցի կըսուի, զոր ոմանք դիւցազներգակ
քերթողաց մէջ հռոմերոսէն ետքը առաջին կը սե-
պէին, որ երկու քերթուղիւնք չարադրած է
Լիւտիան և Թէբայիան ըսուած. և յիրաւի հոմէրո-
սի հետևուելեամբ շիներ է, բայց ոչ անոր ուժը
և ոչ իմաստից փափկուելիւնն ունենալուն կը վը-
կայէ Կուինտիլիանոս :

Կրիփոս. — Աթենքի երսուն բռնաւորաց մէկն
էր Կրիտիաս, և իրեն քերթողական հանճարովը
հռչակուած : Ներերգակ քերթողուելեան քա-
նի մը հատուածներուէն, և մանաւանդ անկէ ուր
ապարտացւոց քաջուելիւնը կը գրուատէ՝ յայտնի
կերևնայ իր մուսան արգասաւորուելիւնը. բայց
պակասուելիւններէ ալ ազատ չէ : Սակայն թէ
Կրիտեայ և թէ իրեն ժամանակակից ուրիշ քեր-
թողաց թերուելիւններուն գլխաւոր պատճառն
ան է որ իրենց առեղն եղած իրիք մեծանուն ող-
քերգակ բանաստեղծներուն կը համեմատեն բա-
նասէրք, որով և իրաւամբք այնպիսի կարգէ դուրս
տաղանդաւոր մարդկանց քով՝ աննշան հանճար-
ներ կերևնան ատոնք :

Generated on 2015-03-16 09:21 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ԳԼՈՒԽ ԻԲ.

ԹՈՒԿԻԴԻԴԷՍ

Թուկիդիդէսի վարքը. — Պատմագրութիւնը. — Ոճը. — Իրեն Բարոյականը:

Երբոր Պրիատոփանէս և իրեն նախանձորդները պեղոպոնեսեան պատերազմին պատճառած սոսկալի աղետաբեր ձգնաժամերն ստորագրելով ժողովուրդն զգուշացընել կուզէին պատերազմներէ և խաղաղութեան յորդորել, Աղերոսի որդին Թուկիդիդէս երևցաւ, բոլորովին տարբեր հանճարոյ մարդ մը, որ հայրենեացը անմահանալուն, իրեն ալ անկասելի փառք ժառանգելու պատճառ ալիսի ըլլար:

Թուկիդիդէս Ատտիկէի Ալիմոնի քաղաքը ծնաւ Քրիստոսէ 471 տարի առաջ. Ալթենքի հարուստ և ընտիր ազգատոհմի զաւակ. վասն զի հայրը Թրակացւոց Թագաւորի մը ցեղէն առաջ կուգար, մայրն ալ Միլտիադեայ կրտսեր աղջիկն էր, և կամ ինչպէս ուրիշները կը համարին, Պիսիստրատեայ տոհմէն էր: Կը պատմեն թէ անգամ մը Հերոդոտոս իր պատմութեան գիրքը լացուցած ըլլալով Ալթենքի ժողովրդեան առջև համաթենական ոնկից մէջ կը կարդար, ունկնդրաց հետ էր նաև Թուկիդիդէս պատանին, որ անաւետը դեռ հնգետասանամեայ էր: Հերոդոտեայ հանճարը և ժողովրդեան իրեն ցցուցած համարումը այնչափ սիրտը շարժեցին որ սկսաւ բարձրաձայնել: Հերոդոտոս երբոր պատճառն իմացաւ,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 09:22 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

եւսեբ համբուրեց տղան և երանի տուաւ անոր հօրը որ այսպիսի որդի մը ունեցեր է։ Ատեն անց-նելէն ետքը երբոր հասակն առաւ Թուկիդիդես, սկսաւ իր պատմութեան գրոցը նիւթեր ժողվել, ազդիս անդին և աւելի յունաստանի գաւառները պտըտելով։

Պելոպոնեսական պատերազմին առջի տարի-ները զինուորական պաշտօններ ալ ունեցաւ Թու-կիդիդես, և ընդհանրապէս գովութեան արժա-նաւոր կը սեպուէր. բայց 424ին Ամփիպոլիս քա-ղաքը կորսընցընելով՝ աթենացիք վրան դատաս-տան բացին, ու Թուկիդիդես մեկ քաղաքն աքսորեցին զինքը։ Հոն քսան տարի աքսորանաց մէջ կեցաւ Թուկիդիդես, և իր հանճարովը միայն կը մխի-թարուէր. վասն զի ան առեն սկսաւ գրել իր պատմութեան գիրքը, որն որ իրաւամբք յունա-կան դպրութեանց մէջ մեծ փառաց արժանացած և պատմագրաց հեւսողութեան միակ գաղափար սեպուած է։ Քսան տարուընէ ետքը երբոր պե-ղոպոնեսական պատերազմը լմընցաւ, Թուկիդիդէսն ալ ետ կանչեցին աթենացիք. բայց չի գիտցուիր թէ դարձաւ թէ չէ. վասն զի ոմանք կըսեն թէ թրակիայէն հեռանալ չուզեց և հոն մեռաւ 76 տարուան. ուրիշներն ալ թէ Աղբե-ղայոս թագաւորին արքունիքը քաշուեցաւ։

Թուկիդիդեայ գիրքը անկատար մնացած է և չէ կրցած լմընցընել։ Իր առեղը յունաստան ա-սիական ուրիշ ազգաց յաղթական երևնալովը՝ ինքը մեծցեր և օտարաց սրտին մէջ ալ իրաւացի երկիւղ մը ձգեր էր։ Սակայն ներքին անմիաբա-նութիւն մը արտաքին թշնամեացմէ աւելի երկիւ-ղալի էր. վասն զի յունաստանի մէջ ան առեղը երկու նախանձընդդէմ հասարակապետութիւն կային՝ Աթէնք և Սպարտա, և ասոնք երկիրներուն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 09:22 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ժողովուրդը մեկմեկու բոլորովին հակառակ քնա-
ւորութեանց տէր անգադար իրարու հետ պատե-
րազմի մէջ էին : Մեծցաւ ան ատելութիւնը և պե-
ղոպոնեսական պատերազմը բացուեցաւ : Այս-
պիսի թշուառ և աղետաբեր կռուի մը արժա-
նաւոր պատմագիրը եղած է Թուկիդիդես : Նախ
ինքն ալ պատերազմի մէջ մնաւ , ինչպէս ըսինք ,
յաղթուեցաւ ու աքսորուեցաւ . և որովհետև
յանիրաւի կը սեպէր ան տարագրութիւնը , սա-
կայն անով ալ վեհանձնական մտաւցութեամբ
ուրիշներուն իրեն դէմ անիրաւութիւնը բանի
տեղ չսեպեց . ամէն բանէ աւելի նախադաս սե-
պելով արդարութիւնն և հայրենեաց սէրը : Բայց
ան աքսորանաց տեղը ուսմանց հանդիսարան ե-
ղաւ իրեն և հետաքննութեան առանձնավայր մը
քննելու և սորվելու և ատուգութեամբ գրելու
համար :

Թուկիդիդեայ ոճը . — Ջօրաւոր , համառօտ և
ատաղնեան վայելուչ լեզու և գրիչ մը ունի Թու-
կիդիդես , տեղ տեղ ալ մութ և դժուարիմանա-
լի : Անանկ որ իրեն և Հերոդոտեայ ոճը թէ որ
բաղդատելու ըլլանք , զարմանքով կը տեսնենք թէ
ինչպէս երկու պատմագիրք գրեթէ իրարու ժա-
մանակակից այնպիսի տարբեր լեզու մը կրցեր են
բանեցընել պատմագրութեան մէջ : Ատոր գլխա-
ւոր պատճառն ան կրնայ սեպուիլ որ Թուկիդի-
դես իմաստասիրութեան ալ հետևէ ընկած և Ա-
նաքսագորայ աշկերտն էր . անոր համար է որ ամ-
փոփ ոճ մը ունի և փիլիսոփայական ծանրութիւն
կը տեսնուի իր պատմագրութեան կերպին և ա-
նոր մէջ գտնուած տեսնախօսութեանցը մէջ , ո-
րոնք պատմագրին աշխոյժ մտացը և ճարտասան
լեզուին նկարագիրը կրնան սեպուիլ . որով և ի-
րաւամբք զուրցուած է թէ Դեմոսթենեայ ա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 09:28 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ռաչնորդ մը եղած է Թուկիդիդէս. վասն զի ինքն իսկ Դեմոսթենէս տասն անգամ օրինակեր էր առեր պատմութեան գիրքը, և կը զարմանար ոճին քաղցրութեանը և ուժին վրայ: Հռովմէական գարուն պարծանք երկու անուանի պատմագիրք ալ, Սալուստիոս և Տակիտոս, Թուկիդիդեայ հետևած են պատմագրութեան ոճին մէջ. Տակիտոս անոր ամփոփ և յաուսակ ոճը իրեն օրինակ առաւ, իսկ Սալուստիոս ինչուան զուրցուածքի կերպերն և ոճերը: — Անուանի է Թուկիդիդեայ Ե գրոցը մէջ Ալեքնքի ժանուամամին նկարագրութիւնը, որուն հետևած են Լուկրետիոս և Վիրգիլիոս:

Բարոյականը. — Թուկիդիդէս մարդկային կենաց վրայ մեծ մտադրութիւն ըրած ըլլալով, իր պատմութեան գիրքը միանգամայն բարոյականի մըն ալ վարդապետութիւն ըրած է. վասն զի մարդուս սրտին փափաքները և յօժարութիւնները անանկ ճշդիւ և լաւ ստորագրած է, նմանապէս իրեն ոգւոյն մեծութիւնը և սրտին ազնուականութիւնը, որ Թուկիդիդեայ նկարագրած պատկառելու բայց առաքինասէր անձը կրնայ համարձակութեամբ և առանց ամչնալու խոստովանիլ ուրիշ քերթողի մը խօսքովը թէ "Մարդ եմ, և զմարդկայինս չինեն ոչ օտար համարիմ": Այսպիսի առաքինական սկզբունքներ կը տեսնուին հեղհեղուս պատմագրին խօսքերուն մէջ, որ ինչուան իր թշնամեացը և սքսորանաց պատճառ եղողներուն վրայ ոչ երբեք վրէժխնդիր ոգւով կը խօսի, գիտնալով որ խօսքերնէն աւելի՝ կրնայ իր արդարութիւնը ցցընել արտովը: Այսպիսի պատմագիրք ոչ միայն իրենց ազգին, հապա ընդհանուր մարդկութեան պարծանք ըլլալով, արժան էր որ ամէն լեզուի թարգմանուէին և ամէն մարդու հետ խօսէին:

Generated on 2015-03-16 09:28 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ԴԼՈՒԽ ԻԳ.

ՓԱՂԱՓԱԿԱՆ ՆԱԽՆԻ ՃՌՐՏԱՐԽՕՍՈՒԹԻՒՆ

Թէոփոլէս. — Արխոփէս. — Պերինէս։

Պատմագիրք և բանասէրք կըսեն թէ Ճարտարախօսութեան արուեստին առաջին հանճարողքն եղաւ Սիկիլիա, և հայր Ճարտարախօսաց կոչեցաւ Գորգիաս անունով սիկիլեացի մըն ալ Աստիկէ բերաւ նոյն արուեստը Քրիստոսէ 440 տարի առաջ. և իրեն ու աշակերտացը ջանքովը քիչ առեն ան մէջ շատ առաջ գնաց ու ծաղկեցաւ։ Բայց Ճարտարախօսութեան առաջ երթալն որ կըսուի, արուեստին համար հատկընալու է. ապա թէ ոչ, Ճարտարախօսութիւնը մարդկութեան մէկ ձեռքն ըլլալով՝ իրեն հետ մէկտեղ երևցած է, և ամէն մէկուն հանճարին համեմատ առաջ գնացած։ Ատանկ ալ հատկընալու է յունաստանի համար։ Վասն զի Հոմերոս՝ որ Յունաց հին մատենագիրներուն գլխաւորը կը սեպուի, իր գրոցը մէջ ժողովքներ կըստորագրէ, ուր իշխանք և թագաւորք իրարու հետ կը խօսին և կը վիճեն, որ և իցէ բանի մը լաւագոյնը ընտրելու։ Ակէ զատ, Լիկուրգոսի, Դրակոնի, Սողոնի պէս օրէնադիրներ և Պիսիստրատեայ պէս բռնաւոր մը կրցան իրենց Ճարտարախօսութեամբը ժողովրդեան մը սիրտը գրաւել, և գրեթէ աստուածային ազդեցութիւն ունենալ, ինչպէս յայտնի է։ Բայց առանց այնչափ հին ժամանակներու մէջ Ճարտարախօսներ փնտռելու, պատմութիւնը

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 09:29 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կը ցցընէ մեզի այնպիսի անձինք՝ որ թէ զօրու-
թեամբ և թէ լեզուով անուանի եղած են : Ա-
ոնց մէջ կրնանք սեպել նախ

Թէոփոլէս. — Անուանի զօրավարը որ իր հայ-
րենեաց թշուառութիւնները գրեթէ աչքին առ-
ջևը տեսնելով, բոլոր աթենայեցիքը կը ժողվէ, և
դեկտիական մեհենէն ելած պատգամացը նոր և
փրկարար մեհնութիւն մը ուսլով՝ կը յորդորէ
զժողովուրդն որ թողունեն իրենց տունը տեղը, ո-
նեցածնին չունեցածնին, և երթան փայտէ տնե-
րու կամ նաւերու մէջ ապաստանին : Իր համո-
զիչ ճարտասիսսութեամբը Եւրիբիադէս սպար-
տացին զօրավարութեան հասուց աթենացւոց
կամացը դէմ. և Ամփիկտիոնի ժողովոյն մէջ եր-
բոր կը գանգատէին աթենացիք և սպարտացւոց-
մէ զատուիլ կուզէին, փոխանակ զի Մարաց դէմ
եղած պատերազմին ձեռնտուութիւն չըրին, թե-
միստոկղէս հանգարտեցուց զնրենք : “ Պզտիկուց
'ի վեր, կըսէ Պլուտարքոս, հանգատեան ժամա-
նակներն ուրիշ տղայոց պէս պարապ տեն ան-
ցընելով կամ խաղալով չէր զբաղեր, այլ ճառեր
կը շարադրէր իր ընկերները պաշտպանելու կամ
գատապարտելու համար ,, :

Արիստիդէս. — Թեմիստոկղէսի նախանձորդն էր
Արիստիդէս, որ իրեն արդարասիրութեամբը կ
աթենացւոց ուսած խոհական խրատներովը ա-
նուանի եղաւ : Նախ տէրութեան գանձատեսու-
թեան պաշտօնը վրան առաւ. և երբոր ամէն չանք
կընէր հաւատարմութիւն կատարելու այն պարտքը,
աթենացիք դէմ ելան իբրև զլկող և անիրաւ սե-
պելով զինքը. Արիստիդէս ալ Թողուց որ իր վայ
նախանձողքը ուզածնին ընեն : Քիչ տեսնէին գան-
ձին նուաղութեան արգասիքն սկսաւ զգալ ժո-
ղովուրդը, և միաբան Արիստիդեայ եսեւէն ընկան

որ նորէն յանձն առնէ ան գժուարին պաշտօնը։
— "Աթենացիք, դարձաւ ըսաւ իրենց Արիստիդէս, երբոր ամենայն հաւատարմութեամբ տէրութեան գանձին պահպանութիւնը կընէի, զիս ամբաստանեցիք. և երբոր Թողուցի, ու ինձմէ աւելի արդարասէր կարծուածները գանձը պարպեցին, ան առեն նորէն ինձի կը դառնաք. այնոր համար ինծի աւելի մեծ նախատինք կը սեպեմ ձեր հիմակուան գովութիւնը քան թէ առջի դատապարտութիւնը։ Կը ցաւիմ ձեր խեղճութեանը վրայ, և կը տեսնեմ որ աս ցաւս աւելի մեծ առաքինութիւն է քան թէ հարստահատութեան ինչքը պահպանելը"։ Արիստիդէս որչափ բարքով ազնուական, սոսկալ ճարտարախօսութեամբն աւելի մեծ էր քան զԹեմիստոկղէս. և Եաքիղեայ ան հռչակաւոր տողը որ Ամֆիարաւոսի համար ըսած էր՝ շատ լաւ կը յարմարի Արիստիդեայ թէ "Աւելի կուզէ առաքինի ըլլալ քան թէ երեւնալ". վասն զի իր սիրտը արդասաբեր երկիր մըն է, ուր խոհական մտածութիւնք կը բողբոջեն։

Պէրիկղէս. — Այս հռչակաւոր անձը՝ մեծ եղաւ իր քաղաքագիտութեամբը, նոյնպէս նաև իր ճարտարախօսութեամբը։ Անանկ զօրաւոր էր լեզուն որ խօսելու առեն Հերմէս կամ հռետորութեան աստուածը իր շրթանցը վրայ կը հանդչէր, կըսէին հինները. և Պերիկղեայ հակառակորդներէն մէկը զարմացած "Երբոր բռնեմ, կըսէր, գետինը զարնեմ զՊերիկղէս, ինքը կը պոռայ թէ յաղթուած չէ, ու զամէնքը կը համոզէ"։ Թուկիդիդէս իր պատմագրութեանը մէջ իրեք հրապարակախօսութիւն գրած է Պերիկղեայ բերանը. որով ան զարմանալի զօրավարին հանճարը կերեւնայ, մանաւանդ ան առենախօսութեան կամ դամբանա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 09:29 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կանին մէջ՝ որով Քերոմնեէայի պատերազմին մէջ ընկածները կը դրուատէ: Անոնց զօրավարն էր Պերիկղէս. բոլոր ժողովուրդը դիզուած էր վրէժինդիր ոգւով՝ իրենց սիրելի անձինքը սպանանջել Պերիկղէսի ձեռքէն, որ յաղթութեան և փառաց յուսով հայրենիքը թշուառութեան մէջ ձգեր էր: Ձիվանցաւ Պերիկղէս, իր լեզուին վրայ վստահացած եւս այնպիսի կերպով մը դրուատեց ան անձինքը, որ սրտմտութեան ցաւերը ուրախութեան արցունք դարձան, և խնդութիւն թաղեցին իրենց մեռելքը:

Պերիկղեայ ժամանակակիցը Եւպոլիս կըսէր թէ ուրիշ ճարտասանութեանց մէջ միայն իրեն նեաերն են որ ունկնդրաց սրտին մէջ գամուած կը մնան. Արիստոփան ալ անոր մահուընէն քանի մը տարի ետքը կը ձևացընէ զՊերիկղէս իր մեկ քերթուածին մէջ իբրև զամպրոպային Արամազդ, որ կրակ և կայծակունք կը ցասքեցընէ:

ԳԼՈՒԽ ԻԴ.

ԻՄԱՍՏԱԿԱՊ

Արիստոփանէս իր Ամպ ըսուած կատակերգութեան մէջ երկու երևակայեալ անձինք կը խօսեցընէ՝ Արդար և Անարդար, որոնք Սոկրատիադէս անունով մարդու մը տղուն դաստիարակութեան ինամոց պարծանքը իրարմէ կը յափշտակեն: Արդարը հին աեներուան դաստիարակութեան կերպը կը գովէ, անարդարն ալ անոր պակասութիւնները ցցընելով նոր դաստիարակութեան առաւելութիւնը յայտնելու կաշխատի: — Ա երկու

Generated on 2015-03-16 09:30 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

անձինքը հին և նոր խմաստասիրութիւններ են. և նոր խմաստասիրութեամբ կը ծաղկ Արիստոփան ան բազմաթիւ անձինքը որ միայն խմաստնոյ ա- նուամբ կը պարծենային, և զայն յարմար գործի առած էին ձեռուընին՝ ժողովուրդը խաբելու և մոլորցընելու համար: Ատոնք են խմաստակ ըսուած- ները, որոնք Քրիստոսէ գրեթէ 500 տարի առաջ՝ յունաստանի ամէն կողմերէն ժողվուելով Աթէնք լեցուեցան, և հոն կրցան իրենց վախճանին հաս- նիլ՝ ժողովրդեան սուակն ու համարմունքն ստա- նալով: Ատոնց մէջ գլխաւորները կը սեպուէին Գորգիաս լեոնդացի, Պրոտագորաս աբդերացի, Պրոտիկաս կէացի, Հիպպիաս եղէացի, Տրասի- մաքոս քաղկեդոնացի, Պաւղոս ակրագանդացի, Եւթիդեմոս գիոսացի, և այլն. որոնք ամէնքն ալ մոքերնին գրած էին թէ ամենայն տեսակ գիտու- թեանց տեղեկութիւն ունին: Ան պատճառաւ ալ ամբոխը թատերաց մէջ ժողված, գժուարըմ- բռնելի կամ անիմանալի առաջարկութիւններ կընէին անոնց, և ընչին բաներու վրայ երկայն ա- տենախօսութիւններ ընելով իրենց աշակերտացը թիւը օրէ օր կը շատցընէին: Վարդապետութիւն- ներնուն մէջ ընդհանրապէս սկեպտիկեան ա- ղանդոյն կը հետևէին. Գորգիաս կը սորվեցընէր թէ աշխարհքիս մէջ իրական բան չկայ, և ամե- նայն ինչ անծանօթ է. ինչուան բառերն ալ որ կարտատանենք՝ իրաց բուն նշանակութիւնը չու- նին. Պրոտագորաս ալ սուին և ճշմարտին մէջ ա- մենևին տարբերութիւն չկայ կըսէր: Ասան- կով ան առենէն սկսան անաստուածութեան ոչընչութեան և մանաւանդ հոգւոյ անմահու- թեան դէմ եղած կարծիքները զօրանալ: Բայց որովհետև ժողովրդեան թէ բարքը և թէ սխոր- ժակը աւրուելու վրայ էր, ան պատճառաւ ալ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 09:30 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մեծ պատիւ և մեծարանք կու տար ատոնց. ինչուան ՚ի պատիւ Գորգիայ փառաւոր արձան ալ կանգնեցին Ապողոնի մեհենին մէջ: Իսկ ՚ի թեսաղիա աւելի մեծ համբաւ ունեցաւ. վասն զի բնակիչքը ինչուան ան ատեն երկիւղ նուաճելէն ու վաճառականութիւն ընելէն զատ բան չէին գիտեր. և Գորգիայ առաջնորդելովը՝ մտաւորական ուսմանց եռանդ ըլլալ սկսան:

ԳԼՈՒԽ ԻԵ.

ՍՈԿՐԱՏԷՍ

Սոկրատայ վարքը. — Իմաստասիրական վարդապետութիւնը:

Ա իմաստակաց ուսմունքը Ժողովրդեան մէջ ճարակած մոլորութիւններուն գլխաւոր դէմը առնողն եղաւ Սոկրատ աթենացին, քանդակագործ Սոփրոնիսկեայ որդին, Քրիստոսէ 470 տարի առաջ, թէպէտև իր նախնիքը Պարաթոնի և Սալամինայի քաղքէրէն էին: Առաջ իր հօրը արուեստն ուներ Սոկրատ, և խարիսայց (երեք շնորհք) արձաններըը քանդակելով՝ Աթենքի մէջ նաքերդին քովը տնկեց: Բայց որովհետև ան աստենը աթենացւոց մէջ ուսման եռանդը ծաւալել սկսեր էր, և իմաստասէրք և իմաստակք կը սեպուէին Ժողովրդեան մտաւոր հրահանգուելու վարժապետքը, Սոկրատ անոնց ամենուն քով կը յաճախէր քննելու իմանալու իրենց վարդապետութեան կեղտը և եղանակը: Տեսաւ որ ձշմարիտ իմաստասէրք քանի որ իրենց վարդապետութեամբ խորունկին սկսին մտնել, կար-

Generated on 2015-03-16 09:30 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ծիքնին մեծութիւն և անխմանալի խրթնութիւն մը կառնեն. իսկ խնաստակը ամէն բանի վրայ խոսելով և ամէն բանի մէջ երկբայելով իրաւունք կու տային Ժողովրդեան՝ հարկաւոր ձշմարտութեանց վրայ ալ տարակուսելու, որով Ժողովրդը անհաւատ ամբարշտութեան մէջ կ'ինար: — Ա՛ս վիճակին մէջ էր խնաստասիրութիւնը երբոր Սոկրատէս երևցաւ. և միտքը դրաւ ամէն ջանքով սորվեցընելու իրեն աշակերտացը թէ միայն և հարկաւոր գիտութիւն ան է որ մարդ ինքզինքը և իր պարտքերը ձանչնայ: Ան պատճառաւ ոչ առանձին լսարան ահմանեց ուրիշ խնաստասիրաց պէս, և ոչ մանաւանդ վարդապետութիւն ունեցաւ, այլ իրմէ առաջ եղած խնաստասէրներուն ուղիղ սկզբունքը մէկ ըրաւ, և իր ընտանի կենցաղավարութեամբը ամենուն սիրելի ըլլալով շատ անուանի բարեկամներ և աշակերտներ ունեցաւ, ինչպէս Պղատոն, Քսենոփոն, Արիստիպպոս, Փեդոնէ, և այլն:

Եւ որովհետև ուրիշ շատ հին խնաստասէրներէն աւելի ազէկ ըմբռներ էր Սոկրատ մէկ Աստուծոյ գոյութեան հարկաւորութիւնը և բազմաստուածութեան կարծեաց սուտութիւնը, ամենացածութեան կարծեաց սուտութիւնը, ամենացածութեան ոմանք զինքը ամբաստանեցին իբրև քաղաքացւոց բարքը աւրող իր նոր վարդապետութեամբը: Եօթանասուն տարուան ծերունի խնաստասէրը գաստատանի քաշուելով մահուան վճիռ ընդունեցաւ. և առանց ամենևին խռովելու՝ մանչախինդն առաւ, և իր աշակերտացը հետ մարդուս հոգւոյն անմահութեանը վրայ խոսելով մեռաւ:

Իր անուամբը մանաւանդ գիրք չնեղուց Սոկրատ, բայց աշակերտները, Պղատոն, Կեբէս և Քսենոփոն՝ Սոկրատայ կարծիքներն իրենց գրոցը մէջ աւանդեցին. ինչպէս Պղատոնի հռչակաւոր Փե-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 09:31 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

գոնէ արամախօսութիւնը՝ Սոկրատայ մահուան պատմութիւնը և իր ան ժամանակին քարոզած վարդապետութեանցը համառօտութիւններն են։

Սոկրատայ իմաստասիրական վարդապետութիւնը. — կիկերոն կըսէ թէ Սոկրատ ուղիղ իմաստասիրութիւնը երկինքէն երկիր բերաւ։ Այս խօսքը ոչ թէ ալ չափազանցութեամբ ըսուցուած սեպուի՝ սակայն Սոկրատայ արդիւնքը մեծ է, մանաւանդ անոր համար որ ուրիշ շատ իմաստասիրաց պէս փառասիրութիւն անձնասիրութեան եռեւէ ընկած չէր. ան պատճառաւ ալ ոգէտ կը ձևանար, որ ինքզինքը գիտուն երևցընողներուն ամբիծնան։ Որ և իցէ ճշմարտութեան մը ստուգութիւնն իմանալու գլխաւոր հնարք աս գտաւ որ նախ ամէն բանի վրայ տարակուսի իսհականութեամբ, և ինչուան որ հաստատուն վկայութիւն չտեսնէ՝ չհամոզուի. և կը խրատէր ամէն քննութեանց մէջ մանաւորէն կրճգհանուրն առաջնորդել, չէ թէ ընդհանուրէն առ մանաւորն։

Անպակաս առեն մը յորում մէկ կողմանէ աթենացւոց բարքը աւրուած ու մեկալ կողմանէ պելոպոնեսական պատերազմը տակնուվրայ կընէր գիրենք, չէր կարծուեր թէ Սոկրատայ վարդապետութիւնը կարենայ այնչափ ծաւալիլ։ Սակայն ամէնքը սուտ իմաստակութեանց ընդունայն վէճերէն ձանձրացած՝ Սոկրատայ կը յանձնէին իրենց որդիքը. շատ անգամ ալ մեծահասակ տարիքնին առած մարդիկ յօժարակամ իրեն աշակերտիլ կուզէին։ Եսքինէս անուանով մէկը ցաւելով ըսաւ իմաստասիրին. "Քեզի ընծայելու բան մը չկարենալով գանել՝ ինքզինքս կընծայեմ"։ Դարձաւ Սոկրատէս, "Ձես գիտեր, ըսաւ, թէ ինչպէս ազնիւ բան է իմ աչքիս առջև քու ընծադ"։

Generated on 2015-03-16 09:31 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

Սոկրատայ դվնաւոր առածներէն էին թէ "Մեկը որչափ որ քիչ բանի կարօտութիւն ունենայ, այնչափ աւելի աստուածանման կըլլայ,,. — "Դատարկութիւնը և ոչ աշխատութիւնը կը նուաստացնէ զմարդիկ,,. — "Իմաստնոյ մը ան է մեծ պարծանք որ առաքինի ըլլայ առանց ցուցամոլութեան,,. — "Բարի համբաւով մեռնիլը ընտրելագոյն է քան թէ նախատանօք ապրիլ,,. — "Ձարկը ընողին չար հատուցում պէտք չէ ընել,,։

ԳԼՈՒԽ ԻԶ.

ՃԱՐՏԱՐԱԽՕՍՔ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԱՐՈՒՆ (Ք. Ա.)

Խովարք. — Անդոկեդէս. — Լիսիա։

Խովարք. — Երբոր իմաստակք իրենց մոլար վարդապետութեամբը Աթենքի ժողովուրդեան բարքը աւրելու հետ էին՝ խովարք կամ հէրյոապէփ (Démagogues) երևցան, որոնք պերիկղէսի մահուընէն եաքը ալրապետեսկին աթենացւոց վրայ։ Անոնք ճարտասան ու լեզուանի մարդիկ էին որ իրենց խօսքին ուժովը գրեթէ կերպով մը իրենց կամացը գերի ըրած էին ժողովուրդը։ Մեջերնէն աւելնէն հանճարեղը կը սեպուէր կղէոն. որ փառասէր և վայրագ մարդ մըն էր, և ճարտասանութիւնը՝ իր արտին և բարուց ցածութեանը զօրաւոր գործիք մը առած էր ձեռքը։ Ձևերը որ այնչափ զօրութիւն կուտան ճարտասանական ղուրցուածքի, ինքը հնարեց. վասն զի Պլուտարքոս կը պատմէ թէ ինքն առջինն եղաւ որուն խօսքերուն առեն վրայի վերարկուն կը բացուէր, և երբեմն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 09:31 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

եղբայրն առնելին կը զարնէր ձեռքերը։ Թուկիդիդէս այս կերպով, ձև «Քաղաքացւոց մէջ ամենէն աւելի պատուաբն էր Պերիկլէս, և այն առենի ճարտարախոսութեան մէջ իր գործունէութեան կեդրոնը շատ դասական էր ժողովրդեան. անով եղաւ որ Դեմոսթենէս և Այսխինէս այնքան մարդիկ զօրավարութեան պիտանացան, Պերիկլէսի չհաւասարուելով։

Ասկիլեպիադ՝ Սոկրատայ աշակերտը և Պերիկլէսի եղբօրորդին՝ անուանի հռետոր էր. նոյնպէս ալ Պերիկլէսի բանաւորը, որոնք ճարտարախոսութեամբ իրենց պահպանութիւնները և ժողովրդեան դէմ ցոյց տուած անպիտանութիւնը կը պարտիկին, Այն առնելին էր նաև Ընտիփոն ճարտարախոսը, Պերիկլէսի ժամանակներէն քիչ ետքը, Թուկիդիդէսի և Սոկրատայ բարեկամ, և անոնց բարեխօս առաքինութեանցը նմանող։ Շատ անգամ պատմագիրը և անգամ մըն ալ արձանագրած է. և ազնուատոհմական իշխանութեան պլոտոս ալ պաշտպանն էր։ Բայց 411ին իրենց հայրենասէր մտածմունքն՝ դատաստանի կանչեցին զինքն ալ, և ապացոյցով՝ դիակը իրկուէն դուրս ձգեցին, առանց անոր մարմնավայր ըլլին, և արգիլեցին որ իր ցեղին մէկը չկարենայ քաղաքական պաշտօնի մէջ մտնել։ Ընտիփոն իր ճարտարախոսութեամբ՝ անմեղութիւնը պաշտպանելու էր, ապացոյց գտաւ։ — Ընտիփոնի անուանքը առանձինդ ճառ ունինք մեր ձեռքնիս, բայց իրեն ժամանակակից քերականի և պատմագրի գովեստեանցը չեն բաւական մեզ զինքը՝ կրասիպատճինք ըսելու համար թէ կամ իրենց պիտի չըլլան, և կամ ուրիշներէ ձեռք բառնած։

Ընտիդեմոս. — Աղմնացի էր Ընտոկեդես, որ

Աղկիբիադեայ բարեկամ և իրեն պէս հանճա-
րոյ և միանգամայն ախոյեան էր։ Երբոր Աթեն-
քի մէջ Հերմէսի արձանները խորտակուելով յան-
ցաւոր սեպուեցաւ Աղկիբիադ, մինչդեռ համա-
իոհ գանելով նաև զԱնդոկիդէս՝ պատժել կու-
զէին, անիկայ ուրիշ յանցաւորներն ալ յայտ-
նեց ու այնպէս պատժէն խաչբսեցաւ։ Անկէ ետ-
քը աշխարհք պարտեցու ելլելով երբոր Աթէնք
դարձաւ, երսուն բռնաւորք զինքն աքսորեցին.
բայց ինքը՝ Թրասիբուղեայ հետ մէկտեղ նորէն
իր հայրենիքը կրցաւ դառնալ։ Ա՛ւ ամենուն-
մը տարեկան եղած աաեներ՝ վրան դարձեալ
ամբաստանութիւններ եղան. և Թէպէտ ինքզինքը
արդարացուց, սակայն չկրնալով իրեն հայրե-
նիքը կենալ, ելաւ իրեն բարեկամ Եւագրոս Թա-
գաւորին քով առանձնացաւ և հոն մեռաւ։

Անդոկիդեայ համար կը պատմեն թէ երբոր ա-
տենի մէջ կեղեր իր վրան չատագովութիւն ընե-
լու, անանկ զօրաւոր կերպով կը խօսէր որ կար-
ծես թէ իր ըրած յանցանաց ծանրութիւնը թե-
թևցընելով արդարութեան վրէժխնդրութիւնը
կարգիլէր։ Ա՛ւ իր կարգէ դուրս հանճարին զօ-
րութիւնը յայտնի կերևնայ չորս ճառերը մէջ որ
մեր ձեռքը հասած են։ Անոնց խորագրերն են
ա. Յաղագս խորհրդականաց պօնիոց. — բ. Ընդդէմ Աղ-
կիբիադեայ. — գ. Վասն դարձի իւրոյ յաքսորանացն վայ-
րէ. — դ. Յաղագս հաղորդութեանն ընդ լակեդեմոնացիս։

Լիւսիաս. — Վերի յիշուած հռետորաց ժամա-
նակակից էր նաև Լիւսիաս աթենացին (459)։
Կեփալէ իր հայրը Տարսուսա սիրակուսացի մըն
էր, բայց եռքը եկաւ Աատիկէ բնակելու։ Երբոր
մեռաւ, իր որդիքը Պոլեմարքը և Լիւսիաս իսա-
լիա եկան և հոն իրենց բնակութիւնը հաստատե-
ցին. և երկար աաեն կենալէն եռքը Անտիոքոսի

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 09:32 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մահուան պոյժը առնելով, նորէն Աթէնք դար-
ձան : Սակայն երբոր լակեդեմոնացիք Աթենքի
սիրեցին, երբոսն բռնաւորը ատելութիւն ունե-
նալով Լիսիայ և իր եղբօրը դէմ, ունեցածնին
չունեցածնին յափշտակեցին. Պոլեմարքեայ ալ
մոլախնդ տալով սպաննեցին. իսկ Լիսիաս Մե-
գարա փախաւ : Թրասիբուղոս բռնաւորները ընկ-
ճելով նորէն Լիսիան Աթէնք դարձուց, և քա-
ղաքակցութեան պատիւը տուաւ անոր : Հոն մե-
ռաւ Լիսիաս ութսուն տարուան հասակին մէջ :

Լիսիաս գրեթէ երկու հարիւր ատենախօսու-
թիւն գրած էր, բայց հազիւ թէ մէկքանին ժո-
ղովուրդեան առջևը խօսեցաւ. որովհետև ինքն օ-
տարական սեպուելով իրաւունք չունէր քաղա-
քական իրաց տեսչութեան մասնակցութիւն ու-
նենալու. “ Թէպէտև պակասութիւններ ալ ունի
Լիսիաս, կըսէ Կիկերոն, բայց միանգամայն կըր-
նայ իրաւամբ անուանվի Ճարտարախօս մը սե-
պուիլ ,, : Կուինտիլիանոս ալ “ Թէ որ Ճարտա-
սանութեան արուեստին անուամբը, կըսէ, միայն
հասկընայինք որ և իցէ բանի ինչպէս պատահե-
լուն ատորագրութիւնը, Լիսիասէն աւելի գեղա-
զանց օրինակագիր մը չէինք կրնար գտնել. վասն
զի իր տաղանդոսութեանցը մէջ անօգուտ և չա-
փազանց բան մը չես կրնար նշմարել : Սակայն ա-
ւելի վճիռ տալութիւն մը կրնանք նմանցընել զինքը
քան Թէ յաղթաջլուր գեղի ,, : Կը պատմեն Թէ
Սոկրատայ պաշտպանութեան ջատագովական
Ճառ մը գրեր է Լիսիաս, բայց իմաստասէրը չէ
ընդունած : Ան դէպքը շատ պատիւ մը չբերէր
Լիսիայ հանճարոյն և արդարատիրութեանը : Ի
րեն հակառակորդներն եղան Ընախիոն և Անդո-
կեդէս. բայց ինքը անոնցմէ շատ վեր է Թէ զուր-
ցուածքին ազնուութեամբը և Թէ կորովով :

Generated on 2015-03-16 09:32 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ԳԼՈՒԽ ԻԷ.

ՔՍԵՆՈՓՈՆ

ՔՍԵՆՈՓՈՆԻ ՎԻՐԸ. – ԳՐՈՒԱԾՔՆԵՐՆ ԵՒ ՈՃԸ։

Ան անձինքներէն մէկն է Քսենոփոն, որոնք Սոկրատայ աշակերտելով թէ իրեն իմաստասիրութեանը եւ թէ հանճարոյն արժանաւոր ժառանգ երեւցան, պարծանք ըլլալով իրենց վարդապետին եւ ցցընելով թէ զուր տեղը իբրեւ մոլորեցուցիչ ամբաստանուեցաւ ուղղութիւն տուվեցընող անձը։

Քսենոփոն Կրիտոսի որդին էր, Աթենիկէի Երգիա աւանին մէջ ծնած Քրիստոսէ 445 տարի առաջ։ Տանըրուեը տարեկան եղած աւեն Սոկրատայ աշակերտեցաւ, և շատ տարիներ կը յաճախէր իրեն դասախօսութիւնը մտիկ ընելու. և Դելիոնի պատերազմին մէջ անգամ մը Սոկրատ իրեն աշակերտը զՔսենոփոն մահուընէ ազատեց, որով և անոր կրկնակի երախտագիտութիւնէ պարտուցը իրաւունքն յափշտակեց։ Քսենոփոն երթաւն տարուան հասակին մէջ ուզեց ճամբորդութիւն մը ընել, ու գնաց կրտսերոյն Կիւրոսի ծառայութեան մէջ մնաւ. և ինքը Քսենոփոնն էր որ կոնաքսայի պատերազմէն ետքը բիւր մը Յունաց առաջնորդեց, և զնոսա Ասիայէն հանեց. որով հետեւ անոնց գլուխ կեցող զօրավարներն ամէնն ալ մեռեր էին. և երբոր Աթէնք դարձաւ Քսենոփոն, աւեսաւ որ Սոկրատ մեռնելու վրայ էր, ինչպէս կսանդրէն։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 09:33 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ինչուան ան ատենը քանի մը մանր դրուագքներ շարադրած էր Քաենոփոն. բայց իր սիրելի վարպետին անպարտ մահը առնելով, միտքը դրաւ որ զօրավարութիւնը թողնէ և գրականութեան եռանդ ըլլայ. ուստի Ջոփոֆոնէն Սոկրատայ ըսուած գիրք մը շարադրեց, եաքը Յիշատակարան Սոկրատայ կոչուած հետաքրքրական մատենիկը, որուն մէջ ան մեծահոգւոյս փիլիսոփային իրատանելը կամփոփէ:

Անթենքի մէջ եղած անվերջանալի խառնակութիւններէն արդէն ձանձրացեր էր Քաենոփոն. և որովհետև մեծ համարմունք և սէր ունէր սպարտացի Ագեսիլայոս թագաւորին վրայ, Լիկուրգոսի օրինացը վրայ զարմանալով և բնակչաց օրհնասած իսաոամբերութիւնը նախանձախնդիր՝ երեսս անոնց քով գնաց, որոնք ան ատեն ամենայն դրացի ազգաց հետ կը պատերազմէին: Ագեսիլայոս երբոր աթենացւոց հետ ալ կռիւ ունեցաւ, Քաենոփոն ալ մեկտեղ պատերազմի գնաց ու իր հայրենակցացը դէմ կռուեցաւ Քերսոնեսոսի մօտ. սպարտացիք ալ իր արդեանցը վրիժառուն՝ Ողիմպոսի քով երկիրները կալուածներ տուին՝ իր ժառանգութիւն: Հոն առանձնացաւ Քաենոփոն, և բոլոր կեանքը դրքեր շարադրելով անցուց: Ութսուն տարուան էր երբոր աթենացիք բակեդեմոնացւոց հետ հաշտութիւն ըրին, և ան ատեն Քաենոփոնն ալ իրեն հայրենիքը կանչեցին. բայց ինքը չուզեց, կրաեն, թողնել իր խաղաղական առանձնութիւնը: Կը պատմեն Թէ երկու որդի ունեցաւ Քաենոփոն, որոնք Եպամինոնդաս կողմեն Մանտինէացի քով պատերազմելով, անոնցմէ մէկը կրնկցուս պատերազմի մէջ մեռաւ: Ասուածոց զոհընելու ատենը Քաենոփոնն գուժական հասաւ Թէ որդին մեռեր է պատերազմի մէջ.

Generated on 2015-03-16 09:33 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

մեկէն գլխուն վրայ եղած պատկը հանեց. և երբոր իրեն ըսին թէ քաջութեամբ մեռաւ, առանց կաթիլ մը արցունք թափելու՝ անխռով սրտիւ նորէն պատկը գլուխը դրաւ ու "Արդէն գիտէի, ըսաւ, թէ մահկանացու էր ուղաս,,: Բայց կըսեն թէ աս անշփոթ կերպը աւելի ժողովրդեան դիմաց ցցընելու համար ըրած ըլլայ. ապա թէ ոչ, ինչուան իր մահը մեծ սդոյ մէջ էր ան կոտսեաններ համար, և ինքզինքը վախճարելու կամ ցաւերը մեղմելու միակ հնարք՝ գրականութիւնը կը համարէր: Կորնթոսի մէջ մեռաւ Քսենոփոն 352 տարի յառաջակաց Քրիստոսէ առաջ:

Քսենոփոնի գրուածները.—Քսենոփոնի առջի երկասիրութիւնները են՝ Սոկրատայ Ապոլոգիան և Ագեսիլայոս Թագաւորին վրայ Գովեստ մը: Առանձին զատ իր գրուածքները գլխաւոր երկու կարգի կրնանք բաժնել՝ Յունարէն և Պարսկերէն:— Յունասասիրականներուն մէջ գլխաւորներն են իր Սոկրատեան յիշատակարանը, որ վերն ալ յիշատակեցինք: Ասոր մէջ Քսենոփոնի գլխաւոր նպատակը եղած է իր վարդապետին խօսքերուն և խրատուցը մէջէն անոնք ժողվել որոնք բաւական էին իր վարդապետին բերանը կարկելու, Սոկրատայ ակզբանց ուղղութիւնը ցցընելով: Պլատոնին համար կըսեն թէ զՍոկրատ բնականէն աւելի աշխոյժ երեւցընելու նպատակ ունեցած ըլլայ. իսկ Քսենոփոն ալ ընդհակառակն աւելի նայեր է որ զՍոկրատ սիրելի երեւցընէ քան թէ արդարացընէ: Ճառագովութիւնը կէս մը ճարտասանական և կէս մըն ալ վիճաբանական գրուածք կը սեպուի քննադատներէն առջի: Տնտեսական (Économique) և Խրախճան (Banquet) ըսուածները ալ երկու սոկրատեան պատմախոհութիւնք են, որոնցմէ առջինը առանին անտեսութեան և երկրագործութեան

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 09:33 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նը չարադրած ըլլայ աս գիրքը, յորում աշխոյժը մարեր էր, և առջի իրեն բնական գարձած հանճարը չկրցաւ դուրս ցայտքեցընել: — Կ՚ուրամարդը կամ Դասպիրոկուֆիան Կիւրոսի ըսուած գիրքն ալ Քսենոփոնի ծերութեան և առանձնութեան արգասիքն է. բայց ասոր մէջ իր ամէն հանճարը Թափելէն զատ՝ մանաւոր ջանք ալ ունեցած է ընծիր ոճով չարադրելու: Ա գիրքը Կիւրոսի գաստիարակութեան նկարագիրն է, ուրկէ գիրք. և աւելի վիպասանական քան Թէ ճշմարիտ պատմութիւն կրնայ սեպուիլ. ուստի և իրաւամբք զուրցուած է ան խօսքը Թէ Քսենոփոն աս երկասիրութեամբ ուզեր է ցցընել Թէ ինչպէս արժան էր որ ըլլար Կիւրոս, քան Թէ ինչպէս որ էր. ուստի ան պատճառաւ՝ ժամանակին բարբարոս ազգերը՝ Եբրայեցի, Պարսիկ, Քաղդեացի Ժողովուրդներ մէջ կը բերէ, և անոնց բերանը ուղիղ և իմաստասիրական խօսքեր կը դնէ, և Պարսից ազգը օրինակ մը կուզէ ընել Յունաց նմանողութեամբ: Ա առթով հարկ կը համարինք յիշեցընելը Թէ Քսենոփոն ինչպէս ուրիշ ասիական ազգաց, սանակ ալ մեր ազգին վրայ զանազան բաներ կը զուրցէ և կը պատմէ իր գրքերուն մէջ՝ որ բոլորովին ճշմարտութենէ կը հեռանան: Ուստի մենք մեր ազգին պատմութիւններն և ան տեղուան անցքերն աւելի մեր պատմչաց և անոնց հետևող օտարաց խօսքերուն մէջ պիտի փնտրենք; և այսպիսի յաւելուածները իբրև պարզ վիպասանական զուարճութիւն պիտի ընդունինք և կարդանք:

Քսենոփոնի ոճը. — Նախնի մատենագիրք շատ զարմացած են Քսենոփոնի ոճին քաղցրութեան վրայ, և գրեթէ ամէնքը զինքը ապոլլէոն Մեղու կը կոչեն: Կիկերոն կըսէ Թէ Մուսայք Քսենոփոնաեայ լեզուովը խօսեր են. նոյնպիսի գովութիւն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 09:45 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կու ասյ նաև կոնինթիլիանոս. վասն զի Քանդ
փոխն ոչը ուրիշ իրեն ժամանակակից իմաստա-
կաց գրուածներուն արուեստակեալ կերպը ջու-
նի. Թէպետև Թուկիդիդէսի պէս ալ ոչը յղկե-
լու փոյթ չունենալը յայտնի կը տեսնուի: Իրրև
մատենագիր, Հերոդոտեայ և Թուկիդիդեայ մէջ
կը տեղուի. և սեթէ առջինին կը մօտենայ քան
Թէ երկրորդին. վասն զի Խոսկրատայ աշակեր-
տած ըլլալով՝ անոր քաղցր, զարդարուն և ճար-
տասանական ոճն ստացեր էր: Հերոդոտ, Թու-
կիդիդես և Քսենոփոն իրենց դրքերովը՝ պատ-
մական զանազան ոճերու ճաշակը տուած կը տե-
պուին. վասն զի Հերոդոտոս ողբերգակ կրնայ
սեպուիլ, Թուկիդիդէս՝ քաղաքագէտ, և Քսե-
նոփոն իմաստասէր պատմիչ: Ուր Թէպէտ պատ-
մագրութեան միակ օրինակագիրը եղած են ատոնք,
բայց իրենց յաջորդները չկրցան ան պարծանքն
ունենալ՝ անոնց վարժապետներուն այժանաւոր
աշակերտք սեպուելու[1]:

1 Քսենոփոնտեայ գրուածոցը մէջ ծանօթ է պղեր-
նոս կիւրամայտը, զոր հայկական Լարգմանութեամբ
ընծայեց վ. Ինճիճեան Ոխիւրեան ուխտին հռետոր Գաթը-
ճեան Հ. Յովնէ վարդապետը:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 09:46 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԼՈՒԽ ԻԸ.

ՊՂԱՏՈՆ

Սոկրատեան վարքաբանը. — Պղատոնի վարքը. — Տրամախօսութիւնները. — Ոճը:

Սոկրատեան վարքաբանը. — Ինչպէս առաջ յիշեցինք, յունաստանի ամէն գաւառներէն մարդիկ ժողվուեցան Սոկրատայ աշակերտելու համար. չէ թէ միայն ուսմանց սէր ունեցող պատանիք, հապա նաև տարիքին առած քաղմաթիւ մարդիկ: Ասոնցմէ շատերը իմաստասիրին վարուցը հետևելով ինքզինքնին ուսմանց տուին, և լսարաններ հաստատեցին սոկրատեան իմաստասիրութիւնը տարածելու. ոմանք գրքեր ալ գրեցին, և նախնիք ասոնց շատին վրայ համարմունքով կը խօսին, թէպէտև հիմա մեր ձեռքը հասած չեն. ասոնցմէ էին Կրիտոն, Սիմմիաս Թեբացին, Գղաւկոն աթենացին, Եւքլինէս իմաստասէրը, Կեբէս, Արիստոպպոս, Եւկղիդէս մեգարացի և ուրիշ շատեր: Ասոնց ամենուն առեղը կը նայ բռնել Սոկրատայ ան մեծահանճար աշակերտը Պղատոն, որ մեծ պարծանք եղաւ ոչ միայն աթենացւոց, հապա ընդհանուր մարդկութեան և գրաւորական հանճարոյ:

Պղատոն Աթենքի մէջ ծնաւ Քրիստոսէ 430 կամ 429 տարի առաջ: Արիստոն իր հայրը՝ որ աթենացւոց մէջ ընտիր տոհմէ կը սեպուէր, կոդրոսի ցեղէն էր, իսկ մայրը Պերիկտիոնէ՝ օրէնսդիր անուանի Սոլոնի տոհմէն: Կըսեն թէ Պղատոնի

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 09:47 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 10:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

առջևն ալ իրեն պաշտպանութեան ձառ մը սկսաւ խօսիլ, սակայն Սոկրատայ Թշնամիները Թող չիտուին որ խօսքը ըմբնցընէ :

Սոկրատայ մահուընէն ետքը իմացաւ Պղատոն Թէ իրեն ալ եաւէն ինկեր և զինքն ալ կուզեն բռնել, Մեգարա քաշուեցաւ իր Եւկլիդես բարեկամին քով: Ետքը ձանապարհորդութեան ելլելով Իտալիա, Եգիպտոս և Ափրիկէ քալեց, Պարմենիդեայ, Հերակլիդեայ և ՊիւԹագորայ իմաստասիրութեանց ուսանողութիւններուն տեղեկանալու : Վերջը Սիկիլիա անցաւ, ուր նախ Դիոնեսիոս երէցն և ետքը կրտսերն մեծարեցին պատուեցին զինքը. բայց երբոր իր համարձակախօս աղատութենէն վախնալով փորձանքի մը բերել կուզէին՝ փախաւ Պղատոն. և իմանալով Թէ իր վարդապետին Սոկրատայ դէմ եղած ատելութենէ կրակն անցեր էր, Աթինք իր հայրենիքը դարձաւ : Հոն Ակագեմոս անունով մէկուն պարտէզը մէջ մանաւոր լաստան սահմանեց, որ երկար ատեն պարկեշտ և առաքինի քաղաքացւոց ժողովարան մը եղաւ : Ինչուան իր մահը հոն կեցաւ Պղատոն, և քառասուն տարի անընդհատ սորվեցընելէն ետքը ան ձեմարանին կամ ակադեմիային մէջ, Սպեւսիպպոս իր աշակերտին և ազգականին յանձնեց, և մեռաւ ութսուն տարուան և սեղի հասակին մէջ (348) առանց ամենևին իր մտաց աշխոյժը և հանճարը կորսընցընելու. վասն զի ան խորունկ ծերութեան ատենն աչքէ կանցըներ իր Տիմէոս կամ Յաղագս օրինաց տրամախոսութիւնը, որ իրաւամբ Պղատոնի գրուածոցը մէջ գլխաւորը սեպուած է :

Պղատոնի գրուածները. — Ա. մեծանուն իմաստասիրին գրուցը մէջ այնպիսի բարոյական ուղիղ սկզբունքներ կը տեսնուին որ բոլորովին գմարդ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 10:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

առջի անունն Արիստոկլէս էր, եւթը ուսերուն
և ճակտին լայնութեան համար Պլատոն ըսուե-
ցաւ, որ լայն ըսել է: Ինչպէս մարմնոյ հրահան-
գաց, ասանկ ալ մուսաներ կրթութեանց մէջ գե-
րազանց էր Պլատոն. և առջի բերան ինքզինքը
երաժշտութեան, բանաստեղծութեան և նկար-
չութեան տուած: Քանըեօթը տարեկան էր եր-
բոր առջի անգամ Սոկրատայ անունը և համբա-
ւը լսեց: Հնձանեան աստուածոյն տնկոցը օրերն
էին, և Պլատոն ոչխերգուհիւն մը չնեռը և ժո-
ղովրդեան առջևը հանդիսացնել կուտար: Ըն-
կերդաց մէջ էր նաև Սոկրատէս փիլիսոփան.
Պլատոն տեսաւ զինքը, սիրտը վառուեցաւ անոր
աշակերտելու. ամէն բան ձգեց, և ինքզինքը ի-
մաստասիրութեան տալով՝ Սոկրատայ եանէն գը-
նաց. բանաստեղծական քերթուհիւնները բոլոր
այրեց. անոնց հետ էին նաև դիւցազներգուհիւն-
ներ ալ՝ որոնց ոճը Հոմերոսի կը հաւասարէր կըսեն:

Պլատոն ուղիղ տասրի միայն Սոկրատայ աշա-
կերտեցաւ. վասն զի 399ին Թունաւորուելով մե-
ռաւ իր վարդապետը: Բայց ան քիչ տարինե-
րուն մէջ իրեն հանճարին արժանաւոր յառա-
ջադիմութիւն ըրած էր Պլատոն, և իր մեկքանի
գրուածները կրցաւ կարդալ Սոկրատ: Կը պատ-
մեն թէ երբոր փէդրօ ըսուած տրամախօսութիւնը
կը կարդար, դարձաւ իրեններուն Սոկրատ, և ը-
սաւ. "Ինչ լմնատալից խօսքեր ան պատանին իմ
բերանս կը դնէ, որունք և ոչ մտքէս անցած են":
Ան պատճառաւ ալ գրեթէ ամէն աշակերտնե-
րէն աւելի սիրելի էր իրեն Պլատոն. նոյնպիսի
սէր և համարում ունէր աշկերտն ալ Սոկրատայ
վրայ, և կը պատմեն թէ ամէն կարելի չանքն ըրած
ըլլայ՝ իր վարդապետը տարապարտ մահուընէն
ազատելու. ինչուան համախոհութիւն ժողովրդեան

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 10:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

առջևն ալ իրեն պաշտպանութեան ձառ մը սկըսաւ խօսիլ, սակայն Սոկրատայ թշնամիները թող չիտուին որ խօսքը լմընցընէ :

Սոկրատայ մահուընէն ետքը իմացաւ Պղատոն թէ իրեն ալ եաւէն ինկեր և զինքն ալ կուզեն բռնել, Մեգարա քաշուեցաւ իր Եւկլիդես բարեկամին քով: Ետքը Ճանապարհորդութեան ելլելով Իտալիա, Եգիպտոս և Ափրիկէ քալեց, Պարմենիդեայ, Հերակլիդեայ և Պիւթագորայ իմաստասիրութեանց ուսանողութիւններուն տեղեկանալու : Վերջը Սիկիլիա անցաւ, ուր նախ Դիոնեսիոս երկցն և ետքը կրտսերն մեծարեցին պատուեցին զինքը. բայց երբոր իր համարձակախօսաղտաութենէն վախնալով փորձանքի մը բերել կուզէին՝ փախաւ Պղատոն. և իմանալով թէ իր վարդապետին Սոկրատայ դէմ եղած ատելութեն կրակն անցեր էր, Աթէնք իր հայրենիքը դարձաւ : Հոն Ակադեմոս անունով մէկումը պարտիզին մէջ մանուաւոր լսարան սահմանեց, որ երկար տաեն պարկեշտ և առաքինի քաղաքացւոց ժողովարան մը եղաւ : Ինչուան իր մահը հոն կեցաւ Պղատոն, և քառասուն տարի անընդհատ սորվեցընելէն ետքը ան ձեմարանին կամ ակադեմիային մէջ, Սպեւսիպպոս իր աշակերտին և ազգականին յանձնեց, և մեռաւ ութսուն տարուան և աւելի հասակին մէջ (348) առանց ամենևին իր մտաց աշխոյժը և հանճարը կորսընցընելու. վասն զի ան խորունկ ծերութեան տաեն աչքէ կանցըներ իր Տիմէոս կամ Յաղագս օրինաց տրամախոհութիւնը, որ իրաւամբ Պղատոնի գրուածոցը մէջ գլխաւորը սեպուած է :

Պղատոնի գրուածները. — Ա մեծանուն իմաստասիրին գրուցը մէջ այնպիսի բարոյական ուղիղ սկզբունքներ կը տեսնուին որ բոլորովին զմարգ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 10:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կասկեցընեն : Սուրբն Օգոստինոս կըսէ Թէ ո-
մանք կարծեցին որ Պղատոն իր Եգիպտոս ըրած
ճանապարհորդութեան ատենը Ջերեմիա մար-
գարէն տեսած ըլլայ և իրմէ իմացած Հին կտա-
կարանց ուղղութիւնը . բայց որովհետև Երեմիա մար-
գարէն Պղատոնէն առաջ կիյնայ , անոր համար
հաւանական է կարծելը , ինչպէս սուրբ վարդա-
պետն ալ կըսէ , Թէ աստուածաշունչ գրոց վար-
դապետութեան տեղեկութիւն ունեցած ըլլայ ,
և աշխարհի արարչութեան վրայ ուղիղ և հաս-
տատուն սկզբունքներ ստացած :

Պղատոն երանելի հինգ տրամախոհութիւն ու-
նի , կամ ըսա այլոց՝ փիլիսոփայեց , օրինաց և հա-
ստատակամութեան տրամախոհութենէ գլուխ-
ներն առանձին գիրք սեպելով :

ա . Պրոտագորաս կամ Խոստակ . — Ա տրամա-
խոհութիւնն որ Պղատոնի գործոց անուանիներ-
ուն մեկը կը սեպուի , շարադրած է իմաստակաց
և անունց վարդապետութեանցը դէմ , ցցընելով
Թէ բանած ճամբանին արդարութեան և առա-
քինութեան առաջնորդ չի կրնար սեպուիլ : Ա
իմաստակաց մեկը , Պրոտագորաս , Ամէնէք կու-
գայ . Սոկրատայ Խպոկրատես աշակերտը կա-
ղաչէ իր վարդապետին որ այսպիսի առթի մը ձեռ-
քէ չփախցընէ , ու յանձն առնէ մեկտեղ երթալ
Պրոտագորայ : Յանձն կառնէ Սոկրատ , ու աշա-
կերտը հետն առած կերթեն կերլթան անոր ու կը
տեսնեն որ գլուխը բազմաթիւ մարդիկ ժողված
կը վարդապետէր : Խօսք կը բացուի իմաստակին
և Սոկրատայ մէջ , և առջինին կողմը կը բռնեն Պրո-
տիկոս և Հիպպիաս . Պրոտագորաս կուզէ հաս-
տատել Թէ կարելի է արուեստի կամ գիտութե-
մը պէս սովրեցընել առաքինութիւնը . բայց Սոկ-
րատ իրեն վանազան ու գժուարին հարցմունք-

Generated on 2015-03-16 10:44 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

նէրովը անանկ չփոթութեան մէջ կը ձգէ զինքն որ պատասխան չգտնելով կը տխպռնի իր կարծեաց և վարդապետութեան առումին ճանչնալէ։

Բ. Փեդրոս կամ Յաղագս Քրիստոսի.— Առջինէն եաքը կամ անոր շարունակութիւն չարագրած է սա տրամախօսութիւնը։ Պրոտագորայ մէջ ցցուցեր էր Պղատոն թէ ինչպէս իմաստակաց վարդապետութիւնք չեն կրնար առաջնորդել մարդկան յառաջինութիւն. իսկ Փեդրոսի մէջ կը ստորագրէ թէ ինչպէս անոտի և ընդունայն արուեստ մըն է ճարտարախօսութիւնը։ Երկու մաս բաժնուած կրնայ սեպուիլ սա տրամախօսութիւնը, որոնցմէ առջինը գործնական և երկրորդը տեսական է. առջինին մէջ Պղատոն իր դրութիւնն օրինակով մը կը ցցընէ. այսինքն՝ գեղեցկութեան վրայ երկու ճառով, որոնց մէկը Լիսիաս իմաստակը շարագրած է, և միւսը Սոկրատես. իսկ երկրորդ մասին մէջ իմաստակաց սկզբունքն և կանոնները կը քննէ։

Գ. Գորգիաս կամ Յաղագս հռետորութեան.— Փեդրոսին մէջ արուեստ մը կը սեպէ Պղատոն հռետորութիւնը, իսկ ի Գորգիաս՝ իբրև մասն քաղաքականութեան։ Սոկրատ՝ Գորգիաս, Պոլոս և Կալլիկլեսէս իմաստասիրաց հետ կը վիճէ, և հռետորութիւնը ընտանակար կը համարի. և պատճառ կը բերէ թէ շատ անգամ լրմնվ է որ ճշմարտութիւնը կը յաղթուի, և առութիւնը ճարտարախօսին վարպետութեան համեմատ ճշմարտութեան կերպարանք կառնէ։ Սա տրամախօսութեան մէջ Պղատոն ոչ միայն իմաստակաց դէմ կը խօսի, հապա նաև արհամարհելով վար կը զարնէ Սոկրատայ ընդհանրինելը, և առանձինն օրինակաւ զՊերիկլէս, որունք տարտապարտուց այնպիսի մեծարոյ անձ մը բամբասեր էին։ Ուրիշ տրամախօսութեց ...

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 10:44 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մէջ հարցման եւ պատասխանի ձեւով կը խօսի Պլատոն Սոկրատայ բերնէն. խակ ասոր մէջ ճշմարտութիւնը պարզ, միահետ եւ ախորժական ոճով կաւանդէ։

Դ. Փէդրոն կամ Յաղագս հոգւոյ. — Պլատոնի գործոցը մէջ նշանաւորներէն է ասիկայ. եւ զրուցատրութիւն ընողներն են Փեդոն, որ եռքը եղեակական վարժարանը հաստատեց, եւ Եբեկրատէս։ Փեդոն կը պատմէ թէ ինչպէս անցուց Սոկրատ իր կենաց վերջի վայրկեաններըը, եւ թէ հոգւոյ անմահութեան վրայ ինչեր խօսեցաւ կեբէս եւ Սիմմիաս իմաստասիրաց հետ։ Իրաւ է որ նոյն նիւթին վրայ շատ ուղիղ սկզբունքներ կը գտնէ Պլատոն իր վարդապետին բերանը, բայց շատ վիսալականներ ալ կան՝ որոնցմով հոգւոյ փոխութիւնը կընդունի, եւ ուրիշ յունական առասպելներ տուգութիւն կընծայէ։ Կերևնայ թէ Դ. Մագիստրոս Թարգմանած է՝ ի հայս արամախօսութիւնը, որ հիմա կորսուեր է. "Ոչ եմք դադարեալ, կըսէ, ի թարգմանութենէ. ևս քաջալամ մատեանս զոյս ոչ եմք գտեալ ի մեր լեզուս. զերկուս մատեանն Պլատոնի, զՏիմէոսն արամաբանութիւն և զՓեդոնէն, յորս բոլոր ճառն նախագիտակացն այն պարփակեալ կայ, և զայլս բազում իմաստասիրացն. իւրաքանչիւր մատեանքս այս մեծագոյն է քան զտարևոր տօնականս"։ Մագիստրոսի աս վերջին խօսքերը Տիմէոսի արամախօսութեան կրնան յարմարիլ, բայց ոչ Փեդոնին։

Ե. Թէփէ կամ Յաղագս գիտութեան. — Ասոր զրուցատրութիւնը իմաստասիրական զուարճալանութիւն մը կրնանք սեպել, վասն զի ասոր մէջ Պլատոն ոչ միայն ընդհանրապէս իմաստասիրութեան դէմ կը խօսի, հապա նաև ընդդէմ սոկրատեան, մեգարեան, կիւրենեան և կինիկեան փիլիսոփայանաց մէջէն ելած իմաստասէրներուն։

Generated on 2015-03-16 10:44 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

Զ. Իմաստակ կամ Յաղագս գոյութեան. — Ան ալ առջինին շարունակութիւնը կրնայ սեպուիլ, ուր Պղատոն եղեական գպրոցի իմաստասիրաց դէմ կը խօսի. զոր օրինակ գոյութեան խնդրոյն վրայ, և անոր անհնարին ըլլալը կը ցցընէ:

Է. Քաղաքավարութիւն կամ Աբուեսպ պետութիւն. — Տէրութիւններէը կառավարող իշխանաց վրայ է. սրամիտսութեան մէջ Պղատոն ան կարծիքը կը պաշտպանէ թէ Աստուած աստեն ունի յորում մանաւոր խնամքով կը կառավարէ զտիեզերս, և աստեն ալ որ երեսէ կը ձգէ: Այսպիսի կարծիք մը Պղատոնի հանճարին անարժան սեպելով բանասէր քննիչներէն ոմանք՝ հարազատութեանը վրայ կը տարակուսին: Սակայն թէ որ Պղատոնի ալ չէ, ուրիշ իրեն ժամանակակից մարդու երկասիրութիւն սեպելու է, վասն զի Արիստոտէլ ալ կը յիշատակէ՝ առանց հեղինակին վրայ բան մը ըսելու:

Ը. Պարմենիդէս կամ Յաղագս գաղափարաց. — Նախընթաց երեք սրամիտսութեանց շարունակութիւնն է. վասն զի Պարմենիդէս անուանով մեգարեան վարժարանի իմաստասէր մը՝ Իմոպակէ և Յաղագս արուեսպի պետութեան ըսուած Պղատոնի գըրքերուն մէջ իրենց դէմ եղած նախատինքները կարդալով՝ կը պաշտպանէ իր վարժարանը:

Թ. Կրպիլ կամ Ի վերայ ուղղութեան անուանց. — Հետաքրքրական զրուցատրութիւն մըն է զանազան ազգաց լեզուներուն բաժանմանը և յատկութեանց, և առանձինն յունական լեզուի վրայ. թէպէտ շատ սխալ կարծիքներ ունի ատ սրամիտսութեանը մէջ Պղատոն:

Ժ. Փիլեբոս կամ Յաղագս հեդոնեան. — Ան սրամիտսութեան միակ վախճանն է ցցընել թէ ճըշմարտութիւնը ոչ հեշտութեանց մէջ կը գտնուի

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 10:45 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

և ոչ յիմաստուԹեան, այլ 'ի միուԹեան նոցա ընդ միակ բարւոյ, որ է ինքն Աստուած։

ԺԱ. Խնդրե՛ կամ Յաղագս պէրոյ. – Կերևնայ Թէ առոր մէջ Պլատոն իրեն գլխաւոր նպատակ դրած ըլլայ նախ սիրոյ բնուԹիւնը յայտնելու, և երկրորդ՝ արդարացընելու զՍոկրատ ան ամբաստանուԹիւններուն որ չարախօսք ըրած էին վրան առ սիրոյն պատճառաւ։ ԱղաԹոն անունով մէկը իր քերԹողական ասպարիզին մէջ ըրած յաղԹուԹիւնը առիԹ առնելով փառաւոր խնջոյք մը կը պատրաստէ։ Բազմականք կըսկսին սիրոյ վրայ նեղբոզ յօրինել իրենց կարծեացը և յօժարուԹեան համեմատ. վրայ կը հասնի Սոկրատ, և կըստորագրէ Թէ չկայ աւելի սիրոյ արժանաւոր բան մը քան զառաքինուԹիւն, որուն ձշմարիտ և միակ գեղեցկուԹիւնը ոչ երբեք կը կորսուի։

ԺԲ. Յաղագս հասարակապետուԹեան կամ արդարուԹեան տասը գիրք։ ՏրամախօսուԹիւն մէջ նախ արդարուԹեան վրայ խօսք կըլլայ. խօսողներն անոր օգտակարուԹիւնը ցցընելէն ետքը, Սոկրատ աւելի ընդհանուր մեծուԹիւն մը կուտայ անոր։ ԸնկերուԹեանց և պետուԹեանց սկզբնաւորելուն վրայ խօսելով, ան պետուԹիւնը հաստատուն կը սեպէ որ արդարուԹեան վրայ հիմնած է, և յորում ամենայն քաղաքացիք բարոյական օրինաց կը հնազանդին, և միաբան ոգւով հասարակաց բարւոյն կաշխատին. առանձին առանձին կը խօսի միապետուԹեան, բազմապետուԹեան և հասարակաց կամ ընկերահաշիւ պետուԹեանց վրայ, անոնց օգուտներն և վնասներն կըստորագրէ, և այլն։ Ա՛ս հասարակապետուԹեան գրոց մէջ է որ Պլատոն բանաստեղծուԹեան դէմ կը խօսի, և կը պատուիրէ որ սահմանած հասարակաց վարչուԹեանը մէջէն վռնտեն քերԹողքը. ընչից հա

Generated on 2015-03-16 10:45 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ւաստարութիւն կը գնէ, որով նաև կանանց և որդւոց, որ անառեղի մատծութիւն մըն է, ոչ միայն խառվութիւնը վերցընող՝ հապա նաև անհնարին Թշնամութեանց և աղէտից պատճառ: Ան ատեն ժողովուրդք երջանիկ կըլլան, կըսէ, երբոր իմաստասէրք Թագաւորեն, կամ Թագաւորք իմաստասէր ըլլան: Ա գրքին մէջ յայտնի խօսքերով կը բացատրէ Պղատոն իր կարծիքները Աստուծոյ բնութեան, հոգւոյ անմահութեան, չար և բարի գործոց հատուցման վրայ, և այլն:

ԺԴ. Տիմէոս կամ Յաղագս բնութեան օրինաց: — Ա տրամախոսութեամբ կրիտիաս կը պատմէ Թէ ժողովրդեան մէջ հին աւանդութիւն մը կար Թէ դեւկալիոնեան ջրհեղեղէն առաջ Ատենքի մէջ աեսչութեան կերպ մը կար, և եգիպտական նախնի օրինաց կը հպատակէին: Ա աւանդութիւնը պատմելէն ետքը՝ Տիմէոս լոկրեցի իմաստասէրը կը յայտնէ իր կարծիքը որ յաղագս Աստուծոյ, սկզբնաւորելոց բնութեան և աշխարհքի և մարդոյ և կենդանեաց: Ա տրամախոսութիւնը շարադրելու ատեն Պղատոն՝ լոկրեցի Տիմէոս իմաստասիրին մէկ գրքէն որ հիմա ալ ունինք՝ շատ բան քաղած է:

ԺԵ. Կրիտիաս կամ Ատլանտական կղզին. — Առջինին չարունակութիւնն է. վասն զի Տիմէի տրամախոսութեան մէջ կրիտիաս իմաստասէրն իր ուրիշ խօսքերուն մէջ ատ ալ կը զուրցէ Թէ հին աատեն ատլանդական ծովուն մէջ կղզի մը կար բնակչօք հանդերձ, որոնք եռքը ծովուն խորը սուզելով կորսուեցան: Ա իր անուամբն եղած տրամախոսութեան մէջ տեղեկութիւնը կը խօսի անոնց օրինաց, սահմանադրութեանց և կանոնութեան վրայ: Կեղծիք մըն է ասիկայ, և քաղաքակրթական վիպասանութիւն մը կրնանք տեսնել. Թերևս

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 10:45 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ջիպրալթարի հիւսիսային կողմը եղած մեծ գաւառին համար է զոր Սուրաքան ալ կը յիշատակէ։

Ինչպէս Հոմերոսի և Հեսիոդեայ՝ սոսկ ալ Պղատոնի վրայ քննիչներուն ոմանք զանազան կարծիք ունեցան, և իրեն անուամբը գտնուած երաւունըհինգ արուամիսուհիներէն միայն վերը յիշատակուած սոսկըջրուը հարազատ կը համարին. ոմանք ալ կըսեն թէ անոնց մէջէն ալ իրեքը, այսինքն Քղեփավարունի, Խմոպոփ և Պարմենիդես ըսուածները իրենը չըլլան. իսկ մեկալ քսանըմէկ արուամիսուհիները բոլորովին դուրս կը ձգեն, իբրև Պղատոնի հանճարին անարժան։ Բայց որովհետև քննչաց մէջ ալ երկպառակութիւն կայ, որով մէկուն ըսածին մէկալը չի հաւանիր, մենք երեսունըհինգն ալ կարդաս կը նշանակենք։

ԺԵ. Յաղագս օրինաց, տասներկու գիրք.— Պղատոն իր աս օրինաց գրքին մէջ աւելի հասուսուն և մարդկային քնութեան յարմար օրէնքներ կը հաստատէ, քան ինչ որ Հանրապետութեան գրոցը մէջ սահմանած էր։ Աս զրուցասրութեան հանդիսարանը կրնաս կոչել սեղուած է։ Նախ Մինոսի և Լիկուրգոսի օրինաց վրայ իր քննութիւնները կընէ Պղատոն, և թէ անոնք ուրիշ վախճան չունէին ան կարգադրութիւններն ընելու ատեն, բայց պատերազմող և վայրենի ընել ժողովուրդը։ Եաքը յոյն և անյոյն ժողովրդոց վրայ խոսելով՝ անոնց ախտերն և անուղղութեան հնարից վրայ կը մտածեն։ Ան նախաշաւիղ սեղուած սեղեկութիւններէն ետքը չորրորդ գլուքին մէջ կըսկսի առուածոց պաշտամանն վրայ խօսիլ, և թէ ամեն քաղաքականութեան հիմունքն արժան է որ կրօնից վրայ դրուած ըլլան։ Հինգերորդ գրքին մէջ ընկերական կենաց, և մարդուս

առ Ծնողս, առ որդիս, առ քաղաքակից և առ օտարս ունեցած պարտքերուն վրայ կը խօսի. և Թէ ինչ տեսակ պետութիւն ամենէն աւելի յարմարագոյն կը սեպուի մարդկութեան: Հոն Պլատոն ձգած է իր առջի երևակայական կարծիքը զոր Հասարակապետութեան գլուխ մէջ բացատրեր էր ընչից կանանց և որդւոց հաւասարութեան վրայ: Վէցերորդ գլքին մէջ իշխանաց վրայ կը խօսի Պլատոն, և օրինաց ամուսնութեան և գերութեան. եօթներորդին մէջ որդւոց դաստիարակութեան վրայ. ութերորդ՝ հասարակաց ուներու և վաճառականութեան կարգաց վրայ. իններորդին մէջ յանցանաց վրայ. տասներորդին կրօնից. մեռածներորդին ընկերական կենաց մէջ հանգիստած գործողութիւններու, ինչպէս գաշանց, կտակաց վրայ, և այլն. իսկ երկոտասաներորդին մէջ զանազան նիւթոց վրայ կը խօսի, ինչպէս զինուորական հրահանգաց, երդման, ընդ օտարս վաճառականութեան, իրաւանց ընչից, նախագրաւութեան:

ԺԲ. Եպինոմիս կամ Ժողով գիշերային. — Ա տրամախօսութիւնը ամանք օրինաց գրքին երեքտասաներորդ գլուխը կը համարին:

ԺԳ. Մէնոն կամ Յաղագս առաքինութեան. — Պրոտագորաս, Փեդրոս Գորգիաս և Փեդոնէ զանազան առարկութիւններ կընեն առաքինութեանց վրայ և կը լուծեն. ամենէն գլխաւոր առարկութիւնն աս է Թէ արդեօք առաքինութիւնը կըրնամք ուսմամբ ստանալ:

ԺԴ. Եօթիդեմոս կամ Շաղակրատ. — Սոկրատ կրկտոնի կը պատմէ Թէ ինչպէս Եւթիդեմոս և Դիոնիսոդոր անուամբ երկու իմաստասէից հետ հակաճառութիւն ըրեր է. վար կը զարնէ անոնց սուտ և խախուտ ձեռնարկութիւնները և իրենց վարժարանին իմաստասիրութիւնը:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 10:46 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԺԹ. Քարմիդես կամ Յաղագս լեփաւորութեան. — Ի սմա զրուցատրութեամբ Սոկրատ կարհամարհէ Քարմիդես անունով ազատանի իմաստասիրի մը ձեռնարկութիւնները և վարդապետութիւնները յաղագս չափաւորութեան:

Ի. Լիսիս կամ Յաղագս բարեկամութեան. — Կը քննէ Պղատոն թէ ինչ բանէ առաջ կու գայ սէրը և բարեկամութիւնը:

ԻԱ. Աղկիբիատես առաջին կամ Յաղագս բնութեան մարդկան. — Աղկիբիատ իր անանձն փառասիրութեանէն յորդորուած՝ առանց իր տգիտութեանը և անփորձութեան նայելու կուզէ հասարակապետութեան գլուխ կենալ. Սոկրատ կը յորդորէ զինքը որ նախ իրաւանց և քաղաքականութեան տեղեկութիւն ունենայ:

ԻԲ. Աղկիբիատես երէորդն. — Սոկրատ կը ցցընէ Աղկիբիատեայ թէ ընդունայն բան է մարդկանց ատտուածոց աղօթք ընելը, մինչդեռ անոնք մեր պիտոյքը մեզմէ լաւ կը ճանչնան և կը անօրինեն: Ան որամախօսութեան թէ ոճը և թէ զգացմունքը տարբեր ըլլալով հաւանական կերևնայ որ Պղատոնին չըլլայ:

ԻԳ. Մէնէքսենոս կամ Տապանագիր. — Դամբանական գովեստ մը հայրենեաց համար ընծեռող աթենացւոց վրայ, որն որ Ասպասիայ բերանը գրած է Պղատոն, և կըսէ թէ յանպատրաստից զրուցած ըլլալ, և վախճանն է ցցընել թէ հռետորական արուեստը գիտութիւն մը չունի: Ան զրուցատրութեան ալ յատաջաբանը և վերջաբանը եաքէն աւելցուցած կերևնան:

ԻԴ. Լաչէս կամ Յաղագս քաջութեան. — Պղատոն ան որամախօսութեան մէջ կուզէ հասկցընել թէ բուն քաջութիւն ըսած բանին յատուկ նշանակութիւնն ինչ է. և թէ դասախօսակութիւն

Generated on 2015-03-16 10:46 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ըսածնիս՝ միայն ոտից ատաղձին չարժմունքը կըրթելուն վրայ չէ :

ԻԵ. Հիպոխա մեծն կամ Յաղագս գեղեցկին. — Երգիծաբան դրուելիւն մըն է, ընդդէմ Հիպոխա իմաստակին :

ԻԶ. Հիպոխա կրպնէն կամ Յաղագս սրտնեան. — Ա զրուցատրուելիւնն ալ գլխաւորաբար նոյն անատարած Հիպոխասայ և ընդհանրապէս ուրիշ ամէն իմաստակաց դէմ է :

ԻԷ. Ե-Ռիֆրոն կամ Յաղագս բարեպաշտունեան. — Որովհետև Սոկրատայ ամբաստանուելէն եաքը շարադրուած է ատ տրամախօսուելիւնը և գատապարտուելէն առաջ, Պղատոն իբրև չատագովուելիւն իր վարդապետին դրած է թէ ինչպէս տուտ է Սոկրատայ համար ամբարիշտ ըսելը, և թէ ընդհակառակն ինչ բարեպաշտ զգուշութիւններ ունէր :

ԻԸ. Յոն կամ Յաղագս Իլիականին. — Պղատոն վար կը զարնէ ոմանց ան կոյր սէրը բանաստեղծուելեան և ատ բանաստեղծս, առանց անոնց ճշմարտուելեան և սկզբանց ուղղուելեանը ուշ դնելու :

ԻԹ. Քսենոֆոն-Ենան Սոկրատայ. — Սոկրատայ մահուընէն եաքը շարադրեց Պղատոն՝ իբրև իրեն վարդապետին երախտագիտուելեան յիշատակ մը և գովեստ բոլոր Յունաց և աշխարհքի : Դարձեալ ինքն Սոկրատ է խօսողը, և իր անմեղուելիւնը և չարասիրաց ամբաստանուելիւններուն ատուելիւնը անանկ լաւ կը ցցընէ որ մարգուս սրտին վրայ աւելի մեծ յաղթանակ կանգնել կու տայ անմեղուելեան :

Լ. Կրիտոն կամ Յաղագս պարտուց առն փաղփղոյ. — Սոկրատայ բանտին մէջ եղած ատենը՝ Կրիտոն իր բարեկամը կու գայ զինքը մխիթարելու, և խորհուրդ կու տայ որ պահապաններէը

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 10:46 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կաշառելով եւլէ փախչէր : Սոկրատ կը սիրէր թէ լաւ քաղաքացւոյ մը պարտքն է միշտ իրեն վրայ տէրութիւն ունեցող իշխանութեանց հպատակ ըլլալ, և թէ մարդ նեղութիւնները բանի տեղ պիտի չնսեպէ, ալ միայն իրեն պարտուցը մտածելը ըլլայ :

ԼՍ. Թէագէս կամ Յաղագս իմաստութեան. — կը ցցընէ թէ ինչ տարբերութիւն ունէր Սոկրատայ իմաստասիրութեան վարդապետութիւնը ուրիշ իմաստակաց տրուեցուցածէն, և թէ ինքը ոչ միայն կը կրթէր իր աշակերտքը, ալ նաև կը հրահանգէր ընկերութեան մէջ առաքինի վարքով ապրելու :

ԼԲ. Նախանձոտ կամ Սիրոյ իմաստութեան. — Ուրիշ արամախօսութեանց ուժը և գեղեցկութիւնը չունի. վախճանն է ցցընել թէ Սոկրատ առաքինութիւնը և արդարութիւնը ամէն բանէ վեր կը սեպէր :

ԼԳ. Հիպպարքոս կամ Շահասէր. — Իմաստակաց սուտ վարդապետութիւններով հիւսուած տրամախօսութիւն մը, որ հաւանական կերևնայ թէ Պղատոնինը չըլլայ :

ԼԴ. Մինոս կամ Յաղագս օրինաց. — Մինոս անունով մարդու մը հետ օրինաց բնութեան վրայ կը խօսի Սոկրատ. աստր հարցապատութեանը վրայ ալ իրաւամբ կը տարակուսին քննադատք : Նոյնպէս ան հարցասէր կը սեպուի նաև հետագայ տրամախօսութիւնը :

ԼԵ. Կլիտոփոն կամ Յաղագս յորդորանաց. — Առաքինութեան բնութեանը վրայ, որ ամբողջ ալ մեր ձեռքը հասած չէ :

Հինգերէն ոմանք զանազան տրամախօսութիւններ չարադրեցին, և իրենց գրութեանցը յարգ տալու համար Պղատոնին անունամբ հռչակեցին. ասոնք են

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 10:46 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ա. Երիքբաս կամ Յաղագս Ճոխութեան.
Բ. Աղկիոմէն կամ Յաղագս հոգեփոխութեան.
Գ. Սիւսիփոս կամ Յաղագս սրոշման.
Դ. Ա.քսիոքոս կամ Ի վերայ մահուան.
Ե. Դեմոդոկոս կամ Յաղագս խորհրդոց.
Զ. Սահմանք.
Է. Յաղագս առաքինութեան, և թէ միթէ իցէ ստանալ զայն ուսմամբ: — Որովհետև Մենոնի խորագիրը, ու գրեթէ քիչ շատ նոյն խնդասանները կը բովանդակէ, ուստի կը կարծեն բանասէրք թէ անոր առաջին շարադրութիւնն ըլլայ, և զոր եաքը մանաւոր չանիւք յղկեր ու կատարելագործեր է:

Պղատոն խմսպասէր. — Պղատոնի երկասիրութիւնքը նշանակելնէս եառքը՝ հարկ է որ քանի մը խօսք ալ իրեն խնդասասիրական վարդապետութեանց վերայ ըսենք: Խնդասասիրաց մէջ առնէն աւելի ողջամիտն ըլլալով, մեր մանաւոր մտադրութեանն արժանի է:

Սոկրատ իրեն բարոյականին սկիզբ կամ հիմն՝ անձին ճանաչմանը և իր կրքերը չափաւորելուն վերայ սահմաներ էր: Պղատոն ընդունեցաւ նոյն կարծիքն իբրև ճշմարիտ, բայց բաւական չսեպեց: Տեսաւ որ նոյն կարծիքը բարոյականի հիմն չի կրնար ըլլալ, մինչդեռ անհիկայ հարկ է որ կրօնից հետ անմիջական յարաբերութիւն ունենայ: Բարոյականն ասանկ կը սահմանէր Պղատոն. մշակուն և աստիճանական բերումն դէպ՝ի կատարելութիւն: Արդ որովհետև բացարձակ կատարելութիւնն է Աստուած, ուստի Պղատոնի բարոյականին հիմն է կրօնից գաղափարը: Հոգին՝ անմահ կեանք մը, կը կոչէր, կորսուական բանի մէջ ամփոփուած. և անոր գերագոյն էութիւնը վերայ լաւ գաղափար մը ունենալով՝ չանաց դէպ՝ի բուն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 10:47 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

իւրն նախկին ծագումը վեր հլլել: Ուշադիր աչքի իւրեն քննութեանցը խորունկը մտաւ, այնչափ լաւ ըմբռնեց անոր աշխատութիւնը, և ինչ պատրաստութիւնով և զանկակոյ փառասիրել չէ թէ արհամարհութեամբ նուաստացընել: Ա՛ս սկզբունքը իրմէն առաջ եղող հեթանոս իմաստասոց մէջ՝ ինչը չէր կրցած ըմբռնել:

Պղատոնի վարդապետութեանցը մէջ Աստուծոյ և առաքինութեան գաղափարը իրարմէ անբաժան են: Ջոփոփուլոնեան դրացը մէջ Սոկրատայ բերանը կը դնէ այն նշանաւոր խօսքը թէ "Աւանդելէն պէտք չէ վախնալ. այլ պէտք է զգուշանանք Աստուծոյ դէմ անիրաւութիւն գործելէն, և Աստուծոյ՝ կամ մեզմէ լաւ մտածող մարդկանց անհնազանդութենէն": Ընդհակառակ սոփհիստութեանը մէջ ալ կրօնից առաքինութեան իրարու հետ ունեցած յարաբերութիւնը կը ցցընէ, և զանոնք իրարու նման (identique) կը սեպէ: Աստուածպաշտութիւն մը հեթանոս իմաստասիրի բերնէն լսելը մեծ բան է:

Պղատոն՝ մեր տէր Աստուած ունեցած պատրաստութեան վայ ձիշդ, կամ աւելի լաւ ըսեմ, յայտնութիւնք չի կրնար ընծայել. և զարմանք չէ: Քրիստոնեայ իմաստասիրայ պահուած, և աստուածային յայտնութեան լուսով ամրացած սկզբունք՝ ան կրօնքը չունեցողէն և ան Աստուածը չճանչցողէն չէին պահանջուեր: Բայց մարդու առ մարդ ունեցած պարտեսյը վայ, որ բնական և քաղաքական կրթութեանց հիմն է, շատ ընտիր սկզբունք ունի: Ինչպէս իրմէն առաջ եղող ուրիշ հին իմաստասէրք, ասանկ ալ Պղատոն ամէն բանէ աւելի կը պատուիրէ անձին ծանօթութիւնը (ծանիր զքեզ). "Անձին ճանաչումը, կըսէ Ալկիբիատ կամ յաղագս բնութեան մարդ-

Generated on 2015-03-16 10:47 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

պոյ ըսուած արամախօսութեանը մէջ, սկիզբն է ամենայն կատարելութեանց։ Իակի մը կատարելութիւնն՝ իրեն բնութեան հաւատարմութեանը վրայ է,,։ Բայց ասիկայ բաւական չէ. կը պատուիրէ որ իմաստութեան եռևէ ըլլանք. "Վասն զի ագիտութիւնը, կըսէ, արգելք է բարւոյն ձանաչմանը, և իսափանարար առաքինութեան,,։ (Պրոպոզոս)։ Փէդոն կոչուած զրուցատրութիւնը գեղեցիկ վարդապետութիւն մըն է անմահութեան հոգւոյ. Սոկրատ՝ իրեն վարուցը և իմաստասիրութեան արժանի խօսքերով վերջի շունչը կու տայ։ Կրիտոնի մէջ բուն հայրենասիրութեան ինչ ըլլալը կը ցցընէ. Ջոպոգոլոնէոմ՝ առ արդարութիւնն ունեցած պարտքերնիս կը բացատրէ, և այլն և այլն։

Պղոտոնի ոճը ի՞նչ գրուելան կերպը. — Պղատոնի յատուկ սեպուած անհամեմատ և գերազանց ոճին վրայ այլևայլ քննիչք զանազան գովեստներ գրած և խօսած են. բայց անոնց մէջ ամենէն աւելի լաւ կը բացատրէ հռովմայեցի բանասիրաց գլուխը Կուինտիլիանոս. "Ան ամէն իմաստասիրաց մէջ, կըսէ, որոնց ընթերցմամբը Մարկոս Տուղղիոս գերազանց ճարտարախօս եղաւ, գլխաւոր սեպելու է զՊղատոն, թէ իրեն նրբախօս ոճովը, և թէ աստուածային հոմերական զրուցուածքի եղանակաւը։ Վասն զի Պղատոնի ոճը շատ վեր է և անհամեմատ առաւելութիւ՝ արձակ գրուածքի կերպէն... անոր համար ինծի կերևնայ թէ ոչ մարդկային հանճար է իր ունեցածը, այլ ան գերմարդկային ոգիներէն մէկը՝ որոնք գերկնական եռռոանեսյն վրայէն պատգամ կուտային,,, Նոյն ինքն Կիկերոն ալ կըսէ թէ իմաստասիրաց մէջ առակ եղած էր, որ եթէ Աթտմազդ յունարէն ուզենար խօսիլ, հարկ էր որ Պղատոնի լեզուն գործածէր։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 10:54 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԼՈՒԽ ԻԹ.

ԱՐԻՍՏՈՏԷԼ ԵՒ ԹԷՈՓՐԱՍՏՈՍ

Արիստոտել. – Գրուածքները նորա. – Թէոփրաստոս. – Նկարագիրը։

Արիստոտելի վարքը. – Արիստոտել, ինչպէս հռչակաւոր կերևնայ, իննսունուինն երրորդ ոլիմպիադին ծնաւ Մակեդոնիոյ Ստագիրա քաղաքը, քրիստոսէ 384 տարի առաջ։ Իր հայրը Նիկոմաքոս անուանի բժիշկ, և մակեդոնացւոց Ամինտաս Թագաւորին մտերիմն էր, հին և ազնուական ցեղէ. վասն զի իրենց ազգատոհմին սկիզբը յԱսկղեպիոս (բժշկութեան աստուածը) կը սեպէին։ Դեռ տղայ էր Արիստոտել երբոր իր ծնողքը կորսընցուց, և Պրոքսենէս անուանով ազգականը քովէն առաւ զինքը, ու գաստիարակութիւն տուաւ և գիտութեանց հարկաւոր սկզբունքը ուսանողն ինքն եղաւ. ան պատճառաւ Արիստոտել անոր փոյթեռւանդն ինամոցը ինքզինքը պարտական կը սեպէր, ինչուան իր ծերութիւնը։ Տասնըեօթը տարեկան եղած ատենը՝ Պղատոն մեծահռչակ փիլիսոփային աշակերտեցաւ Արիստոտել Աթենքի մէջ, և ակադեմական նոց վարդապետութիւնները ամեն ջանքով սորվելու եաւէ ընկաւ, քսան տարի ամբողջ նոյն դպրոցին մէջ կեցնալով։ Պղատոն իր աշակերտին կարգէ դուրս հանճարը տեսնելով կը զարմանար։ Փսեւնոկրատէս անուանով ուրիշ աշակերտ մըն ալ ունէր. և ասոնք երկուքին ուսումնասիրու-

Generated on 2015-03-16 10:54 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

Թիւնն իւարու հետ բաղդատելով "Առջինը սան-
ձի կարօտ է, կըսէր, միւսը մտրակի,,: Դիոգե-
նէս լայերտացին կը պատմէ Թէ Պղատոն հարկա-
ւոր բանի մը համար Ալեքսէն հեռանալով ճե-
մարանին կառավարութիւնը Արիստոտէլի յանձ-
նեց. ան ալ իր ուսուցչին կարծեացը և վարդա-
պետութեանց հակառակ սկզբունքներ սորվե-
ցընելով Պղատոնի շատ անհաճոյ եղաւ և մե-
ջերնին գժտութիւններ և երկպառակութիւններ
ալ անցած: Ա՛ս պատմութիւնը չենծու ալ սե-
պենք, սակայն յայտնի է որ Արիստոտէլ Պղա-
տոնէն լուսաւորուելով եսքը իրեն համար ա-
ռանձին վարդապետութիւն սահմանեց անոր մա-
հուընէն եսքը, (Քրիստոսէ 348 տարի առաջ):

Արիստոտէլ Քաեռնոկրատեայ ընկերելով փոքր
Ասիոյ Ատառնէա քաղաքը գնաց, հոնտեղի իշ-
խող կամ բռնաւոր Հերմիաս Թադաւորին քով,
որ միանգամայն իմաստասէր ալ էր. վասն զի ինքն
ալ Արիստոտէլի հետ Պղատոնէն սորված էր իւ-
մաստասիրութիւնն Ալեքսի մէջ, և ան տեսնէն
մէկմէկու վրայ սէր և համարում ունեցեր էին:
Արիստոտէլ իրեք տարի անոր քով կենալէն եա-
քը, Հերմիաս ցաւալի և անգութ մահուամբ մը
պարսիկներէն սպաննուեցաւ. իմաստասէրը շատ
վշտացաւ իր առատաձիտ բարեկամը կորսընցնե-
լուն վրայ. եսքը անոր Պիւթիաս անունով քոյրը
իրեն կին առաւ, ուսկից զաւկներ ալ ունեցաւ:

Ատառնէացին եղաւ Արիստոտէլ ու Քաեռնոկ-
րատեան հետեռաձ Մեթիմնէ քաղաքը քաշուե-
ցաւ. բայց հոն ալ երկար տեսեն չկրցաւ կենալ:

Արիստոտէլի գրուածքները. — Զանազան և բազ-
մաթիւ գրուածք շարադրած է Արիստոտէլ, բայց
անոնցմէ սակաւաքիչ բան հրատարակեց, ու մնա-
ցածները քովը կը պահէր: Ինքը երբոր մեռաւ,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 10:55 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Հոռոչ (ésotérique) ըսուած գրուածոց ձեռագիրները թէոփրաստեայ ձեռքն անցան, որ եաքը Նէլէոս ակեպսիկեցւոյն թողուց: Ինչ ալ ժառանգները վախնալով որ չըլլայ թէ Պերգամոնի թագաւորը ձեռնըկնին եղած գանձուն համար զնրենք նեղէ, սորեբկրեայ տեղ մը դրին ու հոն ծածկուած մնացին հարիւր իննսուն տարրի չափ: Մեծին Միհրդատայ ժամանակակից Ապելլիկոն անունով հարուստ աթենացի մը՝ բոլոր ան գրուածները գնեց ու Աթէնք փոխադրեց. ուր Սիլլայի ձեռքն իննալով Հռոմ խրկուեցան, և հրաման տրուեցաւ որ ամէնքը կաքեանան գաղափարել: Օրինակ մըն ալ Տիբրանիոն (կամ Տիրան հայկազն) մաուռնապետեան առաւ, որուն վրայ Անդրոնիկոս հռոդացի այլևայլ մեկնութիւններ և ծանօթութիւնք շարադրեց:

Դիւրութեան համար Արիստոտէլի գրուածքները այլևայլ դասակարգութիւնք կը բաժնենք:

Արիսթո-փեէի փրամբանական գրուածները. — Սթրոփոնիւն, (Catégorie) տասն գիրք. զորս Նէլէնասիկ խրմնութեամբ հայերէնի դարձուցած է Դաւիթ անյաղթի իմաստասէրը. որոնց մեկնութիւնն ալ առանձինն շարադրեր է:

Դաւթի անյաղթին ուրիշ գործոցը հետ տասնք ալ ապագրած են այլևայլ տեղուանք, և վերջը՝ի Վենետիկ համեմատութեամբ գրչագրոյ՝ի 1833:

Մէնոռիւն կամ Պերիմենիաս գիրք, որ քերականական ուսմանց այլևայլ մասանցը վրայ կը խօսի. տասը ալ թարգմանութիւնը և մեկնութիւնն ըսած է Դաւիթ, և առջիններուն հետ տպագրած:

Վէրը-ձոռիւն, չորս գիրք, որոնց առջինին միայն մեկնութիւնն ըսած է Դաւիթ:

Յաչափ փեղէոյ, վեց գիրք, որ ամբողջ տրամաբանութիւն մը կրնայ անուանիլ:

Generated on 2015-03-16 10:55 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

Յաղագս իմաստակութեանց, երկար գիրք:

Արիստոտէլի բնազանցական գրուածները. — Բնազանցութիւն (metaphisique) ասանըշդրա գիրք: Կասանգեն թէ Անդրոնիկոս Հռոդացին Արիստոտէլի այլեայլ գրուածքները կարգի վրայ ուղեղով առնել՝ զանազան գասակարգութիւններ բաժնեց. օրինակ իմն, Ճարտասանականները առանձին, քերթողականները զատ, և այլն. և ամենէն վերջը գրաւ բնաբանական գրուածները: Բայց այլեայլ Ճառեր ալ ճնացին, որոնք չէր գիտեր ո՛ր գասակարգութեան մէջ անցընել, որով հետև նոր գիտութեան մը կը վերաբերին, որ իրեն անծանօթ էր. ուստի բոլորը մէկտեղ առաւ նոյն գասակարգութեան վերջը գրոշմեց, խորագիր դնելով. Յետ բնաբանութեան (որ յունարէն կըսուի τῶν μετὰ τὰ φυσικά): Թէպետև աս անունը ոչ Արիստոտէլի և ոչ ուրիշ հին յոյն և լատին հեղինակաց գրուածոց մէջ կը գտնուի: Որով անկէ ետքը եւրոպական լեզուաց մէջ սովորութիւն եղաւ նոյն անուամբ կոչել բարձրագոյն իմաստասիրութիւնը: Իսկ մեր լեզուաւ Բնազանցութիւն նոյն ուսման աւելի պատշաճական իմաստը կու տայ իրեն բարձրագոյն փիլիսոփայութիւն ըլլալը իմացընելով:

Շատ վէճեր եղած են իմաստնոց մէջ աս բնազանցութեան չորեքտասան գրոց հարազատութեանը վրայ. վասն զի ասոնցմէ ոմանք Արիստոտէլի կերևնան, ոմանք ալ իրեն աշէն բոլորովին տարբեր, ուստի և ապիտաբար իրեն ընծայուած: Ա՛ս բանիս վրայ ամենևին զարմանալու չէ, թէ ինչպէս մէկ գրուածքի մը մէկ գլուխը մէկուն ըլլայ և միւսը ուրիշին. օրավհետև հնոց մէջ կըլլար որ գիտութեան մը մէկ մասին և ան մասին ալ մէկ նիւթին վրայ կը գրէին, ու ետքը ուրիշներու ամ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 10:55 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

բողքացընելով նոյն մատենագրին անուամբը կը հրատարակէին :

Յաղագս կրթելոյ քրէնոփոնպէայ . Զէնոնի և Գոր-գիայ , (ի բնաբանականս և ի բնազանցականս) , իրեք գիրք : Ա անուամբ Արիստոտէլի մեկնիչքը հաւաքեր են իրեն իրեք զանազան գրուածոց այլ և այլ հատուածները :

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ . — Յաղագս հոգւոյ , իրեք գիրք , որ Արիստոտէլի գլխաւորագոյն և դժուարին գրուածներէն մէկն է :

Ծանօթութիւն դիմոյ . — Դիոգինէս և Ստոբէոս ասերկասիրութիւնն ալ կը յիշատակեն իբրև Արիստոտէլի հարազատ . բայց որովհետև հին մեկնիչք ամենևին ասոր իսօքը չեն ըներ , և ձեռքերնիս եղած յոյն բնագիրն ալ ատոգիրացի փիլիսոփային այնչափ արժանաւոր չերևնար , ուստի հաւանական է կարծելը թէ իրեն չըլլայ :

ՀՈԵՏՈՐԱԿԱՆ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ . — Հոէպորոնի կամ Արուեսպ ճարպարխօսութեան , իրեք գիրք : Ա ալ Արիստոտէլի գլխաւոր գրուածներէն մէկն է , և որով ինչուան մեր ատենը օրէնադիր սեպուած է ճարտասանական արուեստի :

ՃարպատանութիւնՔ ԱՂԷՔսանդրոս . — Զոր ոմանք ի հմտագունից Ալեքսիմենեայ լամպսակեցւոյ կընծայեն , ուրիշներն ալ աւելի հաւանականաբար՝ կորաքսայ սիկիլևացւոյ :

ՔԵՐԹՈՂԱԿԱՆ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ . — Քերթողական երկասիրութեանց մէջ՝ բաց ի այլևայլ երգերէն ի պատիւ քաջացն Յունաց , որունք Հոմերոսի Իղիականին մէջ կը յիշատակուին , Արիստոտէլի գլխաւոր գրուածքն է

ՔԷՐՆՈՂԱՆ ԱՐՈՒԵՍՓԸ , յորում դիւցազներգակ և ողբերգակ քերթուածեան կանոնները կատարեալ , և բաժինները՝ անուանի վարժապետաց օրի-

Generated on 2015-03-16 10:55 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

նակներով կը հաստատէ : Յայտնապէս կերևնայ Թէ Թերի է սա գրուածքը . բայց անով ալ մեծ յարգ ունի իմաստնոց առջև , և ամէն գիտուն մարդիկներէ կը կարգացուի և կը գովուի :

ԲԱՐՈՑԱԿԱՆ ԳՐՈՒԱԾՆԵՐ . — Զորս այլևայլ բարոյական երկասիրութիւնք կընծայուին Արիստոտէլի , որոնց առջինը միայն հարազատ կերևնայ , և է

Բարոյական առ Նիկոմախոս , իր որդին , տասը գիրք . որ այսպիսի գրուածոց մէջ առջինը կրնայ սեպուիլ , և հին աշխարհքին մեզի ամենագոյ ուսումնական գանձերէն մէկը :

Մեծ բարոյական իմաստասիրութիւն , որ առջինին համառօտութիւնն է . մեծ տարակոյսներ եղած են ասոր հարազատութեանը վրայ :

Բարոյական առ Եւդեմոս հոդիպոյ , եօթը գիրք . ասոնց ալ անհարազատ կը սեպուի , և ոմանք կը համարին Թէ նոյն իսկ Եւդեմեայ հոդացւոյ աշխատասիրութիւնն ըլլայ , որ Արիստոտէլի աշակերտն էր :

Յաղագս ախպէյ և առաքինութեանց . — Այլևայլ հատուածք , զորս Ստոբէոս հաւաքած է :

Մեր հինգերորդ դարու Թարգմանութեանց մէջ առաքինութեանց վրայ ընական մը Արիստոտէլի անուամբ , որուն Թարգմանութիւնը Դաւթի անյաղթի կընծայուի . Յաղագս առաքինութեանց , առ Աղէքսանդրոս Նագառ . “ Գովելի են գերեցիկքն և պարսաւելի գարշելիքն . . . (Տպ . Վենետ . 1833) :

ՔԱՂԱՔԱՎԱՐԱԿԱՆ ԳՐՔԵՐ (Politique) . — Ա նիւթին վրայ Արիստոտէլի շարադրած հռչակաւորագոյն գործն էր Քաղաքավարութիւն հարիւր յիսուն և ութ քաղաքաց ընտրած գիրքը , որ հիմա կորսուած է : Այսպիսի կորստեան մը մեծութիւնը ցցընելու համար սա միայն բանք որ նախնեաց՝

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 10:56 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ընթերցի սահմանադրութեան վրայ աւանգած ամէն աւելկուտիքը աս գրքէն առնուած են։ Նոյնպէս ընտիր գրուածք մըն էր Յաղագս իրաւանց պաթերազմի ըսուածը, զոր Ամմինիոս և Դիոգինէս լայեըտացի կը յիշատակեն, և հիմա կորսուած է։

Միայն ձեռագրնիս հասած է Արիստոտէլի մէկ ուրիշ գրուածը, Քաղաքավարութեան կոչուած, ուր թը գիրք։ որ հեղինակին գլուխ գրուածոց և բազմամեայ քրտանց արգասիքը կը սեպուի, որովհետև վաթսուն տարուան հասակին սկսաւ շարադրել։ Հասարակաց իրաւանց վրայ կը խոսէ աս գիրքը, և անհամեմատ առաւելութեամբ ընտիր է քան զպղատոնեան համանուն երկասիրութիւնը։

ՈՒՍՈՂԱԿԱՆ կամ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՆ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ։ — Ա՛ս նիւթիս վերաբերեալ երկուս գրուածք ունի Արիստոտէլ։ Խնդիր առողջանք և Յաղագս անհոգանելի գՅ։

ԲՆԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ։ — Ընդհանուր բնաբանութիւն, ուրը գիրք։

Յաղագս աչխարհի, ևս Աղեքսանդր նոգոր։ — Օգտակար երկասիրութիւն մըն է ասկայ, բայց հարազատութիւնը վրայ զանազան կարծիք և չմիաբանութիւն ունեցած են բանասէրք։ ազգերնուս ալ այդէն ծանօթացած՝ հայկական թարգմանութեամբ, և Դաւթի անյաղթ փիլիսոփային գրուածոցը հետ տպագրած։

Յաղագս էրինէց, չորս գիրք, անհարազատ։

Յաղագս լինելութեան և ապականութեան։

Օդաբանութիւն կամ Մեքեորաբանութիւն, չորս գիրք։

Յաղագս պեղեաց և անուան հողմոց, որ յայլոց՝ Թէոփրաստեայ ընծայուած Յաղագս նշանաց ըրսանոց ըսուած գրքէն հատուած կերևնայ։

ԲՆԱՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ։ — Պատմա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 10:56 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ըի՞ն կ'ենթանայ, ասոր գիրք։ Արիստոտել հայր կը սեպուի բնապատմութեան (histoire naturelle), և կաւանգեն թէ Աղեքսանդր միլիոններ ծախած ըլլայ, իր վարժապետին հարկաւոր եղածը ձեռք բերելու համար։ Արիստոտել թէպէտ յիսուն գիրք բնապատմութիւն շարադրեց, բայց մեր ձեռքը հասածը միայն առջի ասոր գրքերն են։ Հիմա թէպէտ շատ ծաղկած է բնական պատմութեան ուսումը, բայց տակաւին մեծ յարգ ունի Արիստոտելի աս գրուածքը, իր ճշդութեանը և կարևոր գիտողութեանց պատճառաւ։ Ուրիշ այլևայլ մանր երկասիրութիւնք ալ նոյն նիւթին վրայ կը գտնուին Արիստոտելի անուամբը։

Տնտեսագրութիւն.— Տնտեսական, երկու գիրք. որուն երկրորդ գրոց վերջերը միայն հարազատ կը համարին քննադատք. ամենք ալ բոլորովին կը մերժեն իբրև անարժան արիստոտելեան հանճարոյ։

Կըսեն թէ Արիստոտել երկու պատմական գրուածք ալ շարադրեր է, որոնց առջինը Աղեքսանդրի վրայ էր, և երկրորդը յունական իմաստասիրութեան գրութեանը վրայ։ Վասն զի մակեդոնացւոց Թագաւորը Փիլիպպոս՝ անոր իմաստութեան և հանճարոյն համբաւը լսած ըլլալով, իր քովը կանչեց զինքը՝ Աղեքսանդր որդին դաստիարակելու համար։ Կը պատմեն թէ Փիլիպպոս Աղեքսանդրի ծննդեանէն եաքը՝ Ա՛ն Արիստոտէլի այսպիսի նամակ մը գրած ըլլայ, թէ "Գիտցած եղիր՝ որ աստուածներն ինծի որու զաւակ մը պարգևեցին. ես ալ անոնց շնորհակալ ըլլալու կրկին պարտք ունիմ, նախ՝ որդի մը շնորհելնուն համար, և երկրորդ՝ քու աստենդ պարգևելնուն. կը յուսամ որ քու կանխագիտ մեզի արժանաւոր՝ և մակեդոնացւոց Թագաւորութեան ընտիր ժա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 10:56 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ռանգ մը կըլլայ ,,: Ա՛ս հրաւէրքը Թագաժառանգ սրբայորդւոյն և իմաստասիրին ալ օգտակար եղաւ. վասն զի Ալեքսանդրի դաստիարակ ըլլալուն պատճառաւը՝ շատ հռչակեցաւ Արիստոտէլի համբաւը: Երբոր Ալեքսանդր միահեծան Թագաւորեց, Արիստոտէլ նորին Ամենք դարձաւ, և Լիկէան (lycée) ըսուած իմաստասիրութեան վարժարան մը բացաւ ուր օրը երկու անգամ դասախօսութիւն կընէր, մէյմը առտուները՝ իր քաջուշիմ և փութաջան աշակերտացը համար, մէյմն ալ իրիկուան դէմ նոր ակառնեբուն: Ալեքսանդրի մահուընէն ետքը Արիստոտէլի վրայ անաստուածութեան կարծիք ունեցան ամենայիք, և Եւբիոյ Քաղկիս քաղաքն ապաստարեցին զինքը. հոն վաթսունուերկու տարուան մեռաւ:

Ոմանք կը պատմեն Թէ Արիստոտէլ իր աքսորանաց ժամանակը՝ եւրիբեան ծովուն մակընթացութեան և տեղատուութեան պատճառը քննել ուզելով և չկրնալով ըմբռնել՝ ինքզինքը ծովուն յորձանաց մէջ նետած ըլլայ՝ ըսելով. ,, Որովհետև դու իմ մտքիս մէջ չես մեկնիր, առ զիս քու մէջդ,,: Բայց ասիկայ չինծու պատմութիւն ըլլալուն զըլխաւոր ապացոյցն ան է որ նոյն բանը ուրիշ զանազան փիլիսոփայից վրայ կը պատմեն. և առանձինն Եմպեդոկղէ վրայ, իբրև Թէ օր մը ինքզինքը Ետնա հրաբուխը լերան բաժակին մէջ նետած ըլլայ նոյն խօսքը զուրցելով:

Արիստոտէլ Թէպէտ զանազան գրուածքներ ունի. բայց քննիչք այսպիսի դատաստան մը կընեն վասն Թէ ունեցած պաշտպանութեամբը և իրեն ժամանակակից իմաստուն մարդկանց կեներցաղավարութեամբը պէտք եղածին չափ հարկաւոր օգուտը չիտեսաւ. մանաւանդ որ կարգէ

Generated on 2015-03-16 10:57 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

դուրս հանձարովը կրնար աւելի մեծ ծառայութիւններ ընել ընդհանուր գոլորշեանց։

ԹԷՈՓՐԱՍՏՈՍ ՝ իր վերջը. — Արիստոտէլի աշակերտացը մէջ մէկը կար որուն համար ինքն իսկ ըսեր էր թէ ամէնէն աւելի խմաստասիրութեան փոյթ և յարմարութիւն ունի. և էր Թէոփրաստոս Երեսացին, Լիկէոնի երկրորդական տեսուչը. և որովհետև հասակի ալ նշանաւոր տարբերութիւն մը չկար մէջերնին, անոր համար աւելի Արիստոտէլի բարեկամը կը սեպուէր քան թէ աշակերտը. և երկուքը մէկտեղ Պղատոնի դասախօսութիւնները մուիկ ընելու համար ակադեմիա կերթային։ Առջի անունը Տիրտամոս էր, բայց եռքը իրեն խմաստասիրութեան աշակերտեալքը զինքը Թէոփրաստոս կոչեցին որ ապոստոմոս ըսել է։ Կսանդեն թէ հարիւր տարիէն աւելի ապրած ըլլայ, և մեռնելու առենը ցաւելով կըսեր թէ "Մեզի անոր վրայ կը վշտանամ որ հազիւ սկսած ըլլալով խմանալու թէ խմաստուն ինչ ըսել է, մահը վրաս կը հասնի,,։

Շատ գրուածքներ երկասիրեր է Թէոփրաստոս, թէպէտև մեզի հասածները քիչ բան են, գլխաւոր գրութիւնքը կըսեն թէ բնապատմութեան, օդերևութաբանութեան, բնազանցութեան վրայ էին, ընդհ. յատակ և դիւրիմաց ոճով։

Նկարագիրը. — Թէոփրաստեայ գրոցը մէջ գլխաւորներէն մէկը կր սեպուի իր Նկարագիր. Բառոյ Մարդկան ըսուած՝ մարդկային կեանցը տեսութեան հմուտ և զուարճալի դիրքը։ Կըսեն թէ աս նկարագիրքը քերթողական արուեստի մը մասն է, զոր ինքն Թէոփրաստոս շարադրեր ու եռքը կոտրուսեր է. ամենք ալ՝ թէ մանաւորապէս քերթողաց գործածութեանը համար շարադրեր է. վասն զի Արիստոտէլ ալ թէ իր քերթողական

արուեստին և մեծ ճարտասանութեան և բարոյականին մէջ նոյն բանը լրած էր. սակայն Թէոփրաստեան նկարագիրքը Արիստոտէլի գրածներէն անհամեմատ վեր է։ Կրաեն թէ ինչպէս ախոյեան, սասանկ ալ առաքինութեանց նկարագիրը լրած է Թէոփրաստոս, որ մեր ձեռքը չէ հասած [1]։

ԳԼՈՒԽ Լ.

ՍՈԿՐԱՏԷՆ ԵՏՔԸ ԵՂԱԾ ԻՄԱՍՏԱՍԷՐՔ

Կհանիկեան կամ Շնական աղանդ. — Դիոգինէս. — Կիւրենական, Սիէպիկեան և Մեգարական վարդապետները։

Կհանիկեան կամ Շնական աղանդ. — Սոկրատէն ետքը առջի իմաստասիրական վարժարանը կիւնիկեանց կամ շնականաց աղանդն է, որոնց նախկին հեղինակը Անթիսթենէս աթենացին կը սեպուի։ Անտիսթենէս՝ գործիչ երկար տեղն աշակերտութիւն ընելէն և ինքիր գլխուն իմաստասիրական վարժարան սահմանելէն ետքը, Սոկրատայ աշակերտիլ սկսաւ։ Ան անուանի իմաստասիրին պատերը մեծ տպաւորութիւն ըրին Անտիսթենեայ սրտին և մտացը վրայ, ու սկսաւ աւելի փութով ուսմանց ետեւէ ըլլալ։ Տունը հեռու տեղ ըլլալով ամէն օր հարկ կըլլար որ քառասուն ասպարէզ երկար ճանապարհորդութիւն յանձն առնէ,

1 Թէոփրաստեայ նկարագիրը հայերէն նորգմանութեամբ պատած է ի Վենետիկ, ի 1830, ջանիւ Հ. Արսէն վ. Բագրատունւոյ։

Generated on 2015-03-16 10:57 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ոչպէս զն կարենայ Սոկրատայ իմաստասիրական դասերը մոխիկ ընել: Խոցաւ Թէ Սոկրատ ձշմարիտ իմաստասիրութիւնն առաքինութեան վրայ կը հաստատէր, և Թէ առաքինութիւնք կայացած էն՝ հարստութիւն, մեծութիւն, գիտութիւն և հաճոյք արհամարհելուն վրայ: Բայց ինչքն Անտիսթենէս իրեն դրութեանցը մէջ Սոկրատէն ալ անդին անցաւ, և նոյն առաքինութիւնը ստանալու համար ուզեց ամենայքսաս կենայ եւևէ ըլլալ: Ուստի օր մը պարզ պատմուճան հագած և գաւազանը ձեռքը՝ ժողովրդեան ներկայացաւ:

Ընթեռնացիք, որոնց բնական գարձեր էր ամէն բանի մէջ նորութիւն փնտռտել և անոր վրայ զարմանալ, համակրութիւն և սէր ցոյց ին առ նոր իմաստասիրին վրայ, և անոր դրութեանցը հաւնեցան: Բայց Սոկրատ դէմ կը կենար իրեն, "Ա՛ պարզ պատմուճանիդ վրայ, կըսէր, քու ամենամեծ հպարտութեանդ պատկերը կը նկատեմ,,: Սակայն ատ ալ իրաւ է որ Անտիսթենէս սովորական մարդիկներէն չէր: Առաքինութիւնը ժուժկալութեան և ինքզինքը ամէն բանէ զրկելուն վրայ կը հաստատէր. և անիկայ կը սեպէր միակ հնարք մեր ազատութիւնը չկորսընցնելու, առաքինութեան ճամբուն մէջ առաջ երթալու և Աստուծոյ նման ըլլալու համար: Առաքինութենէ ալնիւս և ախտերէն աւելի գարշելի բան չկայ, կըսէր. ատոնցմէ զատ ամէն բան անտարբեր, ուստի և մեր մտադրութեան անարժան կը սեպէր: Ա՛ պատճառաւ Անտիսթենէս և իրեն աշակերտները կինիկեանք՝ ընկերական կենաց ամէն վայելքը և հանգիստը կարհամարհէին: Կսանգեն Թէ մահուան հիւանդութեանը ժամանակ մեծ անհանգստութիւն կրելով՝ ի ցաւոց և՝ ի վշտաց՝ գարձաւ ըսաւ իրեն բարեկամացը. "Մէ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 10:57 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կը չկոչ որ իմ նեղութիւններէս զիս ազատէ ,, : Իրեն աշակերտացը մէկը , Դիոգինէս , սուր մը տուաւ ձեռքը . ,, Ես ցաւերէս կուզէի ազատիլ , բայց իմաստասերը , չէ թէ կեանքէս ,, : Որով կիմացուի թէ Անտիսթենեայ վարդապետութիւնը սահման մը ունէր , բայց իրեն աշակերտքն ելան չափին անցընող , որոնց մէջ գլխաւոր կը սեպուի

Դիոգինէս , որ փոքուն Ասիոյ Սինոպ քաղաքը ծնած էր , և Անտիսթենեայ մտածած ու՛ի գործ դրած վարդապետութիւնը ինչուան միւս ծայրը հասուց : Լուսնյափոխի մը զաւակ ըլլալով նախ իր հօրը արուեստան սկսաւ բանեցընել . բայց եւ քը յանցաւոր բռնուելով աստիճանաց Աթէնք փախչիլ և ինքզինքը տէրութեան խնդրակաց ձեռքէն ազատել : Աւելի հանճար և հաստատուն միտք ունէր Դիոգինէս՝ քան թէ ուղիղ դատաստան : Միտքը դրաւ ինքզինքը իմաստասիրութեան տալ : Գնաց Անտիսթենէսը գտնելու . բայց անիկայ մերժեց զինքը նախ չընդունելով , եւքը սպառնալեօք , վերջը ինչուան վրան գաւազան ալ վերցընելով . Թերևս անոր համար որ իրեն անցեալ կեանքը մէջ՝ իմաստասիրութեան նշան չէր տեսած վրան : Դիոգինէս՝ իմաստասիրին սպառնալիքներէն և բարկութենէն ամենևին չվախցաւ . ինքն ալ գաւազան մը առաւ ձեռքը և ուզեց հետը կռուիլ . Անտիսթենէս անոր յարատևութիւնը տեսնելով՝ Թող տուաւ որ աշակերտի իրեն : Դիոգինէս՝ անոր պատմուճանին նման զգեստ մը հագաւ , մախաղ ու գաւազան մը ձեռքը . և քիչ ատենէն իմաստակութեան մէջ գերազանց երևցաւ քան իրեն վարդապետը : Հպած վերարկուն՝ գիշերուան ծածկոցի և անկողնոյ տեղ կը գործածէր . մախաղին մէջ կաւոր մը ուտելու բան

Generated on 2015-03-16 10:58 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

և քանի մը գրքեր, սոնք էին իրեն հարուստ-
Թիւնը: Բնակութեան մանաւոր տեղ չունէր.
այլ գիշերն ուր որ հասնէր՝ հոն բացօթեայ տեղ
կը պառկէր, և իրեն ապրուստը անցաւորներէն
կը մուրար: Կաւանդէն Թէ կարասի մը մէջ կը
քնանկէր, և Թէ հոն տեսաւ զինքը մեծն Ալէք-
սանդր և զարմացաւ վրան:

Դիոգինէս ինքզինքը հեռևող կը սեպէր բա-
րոյականի. բայց սխալ տեսութեամբ մը ամբողջ
բարոյականի մասն չէր սեպեր, և չէր կրնար ըմ-
բռնել, Թէ ինչպէս առանց անոր անկարելի է
առաքինի ըլլալը: Կարգէ դուրս գործօղութիւն և
խօսքերով զուրկները նախատել և կծել՝ իրեն
հաճոյական բաներ էին: Արձաններէն օղորմա-
Թիւն կը խնդրէր. երբոր պատճառը կը հարցը-
նէին, "Ինքզինքս վարժեցընելու համար կը-
նեմ, կըսէր, որպէս զի մարդիկներէն բան չառ-
նելուս առեներ չամբնչնամ,,: Երբ ամբոխը Թատ-
րոնէն դուրս կելլէր, ինքը հրելով հրմշտկելով
կուգէր ներս մտնել. և երբոր կը տեսնէր Թէ ա-
մէնքը կը զարմանան, "Ասիկայ իմ ամենօրեայ
սովորութիւնս է,, կըսէր: Միթիաս անունով հա-
րուստ մարդ մը կար. ասիկայ օր մը զԴիոգինէս
արհամարհելով ապտակներ զարկաւ անոր, ու
եսքը վոխարէն մը ընելու համար ըսաւ Թէ "Վա-
ղը իմ սեղանաւորիս գնա, հոն քեզի համար ի-
րեք հազար դահեկան պատրաստեր եմ,,: Ձայն
չհանեց իմաստասէրը. երկրորդ օրը լաւ ծեծ մը
քաշեց անոր, "Սեղանաւորիդ քով ունեցած
առակս նորէն քեզի կը դարձընեմ,, ըսաւ:

Ծերութեան առեներ երբոր ծուլով դեպ ի ե-
գիներ կերԹար, հուզկահարք վրայ հասան, և ու-
զիչներուն հետ ինքն ալ գերի բռնուելով՝ կրե-
աեի մէջ եղող հարուստ կորնԹացւոյ մը վաճա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 10:58 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ռեցաւ, որն ոլ իր որդւոց դաստիարակութեան ինամքը Դիոգինէսի յանձնեց։ Թէ մարմնոյ և Թէ մտաց՝ ընտիր կրթութիւն մը տուաւ անոնց իմաստասէրը. որով իրենց ծնողին ուրախութիւն և վարդապետին պարծանք եղան։ Կենացը վերջի տարիները՝ ձմեռը Աթէնք և ամառը Կորնթոս կանցընէր. և ինքզինքը Պարսից Թագաւորին կը նմանցընէր, որ փոփոխակի Շօշ և Եկբատան կը կենայ։ — Կորնթոսի մօտ Գրանիոն ըսուած տեղը մեռած գտան զինքը, Քրիստոսէ 323 տարի առաջ։ Նոյն տարին պատահեր էր նաև մեծին Ալեքսանդրի մահը։

Կիւրենական վարդապետութիւն. — Դիոգինէս իր վարդապետութիւնը՝ հարստութիւնէ և մեծութիւնէ բացարձակ արհամարհանացը վրայ հաստատեր էր, մեկդի Թողլով իր նախկին վարդապետին Սոկրատայ կարծիքները՝ օրինաւոր և երջանիկ կեանք մը ստանալու միջոցներուն վրայ։ Անիսթենէսէն կիւրենացի, Սոկրատայ ուրիշ աշակերտ մը, իր ամէն ջանքը բանեցուց՝ հնարաւոր երջանկութիւն մը ձեռք ձգելու վարդապետութիւնը ստհմանելու համար։ Ասոնի ընական վարժարանին դէմ՝ կիւրենական տղանդը հնարեց, որուն վարդապետութիւնքը բոլորովին կը հակառակէին առջինին։ Իրեն սկըզբունքներն ընդարձակ էին. կը հաստատեր Թէ մարդուս ամէն կիրքերը (affections) կրնան երկուքի վերածուիլ. հաճոյից և ցաւոց։ Հաճոյքը, կըսէր, անուշ չարժում մըն է. ընդհակառակն ցաւը՝ աստիճ և բուռն. ամէն կենդանիք առջինը կը փնտռեն ու երկրորդէն կը խորշին. կը տրուէր կընէր Թէ երջանկութիւն ըսածդ ուրիշ բան չէ, բայց եԹէ այլևայլ հաճոյից իրարու հետ գումարումը։

Սոկրատ ասոնց բարոյականին չհաւնեցաւ. բայց

Արիանիպոս շատ պատիւ գտաւ իշխանաց և մեծամեծաց քով. ինչուան Դիոնեսիոս բռնաւորն իրեն բարեկամը կը կոչէր զինքը: Արիստիպոս իր ամէն գիւրակեցութիւնն և օրինաւոր հաճոյքը կատարելոյն ալ՝ գիտէր անձին վայ իշխել: Օր մը իր մէկ ծառային հետ ճամբորդութիւն կընէր, և ունեցած ստակն անոր յանձներ էր: Ծառան՝ չկրնալով այնչափ ծանրութիւն վրան հետը քալել, նեղութիւն կը քաշէր. իմաստասէրը հրամայեց որ կէսն աւելին ճամբուն վայ ձգէ: Օր մըն ալ Դիոնեսիոս բռնաւորէն ստակ ուզեց: Դարձաւ ըսաւ իրեն բռնաւորը. "Դուն չէի՞ ըսողը թէ իմաստնոյն բան չի պակսիր,,. — Հիմա ստակը տուր, հաքը անոր վայ կը խօսինք,, ըսաւ իմաստասէրը: Ստակն առնելէն հաքը պատասխանեց. "Ես չէի՞ ըսեր թէ իմաստնոյն բան չի պակսիր, ասանկ խօսքս ելաւ,,:

Սկեպտիկեանց վարդապետ. — Սկեպտիկեանց նախահայրն է Պիւռհոն եղեայի, որ Քրիստոսէ 288 տարի առաջ կկնայ: Նախ նկարչութեան հետևէ եղաւ, հաքը մեծին Աղեքսանդրի հետ կերթար անոր պատերազմաց ընկեր ըլլալու: Վերջն ալ Եղիսի մէջ քրմապետութեան պաշտօնն ունէր: Կը վարդապետէր թէ բարոյականն ամէն մարդու սրտին խորը գրուած է, և անիկայ է վախճան իր ամէն գործոցը. բայց միանգամայն ան ալ կըսէր թէ բուն ճշմարտութիւնը դեռ գըտնուած չէ, զոր մարդ կրնայ աստիճանաբար ձեռք ձգել՝ եթէ ամէն բանի վայ տարակուսի: Օր մը կը վիճէր թէ մահուան և կենաց մէջ ամենևին տարբերութիւն չկայ: Հարցուցին իրեն թէ "Հապա ինչո՞ւ կտրիս և ինքզինքդ չես մեռցներ. — "Վատն զի երկուքն ալ մի և նոյն բանն է,, ըսաւ: Իննսուն տարուան ծանրացեալ հասակի մէջ մեռաւ Պիւռհոն:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 10:59 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Մեգարական վարդապետ. – Սոկրատայ աշակերտներէն մէկն էր Եւկլիդէս մեգարացի, որ իր վարդապետին մահուընէն ետքը Մեգարայի մէջ վարժարան մը բացաւ, ուր իմաստակաց անմիտ առարկութիւնքը՝ իբրև իմաստուն հանճարեաց նուիթիւնք կը մեծարուէին: Այսպիսի առարկութեանց գալափար մը տալու համար՝ օրինակ մը մէջ բերենք. "Եպիմենիդէս կըսէ Թէ կրետացիք ստախօսք են: Արդ Եպիմենիդէս ալ կրետացի է: Ուրեմն ստախօս է: Բայց եթէ Եպիմենիդէս ստախօս է՝ ասոր ըսած երբոր կը վերցէր Թէ կրետացիք ստախօսք են: Ապա ուրեմն կրետացիք ճշմարտախօս են: Անանկ է նէ՝ Եպիմենիդէս չիստակ վերցեց", և այլն և այլն:

Ահաւասիկ այսպիսի իմաստակական ձեռնարկութեամբք՝ ճշմարիտ փիլիսոփայութիւնը բարգաւաճելու և առաջ երթալու տեղ՝ աւելի ետ մնաց. և Ժողովրդեան բարուց ապականութեանը և անհաւատութեան պատճառ եղաւ [1]:

1 Ա՛ս իմաստասիրաց վարուցը ե՛ւ վարդապետութենց վրայ ա՛ւելի բեղեալ ունել ուզողները կրնան գտնել վարք իմաստասիրաց ըստ ածի գրչին մէջ: Նայնպէս Սոսէի բանական արուեստին հայկական ընդ. մանութեան յառաջաբան բեղեալութեանցը մէջ, ե՛ւ Ուլէնի նախաբանութեան ջ հատորին:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 10:59 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԼՈՒԽ ԼԱ.

ՃԱՐՏԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՀՈՐՈՄՈՅ ԴԱՐՈՒՆ (Ա. Ս.)

Խոհրդ. — Խեռս. — Լիւս-գոս աւետարանիչ. — Հիպէրիդէս. — Տինարքոս. — Աղիքսանդրոս. — Հեգեսիպոս. — Դեմադէս. — Փոկիոն։

Խոհրդ. — Հորոմոյ դարուն Ճարտասանախօսացը մէջ գլխաւոր կը սեպուի Խոկրատ, որ Լիւսիասէն վերջ դասեցաւ, և ուրիշ շատ Ճարտասանիւս ներէն աւելի մեծ համբաւ ունեցաւ։ Ք. ի. 436 տարի առաջ ծնած էր Խոկրատ, և իրեն վարժապետներն եղան Գորգիաս, Պրոտիկոս և ուրիշները. ետքը երբոր Սոկրատայ աշակերտեցաւ, ամէն ջանք ըրաւ մտքէն հանելու ծուռ և մոլորական վարդապետութիւնները. և թէպէտ Սոկրատայ ջանքը բոլորովին անպտուղ եղած չեն պենք, սակայն հարկաւոր կրթութիւնը չկրցաւ տալ անոր։ Առաջ աերութեան պաշտօնի մը մէջ մնաւ Խոկրատ, բայց իր ձայնին նուաղութեանը և վախկոտութեան համար չկրնալով առաջ գալ, և ուզելով պետրոպոնեսական պատերազմներէն կրած վնասուցը գտնման մը ընել, Ճարտարախօսութեան վարժարան սահմանեց և շատ աշակերտներ ժողվեց։ Զանազան Ճառեր գրած ունի այլեւայլ նիւթոց վրայ, և կիպրոսի և Մակեդոնիոյ թագաւորաց հետ թղթակցութիւն ունէր. և ոտրովհետև չափազանց վարձք կառնէր իր աշակերտներէն, անոր համար քիչ աստիճանի մեծ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:05 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

պատիւ ունեցաւ բոլոր աշխենացւոց առջև որ ին-
չուան Արիստոտէլ և Քսենոկրատ վրան կը նա-
խանձէին կըսեն :

Աղեքսանդրի հօրը փիլիպպոսի արշաւանաց
ժամանակը՝ Իսոկրատայ գլխաւոր ջանքն եղաւ
որ աշխենացիք մակեդոնացւոց հետ հաշտութիւն
ընելով իրարու հետ միանան . և անդադար կը
կրկնէր թէ յունաստանի գլուխ մը պէտք է սահ-
մանել : կըսեն թէ երբոր Քերսփնեսայի մէջ մե-
ռածները կը թաղէին , սրտին ցաւէն ու սլատմու-
թենէն մեռաւ Իսոկրատ իննսունըուրը տարուան
խորին ծերութեան մէջ :

Պղատոն իր սրամտախօսութեանցը մէջ այսպիսի
գովեստ մը կը դնէ Իսոկրատայ համար Սոկրատ
իմաստասիրին բերանը . ‘‘Իսոկրատ դեռ պատանի
է , կըսէ , բայց մեծ յոյս կու տայ իր վրան . — Ա-
նոնք ալ է , կըսէ Փեդրոս . վասն զի ճարտասխօ-
սական հանճարովը Լիւսիասէն շատ վեր է , և
իրմէն առաջ եղած ամէն ճարտասխօսներէն ա-
ւելի առաքինութեան սէր և փոյթ ունի . քնա-
կան փիլիսոփայութիւն մը՝ որ աւելի տատուած-
ուսոյց իմաստութիւն կրնայ անպուիլ ,, : Իսկ կի-
կերոն՝ հռովմէական պերճախօսութեան կրակը ,
կըսէ . ‘‘ Իրմէն առաջ եղած իմաստնոց ծերու-
թեան ժամանակն երևցաւ Իսոկրատ , և իր տունը
բոլոր յունաստանի համար վարժարան մը և ճար-
տասխօսութիւն չտեսնուած ատեանց եղաւ : Անոնի
ճարտասխօս և կատարեալ ուսուցիչ մըն էր Ի-
սոկրատ , թէպէտև իրմէ առաջ եղած ճարտա-
սաններուն ալ հրապարակը չէր ելլեր՝ բոլոր աշ-
խարհքի իր հանճարը ցցնելու , այլ իրեն կրթա-
րանը և ատպարէզը իր սենեակն էր : Ինքն եղաւ
նաև ճարտասխօսութեան լեզուն կարգի դնողը ,, :
Ա՛ս ամէն կատարելութեամբը քանի մը պակաս-

Generated on 2015-03-16 11:05 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

Թիւններ ալ կը գանեն քննիչք խոկրատայ վրան որ երբեմն դեղեցկութեան կը զոհէ ուժը. բնականին ալ փառասիրութիւնն ու նեղգաշնակութիւնը, օրն որ աւելի քերթողական արուեստ կրնայ անպատիւ: Ամենքի վրայ նեղբաղ մը շինելու համար առանձինգ տալի միակերպ աշխատեր կ՚ընեն յղկելու և վայելչացընելու:

Խէոս. — Խոկրատայ նախանձորդ և իրեն պէս Ճարտարախօսութեան վարպետ էր նաև Խէոս, որուն ոչ ուրաեղացի ըլլալը կը գիտցուի և ոչ ալ երբ կամ ուր մեռնիլը: Իրեն աշակերտն էր Դեմոսթենէս, և կրաեն Թէ անոր առջի առեներախօսութեանց չարտպրութեանը իր կողմէն օգնութիւն ըրեր է: Ոմանք կը համարին Թէ Խէոս հնացած ըլլայ Ճարտարախօսական անուանց մտանատոր նշանակութեան գործածելուն սովորութիւնը: Սակայն իր մեծ պարծանքը կրնան սեպուիլ հնգեատասան առենախօսութիւնքը, որոնցմով ինչ հանճարի աեր ըլլալը կը տեսնուի:

Լիկուրգոս աթենացի. — Քաղաքագէտ Ճարտասանաց և իշխանազուն մարդ մը կը սեպուի Լիկուրգոս աթենացին, որ 408 տարի Քրիստոսէ առաջ ծնած է աթենացւոց ազնիւ և հարուստ ազգատոհմէ: Նախ խոկրատայ, եսքն ալ Պղատոնի աշակերտեցաւ, և իր տաղանդաւոր մտացը համար շատ գժուարին գործերու զինքն առաջնորդ կարգեցին: Ասոնի տասուերկու տարի հասարակապետութեան եկամտիցը վերակացութիւն ըրաւ և խիստ կանոններ սահմանեց. Ատիկէի մէջ յաճախած զեղծմունքները բոլորովին վերցընելով. Դիոնիսոսի պատուոյն համար սկսուած Թատրոնին շէնքը լմընցուց, և իրեք անուանի ողբերգակ քերթողաց (Եսքիլէսի, Սոփոկլի և Եւրիպիդեսի) պղնձէ արձաններ կանգ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:06 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նեց, և ազգային մատենադարաններու մէջ անոնց գրուածքը պահել հրամայեց: Մահուչափ կատեր զփիլհպպոս, և բոլոր մակեդոնացւոց Թագաւորին կուսակիցքը կը գողային իրմէ: Շատ անգամ վրան ամբաստանութիւններ ըրին, բայց ինքը ամենուն ալ յաղթեց. և իրեն խոհականութիւնը, քաջութիւնը և հանճարը ամէն բանի մէջ գուրս կը ցատքեցընէր: Ալեքսանդրոս երբոր թեբէ քաղաքը կործանեց, ուրիշ անուանի Ճարտարախօսաց հետ ասոր գլուխն ալ ուզեց, բայց եաքը Դեմոփեայ միջնորդութեամբը ազատեցան: Կըսեն թէ մեռնելէն առաջ զինքն աթենացւոց ծերակուտի ժողովքին մէջ տանել տուաւ՝ իրեն պաշտամունքի հաշիւը տալու. այնչափ բազմութեան մէջէն մէկը միայն եղաւ որ համարձակեցաւ վրան ամբաստանութիւն ընել. քաջութեամբ ինքզինքը արդարացուց, և եաքը տուն բերուելով քիչ ատենէն մեռաւ (326) ութսուն տարին անցած ծանրացեալ հասակին մէջ:

Լիկուրգեայ գրած Ճառերը գրեթէ բոլոր ամբաստանական էին, ան պատճառաւ զինքը փոլհա (խպիս) կը կոչէին, իբրև վնասակար կենդանիները ջարդող: Իր Ճառերէն շատը կորսուած և մէկը միայն ձեռքերնիս հասած է Ընդդէմ Լեոքրափեայ, որ հարուստ քաղաքացի մըն էր և փերով նէյալ պատերազմին եաքը Աթենքէն փախած: Լիկուրգոս ատ ատենախօսութեամբ կը ցցընէ թէ ըստ օրէնքաց և քաղաքական օրինաց հարկ է որ անոր պատիժ մը գրուի: Իր խօսքերուն ուժովը եօթանասնամեայ ծերունին ամենուն միտքը յափշտակեց, և Լեոկրատը գատապարտեցին. բայց Լիկուրգոս ատով գոհ չըլլալով փերոփնէայի պատերազմին մէջ աթենացւոց զօրաց առաջնորդ Լիսիկլէան ալ պարտաւոր ցցուց իր մէկ ատենախօ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:07 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

սուրհեամբը որուն միայն մէկ կողը ձեռուընիս հասած է :

Հիպերիդես . — Նախնիք Դեմոսթենէն և Եսքինէսէն եաքը գլխաւոր Ճարտասանաց կը սեպեն զՀիպերիդես , ինչպէս Կիկերոն և Կուինտիլիանոս ալ կը վկայեն . բայց հիմա իր գրուածքներէն բան մըն ալ չկայ . միայն սա գիտենք որ Լիկուրգոսի պէս ինքն ալ մակեդոնացւոց ոխերիմ թշնամի էր : Կրանոնի պատերազմին եաքը Անտիպատրի ձեռքն ընկաւ որ նախ լեզուն կտրեց ու եաքը սպաննել տուաւ :

Տինարքոս . — Երբոր Աղեքսանդր Ասիա անցաւ , Տինարքոս կոնթացին Աթէնք եկաւ , և մակեդոնացւոց պաշտպաններուն գլխաւորներէն մէկն եղաւ , որով և Դեմոսթենի ալ ոխերիմ թշնամին որ աթենացիքը Աղեքսանդրի դէմ կուզէր գրգռել : Եսքը Փոկիոնի հետ բարեկամացաւ , և անոր հետ մէկտեղ Աղեքսանդրի որդւոյը դատախարակ՝ Պոլիսպերքոնի անմասնութեանը զոհ եղաւ : Տինարքոսի գրածներէն միայն իրեք Ճառ ունինք , և անոնց մէջ ալ ընտրելագոյնը ան կը սեպուի զոր ընդդէմ Դեմոսթենի խօսեցաւ բոլոր Աթենքի ժողովրդեան առջև :

Աւիէոմաս . — Հեգեսիպպոս . — Ասոնք ալ ան ատեններըը ծանկած Ճարտասանաց կարգէն էին , և հնոց մէջ գովութեամբ կը յիշատակուին , մանաւանդ Հեգեսիպպոս , որուն համար Պլուտարքոս կըսէ թէ Ճարտասնութենէն աւելի հայրենասիրութեամբը հռչակաւոր էր : Կը պատմեն թէ անգամ մը երբոր տաքութեամբ Աղեքսանդրի դէմ կը խօսէր , աթենացի մը դարձաւ "Բայց թէ որ խօսքիդ մեկ ընելու ըլլանք նէ՝ հարկ էր որ պատերազմ բացուի ,, ըսաւ : Պատասխան տուաւ Հեգեսիպպոս . "Ըէ թէ միայն պատերազմ ,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:07 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

հապա ամէն վիշտ, ամէն նեղութիւն կառաջար-
կեմ աթենացւոց. միայն մակեդոնական պետու-
թեան լուծը կարենան թօթափել ,, :

Դէմոսթէս. — Փոկիոն. — Ան ուղղը ճարտարախօ-
սաց մէջ էր նաև Դեմադէս՝ որոնց գլուխն ուզեց
Ալեքսանդր. բայց Դեմադէս սակայն ուժով եա-
քը անոր կողմն անցաւ: Իր ճառերը դրուածքի
անցնելու սովորութիւն չունէր Դեմադէս. նոյն-
պէս ալ Փոկիոն, որուն առեղախօսութիւննե՛րը
թէպէտ առջինին ուժը չունէին, բայց անոր խո-
սածներէն աւելի տպաւորութիւն և ազդեցու-
թիւն կընէին ժողովրդեան վրայ: Հինուկէն սովոր-
աս էրկուքը Դեմոսթենի հաւասարապատիւ կը
սեպէին: Կը պատմեն թէ անգամ մը թէոփրաս
տէս Հարցուցած ըլլան Դեմոսթենի և Դեմա-
դեայ վրայ ունեցած Համարմունքը. ,, Դեմոսթե-
նէս, ըսեր է, իր քաղքին արժանաւոր ճարտա-
րախօս է. իսկ Դեմադէս իր քաղքէն վեր ,, : —
Դեմոսթենի համար ալ կը պատմեն թէ ամէն ան-
գամ երբ կը տեսնէր որ Փոկիոն առեղախօսելու
կելլէր ,, Ահաւասիկ իմ կացինս, կըսէր, որ կելլէ
խօսքերուս ուժը ջախջախելու համար ,, :

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:07 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԼՈՒԽ ԼԲ.

ԵՍՔԻՆԷՍ ԵՒ ԴԵՄՈՍԹԵՆԷՍ

Եսքինէսի վրէժը. — Յաղթած պսակի ըսուածը. — Եսքինէսի ոճը. — Դէմոսթենէսի վրէժը. — Մահը. — Գրուածքները. — Ոճը։

Եսքինէսի վրէժը. — Դեմոսթենի նախանձոտաց գլխաւորը Եսքինէս Աթենքի կոթոզէ քաղաքը ծնած էր, խեղճ և աղքատ մարդու մը զաւակ։ Նախ ըմբիշ եղաւ Եսքինէս, եաքը կատակերգակ, անկէ վերջն ալ տէրութեան պաշտօնակալի մը առեղծուին։ Քառասուն տարուան էր երբոր քաղաքական պաշտօններու մէջ մտաւ, և քիչ ա- ետեղուան մէջ Աթենքի գլխաւոր անձանց մէկը սեպուեցաւ։ Ուժով և ախորժական ձայն մը ու- նէր և Հարուստ միտք մը. և առանց ալքատու- թեանը նայելու՝ ազգասիրութեան առնը կերթար Պլատոնի և Իսոկրատեայ դասախօսութիւնները մտիկ ընելու։ Եւ որովհետև փիլիպպեայ կուսա- կից էր, անոր համար Եսքինեայ ոխերիմ թշնամի արձանացաւ Դեմոսթենէս, և իր զօրաւոր ճառե- րովը ուզեց զանիկայ ժողովրդեան առեւլի և մատ- նիչ ցցընել։

Դեմոսթենէս պատգամաւորութեամբ Մակե- դոնիա երթալով երբոր Աթէնք դարձաւ, յայտ- նապէս բողոքեց ժողովրդեան առջևը փիլիպպոսի դէմ և վանդալ գրդռեց՝ ի պատերազմ. իսկ ընդ- հակառակն Եսքինէս կը յորդորէր զաթենացիս որ մակեդոնացւոց հետ խաղաղութեան դաշինք

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:07 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

դնելով պատերազմի զգուշանան: Տիմոթեոս, Դեմոսթենի բարեկամներէն մեկը, եռևէ եղաւ զԵսքինէս ժողովրդեան առջևը պարտաւոր երևցնելու. իմացաւ Եսքինէս, ինքը կանխեց ու Տիմոթեոսի դէմ սմբաստանական ատենախօսութեամբ մը զանիկայ դատապարտել տուաւ. անով Դեմոսթենի ոխութիւնն աւելի չսաստկաւ, ուստի կըսպասէր վրէժն առնելու:

Վրան քիչ ատեն անցեր էր, Դեմոսթենէս սմբաստանեց զԵսքինէս թէ քաղաքական տեսչութեանց մէջ խառնուելով՝ միտքը մատնութիւն ընել է, և կըսուիպէր կը ջանար որ մահապարտ ելևնայ իր նախանձորդը. և աս բանիս գլխաւոր ապացոյց կառնէր իրենց սատգամաւորութեան ատեն եղած խօսակցութիւնները և Եսքինեայ բռնած կերպը: Եսքինէս ինքզինքը արդարացուց ցցընելով թէ ան ատենուան մէջ իր պարտքին դէմ բան ամենևին ըրած չունի, և թէ իր դատախազին փաստերը պարզ նախանձու և կասկածանաց հետևանքներ են: Երկուքին ալ ատ բանիս վրայ գրած ճառերը հասած են ձեռնըլիս և ճառ յաղթս հրեշտակութեան կըսուին. բայց Դեմոսթենինը աւելի կրակոտ և աշխոյժ ոճով գրուած է: Եսքինէս թէպէտ արդարացաւ, բայց կերևնայ թէ Դեմոսթենի խօսքերը մեծ տպաւորութիւն ըրած են ամենուցմէ որոնին վրայ. վասն զի անկէ ետքը վրան ունեցած համարմունքնին չաս ընկաւ:

Յաղթս Պսակի ըսուած ճառէր. — կատսիփոն անունով աթենացի մը միտքը դրած էր հրապարակական հանդիսի մը մէջ ոսկի պսակով պատուել զԴեմոսթենէս, անոր՝ հայրենեաց ապատուութեան համար ունեցած արդեանցը վրնասքն: Եսքինէս արգէն Դեմոսթենի նախանձորդ,

Generated on 2015-03-16 11:08 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

աս բանով ալ սեբէլի անոր դէմ թշնամացաւ, և հատաւ ատենախօսութիւն մը շարադրել կաեսիփոնը պարտաւոր ցցընելով: Բայց Քերոնէեայի պատերազմին պատճառաւը՝ ուրիշը տարի կախ մնաց աս վէճը: Ան ձառովը Եսքինէս կը ցցընէ թէ կաեսիփոնի ուղածն ապօրինաւոր է, և թէ ընդդէմ է օրինաց և մէկը չի կրնար պահպանել ինչուան իր գործոցը և արդեանց ճիշդ հաշիւը չինեբկայացընէ ժողովրդեան, և թէ հանդերձ այնու՝ թատեր մէջ հրապարակաւ պահպանելը կարգիլեն քաղաքական օրէնք: Ա՛ս առաջին մասը: Խակ երկրորդին մէջ կը ցցընէ թէ Դեմոսթենէս ամենևին արդիւնք մը ըրած չունի հայրենեաց և թէ ինքն է ընդհակառակն Աթենքի և բոլոր յունաստանի թշուառութեան պատճառը: Զօրաւոր և արտաշարժ է Եսքինէսի աս առենախօսութիւնը. բայց տեղ տեղ իմաստները և պատճառաբանութիւնները տկար կը մնան: Սակայն և այնպէս կաեսիփոն անպարտ երևցաւ: Մեծ վիշտ եղաւ Եսքինէսի իր աս կերպով յաղթահարուիլը. ուստի նոյն օրը Աթենքէն հեռանալով գնաց Եփեսոս քաշուեցաւ, և կըսպասէր որ Աղեքսանդր իր աշխարհակալութիւններէն դառնալով Եփեսոս գայ և իր արդիւնքը վարձատրէ: Սակայն Աղեքսանդր երբոր մեռաւ, Եսքինէս Հռոդոս քաշուեցաւ, և հոն մանաւոր լսարան սահմանեց ճարտասիւսութեան, որ իր մահուընէն ետքն ալ հռչակաւոր եղաւ: Իր մէկ գործողութեանը համար Սամոս եկած ըլլալով Եսքինէս՝ հոն մեռաւ 79 տարուան:

Կը պատմեն թէ Հռոդոսի լսարանին մէջ իր աշակերտացը շատ անգամ թէ իր գրած և թէ Դեմոսթենի պատահանած առենախօսութիւնները կը կարդար. անոնք ալ թէպէտ Եսքինէսի ճար-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:08 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ապրիստութեանը վայ կըմայլէին, բայց վը-
մռնեին չաս գերազանց կը սեպէին։ Օր մը
դարձաւ ըսաւ անոնց Տաքինէս. "Իմ նախանձո-
դին և իմ ջնտմուին բերնէն լսելով կրպանչա-
նաք անոր կրակաս լեզուին վայ. Տապալինչ սի-
սի ըլլայիք երբոր Աղեքի հրապարակներուն մէջ
ան ահել առիւծին մռնչելը լսէիք ,,։

Ինքինեի ոճը. – Տաքինէս իրեք ձառ գրեց ո-
րոնք մեր ձեռքն ալ հասան. երկու ձառ յաղագս
հրեշտակութեանց և մէյմըն ալ յաղագս պատկե-
ւ աս իրեք ձառերուն նախնիք Ւրէնէ ընդհա կը-
սէին։ Քիչ մը արուեստակութիւն կայ Տաքինէսի
ոճին մէջ. բայց Թէոփան ամենակատարեալ հռե-
տոր մը կընքը չհամարինք, սակայն բոլոր աշխարհ-
քի մէջ երևցած գլխաւոր ճարտասանութերէն
մէկը հարկ է որ անոր արժանապէս։

Դեմոսթենէի վրէժը. – Հռետորական ոճը մարի մի-
այն կրտսեր էր Դեմոսթենէն քան զՏաքինէս, Ա-
թինկէի պէտնիսի քաղաքը ծնած Քրիստոսէ 385
սարի առաջ։ Հայրը հարուստ ալնուական մըն
էր, բայց երբոր Դեմոսթենէն դեռ եօթը սարուան
տղայ էր՝ մեռաւ։ Տլուն խնամակալներն անոր
հօրը հարստութիւնը և Դեմոսթենէի հասակը ի-
րենց չարութեանը առիթ առնելով, ամենևին
փոյթ չտանեցան անոր դաստիարակութեանը։ Ե-
րբոր Դեմոսթենէն տասնչորս տարեկան եղաւ, պղտոնին
և Իսկրատէսի մեգարացւոյ դաստիարակութիւնները
մանկ ընդունակ կը յաշախէր։ Միտքը դրաւ որ իր
խնամակալներէն անոնց ըրած չարութեան վրէժն
առնէ. ուստի խէոսի առաջնորդութեամբն սկը-
սաւ ճարտասանութեան եռանդ ըլլալ։ Տասներե-
քը սարուան հասակին իր խնամակալացը դէմ
հինգ ատենախօսութիւն շարադրելով դատա-
տանի իրաւամբ ունեցածը չունեցածը անոնցմէ

Generated on 2015-03-16 11:09 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

պահանջեց : Ինչպէս վերն ալ ըսինք , հաւանական կերևնայ Թէ առ Ճառերը չարադրելու առեն մեծ օգնութիւն ըրած ըլլայ իրեն Խոսրա :

Սիրաառաւ ասով Դեմոսթենէս , և սկսաւ ուրիշ հրապարակական առենախօսութեանց մէջ ալ ձայնը վերցընել . սակայն երկու իրեք անգամ աթենացիք ծաղր ընելով վինքը բեմէն վռնտեցին . վասն զի բաց ՚ի ոճին անհարթութենէն , լեզուի , ձայնի և շարժուածոց պակասութիւններ ունէր : Այնեվին չյուսահատեցաւ Դեմոսթէն . գնաց առանձնութեան եռևէ եղաւ երկար առեն , իր բնական պակասութիւնները չակերտ և ոճը վայելչացընելու . ան առենն է որ ուզեն անգամ օրինակեց Թուկիդիդեայ պատմութեան գիրքը : Քանըհինգ տարուան Թողուց իր առանձնութիւնը և նորէն աթենացւոց առջին երևցաւ . ալ անկէ ետքը առջի Դեմոսթենէսը չէր . քաղաքացիք զմայլեցան անոր Ճարտարախօսութեան և ոճին վրայ , և քիչ առենուան մէջ սկսաւ անմահական համբաւ մը ժառանգել :

Դեմոսթենէսի Ճառերը . – Դեմոսթենի փառացը և անուանը անմահանալուն համար բաւական կ՚ին միայն իրեն առենախօսութիւնքը : Թէ փիլիպպեան ըսուած Ճառերը , և Թէ ՚ի պաշտպանութիւն Կտեսիփոնի ընդդէմ Եսքինեայ կամ Յաղագս պսակի գրածները՝ բոլոր գլուխ գլուածոց կը սեպուին , և հելլինական մտացը և արդասաւոր Ճարտարախօսութեան նշաններն են : Տանըչորս տարի փիլիպպոս մակեդոնացւոց Թագաւորը չկրցաւ քայլ մը առաջ երթալ . վասն զի իր բուռն զօրութեանը դէմ աննկուն պատուար մը կեցեր էր Դեմոսթենէս . ինչ վարպետութիւն կամ ինչ հնարք որ մտածէր , բոլոր յունաստանի մէջ մէկէն կը տրտչակուէր : Անանկ վառուած էր Դեմոսթենէս

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:09 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Փիլիպպոսի դէմ որ միայն իր խօսքերուն ուժն էր որ ան մակեդոնական ահագին բանակին զօրութիւնը կը խորտակէր։ Պլուտարքոս կը պատմէ թէ Փերոզնէսայի պատերազմին մէջ Դեմոսթենէս ալ զինուորած մարտնչելու եկեր էր. բայց հոն, կըսէ, Դեմոսթենէն զօրականը՝ արժանաւոր չերևցաւ Ճարտարախօս Դեմոսթենին. վասն զի պատերազմին ատեն զէնքերը ձգեց ու փախաւ։ Թէպէտև դասալիք ըլլալը մեծ յանցանք էր նաև աթենացւոց մէջ, բայց Դեմոսթենի արդեանցը համար զինքը պատժէն խալըսեցին։

Փիլիպպոսի մահուընէն ետքը Դեմոսթենէս լսելուն սրեց անոր յաջորդ Ալէքսանդրին դիտաւորութիւնները աւելի յայտնութեամբ առաջ տանող Ալէքսանդրի դէմ. բայց Ալէքսանդր զարկաւ Յոյները, և աննկուն թեբէն կործանեց։ Ինքը քիչ մը հեռանալով՝ աթենացիք մտքերնին դրին թէ ալ հանգստացան, և ան ատեն պատկեցին զԴեմոսթենէս հանդիսական թատերախաղից մէջ ոսկեղէն թագով՝ զոր տալիներով առաջ պատրաստեր էր կտեսիփոն։

Բայց աս յաղթանակէն քիչ ետքը մեծ դըժբաղդութեան հանդիպեցաւ Դեմոսթենէն։ Հարբալոս անունով Ալէքսանդրի կուսակիցներէն մէկը Ալէնէք եկաւ, և իրեն առատասիրտ պարգևաբաշխութիւնները շատ Ճարտարախօսաց բերանը լռեցուց։ Դեմոսթենէն զայրացաւ աս բանին վրայ, և սպառնացաւ որ երկրորդ օրը ելլէ բոլոր աթենացիքն անոր դէմ պիտի գրգռէ՝ իր Ճարտասանութեան ամէն ուժը թափելով։ Վաղուան օրը երբոր ժողովուրդը կըսպասէր, Դեմոսթենէն փողը կապած ժողովրդեան երևցաւ, ներքուստ խընդրելով որ ծանր փողացաւ ըլլալուն չի կրնար խօսիլ։ Ցարմար առիթ սեպեցին աս բանս Դեմոս-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:09 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թենի հակառակորդք, և ամբաստանեցին ժողովրդեան Թէ նոյն գիշերը կաշառք կերած էր Հարբալոսէն, և ան պատճառաւ խօսեցէն հրաժարեցաւ: Եւ յիրաւի քիչ շատ հաւանական կերևնար ատ կարծիքը. անոր համար ալ ամենայնիք զինքը բանտ դրին և յետոյ տալանդ ալ տուգանք աւին (1,260,833 ֆռանք): Ա դատաստանին մէջ իրեն դէմ դատախազը Տիմոդեոս էր Եպքիղեայ բարեկամը, որ բաւական զօրաւոր և կենդանի Ճարտարիւսութեամբ աշխատեցաւ իր հակառակորդը յանցաւոր ցցընելու. "Թէ որ Դեմոսթենի խնայելու ըլլաք, ըսաւ, ով ամենայնիք, մեր հայրենեաց նախնի դիւցազանցը կը բողքեմ. կը կանչեմ զԱթենաս մեր քաղքին պահապանը, և ուրիշ ամէն պաշտպանութիւն ընող աստուածներըը. հոս կը հրաւիրեմ Տարտարոսն ալ և անոր Կառաղիքը. կըսեմ անոնց Թէ ամենայն դատաւորքը ժողովրդեան պարտաւոր սեպած անձին վրայ գթութիւն բանեցուցին. այո, վասն զի խնայեցին անոր՝ որ մատնութեամբ իր հայրենիքը ծախեց. խնայեցին անոր՝ որ իր մահագուշակ տալանդովը բոլոր ամենայնուց ուժը կլաստեց, անոր՝ որուն կենացը կը փափաքին Ամենքն Թշնամիները, և որուն մահուամբը միայն մեր կործանմանը հնարք մը պիտի կարենանք գտնել,,: Բայց Պլուտարքոս կը հաւատարմացընէ Թէ սուտ ամբաստանութիւն էր ատ բանը Դեմոսթենի վրայ, և Թէ ինքը Հարբալոսէն ամենևին կաշառք առած չէր. ան պատճառաւ այսպիսի զրպարտութեան մը դէմ միշտ բողոքեց Դեմոսթեն:

Դէմոնէնի մահը. — Դեմոսթենէս բանտէն փախաւ և երկար ատեն աքսորանաց մէջ անցուց իր կեանքը՝ որն որ աչքին առջևը մահուընէ գառնագոյն կերևնար: Բայց երբոր Ալէքսանդրի մահը

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:09 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նեն, որ միայն առաջ կերթայ իր նպատակին հասնելու համար՝ ճամբան վրայի գեղեցկութեանցը և ոչ աչք մը ձգելով կամ կեներով։ Ասանկ է առաւաւիկ Դեմոսթենի ճարտասիսուեթիւնը։ Իւրեն նպատակ մը գրած՝ հայրենեաց ազատութիւնը, ամէն ուժովն ան բանին եռանդն կ'ընայ, ամէն բանի մէջ անոր օգտակարութիւնը ցցընելու։ Ջօրաւոր և լայնածաւալ առպարէզ մը առջևն ունենալով, հարկ չի սեպեր, չի ալ կրնար պզտիկ բաներու ուշադրութիւն ընել, և իր ճառերուն կորովը աւելցընելու համար համազօրական փաստեր փնտրուել։ Ան պատճառաւ ալ է որ Եսքինէս քերթող ճարտասան կրսուի, Դեմոսթենէս պարզ ճարտասիսոս։ և իրեն սեպի պարծանք կընէ ան բանս արժանապէս։ Ուսոն Իրուսամբ զսրցած է Լինգինոս թէ "Աւելի գիւրին է երկնատուս կայծականց հրեղէն բոցովն անտառոյր ճնալ, քան թէ Դեմոսթենի ճառերն առանց կրքի կարդալ կամ լսել,,։ Դիոնեսիոս ալիկառնացին ալ կրսէ թէ "Երբոր Դեմոսթենի ճառերն մէկը ձեռքս կառնեմ որ կարդամ, կարծես թէ ակրոպոլեոսը ատուածի մը կը տեսնեմ որ վրս հակառակամարտ կրքերով ուղած տեղը կը տանի. յոյս, վախ, արհամարհանք, բարկութիւն, սէր, ամէն կիրք հաւասարապես կըզգամ,,։ Փեննելոն գողղիացին ալ այսպէս կը գրուատէ եղեգացի ճարտասրախօսը. "Դեմոսթեն, կրսէ, խօսելու տեսնը կարծես թէ ինքիմքմէ դուրս կելլէ, ու իր հայրենիքէն զատ ուրիշ բան աչքին առջևը չունի. ան պատճառաւ է որ գեղեցիկը չի փնտռեր, այլ ինքիմքմէ կու գայ և լսողները կըմոլեցընէ։ Կորոտոս, կը շանթէ. հեղեղատ մըն է որ ամէն առջևի եկածները կը յափշտակէ կը տանի...։ Ամէն բան աչքին առջևէն կը վերցուին. վասն զի

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:10 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Փիլիպպոսի դեմ որ միայն իր խօսքերուն ուժին էր որ ան մակեդոնական ահագին բանակին զօրութիւնը կը խորտակէր : Պլուտարքոս կը պատմէ թէ Քերոնէայի պատերազմին մէջ Դեմոսթենէս ալ զինուորած մարտնչելու եկեր էր . բայց հոն , կըսէ , Դեմոսթենէն զօրականը՝ արժանաւոր չերևցաւ Ճարտասանին Դեմոսթենին . վասն զի պատերազմին ատեն զէնքերը ձգեց ու փախաւ : Թէպետև դասալիք ըլլալը մեծ յանցանք էր նաև աթենացւոց մէջ , բայց Դեմոսթենին արդեանցը համար զինքը պատժէն խալըսեցին :

Փիլիպպոսի մահուընէն ետքը Դեմոսթենէն լեզուն արեց անոր յաջորդ Ալիրեն դիտաւորութիւնները աւելի յաջողութեամբ առաջ տանող Ալեքսանդրի դեմ . բայց Ալեքսանդր զարկաւ Յոյները , և աննկուն թեբէն կործանեց : Ինքը քիչ մը հեռանալով՝ աթենացիք մտքերնին դրին թէ ալ հանգստացան , և ան ատեն պսակեցին զԴեմոսթենէս հանդիսական թատերախաղից մէջ ոսկեղէն թագով՝ զոր տալինեերով առաջ պատրաստեր էր Կտեսիփոն :

Բայց սա յաղթանակէն քիչ ետքը մեծ դժբաղդութեան հանդիպեցաւ Դեմոսթենէն : Հարբալոս անունով Ալեքսանդրի կուսակիցներէն մէկը Աթէնք եկաւ , և իրեն առատաձիրտ պարգևաբաշխութիւնները շատ Ճարտասխօսաց բերանը լռեցուց : Դեմոսթենէն զայրացաւ սա բանին վրայ , և սպառնացաւ որ երկրորդ օրը ելլէ բոլոր աթենացիքն անոր դէմ պիտի գրգռէ՝ իր Ճարտասանութեան ամէն ուժը թափելով : Վաղուան օրը երբոր ժողովուրդը կըսպասէր , Դեմոսթենէն փողը կապած ժողովրդեան երևցաւ , ներքուստին խընդրելով որ ծանր փողացաւ ըլլալուն չի կրնար խօսիլ : Ցարմար առիթ սեպեցին սա բանս Դեմոս-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:10 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թենի հակառակորդք, և ամբաստանեցին ժողովրդեան թէ նոյն գիշերը կաշառք կերած էր Հարբալոսէն, և ան պատճառաւ խօսեցին հրաժարեցաւ: Եւ յիրաւի քիչ շատ հաւանական կերեւնար ան կարծիքը. անոր համար ալ ամենայնիք զինքը բանտ դրին և յիսուն տալանդ ալ տուգանք առին (1,260,833 ֆռանք): Ան դատաստանին մէջ իրեն դէմ դատախազը Տինարքոս էր Եաքիվէայ բարեկամը, որ բաւական զօրաւոր և կենդանի ճարտասխօսութեամբ աշխատեցաւ իր հակառակորդը յանցաւոր ցցնելու. "Թէ որ Դեմոսթենն ինայեցու ըլլաք, ըսաւ, ով ամենայնիք, մեր հայրենեաց նախնի դիւցազանցը կը բողոքեմ. կը կանչեմ զԱմենաս մեր քաղքին պահապանը, և ուրիշ ամէն պաշտպանութիւն ընող աստուածներըը. հոս կը հրաւիրեմ Տարտարոսն ալ և անոր Կատաղիքը. կրսեմ անոնց թէ ամենայն դատաւորքը ժողովրդեան պարտաւոր սեպած անձին վրայ գթութիւն բանեցուցին. այո, վասն զի ինայեցին անոր՝ որ մանուկներեամբ իր հայրենիքը ծախեց. ինայեցին անոր՝ որ իր մահագուշակ տալանդովը բոլոր ամենայնուց ուժը ջլատեց, անոր՝ որուն կենացը կը փափաքին Ամենքի Թշնամիները, և որուն մահուամբը միայն մեր կործանումնը հնարք մը պիտի կարենանք գտնել": Բայց Պլուտարքոս կը հաւատարմացընէ թէ սուտ ամբաստանութիւն էր ան բանը Դեմոսթենի վրայ, և թէ ինքը Հարբալոսէն ամենևին կաշառք առած չէր. ան պատճառաւ այսպիսի զրպարտութեան մը դէմ միշտ բողոքեց Դեմոսթենն:

Դէմոսթենի մահը. — Դեմոսթենէս բանտէն փախաւ և երկար ատեն աքսորանաց մէջ անցուց իր կեանքը՝ որն որ աչքին առջևը մահուընէ դառնագոյն կերևնար: Բայց երբոր Ալեքսանդրի մահը ...

լաեց, և ձէկ աղեներայիք նորէն մակեդոնացւոց դէմ դնելու պատրաստութիւն կը տեսնէն, ու. բախութեամբ դարձաւ իր հայրենիքը: Աղեներայիք սկզով ընդունելեան զինքը, և մեծամեծ պատուասիրութեամբ առջի կրած ցաւերը մոռցընել տալին իրեն. և Դեմոսթենի ձեռքով կատարեցին Արտազդայ կեցուցչի բուստը զոհին հանդէսը, և յիսուն տաղանդ ալ իրեն ընծայ ըրին: Բայց Կրանոնի պատերազմը (322) ազատասիրաց փափաքանացը լուսն և վախճան տուաւ. Անթիպատրոս և Կրատեր յունաստանի ախրապետեցին, Աղեներայի մէջ մակեդոնացիք լեցուեցան և ոխերնին Դեմոսթենէն հանել ուզելով հրամայեցին որ մեռնի: Դեմոսթեն առ որ լսեց, մկկէն փախչելու հնարքը մտածեց. ուստի կալաւրիա կղզին անցնելով Պղատոնի տաճարն ապաւինեցաւ: Անթիպատրի պաշտօնեայքը շատ աշխատեցան համոզելու զինքը որ ան տեղէն դուրս ելլէ. երբոր ձար չեղաւ՝ մտածեցին բռնութեամբ հանել: Լսեցաւ անոնց միտքը Դեմոսթենի, թոյն առաւ և ձեռացուց ձէ իրենց կերթայ. երբոր Պղատոնի բակին առջևը հասաւ, հոն ընկաւ մեռաւ:

Երբոր մակեդոնացւոց բռնութենէն քիչ մը ջոնչ առին աղեներայիք, վիմոսթենի իրենց հայրենեացը բարերար և պարծանք ճարտասանութեան յիշատակը: Մասնաւոր արձան կանգնեցին իրեն պատուոյն այսպիսի վերտառութեամբ.

“ Եթէ քաջութիւն՝ի քեզ, ով Դեմոսթենէս,
Զուգահաւասար գոյր հանճարոյն,
Երբէք մակեդոնացին Արէս
Ոչ սիրասիր՝ի վերայ հելլենացւոց ,,:

Դեմոսթենէսի ազգ. — Քաղաքական նմուտ ճարտասիսոը՝ քաջարշաւ ընթացողն մը կը նմանցը-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:16 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նեն, որ միայն առաջ կերթայ իր նպատակին հասնելու համար՝ ճամբան վրայի գեղեցկութեանցը և ոչ աչք մը ձգելով կամ կեներալով։ Սաանկ է առասպել Դեմոսթենին ճարտասխոսութիւնը։ Իրեն նպատակ մը գրած՝ հայրենեաց ազատութիւնը, ամէն ուժովն ան բանին եռանդն կընայ, ամէն բանի մէջ անոր օգտակարութիւնը ցցընելու։ Ջօրաւոր և լայնածաւալ ասպարէզ մը առջևն ունենալով, հարկ չի սեպեր, չի ալ կրնար պզտիկ բաներու ուշադրութիւն ընել, և իր ճառերուն կտրուկը աւելցընելու համար համազօրական փառաւոր փնտռռել. աս պատճառաւ ալ է որ Եսքինէս քերթող ճարտասան կըսուի, Դեմոսթենէս պարզ ճարտասխոս. և իրեն աւելի պարծանք կընէ աս բանս արժանապէս։ Ուսոմն իրաւամբ զուրցած է Լանգինոս թէ "Աւելի գիւրին է երկնատուր կայծականց հրեղէն բոցովն անտառը ճնշել, քան թէ Դեմոսթենի ճառերն առանց կրքի կարդալ կամ լսել,,։ Դիոնեսիոս ալիկառնացին ալ կըսէ թէ "Երբոր Դեմոսթենի ճառերն մէկը ձեռքս կառնեմ որ կարդամ, կարծես թէ ախթապետող ատաուած մը կը տեսնեմ որ վիս հակառակամարտ կրքերով ուզած տեղը կը տանի. յոյս, վախ, արհամարհանք, բարկութիւն, սէր, ամէն կիրք հաւատարտակս կըզգամ,,։ Փեննեսան գողզիացին ալ այսպէս կը գրուատէ ելլադացի Ճարտասխոսը. "Դեմոսթէն, կըսէ, խոսելու տեղը կարծես թէ ինքիմքէ դուրս կելլէ, ու իր հայրենիքէն զատ ուրիշ բան աչքին առջևը չունի. ան պատճառաւ է որ գեղեցիկը չի փնտռեր, այլ ինքիմքէ կու գայ և լսողները կըմայլեցընէ։ Պօրոսայ, կը շանթէ. հեղեղատ մըն է որ ամէն առջևի եկածները կը յափշտակէ կը տանի...։ Ամէն բան աչքին առջևն կը վերցուին. վտան զի

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:17 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

դիմացը փիլիպպոս մը կեցած կը տեսնէ ,, : Ա-
ամէն կատարելութեանցը համար լսած են քննա-
քանք թէ ինչպէս Հոմերոս անհամեմատ է քեր-
թողական արուեստին մէջ, Պղատոն և Արիստո-
տէլ իմաստասիրութեան, Ալեքսանդր պատե-
րազմական արուեստի, նոյնպէս ալ Դեմոսթենն
Ճարտարախօսութեան մէջ :

Եպքինէս և Դեմոսթենէս իրենց արժանաւոր
ժառանգ չունեցան . վասն զի յունաստան գերի
եղաւ , և սկսան իմաստակք նորէն համարձակու-
թիւն առնել և ժողովրդեան առջևը մեծարանօք
պատուիլ : Նոյն ինքն Դեմետր փաղերացի որ հան-
ճարեղ և քաղաքագէտ մարդ էր , շատ ատորին
ոճ մը ունէր իր ատենախօսութեանցը մէջ : Ա և
ատոր նման ուրիշ անթիւ օրինակներէ յայտնի կը
տեսնուի թէ ազատ ժողովրդեան մէջ միայն Ճար-
տարախօսութեան արուեստը կրնայ ծաղկիլ, երբոր
ամէն մարդ ուզածը կարենայ խօսիլ և առաջար-
կել . գերութիւնը քերականապ մըն է :

ԳԼՈՒԽ ԼԴ .

ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ ԶՈՐՐՈՐԴԻ ԴԱՐՈՒՆ (Ի . Ս :)

կպէոֆաս . — փիլիպոն . — թէոպոմպոս . — Եփորոս :

Հերոդոտեայ , թուկիդիդէսի և Քսենոփոնի
նախանձորդ շատ պատմագիրք եղած են չորրորդ
դարուն մէջ . բայց անոնց շատին գլուածքը կոր-
ուսած , շատին ալ և ոչ անունը հասած է մեզի :
Անոնց կարգէն կը սեպուին կաեսիաս , փիլիստոն ,
թէոպոմպոս , Եփորոս և այլն :

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:17 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Կոնիա Ինիդոյի որ երկար ատեն Արտաշէս Ա-
շեղ Պարսից Յազատորին քով բժշկութեան ա-
րուեստը բանեցուցած էր, Պարսից և Յունաց վը-
րայ երկու պատմութեան գիրք գրեց: Կըսեն Թէ
գրութեան հաճոյական ոճ մը ունէր, և իրեն գըլ-
խաւոր նպատակ գրած էր զուարճացընել զըն-
թերցողը՝ քան Թէ անոնց ճշմարտութիւն ա-
դեր: Ա կարծեաց ստուգութիւնն աւելի իր մէկ
քանի հատուածներէն կիմացուին որ Փոտայ մա-
տենադարանին մէջ պահուած են: Նոյն բազմա-
հմուտ պատրիարքը կը յիշատակէ նաև Կոնիայ
մէկ ուրիշ երկասիրութիւնը, որ պատմութիւն
հնգկաց կըսուէր:

Փիլիպպոս Սիրակուսացի, Դիոնեսիոս երէց բանա-
ւորին խորհրդականը, սիրելին ու զօրավարն էր:
Բայց քիչ ատենէն սկսուեցաւ հեռը Դիոնեսիոս,
և Սիրակուսացին Ագրիա աքսորեց. հոն փիլիստոս
Հնոթինտ Սինիւոյ ըսուած գիրքը շարադրեց և
Դիոնիսեայ երէցոյ վրէժը: Երբոր Սիկիլիոյ իշխա-
նութիւնը կրտսերոյն Դիոնիսեայ ձեռքն անցաւ,
փիլիստոն յաքսորանաց նորէն ի հայրենիս գար-
ձաւ. և Դիոնի գէմ պատերազմ ունենալով,
զինքը նաւատորմին հրամանատար կարգեց ու Թըշ-
նամւոյն վրայ խրկեց: Բայց պատերազմը ձախո-
ղելով, Դիոնեսիոս իր աթոռը և փիլիստոն յաղ-
թութիւնը կորսընցուցին. և Թշնամեաց ձեռքը
իյնալով՝ անարգական մահուամբ մեռաւ: Առջի
յիշածներնէս զատ կըգտնուին Դիոնիսեայ պատմո-
ւիւն ալ շարադրած է փիլիստոն: Կիկերոն և
Կոռնելիանոս շատ անգամ կը գովեն ատ պատ-
մագիրը, ու գրեթէ Թուկիդիդեայ կը հաւասար-
ցընեն. ընդհակառակն Պլուտարքոս և Պաւսա-
նիաս կըսազատանեն զինքը որ շատ անգամ ճշմար-
տութենէ կը հեռանայ. որովհետև երկուց Դիո-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:17 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նիւեանց պատմութեանը մէջ հեղինակը իրենց հաճոյ ըլլալու համար կը շողոքորթէ և գովեստով կը պատմէ անոնց անարդարանալի անգթութիւնները :

Թէոդոս գիւաղի, որ նախ Խաչկրատայ աշակերտն էր, ու հետագրութեան եաւէ ընկած. եաքը Թուխկիդիդեայ պատմութիւնը շարունակել ուզելով, նախ նոյն հետքակուռ մտածողին պերպանեական պատերազմին պատմութեանը ուղիղ գիրք մը աւելցուց կամ ամբողջացուց, կըսուի, ու եաքը Յունաց պատմութիւն կամ Հելլենական և Համաօգութիւն Էրատոսթեայ բաւած գրքերը շարադրեց : Առնցմէ զատ շարադրած է նաև Ալեքսանդրի հօրը փիլիպպեայ պատմութիւնը, յիսունրուն գրոց մէջ ամփոփուած, որ ընդհանրապէս փիլիպպէ· կը կոչուի. բայց մէջը զանազան ազգաց ալ պատմութիւնք կը բովանդակուէին : Թէպէտև ինքը կը պարծէր պատմագրական ոճին վրայ, և Յունաց մէջ ինքզինքը առջինը կը սեպէր, սակայն շատ թերութիւններ ունի, որ իրեն մեծ պատիւ մը չեն ըներ. մանաւանդ Հելլենական և Պելոպոնեսեան մարտ պատերազմց բաւած գրքերը :

Եփորոս Կումայի, Խաչկրատայ վարժարանին մէջ Թուխկիդիդեսի աշակերտակից էր. ինքն առջինն եղաւ, ինչպէս Պոլիբիոս ալ կը վկայէ, որ ընդհանուր պատմութիւն մը շարադրեց, երեսուն գիրք բաժնուած : Նօթերհարիւր յիսուն տարուան պատմութիւն կը բովանդակէր սա երկասիրութիւնը, հերակլեանց Պելոպոնես արշաւելէն ինչուան Պերինթոսի պաշարումը (1190-340 Քրիստոսէ առաջ) : Վերջին կամ երեսներորդ գիրքը իր որդին Դեմոփիլոս շարադրեց՝ հօրը մահուընէն վերջը, Դիոդորոս սիկիլեացի իր Պատենա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:17 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

բանը չարտադրելու առեն չատ ժանդակութիւն կը-
ւած է Լիմորոսի պատմագրութեանէն : — կա-
ւանդեն թէ Լիմորոս ուրիշ գրքեր ալ շարադրած
ըլլայ Յ-ղափա գիւտից , Յաղափ Իարեաց և չարաց , և
Յաղափ -ձոյ :

Ձորրորդ դարուն մէջ ուրիշ զանազան պատ-
մագիրներ ալ եղան , բայց միայն աս չորսը աւելի
պատուականք կը սեպուէին : Ետա յիշատակա-
գիրներ ալ կային որ պատմագրաց նիւթ կը պատ-
րաստէին , յաճախատանի մէջ և մանաւանդ Աղեք-
սանդրի պատերազմաց առեն պատահած ամէն
օրուան դիպուածները գիր անցընելով :

ԳԼՈՒԽ ԼՂ·

ՄԻՋԻՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

Անթիմոս · — Ալէքսիոս · — Մենանդր · — Փիլիպպոս · —
Տիմիւսս · — Փիլեմոն · — Ապոլլոդոր :

Երբոր ոլբերգական քերթողութիւնը բոլորովին
ընկաւ , և բանաստեղծութեան ուրիշ սեռականներն
ալ մոռցուեցան , նոր սեռակ մը քերթողու-
թեան երևցաւ Մինչև Կոմէդիա-Նէոն անուամբ ,
որուն վախճանը նոյնպէս զուարճութեամբ ժո-
ղովուրդը կրթել էր · բայց քիչ շատ կրասխնասի ,
Եւրոպիոն և Արիստոփանեայ հնարածներէն տար-
բերութիւն ունէր : Վասն զի չէ թէ միայն պար-
երգութիւնը վերցուին , հապա նաև կառավարու-
թիւնը խառնու արդեօք դրաւ , որ կենդանի մար-
դիկ թատերախաղից մէջ վատահամբաւ ընելը մե-
ծամեծ տուգանք և պատիժ ունենայ , նոյնպէս

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:18 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ալ քաղաքական տեսչութեան վրայ խօսիլը ար-
գիլուած էր : Ա ոՀը բռնող կառավարգակ քեր-
թողաց մէջ անուանի եղան Անտիփոն և Ալեքսիս .
Անտիփոն հռոդացի մըն էր , և բնակութեամբ Ա-
թենքի մէջ հաստատուած . իսկ Ալեքսիս ալեք-
նացոց մանաւոր գաղթականութենէ մը առաջ
եկած : Ասոնց երկուքին ալ վարուցը վրայ որոշ
տեղեկութիւն մը չունինք . գրուածոցն ալ հա-
տուածները միայն ձեռնընիս հասած ըլլալով ո-
րոշ դատաստան մը չենք կրնար ընել : Սակայն աս
յայտնի է որ չափաւոր կերպով իրենց արուեստը
բանեցընելով , ոչ ժողովրդեան տեսչի եղան և
ոչ ալ բարուց ապականութեան առիթ : Բայց
ալ տեսչի հաստատուն ձև առաւ աս տեսակ քեր-
թողութիւնը երբոր Նոր ըսուած կատակերգու-
թիւնը հնարուեցաւ , որուն սկզբնաւորութիւնը
կը պատմեն թէ աս կերպով եղած ըլլայ :

Սոփրոն անունով սիրակուսացի մը , որ Դիո-
նիսեսոց ժամանակակից էր , միտքը դրաւ դուրսի
լեզուով արձակ թատերական քերթուածներ
շարադրել , և աս իր խորհուրդը ի գործ դնելով
տեսաւ որ սիրակուսացւոց շատ հաճոյական ե-
ղաւ : Ինքն իսկ Պղատոն , որ քերթողութիւնը
կատէր , կը զարմանար Սոփրոնի հանճարոյն և
ստեղծած գիւտերուն վրայ : Բայց տեսչի կար-
գաւորողը և ան տեսակ քերթուածին օգտակար
ընծոյն եղաւ Մենանդրոս , որ աթենացի էր , Քրիս-
տոսէ 342 տարի առաջ ծնած , և յիսունուերկու
տարեկան մեռաւ (290) : Իրեն հանճարած գիւտը
սիրելի և հաճոյ անցած ըլլալով ժողովրդեան , ու-
րիշ քանի մը հոգի ալ եւս եղան նոյն քերթողու-
թեան քիչ շատ յաջողութիւն . և անոնց մէջ ամե-
նէն տեսչի համբաւ ունեցողը Փիլեմոն եղաւ : Մե-
նանդրի գրուածոց շատը կորսուած ըլլալուն , լաւ

Generated on 2015-03-16 11:21 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

գաղափար մը պիտի չունենայինք իրեն ոճին և բռնած կերպին վրայ, թէ որ լատին կառակերգակը Տերենտիոս և Պղաւտոս շատ բանի մէջ իրեն հետևած և անոր գլխաւոր կառակերգուԹիւնները Թարգմանած չըլլային: Երկուք ալ Ապողոդորայ կառակերգուԹիւններէն Թարգմանած է Տերենտիոս, որ գրեԹէ Մենանդրի ժամանակակից էր: — Տերենտիոս կը պատմէ Թէ ինչպէս յունական կառակերգուԹիւններն՝ի լատին կը վերածէր. "Որովհետև, կըսէ, անոնք խիստ կարճ են, և մեր լատինական կառակերգուԹեանց պէս հինգ արարուածի չեն վերածուիր, և կապերն ալ գիւրահանդոյց և այնպիսի զուարճալի չէին սեպուեր հռովմայեցւոց համար, ան պատճառաւ Յունաց երկու կառակերգուԹիւնը հռովմայեցիք մէկի կը վերածէին և կամ միւնաւանդ կերկընցընէին Թարգմանաբար ԹէԹ խօսք ԹէԹ գործողուԹիւն աւելցընելով":

Մենանդր ԹԷոփրաստեայ աշակերտ էր. բայց աւելի եպիկուրեայց վարդապետուԹեան հետևող, որ ան առեններըը դեռ նոր սկսեր էր ծաղկիլ յունաստանի մէջ: Եպիկուրոսի վարդապետուԹեան սկըզբանց հետևողներըը. բայց Մենանդր անոնցմէ չէր, հապա մարդկուԹեան վրայ ցաւող, անոր վշտացը կարեկից և իմաստուԹեան յարգը ճանչցող, գիտնալով ԹէԹ ան կերպով պիտի կարենայ մարդուս խեղճուԹեան դարման մը ընել: Անոր համար իր քերԹուԹիւնքը ինչուան հիմա սկզբնագիր սեպուած են գրեԹէ ամէն ազգի կառակերգակ քերԹողաց:

Իրեն հանճարին հետևող և նախանձորդ եղան Փիլիպպոս, Տիփիլոս, Փիլեմոն և Ապողոդոր: — Փիլիպպոս աԹենացի էր, Փիլոկլեայ որդին, որ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:21 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

քառասունը չինգ կառավարչութիւն չարտադրից : — Տիփլիսա, ալինսկեցի, որուն համար Ալեքենէա կըսէ թէ քրիստոսից մէջ ամենէն սէրլի քաղցր ձայնեցողն է . ասիկայ ալ 50 հատի չափ կառավարչութիւն չարտադրած է : — Իսկ փիլեմոն անուամբ երկու քրիստոսք կան, հայր և որդի, սինկլիտոսք : Առջինը իննսունըեօթը կառավարչութիւն չինած է, և շատ անգամ ալ Մենանդրի յաղթող երեցած ատպարիզի մէջ . իսկ երկրորդը յիսունըչորս կառավարչութիւն չարտադրած : — Նոյնպէս ալ Ալոզոդոր անուամբ զանազան կառավարչական քրիստոսք կան : Առանցմէ մէկը աթենացի է, և քառասուն կառավարչութիւն ունէր . երկրորդը կարիատացի, երրորդն ալ Սինկլիտոյ գերեզմանքէն : Այս երկու վերջինին քրիստոսութիւններէն հատուածներ կան, բայց անկարելի է ատոնցմէ մէկուքէն ոտանաւոր ըլլան :

ԳԼՈՒԽ ԼԸ .

ԵՐԿՈՒ ԽՄԱՕՏԱՍԷՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒ

Տիմոն . — կղէանթես :

Քրիստոսէ իրիքհարիւր տարի առաջ Աթէնք իր քաղաքական պայծառութիւնը կորսնցնելսկսեր էր, բայց դպրութեանց իշխանութիւնը դեռ բոլորովին վերցուած չէր . և թէպէտ կիմաց ուէր անոնց անկման վիճակի մէջ ըլլալը, սակայն ան ալ յայտնի կերևնար թէ իրենց պայծառութեանը համեմատ անկումն էր : Դպրոցներն ինչպէս ան առենը կային . ամէն փիլոսոփայութեանց

կարիճ ուսուցիչք և բաւական համբաւ ունեցող Ճարտասանութեանք, քերականք, բանաստեղծք և իմաստասէրք։ Սկզմէկու հակառակ կարծիք ունեցող փիլիսոփայք, ինչպէս Եպիկուրոս և Զենոն, և Լիկէոնի և Ճեմարանի (Ակադեմիոյ) աշակերտները շատ վարդապետութեանց մէջ սկսան իրարու հետ միաբանիլ։ Բայց գրութեան ոճերնին քիչ շատ տխուր կերպարանք մը սկսեր էր առնել։ Եպիկուրոսի գրուածներէն քանի մը հատուածք հասած են մեր ձեռքը, որոնք հասկընալու համար կարծես թէ գուշակութեան ոգի ունենալու է. նոյնպէս ալ Զենոն՝ որ խօսակցութեան մէջ այնչափ ազդու և վայելուչ կերպ ունէր, գրուածոցը մէջ յամաք, վարդապետական և անզբօս եղանակ կը բանեցընէր։ Խրիւսիպպոս գանգատ կընէր գրութեան վայելչութեանը բոլորովին կորսուելուն վրայ, և կելլէր ինքն ալ նոյն կերպով իր վարդապետութիւնները կարձանագրէր. Արկեսիլաս՝ որ նոր ըսուած Ճեմարանին գլուխն էր, բաւական հանճարի տէր մարդ, և թէ որ ուզենար՝ կրնար անմահական համբաւ ստանալ. բայց ինքն ան փափաքը չունեցաւ, և ոչ ան գրաւորական փառասիրութիւնը, որ միայն կրցեր է այնչափ անուանի մարդիկ հանել։ Միայն երկու հոգի եղան ան ատենը հռչակաւորք և յիշատակութեան արժանի, առջինը Տիմոն գրագէտ (Sillographe) որ պիւռհոնական իմաստասէր էր, և երկրորդը Կղեանթես՝ Զենոնի աշակերտը։

Տիմոն գրագէտ. — Փլիուսնտացի էր Տիմոն։ Նախ Մեգարայի վարժարանին մէջ իմաստութիւն ստորվելով, ետքը գնաց Պիւռհոնի աշակերտեցաւ, և անոր մահուընէն վերջը ակեպսիկեան ազանդին գլուխ եղաւ։ Երիտասարդութեան ատենէն Աթէնք գնաց, և ինչուան մահը հոն կեցաւ (260)

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:23 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ինքնուն տարուան հասակին մէջ։ Ոտանաւոր քերթուածներ դրեց, որոնք կերևնայ թէ իմաստասիրական կամ բարոյական երգիծաբանութիւն ներ ըլլան։ Բայց գինքը աւելի համբաւաւոր ընողը իր երգիծականք (Silles) ըսուած իրեք գիրք քերթուածներն են, որոնցմէ շատ հատուածներ պահպանած է Դիոգինես լայերտացին. ատոնք վեց տաղաչափով ամէն իմաստասիրաց վարդապետութեանցը քովանդակութիւնքն էին։ Երկրորդ և երրորդ գիրքը որամախօսութեան ոճով գրուած էր. իսկ առջինը Տիմոն իր բերնէն կը խօսեր անվախ համարձակութեամբ, ինչուան Պղատոնի, Սոկրատայ և անոնց նմանեաց պէս մարդիկը կատակի և երգիծանաց նիւթ ընելով։

Կղէանթես. — Բոլորովին ուրիշ ոգեայ տէր մարդ էր Կղէանթես եւտրատցի իմաստասէրը (310), որուն վրայ ալ անաչառ քննութիւնները կընէր Տիմոն "Շատախօս և անարգ քաղաքացի Ասեայ,, կոչելով։ Սակայն Կղէանթես մեծ ոյժի և հանճարոյ մարդ էր։ Նախ լմնչասիրութեան եռանդ եղաւ, եօքը իր աղքատութեանն սոխապուկելով Աթենքի մէջ պարապիզպանութիւն կընէր։ Այն առեներն էր որ Զենոնի հետ ծանօթացաւ և իմաստասիրութեան սէր ձգեց. որով գիշերները պարապիզի մէջ կաշխատէր, որպէս զի ցորեկն առեն ունենայ Զենոնի վարդապետութիւնը մտիկ ընելու։ Անով այնչափ մեծացաւ, որ Զենոնի մահուընէն եօքը անոր անուանը եղած վարժարանին գլուխ կեցաւ և ինչուան ինքնասպանութեան տարի տպրեցաւ։ Կըսեն թէ Կղէանթեայ գրուածքը անուշ և քերթուլական ոճով էին, շատ աեղ գրեթէ Պղատոնի և Արիստոտէլի հաւասարելով, բայց հիմա իր գրուածքը մեր ձեռքը չեն։

Generated on 2015-03-16 11:24 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ԳԼՈՒԽ ԼԶ.

ԱՂԵՔՍԱՆԴՐԵԱՆ ԴՊՐՈՒԹԻՒՆ

Ալէքսանդրեան մասէն. — Դպրոցին. — Լինէրն հղէնսի. — կաւլիմաքոս կիւբենսի. — փիլեքսոս կեվսի:

Ալէքսանդրեան մասէն. — Քրիստոսէ առաջ երրորդ դարը յունաստանի համար շփոթութեանց և ալէկոծ ժամանակ մը եղաւ: Բայց իրեն չորս կողմը եղած գաւառները յունական քաղաքականութեամբ կրթուած, անանկ մարդիկ կը գըտնուէին որ ուսմանց և դպրութեանց փոյթ և ջանք ունենան. ինչպէս Սիկիլիա, որ Հերոն Բ բարեմարդիկ Թագաւորին ուսումնական տեսչութեան կարգերումը առաջ կերթար: Սակայն Ալէքսանդրի պատերազմից պատճառաւը Յունաց մէջ դիտութիւնք շատ ետ մնացին, և արուեստներէն ալ շատը գրեթէ բոլորովին մոռցուեցան: Իր մահուընէն ետքն ալ երբոր Թագաւորութիւնը զանազան կտոր բաժնուեցաւ, յաջորդներն իրենք ալիրենք շուայտութեան և զեղխութեան տուած, գրեթէ բոլորովին մոռցան և մոռցընել տուին դպրութիւնը: Միայն պտղոմեանք կամ Եգիպտոսի Թագաւորները չանք ունեցան որ գիտութիւնք ծաղկին. և ան պատճառաւ բոլոր իմաստուն և հռչակաւոր մարդիկ Ալէքսանդրիա կանչեցին, առատաձեռն պարգևներով զանոնք խրախուսեցին ու քաջալերեցին. և միայն Բրուգիոնի պալատին մէջ հարիւր հազար գրքով գրատուն մը

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:24 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կանգնեցին, ուրիշ մըն ալ Սերապեում մեհենին մէջ եօթանասուն հազար դրքով։ Ալեքսանդրեան ըսուած վարժարանը հաստատեցին, որ գրեթէ հիմակուան համալսարաններուն կը նմանէր, ուր վարժապետութիւն ըրին կալլիմաքոս, Ապողոնիոս, Զենոդոտ և ուրիշ հռչակաւոր ուսուցիչք։ Կըսեն թէ պտղոմեայ Սոտերի աս անուանի վարժարանը կանգնելուն խորհուրդը Դեմետրիոս փալերացին առած ըլլայ, որ Աթենքէն քշուելէն ետքը Ալեքսանդրիա ապաւիներ և հոն մեծ աջր և հիւրընկալութիւն գտեր էր։

Ան առեններէը պտղոմեանց ջանքով գրականութեան պայծառ եղող երկասիրութիւնք սկսան երևնալ։ Սուրբ գրոց յեբրայականէ՛ի յոյն թարգմանութիւնը՝ եօթանասուն բաբունեաց ջանքովը, Մանեթոնի ժամանակագրական աշխատութիւնները և խուզարկութիւնները, Եւկլիդէսի և իրեն հետևող զանազան իմաստնոց չափաբանական երկասիրութիւնները։ Բայց աս ալ խոստովանիլ պէտք է թէ պտղոմեանց ջանքին համեմատ չելաւան առենուան գրութեանց ծաղկիլը. և թէպէտ շատ քերթողք կային, սակայն հազիւ թէ սմանց գրուածքը հանձարուտ և տպանդի սէր մարդկանց երկասիրութիւնք կերևնան։ Ասոնց կարգին կրնան սեպուիլ Լիկոփրոն կողքիսացի, կալլիմաքոս կիւրենացին, և ասոնցմէ աւելի՝ Փիլետաս կոսացին որ եղեայրատեր պտղոմեայ հրահանգիչն էր։

Լինոփրոն ողբերգակ քերթողութեան եաևէ եղաւ. իրեն երկասիրութիւններէն մեկ քանին մեր ձեռքը հասած են, որոնցմէ կերևնայ իր ջանքը Նաքիլեայ ոճին և քերթողական ոգւոյն հետևողի ըլլալուս։ Ան պատճառաւ ալ է որ շատ բան օրինակեր է իրմէն, և շատ ալ նմանողութեամբ շարադրեր։ Սակայն իրեն գլխաւոր պակասութիւնը

Generated on 2015-03-16 11:25 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ան է որ լեզուն և քերթողութեան ոճը անիմա-
նալի և մութ ինացեր է, և գրեթէ շատ տեղ ալ
բոլորովին անհասկանալի:

Իսկ Կալլիմաքոս հմուտ մարդ կերևնայ, և կըսեն
թէ շատ վարդապետական քերթուածիներ շարա-
դրեր է արձակ և ոտանաւոր բանիւ: Իրեն ժա-
մանակակիցքը Կալլիմաքոսի եղերերգուածոյ
վրայ մեծ համարմունք կը ցցընեն, և կատուլլոս
անոր քերթուածոց մէջ ընտրելագոյնքը որ Գէսո
Բերինիկեայ կըսուէին՝ դարձուց 'ի լատին: Լիկո-
փրոնի պէս Կալլիմաքեայ ոճն ալ մութ և շատ
տեղ անիմանալի է: Զանազան վերատուութիւնք
և երգեր ալ շարադրած է Կալլիմաքոս:

Ապողոնիոս. — Կալլիմաքեայ աշակերտացը մէկն
էր Ապողոնիոս աղեքսանդրացի պատանին: Քան
տարուան եղած տեղը Արգոյ նաւորդաց վրայ
դիւցազներգակ քերթուածիւն մը շարադրեց և
հրատարակեց: Եւ որովհետև շատ հաճոյ անցաւ
ամենուն ան քերթուածը՝ նախանձեցաւ անոր
փառացը վրայ Կալլիմաքոս իր վարդապետը. և չէ
թէ միայն խօսքով՝ հապա նաև գրով ալ և դառն
երգիծաբանութեամբ կայսեր աչքէն հանեց
զինքը: Ան տեղն Հռոդոս առանձնացաւ Ապո-
ղոնիոս, և հռետորութեան և քերականական
ուսմանց մանաւոր լսարաններ սահմանելով իր
ապրուստը կը ձարէր: Հոն նորէն աչքէ անցուց
իր Արգոյ նաւորդաց քերթուածը, և աւելի մեծ
համբաւ ստանալով Աղեքսանդրիա կանչուեցաւ.
և որովհետև իր նախանձորդը Կալլիմաքոս մեռած
էր, Ապողոնիոս քանի գնաց մեծցաւ փառօք և
մեծարանօք, և ինչուան իննսունուերկու տարի
ապրելով խորին ծերութեամբ մեռաւ Աղեք-
սանդրիա: Կըսեն թէ իր մարմինը Կալլիմաքեայ
գերեզմանին մէջ թաղեցին: Արգոյ նաւորդաց ա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:25 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ղէքսանդրեան քերթուղեանց մէջ ամենէն աւելի ընակիրը սեպուած է արժանապէս. որով քերթողը մեծ համբաւեամբ և բանական արուեստով առանց դիցաբանական խառնակուղեանց կրցեր է՝ի գլուխ հանել ան քերթուածը:

Ան առեններն երևցած մարդկանց մէջ նշանաւոր սեպուած են իրենց համբաւեամբը և գրաւոր բական հանճարովը Զենոդոտ եփեսացի, Արիստոփան բիւզանդացի և Արիստարքոս. որոնք շատ աշխատանք և արդիւնք ունին հոմերական երգոց քննուղեամբը և ընտրելագոյն օրինակներու հետ բաղդատուղեամբ: Բայց՝ի հոմերոսէն ուրիշ շատ հին մատենագրաց գրուածները կարդի դրին, և գրչաց անհոգուղեամբ և կամ տգիտուղեամբ մնած վրիպակները սրբագրեցին և կոկեցին:

ԳԼՈՒԽ ԼԷ.

ՍԻԿԻԼԵԱՆ ԴՊՐՈՒԹԻՒՆ

Տիմեոս պատրմենպացի. — Հոխնդոն. — Հովնեբգակ փերևուևիան և անոր սկիզբը. — Թեոկրիտոս. — Բիոն. — Մոսխոս. — Հոխանոս. — Արատոս. — Եփորիոն փաղկիոացի. — Հերմեսիանակտս կողոփոնեցի. — Ռէրոսոս. — Մանեթոն պիտոսպոլսեցի:

Պատմուղենէ գիտենք թէ Յունաց գաղղիականներուն շատը Իտալիոյ հարուածակոխը անցնելով՝ շատ ծաղկեցուցին ան գաւառները թէ գիտուղեամբ և ուսմամբ և թէ արուեստներով, և մէջերնէն բաւական հռչակաւոր մարդիկ ելան: Ասոնցմէ մէկքանին յիշատակենք:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:26 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Տիմեոս փաբոմենոպոյէ. – Ընքիմեդէսէն զատ ան առեննեըը Սիկիլիոյ մէջ երեւցած արձակագիրը հելինակաց մէջ գլխաւորը կը սեպուի Տիմէոս տաբրոմենատցի պատմագիրը, որուն համար կըսեն թէ քառասուն գրքի մէջ Սիկիլիոյ պատմութիւնը շարադրեր է: Կատանդեն թէ շատ ժամանակագրական ճշդութեամբ և համառութեամբ գըրուած էր, բայց ոճոյ պարզութիւն չունէր. և ասիական ըսուած ընդլայնմամբ և անարուեստ ճարտասանութեամբ յօրինուած:

Հունդոն. – Հունդոն սիրակուսացին կերեւնայ թէ հանճարաւոր մարդ եղած ըլլայ, և մանաւոր չանք ունեցած ողբերգութիւնը նորէն ծաղկեցընելու. ան պատճառաւ ալ նոր տեսակ մը թատերգութեան հնարեց պրաբրն ողբերգունիէն (hilarotragédie) անուամբ, որուն մէջ թէ կատակերգութիւն և թէ ողբերգութիւն կը մտնէր. կամ թէ աւելի բացայայտ խօսելով՝ ողբերգական նիւթ մը՝ կատակերգութեամբ սեթափեցուցիչ և զբօսալի ըրած:

Հովուերգակ երկուներն և անոր ոիկիքը. – Արդէն սիկիլիացի մը Եպիքարմոս անունով կատակերգակ քերթուածեան սկզբնաւորութիւն տուողը եղեր էր. նոյն Սիկիլիան ալ հովուերգակ քերթուածեան առջի ճաշակն ընծայեց Եւրոպայ: Բանաստեղծութիւնը մարդկութեան առաջին լեզուն ըլլալով, և առջի կեանքը հովուութիւն, պէտք էր որ ամեն ազգաց գրականութեան սկիզբը գանուեր առ տեսակ ախորժընկալ քերթուածիները. սակայն զարմանալին առ է որ գրեթէ միշտ քաղաքակիրթ ազգաց մէջ ծներ, կամ աւելի ճիշդ ըսենք, մեծցեր ու բարգաւաճեր է: Ինչպէս Հռոմ ալ իր օգոստեան կամ ոսկեղէն դարուն մէջ ունեցաւ հովուերգակ քերթող-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:26 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նեբը, Եւրոպա ալ վեշտասաներորդ դարուն և Գաղղիա իր հռչակապանծ լուդովիկեան ժամանակները։

Հովուերգութիւնը (poésie bucolique) որչափ ալ կարգէ դուրս և գլեմէ անարգ կամ սորին քերթուեան տեսակ մը սեպուի, սակայն ամենաբնական է, և բնութեան նախնական պատկերը անկարելի է որ մարդուս մտքին մէջէն ջնջուի։ Քանի որ նոյն կենաց պարզութիւնը վայելէ, կարծես թէ չգտար, և իւրեն տաղտկալի բան մը կերևնայ. մէյմը որ կուրընկերնելու ըլլայ, և քաղաքական բազմազբաղ կենաց հոգերը վրան ծանրանան, ան ատեն կրսկսի բնութեան գեղեցկութիւնն իմանալ, ան ատեն ան գիւղական վայելչութիւնը և առանին խաղաղութիւնն իրեն ցանկալի կերևնայ, և կը ջանայ գէթ բնութեան վայելքը նկարագրելով գոհ ըլլալ և սփոփուիլ։ — Ա՛ս կերպով սկսաւ հովուերգակ բանաստեղծութիւնը։ Նախ մեծին առաքեալութեամբ էր, ուստի և անիմանալի ոճով կը գրուէին աս քերթուածները։ Հովուերգութեան առաջնին Թարգմանն եղաւ Վարինէ, հովուաց մէջն ամենէն վայելչադէմը, սիրելին և եռանդունը. իւրեն հետեւցան ուրիշ շատ քերթողք ալ, Թէպէտև ոչ նոյնպիսի յաջողակութեամբ, և ոչ իւրեն պէս կրնայլով բնութեան գեղեցկութիւնն ասպրագրել։ Սակայն ատեն անցնելէն ետքը անուանի եղաւ Թէոկրիտոս։

Թէոկրիտոս. — Մեծին յունաստանի մէջ երևցած հեղինակաց գլխաւորը և սիկիլեան գպրոցին հանց պարծանք եղաւ Թէոկրիտոս, որուն միայն մէկ պզտի քերթուածին՝ Կալլիմաքոսի և Ապողոնեայ ամէն գրուածները կարժէ։ Սիրակուսացի էր Թէոկրիտոս, բայց իր ծննդեանն ու

Generated on 2015-03-16 11:48 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

մահուան ճիշդ ժամանակը չի գիտցուիր: Երիտասարդութեանն առեներ երկար ժամանակ կովկըզին կեցաւ, և հոն փիլեասա քերթողն անոր ուսուցիչն էր. եաքը իր վարդապետին հետ Աղէքսանդրիա գարձաւ (275). և թէպէտ եղբայրաւեր Պաղոմէոսն այսպիսի հանճարեղ մարդիկներուն վրայ մեծ մտադրութիւն կընէր, բայց հաւանական կերեւնայ թէ կալլիմաքեայ նախանձայուզութեամբը Թէոկրիտոս Աղէքսանդրիոյ մէջ չիկրցաւ առաջ գալ: Ան պատճառաւ Սիրակուսա անցաւ և Սիկիլիայէն մէյմըն ալ դուրս չելաւ, և հոն շարադրեց իր քերթուածներուն մեծ և ընտիր մասը: Կը կարծուի թէ Թէոկրիտոս ծերութեան հասակին մէջ մեռած ըլլայ, և թէ տեսաւ հռովմայեցւոց Սիրակուսայի պիրապետելը:

Շատ տեսակ քերթուածներ շարադրած էր Թէոկրիտոս. ինչպէս եղերերգութիւններ, երկդառնեների տաղեր, և այլն. բայց մեր ձեռքը հասածները միայն իր հովուերգութիւններն են և քանի մը վերատառութիւնք:

Թէոկրիտոսի հովուերգութիւնները. — Ոմանք կըսեն թէ Թէոկրիտոսէն առաջ ալ շատ ծաղկած էր հովուերգակ բանաստեղծութիւնը եւլատացւոց մէջ. սակայն թէ որ ճշմարիտ ալ սեպենք ատ խօսքը, հարկ է խոստովանիլ որ Թէոկրիտոս գերազանցեց զամէնքը: Վասն զի ինքը միայն կըրցաւ, ինչպէս որ պէտք է, հովուական կեանց ճիշդ նկարագիրը տալ. որով իրմէ եաքը ան տեսակ քերթողութեան եանէ եղողը հարկ եղաւ որ Թէոկրիտոսեան իրեն օրինակ առնէ, կամ անոր խօսքերը գաղափարէ թարգմանէ: Նոյն ինքն Վիրգիլիոս որ հովուերգակ լատին քերթողաց մէջ անհամեմատ սեպուած է, Թէոկրիտոսի հետևած է շատ հովուերգութեանցը մէջ:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:49 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Սիրակուսացի. — Ա՛ս անուամբ քերթուածին մը շարադրած է Թէոկրիտոս, մարդկային կէնաց յարաբերութիւններն ստորագրելու համար՝ առանց Թատերական կապերու, և որ աւելի կատակերգութիւն կրնայ սեպուիլ՝ մէջը եղած իւսակցութեանց ղուարճաբան ոճին և լեզուին պատճառաւը։ Գլխաւոր նիւթն սա է. սիրակուսացի երկու կանայք, որոնց փեսաներն Աղեքսանդրիա էին, մէկմէկու տեսութեան գնացած ըլլալով, իսկոյն մէկ կընեն Պտղոմէոսի արքունիքը և Ադոնիա տաւուծոյն տօնական հանդէսները տեսնելու երթալ։ Երկան բաւական աս բանիս վրայ իսօսակցութիւն կըլլայ մէջերնին. և եռքը ճամբայ կելլեն։ Բայց ճամբուն վրայ մեծամեծ նեղութեանց և դժուարութիւններու կը հանդիպին. Պտղոմէոսի պալատան ալ տեսնելէն եռքը կելլեն Ադոնիսի տաճարն ալ կերթան, և այլն։ Նիւթը որչափ ալ ցամաք և անալի երևնայ, քերթողը կրցեր է զբաւարճութեան կերպարանք մը տալով՝ ան տեղուան սիկիլիացւոց զանազան թերութիւններն ուղղելու։

Բիոն և Մոսքոս. — Թէոկրիտոսէն քիչ տարեն եռքը անուանի եղան տաղնք. Մոսքոս Սիրակուսայի մէջ ծաղկեցաւ, Բիոն ալ՝ ի Զմիւռնիա։ Բիոնի համար կըսեն թէ հովուերգական քերթողութեան աւելի վայելուչ կերպարանք մը տուաւ իր ճարտար գրչովը և մեծ հանճարով. և յիրաւի իրեն անուամբը գտնուած քանի մը գրուածոց մէջ ալ շատ կատարելութիւններ կը տեսնուին։ Բիոն եղերերգական քերթուածին մը գրած է՝ ի պատիւ Ադոնիսի. իսկ Մոսքոսի անուամբ միայն չորս հովուերգութիւնք կը գտնուին։ Թէ որ ուշադրենանք սա երկու հովուերգական քերթողները Թէոկրիտոսի հետ համեմատել, շատ վար կը գտնք թէ իրենց հանճարովը և թէ արուեստով։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:49 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Նոյն երրորդ գարուն մէջ ծաղկեցան Հռիփսիմա, Արատոս, Եւփռոսինն քաղկիսացի, Հերմիսիանաքս կողոփոնեցի, և այլն: Բայց ասոնց մէջ ամենէն հռչակաւոր սեպուած է Բերոսոս քաղդէացի պատմաբանը, որ մեծին Ալեքսանդրի ժամանակակից էր և եղբայրսասէր Պտղոմեայ սաեռը ծաղկեցաւ: Բաբելացւոց և քաղդէացւոց պատմութիւն մը գրեց, արքունի մատենադարաններէն քննելով և անոնց վրայ եղածներն ստուգելով: Իրեն գրուածներէն զանազան հատուածք կը գտնուին Յովսեպոսի և Եւսեբեայ գրոցը մէջ: Իրեն աշակերտն էր Աբիւդենոս որ Ասորւոց պատմութիւն մը գրեց, որուն նոյնպէս հատուածները կան անդէ Եւսեբի:

Մանեթոն.— Եգիպտոսի Դիոսպոլիս քաղաքէն էր Մանեթոն, արարողապետ և հմուտ սրբագան լեզուին եգիպտացւոց, Բերոսոսի ժամանակակից: Եգիպտոսի իր հայրենեաց պատմութիւնը շարադրեց իրեք գիրք· գիւցազանց կամ առասպելաբար ժամանակներէն սկսելով մինչեւ Դարեհ Կոդոմանոս՝ Պարսից վերջին Թագաւորը: Մանեթոն կասանդէ Թէ իր պատմութեան գիրքը հին եգիպտական ժամանակագրութիւններէն քաղեր է, այսինքն՝ ան արձանագիրներէն զոր Հերմէս Տրիսմեգիստոս սրբագան տառերով այլեայլ սիւներու վրայ գրոշմեր էր, զորոնք եաքը Ագաթոդեմոն, երկրորդ Հերմեայ որդին և Տատոյ հայրը, իրենց աշխարհիկ կամ հասկնալի լեզուովը Թարգմանեց ու մեհենի մը սրբարանին մէջ պահեր էր: Երատոն հաբոպոռնէանց կամ Թագաւորական յաջորդութեանց ցանկը կը գնէ Մանեթոն, 113 Թագաւորք հաշուելով որոնք 4475 տարուան միջոցի մէջ տիրեցին: Եւ որովհետև աս երկայն միջոցը՝ տուրբ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:49 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

գրոց ժամանակագրութեան հետ չի միաբանիր, ս-
նոր համար շատերը զՄանեթոն իբրև առասպե-
լապատում կարհամարհեն, թէպէտև ոմանք ալ
կը ջանան իր մէկ քանի առասպելեալ հարստու-
թիւնքը վերցընելով աստուածաշնչի հետ միա-
բանել[1]:

ԳԼՈՒԽ ԼԸ.

ՊՈՂԻԲԻՈՍ

Պողիբիոս. — Իր ընդհանուր պատմութիւնը:

Պողիբիոս. — Զորրորդ գարուն ամենահռչակ պատմագիրը և արդի պատմչաց գաղափարը Պո-
ղիբիոս Քրիստոսէ 204 տարի առաջ ծնաւ Ար-
կադիոյ Մեգաղուպոլիս քաղաքը: Լիկորդաս իր հայրը աքայեան դաշնակցութեան գլխաւորնե-
րէն էր. ան պատճառաւ որդին ալ երկար տաճն քաղաքական պաշտամանց եռանդ եղաւ, իր հայ-
րենեաց ազատութեան և անկախութեան համար ամէն ջանք ընելով: Բայց հռովմայեցիք զօրացան վրանին, յաղթեցին իրենց և Պողիբիոս ալ ճե-
ռուբընին ընկած պատանդներէն մէկն էր. ուսոյ հռոմ բերուելով երկար տաճն կեցաւ ան աք-
սորանաց մէջ: Սկիպիոն Եմիլիանոս անոր հան-
ճարը ճանչցաւ. և իբրև իրեն բարեկամը այնպէս

1 Մանէթոնի գրուածքը ընդհանուր կորուած է, բայց Յովսեպոս Փլաւիոս և Սինկելոս իրենց գրուածքին մէջ ա-
նոր այլևայլ հատուածները կատարած են. բայց ասոնք էլ այն, ամբողջ և յաջորդական հատուածները՝ ե-
թէ ջէ հայերէն թարգմանութիւնը մէջ գտնուեցաւ:

Generated on 2015-03-16 11:50 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

պատուեց զինքը և ամէն բանի մէջ ձեռնտու եղաւ. և երբոր գոռոզ կարքեդոնը ընկճելով յաղթական քաղաքը մտաւ, հետն էր նաև Պողիբիոս: Սկիպիոնի ցցուցած սիրոյն փոխարէն մը ուզելով ընել Պողիբիոս՝ միտքը դրաւ հռովմայեցւոց աշխարհակալութեանց պատմութիւնը գրել, իր քաղաքակցաց առջևը դնելով թէ ինչպէս կամ ինչ կերպերով Լատինի փոքրիկ ժողովուրդ մը կրցաւ ասիացիի մեծնալ և գրեթէ բոլոր աշխարհքի հրամանատար սեպուիլ: Ա՛ս գիրքը գրելու պատճառաւ հրաման եղաւ իրեն որ կարենայ սերութեան ամէն գիւանները քննել, և նպատակին հարկաւոր սեպուած նիւթերը ժողվել. եաքն ալ Թոյլ տուին որ երթայ Եգիպտոս, Գաղղիա և Սպանիա ճամբորդութիւն ընէ:

Երկար քննութիւններէ և հետազօտութիւններէ եաքը Պողիբիոս իր ընդհանուր պատմութիւնը հրատարակեց, որ կըսկսէր պունիկեան երկրորդ պատերազմէն ինչուան Պերսէոս Թագաւորին յաղթուիլը, յիսուն տարուան պատմութիւն, Թէպէտև իր առջի երկու գլխին մէջ աւոնց նախընթաց դէպքերը համառօտելով կը յիշատակէ, ինչպէս պունիկեան առաջին պատերազմը, և նոյն ատենները Սիկիլիոյ, Ափրիկէի, Դալմատիոյ, Կեղտաց, Սպանիոյ և յունաստանի մէջ եղած դէպքերը, մինչդեռ Աննիբաղ իր Իտալիոյ վրայ արշաւանքը չէր ըրած: Կըսեն Թէ Պողիբիոսի ամբողջ պատմութիւնը քառասուն գրոց մէջ բովանդակուած էր. իսկ մեր ձեռքի հատածները ամբողջ առջի հինգ գլխերն են. բայց վերջի ժամանակները Անձելոյ Մայ հմուտ և հնախոյզ ծերանաւորը ուրիշ շատ գլխերէն ալ երևելի հատուածներ հրատարակեց վատիկանեան մատենադարանին կըրկնագիր (palimpseste) ձեռագրաց մէջ գտնելով:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:52 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Քիչ պատմագիր եղած է որ Պոլիբիոսի չափ ճշմարտապատում ըլլայ և հմուտ գատողութեան և անկողմնասեր ոգւոյ տէր. անանկ որ եթէ իր պատմութեան գիրքը ամբողջ ունեցած ըլլայինք, շատ աւելի լաւ և ստոյգ ծանօթութիւն պիտի ստանայինք հին հռովմայեցւոց վրայ, և Լիբիոսի և Սալուստիոսի պատմած առասպելներուն տասը թիւնը պիտի չյայտնուէր, վասն զի Պոլիբիոս եղաւ որ մեզի հռովմէական քաղաքականութեան ա րուեստին խեչամտութիւնն ընծայեց:

Ան և ասոր նման կատարելութիւններուն ալ քանի մը պակասութիւններ ունի Պոլիբիոսի պատմական ոճը. վասն զի գրութեան եղանակն աւելի իմաստասիրական ըլլալուն՝ ընդհանրապէս ցուրտ է, և ուրիշ անուանի պատմչաց աշխոյժը չունի երբեմն մութին վրայ. սակէ զատ իրեն ժամանակակիցքը վնաքը վար կը զարնէին լեզուին անհարթութեանը համար: Բայց այսու ամենայնիւ Պոլիբիոսի ընդհանուր պատմութեան գիրքը հնոց հանճարին և ընդհանուր մարդկութեան պատիւ և փառք ընող հրաշակերտներէն մէկն է: Ոչ հեռոդոտեայ ջրուեպն ունի, կրսէ Յ. Միւլլէր գերմանացին, ոչ Թուկիդիդեայ ուծը, և ոչ Քսենոփոնտեայ ամֆոփ ուճը, որով քիչ խօսքի մէջ շատ բան կրսէ. բայց պետութեան անձ մըն է, բոլորովին իր նիւթին մէջ ընկղմած, առանց փոյթ ունենալու թէ ինչ դատաստան պիտի կարեն իր աշխատասիրութեանը վրայ բանասէրք. վասն զի ինքը աերուեճ պաշտօնակալաց համար կը գրէր. պոփճատոբանութիւնն է իր գրոցը յայտարար նշան: Պլուտարքոս կասկածէ թէ Մարկոս Բրուտոս, որ զՅ. Կեսարն սպաննեց, Պոլիբիոսի պատմութեան գրքին համառօտութիւն ըրեր ու միշտ կը կարդար. ինչուան պատերազմի գացած ատենն հետը կը տանէր:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:55 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Պողիբիոս իր ծերութեան առեներն ուզեց մէյմըն ալ հայրենի երկիրը տեսնել, որուն համար այնչափ աշխատեր և այնչափ ալ վիշտ քաշեր էր, ուստի Աքայիա դարձաւ (128) և հոն հինգ կամ վեց տարիէն եսքը մեռաւ։

ԳԼՈՒԽ ԼԹ.

ՕԳՈՍՏՈՍԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՏԵՆԱԳԻՐՔ

Պոլիբիոսի յաջորդները. — Դիոնէսիոս ալիկառնացի. — Դիոդորոս սիկիլիացի. — Ապպիան. — Յովսեպոս Փլաւիոս և Փիլոն հրեայք։

Պոլիբիոս իր հանճարին արժանաւոր յաջորդներ ունեցաւ. վասն զի շատը իրեն ոճին հետևեցան, և անոնց մէջ տաղանդաւոր մարդիկ ալ եղան՝ որոնք թէ իմաստասիրութեամբ և թէ պատմագրական ոճով հռչակ ունեցան։ Անոնց կարգէն էր Պոսիդոնիոս, որուն համար կըսեն թէ Պոլիբիոսի ընդհանուր պատմութեան շարունակութիւնն ըրաւ, թէպէտև մեր ձեռքը հասած չէ, ինչպէս նաև իրեն ժամանակակից Կաստորի, Թէոփոմպեայ և Յովսեպոսի պատմագրական երկասիրութիւնքը։

Պլուտարքոս շատ անգամ գովութեամբ կը յիշատակէ զՅովսեպոս, որ հռովմայեցւոց պատմութիւն մը շարադրած էր, և իր գրքին կորստիւնը շատ ցաւալի է։ Ինքը Յովսեպոս թագաւորին որդին էր, որ կեսարէն յաղթուեցաւ. և պզտիկ տղայ մը ըլլալով Հռոմ բերին, և կեսարու յաղթականին կառապը եանէն կը քալէր։ Կեսար գութ ու-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:55 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նեցաւ վրան, Օդոստոս ալ կորսընցուցած ինչքերը նորէն իրեն դարձուց, որով գերուԹիւնը այնչափ վնասակար չըլլալէն զատ՝ մանաւանդ ԹԷ օգտի ալ պատճառ եղաւ, ինչպէս կրսէ Պլուտարքոս։

Դիոնէսիոս աղիկառնացի. — Վերը յիշուած մատենագիրներուն գրուածոց կորստեանը դարմանմը կը սեպուի Դիոնեսիոս աղիկառնացւոյն Հռոմէական հին պատմուԹիւն քսան գիրքը, որ Հռովմայեցւոց ազգին հնուԹիւնը ճանչնալու համար մի միայն սեպուած է։ Կերևնայ ԹԷ առ գրուածքովս աղիկառնացւոյն ջանքն եղեր է եկեղեցականք Հռովմայեցւոց ընդհակացընել, ցցընելով ԹԷ իրենց նախնական ծագումը յունաստանէն եղած ըլլալուն՝ զանազան վերաբերուԹիւններ ունին իրարու հետ։ Իրաւ է որ Դիոնեսիոս աղիկառնացին՝ հռովմէական առասպելներն իբրև ատոյգ՝ հաւատարմաբար կը պատմէ. բայց ասիկայ գլխաւոր պակասուԹիւն մը սիրտ չիսեպուի այնպիսի պատմագրի մը համար՝ որուն գլխաւոր ջանքերէն մէկն ալ Հռովմայեցւոց հաՃոյանալը սեպուած էր. անոր համար պատմագրի մը հարկաւոր եղած ատուգախօսուԹիւնին իրեն գրոցը մէջ չի փնտրուիր։

Աղիկառնացւոյն հռովմէական հին պատմուԹիւնը Հռովմայ հիմնարկուԹենէն կսկսի, ու քննուած պունիկեան առաջին պատերազմը կերԹայ, որուն չարունակուԹիւնն ըրաւ Պողիբիոս։ Հռոմեկաւ Դիոնեսիոս լատին լեզուն սորվելու և միանգամայն իր պատմագրուԹեան հարկաւոր եղած նիւԹերը հաւաքելու. և հոն քսանուերկու տարի անդադար աշխատանքէ ետքը՝ ի լոյս ընծայեց իր առ երկասիրուԹիւնը։ Քսան գիրք բաժնուած էր, բայց մեր ձեռքը հասածներն են միտասան առաջին գրքերը, ԹէպԷտև ետքի առներուս Մայ

ծիրանաւորն ուրիշ ինը գրոցն ալ շատ հատուածները գտնելով կրկնագիր ձեռագրաց մէջ հրատարակեց ապագրութեամբ: Ազնիւառնացուցն ոճը շատ անգամ պարզութենէ կը հեռանայ, և երբեմն ինչուան տաղտկալի ալ կըլլայ:

Դիոդորոս Սիկիլիոյ.— Սիկիլիոյ Ագիրիոն քաղաքը ծնած էր Դիոդորոս, Յուլեայ Կեսարու և Օգոստոսի ժամանակակից, որ իր պատմութենէ աեները Ասիա, Ափրիկէ և Եւրոպա քալելով, ետքը Հռոմ հաստատեց իր բնակութիւնը և հոն հրատարակեց իր անուանի Պապական Տոպէնագրութիւնը, որ ընդհանուր պատմութիւն մըն է քառասուն գրոց մէջ բովանդակուած, և որուն վրայ կենացը երասուն տարին մտիկը էր: Հազար հարիւր տասրուան պատմութիւն կը բովանդակէ աս գիրքս, և կը հասնի ինչուան 180 ոլիմպիադին առաջին տարին (60 տարի Քրիստոսէ առաջ): Այսպիսի ընդարձակ երկասիրութեան մէկ փոքրիկ մասը ձեռնիս հասած է, այսինքն հինգ առաջին գրքերը, ու մեսսանեորդէն ինչուան քսանեորդը ամբողջ, մնացածներուն ալ հատուածները: Գիրքն ընդարձակ և փառաւոր յառաջաբանով մը կըսկսի, ընդհանուր պատմութեանց օգուտը ցցընելու. կանխաբանութիւն մը՝ որ լի է իմաստութեամբ և ուղիղ դատմամբ. ափսոս որ Ճակին գեղեցկութենէն շատ հեռու կիյնայ բուն շէնքին համեմատութիւնը:—Առաջին գիրքը, ինչպէս նաև հինգ հետևորդները, որոնց վերջինը կորսուած է, նախաշաւիղ կամ ներածութիւնք կը սեպուին, և առասպելախառն ժամանակաց պատմութիւնք ինչուան արուեսական պատերազմը: Ասոնց մէջ ժամանակագրական կարգ մը չի բռներ Դիոդորոս, այլ ազգագրական (etnographique) դասաւորութիւն, կամ թէ ըսենք՝ ազ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:56 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

գէ ազգ անցնելով և անոնց պատմութիւնն ա-
ռանձին աւանդելով : Նախ չորս գլխաւոր ազգաց
պատմութիւնը կընէ, եգիպտացւոց, Ասորւոց,
եթովպացւոց և Յունաց. ետքը ան ազգաց՝ որոնք
թէպէտ մեծ համբաւ չունենալով պատմութեց
մէջ նշանաւոր տեղ մը չբռնեցին, բայց մեծ ազ-
գաց հետ այլևայլ վերաբերութիւնք ունեցան.
ասանկ են քաղդէացիք, Մարք, Հնդիկք, սկիւ-
թացիք, Ամազոնք, իպերբորեանք և արաբացիք,
ետքը կարգաւ եթովպացւոց, լիւդացւոց, Յու-
նաց, միջերկրական ծովուն կղզեաց բնակչացը :
Բրետոնաց, Կելտաց, կելտիբերաց, իբերացւոց,
լիգուրեանց և եարուբացւոց վրայ կը խօսի :

Մատենադարանին բուն պատմական մասը եօթ-
ներորդ գրքով կըսկսի, յորում Դիոդորոս ազ-
գագրական կարգը թողնելով, պարզ տարեգիր մը
կըլլայ, տարուէ տարի պատահած անցքերը ա-
ւանդելով. ան անցքերն ալ երկու կը բաժնէ.
հարկաւորագոյն և նուազ հարկաւոր, և առջիննե-
րը տեղնիտեղը և ամէն պարագաներով կը պատմէ :
Մեռասաներորդ գրքէն ինչուան քսաներորդը՝
178 տարուան պատմութիւն կը բովանդակեն,
Քսերքսեսի տեղն եղած պարսկական պատերազ-
մէն ինչուան 302 թուականը Քրիստոսէ առաջ :
Կորսուած մասին մէջ կաւանդէր Դիոդորոս՝ Խաո-
սի պատերազմէն ետքը ձեւացած տէրութեանց և
հռովմայեցւոց պատմութիւնը, և քառասաներորդ
վերջին գիրքը կը լմընցընէր Յուլեայ Կեսարու 'ի
Բրիտանիա ըրած արշաւանօքը :

Իրեք ժամանակք (période) բաժներ է սիկի-
լիացին իր պատմութեան գիրքը, որոնցմէ առ-
ջինին մէջ առասպելախառն ժամանակաց պատ-
մութիւնն էր, ինչուան Տրոյեայ առումը. եր-
րորդը կը հասներ մինչև ցմեծն Ալեքսանդր. իսկ
երրորդը մինչև 'ի Յուլիոս Կեսար :

Generated on 2015-03-16 11:56 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

Դիոդորի Մատենագարանը համառօտ բովանդակութիւն մը կրնայ տեղեկութիւն չատ հռչակաւոր յոյն պատմչաց՝ որոնց շատը հիմա կորսուած է. ինչպէս Հեկատէս Միլետացի, որ Թեբէի հնութեանց և պատմութեան վրայ գրեց, Կտեսիաս Սոլեացի, Ագաթարկիս Կնիդացի, Արտեմիդոր Եփեսացի, Դիոնեսիոս Միլետացի, Տիմէոս, Փիլիստոն, Եփորոս Կումացի. որոնք ամէնքը Դիոդորի ոչ միայն առաջնորդ՝ հապա շատ տեղ օրինակ եղած են. ան պատճառաւ ալ է որ ոճին մէջ ամենևին միակերպութիւն չի տեսնուիր, այլ երբեմն գիմացն եղած հեղինակին ոճին համեմատ կը փոխուի: Ուրիշ հին պատմագիրներէ աւելի յարգի է Դիոդոր անով որ ընդհանրապէս ճիշդ ժամանակագրութիւն ունի. ընդհանրապէս ըսի, որովհետև անոր մէջն ալ շատ ուղղելիք կը գտնուին ըստ հաշուի խմաստուն և հմտագոյն յետին ժամանակագրաց:

Սիկիլիոյ-ոյն ոճը. — Սիցիլ-Քրուա, հռչակաւոր գաղղիացի մը, մեծին Աղեքսանդրի վարքը գրող պատմչաց վրայ ըրած քննաբանական գրքին մէջ սանկ կը խօսի Դիոդորի վրայ. "Դիւրըմբռնելի, պարզ ու առանց արուեստակութեան ոճ մը ունի, կըսէ: Բայց երբոր առաուածոց վրայ կը խօսի, այլաբանական ձև մը կառնէ իր պատմութիւնը. որովհետև քերթողաց և փիլիսոփայից խօսքերը կը գաղափարէ: Ոճը կամ գրութեան եղանակը՝ ոչ ասիականն է և ոչ ալ հին յունական բառերը կը գործածէ, այլ միջակ լեզումը, որ միայն յարմար է պատմութեան: Սակայն երբեմն խառնակ և շփոթ է, որով և կարգ ու դասաւորութիւն կը պակսի... Դասաւորութիւնը բաւական լաւ է, և առանց կողմի մը գերի ըլլալու՝ արժան ու ևրաւացի տեղը կը գովէ կամ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:56 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կը պարտաւէ : Խորհրդածութիւնքը թէպէտ ստուերական, բայց անոնց մէջ ալ իր խոհականութիւնը կերևնայ ,, :

Դիոդորի Մատենադարանը՝ ընդհանուր ազգաց պատմութիւն ըլլալուն՝ հարկ էր որ մեր ազգին վրայ ալ բաւական տեղեկութիւնք գտնուէին մէջը. անանկ ազգի մը, որ հնոց մէջ նշանաւոր, և հռովմայեցւոց հետ ալ այլևայլ վերաբերութիւնք ունեցած էր : Ասոնք կը հաստատէ նաև մեր քերթողահօր Մովսէսի խորենացւոյ խօսքը, որ Հայոց պատմութիւնը շարադրելու առեն ,, Ոչ ազգային հնախօսութիւն ունինք, կըսէ, և ոչ ալ ժամանակին կարճութեան համար կրցայ բոլոր յունական գրքերն աչքէ անցընել. և ոչ իսկ Դիոդորի մատենագրութիւնները քովս էին, որպէս զի անոնցմով առաջնորդ բռնելով՝ ամէն կարևոր անցքերը և յիշատակաց արժանի դէպքերը նշանակէի ,, :

Ապիոն. — Աղեքսանդրացիք Հրեից վրայ տըժգոհութիւններ ունենալով՝ Ապիոն դրամարեկոսը Կալիգուլա կայսեր խրկեցին որ վրանին զանազան ամբաստանութիւններ ընէ. ան ալ առանձին գիրք մը շարադրեց մովսիսական կրօնքը և աւանդութիւնները վար զարնելու դիտաւորութիւ : Իրեն դէմ ելաւ

Յովսէպոս Փլաւիոս Հրեան, որ համոզիչ խօսքերով և զօրաւոր ճարտասանութեամբ անոր ամբաստանութեանց դէմն առաւ : Ինչպէս որ ուրիշ առթով ալ յիշատակած ենք, աղեքսանդրեան դպրութեանց ծաղիկը մեծ աղդեցութիւն ունեցաւ նաև Հրէից վրայ, և պատմութեան և մանաւանդ իմաստասիրութեան մէջ հռչակաւոր և անուանի մարդիկ սկսան երևնալ : Պաղեստին [illegible] աղեքսանդրեանց իշխանութեանը մարզ սե-

Generated on 2015-03-16 11:56 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

պուեցաւ, Հրեայք սկսան անդադար վերաբերու-
Թիւններ ունենալ Յունաց հետ և արուեստից և
գիտութեանց անոնց նմանողութեան ջանք մը։
Բայց որովհետեւ այնչափ յարաբերութեանց մէջ
ալ՝ Յոյնք և հռովմայեցիք կը խորչէին անոնցմէ և
սակաւաւոր և անազգի կը սեպէին, Յովսեպոս իր
Հրէական հնութիւնք ըսուած քսան գիրքը շարա-
դրեց, որ Հրեից ազգին ամբողջ պատմութիւնը
կրնայ սեպուիլ, աշխարհքիս արարչութենէն ին-
չուան Ներոնի թագաւորութեան երկոտասաներ-
րորդ տարին։ Ա՛ս գրուածքը խիստ ընտիր և պի-
տանի երկասիրութիւն մը կրնար սեպուիլ թէ որ
Յովսեպոս ջանք ունեցած չըլլար հռովմայեցւոց
առջևը քաղաքականացեալ ազգ մը ցցընելու ըզ-
Հրեայս, որով նահապետական պարզութեան և
հին աստուածապիր քաղաքականութեան զմայլե-
ցուցիչ նշանները չեն տեսնուիր, որոնք մեծ տպա-
ւորութիւն ունին քրիստոնեայ և աստուածա-
պաշտ սրտերու և մտաց վրայ։ Բայց՝ ի սա Թեր-
Թենէն, շատ օգտակար և հետաքրքին է Յովսեպո-
սի սա գրուածքը, և մանաւանդ անոր համար որ
Հրէական պատմութեանց հին և նոր կտակարա-
նաց մէջ եղած պարապ ժամանակաց անցքերը
լեռվին կաւանդէ։

Յովսեպոսի երկրորդ գրուածքն է Երուսաղէ-
մայ առման պատմութիւնը, ցաւալից և սրտաշարժ
պատմութիւն, յորում Հրէից անկումը և Թշուա-
ռութեանց սկզբնաւորութիւնները ճարտար գըր-
չով և հայրենասէր ոգւով կըստորագրէ. սկս-
նատես և միանգամայն ան աղէտալի անցից ստու-
գախոս վիպագիր։ Ինքը Երուսաղէմ ծնած ու քա-
հանայական ցեղէ, Քրիստոսէ 37 տարի ետքը
Հռոմ անցաւ. ու երբոր նորէն իր հայրենիքն
եկաւ, տեսնելով որ Հրեայք հռովմայեցւոց դէմ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:57 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ապստամբելու դիտաւորութիւն ունին և պատրաստութիւն կը տեսնեն, շատ չանաց որ անոնց միտքը փոխէ։ Ձար չեղաւ, ու ան ատեն հարկադրեցաւ Յովսեպոս որ ինքն ալ հայրենեաց թշնամեացը դէմ զէնք առնէ, ու իր քաջագործութեամբը անուանի եղաւ։ Բայց որովհետև Հրէից կործանումը հաստեր էր և իրենք փուճ ոտերը կը պատերազմէին, գերի ընկաւ Յովսեպոս։ Վեսպասիանոսի՝ որ ան ատեն զօրավարութիւն կընէր, գուշակեց թէ ատենով մեծ փառաց ու կայսերութեան պիսի հասնի. ու երբոր խօսքն ելաւ, Վեսպասիանոս զինքը չխմռեցաւ, ու գերութենէն ազատելով իրեն պաշտպանութեան տակն առաւ. Յովսեպոս ալ երախտագիտութեան համար՝ իր անունը վրայ Փլաւիոս անունն ալ գրաւ, որ կայսեր երկրորդական անունն էր։ Վեսպասիանոս երբոր Հռոմ եկաւ, Յովսեպոս ա նոր Տիտոս ոլդեայն հետ ալ Հրէից դէմ պատերազմին ետև եղաւ որ Հրեայք պատերազմէն ետև կենան. և ասանկ բանիս համար շատ անգամ Յովսեպոսը գեպանութեամբ խաբեց որ խօսի հետերնին և իրենց վնասուցը դէմ կարենայ առնել. բայց աստուածաստատ կուրութեան մը դէմ չկրցաւ դնել ոչ իրեն քաղցրութեամբը և ոչ Յովսեպոսի ճարտարախօսութեամբ, ընկաւ Երուսաղէմ ու մէյմըն ալ չկրցաւ իր առջի փառքն ստանալ. և ասիրեն անկմանը պատմութիւնը քերթողական ողբերգակ ոճով մը թողուց Յովսեպոս [1]։

1 Իրեն ասոր գիրքը կերևայ նէ մեր երանաշնորհ Ներգանլոյ ապէնը ի հայ բոլոր է. բայց եպէը կրօսոաժ ընտրվ Սպեհանոս լեհացի վարդապետը նորոգ Ներգմանութիւնը հրատարակեց, որ եպէը պագրեցաւ Էջմիածին։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:57 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Փիլոն. — Փիլոն եբրայեցին կամ հրեայն Ալեքսանդրիա ծնած էր ու քահանայական ցեղէ, և Քրիստոսի 40 թուականին ծաղկեցաւ. ու թէպէտ փարիսեցի էր ազանդով, բայց մեծ նախանձայուզութիւն ունէր իր նախնեացը կրօնից վրայ: Ալեքսանդրիոյ մէջ շփոթութիւն մը ծագելով հրեայք զինքը Հռոմ խրկեցին, որպէս զի Գայիոս կայսեր գիմաց զնրենք արդարացընէ. բայց կայսրը հրէից պատգամաւորը չուզեց ընդունել:

Գիտուն մարդ էր Փիլոն, և յունաց բոլոր իմաստասիրական դրութիւնքը սորված. և իր բոլոր ուսումնական հետազօտութեանցը մէջ միակ նպատակ գրեր էր՝ սուրբ գրոց յարգը հեթանոսաց ձանչցընել, իբրև կատարելութիւն և ծայր ամենայն իմաստասիրութեան: Պղատոնական փիլիսոփայութեան հետևեցաւ Փիլոն, և ան մեծ իմաստասիրին գրոցը ընթերցման տուաւ ինքզինքը. անկէց է Պղատոնի ոճին հետ ունեցած նմանութեան պատճառը:

Սուրբ գրոց, և մանաւանդ ծննդոց գրքին այլաբանութիւնը վրայ զանազան, հմուտ և իմաստասէր մեկնութիւններ ունի Փիլոն: Բայց իրեն գլխաւոր գրուածոց յաղագս նախանամուխեան ըստ ածերկու տրամախօսութեանցը և յաղագս ոգոյ կենդանեաց ձառին, զորս ականէն մատեան կը կոչէին հինք, յունական սկզբնագիրքը կորսուած էին, որով և իմաստանոց մեծ ցաւի պատճառ: Բայց վերջերս գտնուեցան հայերէն թարգմանութիւնքը ոչ միայն այն ձառից՝ այլ նաև Մեկնութիւն ծննդոց և ելից գրոց. Ճառք ի Սամփսոն և ի Յովնան. Հրաժարութիւնք վասն հրեղէնական որ երևեցան Աբրահամոս. որոնց ամենուն ալ բնագիրը կորսուած էր, ու լատինական թարգմանութեամբ ծանօթացան եւրոպացւոց՝ երկասիրութեամբ Հ. Մկրտիչ Վ. Աւգերեան:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:57 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ասոնցմէ զատ Թարգմանած ունինք ի նախնեաց Փիլոնի յետագայ ձառերն ալ.

Ա. Ձառք յայլագս քահանայից.

Բ. Յայլագս բագնին (սեղանոյն) իրաց.

Գ. Յայլագս տաճարի բանից (տաճարաբանեան պատգամաց).

Դ. Կեանք իմաստնոց (նահապետաց).

Ե. Յայլագս աստուածային օրինացն այլաբանութեան.

Զ. Տեսական, կամ ձառ յայլագս եսեանց:

ԳԼՈՒԽ Խ.

ՊԼՈՒՏԱՐՔՈՍ

Պլուտարքեայ վարք. — Պլուտարքոս պապել. — Իմաստասէր. — Ոճը:

Բիովեհոյ Քերոնէացի քաղքէն էր Պլուտարքոս, Կրիտոսի առաջին դարուն. և թէպէտ իրեն ծննդեան ճիշդ թուականը յայտնի չէ, բայց աս գիտենք որ երբ Ներոն յունաստան ճամբորդութիւն կընէր (66), ինքը Դելփիի մէջ Ամմոնիոս աղեքսանդրացի իմաստասիրին աշակերտն էր: Եւքը երբոր իր հայրենիքը Քերոնէա դարձաւ, քաղաքական պաշտօններու մէջ սկսաւ մտնել, և գրեթէ բոլոր իր կեանքը հոն անցուց. թէպէտև շատ անգամ ալ Հռոմ կու գար, ուր փիլիսոփայութիւն և մատենագրական հմտութեանց կամ բանասիրութեան (philologie) հրապարակական դասախօսութիւն կընէր, և շատ հռովմայեցի ազնուականք, ին[illegible]րայիանոս և Ադրիանոս կայսերք ալ իր

Generated on 2015-03-16 11:57 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

դասերը մոխիկ ընելու կը յաձախէին : Ան առեն-
նեբն է որ իր Բարոյական Ճառերը շարադրած կե-
րևնայ Պլուտարքոս : Ինքը յունարէն կընէր իր գա-
սախօսութիւնը , որովհետև ան առեններբը Յու-
նաց լեզուն սովորական գարձեր էր Իտալիոյ ա-
մէն ուսումնականաց . ան պատճառաւ ալ է որ
լատին լեզուն չէր կրնար սորվիլ . և ինքը կըսե Դե-
մոսթենի վարուցը մէջ Թէ ատեն չունեցաւ հռով-
մէական լեզուին լաւ և հասատատուն տեղեկու-
թիւն մը առնելու : Որոշ չի գիտցուիր իր մահուան
ժամանակը . բայց հաւանական կերևնայ ոմանց
ըսածը Թէ Ադրիանոսի Թագաւորութեան վերջին
տարին մեռած ըլլայ 72 կամ 73 տարեկան :

Պլուտարքոս անուանի եղած է իբրև պատմա-
բան և իբրև բարոյախօս : Իր պատմական գրուած-
քը կամ Զո-գանէ-ը բովանդակութիւն մը կըր-
նան սեպուիլ իրմէ առաջ եղող յոյն և լատին
պատմագրաց , և անոնց բովք մը հնութեանց ,
որոնց մէջ ամէն առեններուն և ամէն անձի չէ Թէ
միայն վարուց նկարագիրը՝ հապա նաև քաղաքա-
կանութեան առաջ երթալը կամ ետ ճնալը կը
առնուի : Գլխաւոր պակասութիւն մը Թէ որ ունի
Պլուտարքոս՝ իր միակերպ ոճը և ժամանակագրու-
Թեան Թերութիւնն է : Սակայն իրմէ առաջ ե-
կած պատմագրաց չէ Թէ միայն համառօտութեի ,
հապա նաև ճշմարտախօս և հայրենասէր պատ-
մչաց վերջինը կրնայ սեպուիլ :

Քառասունըչորս յոյն և հռովմայեցի անուանի
մարդկանց պատմութիւնը շարադրեց Պլուտար-
քոս , արդար և անկողմնապահ ոյժէքը տալով
անոնց առաքինութեանցն ու քաջութեանցը , և
միշտ հռովմայեցին՝ յոյնին հետ կը բաղդատե : Ա-
ռանցմէ զատ ուրիշ հինգ մարդկանց վարքը շարա-
դրած է առանց զուգակշռութեան . տասուերը :

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:58 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կու կամ տանըչորս վարք ալ կորսուած են: Քառասունըչորս անուանի մարդիկը՝ որոնց վարքը և իրարու զուգակշռութիւնը կընէ Պլուտարքոս, ասոնք են. Ա. Թեսէոս և Ռոմուղոս. Բ. Լիկուրգոս և Նումա. Գ. Սողոն և Վալերիոս Պոպլիկոլա. Դ. Թեմիստոկլէս և Կամիլլոս. Ե. Պերիկլէս և Փաբիոս Մաքսիմոս. Զ. Անկիբիադ և Կորիոլանոս. Է. Տիմոլէոն և Պաւղոս Եմիլիոս. Ը. Պելոպիդաս և Մարկելլոս. Թ. Արիստիդէս և Կատոն. Ժ. Փիլոպեմեն և Փլամինիոս. ԺԱ. Պիւռոս և Մարիոս. ԺԲ. Լիսանդր և Սիլլա. ԺԳ. Կիմոն և Լուկուլլոս. ԺԴ. Նիկիաս և Կրասոս. ԺԵ. Եումենէս և Սերտորիոս. ԺԶ. Ագեսիլայոս և Պոմպէոս. ԺԷ. Մեծն Ալեքսանդր և Յուլիոս Կեսար. ԺԸ. Փոկիոն և Կատոն ուսումնեցի. ԺԹ. Ագիս և Կլէոմենէս և Գրակքեանք. Ի. Դեմոսթենէս և Կիկերոն. ԻԱ. Դեմեար Պոլիորկետ և Մարկոս Անտոնիոս. ԻԲ. Դիոն և Մարկոս Բրուտոս: Հինգ առանձին վարքերն են Արտաշէս Մնեմոն (Ուշէզ), Արատոս, Գալբա, Ոթոն և Հոմերոս. բայց ասոնց վերջինին հարազատութեանը վրայ երկմտելով չատերը դուրս կը ձգեն Պլուտարքեայ գրուածքներէն: Կորսուածներուն են Եպամինոնդաս, Սկիպիոն, Օգոստոս, Տիբերիոս, Կալիգուլա, Կղոդիոս, Ներոն, Վիտելլիոս, Հեսիոդոս, Պինդարոս, Կրատէս Կիւնիկեան, Դէմփանտէս, Արիստոմեն և Արատոս քերթող:

Իակ իբրև իմաստասէր՝ նոր ընթացք և ձամբայ մը ունեցաւ իրեն Պլուտարքոս: Ան ատեններըս ստոյիկեանց վարդապետութիւնը Հռովմայի մէջ մեծ յարգ գտած էր, ինչուան կայսերք ալ կը հետեւէին ան չարքաշ և խստամբեր կեանքին՝ որ կարծես թէ ժամանակին մարդկանց թուլամորթ վարուցը բոլորովին հակառակամարտ էր: Պլուտար-

Generated on 2015-03-16 11:58 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

քոս ամէն ուժովը դէմ կեցաւ ան վարդապե-
տութեան , չէ թէ խիստ և սակաւասպէտ ոճը վար
ջարնելու մտքով , որով զեղմս հռովմէական կայ-
սերաց ժամանակը այնպիսի գիւցազուններ կրցաւ
ընծայել աշխարհքի , հապա աւելի անոր համար
որ Եպիկուրոսի կարծիքը և դրութիւնները շա-
տը մոռցուեր ու գրեթէ միայն կմախքը մնացեր
էր , որով և իրեն արգասիքը պարծենկոտ փառա-
սիրութեան մը վայ հիմնած անօգուտ բան մը
գարձեր էր . որով ընտանեկան կենաց քաղցրու-
թիւնը և վայելքը՝ դառնութեան կը փոխուէր :
Ճեմականաց կամ Արիստոտէլի կարծիքն ալ կար-
համարհէր Պլուտարքոս , և իրեն մեծ հետաքննու-
թեան նիւթ եղեր էր հին եգիպտացւոց խմաստա-
սիրական դրութիւնները փնտրուել ու գտնել : Ա
պատճառաւ գրած էր իր Ոսիս և Խնրիս ըսուած
խմաստասիրական ճառը : Պլուտարքոսի առեն
Քրիստոս աշխարհք եկած և իր կենսաբեր հա-
ւատքը կամաց կամաց սկսեր էր բոլոր աշխարհքի
վրայ իր ազդեցութիւնը ընելու , որով և դիւաց
ձայնները և քրմաց պատգամները գադրեր էին
ուրբք աւետարանին ուժովը : Ցոյն խմաստասէրը
ան բանին անտեղեակ՝ մեծ փութով մը քննելու
եռանդ ընկած էր պատճառն իմանալու թէ ինչու
Դելփիսի պատգամները գադարեր են . կը կարծէր
որ իր ջանքը բաւական պիտի ըլլան ասոնց ա-
մենահաւանութիւն նորին իրենց փառքը տալու . չէր
գիտեր թէ աւետարանին լուսոյն գիմաց խաբէու-
թեան դարը անհետանալու վրայ էր :

Պլուտարքոսի խմաստասիրական գրուածները ,
որոնք 70 հատով ընդարձակ ճառեր են , շատ օգ-
տակար են հին փիլիսոփայութեան յարգը իմա-
նալու , և զանազան տեղեկութիւններ կրնան առ-
նել հնագէտք նախնեաց բարուցը , սովորու-
թեանց , արուեստից և գիտութեանցը վրայ :

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:58 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Իրեն գլխաւոր թեքուելիւնը լեզուին անյարգար ոճը կը սեպեն բանասէրք: Տասիէ գաղղիացի սիկինը, որ Պլուտարքոսի գրուածներէն շատը գաղղիական ընտիր թարգմանուելէ ապագրած է, նաւուս մը կը նմանցընէ անոր ոճը, որուն շինուածքին մէջ արհեստ՝ բայց մաքրուելի չերևնայ[1]:

ԳԼՈՒԽ ԽԱ.

ՅՈՒՆԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՊԻՃԱԿԸ (ՔՐԻՍՏՈՍԷ ԾՏՔԸ):

Յունաստան երբոր առջի մեծուելիւնը կորաընցուցած, հռովմէական զինուց գերի եղեր էր, իր մեծագին աւարներովը յաղթականաց փառքը կը յաձախէր: Յանկալի ու փառաւոր աւար մըն էր նաև իմաստասիրուելիւնը, որ նախ կամաց կամաց Հռովմայի մէջ մտաւ, և ետքը բոլորովին զօրացաւ: Ա՛ս իմաստասիրուելիւնը գլխաւոր չորս աղանգ բաժնուած էր, որունք պերիպատիկեան, եպիկուրեան, ձեմական և ակադեմական վարդապետուելիւնք կըսուէին. առջի երկուքը մեծ ազդեցուելիւն մը չունէին հռովմայեցւոց վրայ, և շուտով անհետացան: Վասն զի Եպիկուրոսի վարդապետուելիւնը բոլորովին հակառակամարտ կըլ-

1 Պլուտարքոսի անուանի մարդկանց վարքը կամ Զուգահիւթը հայերէն նարգմանուելեամբ ընծայեց աղգիս Հ. Եղիա Վ. Թովմաճան, որ պատգրեցաւ՝ ի Վենետիկ յամի 1833-34: Անուանի հեղինակին վարուցը և ոճին վրայ ասելի փեղեհուելիւն առնել ուղղը կինայ նարգմանչին յառաջաբանը կարդալ:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 11:58 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նաև սեպուխ հռովմայեցւոց բնաւորութեանն ու սահմանադրաշար կրօնասիրութեան. որով թէ պէտ ոմանք իրեն կարծեացը հետևող երևցան, բայց անուանի մարդ մը չեղաւ մէջերնին: Նոյնպէս ալ Արիստոտէլի կարծիքը զարմանալի յառաջադիմութիւն մը չկրցաւ ունենալ. որովհետև իրեն գրուածները քիչ շատ մթին ոճ մը ունենալով, հետևողքը ամէն ջանիւք աշխատելնէն ետքն ալ չկրցան ծաւալել սահմանափակ փիլիսոփային վարդապետութիւնը: Իսկ սոյնիկեանք իրենց խիստ ուսմամբն ու կրթութեամբ, համբերատար ժուժկալութեամբ, հաճոյքն ու ցաւերը արհամարհելով մեծ յաջողութիւն ունեցան, և գրեթէ բոլոր հռովմայեցւոց սրտին վրայ տիրապետեցին. մանաւանդ որ ժամանակին տեսչութեանն ալ յարմարագոյն էր սա կարծեաց վարդապետութիւնը: Որովհետև Հռոմ կայսերացաց վատ ու կնամարդի բնաւորութեամբն իրեն առջի քաջասիրտ ուժէն բոլորովին զրկուած, խաղաղաւէտ հանգստութեամբ մը կործանման կը մօտենար. և սա խստակրօն վարդապետութեան սկզբունքներովը կրցաւ այնչափ ատեն դիմանալ հռովմէական կայսերութիւնը. անոր զօրաւոր և քաջալերիչ խրատներովը նորէն պայծառութիւն մը ստացաւ հայրենասէր առաքինութիւնը. բըռնաւորութեան ուժը կոտրեցաւ, ժողովրդեան իրաւունքը ճանչնալու հարկը իմացուեցաւ:

Քիչ շատ նոյն աղդեցութիւնը ունեցաւ հռովմայեցւոց սրտին վրայ նաև Պլութագորայ վարդապետութիւնը, որուն խրատուցը մէջ աւելի աղնուական կերպ մը կար և պահանջմունքը մարդկային ոկարութեան համեմատ: Կրօնասէր բարոյականին և հին իմաստութեան պատճառաւը շատ անուանի մարդիկ իրեն հետևող եղան. Սեքս-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 12:33 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Իրեն գլխաւոր թե
գար ոճը կը սեպէ
սիկինը, որ
գաղղիական
է, նաեւ
նուածքին

նիկոմաքոս քո-
եղան իրենց լա-
գէշն ան եղաւ որ իր
էկրցաւ երկարատև
վարդապետութիւնը. և թէ-
ցին ան կործանման դէ-
հնարք ըրաւ, բայց անկարելի
ալ փառացը հասնիլ: — Ա՛ս Ա-
պապովկիոյ Տիանա քաղաքը ծնած
30 կամ 40 տարի եղաք. և իր ուս-
Տարսոն և Եգիա քաղաքացը մէջ
ճարտասանութիւններով ինչուան
գնաց, անկէ ալ Հռոմ՝ Դոմեատիա-
թագաւորութեան առեններէը. վերջը Եփե-
գալով մանաւոր լսարան սահմանեց, և հոն
ինչուան իր մահը կեցաւ: Այնչափ մեծ անուն
ունեցաւ Ապողոնիոս, որ ինչուան մարդկային
բնութենէն վեր սկսան զինքը սեպել. և որովհետև
ամենայն ուժովը նորածին քրիստոնէութեան
դէմ կը կռուէր, ան պատճառաւ հեթանոսք զին-
քը իբրև աստուած կը համարէին, տաճարներ ու
սեղաններ կը կանգնէին:

Ա՛ս վիճակի մէջ էր իմաստասիրութիւնը աւե-
տարանէն առաջ: Եպիկուրեան վարդապետու-
թեան հետևողները սակաւաւոր ու անկարօտ մարդ-
կիկ էին. նոյնպէս ալ սկեպտիկեանց աշակերտ-
ները քիչ էին. որովհետև աղքատ և թշ-
չուառ բազմութիւնը ոչ աւոյիկեանց և ոչ սկեպ-
տիկեանց կռռչը կամ կրնար հետևիլ. անհաւա-
տութենէ աւելի նախամեծար կը սեպէր աւելոր-
դապաշտութիւնը: Իմաստասիրութիւնը որչափ
որ աստուածամերձ և բանական արարածոյ միակ
վայելուչ գիտութիւն կը սեպուի, այնչափ ալ ի-
մարդկին աստաճակ մարդիկներու թեթևամիտ գիտութեամ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 12:34 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

բը խեղճ Ժողովրդեան աւրուեըան և կործանման պատճառ եղած է և կըլլայ, երբոր սոյն հետ Հիմարիա իմաստասիրութիւնը փոխանակուի : Սակայն ալ Յունաց մէջ Հիմարիա իմաստասէրք, հեթանոսութիւնը որչափ որ կրնար տանել, շատ երևցան, բայց անոնց Կանիքը և Ժողովրդեան մէջ մոցուցած ուղղութեանց խափանարար եղան իրենց հետևողք կամ աշակերտք, երբոր վարդապետաց ուսումն արհամարհեցին, և կամ անոնց մէ աւելի իմաստասիրական գիտութիւնը բարակցընել ուզեցին : Անկէց է որ Հռոմ իր զօրութեան առեղը մեծապէս կրզգուշանար սա կործեցեալ իմաստասիրաց խաբէական գիտութենէն և ամէն Կանք կընէր որ Հռովմայի մէջ չիձարակին. և իրաւի, երկար առեն իր ուժովը Յունաց չաղթական, և անոնց ապականութենէն հեռի կը պահէր Ժողովուրդը : Բայց իր առելութիւնը տեսական չեղաւ, որով ընդարձակածաւալ տերութեան առհմնացը մէջ ալ մտան ան իմաստասիրական վարդապետութիւնները, որոնք եաքը աւելի նրբագոյն և առուածային իմաստութեան մը պիտի հպատակէին, և իրենց ուժը բոլորովին պիտի կորսուեր, կարծուած լոյսը խաւարեր՝ պայծառ արեգական լուսոյն դիմաց : — Ա առեն. ներս քանի մը անձինք անուանի եղան Հռովմայեցւոց մէջ չոնական իմաստասիրութեամբ, ինչպէս Մարկոս Աբրելիոս կայսրը, և այլք, որոնց վրայ Հռովմէական գպրութեանց պատմութեան մէջ պիտի իսօսինք :

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 12:34 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Իբեն գլխաւոր Թերութիւնը լեզուին անյարգար ոճը կը սեպեն բանասէրք: Տասիէ գաղղիացի ոխկինը, որ Պլուտարքոսի գրուածներէն շատը գաղղիական ընտիր թարգմանութեամբ տպագրած է, նաւու մը կը նմանցընէ անոր ոճը, որուն շինուածքին մէջ արհեստ՝ բայց մաքրութիւն չերևնայ[1]:

ԳԼՈՒԽ ԽԱ.

ՑՈՒՆԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԸ (ՔՐԻՍՏՈՍԻ ԾՏՔԸ):

Յունաստան երբոր առջի մեծութիւնը կտրած, հռովմէական զինուց գերի եղեր էր, իր մեծագին աւարներովը յաղթականաց փառքը կը յաճախէր: Յանկալի ու փառաւոր աւար մըն էր նաև իմաստասիրութիւնը, որ նախ կամաց կամաց Հռովմայի մէջ մտաւ, և ետքը բոլորովին զօրացաւ: Ա իմաստասիրութիւնը գլխաւոր չորս տղանդ բաժնուած էր, որունք պերիպատիկեան, եպիկուրեան, Ճեմական և ակադեմական վարդապետութիւնք կըսուէին. առջի երկուքը մեծ ազդեցութիւն մը չունէին հռովմայեցւոց վրայ, և շուտով անհետացան: Վասն զի Եալիկուրոսի վարդապետութիւնը բոլորովին հակառակամարտ կըլ-

1 Պլուտարքոսի անուանի մարդկանց վարքը կամ Զուգահեռքը հայերէն թարգմանութեամբ ընծայեց աղգիս Ն. Եղիա Վ. Թովմաճան, որ տպագրեցաւ Վենետիկ յամի 1833-34: Անուանի հեղինակին վարուցը և ոճին վրայ ասելի պէղէնութիւն առնել ուղղը կրնայ թարգմանչին յառաջաբանը կարդալ:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 12:34 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նաև սեպուխ հռովմայեցւոց քնաւորութեանն ու աւելորդապաշտ կրօնասիրութեան. որով թէ պէտ ոմանք իրեն կարծեացը հետևող երևցան, բայց անուանի մարդ մը չեղաւ մէջերնին: Նոյնպէս ալ Արիստոտէլի կարծիքը զարմանալի յառաջադիմութիւն մը չկրցաւ ունենալ. որովհետև իրեն գրուածներըը քիչ շատ մեին ոճ մը ունենալով, հետևողքը ամէն չանիւք աշխատելնէն եաքն ալ չկրցան ծաւալել ատագիրացի փիլիսոփային վարդապետութիւնը: Իսկ ատոյիկեանք իրենց խիստ ուսմամբն ու կրթութեամբ, համբերատար ժուժկալութեամբ, հաճոյքն ու ցաւերը արհամարհելով մեծ յաջողութիւն ունեցան, և գրեթէ բոլոր հռովմայեցւոց սրտին վրայ տիրապետեցին. մանաւանդ որ ժամանակին տեսչութեանն ալ յարմարագոյն էր ատ կարծեաց վարդապետութիւնը: Որովհետև Հռոմ կայսերացաց վատ ու կնամարդի քնաւորութեամբն իրեն առջի քաջասիրտ ուժէն բոլորովին զրկուած, խաղաղաւէտ հանգստութեամբ մը կործանման կը մօտենար. և ատ խստակրօն վարդապետութեան սկզբունքներովը կրցաւ այնչափ առեն դիմանալ հռովմէական կայսերութիւնը. անոր զօրաւոր և քաջալերիչ խրատներովը նորէն պայծառութիւն մը ստացաւ հայրենասէր առաքինութիւնը. բրտնաւորութեան ուժը կոտրեցաւ, ժողովրդեան իրաւունքը ճանչնալու հարկը իմացուեցաւ:

Քիչ շատ նոյն ազդեցութիւնը ունեցաւ հռովմայեցւոց սրտին վրայ նաև Պիւթագորայ վարդապետութիւնը, որուն խրատուցը մէջ աւելի աղնուական կերպ մը կար և պահանջմունքը մարդկային ոկարութեան համեմատ: Կրօնասէր բարոյականին և հին իմաստութեան պատճառաւը շատ անուանի մարդիկ իրեն հետևող եղան. Սեքս-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 12:34 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

առա, Սոսիան, Մոսեբատոս և Նիկոմաքոս բո-
լոր Հռովմայ մէջ համբաւաւոր եղան իրենց լսա-
րանները պատճառաւը։ Գէշն ան եղաւ որ իր
նախնական պարզութեան չկրցաւ երկարատև
ըլլալ Պիւթագորայ վարդապետութիւնը. և թէ-
պետ Ապողոնիոս սիանացին ան կործանման դէ-
մը առնելու ամէն հնարք ըրաւ, բայց անկարելի
եղաւ անոր իր առջի փառացը հասնիլ։ — Ա-
պողոնիոսը Կապադովկիոյ Տիանա քաղաքը ծնած
էր Քրիստոսէ 30 կամ 40 տարի եռքը. և իր ու-
մուքը կիլիկիոյ Տարսոն և Եգիա քաղաքացը մէջ
ըրած, եռքը շատ ճամբորդութիւններով ինչուան
հնդկաստան գնաց, անկէ ալ Հռոմ՝ Դոմետիա-
նոսի թագաւորութեան առեններըը. վերջը Եփե-
սոս գալով մանաւոր լսարան սահմանեց, և հոն
ինչուան իր մահը կեցաւ։ Այնչափ մեծ անուն
ունեցաւ Ապողոնիոս, որ ինչուան մարդկային
բնութենէ վեր սկսան զինքը սեպել. և որովհետև
ամենայն ուժովը նորածին քրիստոնէութեան
դէմ կը կռուէր, ան պատճառաւ հեթանոսք զին-
քը իբրև աստուած կը համարէին, տաճարներ ու
սեղաններ կը կանգնէին։

Ա վիճակի մէջ էր իմաստասիրութիւնը աւե-
տարանէն առաջ։ Եպիկուրեան վարդապետու-
թեան հետևողները սակաւաւոր ու անկարօտ մարդ-
կի էին. նոյնպէս ալ սկեպտիկեանց աշակերտ-
ները քիչ էին. որովհետև աղքատ և թըշ-
ուառ բարմութիւնը ոչ ստոյիկեանց և ոչ սկեպ-
տիկեանց կուզէր կամ կրնար հետևիլ. անհաւա-
տութենէ աւելի նախատածար կը սեպէր աւելոր-
դապաշտութիւնը։ Իմաստասիրութիւնը որչափ
որ առաուածամերձ և բանական արարածոյ միակ
վայելուչ գիտութիւն կը սեպուի, այնչափ ալ ի-
մաստակ մարդիկներուս թեթևամիտ գիտութեամ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-16 12:35 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

բը խեղճ ժողովրդեան աւրուելուն և կործանման պատճառ եղած է և կըլլայ, երբոր սակն հետ ձշմարիտ խմաստասիրութիւնը փոխանակուի : Սակայն ալ Յունաց մէջ ձշմարիտ խմաստասէրք, հեթանոսութիւնը որչափ որ կրնար տանել, շատ երևցան, բայց անոնց ջանիցը և ժողովրդեան մէջ մտցուցած ուղղութեանց խափանարար եղան իրենց հետևողք կամ աշակերտք, երբոր վարդապետաց ուսումն արհամարհեցին, և կամ անոնց մէ աւելի խմաստասիրական գիտութիւնը բարակցընել ուզեցին : Անկէց է որ Հռոմ իր զօրութեան առենը մեծապէս կըզգուշանար աս կարծեցեալ խմաստասիրաց խաբէական գիտութենէն և ամէն ջանք կընէր որ Հռովմայի մէջ չձարակին . և յիրաւի, երկար առեն իր ուժովը Յունաց յաղթական, և անոնց ազդեցութենէն հեռի կը պահէր ժողովուրդը : Բայց իր աւելութիւնը տեսական չեղաւ, որով ընդարձակածաւալ տէրութեան առհմանացը մէջ ալ մնան ան խմաստասիրական վարդապետութիւնները, որոնք եսքը աւելի նրբագոյն և առաւածայնի խմաստութեան մը պիտի հպատակէին, և իրենց ուժը բոլորովին պիտի կորսուեր, կարծուած լոյսը խաւարեր՝ պայծառ արեգական լուսոյն դիմաց : — Ա առենները քանի մը անձինք անուանի եղան Հռովմայեցւոց մէջ յունական խմաստասիրութեամբ, ինչպէս Մարկոս Աբրելիոս կայսրը, և այլք, որոնց վրայ Հռովմէական գպրութեանց պատմութեան մէջ պիտի խօսինք :

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Սալեան կամ կայլեան տրմոյ երգէր. — Պլուտարքոս կը պատմէ թէ Նումա Պոմպիլիոսի թագաւորութեան ութերորդ տարին՝ բոլոր Իտալիա, և մանաւանդ Հռովմայ մէջ, սրածութեան սխալը ճարակելով սովաւալի կոտորած կընէր: Երբոր ամենքը աս տիւր պատուհասով վախի մէջ ընկած, աստուածներէն թողութիւն շնորհք կը մաղթէին, կը պատմեն թէ երկնքէն պլնձի ասպար մը եկաւ, Նումայի ձեռքն ընկաւ: Նումա ալ ժողովրդեան իմացուց թէ յաւերժահարսանց մէկը Եգերիա, ան ասպարն իրեն իրկած ըլլայ, որով սրածութեան սխտէն ալիսի ազատի քաղաքը. սակայն հարկ է որ անոր պահպանութեանը մեծ խնամք ունենան, և անոր նմանն տասնըմէկ ասպար շինել տան նոյնպիսի նիւթով և ձևով, որպէս զի մէկը չկարենայ բուն աստուածատուք ասպարը գողնալ: Երբոր հռովմայեցի ճարտար մը, Բեստուրիոս Մամուրիոս ան ասպարները շինեց. Նումա՝ Սալեան քուրմերը անոնց պահապան դրաւ. որոնք ամեն տարի պճնաւոր հագած, ձեռուընին ասպարներ բռնած, հանդիսով կեղլէին հռովմայ մէջ կը պարտէին, և երգեր կերգէին: Ասոնց մէքանի հատուածները կիկերոնի, Վարրոնի, Որատիոսի գրուածոց մէջ կը պահուին:

Արժանի օրէնք կամ երկոտասան տախտակ. — Վերը

ըսինք թէ Հռովմայեցւոց մէջ շատ օրէնսդիրք եղեան, և թէ անոնց գլխաւորներէն մէկն էր նաև Պապիրիոս։ Սակայն հաւանական կերեւնայ թէ իրեն սահմանած օրէնքներն այլևայլ փոփոխութիւնք կրած ըլլան, հռովմէական տեսչութեան կերպարանափոխ ըլլալովը. որով հարկ էր նաև օրինաց վերանորոգութիւն ընել։ Իսկ երբոր տասնապետք իրենց բռնաւորութեանցը համար ժողովրդեան տեւլի ըլլալով ընկրուեցան, անոնց մէ սահմանուած երկոտասան օրինաց տախտակները հատատուն մնացին։ Այս օրէնքներուն գլխաւորն էր որ Հռովմայ մէջ խմնատասերք և հռետորք ոտից կռուան չունենան։

Ասոնցմէ զատ ուրիշ քանի մը նուազ յարգ ունեցող գրութիւնք կը յիշատակուին, որոնցմով աւելի հռովմէական նախնի մատենագրութեան աղքատութիւնը կը տեսնուի, քան թէ անոր փառաց առաւելութեանը պատճառ կրնան ըլլալ։ Թէպէտև օգոստեան գարուն անապարծներէն ոմանք կուզէին ցցընել թէ Ցունաց հատատրապատիս իրենց մէջ ալ քերթողք, վիպասանք և պատմագիրք երևցած ըլլան նախնի գարուց մէջ, և թէ անոնց գրուածքը անդադար պատերազմաց պատճառաւ կորսուած կամ ապականած ըլլան, սակայն իրենց մէջ ամենէն հռչակաւոր բանասէր հանճարը Որատիոս դեմ կը խօսի այս կարծեաց, և ընդունայն ակնկալութիւն և անոսի պարծանք ըլլալը կը ցցընէ։ Վիրգիլիոս ալ իր Ենէականին մէջ հռովմայեցւոց, մանաւանդ հնոց, անուանութիւնները բարբը կշտամբելով, "Ուրիշ ազգերը, կըսէ, տեսակ տեսակ արուեստից և գիտութեանց եռուն կըլլան. բայց քու արուեստդ, ով հռովմայեցի, միայն ազգերն ընկճելու և զանոնք խոնարհեցընելու վրայ է,,։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 05:58 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԼՈՒԽ Բ.

ԼԻՒՈՍ ԱՆԴՐՈՆԻԿՈՍ ԵՒ ՆԵՒՈՍ

Լիւիոս Անդրոնիկոս. — Լիւիոսի երկասիրութիւնը. — Հռովմէական ներբերգը. — Կնէոս Նեւիոս. — Նեւիոսի ժողովրդականութիւնը:

Լիւիոս Անդրոնիկոս. — Ինչպէս շատ ազգաց, ասանկ ալ Հռովմայեցւոց մէջ գեղեցիկ գրութիւնք բանաստեղծութեամբ սկսան մտնել, որոնք Սիկիլիոյ և Մեծին Յունաստանի մէջ շատ ծաղկած ըլլալով դիւրաւ կրցան մտնել նաև՛ի Հռոմ:

Յունաց մէջ սրբազան և վիպասանական քերթուածներուն ծագումնէն ետքը մտաւ թատերականը. իսկ Հռովմայեցւոց գրաւորական պատմութեան սկիզբը աս վերջինովս է: Կարծագինէի առաջին պատերազմէն ետքը աս նշանաւոր դէպքը պատահեցաւ՝ Լիւիոս Անդրոնիկոս կոչուած մէկու մը ձեռքով:

Հռովմայ շինուածքեան 389 տարին, կաւանդէ Տիտոս Լիւիոս, ահաւոր սրածութիւն մը բոլոր քաղաքը տակնուվրայ կընէր. և երբոր աստուածոց սրտմտութիւնը անցընելու համար մարդկային հնարքը բանի չէին գար, մտածեցին թատերական տեսարանքը մտցընել՛ի Հռոմ. ան տեսարանքը՝ որ բոլորովին նոր էին կրկիսի հանդիսաներով զբաղած և զուարճացող ժողովրդեան մը համար: Բայց ինչպէս ամէն բան իրեն սկզբնաւորութեան առեն սակաւ ու խեղճ կըլլայ՝ ասանկ ալ նոյն ատենի թատերախաղք աննշան և յօտարաց առ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 05:58 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նուած նիւթեր էին : Նախ Եպրոբիայէն մանա-
ւոր խաղարկուք բերել տուին , որոնք նուագա-
րանաց ընկերակցութեամբ ժողովրդեան առջև կը
պարէին , առանց մանաւոր խօսք մը զուրցելու :
Հռովմայեցի պատանիք քիչ առենէն սկսան նմա-
նիլ անոնց , ու անարուեստ ոտանաւորները շա-
րադրելով իրարու հետ անոնցմով կը խօսէին ,
մէկզմէկ կը ծաղրէին ու կը պարէին : Բայց աս ան-
կերպարան զուարճութիւնը ժողովրդեան հաճոյ
ըլլալով կամաց կամաց սկսաւ ձև և կերպարանք
առնել , և Լիւիոս առջինն եղաւ որ առանձին
թատերական արարուած մը չինելով կամ
թարգմանաբար յունականէն քաղելով թատեր
վրայ ելաւ , և իր շարադրած երգերն սկսաւ ան-
ձամբ և միայնակ զուրցել : Սակայն երբոր տեսաւ
թէ նիւթոյն երկարութիւնը պատճառաւ յոգ-
նելով ձայնը մարեցաւ , իր գերիներէն մէկուն
հրամայեց որ թատեր վրայ ելլէ ու նուագարա-
նով ան տողերն երգէ . իսկ ինքը միայն անոր խօս-
քերուն պատշաճական մարմնոյ ձևերը կընէր :

Ահաւասիկ սասնկ սկիզբ մը ունեցան հռով-
մէական թատերախաղք : Լիւիոսի Անդրոնիկոսի
համար ոմանք կըսեն թէ յոյն էր ազգաւ , և իրեն
բուն անունը Անդրոնիկոս . բայց Լիւիոս Սալ-
նատոր ազնուականին ազատագրեալն ըլլալուն՝
երախտագիտութեան համար անոր անունն ալ ա-
ռաւ , ինչպէս նոյն ժամանակին ընդհանուր սով-
րութիւնն էր : Իսկ ոմանք բուն հռովմայեցի կը
համարին զԱնդրոնիկոս :

Լիւիոսի երկասիրութիւնք . — Այլևայլ թատե-
րական արարուածք շարադրեց Լիւիոս Անդրո-
նիկոս , մանաւանդ ողբերգութիւնք . զոր փաթ-
րիկիոս իր մատենադարանին մէջ յիշելով անոր
վեշտասան ողբերգութեանց միայն անուանքը և

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 05:59 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

քանի մը մնայորդքը ինչուան մեր օրերը հասան կըսէ : Ինքը Թարգմանեց նաև Հոմերի Ոդիսակա-նը լատին անհատատար ոտքերով :

Կիկերոն՝ Անդրոնիկեայ վրայ մեծ համարոմ մը չի ցցըներ և մնացած հատուածները կարդա-րացընեն Հռովմայեցի ճարտասանախօսին կարծիքը : Ոդիսականին լատին Թարգմանութիւնը ան հին ատեններուն կը նմանցընէ Կիկերոն՝ որոնք Դե-դալոսի կընծայուէին . և որոնց յարդը միայն հե-ղինակին անունը համարւ էր . իսկ Թատերական քերթուղեանցը վրայ կը զուրցէ Թէ անկարելի է կրկին անգամ կարդալը : Բայց միշտ գովուելէ արժանի է Անդրոնիկոս իր ջանքին և փութին համար . որովհետև ուրիշ կատարելագոյն և ան-Թերի սեպուած քերթողներուն առջև ճամբայ բացողն ինքն եղաւ : Որատիոս ալ որ ստոր և անա-ջառ քննութեամբն անունի է , կը զուրցէ Թէ իր ուսուցչին Որբիլիոս աս քերթողին բանաս-տեղծութիւնքը սաստիկ կարդալով , " Թէպէտ ան-կէ տպաւորեան են , կըսէր , և առանց գրաւորական ախորժակի , բայց պէտք չէ երեսի վրայ ձգել , և կամ իբրև բոլորովին անպիտան բան արհամար-հել ,, :

Հռովմէական Նոթէրը . — Լիւիոսի վրայ խօսելու առիթնիս հարկ է որ քանի մը բան ալ հռովմէա-կան Թատերաց վրայ զուրցենք : Երկար ատեն Հռովմայի մէջ Թատերք փայտաշէն էին . և ատ-ջինը Պոմպէոս եղաւ որ իր ծախքովը փառաւոր Թատր մը շինել տուաւ : Տեսարանը՝ և անոր վե-րաբերեալ ուրիշ ամեն հանդերձանք՝ յոյնական Թատերաց նմանութեամբը շինուած էին . միայն աս տարբերութիւնը կար՝ որ հռովմայեցիք պարը վերցընելով՝ անոր տեղ վարագոյր դնելու սով-րութիւնը սահմանեցին . ապա Թէ ոչ , արտրուած .

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 05:59 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նելը իւրամէ բաժնելը կամ գերասանից հանգիստ տալը անհնարին կըլլար։ Ծերակուտին և ատրուեթեան պաշտօնատարից համար մանաւոր տեղուանք սահմանուած էին. իսկ հասարակ մարդիկ իսաղը չսկսած մէյմէկ թուանշան կառնէին, ու եաքը նոյն թուոյն համար որոշուած տեղը կերթային։ Բացօթեայ էր թատրը, բայց հանդիսականաց վրայ մեծ լաթերով կը ծածկէին, արևէն կամ անձրևէ պահպանելու համար. որովհետև ինչպէս յայտնի է, ցորեկը կը կատարուէին այսպիսի հանդէսք։

Հասարակաց տօնից մեան կը սեպուին թատերախաղք. ուստի և ամէնքն ալ անխափ կրնային երթալ, վասն զի մէկ թատերախաղը այլևայլ աստեն և անգամ կը հանդիսացուէր։ Պետութիւնը կը վարձատրէր զքերթողս և ուրիշ ամէն արդիւնք ունեցողները։

ԿՆԷՈՍ ՆԷՒՈՍ. — Հռովմէական գպրութեանց մէջ ծաղկող երկրորդ քերթողն եղաւ Կնէոս Նեւիոս կամպանիացին, կամ ըստ ոմանց Հռովմայեցին. որ գրեթէ Անդրոնիկեայ ժամանակակից էր։ Սակայն անկէ շատ աւելի հանճարի տէր և սկզբնագիր սեպուելու արժանի քերթող մը. անանկ որ Հռովմայեցիք իրենց ամենէն աւելի ծաղկած միջոցին մէջ ալ՝ երբոր Անդրոնիկեայ համբաւը կորսուածի պէս էր, զՆեւիոս կը պատուէին. "Անոր գիրքը ձեռնարկիս չէ, կըսէր Պրաւիոս. բայց գրեթէ բոլոր քերթուածքը բերնուց գիտենք,,։

Պունիկեան առաջին պատերազմին ժամանակ՝ այրական հասակի մէջ էր Նեւիոս. և ինչպէս Վարրոն կաւանդէ, ինքն ալ նոյն պատերազմին մէջ մնող, ու նկարագիրը քերթուածքէն վառուտոյն էր։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 05:59 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Պատերազմին դադրելէն քանի մը տարի ետքը, Անդրանիկոսի Թատեւրական քերթուածեամբք ըստացած պատուոյն նախանձելով՝ ինքն ալ նոյն արուեստին ձեռք զարկաւ. և իւրեն ողբերգուածեամբքը, կատակերգուածեամբք և ուրիշ բանաստեղծուածիւններով քիչ ատենուան մէջ մեծ անուն հանեց: Ժողովրդասէր ու ազնուականաց դէմ ատելուածեամբ ըլլալով, իր երգիծաբան լեզուն անոնց վրայ դարձուց, մանաւանդ Մեսեւլոսի և սկիպիոնեանց դէմ. և այնպիսի մեծարոյ անձինքը՝ որ շատ անգամ իրենց յաղթուածիւններովը փառաւորեցին զՀռոմ, հարուածէ հայրենեաց կը կոչէր, ու վարձկանք՝ որոնք առանց իրենց արդեանցը՝ ուրիշի քրտամբքն ու արեամբ փառք ու պատիւ կը դիզեն: Մեսեւլոս չկրցաւ համբերել իրեն դէմ զուրցած նախատանացը, մինչդեռ սկիպիոնեանք վեհանձնուածեամբ կարհամարհէին, դատաստանի կանչեց զինքն ու խիստ բանտարգելուածեան դատապարտուեցաւ: Բայց կերևնայ թէ բանտին նեղուածիւնքը այնչափ տպաւորուածի չբերին քերթողին վրայ. ազատուածիւնը գտնելէն ետքը, մանաւանդ թէ բանտին մէջ ալ, ինչպէս ոմանք կատանգեն, նորէն իր առջի լեզուն սկսաւ բանեցընել Մեսեւլոսի և ուրիշ զօրաւոր մարդկանց դէմ. ուստի և Հռոմէն աքսորուեցաւ (205): Ուսիկէ առանձնացաւ Նեւիոս, և հոն երկու տարիէն ետքը մեռաւ: Տապանին վրայ այսպիսի արձանագիր մը հրամայեց որ դնեն. "Թէ որ անմահք կարենային մահկանացուաց վրայ ողբալ, կամենայք (Մուսայք) Նեւիոս քերթողին վրայ ալիտի արտասուէին. վասն զի իրմէն ետքը Հռովմայ մէջ մարդ չմնաց որ կարենայ լատինական բուն լեզուն գործածել,,:

Նե-իոի Էլոսիբուլիանը. — Բայց ի՛նչ քանի մը

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 05:59 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

թատերական երկասիրութիւններէն՝ Նեւիոսի գրչ. խաւոր քերթուածքն է պունիկեան առաջին պատերազմին վրայ գրածը, զոր ապոստոնեան ըստուած անկերպարան տաղաչափութեամբ շիներ էր, և անոր համար վար կը զարնէ զինքը Ենիոս: Բայց Կիկերոն իրեն դէմ կելլէ ու կը պաշտպանէ զՆեւիոս. "Նեւիոսի պունիկեան պատերազմին վրայ շարադրած քերթուածքը, կըսէ, թէպէտ Էննիոս կարհամարհէ, բայց ինծի համար շատ հաճոյական կերևնան, և ուրիշ քերթողք որ նոյն պատերազմին սաորագրութիւնն ըրին աւելի լաւ ոճով և կիրթ ախորժակաւ, այլ հայր սորեր Նեւիոսէ գաղափարած կամ գողցած են": Բայց Կիկերոնի գովութիւնքը կերևնայ թէ աւելի Նեւիոսի բանեցուցած լեզուին հարազատութեանը համար ըսուրցուած ըլլան. ապա թէ ոչ, քերթողական արուեստին մէջ շատ պակասութիւններ ունի:

ԳԼՈՒԽ Գ.

ԿԱՏՈՆԷՆ ԱՌԱՋ ԼԱՏԻՆ ԱՐՁԱԿ ԼԵԶՈՒՆ

Յռանական պատմութեանց ապրեցուիքանը հռովմայեցի նախնի արձակ գրող մատենագրաց ոճին վրայ. — Փաբիոս Պիկտոր. — Երկու դամբանական ճառեր. — Կատոնէլիոս Կեղեգոս. — Սկիպիոն առաջին ափրիկեցի. — Գրակէանոց հայրը:

Յռանական պատմութեան ապրեցուիքանը հռովմայեցի նախնի արձակ գրող մատենագրաց վրայ. — Կիկերոն կասանդէ թէ հռովմայեցւոց նախնի մատենագրաց

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:00 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ոչին վրայ մեծապէս ազդեցութիւն ըլլած է յոյնական լեզուն և գրաւորական ախորժակը, ա-նանկ որ պատմիչք՝ Հերոդոտեայ և Թուկիդիդէսի կը ջանային նմանիլ, ճարտասրախօսք՝ Եսքինեայ և Դեմոսթենի, իսկ իմաստասիրութեան բոլորովին անծանօթք էին, որովհետև իրենց առջի փիլիսոփայքը կիկերոնի և Լուկրետիոսի ժամանակ սկըսան երևնալ:

Մենք առանց բոլորովին համաձայնելու կիկերոնի գրութեան, կրնանք ըսել համարձակ թէ սա ազդեցութիւնը բնական էր որ ունենային Յոյնք հռովմայեցւոց վրայ. մինչդեռ Խոալիոյ մեծ մասը գրաւած, և նոյն իսկ Հռովմայ մէջ բազմաթիւ էին Յոյնք. իրենք էին ուղայոց դաստիարակ, մանաւոր լսարաններ ստհմանողք և դաստատացութիւն ընողք. որովհետև իրենցմէ առաջ հռովմայեցիք ուրիշ բանի փոյթ չունէին, բայց միայն իրաւագիտութիւնը և զինուորական արուեստը մէջերնին ծաղկեցընել. զանոնք կը սեպէին հայրենեաց փրկութիւն, իսկ ուրիշ դըպրութիւնք անօգուտ և անպիտան:

Սակայն քիչ առենէն եաքը Յունաց սիրելով իմացան դպրութեանց ազդեցութիւնը քաղաքակրթութեան վրայ. և եթէ Յոյնք չըլլային՝ հռովմէական գրականութիւն պատմութիւնը կամ իսկ ցամաք և կամ ամենևին գոյութիւն չէր ունենար:

Փաբիոս Պիկտոր. – Նեւիոսի ժամանակակից էր Փաբիոս Պիկտոր պատմագիրը, որ երկրորդ պունիկեան պատերազմին պատմութիւնը շարադրեց. և զոր Պողիբիոս շատ կը գովէ իր գրուածոցը մէջ: Բայց կերևնայ թէ Փաբիոսի ճշդութիւնը և բանադատութիւնը պակաս էր. իսկ գրութեան ոճը կիկերոն՝ փերեկիդէս և Հելլանիկոս յոյն պատմագրաց կը նմանցընէ, կարգե դուրս պարզու-

Generated on 2015-03-17 06:00 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

թեամբ մը շարադրուած , որուն մէջ ոչ աշխոյժ և ոչ ընտիր դասաւորութիւն կայ : Հռովմայեցի Ճարտարախօսին դասատուները կարդարացընեն նաև նոր բանասէրք՝ փաբիոսի քանի մը մանր հատուածոց ընթերցանութեամբը :

Պիկատրի ժամանակ ուրիշ պատմագիրք ալ էին Կ . կինկիոս Ալիմենա և Գ . Ակիլիոս , որոնք կամ կարգէ դուրս յոնաամոլութիւն և կամ լատին լեզուի այնչափ տեղեկութիւն չունենալով յոնացրէն շարադրեցին իրենց պատմութեան գլուխները :

Երկու դմբանական ճառէր . – Մեռելոց յիշատակը արձանական կամ գամբանական ճառերով պատուելու սովորութիւնը հին էր հռովմայեցւոց մէջ . բայց նոյն ճառերը գրով առնլի աւանդողք՝ Քրիստոսէ 300 տարի առաջ կըսկսին : Կատոնի ժամանակ խիստ շատ էր այսպիսի ճառերուն թիւը . և անոնք զուրցողները , ինչպէս բազմաց տալորութիւն է , աւելի կը ջանային մեռելին ծանօթից և ազգականաց առջևը հաճոյանալ հիւսուածոյ ոնայնաբանութեամբք , քան թէ բուն և իրական պատմութիւնն աւանդել . կըսեն թէ ինչուան չինծու յաղթանակաց պատմութիւնք մէջ կը բերէին , մեռելը և իրեն տոհմը փառաւորելու համար : Ա ճառից մէջ միայն երկուքին յիշատակութիւնը կայ , մէկը Կեկիլիոսի Մետելլոսի 'ի պատիւ իր հօրը , և միւսը Փաբիոսի Մաքսիմոսի 'ի պատիւ որդւոյն : Առնց մէջ աւելի յայտնի կը տեսնուէր Փաբիոսի Մաքսիմոսի արձանականը , որուն համար ինքն իսկ Կատոն կը զուարճէր , ինչպէս կը յիշատակէ Կիկերոն Կատոնէ կամ Ցաղագս ծերութեան ըսուած զրուցատրութեանը մէջ . " Մաքսիմոսի շատ ալինիւ գրութիւնքը տեսեր եմ , կըսէ . բայց անոնց մէջ գեղազանց է իր քաջութիւնը , որով իր Մարկոս ա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:00 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նուանին և բդեշխութեան արժանաւոր մեռեալ որդին դրուատեց։ Զուրցած արձանականն ամենուն ձեռքն է. կարդալու սաեննիս՝ ամէն իմաստասէրք և իրենց դրութիւնքը կարհամարհենք ,, ։ Նազմաթիւ ժողովրդեան առջև, հռովմէական հրապարակին (forum) մէջ զուրցեց Մաքսիմոս սա գամբանականը, զոր ոչ Պլուտարքոս գովութեամբ հռչակելով Թուկիդիդեայ գրոցը մէջ գտնուած սաեննախօսութենէ կը նմանցընէ ։ Բայց սա բաղդատութիւնը չափազանց, որով և հեռի է՛լ ճշմարտութենէ ։

Կոռնէլիոս Կէրկոս. — Կիկերոն՝ Բրութոս ըստւած զրուցատրութեանը մէջ փակիսոն ժամանակակից անուանի ճարտասրախօս մըն ալ կը յիշատակէ, զՍ. Կ. Կեթեգոս, անուշ և զօրաւոր բարբառով մարդ մը, զոր իրեն ժամանակակիցքը, կըսէ, և քաղաքակիցք մարդկութեան մէջէն ընտրուած ծալիկ մը կը համարէին, և զուրիշը համոզելու համար շատ անուանի ։

Սկիպիոն տոռէլլի ֆերիւեցի. — Սկիպիոն առաջնին ափրիկեցին ոչ միայն անուանի զօրավար, հապա նաև հռչակաւոր ճարտասրախօս էր. և Լիւիոս կը յիշատակէ թէ Նեւիոս տիրեսունին դէմ ճառ մըն ալ շարադրած ըլլայ՝ որուն հարուածութեանը վրայ տարակուսիլ կը ցցընէ Ավլոս Գելլէոս. բայց վերջաբանութեան քանի մը խօսքերը կը հաւատարմացընեն թէ Սկիպիոնին ըլլայ. ,, կը յիշեմ, կըսէ, ով հռովմայեցիք, թէ աս օրուան օրս մեծ պատերազմի մը մէջ կարթեդոնացի Անիբալին յաղթեցի՝ ձեր զօրութեանը աչառութենշամուն, և չեն ձեզի համար անակնկալ յաղթութիւն և խաղաղութիւն մը ստացայ ։ Աստուածոց ապերախտ չըլլանք. երթանք Արամազդայ՝ մեծին և բարերարին գոհութիւն մատուցանելու ,, ։

Generated on 2015-03-17 06:00 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

Գրակէանց հայրը. — Տիբերիոս Սեմպրոնիոս Գրակքոս՝ երկու անգամ բգեշխ դրուեցաւ, ու աշնուսպետութեան անանկ ոճերիմ թշնամի էր, որ Սկիպիոնի փեսայ ըլլալու արժանի եղաւ: Ոչ միայն վարքովը և քաջութեամբ ամենուն զարմանքը կը յարձակէր Տիբերիոս, հապա նաև իր ճարտարիսօսութեամբ և անուանի քաղաքագիտութեամբը: Ինչևայլ ճառեր շարադրած է, և անոնց մէջ մէկն ալ յոյն լեզուաւ:

Իրեն ժամանակակից քաղաքական ճարտասրախօսք էին Լ. Պապիրիոս Տերենտիոս Վարրոն, Լիւինիոս Կրասսոս՝ որ բգեշխ ալ եղաւ (206), Կուռնելիոս Սկիպիոն՝ մեծին Սկիպիոնի ափրիկեցւոյ որդին և այլք:

ԳԼՈՒԽ Դ.

ԿԱՏՈՆ, ԵՆՆԻՈՍ

Կապոնի վրէժը. — Ճառերը. — Կապոն և Յոյնք. — Կապոն առ որդին իւր գրած էրէսիրուԹիւնը. — Պապմանիան գրուԹիւնը. — Եննիոս. — ՈղբերգուԹիւնը. — ԿապակերգուԹիւնը. — Եննիոսի պարեգերքը. — Եննիոսի վրայ հինգերոն դապատպանը:

Կապոնի վրէժը. — Իտալիոյ Տուսկուլոն քաղաքէն էր Կատոն, և կերևնայ Թէ Քրիստոսէ 234 տարի առաջ ծնած ըլլայ. որովհետև ինքը կատանգէ Թէ Տրասիմենեայ պատերազմին ժամանակ տասնըեօԹը տարեկան էր: Պոլկեանք իր նախնիքը՝ Թէպէտև անննշան տոհմէ և աէրուԹեան մէջ սպատիս չունէին, բայց փորձը ցցուց Թէ վիճակին նը-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:01 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ւաստուԹիւնը՝ ոգւոյ և հանճարի պզտիկուԹիւն մը չէր պատճառեր : Կատոն իր մանկուԹեան ժամանակէն արժանաւոր երևցաւ անոնց . և ինչպէս ըսինք՝ եօԹնևատասնամեայ հասակին՝ Պոմպիոսի դէմ հռչակաւոր պատերազմին մէջ մեծ անուն հանեց : ՄանկուԹեան առեն վարած պարզ և անպաճոյճ կեանքը՝ պատերազմաց խստուԹեան աւելի զօրուԹիւն առաւ : Առեն անցնելէն ետքը Փաբիոս Մաքսիմոսի հետ Տարենտոն գնաց , և հոն Նէարքոն անունով պիւԹագորեան իմաստասիրի մը առնչուԹիւն ընելով՝ անոր փիլիսոփայական վարդապետուԹեանցը հմտուԹիւն ունենալու փափաք ցցուց : Թէպէտ առջի բերան յունական լեզուի ընդդիմուԹիւն ունէր և չէր ուզեր սորվիլ , բայց ետքը իմացաւ անոր հարկաւորուԹիւնը , և ալ աւելի քաղցրուԹիւնով ճաշակեց առաւ՝ երբոր նոյն լեզուով սկսաւ Թուկիդիդէսի և ԴեմոսԹենի գրքերը կարդալ :

Պատերազմաց մէջ ալ մինչդեռ փառաք կը մեծարուէր , իր անպաճոյճ կեանքը չմոռցաւ Կատոն . գերիներուն հետ կաշխատէր , և անոնց ընկերակցուԹեամբը կուտէր կը խմէր : Վաղերիոս Փլակկոս անուանի պատրիկ մը իմացաւ անոր հանճարը , և Թէ որչափ օգտակար կրնայ ըլլալ հայրենեաց իր խօսքովն ու գէնքովը . առաւ Հռոմ բերաւ գինքը . իր պաշտպանուԹեամբն առաջ քաշեց , ու ծերակոյտը՝ Թէ զԿատոն և Թէ գինքը ճանչցնող Վաղերիոսը գովեց ու փառաւորեց : Ինքը Կատոն եղաւ որ յորդորեց զՀռոմմայեցիս երրորդ պունիկեան պատերազմին ձեռք զարնելու . Ընփրիկէ գնաց կալքեդոնացւոց և նոմիդացւոց մէջ եղած գժտուԹիւնը դադրեցընելու . ոեսաւ կարքեդոնի հարստուԹիւնը , փառքն ու բազմամարդուԹիւնը , և անոր փառասիրական

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:01 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

խորհուրդները : Հռոմ դարձաւ , ամէն տեսածն ու լսածը պատմեց անոնց , ու սկսաւ նախատել զՀռովմայեցիս ու իրենց անհոգութիւնը վար զարնել , որով ան ակար ու խելչ կարծուած ժողովըրդենէն պիտի ընկճէին : Այնչափ զուրցեց թէ " ՋՆՋԵԼՈՒ Է ԶԿԱՐԹԵԳՈՆ ,, , որ վերջապէս վախճանին հասաւ . բայց կարթեգոնի կործանուածն ինքը չկրցաւ տեսնել :

Կատոնի կեանքն երկայն պատերազմ մը կրնայ սեպուիլ . ազնուապետականք՝ իրեն պէս ահաւոր , երկարատև և անողոք թշնամի մը չունեցան . ուժասունըհինգ տարին անցեր էր , բայց սըրտին կրակը չէր մարած . և կենացը վերջին տարին ժողովրդեան առջև ամբաստանեց զՍերուիոս Սուլպիկիոս Գալբա : Ըստ անգամ ինքն ալ ամբաստանուելով միշտ արդարացաւ , ու դատախազներն ամօթով մնացին :

Կոպռնի ճառերը . — Կատոնի անուամբ եղած ուժասունուինը ճառից վերնագիրը և քանի մը հատուածները ձեռուընիս հասած են : Անոնք ամէնը քաղաքական տեղեկութիւնք են , ժողովրդեան ճառեր և անձին պաշտպանութիւնք : Կատոն անողոքելի կռիւ մը ունեցաւ Մինուկիոս Թերմոս հռովմայեցի ազնուականի մը հետ , որն որ Լիգուրեանց և Կելտաց աշխարհին քանի մը ժողովրդոց դէմ ըրած պատերազմներուն համար կը պահանջէր որ յաղթանակ մը ըլլուի իրեն : Զարմանալի և հզօր ճարտասրխօսութեամբ մը ծեքակուսին մէջ դէմ կեցաւ իրեն առաջարկութեանը Կատոն , Թերմոսի յաղթուելիքը և պարծանքն իբրև պզտիկ և արհամարհ՝ մուրացածոյ ճոխութիւն մը ցցուց : Աւլոս Գելլէոս ասճառեբուն քանի մը հատուածները յիշատակելով կը զուրցէ թէ միայն հռովմէական ճարտարրխօսու-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:02 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թեան հայրը կիկերոն կրցաւ այնպիսի ազգու ոճ բանեցընել. և Թէ նոյն իսկ Գայիոսի Գրակքոսի ոճը շատ ատորին է քան զԿատոնին:

Կատոնի ձառից այլևայլ հատուածները կրկնագիր ձեռագրաց մէջ գտնուլը հռչակաւոր Անձելոյ Մայ ծիրանաւորն եղաւ:

Կապոն Ե. Յունի. — Ա՛ս անուանի ճարտասրախօսը Թէպէտ ինչպէս յիշեցինք, Թուկիդիդեայ և Դեմոսթենի գլքերը կը կարդար, և Պիւթագորայ իմաստասիրութեանը հետևող էր, բայց Յունաց գէմ ան ատելութիւնը պահեց միշտ զոր ի սկզբան անանց լեզուին վրայ ալ ունէր: 161ին յոյն հռետորքը և իմաստասէրքը Ծերակուտին մատնաւոր հրամանաւ աքսորուեցան. Կատոն էր անոնց հակառակորդը և ջերմակոյտը համոզուը: Բայց ան հրամանը երկար տևողութիւն չունեցաւ. Յոյնք նորէն Հռովմայ մէջ համարձակութիւն և ընդունելութիւն գտան: Ամէնք սկսան պերճախեսութիւնը յաճախել և սկսեր էր ուրիշ մերձակայ աշխարհաց մէջ ալ ծաւալիլ. ան վարդապետութիւնն որ մեր ժամանակաց անկրօնից պետերն կամէն քան կարհամարհէր ու քանի մը չէր հատար: Կատոն գիտնալով Թէ հռովմայեցիք ոսքի վրայ բռնողն իրենց բարեպաշտութիւնն է, և Թէ այնպիսի զեղծմունքը կրնայ մեծապէս վնասակար ըլլալ հայրենեաց, ամէն ջանք ըրաւ կառնէադեայ հետևողքը հռոմէն հեռացընելու. բայց անոնց վարդապետութիւնը քիչ շատ ազդեցութիւն ունեցաւ հռովմայեցւոց սրտին վրայ. և հռոմէացին առաւ ակսաւ ակարանալ ու վատնանալ:

Կապոն սա որդին գրած երեսնրեքէն. — Կատոն որդի մը ունէր, որուն գաւառաբարբառութիւնն իր կենաց մեծ գործողութիւններէն մեկը նրա-

Generated on 2015-03-17 06:02 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ամբ կը համալրէր : Մանկութենէն ի վեր , կը պատմէ Պլուտարքոս , ամէն փոյթը կընէր անոր դաստիարակութեանը , և անձամբ գաս կու տար որգւոյն . և Թէպէտ Փիլոն անունով գերի մը ունէր , ճարտար քերթող և տպաւոց վարպետութիւն ընող անձ մը , բայց չէր ուզեր որ գերին ըլլայ որգւոյն վարժապետը . Հօր մը՝ իր տղուն հետ ունեցած յարաբերութիւնն ուրիշ բան է կրսէր : Կատոն լաւ իմացեր էր դաստիարակութեան առ անհրաժեշտ սկզբունքը : Հօրն ակնկալութիւնը փուճը չհանեց որդին . հայրենեաց մէջ անուանի մարդիկներէն մէկն եղաւ՝ Սկիպիոն Եմիլիանոսի հաւասար , որուն քոյրը՝ Պաւղոս Եմիլիոսի սպլնկը , հարնացուցեր էր իրեն : Բայց ծաղիկ հասակին մէջ մեռնելով Թէ ծնողին և Թէ հայրենեաց ակնկալութիւնը հետը տարաւ :

Անոր դաստիարակութեանը համար մատնանշուած գրքեր շարադրեր էր Կատոն , որոնց միայն անունները կը յիշատակուին . ինչպէս Յաղագս ճարտարախօսի ըսուած ճառը մը , Պատերգիական կամ Նաւագնացութիւն է-ը , և այլն : Կատոնի խրատներէն կամ վարդապետութիւններէն մէկը կատանդէ Գելլէոս . “ Մարդկային կեանքը , կըսէր , երկրքի կը նմանի . երկաթը Թէ որ գործածելու ըլլաս՝ կը փայլի , իսկ եԹէ երեսէ ձգես՝ կը ժանգոտի : Կը տեսնենք որ մարդիկ աշխատանքով կը վատաւորուին . ծուլութիւնը և անգործութիւնը շատ աւելի վնասակար են քան զատաւիկ աշխատութիւնը ,, : Ուրիշ հատուածի մէն ալ Պլինիոս երէցն կը յիշատակէ . “ Որդեակ իմ Մարկոս , Յունաց վայ ուրիշ անգամ քեզի հետ տեղնիտեղը պիտի խօսիմ . հիմա ան միայն ըսեմ քեզի Թէ յունական գպրոցներուն վայ աչք մը ձգելը հարկաւոր է , բայց ոչ եԹէ հիմնովին ուսուիլ : Յունաց ազգը խիստ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:08 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ախտամոլ և անասնձէ է . . . Հիմա մեզի իր բժիշկ-
ները կը խրկէ՝ որոնք երդում ըրեր են ամէն բար-
բարոսքը (յոյն չեղող ազգերը) ասպանել իրենց
արուեստովը ,, :

Կապոնի պապական էրխոէրօնիէնը . — Ինչուան հիմա յիշատակած երկասիրութեանց կորուստը այնչափ ցաւալի չէ , որչափ կատոնի պատմական գլուխներուն : Իր ծերութեան տարիները հին Հռովմայ պատմութիւնն սկսեր էր շարադրել . և աս վախճանատ խտալիոյ բոլոր տարեգիրքը աչքէ անցուցած : Ան գրուածին անունը Ծագումն կամ Սկզբնաւորութիւն (Origines) դրեր էր , և ասոնց գիրք բաժներ , Հռովմայ սկզբնաւորութենէն մինչուան պունիկեան երկրորդ կամ երրորդ պատերազմը : Տեղնիսեղը և ամենայն հանգամանաք կանդնէր ան ամէն անցքերը՝ որոնց ականատես կամ գործադիր եղած էր . իր ըրած տեղեկութիւնքն ալ մէջը ամփոփեր էր : Հինք կսեմնդեն թէ շատ հետաքրքրական ըլլայ կատոնի աս երկասիրութիւնը , և Հռովմայ նախնի պատմութեանը մեծապէս լոյս տուող :

Երկրագործութեան վրայ ալ այլևայլ ճառեր շարադրած է կատոն . որովհետև իր տունի պարապմունքն ան ըլլալով միշտ սիրելի էր իրեն , և անոր օգտակարութիւնը հայրենակցաց ցցնելու կաշխատէր :

Եննիոս . — Եննիոսի վարքը կատարեալ հակադրութիւն մը կրնայ սեպուիլ կատոնի վարուցը . որովհետև Եննիոս ոչ գործոց և ոչ կառավարութեան մարդ եղաւ . բայց Հռովմայ մէջ պատահած ամէն զարմանալու և սիրոյ արժանի բաներուն վրայ զարմանք և սէր ցոյց : Սարտեներէ մէջ հասարակ զինուոր մըն էր Եննիոս . կատոն տեսաւ զինքն ու հետը Հռոմ բերաւ :

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:09 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ինչպէս Լիւիոս Անդրոնիկոս, առանկ ալ Ենիոս յոյն էր ազգաւ, ու կալաբրիոյ Հռուգիա քաղաքը ծնած (246). երեսունըհինգ տարեկան հասակին կատոնի հետ Հռոմ եկաւ, և հոն անցուց մնացած կեանքը (170): կենդանութեան աւեն ալ մեծ համբաւ և պատիւ ունեցաւ իր երկասիրութեամբը:

Եննիոսի ոչխերգութիւնը. – Հռովմայեցւոց վրայ այլևայլ ոչխերգութիւնք հանդիսացընել տուաւ Եննիոս, որոնցմէ չատը Եւրիպիդեայ թատերախաղից թարգմանութիւնքն էին կամ նմանութիւնք, ինչպէս Անդրոմաք, Մեդէա, Հեկուբէ, Ախիլեան, և այլն: Յունական ոչխերգութեանց պարծանք անուանի քերթողին երկասիրութիւնքը՝ լատինական լեզուի մէջ իրենց ուժը չէին կորսընցուցած: Ասիկայ Եննիոսի մեծ արդիւնքն էր, որուն չկրցան հաւասարիլ իրմէ առաջ Անդրոնիկոս, իրմէն ետքն ալ Սենեկա: Անոր համար ալ էր Եննիոսի ունեցած պատիւը հռովմայեցւոց մէջ. լաւ սկզբնագիր մը լաւ թարգմանելը՝ ան ազգին լաւ սկզբնագիր մը ընծայել ըսել է. որով և թարգմանիչը՝ հեղինակին պարծանացը կերպով մը կցորդ կըլլայ: Բայց Եւրիպիդեայ ոչխերգութիւնքը բոլորովին իրենց յարգը կը կորսընցընէին թէ որ պարզ բառական թարգմանութիւնք ըլլային. անով սկզբնագրին գեղեցկութիւնը կը կորսուէր, և թարգմանչին աշխատութիւնն ընդունայն կըլլար. Եննիոս՝ քերթող արուեստով անձ մը՝ ան թերութիւնէն ալ խորշեցաւ ձարտարութեամբ:

Եննիոսի կոպակերգութիւնը. – Պիտի տեսնենք թէ ինչպէս Տերենտիոս հռովմայեցի կատակերգակ քերթողին երկասիրութիւնքը՝ Մենանդրի թարգմանութիւնք են: Լատին քերթողը երկու

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:09 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

յունական կառավարգութիւններէն մէկ կը ձևացընէր, ու երկընցընելով կամ համառօտելով իր յարմարցընէր։ Իրեն ժամանակակից և համբաւոյն և գիտութեան նախանձորդը զինքը վար կը զարնէին առ քանիս հպարտ. Տերենտիոս ալ ինքզինքը արդարացընել ուզելով զնեւիոս, զննիոս և զՊլաւտոս մէջ կը բերէր։ Ուրիշներն ալ կը յիշատակեն Թէ Ենննիոս՝ ինչպէս ողբերգութիւնք, ասանկ ալ այլևայլ կատակերգութիւնք թարգմանութեամբ յօրինելով ձևացընել կու տար. բայց հինները ոչ երբեք գոված են զննիոս իբրև նշանաւոր կատակերգակ քերթող. մանաւանդ Թէ իրենցմէ մէկը Հռովմայ մէջ ծաղկած կատակերգակ քերթողաց պատմութիւնն ընելով ամենէն վերջը զննիոս կը դնէ, ան ալ միայն իրեն հնութեանը մեծարանք մը տալու համար, ինչպէս ինքն ալ կը խոստովանի։

Ենննիոսի փաւէզիրէը. — Ենննիոսի գլուխ ծոցը մէջ ամենէն աւելի անուանի և մտադրութեան արժանաւոր իր Տրէգիրն են, որուն մէջ հռովմայեցւոց, և մանաւանդ իրեն սիրելի և մտերիմ Սկիպիոն ափրիկէացւոյն քաջագործութիւնքը կըպատրաստէ։ Սուետոնիոս կը պատմէ Թէ իբրև նոր Հերոդոտոս մը ամէն գլխաւոր համախմբութեանց և ազգային հանդիսից ժամանակ կը կարդար Ենննիոս իր առ պատմութիւնը. և այնչափ հաճոյ անցաւ ժողովրդեան, որ ինչուան քերթողին մահուընէ ետքն ալ առհմանեցին որոյն օրերը կարգացուին իր առաւեգիրքը։ Տանրուվը գիրք բաժնուած էր առ վիպասանութիւնը, և հռովմայ սկզբնաւորութեանէն ինչուան պունիկեան երկրորդ պատերազմը կը հասնէր, ժամանակագրական կարգով. և անոր համար ալ Տրէգիրէ կը կոչուէր։ Վիպասանութիւն մը սիրելի և մեծարգոյ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:09 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ընողը՝ քերթողին առեղծաբան հանճարը պիտի ըլլայ, որպէս զի հասարակ պատմագրութենէ կարեւոր զանազանուիլ։ Պատմութիւնը յարգը կը կորսընցնէ թէ որ չինծու խօսքերով և դէպքերով ճշմարտութենէ հեռանայ. վիպասանութեան ալ նոյն ուժը չունենար եթէ ժամանակին ձեռքէն պատմութիւն մը առնելով նոյնպէս աւանդուի, առանց պարագայի մը կամ ճշմարտանման առութեան։ Էննիոս ասոնք երկուքին ունի. և թէպէտ ինքզինքը Համերոսի կը նմանցընէ, բայց ասոնք մէջ յոյն քերթողահօրէն մեծապէս կը զանազանի։

Սակայն Էննիոսի քերթուածներուն ճնացորդքը՝ արժանաւոր կը ցցընեն զինքը իր համբաւոյն և մեծարանացը։

Ասոնցմէ զատ ուրիշ երգիծաբան քերթուածներ և քանի մը մանր գրուածք ալ կը յիշատակուին Էննիոսի անուամբը։

Էննիոսի վրայ հիներուն ըրած դատաստանը. — Մասնաւոր գրական ախտաժակը երբոր հռովմայեցւոց մէջ սկսաւ զարգանալ և իրենց Ոսկեդարն ընծայել, պարմանք չէ որ ան առեղծ քերթողք մեծ հանդիսաւոր չէին ցցըներ Էննիոսի վրայ. բայց իրեն արգիւնքը ոչ երբեք կատարեան. "Էննիոս եղաւ առջինը, կըսէ Լուկրետիոս, որ բարգաւաճ հեղինակի վայրէն պսակ մը բերաւ՝ որուն տերևքը ոչ երբեք պիտի թառչամին,,։ Նոյն ինքն Վիրգիլիոս՝ լատին քերթողութեան պարծանքը, մեծապէս կը յարգէր զԷննիոս. և թէպէտ կըսէ թէ "Ընդոյ ալեհեղութեանցը մէջէն գոհարները կը ժողվեմ,,, բայց շատ բանի մէջ հեռուած է անոր, և երբեմն նաև օրինակած։ Սակայն Ովիդիոսի հետ խոստովանիլ արժան է թէ "Էննիոսի հանճարը մեծ, բայց ոտուեստը շատ անկատար է,,։ — "Ար-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:09 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ժան է որ մեծարեցնէ զՆիննիոս, կըսէ Կուինտիլիանոս, ինչպէս ան հին և արքայական անուանեցները, որոնց մէջի եղած գարերը համրող կայնիքը՝ պատուականք են աւելի իրենց հնութեամբը քան թէ գեղեցկութեամբ ,, :

ԳԼՈՒԽ Ե.

ՊՂԱՏՈՆ

Պղատոնի վարքը. — կոպակերգոնիանը. — Հնոց դպրոցները Պղատոնի վրայ :

Պղատոնի վարքը. — Նեւիոսի կրած տառապանքները, բանտարգելութիւնը և աքսորանքը բաւականէն աւելի կը ցցընէին թէ հռովմէական ազնուապետութիւնը չէր կրնար ուզել որ Եւպոլիսի և Արիստոփանեայ հետևողքը երևնան Հռովմայ մէջ : Բայց հաշիւ թէ Նեւիոսի մահը լսուեցաւ, Հռոմ իր ուրիշ կատակերգակ քերթողն ունեցաւ, առջինէն շատ աւելի հանճարի և աշխուժի տէր մարդ : Ասիկայ էր Պղաւտոս, ընտիր ոճով մատենագիր մը, և իրաւամբք համբաւաւոր եղած կատակերգութեանց հեղինակ :

Ումբրիոյ Սարսինա գեղը ծնաւ Մարկոս Ակկիոս Պղաւտոս, Քրիստոսէ 227 կամ 224 տարի առաջ : կաւանդեն թէ պատանեկութեան տեղը Հռոմ եկած ըլլայ, և թէ եօթնևտասնամեայ հասակին իր մեկ կատակերգութիւնը հանդիսացուցած : կը պատմեն թէ կատակերգութեան աղուեստովը շատ բան վաստկած ըլլայ Պղաւտոս, և թէ անկէ ետքը բանատեղծութիւնը ձգելով

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:10 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ակաեր է վաճառականութեան եւեւէ ըլլալ, ունե-
ցած ճախութիւնը աւելի չատցընելու դիտմամբ:
Բայց խաբուեցաւ, որովհետեւ առուտուրի անյա-
ջողութենէն այնպիսի խեղճ և աղքատ վիճակի մը
մէջ ընկաւ որ ստիպուեցաւ Հռոմ դառնալ. և
հոն իր կենաց ապրուստը ճարելու համար ին-
չուան ծառայական գործոց ձեռք զարնել:—Պղաւ-
տեայ կենացն աս պարագան Գելլէոս, Վարրոն և
ուրիշ շատերն ալ կատանգեն:

Սակայն ինչուան վերջը նոյն խեղճ վիճակին
մէջ չմնաց, բարեբաղդաբար իր հանճարը նորէն
գլինքը փառաւորեց. և ան Թշուառութեանը մէջ
շինած իրեք կատակերգութիւնքը բաւական եղան
իր տառապանացը մէջ սփոփանքը գտնելու:

Պղաւտոսի կոմպէրտո-ի-նէը. — Ալլոս Գելլէոս
իր ժամանակին համար կատանգէ Թէ հարիւր եր-
սուն կատակերգութիւնք կը գտնուէին Պղաւտո-
սի անուամբը. բայց հաւանական կերեւնայ, կըսէ,
Թէ տասնք ամենքը իրենը չեն. միայն քսանըհինգը
հարազատ, իսկ մէկալնունք կամ ապիտաբար Պը-
ղաւտեայ ընծայուած, և կամ անոր համար որ
քերթողը զանունք աչքէ անցուցեր և կարգի գրեր
է: Ասոնց ամենէն միայն քսանը ձեռնընիս հա-
սած է, որոնց վրայ համառօտ տեղեկութիւն մը
տալով գոհ ըլլանք:

Ա. Ամֆիթրիոն (Amphitrio). — Որուն հետեւած
է Մոլիէռ գաղղիացի կատակերգակը՝ իր համա-
նուն քերթուածնը մէջ: Պղաւտեայ երկասի-
րութեանցը մէջ գլխաւորներէն մէկը կը սեպուի
ասիկայ:

Բ. Ասինարիա (Asinaria). — Ասոր ալ հետեւած է
Մոլիէռ իր նոյն անուամբ կատակերգութեը մէջ:

Գ. Աւլոլարիա (Aulalaria). — Որ Մոլիէռի
Ագահին սկզբնապիրը կրնայ սեպուիլ: Եւ Թէպէտ

լասին քերթողին կատակերգութեանը մէջ շատ աշխոյժ և եռանդ կը տեսնուի, բայց դաղափարացոյն երկասիրութեանը հետ անկարելի է բաղդատել։

Դ. Բաքիդեան (Bacchides). – Երկու օրեակք քոյր են, իրարու կարգէ դուրս նմանութեամբ։ Ա յսպիսի պարագայի մը մէջ՝ երկու քոյրը իրարու հետ շփոթելով՝ այլևայլ կատակերգակ և զուարճալի դէպքեր կը հանդիպին։

Ե. Գերեալք (Captivi). – Հայր մը իր երկու որդիքը կը գտնէ, որոնց մէկը տղայութեան առեն կորսուեր էր, և միւսը պատերազմի մէջ գերի ընկած։ Նիւթ մը՝ որ շատ սեղմ տղբերգութեան կամ ողբերգութեան (drame) կը յարմարի քան թէ կատակերգութեան. ուստի և զարմանք չէ որ քերթողը չէ կրցած զուարճալի ընել անանկ դէպք մը՝ որ բան մը ընդհանուր սրտաշարժ է։

Զ. Գասինա (Casina). – Սիրահարական կատակերգութիւն մըն է, որուն մէջն պարագաները բնականէ դուրս եղեռնաւն՝ ուժերնին ալ կորսընցուցած են։ Աւոր նման է նաև եօթնեղբայրդ կատակերգութիւնը որ Սիսթար (Cistellaria) կը կոչուի։

Ը. Երևէլ կամ Քորքոր (Curculio). – Հայկական մը նկարագիր. որովհետև երևիլը որդ մըն է որ ծառոց մէջ կվնասէ ու զանոնք կապականէ։ Բաւական հանճարով և աշխուժութեամբ գրուած քերթուածիւն մըն է ասիկայ։

Թ. Եպիդիկոս (Epidicus). – Հին քերթողաց կատակերգութեանցը մէջ ամենէն սեղմը ժուռալրնն հանգոյց ունեցողն ասիկայ է։ Եպիդիկոս գերի մըն է, իր ախրոջը որդւոյն սիրելի, և ամեն բանի մէջ անոր կամքը առաջ տանող։ Հնարագիտութեամբք զծեղուն խաբխըբել, կը չանայ հաճել զորդին յամենայնի։

Ժ. Մենեքմեայք (Menæchmi). – Ընտեսր գաղ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:10 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ղնացոյն համանուն քերթուածեան սկզբնագիրը. որն որ թէպէտ քանի մը բանի մէջ Պղատոսի թերութիւններէն կրցեր է զգուշանալ, սակայն անանկով ալ շատ տարբին կը մնայ քան զբատին քերթողը:

ԺԱ. Վաճառական (Mercator).—Որուն հետեւեցաւ Փիլեմոն: Աստր մէջ ալ հայր և որդի իրարու հետ կը թշնամանան չնչին պատճառով մը: Քերթողն աւելի զգուշութիւն բանեցուցեր է՝ գժպատեհ խօսքեր չյաճախելու: Երանի թէ նոյն զգուշութիւնն ուրիշ ամէն կատակերգութեանցը մէջ ալ պահած ըլլար:

ԺԲ. Պոռոտ զինուոր (Miles gloriosus). — Շատ զակրատ և պարծենկոտ զինուոր մը, որ միանգամայն արութիւն կը ցցընէ և իր ակարութիւնը կը խայտառակէ. մեծ անճնութիւն կը քարոզէ և փոքրոգութիւն կը գործէ:

ԺԳ. Ընակնալ դարչ (Mostellaria). — Որուն հետեւիլ ուզեր է Ռընեար՝ համանուն կատակերգութեանը մէջ:

ԺԴ. Պարսիկ (Persa). — Գերուոյ և փոխատուի մը եղած վէճերն ու հակառակութիւնքն են՝ կատակերգութեամբ պատմուած. յորում վերջապէս փոխատուն յաղթուելով գերուոյն իրաւունք կուտայ: Պարսիկ կոչուելուն պատճառն ալ ան է որ գերատանաց մէկը նոյն աշխարհէն կը ձևանայ:

ԺԵ. Կարթագինեցի (Pœnulus). — Երկու օրիորդք են տատր մէջի գլխաւոր անձինքը, գերութեան վիճակի մէջ. որոնք հոքէն կը յայտնուին թէ ազնուատոհմ կարթագինեցիք ըլլան, ծերունւոյն Աննոնի գտածք: Պղտի կարթագինեցի կամ փընուլոս կոչուելուն պատճառն ալ նախատանաց հաստար է, ինչպէս նոյն պատճառաւ զՅոյնս ալ Græculus (կռէքուլուս) կը կոչէին: Քերթողը Մե-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:10 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

գիր մը գնեն վրան. "Քանի որ Պղատոս մեռաւ, կատակերգութիւնը՝ ցաւի, ատելութեան մէջ է. խելագարութեան և բռնատեղծութեան աստուածք կարտասուեն, որով հեռւ խաղն և ուրախութիւնը վերցուեցաւ":

Թէ ժամանակակից և մեզ իրմէն եռքը եկող քերթողաց դատաստանը բաւականէն ատելի կարգադրացընեն Պղատեայ ալծենկոտութիւնը: Վարրոն կըսէր որ եթէ Մուսայք ուզենային լաւին լեզուով խօսիլ՝ միայն Պղատոսի ոճը պիտի բանեցընէին. Կիկերոն ալ Պոպլաճիոյ գրոցը մէջ կաւանդէ թէ "Երկու տեսակ կատակ կայ. մէկը դռեհկական, խէնէշ, պղծալից. իսկ միւսը պանծալի, մտացի, քաղաքավար և քաղցրաբան. և սասանկ են, կըսէ, մեր Պղատոսը, և հին Յունաց ուրիշ ծաղրաշարժ խաղերը. (Ա. 29): Իսկ Որատիոս ընդհակառակն վար կը զարնէ զհին հռովմայեցիս որ Պղատեայ կատակերգութիւնքը խիստ բարեմտութեամբ, կամ թէ ըսեմ, անմտութեամբ գովեր են.

Սակայն ձեր գովեցին հարք ըզպլաւտեան չափս և զկատակս,
Յաւէտ խին ընդ երկոսին նեղսրտաբար ըսքանչացեալք,
Զասեմ յիմարաբար, թէ միայն ես և եթէ դուք
Ըզգեղջուկն և զուսարձախօս գիտեմք ընտրել բան 'ի միմեանց,
Եւ եմք մատամբք ուռկամբ օրինաւոր ձայնիցդ հրմուտս:

Ան երկու հակառակ կարծիքներն իրարու հետ միաբանելը դժուարին բան մը չէ: Իրաւ է որ Պղատոս անուշ, բնական և զուարճալի ոճ մը ու-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:10 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նի . ու հասարակ ժողովրդեան բալքը և թերու-
թիւնքը ճարտար գոյներով ատորագրեր է . ա-
կայն հին անկերպարան ոճն իր կատակերգուԹիւնը
մէջ շատ տեղ կը տեսնուին . և որ չարն է , պար-
կեշտ և քաղաքավար կատակաց հետ՝ անվայել ու
ցած խօսքեր ու գեպքեր կաւելցընէ : Ասիկայ ա-
մենամեծ պակասութիւն մըն է Պղատեայ . և հե-
Թանոսութիւնը զինքը չարդարացըներ , մինչդեռ
իրմէն շատ աւելի խիստուն քերթողք կրցան
խոյս տալ այսպիսի անպատեհ Թերութենէ մը :

Հռովմայեցւոց ապականութիւնը յայտնապէս
կը տեսնուի սա քերթուԹեանց մէջ : Ամենքը Պը-
ղատոսի գիւտերուն վրայ կը զարմանային , զինքը
գովելէն և ծափահարութեամբ դրուատելէն չէին
դադրեր . Պղատոս ալ Արիստոփանեայ պէս կըր-
նար առանց ստութեան պարծենալ , Թէ “ Ինչ-
պէս անիկայ զՅոյնս , ես ալ զՀռովմայեցիս կաւ-
րեմ իրենց բարոյականին մէջ ,, : Պարծանք մը որ
երկու կողմին ալ ամօԹ է և նախատինք :

ԳԼՈՒԽ Զ .

ԿԵԿՈՒԼԻՈՍ

ԿԵՒԼԻՈՍԻ ՎՐՏԸ . — Ա-ԼՈՍ ԳԵԼԼԵՈՍԻ ՊԱՏՄԱՊԱՆԸ
ԼԱՏԻՆ ԿՈՊԱՒԵՐԳԱԿ ՓԵՐԻՈՂՈՅ ՎՐԱՅ :

ԿԵՒԼԻՈՍԻ ՎՐՏԸ . — Գալղիա յայնկոյս Ալպեանց
ըսուած աշխարհը ծնած էր Կեկիլիոս . և ինչպէս
հաւանական կը սեպուի , գերութենէ առաջ ե-
կած : Քրիստոսէ 200 տարի առաջ Հռոմ եկաւ ,
և հոն ծանրացեալ հասակի մէջ մեռաւ (166 կամ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:11 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

165). և Եւսեբիոս կաւանդէ իր ժամանակագրութեանը մէջ՝ թէ Ննիոսէ մէկ տարի եաքը հանդիպած ըլլայ Կեկիլիոսի մահը: Քառասունէն աւելի կառավարութիւն չարագրեր էր, և Տերենտիոս կըսէ թէ առջի երկասիրութիւնքն այնչափ ախորժելի չեղան ժողովրդեան. բայց քերթողը ամենևին չյուսահատեցաւ, ու իր երկայնամիտ չանքովը ամէն արգելքներու յաղթեց: Կեկիլիոսի ծերութեան առեն էր երբոր Տերենտիոս իր առջի կառավարութիւնը չարադրելով, քննչաց յանձնեց որ գառատանին զուրցեն. անոնք ալ պատուիրեցին որ երթայ նախ Կեկիլիոսի կարծիքն առնէ, ու եաքը նորէն իրենց գառնայ: Կեկիլիոս կերակուրի վրայ էր երբոր պատանին վախով և որամութեամբ անոր քովը գնաց. ծերունին ալ աննշան մարդ մը կարծելով զանիկայ՝ հրամայեց որ գեղինը նստի և կարդայ որ լսէ: Հազիւ թէ առաջին տեսիլը կարդացեր էր, զարմացաւ Կեկիլիոս անոր հանճարին վրայ. ուզեց որ սեղանակից ըլլայ հետը. և կերակրէն եաքն ամբողջ կառավարութիւնը լսելով՝ այնչափ խրախուսեց ու քաջալերեց զքերթողը որ ուրախութեամբ գնաց և Թաւեր վրայ հանդիսացընել տուաւ իր ան երկասիրութիւնը: Ժողովրդեան ընդունելութիւնն աւելի հաւատարմացուցին Կեկիլիոսի քաջալերքն ու համարումը:

Ա-լու Գելլէոսի տպաւորութիւն՝ լոկին հոռիզոնական փերոզոյ վրայ. — Հռովմայեցի կառավարչական քերթողաց վրայ խօսելու առեններնիս գէշ չըլլար որ իրենց անուանի բանասէրը Ալոս Գելլէոսի դատաստանը լսենք նոյն նիւթին նկատմամբ. "Մեր հին քերթողաց կառավարութիւնքն երբեմն երբեմն կը կարդանք, կըսէ, որոնք ընդհանրապէս Էննիանդրի, Պոսիդիպպեայ, Ապողոդորայ, Ա-

լեքսիսի և ուրիշ յոյն քերթողաց հետևողութիւնը կամ նմանութեամբ շինուած են: Ա կատակերգութիւնքը ոչ միայն անհաճոյ չեն երևնար մեզի, հապա նաև անանկ ախորժական և զմայլեցուցիչ ոճով գրուած, որ մաքերնէս կըսեինք թէ ասկէ աղեկը չէր կրնար ըլլալ: Բայց երբոր գալափարեալը սկզբնագրին հետ ուզենանք բաղդատել, յունական կատակերգութեանց քով դնենք լատինականները, մեկէն առջի բերան հաճոյական երևցածը՝ ցուրտ և ոգեսպառ կը սեպուի: Եաքեաս աս բանիս մեկ նշանաւոր փորձն անձամբ ըրի: Ուրիշ չատ մարդիկներու առջև կեկկիլիոսի Ժոպաէն ըսուած կատակերգութիւնը կարդացի, ու ամենուս ալ չատ հաճոյական երևցաւ: Փորձի համար ուզեցինք Մենանդրի համանուն ողբերգութիւնը կարդալ, որուն հետևած է կեկկիլիոս: Հազիւ թէ սկսեր էինք կարդալ, անհաւատալի բան մը կերևնայ թէ նմանութիւնը ինչպէս ցուրտ և տաղտկալի երևցաւ. և որչափ առորին կեկկիլիոս քան զՄենանդր ,, : Իր աս զուրցածը օրինակաւ ալ կը հաստատէ Աւլոս Գելլէոս, երկու քերթողքը իրարու հետ համեմատելով, ու եաքը կը յաւելու. " Ինչպէս առաջ ալ ըսի, կեկկիլիոս թէ որ առանձին կարդացուի՝ հանճարի տէր և զուարճացուցիչ հեղինակ մը կերևնայ. բայց երբոր յոյն քերթողին հետ բաղդատուի, կը համոզուինք ըսելու թէ աւելի լաւ ըրած կըլլար եթէ նմանողութեան չանքն ալ չունենար ,, :

Եաքի բանասիրաց կարծիքն ալ Գելլէոսէն այնչափ չի տարբերիր. կեկկիլիոսի տձը չատ բանի մէջ պակասաւոր կը գտնեն. բաւական աշխուժի տէր, բայց ստեղծագործութեան հանճարը քիչ: Հռովմայեցի հին ժողովուրդն իր բրտութեանը ժամանակ աւելի աննշան խօսքերէ և չարժուածքներէ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:11 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

համ կառնէր, քան թէ խրատական ընտիր ա-
ռածներէ. ուստի և զարմանք չէ որ առջինին ո-
ճովը շարադրած քերթուածքին աւելի ախորժա-
կան կերևնային իրենց: Ահաւասիկ աս պատճա-
ռաւ է որ կեկիլիոս համբաւաւոր եղեր է հռով-
մայեցւոց առջևը:

ԳԼՈՒԽ Է.

ՏԵՐԵՆՏԻՈՍ

Տերենտիոսի վարքը. — կոմոկերգու-թիւննէրը. — Տե-
րենտիոսի փերնուենանց մոտենագրական ոճը. — Իրեն
ժամանակակից ուրիշ կոմոկերգակ փերնուղք:

Տերենտիոսի վարքը. — Լատին քերթողաց մէջ գլխաւորներէն մէկը՝ ու գրեթէ իրմէ առջիններէն ամենէն աւելի Յունաց հետևողը Տերենտիոս՝ ոչ հռովմայեցի էր և ոչ յոյն. հապա բարբարոս ազգէ մը՝ բարբարոսի աշխարհքի մէջ ծնած 'ի կարթագինէ, քրիստոսէ 166 տարի առաջ: Երկար ատեն Տերենտիոս անունով հռովմայեցւոյ մը գերի էր, և ան պատճառաւ անոր անունն առաւ: Շատ հռովմայեցի ազնուականաց սիրելի էր Տերենտիոս, և մանաւանդ Կ. Լելիոսի և Սկիպիոնի ափրիկեցւոյ կրտսերոյ: Քանի տարուան էր երբոր իր առջի Անդրիացի կատակերգուներին շարադրելով կեկիլիոսի տարաբաղդ հրամանաբը, անոր դատաստանը լսելու համար, ինչպէս վերն ալ յիշատակեցինք: Եաւէ եաւս վեց կատակերգուներ շարադրելէն՝ և ժողովրդեան հաճոյական ըլլալուն պատճառաւ իր բաղդը չինելէն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:11 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

եաքը ուզեց դէպ 'ի յունաստան ճամբորդութիւն մը ընել, և ան պատճառաւ Հռովմայէն հեռացաւ : Բայց երբոր յունաստանի մէջ երկու իրեք ամիս կենալէն եաքը նորէն Իտալիա կը դառնար, հետը այլևայլ հին գրուածքներ ունենալով և Մենանդրի հարիւր ութ կատակերգութեանց թարգմանութիւնը, թէ ինքն և թէ երկասիրութիւնքը հռովմակոծութեամբ մը ծովուն տակը գնացին : Ոմանք կըսեն թէ միայն գրուածքները կորսուեցան. իսկ ինքը փաղրաս հասնելէն եաքը խմացաւ գլխուն եկած փորձանքը, և սրտին ցաւը ան առիճանի մեծ եղաւ որ հիւանդանալով Արկադիոյ մէջ ընկաւ մեռաւ երսունըհինգ տարուան :

Տերենտիոսի թշնամի նախանձորդներէն ոմանք ձայն հանեցին թէ քանի մը ազնուական և իրեն ընտանի մարդիկ մեծապէս ատատր եղան իրեն կատակերգութիւնները գրելու՝ իրենք ալ հետը մէկտեղ աշխատելով : Ա բանս Տերենտեայ անկաշ'ն ալ հասաւ, ու ոչ միայն իրեն նախատինք չտեսնց՝ հապա նաև պարծանք ալ որ կրցեր է հաճոյ ըլլալ անանկ մարդկանց՝ որոնք բոլոր ժողովրդեան առջև պատուաւորք էին, և 'ի խաղաղութեան և 'ի պատերազմի այլևայլ ծառայութիւն մատուցած հայրենեաց : Ա ազնուականքն էին Լէլիոս և Սկիպիոն, զորոնք առաջ ալ յիշեցինք : Բայց ուրիշ քննաբանք ատ բանիս չեն համոզուիր :

Տերենտիոսի կոպակերգութիւնները. — Տերենտիոսի առաջին կատակերգութիւնն Անդրիայի (Andria), ամենատարազ նիւթ մը ունէր : Պամֆիլոս անուանով երիտասարդ աթենացին՝ աղջիկ մը մոլորցուց, որ իրեն ատրփածուին քոյրը կը համարուէր, ու հետը Անդրոս կղզիէն Աթէնք եկեր էր : Պատանին խոստացաւ հետը կարգուիլու,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:11 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

թէպէտև ուրիշն ալ խօսք առեր էր: Պամփիլեայ հայրը առ բանս իմանալով ուզից որ իր որդւոյն ամուսնական սէրը փորձէ. ուստի անանկ ձևացուց թէ հարսանեաց պատրաստութիւն կը տեսնէ: Պամփիլոս ալ խորամանկ մարդու մը թելադրութեամբը՝ կառարէալ հնազանդութիւն կը ձևացընէր իր հօրը հրամանաց: Բայց առջի առաւփածուին հայրը Դրիմէս՝ կը հրաժարի իր աղջիկը Պամփիլեայ տալէն՝ երբոր անոր նենգաւոր բարքը կը տեսնէ: Մենանդրի Անդրիայի և Պերինթիա ըսուած կատակերգութեանց հետևողութեամբը չինեց ասիկայ Տերենտիոս:

Բ. Անյնապափիթ (Heautontimorumenus). — Տերենտեայ երկրորդ կատակերգութիւնն է ասիկայ: Մենեդեմոս ծերունին իր կլինիաս որդին անոր տարփածուէն կը բաժնէ. կլինիաս ալ կերթայ ասիացւոց Թագաւորին անձնակամ զինուոր դրուելու: Հայրը առ բանիս վրայ առտիկ վշտանալով՝ իր գեղի տունը կը քաշուի, և հոն ինքզինքը խիստ աշխատութեանց կու տայ: Ան միջոցին կլինիաս նորէն Ասիոյ կը դառնայ, ու իր բարեկամին միջնորդութեամբն՝ առանց հօրը իմացընելու իրեն սիրելի Ընտիոպէ աղջիկը կառնէ:

Գ. Անձնապատիժ կատակերգութեան շարադրութիւնն է (Phormio) Փորմիոն ըսուածը, զոր Հռոմուլեայ հաստատած հրապարակական խաղերուն առեն հանդիսացընել տուաւ: Ասոր հետևողութեամբը շարադրեց Մոլիէռ իր Ննգոընի-Սկապինեայ ըսուած երկասիրութիւնը:

Դ. Ներոնի (Eunuchus) կոչուած կատակերգութիւնն ալ նոյն տարին և նոյն գուսանաց ձեռքով հանդիսացուց Տերենտիոս՝ կիբեբելեայ առնից ժամանակ: Այնչափ հաճոյ անցաւ ժողովրդեան առ կատակերգութիւնը, որ մի և նոյն

Generated on 2015-03-17 06:12 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

օրուան մէջ երկու անգամ հանդիսացընել տուին։

Ե. Հեքսանէ (Hecyra), որ աւելի տագնապութիւն (drame) մըն է, և կամ ինչպէս Շլեկել կըսէ, տնական տեսարան մը, բայց մէջը աշխոյժ և քերթողութեան կրակ կը պակսի. անոր համար ժողովրդեան ան ատենուան ձանձրալի նիւթ մը եղած որ առջի տեսիլներուն Թողուցին Թատրը, ու գնացին ջուանի վրայ խաղցող Ճարտարին մը վարպետութեանց հանդիսատես ըլլալու։ Ատեն անցնելէն եաքը նորէն ձեացընել տուաւ քերթողը. բայց դարձեալ առջի անբաղդութեան հանդիպեցաւ։ Սակայն երբոր երրորդ անգամ մըն ալ աւելի յղկելով հանդիսացընել պիտի տար, առաջ մանուածոր ալեբա ըրաւ ժողովրդեան որ քիչ մը համբերութիւն ունենան. առջի տեսարաններու մէջ տագնակալի սեպուած կատակերգութիւն մը՝ կրնար եաքը զբօսալի ըլլալ, ինչպես արդեամբք ալ տեսնուեցաւ։

Զ. Երբոր Պաւղոս Եմիլիոսի պատուոյն այլևայլ հանդէսներ կըլլային, Տերենտիոս ալ իր Եղբօր (Adelphi) ըսուած կատակերգութիւնը Հարադրեց։ Գրեթէ նոյն նիւթը չատ աւելի Ճարտարութեամբ և աշխուժով Հինեց Մոլիէռ իր Վարժարան արուն կատակերգութեանը մէջ։

Տերենտիոսի Հերոսներուն Նոպենագրական ոճը. — Քերթողութեան Համառօտ արդի բանասէրք այլևայլ կարծիք ունեցեր են Տերենտեայ կատակերգութեանցը վրայ. վասն զի ոմանք գովութեամբ Հինչուան երկինքը կը բարձրացընեն Թէ գինքը և Թէ իր երկասիրութիւնքը. ոմանք ալ չափէն աւելի կը նուազացընեն։ Բայց Հնութեան երկու անուանի մարդիկ, Կիկերոն և Յուլիոս Կեսար, մեծ հանդէսամբ խօսելով Տերենտեայ վրայ, անոր գովութեան Նժարքը կը ծանրացընեն. “Դուռ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:12 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

միայն , ով Տերենտիէ , կը գոչէ Կիկերոն , դու միայն կրցար Մենանդրի ձայնը իրեն արժանաւոր լատինական բարբառով հնչեցընել հրատարակախուժ ժոլովրդեան մը առջև . քու ամէն խօսքերդ քաղցր են և ճաշտասլաւան [1] ,, : Իսկ կեսար անոր արդիւնքը խոստովանելէն ետքը , քանի մը Թերութիւնքն ալ կը նշանակէ . “ Յոյսց եթէ խոլշեցու ըլլայիր՝ անուանդ աւելի ցանկալի պիտի ըլլար [2] ,, կըսէ : Ոմանք Տերենտեայ դլխաւոր պակասութիւն կը սեպեն որ Յունաց երկու կատակերգուներուն մէկի կը վերածէր : Յիրաւի ասիկայ մեծ Թերութիւն մըն է , Թէ որ քերթողն իր հանճարովն այնչափ այլակերպութիւն մտուցած չըլլայր՝ ու հանգոյցքը դիւրութեամբ չլուծած : Տիտոս Համբաւաւոր գաղղիացին իր խոր-

1 “Դու քաջակիրթ ընտրող բանի , Տերենտիէ ,
Այլաբեզու ի մէջ ածեալ ըզ Մենանդրոս ,
Ընտիր խօսիք , որ ինչ համբոյր և ախորժն է ,
Դաշըն ձայնիւ տուս նըւագել լատինահունս ,,:
ԿԻԿԵՐՈՆ

2 Ո՛ կէս Մենանդր , յիրաւի
Դու դնիս վեհ ի կարգի ,
Սիրոդ յըստակ բարբառոյ .
Յանկարծ քո մեղմ քերթածոյ
Կատակերգակ տաղից աստ
Թէ յաւելոյր ի նպաստ ,
Ցունականին զուգափառ
Փոյթ քաջութիւն ճոխանայր ,
Եւ ոչ ի յայդըմ մասին
Անկեալ կայիր դու ատորին .
Ընդ այդ ևեթ քոյին բիծ
Եմ , Տերենտի , ի թախիծ ,, :
ԿԵՍԱՐ

Generated on 2015-03-17 06:20 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

հըդպածոնիւն՝ ի վերայ Տերենպեայ ըսած ձառին մէջ՝ ան քերթողը Յունաց հին արձաններուն կը նմանցընէ. "Որոնք, կըսէ, թէպէտ քիչ կիրք, քիչ յատկութիւն ու գրեթէ ամենևին շարժմունք չունին, բայց իրենց սեպհական կիրքն է փառաւորութիւն և ճշմարտանմանութիւն. վասն զի քիչ հեղինակ կան, կըսէ, որ ան երկու յատկութիւնքը միացուցած ըլլան իրենց գըրուածոցը մէջ, ուրվ և ախորժակ. քիչ արձանք կան Ըմբշի և Լաոգոնի նման[1]"։ Իսկ Պոսիւէ Գաղղիոյ անդրանիկ տքքայորգուոյն գասախարակութեանը համար առ Իննովիկենտիոս ԺԱ հայրապետը գրած թղթին մէջ կըսէ. "Ըեմ կրնար ըսել թէ որչափ օգտակար և գուարճալի եղաւ իրեն Տերենտեայ գրոց ընթերցումը։ Տեսաւ սիրոյ խաբէութիւնքը, երիտասարդութեան բուռն կրից կուրութիւնը և գահավէժ ընթացքը... Իրաւ է որ տեղ տեղ մեղմ պժգալի կերևնար իր ոճը. բայց մտածելու առեննիս կամընայինք թէ ինչպէս մեր ժամանակաց թատերական քերթողք՝ շատ աւելի անարժան ոճ մը բռնած են գուարճացընելու քան զհեթանոս մտաենագիրը։

Տերենտեայ ժամանակէն ուրիշ հեղինակ մը չէ ելլած. — Տերենտեայ ժամանակը հռովմէական թատերագութեան ոսկեդարն եղաւ, թէպէտև առանց անուանի կատակերգակ քերթողներ ունենալու։ Ան աստեն սկսան գրուիլ սկզբնագիր կամ պապմուճանաւոր ըսուած (comedia togata) կատակերգութիւնք։ Այսպիսի քերթողք կը յիշատակուին Լիկինիոս, Աստիլիոս, Տուրպիլիոս, Տրաբէա, Լուկիոս, Ափրանիոս, Ատտա, Տիտինիոս և այլք։

1 Հնութեան մէջի ասանդաձ անպիտիպ արձաններէն են, որոնց վարիկանեան նանգարանին ճոխութիւնն ու փառքը կաւելցընեն։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:20 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Հին մատենագիրք այսպիսեաց երկասիրութիւնքը վրայ խիստ անտարբերութեամբ կը խօսին, կըսէ Գուլիելմոս Շլեկել. որով կրնանք իմանալ անոնց ինչ ատիճանի յարգ ունենալը:

ԳԼՈՒԽ Ը.

ԼՈՒԿԻԼԻՈՍ

Լ-կիլիոսի վարքը. — Լ-կիլիոսի գրուածքները. — Որոփոս և Լ-կիլիոս:

Լ-կիլիոսի վարքը. — Հռովմայեցւոց բանաստեղծութիւնն ինչուան աս ատեն պարզ նմանութիւնն մը կրնար սեպուիլ յունական քերթուածեան: Ողբերգակ և կատակերգակ քերթողք ուրիշ բան չէին ըրած, ինչպէս տեսանք, բայց եթէ յոյն բանաստեղծից նմոյշների գրուածքն՝ի լատին փոխել: Սակայն ատեն անցնելով սկսան ամընչնալ, և վախնալ որ չըլլայ թէ գերի սեպուին ան ազգին՝ զոր իրենց զինուքը նուաճեր էին: Գայիոս Լուկիլիոս հռովմայեցի ասպետը, որ Նումանտիոյ պատերազմաց մէջ կրտսերոյն Սկիպիոնի նիզակակից էր, լատին մատենագրութիւնը ճոխացընել սկսաւ վեցաչափ ոտքով շարադրած երգիծական քերթուածեամբք, որ ամենևին անծանօթ էր Յունաց:

Ներ կոչուած Լատիոնի Սուէսսա Աւրունկա քաղաքը ծնած էր Գայիոս Լուկիլիոս, Քրիստոսէ 148 տարի առաջ, հարուստ և ազնիւ տոհմէ: Տասնըչորս տարուան էր երբոր Սկիպիոն Եմիլիանոսի հետ Նումանտիա քաղաքը պաշարելու գնաց. և

իր քաջութեամբը և պատերազմասէր ոգւովը շատ հաճոյ եղաւ Սկիպիոնի և Լելիոսի: Տէրութեան պաշտամանց մէջ ալ մտնելով՝ չափէ դուրս հարըստութիւն դիզեց. բայց եռքերը հիւանդութիւն մը ունենալով երբոր օդափոխութեան համար ուզեց Նէապօլիս անցնիլ՝ հոն մեռաւ:

Լ՚ուկիլիոսի գրուածները. — Լուկիլիոսի գլխաւոր գրուածքն իր երգիծաբանութիւններն են, որոնք երասն գլխի մէջ ամփոփուած էին: Մանաւոր յարմարութիւն մը ունէր երգիծաբան քերթուածին շարադրելու, ինչպէս որ ձեռնըկիս հասած երկայն հատուածներէն ալ կերևնայ: Քնարերգականին ալ յարմարութիւն ունէր Լուկիլիոս. բայց անոնցմէ բան մը ձեռնըկիս հասած չըլլալուն որոշ դատաստան մը չենք կրնար ընել. ինչպէս հինք ալ իրենց լռութեամբը կը ցցընեն թէ այնչափ գովութեանց արժանի բաներ չըլլան:

Լուկիլիոս առջինն եղաւ հռովմայեցի ազնուականաց մէջ ինքզինքը ուսման և գպրութեանց տուող. իրմէ առջիններըը կամ ազատագրեալ էին, կամ հասարակ ժողովրդեան վերաբերող անձինք և կամ օտարականք: Ան պարագան բաւական պարծանք է Լուկիլիոսի համար:

Որոփոս և Լ՚ուկիլիոս. — Որատիոս՝ ուրիշ ազնուականի երգիծաբան քերթող մը՝ ասանկ դատաստան կընէ Լուկիլեայ վրան. "Եւպոլիս, Կրատինոս, Արիստոփան և ուրիշ հին կատակերգութեան նախահարք՝ մանաւոր բնաւորութիւն (caractère) մը նկարագրելու գժուարութիւն չէին քաշեր. ինչպէս գող կամ չար և կամ անամօթ մարդ մը: Յամենայնի իրենց նման է նաև Լուկիլիոս: Ծաղր ընող, չարասէր բարքով, և ոտանաւոր շարադրելու գիւրութիւն և յարմարութիւն մը ունէր: Հոս է իր գլխաւոր պակասութիւնը.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:20 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

165). և Եւսեբիոս կաւանդէ իր ժամանակագրու-
թեանը մէջ՝ թէ Կննիոսէ մէկ տարի եաքը հան-
դիպած ըլլայ կեկիլիոսի մահը։ Քառասունէն ա-
ւելի կառավարութիւն չարագրեր էր, և Տերեն-
տիոս կըսէ թէ առջի երկասիրութիւնքն այնչափ
ախորժելի չեղան ժողովրդեան. բայց քերթողը
ամենևին չյուսահատեցաւ, ու իր երկայնամիտ
ջանքովը ամէն արգելքներու յաղթեց։ Կեկիլիոսի
ծերութեան առեն էր երբոր Տերենտիոս իր առ-
ջի կառավարութիւնը չարադրելով, քննչաց
յանձնեց որ գառաստանին զուրցեն. անոնք ալ
պատուիրեցին որ երթայ նախ կեկիլիոսի կար-
ծիքն առնէ, ու եաքը նորէն իրենց դառնայ։ Կե-
կիլիոս կերակուրի վրայ էր երբոր պատանին վա-
խով և արամութեամբ անոր քովը գնաց. ծերու-
նին ալ աննշան մարդ մը կարծելով զանիկայ՝ հրա-
մայեց որ գեաինը նստի և կարդայ որ լսէ։ Հա-
զիւ թէ առաջին տեսիլը կարդացեր էր, զարմա-
ցաւ կեկիլիոս անոր հանճարին վրայ. ուզեց որ
սեղանակից ըլլայ հետը. և կերակրէն եաքն ամ-
բողջ կառավարութիւնը լսելով՝ այնչափ խրա-
խուսեց ու քաջալերեց զքերթողը որ ուրախու-
թեամբ գնաց և Թաւեր վրայ հանդիսացընել
տուաւ իր ան երկասիրութիւնը։ Ժողովրդեան
ընդունելութիւնն աւելի հաւատարմացուցին կե-
կիլիոսի քաջալերքն ու համարումը։

Ա-լու Գելլէոսի դպրոցը՝ լոքին հոմոիէրճակ
փերիոդոյ վրայ. — Հռովմայեցի կառավարչակ քեր-
թողաց վրայ խօսելու առեննիս գէշ չըլլար որ ի-
րենց անուանի բանաստեր Ավլոս Գելլէոսի դա-
ռատանը լսենք նոյն նիւթին նկատմամբ. "Մեր
հին քերթողաց կառավարութիւնքն երբեմն եր-
բեմն կը կարդանք, կըսէ, որոնք ընդհանրապէս
Մենանդրի, Պոսիդիպպեայ, Ապոլոդորայ, Ա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:21 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

լեքսիսի և ուրիշ յոյն քերթողաց հետևողութիւնը կամ նմանութեամբ շինուած են: Ա կատակերգութիւնքը ոչ միայն անհաճոյ չեն երևնար մեզի, հապա նաև անանկ ախորժական և զմայլեցուցիչ ոճով գրուած, որ մաքերնիս կըսենք թէ սակէ աղեկը չէր կրնար ըլլալ: Բայց երբոր գալփարեալը սկզբնագրին հետ ուզենանք բաղդատել, յունական կատակերգութեանց քով դնենք լատինականները, մեկէն առջի բերան հաճոյական երևցածը՝ ցուրտ և ոգեսպառ կը սեպուի: Եաքեաս ատ բանիս մեկ նշանաւոր փորձն անձամբ ըրի: Ուրիշ շատ մարդիկներուս առջև կեկլիոսի ժողովէն ըսուած կատակերգութիւնը կարդացի, ու ամենուս ալ շատ հաճոյական երևցաւ: Փորձի համար ուզեցինք Մենանդրի համանուն ողբերգութիւնը կարդալ, որուն հետևած է կեկլիոս: Հազիւ թէ սկսեր էինք կարդալ, անհաւատալի բան մը կերևնայ թէ նմանութիւնը ինչպէս ցուրտ և տաղտկալի երևցաւ. և որչափ առաջին կեկլիոս քան զՄենանդր ,, : Իր ատ զուրցածը օրինակաւ ալ կը հաստատէ Աւլոս Գելլէոս, երկու քերթողքը իրարու հետ համեմատելով, ու եաքը կը յաւելու. " ինչպէս առաջ ալ ըսի, կեկլիոս թէ որ առանձին կարդացուի՝ հանճարի տէր և զուարճացուցիչ հեղինակ մը կերևնայ. բայց երբոր յոյն քերթողին հետ բաղդատուի, կը համոզուինք ըսելու թէ աւելի լաւ ըրած կըլլար եթէ նմանողութեան ջանքն ալ չունենար ,, :

Եաքի բանասիրաց կարծիքն ալ Գելլէոսէն այնչափ չի տարբերիր. կեկլիոսի ոճը շատ բանի մէջ պակասաւոր կը գտնեն. բաւական աշխուժի տէր, բայց ստեղծաբանութեան հանճարը քիչ: Հռովմայեցի հին ժողովուրդն իր բրտութեանը ժամանակ աւելի աննշան խօսքերէ և չարժուածքներէ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:21 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

համ կառնէր, քան թէ իսրատական ընտիր ա-
ռածներէ. ուստի և զարմանք չէ որ առջինին ո-
ճովը շարադրած քերթուածքն աւելի ախորժա-
կան կերևնային իրենց: Ահաւասիկ աս պատճա-
ռաւ է որ կեկիլիոս համբաւաւոր եղեր է հռով-
մայեցւոց առջևը:

ԳԼՈՒԽ Է.

ՏԵՐԵՆՏԻՈՍ

Տերենփիոսի վարքը. — կոփոկերգուիւնները. — Տե-
րենփիոսի էրևութենց մասենագրական ոճը. — Իրեն
ժամանակակից ուրիշ կոփոկերգակ էրևոցք:

Տերենփիոսի վարքը. — Լատին քերթողաց մէջ
գլխաւորներէն մէկը՝ ու գրեթէ իրմէ առջիններ-
էն ամենէն աւելի Յունաց հետևողը Տերենտիոս՝
ոչ հռովմայեցի էր և ոչ յոյն. հապա բարբարոս
ազգէ մը՝ բարբարոսի աշխարհքի մէջ ծնած 'ի
կարթագինէ, Քրիստոսէ 166 տարի առաջ: Եր-
կար ատեն Տերենտիոս անունով հռովմայեցւոյ
մը գերի էր, և ան պատճառաւ անոր անունն ա-
ռաւ: Շատ հռովմայեցի ազնուականաց սիրելի
էր Տերենտիոս, և մանաւանդ Կ. Լելիոսի և Սկի-
պիոնի ափրիկեցւոյ կրտսերոյ: Քանի տարուան
էր երբոր իր առջի Անդրիացի կատակերգուհիները
շարադրելով՝ կեկիլիոսի տարաբաղդ քննչաց հրամա-
նաւը, անոր գաւառատանը լսելու համար, ինչպէս
վերն ալ յիշատակեցինք: Եաւէ եաւ վեց կատակ-
երգուհիներ շարադրելէն՝ և ժողովրդեան հա-
ճոյական ըլլալուն պատճառաւ իր բազդը շինելէն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:21 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

եաքը ուզեց դէպ ի յունաստան ճամբորդութիւն մը ընել, և ան պատճառաւ Հռովմայէն հեռացաւ : Բայց երբոր յունաստանի մէջ երկու իրեք ամիս կենալէն եաքը նորէն Իտալիա կը դառնար, հետը այլևայլ հին գրուածքներ ունենալով և Մենանդրի հարիւր ութ կատակերգութեանց Թարգմանութիւնը, թէ ինչն և թէ երկասիրութիւնքը հոլմակոծութեամբ մը ծովուն տակը գնացին : Ոմանք կըսեն թէ միայն գրուածքներըը կորսուեցան. իսկ ինքը փոքրաս հասնելէն եաքը իմացաւ գլխուն եկած փորձանքը, և սրտին ցաւը ան առիճանի մեծ եղաւ որ հիւանդանալով Արկադիոյ մէջ ընկաւ մեռաւ երսունըհինգ տարուան :

Տերենտիոսի Թշնամի նախանձորդներէն ոմանք ձայն հանեցին թէ քանի մը ազնուական և իրեն ընտանի մարդիկ մեծապէս ատտոր եղան իրեն կատակերգութիւնները գրելու՝ իրենք ալ հետը մէկտեղ աշխատելով : Ա բանս Տերենտեայ անկաճն ալ հասաւ, ու ոչ միայն իրեն նախատինք չտեսեց՝ հապա նաև պարծանք ալ որ կրցեր է հաճոյ ըլլալ անանկ մարդկանց՝ որոնք բոլոր ժողովրդեան առջև պատուաւորք էին, և ի խաղաղութեան և ի պատերազմի այլևայլ ծառայութիւն մատուցած հայրենեաց : Ա ազնուականքն էին Լէլիոս և Սկիպիոն, զորոնք առաջ ալ յիշեցինք : Բայց ուրիշ քննաբանք ատ բանիս չեն համոզուիր :

Տերենտիոսի կոպակերգութիւնները. — Տերենտիոսի առաջին կատակերգութիւնն Անդրիայի (Andria), ամենատարազ նիւթ մը ունէր : Պամֆիլոս անուն երիտասարդ աթենացին՝ աղջիկ մը մոլորցուց, որ իրեն տարփածուին քոյրը կը համարուէր, ու հետը Անդրոս կղզին Աթէնք եկեր էր : Պատանին խոստացաւ հետը կարգուելու,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:22 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

թէպէտև ուրիշն ալ խօսք առեր էր: Պամփիլեայ հայրը առ բանս խմանալով ուզեց որ իր որդւոյն ամուսնական սէրը փորձէ. ուստի անանկ ձևացուց թէ հարստանեաց պատրաստուելիւն կը տեսնէ: Պամփիլոս ալ խորամանկ մարդու մը թեւադրուելեամբը՝ կատարեալ հնազանդութիւն կը ձևացընէր իր հօրը հրամանաց: Բայց առջի տարփածուին հայրը Դրիմէս՝ կը հրաժարի իր սկզբիկը Պամփիլեայ տալէն՝ երբոր անոր նենգաւոր բարքը կը տեսնէ: Մենանդրի Անդրիայի և Պերինթիա ըսուած կատակերգութեանց հետևողութեամբը չինեց ասիկայ Տերենտիոս:

Բ. Անյնապատիժ (Heautontimorumenus).— Տերենտեայ երկրորդ կատակերգութիւնն է ասիկայ: Մենեդեմոս ծերունին իր կլինիա որդին անոր տարփածուէն կը բաժնէ. կլինիա ալ կերթայ ասիացւոց Թագաւորին անձնակամ զինուոր գրուելու: Հայրը առ բանիս վրայ ատտիկ վշտանալով իր գեղի տունը կը քաշուի, և հոն ինքզինքը խիստ աշխատութեանց կու տայ: Ան միջոցին կլինիա նորէն Աթէնք կը դառնայ, ու իր բարեկամին միջնորդութեամբն՝ առանց հօրը իմացընելու կրեն սիրելի Ընտիոպէ սկզբիկը կառնէ:

Գ. Անձնապատիժ կատակերգութեան շարադրութիւնն է (Phormio) փորմեոն ըսուածը, զոր Հռոմուլեայ հաստատած հրապարակական խաղերուն առեն հանդիսացընել սուաւ: Ասոր հետևողեամբը շարադրեց Մոլիէռ իր Ննգոռնիոն Սկապինէայ ըսուած երկասիրութիւնը:

Դ. Նէրսինի (Eunuchus) կոչուած կատակերգութիւնն ալ նոյն տարին և նոյն դուսանաց ձեռքով հանդիսացուց Տերենտիոս՝ կիբեբելեայ առնից ժամանակ: Այնչափ հաճոյ անցաւ ժողովրդեան առ կատակերգութիւնը, որ մի և նոյն

Generated on 2015-03-17 06:22 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

օրուան մէջ երկու անգամ հանդիսացընել տուին :

Ե. Հեքիւրէ (Hecyra), որ աւելի տաղերգութիւն (drame) մըն է, և կամ ինչպէս Շլեկել կըսէ, տնական տեսարան մը, բայց մէջը աշխոյժ և քերթողութեան կրակ կը պակսի. անոր համար ժողովրդեան ան ասանձնի ձանձրալի նիւթ մը երևցաւ որ առջի տեսիլներուն Թողուցին Թատրը, ու գնացին չուանի վրայ խաղցող Ճարտարի մը վարպետութեանց հանդիսատես ըլլալու : Աւետն անցնելէն եաքը նորէն ձեացընել տուաւ քերթողը. բայց դարձեալ առջի անքաղդութեան հանդիպեցաւ : Սակայն երբոր երրորդ անգամ մըն ալ աւելի յղկելով հանդիսացընել պիտի տար, առաջ մանաւանդ աղերս ըրաւ ժողովրդեան որ քիչ մը համբերութիւն ունենան. առջի տեսարաններու մէջ տաղտկալի սեպուած կատակերգութիւն մը՝ կրնար եաքը զբօսալի ըլլալ, ինչպէս արդեամբք ալ տեսնուեցաւ :

Զ. Երբոր Պաւղոս Եմիլիոսի պատուոյն այլևայլ հանդէսներ կըլլային, Տերենտիոս ալ իր Եղբօր (Adelphi) ըսուած կատակերգութիւնը շարադրեց : Գրեթէ նոյն նիւթը չատ աւելի Ճարտարութեամբ և աշխուժով չինեց Մոլիէռ իր Վարժարան արուց կատակերգութեանը մէջ :

Տերենտիոսի փերուէնտիանց մոպենագրական ոճը. — Քերթողութեան հմուտ արդի բանասէրք այլևայլ կարծիք ունեցեր են Տերենտեայ կատակերգութեանցը վրայ. վասն զի ոմանք գովութեամբ ինչուան երկինքը կը բարձրացընեն թէ գինքը և թէ իր երկասիրութիւնքը. ոմանք ալ չափէն աւելի կը նուաստացընեն : Բայց հնութեան երկու անուանի մարդիկ, Կիկերոն և Ցուլիոս Կեսար, մեծ հանդէսմբ խօսելով Տերենտեայ վրայ, անոր գովութեան նժարքը կը ծանրացընեն. “ Դու

Թէպէտև ուրիշն ալ խօսք առեր էր: Պամփիլեայ հայրը առ բանս խմանալով ուզեց որ իր որդւոյն ամուսնական սէրը փորձէ. ուստի անանկ ձևացուց թէ հարսանեաց պատրաստութիւն կը տեսնէ: Պամփիլոս ալ խորամանկ մարդու մը թեղադրութեամբը՝ կատարեալ հնազանդութիւն կը ձևացընէր իր հօրը հրամանաց: Բայց առջի տարփածուին հայրը Գրիմէս՝ կը հրաժարի իր աղջիկը Պամփիլեայ տալէն՝ երբոր անոր նենգաւոր բարքը կը տեսնէ: Մենանդրի Անդրիոյ և Պերինթիա ըսուած կատակերգութեանց հետևողութեամբը շինեց ասիկայ Տերենտիոս:

Բ. Անյնապատիժ (Heautontimorumenus). — Տերենտեայ երկրորդ կատակերգութիւնն է ասիկայ: Մենեդեմոս ծերունին իր կլինիաս որդին անոր տարփածուէն կը բաժնէ. կլինիաս ալ կերթայ ասիացւոց Թագաւորին անձնակամ զինուոր գրուելու: Հայրը առ բանին վրայ առատիկ վշտանալով՝ իր գեղի տունը կը քաշուի, և հոն ինքզինքը խիստ աշխատութեանց կու տայ: Ան միջոցին կլինիաս նորէն Աթէնք կը գառնայ, ու իր բարեկամին միջնորդութեամբն՝ առանց հօրը իմացընելու իրեն սիրելի Ընտիոպէ աղջիկը կառնէ:

Գ. Անձնապատիժ կատակերգութեան չարաչարութիւնն է (Phormio) փորձոն ըսուածը, զոր Հռոմռւելեայ հատատուած հրապարակական խաղերուն առեն հանդիսացընել տուաւ: Առջի հետևողութեամբը չարադրեց Մոլիէռ իր Նենգոն Ինդ Սկապինեայ ըսուած երկասիրութիւնը:

Դ. Նէրսինի (Eunuchus) կոչուած կատակերգութիւնն ալ նոյն տարին և նոյն գուսանաց ձեռքով հանդիսացուց Տերենտիոս՝ կիբեբելեայ տօնից ժամանակ: Այնչափ հաճոյ անցաւ ժողովրդեան առ կատակերգութիւնը, որ մի և նոյն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:22 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

օրուան մէջ երկու անգամ հանդիսացընել տուին :

Ե. Հեքիրա (Hecyra), որ աւելի տաղերգութիւն (drame) մըն է, և կամ ինչպէս Ըլէկել կըսէ, տնական տեսարան մը, բայց մէջը աշխոյժ և քերթողութեան կրակ կը պակսի. անոր համար ժողովրդեան ան ատեհանի ձանձրալի նիւթ մը եղած որ առջի անգամներուն թողուցին թատրը, ու գնացին չուանի վրայ խաղցող ճարտարի մը վարպետութեանց հանդիսատես ըլլալու : Աւելի անցնելէն եաքը նորէն ձեռացընել տուաւ քերթողը. բայց դարձեալ առջի անքաղդութեան հանդիպեցաւ : Սակայն երբոր երրորդ անգամ մըն ալ աւելի յղկելով հանդիսացընել պիտի տար, առաջ մանաւանդ աղերս ըրաւ ժողովրդեան որ քիչ մը համբերութիւն ունենան. առջի տեսարաններու մէջ տաղտկալի տեսուած կատակերգութիւն մը՝ կրնար եաքը զբօսալի ըլլալ, ինչպէս արդեամբք ալ տեսնուեցաւ :

Զ. Երբոր Պաւղոս Եմիլիոսի պատուոյն այլևայլ հանդէսներ կըլլային, Տերենտիոս ալ իր Եղբարք (Adelphi) ըսուած կատակերգութիւնը շարադրեց : Գրեթէ նոյն նիւթը չատ աւելի ճարտարութեամբ և աշխուժով չինեց Մոլիէռ իր Վարժարան արուն կատակերգութեանը մէջ :

Տերենտիոսի փերլուկեան տոպենագրական աճը. — Քերթողութեան հմուտ արդի բանասէրք այլևայլ կարծիք ունեցեր են Տերենտեայ կատակերգութեանցը վրայ. վասն զի ոմանք գովութեամբ չինչուան երկինքը կը բարձրացընեն թէ զինքը և թէ իր երկասիրութիւնքը. ոմանք ալ չափէն աւելի կը նուազացընեն : Բայց հնութեան երկու անուանի մարդիկ, Կիկերոն և Յուլիոս Կեսար, մեծ եռանդեամբ խօսելով Տերենտեայ վրայ, անոր գովութեան նժարքը կը ծանրացընեն. “ Դու

թէպէտև ուրիշն ալ խօսք առեր էր: Պամփիլեայ հայրը առ բանս խմանալով ուզեց որ իր որդւոյն ամուսնական սէրը փորձէ. ուստի անանկ ձևացուց թէ հարստանեաց պատրաստուելն կը տեսնէ: Պամփիլոս ալ խորամանկ մարդու մը թելադրութեամբը՝ կատարեալ հնազանդութիւն կը ձևացընէր իր հօրը հրամանաց: Բայց առջի տարփածուին հայրը Դրիմէս՝ կը հրաժարի իր աղջիկը Պամփիլեայ տալէն՝ երբոր անոր նենգաւոր բարքը կը տեսնէ: Մենանդրի Անդրիայի և Պերինթիա ըսուած կատակերգութեանց հետևողութեամբը չինեց ասիկայ Տերենտիոս:

Բ. Անյնապատիժ (Heautontimorumenus). — Տերենտեայ երկրորդ կատակերգութիւնն է ասիկայ: Մենեդեմոս Ծերունին իր Կլինիաս որդին անոր տարփածուէն կը բաժնէ. Կլինիաս ալ կերթայ ասիացւոց Թագաւորին անձնակամ զինուոր գրուելու: Հայրը առ բանիս վրայ առտիկ վշտանալով՝ իր գեղի տունը կը քաշուի, և հոն ինքզինքը խիստ աշխատութեանց կու տայ: Ան միջոցին Կլինիաս նորէն Ազինք կը գառնայ, ու իր բարեկամին միջնորդութեամբն՝ առանց հօրը իմացընելու իրեն սիրելի Ընտիսպէ աղջիկը կառնէ:

Գ. Անձնապատիժ կատակերգութեան շարայարութիւնն է (Phormio) Փորմիոն ըսուածը, զոր Հռոմուլեայ հաստատած հրապարակական խաղերուն առեն հանդիսացընել սուաս: Ասոր հետևողութեամբը շարադրեց Մոլիէռ իր Ննգոնինոֆ Սկապինեայ ըսուած երկասիրութիւնը:

Դ. Ներսինի (Eunuchus) կոչուած կատակերգութիւնն ալ նոյն սարին և նոյն գուսանաց ձեռքով հանգիսացուց Տերենտիոս՝ կիբեբելեայ առնից ժամանակ: Այնչափ հաճոյ անցաւ ժողովրդեան առ կատակերգութիւնը, որ մի և նոյն

Generated on 2015-03-17 06:23 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

օրուան մէջ երկու անգամ հանդիսացընել տուին։

Ե. Հեփանէ (Hecyra), որ աւելի տաղերգուհին (drame) մըն է, և կամ ինչպէս Շլեկել կըսէ, տնական տեսարան մը, բայց մէջը աշխոյժ և քերթողութեան կրակ կը պակսի. անոր համար ժողովրդեան ան ատեճանի ձանձրալի նիւթ մը երևցաւ որ առջի տեսիլներուն թողուցին թատրը, ու գնացին չուանի վրայ խաղցող ճարտարի մը վարպետութեանց հանդիսատես ըլլալու։ Ատեն անցնելէն եաքը նորէն ձեացընել տուաւ քերթողը. բայց դարձեալ առջի անքաղդութեան հանդիպեցաւ։ Սակայն երբոր երրորդ անգամ մըն ալ աւելի յղկելով հանդիսացընել պիտի տար, առաջ մանաւոր ալերտ ըրաւ ժողովրդեան որ քիչ մը համբերութիւն ունենան. առջի տեսարաններու մէջ տաղտկալի սեպուած կատակերգութիւն մը՝ կրնար եաքը զբօսալի ըլլալ, ինչպէս արդեամբք ալ տեսնուեցաւ։

Զ. Երբոր Պաւղոս Եմիլիոսի պատուոյն այլևայլ հանդէսներ կըլլուէին, Տերենտիոս ալ իր Եղբարք (Adelphi) ըսուած կատակերգութիւնը շարադրեց։ Գրեթէ նոյն նիւթը շատ աւելի ճարտարութեամբ և աշխուժով չինեց Մոլիէռ իր Վարժարան արուն կատակերգութեանը մէջ։

Տերենտիոսի ֆերմոլիենց մատենագրական աճը. — Քերթողութեան հմուտ արդի բանասէրք այլևայլ կարծիք ունեցեր են Տերենտեայ կատակերգութեանցը վրայ. վասն զի ոմանք գովութեամբ ինչուան երկինքը կը բարձրացընեն թէ գինքը և թէ իր երկասիրութիւնքը. ոմանք ալ չափէն աւելի կը նուազեցընեն։ Բայց հնութեան երկու ա նուանի մարդիկ, Կիկերոն և Յուլիոս Կեսար, մեծ եռանդեամբ խօսելով Տերենտեայ վրայ, անոր գովութեան նժարքը կը ծանրացընեն. “ Դու

միայն, ով Տերենտիէ, կը գոչէ Կիկերոն, դու միայն կրցար Մենանդրի ձայնը իրեն արժանաւոր լատինական բարբառով հնչեցընել հրատարակախոսմբ ժոլովրդեան մը առջև. քու ամէն խօսքերդ քաղցր են և ճաշատարաքան[1],, : Իակ կեսար անոր արդիւնքը խոստովանելէն ետքը, քանի մը Թերութիւնքն ալ կը նշանակէ. “ Յոյսց եղէկ խորչելոս ըլլայիր՝ անուանդ աւելի ցանկալի պիտի ըլլար[2],, կըսէ : Ոմանք Տերենտեայ դլխաւոր պատկառելի Թերութիւն կը սեպեն որ Յունաց երկոս կատակերգուԹիւններըը մէկի կը վերածէր : Յիրաւի ասիկայ մեծ Թերութիւն մըն է, Թէ որ քերԹողն իր հանճարոմն այնչափ այլակերպուԹիւն մտուցած չըլլար՝ ու հանգոյցքը դիւրուԹեամբ չլուծած : Տիտոս Հաւքաւաւոր գաղղիացին իր խօր-

1 “Դու քաջակիրԹ ընտրող բանի, Տերենտիէ,
Այլաբեզու՝ ի մէջ ածեալ ըզՄենանդրոս,
Ընտիր խօսիւք, որ ինչ համբոյր և ախորժն է,
Դաշըն ձայնիւ տուս նըւագել լատինախօս,,:
ԿԻԿԵՐՈՆ

2 Ո՛ կէս Մենանդր, յիրաւի
Դու դնիս վեհից՝ ի կարգի,
Սիրողդ յըստակ բարբառոյ.
Յանկարծ քո մեղմ քերԹածոյ
Կատակերգակ տաղից ատատ
Թէ յաւելոյր՝ ի նպատատ,
Ցունականին զուգափառ
Փոյթ քաջուԹիւն ճոխանայր,
Եւ ոչ՝ ի յայդըմ մասին
Անկեալ կայիր գու ատորին.
Ընդ այդ եւեթ քոյին բիծ
Եմ, Տերենտի, ՝ի Թախիծ,,:
ԿԵՍԱՐ

Generated on 2015-03-17 06:23 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

հրաշագործութիւնք ի վերայ Տէրենպէյ ըսած ձառին մէջ՝ ան քերթողը Յունաց հին արձաններուն կը նմանցընէ. "Որոնք, կըսէ, թէպէտ քիչ կիրք, քիչ յատկութիւն ու գրեթէ ամենևին շարժմունք չունին, բայց իրենց սեպհական կիրքն է փառաւորութիւն և ճշմարտանմանութիւն. վասն զի քիչ հեղինակ կան, կըսէ, որ ան երկու յատկութիւնքը միացուցած ըլլան իրենց գրուածոցը մէջ, կորով և ախորժակ. քիչ արձանք կան Ըմբշի և Լաոգոնի նման[1]": Իսկ Պոսիւէ Գաղղիոյ անդրանիկ տքաբանական գաստիարակութեանը համար առ Իննովկենտիոս ԺԱ հայրապետը գրած թղթին մէջ կըսէ. "Ըեմ կրնար ըսել թէ որչափ օգտակար և զուարճալի եղաւ իրեն Տէրենաեայ գրոց ընթերցումը: Տեսաւ սիրոյ խաբէութիւնքը, երիտասարդութեան բուռն կրից կորութիւնը և գահավէժ ընթացքը... Իրաւ է որ տեղ տեղ մեզի պժգալի կերևնար իր ոճը. բայց մտածելու առեննիս կամընայինք թէ ինչպէս մեր ժամանակաց թատերական քերթողք՝ շատ աւելի անարժան ոճ մը բռնած են զուարճացընելու քան զԱեթանոս մտեննագիրը:

Տէրենթէյ ժամանակիւ ուրիշ հեղինակ մը քերթողք. — Տերենտեայ ժամանակը հռովմէական թատերգութեան ոսկեդարն եղաւ, թէպէտև առանց անուանի կատակերգակ քերթողներ ունենալու: Ան առեն սկսան գրուիլ սկզբնագիր կամ պապմաճանաւոր ըսուած (comedia togata) կատակերգութիւնք: Ա յսպիսի քերթողք կը յիշատակուին Լիկինիոս, Ատիլիոս, Տուրպիլիոս, Տրաբէա, Լուկիոս, Ափրանիոս, Ատտա, Տիտինիոս և այլք:

1 Հնութեան ջուխտ առանդաձ անպատկառ ոչխարները են, որոնք վարիկանեան նահապարանին ճոխութիւնն ու փառքը կաթելընեն:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:23 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Հին մատենագիրք այսպիսեաց երկասիրութիւնեցը վըսյ խիստ անտարբերութեամբ կը խօսին, կըսե Գուլիելմոս Շլեգել. որով կրնանք իմանալ անոնց ինչ աստիճանի յարգ ունենալը։

ԳԼՈՒԽ Ը.

ԼՈՒԿԻԼԻՈՍ

Լ-ԿԼԻՈՒ ՎԱՐՔԸ. — Լ-ԿԼԻՈՒ ԳՐՈՒԱԾՔԸՐԸ. — ՈՐՈՓՈՒ Ե Լ-ԿԼԻՈՒ։

Լ-ԿԼԻՈՒ ՎԱՐՔԸ. — Հռովմայեցւոց բանաստեղծութիւնն ինչուան ասոնեն պարզ նմանութիւն մը կրնար սեպուիլ յունական քերթութեան։ Ողբերգակ և կատակերգակ քերթողք ուրիշ բան չէին ըրած, ինչպես տեսանք, բայց եթէ յոյն բանաստեղծից նայնպիսի գրուածքն՝ի լատին փոխել։ Սակայն ասոնեն անցնելով ոսկեան ամընչնալ, և վախնալ որ չըլլայ թէ գերի սեպուին ան ազգին՝ զոր իրենց գինուքը նուաճեր էին։ Գայիոս Լուկիլիոս հռովմայեցի ասպետը, որ Նումանտիոյ պատերազմաց մէջ կրտսերոյն Սկիպիոնի նիզակակից էր, լատին մատենագրութիւնը ճոխացընել սկսաւ վեցչափ ոտքով շարադրած երգիծական քերթուածքը, որ ամենևին անծանօթ էր Յունաց։

Ն՛ը կոչուած Լատինն Սուէսսա Աւրունկա քաղաքը ծնած էր Գայիոս Լուկիլիոս, Ք.ըիստոսէ 148 տարի առաջ, հարուստ և ազնիւ տոհմէ։ Տասնըչորս տարուան էր երբոր Սկիպիոն Եմիլիանոսի հետ Նումանտիա քաղաքը պաշարելու գնաց. և

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:23 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

իր քաջութեամբը և պատերազմասէր ոգւովը շատ հաճոյ եղաւ Ակիլլեոսի և Լէլիոսի: Տէրութեան պաշտամանց մէջ ալ մտնելով՝ չափէ դուրս հաւատութիւն դիզեց. բայց եռքերը հիւանդութիւն մը ունենալով երբոր օդափոխութեան համար ուզեց Նէապօլիս անցնիլ՝ հոն մեռաւ:

Լուկիլիոսի գրուածները. — Լուկիլիոսի գլխաւոր գրուածքն իր երգիծաբանութիւններն են, որոնք երասն գլքի մէջ ամփոփուած էին: Մանաւոր յարմարութիւն մը ունէր երգիծաբան քերթութիւն շարադրելու, ինչպէս որ ձեռնարկիս հատած երկայն հատուածներէն ալ կերևնայ: Քնարերգականին ալ յարմարութիւն ունէր Լուկիլիոս. բայց անոնցմէ բան մը ձեռնարկիս հատած չըլլալուն որոշ դատաստան մը չենք կրնար ընել. ինչպէս հինք ալ իրենց լռութեամբը կը ցցընեն թէ այնչափ գովութեանց արժանի բաներ չըլլան:

Լուկիլիոս առջինն եղաւ հռովմայեցի ազնուականաց մէջ ինքզինքը ուսման և գրութեանց տուող. իրմէ առջիններըը կամ ազատագրեալ էին, կամ հասարակ ժողովրդեան վերաբերող անձինք և կամ օտարականք: Ա պարագան բաւական պարծանք է Լուկիլիոսի համար:

Որոփոս և Լուկիլիոս. — Որատիոս՝ ուրիշ անուանի երգիծաբան քերթող մը՝ ասանկ դատաստան կընէ Լուկիլեայ վրան. "Եւպոլիս, Կրատինոս, Արիստոփան և ուրիշ հին կատակերգութեան նախահարք՝ մանաւոր բնաւորութիւն (caractère) մը նկարագրելու գժուարութիւն չէին քաշեր. ինչպէս գող կամ չար և կամ անամօթ մարդ մը: Յամենայնի իրենց նման է նաև Լուկիլիոս: Ծաղր ընող, չարաչեր բարքով, և ոտանաւոր շարադրելու դիւրութիւն մը ունէր: Հոս է իր գլխաւոր պակասութիւնը.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:24 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

վան զի կըսեն Թէ մէկ ժամու մէջ երկու հա-
րիւր տող ոտանաւոր կը շարադրէր , միտքը դնե-
լով Թէ աղէկ բան մըն է ըրածը : Պզտոր հեղեղ
մը կը նմանի՝ որուն մէջէն ալնիւը և հարկաւորը
գտնելը գժուարին բան է : Շատախօս մարդ մը ,
և շատ բան գրելու մոլեալ . բայց վարպետուԹիւնն
աղէկ գրելուն վրայ է . իսկ շաղակրատուԹիւնն
անօգուտ ,, : Ասանկ կը խօսէր Որատիոս ան մար-
գուն վրայ՝ որ ժողովրդեան համարմանն արժանի
ըլլալու պատիւն ունեցեր էր . ուստի և զայրացան
զինքն այսպէս գատապարտելուն համար : Որատիոս
սոխակուեցաւ ինքզինքն արդարացընել , և կամ ա-
ւելի լաւ ըսենք , գրուածքը բացատրել և միտքը
հասկըցընել մանաւանդ երգիծաբանուԹեամբ մը ,
որուն մէջ կը խոստովանէր Թէ “ Լուկիլիոս աշ-
խուժի և հանճարոյ տէր մարդ է . . . բայց Թէ որ
բաղդը զինքը մեր օրերն աշխարհք բերած ըլլար ,
իր քերԹուԹիւններէն շատ բան դուրս պիտի
ձգէր ,, : Սակայն Կուինտիլիանոս , որ Թէպէտ
հին մատենագրաց ոճին գերազանցուԹեանը
չկրցաւ հասնիլ , այլ անոնց յարգը լաւ ճանչցաւ ,
հակառակ գատաստան կընէ . “ երգիծաբանու-
Թիւնը , կըսէ , բոլորովին մեզի սեպհական քեր-
ԹուԹիւն է , և զոր գովաբեթեամբ նախ Լուկիլիոս
գործածեց : Իրեն ոճին վրայ շատ զարմացողներ
ունի Լուկիլիոս , որոնք զինքը գերազանց կը սե-
պեն քան զայլ ամենայն մատենագիրս : Ես ա-
ռանց իրենց կարծեացը բոլորովին հետևելու , Ո-
րատեայ ալ չեմ կրնար ձայնակից ըլլալ , անոր
ըրած գատաստանին չափէ դուրս խստութիւնը
տեսնելով ,, : — “ Իսկ մենք չենք կրնար ոչ մէ-
կուն և ոչ մէկալին իրաւունք տալ , կըսէ Թիւռա-
պոսքի . որովհետև իր երգիծաբանուԹեանցն եր-
ասուն գլքերուն՝ հազիւ քանի մը հատուածքը ձե-
ռուընիս հասած են ,, :

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:33 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԼՈՒԽ Թ.

ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ, ԿԱՏՈՆԷՆ ԻՆՁՈՒԱՆ ԿԵՍԱՐ

Կապանեան գարուն պապմագրաց յաջողութիւնը. — Կալպուռնիոս Պիսոն. — Գ. Փաննիոս և Գ. Սեմպրոնիոս. — Պ. Սեմպրոնիոս Ասելլիոս. — Սիղլայի ժամանակակից պապմագիրք։

Կապանեան գարուն պապմագրաց յաջողութիւնը. — *Պատմութիւնը կատոն այնպիսի բարձրութեան մը հասուցեր էր, որ իրմէն ետքը շատ տուեն չկրցաւ դիմանալ։ Հռովմէական հին մատենագրական պատմութեանը մէջ իրեն Ծագումն գիրքը՝ միակ և գլխաւոր արգասիք եղաւ պատմութեան։ Իրաւ է որ կատոնէն ինչուան կեսար այլևայլ պատմագիրք երևցան, որոնցմէ ոմանք բաւական կարգաբանութիւն և ոճ ունէին, բայց անոնցմէ մէկը չեղաւ որ պատմութեան գեղեցիկ անուանը արժանաւոր յիշատակարան մը թողնէ։ Վասն զի անոնցմէ շատը Տարեգրութիւն (Annales) շարադրողք էին, իրենցմէ քիչ շատ հաւատարիմ ոճով պատմութեան նիւթեր աւանդողք, բայց առանց մտանաւոր ուշի և աշխուժի մը։ Անոնց մէջ գլխաւորներէն մէկը կը սեպուի*

Լ. Կալպուռնիոս Պիսոն. — *Անոր համար կըսեն թէ հռովմէական պատմութիւն կամ տարեգրութիւն մը շարադրած էր յեօթին գիրս, բայց չոր ու ցամաք ոճով մը։ Պլուտարքոս տեղ տեղ աստր պատմութիւններէն քանի մը պարագայ իր գրոցը մէջ կաւանդէ, ինչպէս նաև հետևեալ դէպքը.*

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:33 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

“ Հռոմուլոս սեղանի մը հրաւիրուելով քիչ դի-
նի խմեց. որովհետև միտքը դրած էր երկրորդ օրը
հարկաւոր գործ մը տեսնել: Բազմականքը դար-
ձան ըսին իրեն թէ գինին շատ պիտի ուժըննար
թէ որ ամէնքը քեզի պէս ընէին: Պատասխանեց
Հռոմուլոս. մանաւանդ թէ պիտի թանկըննար,
թէ որ ամէն մարդ իր ուզածին չափ կարենար
խմել. որովհետև ես սրտիս ուզածին չափ խմեցի,,:

Գ. Փաննիոս և Գ. Սէմպրոնիոս. – Ասոնք ալ Պի-
սոնի պէս հռովմէական պատմութիւն շարադրե-
ցին, և իրենց գրուածքն ինչուան կեսարու ա-
տեն յարգի էին. ինքն իսկ Մարկոս Բրուտոս փան-
նիոսի պատմագրութեան համառօտութիւնը շի-
ներ էր: Ա՛ս երկուքին գրուածքներէն ամենևին
բան մը ձեռնըննիս հասած չէ. բայց կըսեն թէ Պի-
սոնեայ ոճով եղած ըլլան ասոնց երկասիրութիւն-
ալ: — Աւելի յաջողութիւն և հանճար ունեցաւ
Լ. Լիւիոս Պատիպատրոս, որուն գրքերէն կերև-
նայ թէ շատ բան քաղեր է Տիտոս Լիւիոս:

Պ. Սէմպրոնիոս Ասելլիոս. – Նոյնանպիսի պա-
տերազմին ժամանակ Սկիպիոն Եմիլիանոսի զօրա-
վարութեան ձեռքին տակ զինուոր մը կար, որ
նոյն հռչակաւոր պատերազմին պատմութիւնը
շարադրեց. ասիկայ էր Սեմպրոնիոս Ասելլիոս,
որուն գրուածքներէն քիչ մը բան մեր ձեռքը հա-
սուց Աւլոս Գելլիոս: Անոնց մէջ կիմացուի թէ
Սեմպրոնիոս ըմբռներ էր թէ ինչ տարբերութիւն
կայ պատմութեան և տարեգրութեան մէջ, և թէ
որչափ մեծ է առջինին աղդեցութիւնը լսողաց
սրտին և մտաց վրայ. ուր տակ տարեգրութիւնն
ուրիշ արդիւնք չունի, բայց եթէ ձարտարագու-
նից նիւթ մատակարարել պատմութիւն շարա-
դրելու: Ցոյնք իրենց անուանի պատմագիրքն ու-
նեցանէին եռքն ատացան տարեգրութիւն շա-

Generated on 2015-03-17 06:33 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

բադրոնները. հռովմէական դպրութեանց պատմութեանը մէջ անոր հակառակը կը տեսնենք:

Ա տեսներս կինան երկու անուանի հռովմայեցիք ալ Մ. Եմիլիոս Սկաւրոս և Հռուտիլիոս Հռուփոս, որոնց պատմութիւնքն ինչուան Անտոնինեանց ժամանակ չարգի էր:

Սէղայի ժամանակին պատմագիր. — Սիղղա, ան անուանի հռովմայեցին, իր բազմարկածեան կենաց և պատերազմաց Յիշատակարանը գրեր էր: Իրեն արուեստանցը հետևող և նախանձորդ ղօրավարք՝ աս բանիս մէջ ալ Սիղղայի հետևեցան, ինչպես Լուտատիոս Կատուլոս, կիմբրացւոց յաղթողը, որուն երկասիրութեանցը համար կիկերոն կըսէ թէ քաղցրութիւնն ունէին: Լ. Կուռնելիոս Սիսեննա, Մարիոսի և Սիղղայի քաղաքական պատերազմաց պատմութիւնը շարադրեց, և որուն շարունակութիւնն ըրաւ Սալուստիոս:

Ժամանակին գլխաւոր մատենագիրքը ատոնք են: Սակայն իրենցմէ զատ ոմանք ալ կը յիշատակուին՝ որոնց կամ անունը միայն ճնացած է և կամ գրուածոց մէկ մասը, ինչպես Կլաւդիոս Կուատրիկարիոս, Վալերիոս Անտիաս, Լիկինիոս Մագեր, Ելիոս Տուբերոս, և այլք:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:34 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԼՈՒԽ Ժ.

ԿԱՏՈՆԷՆ ԵՏՔԸ ՃԱՐՏԱՐԽՕՍՈՒԹԻՒՆ

ԿԻՒԵՐՈՆԻ ԲՐՈՒՏՈՍ ՓՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ. — ՍԵՐՈՒԽՈՍ ՍՈՒԼՊԻՒԻՈՍ ԳԱԼԲԱ. — ԼԵԼԻՈՍ ԵՒ ՍԻՊԻՈՆ ԵՄԻԼԻԱՆՈՍ. — ԼԵԼԻՈՍԻ ՃԱՌԵՐԸ. — ՍԻՊԻՈՆԻ ՃԱՌԵՐԸ. — ԼԵՊԻԴՈՍ ՊՈՐՒԻՆԱ. — ԳՐԱՒԻԱՆՈՍ. — ԳՐԱՒԻԱՆՈՅ ՃԱՐՊԱՐԱԽՕՍՈՍՈՒԹԻՒՆԸ. — ՏԻԲԵՐԻՈՍԻ ՃԱՌԵՐԸ։

ԿԻՒԵՐՈՆԻ ԲՐՈՒՏՈՍ ՓՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ. — *Կիկերոն՝ զրուցատրութեան* (dialogue) *ձեւով Ճարտարախօսութեան պատմութիւն մը շարադրած է, որ Բրուտոս կամ Յաղագս անուանի Ճարպարախօսաց կը սուի։ Մենք ալ սա համառօտութեանս մէջ ընդհանրապէս իրեն կը հետեւինք. ընդհանրապէս ըսինք, որովհետեւ հռովմայեցի անուանի Ճարտարախօսը չենք գիտեր ինչ դիտմամբ տեղ հռչակաւոր մարդկանց վրայ ամենաքիչ յիշատակութիւն ըրեր է. երբեմն ալ աննշան հռետորաց խումբ մը ներս խօթեր։*

Կատոնէն ետքը Ճարտարախօսութեան հանդիսից մէջ ամենէն աւելի բարգաւաճանք ունեցողը քաղաքականն եղաւ։ Արդէն ինքն իսկ Կատոն իր զօրաւոր ձայնը լսեցուցեր էր դատաստանարանաց մէջ։ Իրեն արժանաւոր հետեւողքը պակաս չեղան. որոնք ոչ միայն քաղաքական՝ հապա նաեւ ատենական Ճարտարախօսութիւնը ծաղկեցուցին։

ՍԵՐՈՒԽՈՍ ՍՈՒԼՊԻՒԻՈՍ ԳԱԼԲԱ. — *Կատոնի ոխերիմ թշնամեաց մէջ վերջինը Սերուխոս Սուլպիկիոս Գալբա՝ անուանի Ճարտարախօս էր. սա*

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:34 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

զանգաւոր մարդ մը, և իր հռչակաւոր ախոյենին դէմ կենալու ուժ ունեցող: Բայց իրեն գաղը խեղճ վիճակի մէջ էր, և ահաւոր ծերունւոյն ամբաստանութիւնքը ցրելու բաւական պատճառներ չունէր: Ուրիշ հնարք մը մտածեց հռոմայեցւոց սիրտը շահելու համար: Երկու զաւակ և մէկ թոռ մը ունէր հօրմէն որբ մնացած. հետեւաբար զանոնք, ու գաղատանի տեղը բերաւ. համբուրեց զնոսին արտասուօք, և իր ողբալի վիճակին արժանաւոր խօսքերով սկսաւ հեռաւորին խօսիլ: Ժողովրդեան սիրտը առաջ չգնաց զինքը պատժելու. ներեցին իրեն, և զԿատոն ալ հաշտութեան յորդորեցին: Գալբա իրեք ճառ գրած էր, որոնցմէ և ոչ իրեք հարազատ խօսք մնացած է. բայց Կիկերոն կըսէ թէ Յունաց ճարտասանական արուեստը Հռոմայ մէջ առջի մտցընողը ինքն եղաւ. ինքն առաջ գործածեց ընդլայնման, արտաղօթութեան ձևերը, հատարակ ոեղինքն, և այլն. սակայն ոճը ցամաք էր: Ճարտասանի մը համար ցամաք և անհաճոյ ոճ ունենալը՝ իրեն վհատանին չհասնիլ ըսել է:

Լէլիոս և Սկիպիոն Եմիլիանոս. — Ա երկու սերտ բարեկամ անձինքը՝ նախնիք ոչ երբէք իրարմէ զատ կը յիշատակեն: Երկուքն ալ անուանի ճարտասանախօսք էին, բայց իրենց բնաւորութեան տարբերութիւնը՝ ճարտասանութեան ոճին մէջ ալ մեծ խորութիւն կը դնէր: Սկիպիոնի ճառերն աւելի ազդու և կրաշարժ էին. իսկ Լէլիոսինները աւելի հմտութեամբ և ախորժելի եղանակաւ գրուած: Պանեթիոս անուանի իմաստասէր և մեծ գրագէտն ասոնց ուսուցիչ եղաւ. իրմէ առաջ Դիոգինէս ստոյիկեանը՝ Զենոնի վարդապետութիւնը սորվեցուց իրենց:

Լէլիոսի ճառերը. — Լէլիոսն անուամբը յիշատա-

Generated on 2015-03-17 06:34 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

կուած ճառերուն քանի մը հատուածներըը կան՝ մաքսաւորաց կամ մաքսատանց վերաբերեալ, որոնք կէս աստեղական և կէս քաղաքական ճառեր կը սեպուին, ինչպէս Կիկերոնի քանի մը աստեղախօսութիւնքն, և մանաւորապէս ընդդէմ Վերրէսի գլուածները: Սկիպիոնի մեռնելէն ետքն երկու հոգի իրեն նմանիլն ըրին, Փաբիոս Եմիլիանոս իր եղբայրն ու Տուբերոս եղբօրորդին. բայց կըսէին թէ երկուքին ճառերն ալ Լելիոսի երկասիրութիւնքն էին:

Սկիպիոնի ճառերը. — Սկիպիոնի ճառերէն շատ աւելի հատուածք ձեռնունիս հասած են. Աւլոս Գելլէոս, Մակրոբիոս և ուրիշներն աւանդած են Կալքեդոնի կործանող անուանի զօրավարին խօսքերը: Սկիպիոնի ոճը խիստ է և զօրաւոր, հրամանատար եղող մարդու մը բերնին արժանի: — Տիբուրտինոս Ազելլոս անունով մէկն՝ իրեն դէմ ելաւ, ու զինքը պարտաւոր կը ջանար ցցընել: Սկիպիոն առանց վախնալու՝ ինքզինքն արդարացուց, ու ամբաստանողը յանցաւոր երեւցաւ: Սուլպիկիոս Գալլոսի և Գրակքոսի ազգարակային օրինաց դէմ գրած ճառերուն մէջն ալ թէ իր ճարտարախօսութիւնն և թէ անպաճոյճ կեանքը կերեւնայ. կը նախատէ զհռովմայեցիս իրենց կնամարդի բարուցը համար, վար կը զարնէ անզեղծմունքնեն՝ որոնք կամաց կամաց սկսեր էին մտնել ժողովրդեան մէջ:

Լէպիդոս Պրիննա. — Ասոր անունը յիշատակել նիա միայն անոր համար է՝ որ Կիկերոն իր Ջրուցատրութեանը մէջ կը գովէ, և կը զուրցէ թէ մեծ ճարտարախօսի համբաւ ունէր. և թէ ինքն եղած ըլլայ յունական լեզուի քաղցրութենէ ճաշակը հռովմէական ճարտարախօսութենէ մէջ մտցընողը:

Գրախէանք. — Հռովմայեցւոց պատմութենէն

Generated on 2015-03-17 06:34 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

գիտենք ասանկ անուանի մարդկանց վարքը, որոնք հասարակաց բարւոյն համար զոհ եղան: Ընչաքաղց և ժողովրդեան աղէտիցը վայ անտարբեր աչքով նայող հռովմայեցիք, հայրենասէր մարդկանց իրաւացի փափաքը շարժեցին Ագարակային ըսուած օրէնքը հաստատելու. օրէնք մը՝ որ օտարին ընչիցը յափշտակութիւն չէր, այլ միայն ուրիշի սեպհական ինչքը նորին իրենց բնիկ տեարցը դարձընել: Ա օրինաց գլխաւոր պաշտպանը Գըրակքեանք եղան, ժողովրդեան և հայրենեաց վայ սէր ունեցող մարդիկ. որոնք յայտնապէս կը տեսնէին թէ ասանկով հռոմ կործանման վտանգի մէջ է. և փորձը՝ իրենց կարծեաց ատուգութիւնը ցցուց: Մենք պատմութեան թողնելով Գրակքեանց ճշմարիտ արդիւնքը գուրս ցառքեցընելու պարտքը, քննենք զիրենք իբրև լոկ ճարտարախօսք:

Սկիպիոն առաջին ափրիկեցւոյն գուսաղը կուտնելիա՝ հռովմէական պատմութեանց մէջ նշանաւոր Գրակքոսի կինն էր. որ ծաղիկ հասակին մէջ զինքը կորսընցընելով, անկէց ունեցած երկու աղու որդւովք կը մխիթարուէր, որոնց մէկը Տիբերիոս և միւսը Գայիոս կը կոչուէին: Կուտնելիա զիրենք կը քաջալերէր, կը յորդորէր որ հայրենեաց համար աշխատին, և իրենց նախնեացն արժանաւոր երևնան: Երկու եղբարքն ալ հռոմայ իրաւունքը պաշտպանելու համար արիւննին թափեցին. և անոնց մահը տեսաւ արիասիրտ և իր բնութենէն վեր սիրտ ունեցող մայրերնին. "Քաջութեամբ ու վեհանձնութեամբ համբերեց իր թշուառութեանը, կըսէ Պլուտարքոս. և երբոր կը խօսէին անոնց մեռած տեղուանքը չինուած մահարձաններուն վրայ, պատասխան կուտար կուտնելիա. Անոնք իրենց արժանի գերեզման-

Generated on 2015-03-17 06:34 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

նեւրն ունին : Որդւոցը մահուընէն եւքը գեղի տուն մը քաշուեցաւ . և իր քովը շատ ցոյներ և խմաստուն մարդիկ ժողվեց : Թագաւորը ալ իրեն ընծաներ կը խրկէին , ու իրմէ խրկուածները մեծապատիւրութեամբ կընդունէին : Ամէն քովէն եկողներն ախորժանօք մտիկ կընէին Սկիպիոնի ափրիկեցւոյն՝ իր հօրը պատմութիւնքը . բայց աւելի զարմանքնին կը յաձախէր , երբոր կը տեսնէին որ առանց ցաւի , առանց աչքէն արցունքի չնիթ մը կաթելու՝ իր որդւոյը գլխէն անցածները և անոնց մահը կը պատմէր ,, : Դիւցազուն որդւոց արժանաւոր մայր :

Գրախեանց ճարտասանութիւնը . — Պլուտարքոս աս երկու հռչակաւոր եղբարց պատմութիւնը կը բերէ՝ “ Տիբերիոս , կըսէ , քաղցր ու ղուարթ նայուածք մը ունէր . գայիոս ընդհակառակն ուժով և վառվռուն : Երբոր հասարակաց առջևը կը խօսէին , առջինը միշտ իր տեղը հանդարտ կը կենար , ու ձեռքը ոչ երբեք կը շարժէր . իսկ Գայիոս հռովմայեցի ճարտարախօսաց մէջ առջինն եղաւ որ բեմին վրայ կը քալէր , ու ձեռուըները պատմուճանէն դուրս կը հանէր ... Գայիոսի ճարտարախօսութիւնն ահաւոր , կրքոտ և սիրտ յափշտակող էր . իսկ Տիբերիոսինը քաղցր ու գութ շարժելու մանաւանդ յարմարութիւն ունեցող ... Ինչպէս լեզունին՝ ասանկ ալ իրենց բնաւորութիւնը շատ կը տարբերէր իրարմէ . Տիբերիոս քաղցր էր ու հանդարտաբարոյ . իսկ Գայիոս զօրաւոր բնութեան տէր մարդ և ահեղ ձայնով , ու խօսելու ատենը շատ անգամ ինքիրմէ դուրս կելլէր կրիցը բռնութենէն : Ան բանիս առջևն առնելու համար՝ Լիկինիոս անունով իր մէկ գերին քովը կը կեցընէր հրատարակախօսութեան ատեն . որն որ ձեռքն երաժշտական գործիք մը

Generated on 2015-03-17 06:35 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

առած՝ անոր ձայնին կընկերէր. և երբոր աեանէր Թէ իր տէրը կրսկսի ձայնը բարձրացընել, ինքը քաղցր ներդաշնակութեամբ մը լորը կը հնչեցընէր. Գայիոս մէկէն ինքիրեն կու գար։ Այսչափ տարբեր էին իրարմէ բնաւորութեամբ ,,։

Կիկերոն գրեթէ բան մը չի զուրցեր Տիբերեայ Գրակքոսի Ճարտասանութեանը վրայ. միայն ա- նոր լաւ կերպ խօսակցութիւն ունենալը կը յիշատակէ և այլևայլ Ճառեր շարադրելը. իսկ զԳայիոս մեծամեծ գովութեամբ կը փառաւորէ. ա- նոր ոՃին ազնուութիւնը, խմաստից վսեմութիւնը և մեծավայելուչ կերպը կը դրուատէ։

Տիբերիոսի Ճառերը. – Երբոր Տիբերիոս Ագարա- կային օրէնքն առաջարկեց, անոր օգտակարու- թիւնը ցցընելու համար հարկ էր որ իր ամէն Ճիգն ու հանձարը թափէ։ Հարուստ ու ստացուածոց տէր մարդիկ՝ բնական էր որ ամէն չանք պիտի ը- նէին ան օրէնքը խափանելու, ուստի սկսան զՏի- բերիոս բամբասել Թէ միտքը խռովութիւն ձգել է, և Թէ հայրենասիրութիւնը բառը պատրուակ մը առած ըլլայ իր փառասիրական խորհուրդքն առաջ տանելու։ Բայց Տիբերիոս Ճարտարիմա- սութեամբը անոնց ամէն ամբաստանութիւնքը կը ցրէր. “ Խաչիոյ մէջ ցրուած վայրենի գա- զաններն ալ, կրսէր, իրենց բոյնը և ապաստանե- լու տեղն ունին. իսկ Խաչիա պաշտպանողք և անոր վրայ արիւններին գնողները՝ ուրիշ ինչք մը չունին՝ բայց 'ի իրենց ընչած օդէն և վայելած լոյ- սէն։ Առանց տան, առանց հաստատուն բնակու- թեան ապիս անդին կը Թափառին իրենց կա- նամբքն և որդւովք։ Կը խաբեն զիրենք զօրապետք՝ երբոր առ խեղՃերը կը յորդորեն և կը խրախու- սեն իրենց վերմացն և տաՃարաց համար պատե- րազմելու. վասն զի այնչափ հռովմայեցւոց մէջ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:35 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ով կայ որ մեկ ընտանի բագին մը և իրեն նախնեացը չիրիմ մը ունենայ : կը պատերազմին ու կը մեռնին միայն ուրիշի չափյլութիւնն և հարստութիւնը պաշտպանելու համար . իշխանք տիեզերաց կը կոչուին՝ մինչդեռ մէկ մը գեաին չունին ,, : Այսպիսի վառվռուն ճարտարիուսութեամբ՝ Ատլոյ ժողովրդոց մեծ մասը իրեն կողմը ձգեց Տիբերիոս . բայց իր մահուամբն ալ չկրցան օգնել անոնց :

Տիբերիոսէն շատ աւելի հզօր ճարտարախօս Գայիոսի իսօսածներէն քիչ և անշան հատուածներ մնացած են հիմա :

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՃԱՐՏԱՐԽՕՍՈՒԹԻՒՆ Ի ԳՐԱԿՈՒԹԱՆՑ ՅԿԻԿԵՐՈՆ

Ճարտարխօսութի՛ւն ՝ի Գրակէեանց ցկիկերոն . — Կրասոսի վարքը . — Կրասոսի ճարտարխօսութիւնը . — Անտոնիոսի վարքը . — Անտոնիոսի ճարտարխօսութիւնը . — Հորտենսիոս և իր դասատրը Հորտենսիա :

Ճարտարխօսութի՛ւն ՝ի Գրակէեանց ցկիկերոն . — Գրակքեանց ժամանակէն մինչև ցկիկերոն շատ անուանի ճարտարախօսք երևցան , զորոնք ինքն իսկ կիկերոն յիշատակութեան արժանաւոր կը համարի , ինչպէս Սկաւրոս՝ զոր առաջ ալ յիշեցինք , Հուտակիլիոս , Կոտտա , Սուլպիկիոս , և այլք . բայց անոնց մէջ ամենէն աւելի նշանաւորքն են Կրասոս , Անտոնիոս և Հորտենսիոս , որոնց վրայ կարժէ որ քիչ մը երկընկէկ խօսինք :

Կրասոսի վարքը . — Լ. Լիկինիոս Կրասոս ծնաւ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:35 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

'ի Հռոմ, Քրիստոսէ 140 կամ 139 տարի առաջ, կառոնի մահուընէն ութ կամ ինն տարի եռքը: Քանըմէկ տարուան հասակին՝ ճարտարախօսական հանդիսից տուաւ ինքզինքը և մեծ անուն հանեց. անանկ ուժգին ոճով մը կարբոնի դէմ խօսեցաւ, որ խեղճին մահապարտութեան վճիռը հանել տուաւ. և կամ ինչպէս այլք կըսեն՝ անոր յօժարութեան մեռնելուն պատճառ եղաւ: Բայց իր աս առջի յաղթանակը շատ ծանր նստաւ կրասոսի. կարբոնի որդին, հօրն աշխուժին և ճարտարախօսութեանը ժառանգ, յաւիտենական և անողոք վրէժխնդրութիւն երդուընցաւ Կրասոսի դէմ. բայց բան չկրցաւ ընել:

Քանուիրեք տարուան էր կրասոս երբոր ծերակուտին առջևը խօսեցաւ Թէ՛ի Նարբոնիա գաղթականութիւն մը հաստատելու է: Հաւանեցան ու առաջարկութեան գործադրութիւնն իրեն յանձնեցին: Անկէց ետքը Աթենքի պաշտամունքը Ասիա անցաւ, ու Մետրոդորոս հռետորէն ճարտարախօսութեան դաս առնելով՛ ի դարձին ալ աւելի կրակով սկսաւ լեզուն բանեցընել: Լիկինիա անունով ազգական մը ունէր, վեստեան կուսանաց կարգէն. ատոր վրայ ամբաստանութիւն մը եղաւ. խեղճն անհրաժեշտ և անգութ մահուընէ մը ազատելու համար կրասոսի դիմեց, ու ակնկալութիւնն ընդունայն չեղաւ:

Բայց կրասոս չկրցաւ նոյնպիսի յաջողութիւն ունենալ կասիոսի իշխանութեանը ժամանակ. ուստի հարկ եղաւ որ լռէ: Երկրորդ տարին երբոր անոր իշխանութեան ժամանակը լրացաւ, կրասոս իր երասնըչորս տարուան հասակին մէջ սերսիլեան օրինաց պաշտպանութիւն ըրաւ, զոր կիկերոն գլուխ գործոց կը համարի: Ատոնցմէ զատ ուրիշ քանի մը առեներախօսութիւնք ալ ըրած է, և միշտ յաղթութեե փառքը ժառանգած:

Generated on 2015-03-17 06:35 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

Կրասոսի ճարտարախօսութիւնը. — Կիկերոն՝ Բրութոս զրուցատրութեան մէջ ասանկ կը խօսի Կրասոսի վրայ. "Չամարձակ կրնամ ըսել թէ Կրասոսէ աւելի կատարեալ քան մը չկրնայր ըլլալ. մեծավայելուչ աշխուժականութիւն մը ունէին իր խօսքերը, և զուարճացուցիչ յատկութիւնք՝ որոնք ճարտարախօսի մը քով կը նստին առանց երբէք՝ ի խեղկատակութիւն փոխուելու: Պարզ և ընտիր ոճով կը խօսէր առանց սեթեւեթի. գաղափարները զարմանալի յստակութիւն մը ունէին, մանաւանդ երբոր քաղաքական իրաւանց կամ արդարութեան վրայ կը խօսէր... Կրասոս առեանը չհատած ամէնքը փափաքանօք իրեն կրսպասէին, և մտադիւրութեամբ անոր խօսքերուն մտիկ կընէին... Ընարժուածքը հանդարտ, ձայնը զօրաւոր էր, քիչ անգամ ոտքը գետին կը զարնէր. բայց սրտին բորբոքը, բարկութեան կամ ցաւոց ատատկութիւնը մեծ-ուժ կուտային իր խօսքերուն. շատ անգամ առանց իշխանական ծանրութիւնը կորսընցընելու՝ ծաղրածութեան զէնքը կը բանեցընէր... Միշտ մեծ ճարտարախօս մը սերտուեցաւ Կրասոս,,:

Անթոնինոսի վերջը. — Հռչակաւոր եռապետին սպասը Մարկոս Անտոնինոս Քրիստոսէ 144 տարի առաջ ծնաւ. և թէպէտ տարիքով Կրասոսէ երէց էր, բայց իր քաղաքական կեանքն անկէ ետքը սկսաւ: Բոլոր կենացը մէջ սա մեծ ճարտարախօսին բարեկամն, անոր աշխատանացն ընկեր և խորհրդակից եղաւ: Ազնուապետական կուսակցութեան ալ մեծ նեցուկ և անկուն սիւեան մըն էր: Հնարքով կամաց կամաց առաջ գալով՝ ինչուան քդեչխ ալ հղաւ իր քառասունըչորս տարուան հասակին մէջ. և մէկ տարիէն ետքը փոխանակ քդեչխի և կիլիկիոյ քաղաքապետ: Բայց

հոն չհասած՝ օդոց խաւուրթենէն ստիպուեցաւ քանի մը ամիս Աթէնք մնալ, ուր հռչակաւոր իմաստասիրաց և հռետորաց դասախօսութիւնքը մտիկ կընէր: Կիլիկիացին գառնալէն եաքն ուզեց համարակալն պաշտօնն ալ ունենալ, և ընտրուեցաւ: Բայց Դուրոնիոս անունով մէկն ասոր ընտրութիւնն անվաւեր սեպելով սկսաւ գէմ կենալ. Անտոնինոս իր իրաւունքը պաշտպանեց, և ընտրութեան օրինաւորութիւնը ցցընելով պաշտօնին մէջ հաստատուեցաւ: Տասը տարիէն եաքը Մարիոս ուզեց աքսորել զԱնտոնինոս. անիկայ երկայն ատեն բարեկամի մը տուն պահուըտեցաւ. բայց վերջապէս Թշնամւոյն ձեռքն կինելով գառն մահուամբ մը մեռաւ:

Անտոնինոսի ճարպիտութիւնը. — Իր ձառերը էր գրեր Անտոնինոս, կամ գրով էր աւանդեր. և ասոր պատճառ ան կը բերէր որ ատեն անցնելէն եաքը կարենայ ուրանալ իր ըսածներըը, եթէ ժամանակին հանգամանքն այնպէս պահանջէ: Անուանի ճարտասանութիւնը շատ անգամ անանկ բաներ պաշտպանելու ձեռք կը զարնէ, որ սովորական մարդ մը կը վախէ միջամուխ ըլլալու. բայց Անտոնինոս միշտ կը ջանար որ իրաւունք ունեցող կողմին պաշտպանութիւնն ընէ. արդարութիւնը յաղթական ցցընելու համար աշխատանքի էր իննայեր: Մանիոս Ակուիլլինոս, հայրենեաց փառացը վրայ աշխատող ու կռուող մարդը՝ յանիրաւի ամբաստանուեցաւ, ու անոր սխեմիմ Թշնամիներէն մէկն ալ Մարիոս էր: Ջատագով կեցաւ իրեն Անտոնինոս. բոլոր ժողովրդեան նեղկայացուց զԱկուիլլինոս. և երբոր անոր Թշնամիքը ձայներնին բարձրացուցած վրէժխնդրութիւն կը պոչէին, "Ես ալ ձեզի ձայնակից եմ, աղաղակեց Անտոնինոս. կը յորդորեմ զձեզ որ աս մարդէն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:36 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

վըէժինիդ խնդրէք ,, ըսաւ՝ ու անոր պատմուճանը պատուելով պատերազմի մէջ հայրենեաց հա- մար առած վէրքերը ցցուց : Մէկէն առելութեան կրակը մարեցաւ : Ինքն իսկ Մարիոս սկսաւ աղ- աչասուել , Ակուիլլինոս ազատեցաւ :

Ընտանիներայ ճարտարիսօսութիւնն ասանկ յաղ- թանակներով կը պայծառանար . ուսոի և իրա- ւամբ կը զարմանայ վրան Կիկերոն : Առանց ա- րուեստակութեան և ընդունայն զարդերու , ու- ժով և ահաւոր էին իր մտածութիւնքը : Թէպէտ գրեթէն կը հրաժարէր , բայց կատանդեն թէ ճար- տարիսօսական արուեստի վրայ ընսիր գիրք մը շա- րադրած ըլլայ . և իրեն է ան նշանաւոր խօսքը զոր կը յիշատակէ Կիկերոն թէ ,, Բազմաթիւ շա- տախօս մարդիկ տեսայ , բայց ոչ երբէք ճարտա- րախօս մը ,, :

Հորթենսիոս . — Առաջ ալ ըսինք թէ ան ժամա- նակին գլխաւոր հռետորներէն մէկը Հորտենսիոս էր : Բայց իրեն ատ փառքը՝ Կիկերոնի երաշխա- ւորութեանը վրայ հիմնած է . ապա թէ ոչ , Հոր- տենսեայ գրուածներէն այնչափ քիչ բան ձե- ռնըկիս հասած է , որ ոյոշ գատաստան մը չենք կրնար ընել իր գրուածոցը վրայ :

Կուինտիոս Հորտենսիոս Որտալոս Քրիստոսէ 115 տարի առաջ ծնած էր , ու 51ին մեռաւ՝ վաթսունըչորս տարուան : Հազիւ տասնուինը տա- րուան էր երբոր առենական հանդիսից տուաւ ինքզինքը , Պրատոսի բգեղխութեանը ժամանակ : Ծերակուտի ժողովին առջև Լիբիոյ գատը պաշտ- պանեց , ու հաճոյ անցաւ ամենուն : Անկէ ետքն ուրիշ ճառեր ալ շարադրելով՝ անուանի հռե- տորայ կարգը սեպուեցաւ . և Անտոնինոսի և Կրա- սոսի մահուընէն ետքը նոյն իսկ իրեն նախան- ձորդքը՝ Հորտենսիոսի գերազանցութիւնն ու ա-

Generated on 2015-03-17 06:36 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ասջնուվիւնը չէին ուրանար: Կիկերոն ասանկ կը խօսի վրան. "Ան ժամանակները երկու հըռչակաւոր հռետորք կային, Կոտտա և Հորտենսիոս. անոնց հանճարը գրգիռ մըն է ինծի զիրենք դերազանցելու: Կոտտա քաղցր ոճ մը ունենալով դիւրութեամբ իր խորհուրդքը կը բացատրէր, ու անոնց՝ իրենց բնական գոյնը կու տար. իսկ Հորտենսիոս իր աշխուժութիւնու կրակովին անհամեմատ ճարտարախօս մըն է: Ասոնք ինծի կերևնայ թէ աւելի պիտի ստիպուիմ Հորտենսեայ հետ կռուելու":

Բդեաշխ էր Հորտենսիոս, երբոր Կիկերոնի ամբաստանած վերրէս հռետորն ուզեց պաշտպանել: Երկու ճարտարախօսքն ինչուան ան աստեն իրարու հետ սերտ բարեկամութիւն ունէին. բայց իրենց կողմնակցաց չահուն համար հարկ եղաւ որ առ ժամանակ մի ան բարեկամութիւնը լուծեն: Կիկերոն՝ վերրէսի դէմ այլևայլ ամբաստանութիւն կընէր երկդիմի խօսքերով. Հորտենսեայ սիրտը նեղացաւ, "Ես հանելուկ չեմ կրնար լուծել" ըսաւ. — "Մանաւանդ թէ սիրնքսը քու քովդ է" պատասխանեց Կիկերոն. որով հետև վերրէս փղոսկրէ ճարտարապետեա սիրնքսմը ընծայ ըրեր էր իր պաշտպանին: Կիկերոն և Հորտենսիոս իրենց ճառերը հրատարակեցին. բայց առջինին վերրէսը անհամեմատ և գլուխ գրուածոց էին: Հորտենսիոս ուզեց նորէն աչքէ անցընել իր ճառերն, և հրատարակութիւնը չթողուց ինչուան կենացը վերջն տարինելը. բայց Կիկերոնի փառքը մուգընել տուաւ ՀորտենսիոսԻ: "Թէ որ ուզենանք քննել, կըսէ Կիկերոն, թէ ինչու համար Հորտենսեայ ճարտարախօսութիւնն աւելի փայլեցաւ իր երիտասարդութեան տարեները քան թէ հասքը՝ պատճառ աս

Generated on 2015-03-17 06:36 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

կը գտնենք որ իր Ճարտարիսօսութիւնն ասիական էր, որ պատանեկութեան կը յարմարի քան թէ ծերութեան... վասն զի իր մտածութիւնքն աւելի զուարճալի և զբօսեցուցիչ էին քան թէ հարկաւոր կամ օգտակար. ոճն ալ ուժով և յարդարուն: Ասպիսի բարեմասնութիւնք՝ ծերացեալ մտքերը չեն կրնար ունենալ, կամ առջի ունեցածնին պահել,,:

Հորաեոսիոս իրեն անարժան ոյդի մը ունէր, որ միայն յիմարութեամբը նշանաւոր եղաւ: Բայց հօրը հռետորական հանճարին ժառանգ եղաւ իր դուստրը կուինտա Հորտենսիա: Անտոնինոսի, Էմիլիոսի և Հոկտաւիոսի եռապետութեան ժամանակ՝ հռովմայեցի սիկնայք իրենց վրայ դրուած չափազանց տուրքերէն նեղացած՝ չկրցան Ճարտարախօս մը գտնել որ իրաւունքնին կարող ըլլայ պաշտպանել ան արհնաւորուս բռնաւորաց առջևը: Միայն Հորտենսիա սիրտ ըլլաւ ասբանին. ու խօսքերն իրենց արդիւնքն ունեցան: Կերևնայ թէ յաղթանակին արժանաւոր Ճառ մըն էր ասիկայ, ինչպես կուինտիլիանոս ալ կը վկայէ. "կը կարդանք, կըսէ, կուինտուս Հորտենսիոս՝ կուինտոսի դստեր Ճառը՝ զոր եռապետաց առջև խօսեցաւ. ու միայն կնոջ երկասիրութիւն ըլլալուն համար չէ որ կը գովենք զանիկայ,,:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:36 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԴԼՈՒԽ ԺԲ.

ՏՈՒԼԼԻՈՍ ԿԻԿԵՐՈՆ

ԿԻՆԵՐՈՆԻ ՎԱՐՔԸ ԵՒ ՈՍՄՈՒՆՔԸ. – ԿԻՆԵՐՈՆԻ ՀԲԱՊԱՐԱԿԱԽՕՍՈՒԹԻՒՆՔԸ. – ԿԻՆԵՐՈՆԻ ԱՌՈՂԻ ՓԱՂԱՓԱԿԱՆ ՃԱՌԵՐԸ. – ԿԱՊԻԼԻՆԵԱՆ ՃԱՌԵՐ. – ԿԻՆԵՐՈՆԻ ՈՐԲԻՉ ՓԱՂԱՓԱԿԱՆ ՀԲԱՊԱՐԱԿԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ. – ՀՈՌԷՈՐԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՔԻ ՎՐԱՅ ՂԱՐԱՁԱԾ ԷՒԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ. – ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԳՐՈՒԱԾՆԵՐԸ. – ԿԻՆԵՐՈՆԻ ՆՂՈՒԵՐԸ. – ՃԱՐՊԱՐԱԽՕՍՈՒԹԻԱՆ ԿՈՐՈՎԸ ԵՒ ՈՒԱԾԸ. – ԿԻՆԵՐՈՆԻ ՄԱՀԸ. – Ո՞Վ Է ԱՌԱՋԻՆ ՃԱՐՊԱՐԱԽՕՍ՝ ԿԻՆԵՐՈ՞Ն ԹԷ ԴԵՄՈՍԹԵՆԷՍ. – ԿԻՆԵՐՈՆԻ ՆՂԱՒԱԿԻՑՔԸ:

ԿԻՆԵՐՈՆԻ ՎԱՐՔԸ ԵՒ ՈՍՄՈՒՆՔԸ. – *Կիկերոնի, հռովմէական Հարեաւրիւսութեան պարծանաց վրայ անկարելի է համառօտ կերպով խօսիլ: Դպրութեան ալառմութեանը մէջ արժան է որ իրեն արժանաւոր տեղը բռնէն անոնք որ մատենագրութիւնն ու բանասիրութիւնը ծաղկեցնելու ջանք ունեցեր են, ինչպէս աշխարհակալք քաղաքական պատմութեանց մէջ հատորներ կը գրաւեն:*

Մարկոս Տուղղիոս Կիկերոն՝ հռովմայեցի Հինութեան 647դ տարին ծնաւ, Քրիստոսէ 167 տարի առաջ՝ Սաննիտեանց Արփինա քաղաքը, հարուստ և ազնիւ տոհմէ: Իրեն ընտանիքը անական իաղաղութեան վայելքն ամէն բանէ աւելի գերազանց սեպելով՝ ոչ երբէք մաքերնէն անցուցեր էին հռոմ գալ, ու քաղաքական պաշտամանց հետամուտ ըլլալ: Կիկերոնի հայրն ու պապը, թէ

Generated on 2015-03-17 06:45 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

իրեն և թէ եղբօրը՝ Կուինտեայ, դատախարակու-
թեան վրայ ամէն ինամք ունեցան. եռքն անոնց
կարգէ դուրս հանձարը տեսնելով մտածեցին որ
կրնան Հռովմայ մէջ աւելի յառաջադիմութիւն
ունենալ. ուստի հայրենին առաւ զիրենք Հռոմ
բերաւ, ու անուանի վարպետներու ինամոցը
յանձնեց: Կիկերոն մեծ չանքով թէ բանասեր-
ծութեան և թէ հռետորութեան ետևէ կըլլայ:
Կ. Մուկիոս Սկեւոլա, Հռովմայեցի անուանի ի-
րաւագէտը, նոյն ուսմանց նախնական սկզբունքը
սկսաւ սորվեցընել իրեն: Այրական պատմու-
ճանն զգեցաւ Կիկերոն, ու կը պատրաստուէր ան
ընթացից մէջ մնալու՝ ուր որ բնութեան յօժա-
րութիւնը կը մղէր զինքը: Բայց նոյն օրերը գըր-
դռուած ընտանի պատերազմէ մը ստիպեցաւ քիչ
մը ատեն իր յօժարութենէն ետ կենալ: Ինքն ալ
զինուոր գրուեցաւ, ու Նոլա քաղքին քով եղած
պատերազմին տեղը գնաց, ուր որ սաստիկ կռիւ
յաղթուեցան: Անկէ վերջն ալ քաղաքական պա-
տերազմունք թէ ատենի և թէ հրապարակական
ճարտարախօսքը լսուելու ստիպեցին. և սա լսու-
թիւնն ինչուան Քրիստոսէ առաջ 81 տարին տևեց:
Անկէ վերջը դուրս եկաւ Կիկերոն ինքզինքը և ճար-
տարախօսութիւնը ցցընելու. ան ատեն քսանըվեց
կամ քսանըեօթը տարեկան էր:

Ժամանակին հանգամանքը մեծապէս նպաստա-
ւոր եղան Կիկերոնի իր հանճարը դուրս ցառքե-
ցընելու համար: Սակայն ինքն ինչուան որ լաւ մը
չհմտացաւ բանասիրական, փիլիսոփայական և ի-
րաւագիտական ուսմանց՝ չհամարձակեցաւ խո-
սել: Քսանըվեց տարուան հասակին՝ հռետորա-
կան արուեստի ամէն գաղտնիքն իմացեր էր. շատ
անուանի հռովմայեցի ճարտարախօսք ճանչցած,
անոնց շատին դատախօսութիւնքը մտիկ ըրած, և

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:46 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Յունաց Ճարտասանեւրուն գրուածքը կարդացեր ու քններ էր, ինչուան Եսքինեայ և Դեմոսթենի ընտիր Ճառերն ի լատին փոխեր։ — Փերթողոթեան մէջ ալ աննշան չեղաւ Կիկերոն. և յոյն բանաստեղծից նմանուելեամբն ի պատիւ Մարիոսի վիպասանական քերթուելիւն մը շարադրեց։

Կիկերոն երբոր Սիղղայի բարկութենէն ազատելու համար ստիպեցաւ Հռոմէն փախչել, Ամէնք գնաց իրեն սիրելի երկիրն ու գրեթէ երկտրդ հայրենիքը։ Հոն անուանի Ճարտարախօսից դասատացութենքը մտիկ ընելով, մէկ օր մըն ալ զիրենք ժողվեց, ու անոնց առջև հրապարակաւ առեներախօսութիւն մը սկսաւ ընել։ Ամէնքն ապշեցան ճնացին, ու չէին գիտեր թէ ինչպէս գովեն զինքը. բայց մէջերնէն Ապողոնիոս անունով Ճարտար մը լուռ և տխուր կեցեր էր։ Կիկերոնի սիրտը կոտրեցաւ՝ անոր անկերպը տեսնելով, և ուզեց պատճառն իմանալ։ Հառաչեց Ապողոնիոս և արտասուօք մը ըսաւ. "Մի կարծեր թէ լռութիւնս նշանակ մը ըլլայ զքեզ արհամարհելու. հայրենեացս վրայ կը մըտածեմ, թէ ինչպէս իրեն փառաց միակ նշխարք՝ Ճարտարախօսութենէ արուեստը դուն քու լեզուովդ յափշտակելով՝ զմեզ ամէն պարծանքէ զուրկ կը ձգես"։

Կիկերոնի հրապարակախօսութիւնը. — Պօղղիոսի Կուինտոսի դատը պաշտպանելու համար հարկ եղաւ որ Կիկերոն՝ Հորտենսեայ իր բարեկամին դէմ ընէ իր առջի հրապարակախօսութիւնը, ինչպէս առաջ ալ յիշատակեցինք. և թէպէտ մեծ հանճարոյ և աշխուժի տէր էր նաև իր հակառակորդը, բայց Կիկերոն յաղթական եղաւ։ Պօղղիոսի մէկ եղբայրը մեռնելով, անոր ունեցածը չունեցածը Նեւիոս անունով մէկը բռնութեամբ յափշտակեր էր. ինդիրն՝ անոր ձեռքէն առնելու

և Պոբլիոսի տալու վրայ էր: Բայց Նեբիոս հարուստ և կարող բարեկամաց տէր մարդ մըն էր. ամէն մեծամեծք՝ ինչուան Մարիոս ու Սիլլա իրեն պաշտպանութիւն կընէին: Կիկերոն չվախցաւ արդարութիւնը պաշտպանելէն, գիտնալով թէ միայն անոր զէնքը զօրաւորագոյն է քան զամէնայն իշխանութիւն: Ճառ մը գրեց իրեն դէմ, որ բազմապատիկ յատկութիւններովը նշանաւոր է իր երկասիրութեանցը մէջ. (Pro P. Quintio): Բայց հետևեալ տարին՝ Սեքստոս Ռոսկիոսի համար խօսածը (Pro Sex. Roscio Amerino), իրաւամբ գլուխ գրուածոց կը սեպուի: Իրաւ է որ աստ մէջ Չորսենսիոս չկար, որ անոր լեզուին ուժէն վախնար Կիկերոն, բայց ժառանգութիւն մը եա առնելու համար ծագած դժուարութիւնն ալ յաղթելը դիւրին բան չէր: Խրիսոգոնոս անունով Սիլլայի ազատագրեալոց մէկն անիրաւութեամբ Ռոսկիոսի ինչքը յափշտակելով՝ խեղճը թշուառութեան և աղէտից մէջ ձգեր էր: Մէկը չէր համարձակեր Ռոսկիոսի դատը պաշտպանել, անոր դատախազին՝ Սիլլայի հետ ունեցած բարեկամութենէն ահաբեկելով: Կիկերոն իր քաջութիւնը, օրէնքը տարեկան նորափթիթ հասակը և Խրիսոգոնոսի հետ վերաբերութիւնը չունենալն առիթ առնելով՝ յանձն առաւ ան դատին պաշտպանութիւնը: Վարպետութեամբ մը զՍիլլա նոյն ճառին մէջ կը գովէ, և այնպէս իշխանապետին սիրտն իրեն ձգելով՝ կըսկսի Խրիսոգոնի թերութիւնքը ցցընել. կը մեծարէ աղնուապետութեան օրէնքները, բայց անոր վրայ կը ցաւի թէ ինչպէս զանկայ պատրուակ կառնեն չաւերն իրենց չարաժիտ խորհուրդքն ու նենգութիւնները առաջ տանելու: Վախճանին հասաւ Կիկերոն. ծերակոյտը թէ անոր սիրտն և թէ լեզուն գովեց:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:46 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

չենք երկընցներ. վասն զի անոնցմէ շատը կորսուած են, ու մնացած երկուքն ալ [1] մեծ մասդրուելեան արժանաւոր բաներ չեն սեպուիր: Բայց 71ին Վերրէսի դատաստանը նոր և փառաւոր նիւթ մը պատրաստեց Կիկերոնի իր հանճարը ցցընելու: Նոյն առեններէն Կիկերոն արդէն համբաւեալ ու փառաւորեալ էր. քանի մը տարի առաջ Սիկիլիոյ համարակալ եղած, ու ան պաշտօնէն ալ առաջ Ասիա և յունաստան ճանապարհորդութիւն ըրած, համբաւաւոր վարժապետներու աշակերտեր, և ժամանակին գլխաւոր իմաստասիրաց և հռետորացը հետ ծանօթութիւն ըրեր էր Աթէնքի և Հռոդոսի մէջ, ուր որ բոլորովին չէր մարած Պղատոնի, Դեմոսթենէսի, Եսքինեայ և անոնց նմանեաց հին աշխոյժները: Սիկիլիացիք որ լաւ ճանչցեր էին իրենց նախկին համարակալին ընտիր բարեմասնութիւնքը, զինքն ընտրեցին իրենց իրաւանցը պաշտպան: Կիկերոն մանաւոր ճառով մը գէմ ելաւ Վերրէսի (Actio prima in C. Verrem), ուսոի ասիպեցաւ կեսիկիլիոս անունով մարդու մը հակառակիլ, որն որ Վերրէսի պաշտպան կենալով կուզէր սիկիլիացիքը մատնել: Հռովմէական հրապարակին մէջ կեսիկիլիոսի գէմ առենաբանութիւն ըրաւ Կիկերոն, Մանիոս Կլաբրիոն նախագահ պրետորին և իրեն գաղտաւորակցայն առջև: Խօսքերուն ուժը, պատճառաբանութեանց ազդուութիւնը՝ մեկէն թէ զկեսիկիլիոս և թէ իրեն գործը պարտաւոր ցըցուցին:

1 Pro Q. Roscio Comœdo. — In Q. Cæcilium divinatio.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:46 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Բայց անով բոլորովին չվափանեցաւ Վերրէսի դատաստանը։ Ուստի Յաղագս արյանաց և Յաղագս պոռնկութեան ըսուած ճառերը չարագրեց Կիկերոն. անոնց մէջ սեղնիաեղն յիշատակած է Վերրէսի անգթութիւնները, և ամէն չանքը բանեցուցած Հռովմայ ժողովուրդն անոր դէմ գրգռելու։ Այ երկու համբաւաւոր երկասիրութիւնքը մնան են վերրեան ճառից, կամ թէ ըսենք՝ ըրբռդ և հինգերդ գրքերը՝ երիրդ գործառնութեան ընդդէմ Վերրեայ (Actionis secundæ in C. Verrem, Liber quartus, Liber quintus). Այ երկրորդ գործառնութեան մէջ ուրիշ իրեք առեներեսութիւնք ալ կը բովանդակուին. Ա. Յաղագս փաղաքանի պրէպորոնեան Վերրեի. Բ. Յաղագս պրէպորոնեան իրոյ ի Սիկիլիա. Գ. Յաղագս յորենոյն պարմատակարգի Հռովմայ գաւառաց։ Բայց այս ճառերուն մէջ միայն առջինէն քիչ մը բան ձեռնընկա հասած է։ Ծերակոյտն իմացաւ Կիկերոնի իրաւունքը, և զՎերրես աքսորեց։

Իրաւ է որ այլևայլ ընտիր հանգամանք ունին Կիկերոնի Յաղագս Մ. փոնթէոյի (P. M. Fontejo), Յաղագս Ա. կէկինայ (Pro A. Cæcina), Յաղագս Ա. կլուենտեայ, (Pro A. Cluentio) ճառերը, բայց Յաղագս Արխիայ բերդի (Pro Archia poeta) ըսուած առեներեսութիւնն՝ ինքն իսկ կատարելութիւնը կրնայ սեպուիլ։ Խնդիրն էր Արքիասայ հռովմէական քաղաքակցութեան պաշտպանութիւնը, զորն որ առաջ տուեր էին իրեն. իսկ Արքիաս անուանի քացի յոյն քերթող մըն էր, ու Կիկերոնի պատանեկութեան առեն իրեն վարժապետութիւն ըրած. Կիկերոն հասուն տարիքին մէջ եա չկրնար զԱրքիաս պաշտպանել էն, ու երախտագիտութեան նշանակը սալ ան ծերունեոյն՝ որուն հետ երբեմն զՀռոմերոս և զԵպիքիրես կը կարդար։ Համառօտ ճառ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:47 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մը գրեց Կիկերոն առ Նիւթիս վրայ, բայց համառօտութեանը մէջ ալ ամենևին պակաս բան չթողուց. ցցուց թէ Արքիաս քաղաքացի է Հռովմայ, և թէ արժան է զինքը հայրենեաց որդի սեպել: Իր կուինտոս եղբօրը դիմաց խօսեցաւ Կիկերոն առ Ճառը, որ ան առեն պրետոր էր. դատաւորք և իրենց նախագահը համոզուեցան, ու անուանի հռետորին հանձարին վրայ աքանչացան. Արքիաս Հռովմայ քաղաքացի մնաց:

Քրիստոսէ 53 տարի առաջ էր՝ երբոր Միլոնի վրայ ամբաստանութիւն եղաւ թէ ինքն սպաննած ըլլայ զԿղաւդիոս: Յիսունըհինգ տարուան էր Կիկերոն երբոր անոր պաշտպանութեան Ճառը խօսեցաւ. բայց Միլոն չկրցաւ արդարանալ՝ անանկ պարագայով մը որ Կիկերոնի համար անհաւատալի կերևնայ: Վճիռը կարելու առեննին գահանիստ եղեր էր Պոմպէոս, և հռովմէական հրապարակին իրեն կուսակից զինուորներով լեցուցած: Ան կարգէ գուրս տեսիլը մեծ ապաւորութիւն ըրաւ Կիկերոնի վրայ. չկրցաւ զուրցել ան խօսքերը զոր պատրաստեր էր՝ի պաշտպանութիւն Միլոնի. տկար ձայնով ու խեղճ լեզուով մը խօսեցաւ, ու չկրցաւ անոր դէմ եղած ամբաստանութիւնքը ցրուել: Ամչնցաւ Կիկերոն իր առնուաստութեանը վրայ. տուն դարձաւ, ու գրի անցուց ինչ որ միտքը գրած էր Միլոնի համար խօսել. ան առեն ձևացաւ իր հրապագիծ Միլոնեանը (Pro T. Annio Milone), որն որ առենական Ճարտարխօսութեան հրաշալիք կը սեպուի արժանապէս: Ախտոս որ ան առեն Միլոն Հռոմէն աքսորուած ու Մասսիլիա հասեր էր. հոն կարդաց իր պաշտպանութեան Ճառերը, և կաւանդեն թէ զուրցած ըլլայ. "Ով Կիկերոն, թէ որ ասանկ առենախօսած ըլլայիր, ես Մասսիլիոյ ազնիւ ձկնները չէի ուտեր":

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:47 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Կիկերոնի ատենի քաղաքական ճառերը. – Կիկերոնի հրապարակախոսութիւնը ժողովրդի մէջ առջի խօսած քաղաքական ճառը ձեռնարկիս հասած չէ, զոր ակկիւացւոց խօսեցաւ, երբոր իր համարակալութեան պաշտօնը լմընցուցած՝ կը պատրաստուէր նոյնն Հռոմ դառնալ (74): Հոն իրեն ժողովրդապետը բարքովը չատերուն հաճոյական կերպ մը ունենալով, ու վերրէսի դատաստանովն ալ անոնց իրաւացի զարմանքը յաճախելով՝ քիչ աւենուան մէջ սպրեաոր ընտրուեցաւ: Բայց Կիկերոն ուրիշ զօրաւորաց փորձովն իմացեր էր թէ ժողովրդեան մը վրայ բոլորովին վստահանալ ըսելն՝ իրեն կործանման գուբը փորել է. ուստի կը ջանար աւելի հաստատուն նեցուկ մը ունենալ, որպէս զի իր թշնամեացը կարենայ դէմ դնել: Ուստի Պոմպէոսի պաշտպան կենալով ամէն ջանքն ըրաւ, որպէս զի անիկայ ըլլայ արևելքի մէջ ամօթով մնացող հռովմէական բանակին զօրապետութիւնը, Միհրդատայ ուժն ու հպարտութիւնը խորտակելու համար: Ա՛ս վախճանաւ չարտգրած է իր Յաղագս Մանիլեան օրինաց (Pro lege Manilia) ըսուած ճառը:

Ատոր մեծ մասը Պոմպէոսի ներքոյ կրնայ սեպուիլ: Հռովմէական զօրաց գլուխ ըլլալու արժանաւոր եղողը, կըսէր Կիկերոն, հարկ է որ կատարեալ զօրապետի մը ամէն յատկութիւնքն ունենայ. զինուորական արուեստ, քաջութիւն, իրեն ձեռքին տակն եղողներուն վրայ ազդեցութիւն, և վերջապէս՝ բաղդ: Եւ կը ջանայ ցցընել թէ ատ բարեմասնութիւնքն ունեցողը Պոմպէոս, և ոչ ոք Պոմպէոս է, կը պատմէ թէ ինչպէս իրեն կամքին հնազանդեցուց քաղաքակիցքը, գաշնակից ազգերը, հռովմէական հատարակապետութեան թշնամիքն, ու ինչուան հովմունքն ու մերկնեղը: Իր ատ զուրցածներն անանկ համոզիչ

Generated on 2015-03-17 06:47 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

Հարտարիասութեամբ մը կապացուցանէ որ տա-
րակուսելու տեղիք չի մնար : Ճառին սկզբնաւո-
րութիւնը՝ հռովմէական բանակին Ասիոյ մէջ ու-
նեցած հանգամանքն է . կը ցցընէ թէ ինչպէս ի-
րենց փառքը յաձախելու համար գնացող գօն-
դերը՝ օր օրուան վրայ ամօթը կաւելցընեն , ու
բարբարոսի մը (Միհրդատայ) չեն կրնար յաղթել :

Մանիլեան օրինաց հրապարակախօսութիւնը՝
թէպետև կիկերոնի ճառերը մէջ ամենէն աւելի
աշխատասիրուածն ու զարդարունն է , բայց ամե-
նէն գեղեցիկը չէ . վասն զի շատ կը գործածէ հռե-
տորական զարդերը :

Անկէ երկու տարի վերջը՝ կիկերոն բդեշխու-
թեան պիտի հասնէր : Իրեն նախանձաւորները ա-
մէն ջանքերնին կը բանեցընէին զինքն ան պա-
տուէն ետ ձգելու . անոնց մէջ նշանաւոր էր Կա-
տիլինա , որն որ կուզէր բդեշխ ըլլալ , ու մոքի
դրած փառասիրական խորհուրդներովը հռով-
մէական հասարակապետութիւնը կործանել : Դի-
տաւորութիւնքը որչափ ալ անծանօթ ըլլային հա-
սարակ ժողովրդեան , կիկերոն ամէն բան տեղին-
տեղն իմացեր էր :

Պատմութենէ գիտենք թէ ինչ կերպով բդեշխ
ընտրուեցաւ կիկերոն : Ծածուկ դաւակցութիւն
մը կը մենքենայուէր , ու անոր հոգին Կատիլինա
կը սեպուէր . չարագուշակ ու անակնուընելի գէպ-
քեր երբեմն երբեմն վախ մէջ կը ձգէին զքաղա-
քացիս : Ամենուն աչքը կիկերոնի վրայ դարձաւ .
“ Ամէնքն ալ վառուեցան , կըսէ Սալուստիոս ,
Մ . Տուլլիոսի կիկերոնին յանձնել բդեշխու-
թիւնը . ինչուան ան ատեն ազնուականացմէ շա-
տերը կը կարծէին թէ բդեշխութիւնը կը կործա-
նէր՝ եթէ նոր մարդու մը ձեռք յանձնէին , թէ-
պետև իր արդեամքը հռչակաւոր եղած ըլլար .

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:47 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

բայց վտանգին առջև՝ նախանձն ու հպարտութիւնը տեղիք տուաւ ,,:

Կիկերոն՝ բդեշխութեան ատենի առջի ճառը՝ Հռուլլոսի ագարակային օրինացը վրայ խօսեցաւ, որն որ նշանաւոր ատենախօսութիւն մը չէ ոչ ոճին և ոչ իմաստիցը կողմանէ: Բայց երբոր Ժողովրդեան առջև նոյն օրինաց դէմ կրկին ճառ մը զուրցեց, ինքն իրեն աւելի արժանաւոր երևցաւ: Ասիկայ՝ Կիկերոնի քաղաքական ճառիցը մէջ ամենէն աւելի կատարեալը կրնայ սեպուիլ. (De lege agraria):

Հռուլլոս չհամարձակեցաւ Կիկերոնի դէմ դնել. բայց ատեն անցնելէն եաքը Ժողովրդեան առջև ամբաստանեց զբդեշխը թէ միայն Սիղիլիայի կոլմնակից քը պաշտպանելու համար դէմ կեցած ըլլայ ագարակային օրինաց: Կիկերոն քաջութեամբ արդարացուց ինքզինքը: Ան վախճանաւ գրած է իր երկրորդ ճառը նոյն նիւթին վրայ, ան որ թէպէտ քիչ մը աւելի ընդարձակ է, բայց լի կրնք և աշխուժութեամբ: Ժողովուրդը Հռուլլոսի ամբաստանութեանց հաւատալով՝ բաւական կիրք ունեցեր էր Կիկերոնի դէմ. անոր հաստատ երբոր բեմն ելաւ, շատերն սկսան որոտընդոստ և արհամարհանաց ձայներըբարձրացընել: Ճարտասանախօսը չվախցաւ անոնցմէ. մանաւանդ թէ աւելի սիրտ առաւ արիութեամբ պաշտպանելու իր դատը:

Կիկերոնի ճառիցը մէջ քաղաքական ատենախօսութիւն կը սեպուի նաև՝ ի պաշտպանութիւն Հռաբիրիոսի զուրցածը (P. C. Rabirio), որուն համար ամբաստանութիւն եղեր էր թէ իր ձեռքովն սպաննած ըլլայ սերութեան ատենակալաց մէկը: Տարիքն առած ասպետ մըն էր Հռաբիրիոս, ու Ժողովրդեան վրայ բաւական արդիւնք ունե-

Generated on 2015-03-17 06:48 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ցող մարդ. անոր համար իրենց առջևը խօսեցաւ Կիկերոն սա պաշտպանողական ճառը: Թէպէտև սա ճառին մէր ձեռքը հասած օրինակները պակասաւոր են, բայց ան մնացած հատուածներէն ալ Կիկերոնի հռետորական աշխոյժը կերևնայ: Սրտաշարժ յառաջաբանով մը կըսկսի խօսքը, ու ընտիր իմաստներ՝ ընտրելագոյն բացատրութեամբ ժողովրդեան առջևը կը դնէ. ոՀի ծանրութիւն մը ունի՝ որուն ազդեցութիւնը շատ աւելի է քան թէ հռետորական ընդունայն զարդարանքը. — Հռաբիրիոսի պաշտպանութեան և կատիլինեան ճառից միջոցին՝ ուրիշ երկու հրապարակախօսութիւնք ալ ըրած է Կիկերոն, որոնք մէր ձեռքը հասած չեն:

Կոռնէլիանի ճառեր. — Պատմութենէ գիտենք թէ ինչ էին կատիլինայի և իրեն դաւակցաց խորհուրդքը: Կիկերոն աղէկ գիտնալով անոր բնաւորութիւնն, իմացեր էր նաև մտացը խորհուրդները. գիտէր թէ անոր զօրանալն՝ իրեն կնճելուն, որով և կեանքը կորսընցընելուն նշան էր: Անձին ու մանաւանդ հայրենեաց սէրը կըստիպէին զԿիկերոն անոր դէմ կենալու: Սակայն յարմար առենի կըսպասէր զկատիլինա խայտառակելու համար. շատ ալ սպասելու հարկ չեղաւ: Կատիլինա յանդգնեցաւ օր մը ծերակուտի ժողովին մէջ երևնալու. Կիկերոն ամէն բան առաջուց կարդի դրեր էր, Ատիկոսի ալ հրամայեր էր որ բոլոր զինեալ սպասեաններով Արամազդայ կեցուցչի տաճարին քովէն սպասէ՝ ծերակոյտն և քաղաքը նենգաւորին դաւաճանութենէն ազատելու համար: Կատիլինա միտքը դրեր էր թէ իր խորհրդոց գոցը գիտութիւն ունեցող մը չկայ, ուստի և կեղծաւորեալ հանդարտութեամբ մը եկաւ ծերակուտին ժողովին մէջ իրեն տեղն առնելու: Կի-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:48 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կերոն չկրցաւ համբերել. ահաւոր ձայնով մը և ահաւորագոյն բարբառով ան ձառն սկսաւ որուն սկիզբն է. "Ով Կատիլինա, ինչուան ե՞րբ մեր հանդուրժողութեամբը պիտի զեղծանիս. ինչուան ե՞րբ խաղալիք պիտի ըլլանք քու կատաղութեանդ, և ինչուան ու՞ր պիտի հասնի քու յանդգնութիւնդ... (In L. Catilinam): Բոլոր ձառը աս սկզբնաւորութեանն արժանաւոր է, լի կրիւք և աշխուժիւ, ճարտարախօսութեան ընտիր գալափար մը: Սալուստիոս ալ կը խոստովանի թէ աս ձառը ամենամեծ օգուտ ըրաւ հասարակապետութեան: Իրաւ է որ ան առեննելը կիկերոն քաղձկեր էր, բայց ինքիրմէ Կատիլինայի դէմ բան չէր կրնար ընել. վասն զի անիկայ ալ քաղաքացի և ծերակուտի անդամ էր, և զօրաւոր կուսակցութենէ մը պաշտպանուած. ուստի ամէն ջանք ըրաւ զանիկայ ծերակուտէն և Հռոմէն դուրս հանելու. և անով յայտնի ապստամբութեան մը մէջ գահավիժել զինքը: Բայց որովհետև Կատիլինայի դաւակցութեանն այնչափ յայտնի վկայութիւններ չկային, ուստի կերևնայ թէ ոմանք ձարտարախօսէն հայրենասիրութիւնը գովեցին, բայց անոր ամէն խօսքերուն մէջ ձխմարտութիւն տեսնելու դժուարութիւն կը քաշէին: Ան վախճանաւ չարադրեց կիկերոն իր երկրորդ Կատիլինականը:

Առջինէն մէկ օր մը եաքն ըրաւ կիկերոն աս հրապարակախօսութիւնը: Կատիլինա արդէն Հռոմէն հեռացեր և սկսեր էր իր խորհրդոցը գործադրութեան համար աշխատիլ: Ճարտարախօսն աս բանս առիթ առնելով ցոյց իրեն առջի օրուան խօսածներուն ուռուգութիւնը: Բայց աս ձառին յարգն առջինին համեմատութեամբ շատ նուազ է:

Generated on 2015-03-17 06:48 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

Սակայն ասկէ ալ չատ աւելի տարբերութիւն ունի երրորդ կաթոլիկոսականը : Հռոմմայեցիք կիկերոնի խօսքին մեկ ըսեր, ու դաւաճանի մը նեն-գութիւններէ ապրեր էին : Ճարտասանօսը մեծ ուրախութիւն ունեցեր էր առ բանիս վրայ. ուսանի ինքզինքը գովելով սկսաւ իր երրորդ հրապարակախօսութիւնը : Հայրենեաց փրկութեանը համար մատուցած ծառայութիւնքը յիշատակելով կուզէր Հռոմուլեայ հաւասարապատիւ սեպուիլ :

Երրորդ կաթիլինականը մեծապէս յարդի է քան զերկրորդն և զերրորդն, և տեղ տեղ թերևս քան զառաջինն ալ : Աներնակալ եղող մարդու մը պատշաճական ծանրութիւնը, հանդարտութիւնն ու իմաստութիւնն անոր մէջ յայտնի կերևնայ : Երրորդ ճառէն երկու օր վերջը խօսեցաւ ասիկայ Կիկերոն՝ ծերակուտի ժողովին առջև : Իրմէն առաջ կեսար և կատօն խօսեր էին. Սալուստիոս անոնց ճառերը կը յիշատակէ, բայց Կիկերոնի խօսածին վրայ բան մը չըսելովը ալ յայտնապէս կը ցցընէ թէ չատ աւելի զօրաւոր էր քան առջիններուինը : Կիկերոն աս ճառին մէջ նախ Սիլանոսի և կեսարու առաջարկութեանց բովանդակութիւնը կրնէ, ու առջինին կարծիքն աւելի օգտակար սեպելով կը յորդորե զհռովմայեցիս անոր գործադրութեանը փութալուն : — Զհռոմ կաթիլինային նենգութիւններէն ազատելուն համար՝ իրաւամբ հայր հայրենեաց կոչուեցաւ Կիկերոն :

Կիկերոնի օրինչ փաղփական հրապարակախօսութիւնները. — Կիկերոնի յաղթանակաց փառքն և ժողովրդեան երախտագիտութեամբ ստացած պատիւը երկարատև չեղաւ : Մինչդեռ ինքը գեղի տունը քաշուած՝ բոլորովին բանասիրական ուս-

Generated on 2015-03-17 06:48 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

մանց եռևէ էր, կեսար սկսաւ զօրանալ ու մեծ-
նալ, ու Պոմպէոս այնպիսի ահաւոր նախանձորդի
մը դիմաց կը տկարանար. Կլոդիոս ալ տրիբու-
նութեան պաշտօնն առնելով վրէժխնդրութեան
օրէնքները սահմանելու կըզբաղէր: Պոմպէոս
չկրցաւ պաշտպան կենալ իր բարեկամին, ու կղո-
դիոսի հրամանաւը Կիկերոն աքսորուեցաւ: Ան
տասնըեօթը ամսուան գերութիւնը մահուընէ
դառն կու գար իրեն. բայց իմաստնոյ արժանա-
ւոր արիութեամբ կրեց աքսորն և անոր զուգըն-
թաց բազմապատիկ վշտերը: Եւ երբոր 58ին նո-
րէն Հռոմ դարձաւ, թէպէտ այլևայլ անգամներ
առիթ ունեցաւ խօսելու թէ ժողովրդեան և թէ
ծերակուտին առջև, բայց ան ճառերէն մէկն ալ
մանաւոր յիշատակութեան արժանաւորութիւն
մը չունին: 56ին Լ. Պիսոն և Ա. Գաբինիոս Մա-
կեդոնիայէն և ասորեստանէն կանչուեցան, որով-
հետև Կիկերոն վրանին ամբաստանութիւն ըրեր
էր: Պիսոն երբոր ծերակուտին մէջ մտաւ, սկսաւ
գանգատիլ իր դատախազին դէմ. բայց Կիկերոն
չհրաժարեցաւ իր ամբաստանութեանց ստուգու-
թիւնը ցցընելէն: Ա՛ճառս գրեթէ ամբողջ ձե-
ռուընիս հասած է, (In L. Calpurnium Pisonem):
Բայց ատոր մէջ Կիկերոն իրեն սեպհական ծան-
րութիւնը մէկդի դրած, և կամ թէ ըրած ամ-
բաստանութիւնքն ապացուցանելու համար բա-
ւական փաստեր չունենալով կրսկսի զՊիսոն նա-
խատեալ, և իրեն թէ անձնական և թէ քաղաքա-
կան կեանքը վար զարնել անարժան խօսքերով և
նախատալից գարշուածներով, որ իրեն հանճա-
րին պատիւ չեն ըներ: Զարմանք է որ ինչպէս
ծերակոյտը հաւնեցաւ Կիկերոնի այս ատենախո-
սութեանն ու զՊիսոն պարտաւոր սեպեց:

Անկէց ինչուան կեսարու դիկտատորութեանը

ժամանակ Կիկերոն առանձին հրապարակախոսութիւնք և այլևայլ գրուածներ շարադրելու պքաղեցաւ. եաքն իբրև Կիլիկիոյ փոխանակ բգեշխի Հռոմէն հեռացաւ: Բայց 50ին նորէն Հռոմ դառնալով, քաղաքական պատերազմաց բոցերուն մէջ ընկաւ, ինչպէս ինքը Կիկերոն կը բացատրէ: Պոմպէոսի կուսակից եղաւ Ճարտասրախօսը, ոչ այնչափ անոր յաղթութեանը վրայ վատահ ըլլալով՝ որչափ երախտագիտութեան համար: Կեսար յաղթեց Պոմպէոսի. բայց անոր թիկունք և պաշտպան եղող Կիկերոնի՝ մեծարանք և սէր ցըցուց. և ան վեհանձնութեամբը Հռովմայ Ճարտասրախօսին սիրտը շահեցաւ: Կիկերոն ալ սկսաւ ամէն բանի մէջ զկեսար գովել, մանաւանդ 'ի պաշտպանութիւն Մարկելլոսի (Pro M. Marcello) խօսած Ճառին մէջ: Բայց կեսարու փառացն ալ վախճանը հասեր էր. Բրուտոսի և Կասիոսի ձեռքով ան մեծ զօրավարն իր արտին և քաջութեանն անարժան մահ մը ունեցաւ: Անոնց հետ միացաւ նաև Կիկերոն, ու իր ծերութեանը ժամանակ, վաթսունուվրեք տարուան հասակին՝ նորէն քաղաքական կեանք մը սկսաւ:

Ան առեններըը շարադրած է իր Փիլիպպեան (Philippica) ըսուած Ճառերը, Դեմոսթենեսյ հրաշակաւոր համանուն առենախօսութեանց նմանանութեամբը: Առջի Փիլիպպեանը ծերակուտին առջև խօսեցաւ. Անտոնիոս կուզէր կեսարու սահմանած օրէնքները վերցընել. Կիկերոն հակառակը պնդեց իր առ Ճառին մէջ: Երկրորդ Փիլիպպեանը զոր Յովնաղ առաքածոյին կը կոչէ, որ Կիկերոնի մահուանը պատճառ կը համարի, չխօսեցաւ յատենի. այլ միայն հրատարակեց, երբոր Անտոնիոս՝ Բրուտոս Դեկիմոսի դէմ կերթար, Գաղղիոյ մէկ մասը անոր ձեռքէն յափշտակելու

համար : Ա՛ս ճառիս մէջ, Պիսոնի դէմ շարադրա-
ծին նման՝ յանցանք չի ճնար որ չգովուցէ Անտոնի-
նոսի վրայ . բայց մէջի կրակն և աչքոյժն անհամե-
մատ է : Երրորդին մէջ նորէն զԱնտոնինոս կամ-
բաստանէ, և անոր հակառակ զԲրուտոս և զԿե-
սար Հոկտաւիանոս կը գրուատէ : Չորրորդին մէջ
կը պատմէ Անտոնինոսի Հոկտաւիանոսի դէմ տը-
ւած պատերազմները, և կը յորդորէ զՀռովմայե-
ցիս որ եռանդ ըլլան առջի ազատութիւնին ձեռք
բերելու : Հինգերորդին մէջ կը ցցընէ որ եթէ
Անտոնինոս խաղաղութեան կը փափաքի, հարկ է
ձեռքէն զէնքերը ձգելով աղաչանօք խաղաղու-
թիւն խնդրէ : Կառաջարկէ դարձեալ որ ժամա-
նակին պատերազմացը մէջ քաջութեամբ նշանա-
ւոր եղող զինուորաց և զօրապետաց վարձատրու-
թիւնք ըլլուին : Դեկիմոս Բրուտոս Մռաենայի
մէջ էր . Անտոնինոս կը ջանար որ զինքը նոյն քաղ-
քին մէջ պաշարէ . Հռովմայեցիք՝ որպէս զի ի-
րենց սիրելի բգեշխը վտանգէն ազատի՝ մարդիկ
խրկեցին Անտոնինոսի, աղաչելով որ առ պաշար-
մանէն եա կենայ : Կիկերոն իր վեցերորդ փիլիպ-
պեան ճառիցը մէջ կը ցաւի առ նուաստութեանը
վրայ . որովհետև, կըսէ, Անտոնինոս մանիկ պիտի
ջընէ . բայց կը փափաքի որ առ հրեշտակութիւնն
իրեն վախճանին հասնի : Եօթներորդին մէջ կը
ցցընէ թէ որչափ նուաստութիւն ըրած կըլլայ
Հռոմ՝ եթէ խոնարհի Անտոնինեայ հետ խաղա-
ղութեան գաշինք դնելու : Ութերորդով կապա-
ցուցանէ թէ չիրաւի Անտոնինոս թշնամի է հա-
սարակապետութեան : Իններորդին մէջ կը յոր-
դորէ որ մանաւանդ պատիւ մը ընեն Սերուիոսի
Սուլպիկիոսի՝ զոր Հռովմայեցիք Անտոնինոսի խըր-
կեր էին, իսկ անիկայ ծերութեան պատուերը
դեռ չկատարած մեռեր էր : Կ . Փուփիոս Գալե-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:49 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նոս Ծերակոյան սկսեր էր ջրբուսաոս վար զար-
նել, ու վրան այլևայլ ամբաստանութիւն ընել.
իրեն դէմ եւաս Կիկերոն, և ան սաեն շարադրեց
իր տաններորդ փիլիպպեանը: Մեռտասաներորդը
Տոլապելլայի դէմ է, որն որ Անտոնինեայ հրա-
մանաւը՝ Ասորւոց քաղաքապետութիւնը կրնէր:
Պիսոն և Գաբինոս, երկուքն ալ Անտոնինեանց
պաշտպանք, կուզէին որ Հռոմ հետը հաշտու-
թեան խոնարհի: Երկոտասաներորդ և երեքտա-
սաներորդ ճառերն անոնց դէմ խոսեցաւ Կիկերոն:
Չորեքտասաներորդ փիլիպպեանը կարտսի երդ-
մը եղաւ Կիկերոնի համար, ինչպէս ինքը կրատո-
սի խոսած վերջին ճառին համար կը զրուցէ: Ա-
նանկ ճառ մըն է ասիկայ, որ Թերևս շատ աւելի
իրաւամբ կարենայ ապոլոգիական կոչուիլ, իրեն
գեղեցկութեանը և կորովին պատճառաւ. Հիր-
ատիոս, Պանսա և Հոկտաւիոս՝ Անտոնինեայ վրայ
մեծ յաղթութիւն մը ըրեր էին. Կիկերոն ան բա-
նը տալէ առաւ իր աս վերջին ճառը շարադրելու:

Կիկերոնի՝ հռետորական արուեստի վրայ շարադրած
երկասիրութիւնքը.— Այլևայլ ճառեր կամ գրուած-
ներ աշխատասիրած է Կիկերոն հռետորական ա-
րուեստի վրայ: Ասոնց մէջ ոմանք հաղիւ արժա-
նի են յիշատակութեան մատենագրական պատ-
մութեան մը մէջ. ոմանք ալ ընդհակառակն հրա-
շալի գրուածքներ՝ Պլատոնի և Արիստոտէլի խոհա-
տասիրութեանցները շարադրուած: Ասոնց մէջ ա-
ռաջին կրնայ սեպուիլ

Հռետորական առ Գայիոս Հերեննիոս (Rhetoricarum ad casum Herennium), չորս բաժնուած և ճարտասանութեան համառօտութիւն մը: Հաւանական կերևնայ թէ Կիկերոն իր պատանեկութեանն տաեն շարադրած ըլլայ աս գիրքը, որով հետև թէպէտ պարզութիւն և հաճոյական չա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:49 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

փաւորութիւն ոճի կը տեսնուի մէջը՝ բայց իր հասուն մտքին արգասեացը նշանները չեն երևնար. գեռ աշակերտի ոճ մը ունի, և նիւթին բոլորովին տէրը չէ:

Յաղագս գիւտի ճարտարախօսութեան (De inventione rhetorica), երկու գիրք, որ առջինին համառօտութիւնը կրնայ սեպուիլ, բայց աւելի ոճով և հանճարով գրուած: Ասիկա կիկերոնի տղայութեանն երկասիրութիւն է, ու կերևնայ թէ նախ իր անձին վարժութեանը համար չարտագրեր, ուստի ստիպուեր է հրատարակել: Բայց ասոր մէջ յայտնապէս կիմացուի թէ ատենով ինչ պիտի ըլլայ Կիկերոն:

Յիսուն տարուան էր երբոր Յաղագս ճարտարախօսի (De oratore) ըսուած իրեք գիրքը շարադրեց զրուցատրութեան ձևով: Ամէն անուանի ճարտարախօսքը մէջ կը բերէ, և անոնց հանճարին և աշխուժին արժանի լեզուով մը հռետորական արուեստի գերազանցութիւնը, օգուտները և վախճանը կը ցցընէ: Ասոր մէջ Կիկերոն արժանաւոր աշակերտ է Պղատոնի. իրաւ է որ անոր կատարելութիւնները չունի, և տրամախօսութեան մէջ բերած անձինքն ալ ատտիկեան աշխոյժը չեն երևցըներ, բայց մատենագրին սրտին և գրչին արժանի հռովմայեցիք են:

Կեսարու գիկատատորութեանն ատեն չարտագրեց իր Բրուտոս կամ՝ Յաղագս անուանի ճարտախօսաց գիրքը (Brutus sive de claris oratoribus): Ասիկայ ալ զրուցատրութիւն մըն է, և ինչպէս առաջ ալ յիշատակեցինք, անուանի ճարտարախօսաց պատմութիւնը կը բովանդակէ: Խօսողներն են ինքն իսկ Կիկերոն և իր երկու բարեկամքը Ատտիկոս և Բրուտոս. իսկ տեսարանը Կիկերոնի գեղազբօս տանը մէջ 'ի Տուսկուլան (Ֆրասգատի):

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:57 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Բայց ասոր յարգը չատ նուազ է առջիններուն համեմատութեամբ :

Ընդլ. ժամանակները շարադրեց իր Ճարտասանաց (Orator, ad M. Brutum) գրուածը, զոր Բրուտոսի ընծայեց. և որուն մէջ լաւ կերպով կը բացատրէ թէ կատարեալ Ճարտասանին մը հանգամանքը որունք են, և որն է բուն հռետորական ոճը :

Ասոնցմէ զատ երկասիրած է Կիկերոն Բաժանտոնտ հռետորականտ (Oratoriæ partitiones), Յաղագս պէղէաց Ճարտասանութեան (Topica ad Trebatium), Զընտիր Ճարտասանութենէ (De optimo genere oratorum), որոնց յարգը այնչափ մեծ չէ բանասիրաց առջևը : Շատ բան գրող մատենագրի մը համար զարմանք չէ որ ամէն երկասիրութիւնները մի և նոյն լաւութիւնը կամ ընտրութիւնը չունենան :

Կիկերոնի իմաստասիրական գրուածները. — Թէպէտև ինքզինքը բոլորովին հռետորական արուեստի և ատենախօսութեանց կատարելութեանը զոհեր էր Կիկերոն, սակայն չվախցաւ իմաստասիրական գիտուարին ուսմանց մեծ ասպարիզին մէջ ալ անվեհեր մտնել : Իմաստասիրութիւնը՝ բանական մարդու ամենէն արժանաւոր ուսումն է. անոր համար չհամայ մեծ Ճարտարախօսը տկարութեան ատենէն անոր եռանդն ըլլալէն եաքն ալ՝ երբոր յունաստան Ճամբորդութիւն ըրաւ, ամենայն կերպով ջանաց անոնց հին իմաստասիրութեան անսպառ գանձերն իրեն մասյը մէջ ամփոփել :

Իր իմաստասիրական գրուածոցը մէջ առջինը կը սեպուի արժանապէս Յաղագս հասարակապետութեան գիրքը (De Republica), զորն որ յիսունութիւրք կամ յիսունըչորս տարուան հատակին մէջ շարադրեց, ու Ատտիկոս բարեկամին ընծայեց (54) : Ասիկայ ալ տրամախօսութեան ձևով շարադրած է վեց գիրք, և անձինքն են Սկիպիոն Ե-

Generated on 2015-03-17 06:58 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

Միլանոս, Լելիոս, և իրենց ժամանակակից ա-
նուանի մարդիկը փաննիոս, Տուբերոն, Սկեւոլա
և այլք. որոնք մեկտեղ ժողված կը մատչին թէ
ուրն է արդեօք ամենէն աւելի լաւ կառավարու-
թիւնը, թէ որոնք են քաղաքական կենաց ան-
հրաժեշտ հանգամանքը, և ինչ կերպ տեսչու-
թեան ունենալու է ապրի մը ուժն ու զօրութիւնը
հաստատուն պահելու համար. կը քննեն հռով-
մայ մեծութեան և յաջողութեան պատճառները,
կը չանան անոր կործանման կամ կնաալուն առ-
ջևն առնել: Յունական մատենագրութեան
պատմութեանը մէջ յիշեցինք թէ Պլատոն ալ
այսպիսի երկասիրութիւն մը ունի. բայց կիկե-
րոնի ոճը և չանքը բոլորովին տարբեր են. բովան-
դակ հայրենասիրութիւն կը շնչէ իր լեզուն, ամեն
չանքը կընէ գրգռութիւնքը դադրեցընել, անմիա-
բանութեանց առջևն առնել, և հռովմէական պե-
տութեան ան նախնական վիճակը տալ՝ յորում
կը գտնուէր Գրակքոսեանց օրուընէ առաջ:

Կիկերոնի թէ խմաստասիրական և թէ հռետո-
րական ամեն գրուածոցը մէջ գլխաւորն ու գե-
րազանցն է սա հասարակապետութեան գիրքը,
Սակայն մեզմէ երեսունուերկք տարի առաջ սա
երկասիրութեան անունը միայն կար, ու միայն
քանի մը հատուածներըը հնոց մէջ յիշատակուած:
Բանասիրաց մեծ բաղդ ու անակնկալ ուրախու-
թեան պատճառ մը տուաւ՝ իր կեանքը հնութեան
յիշատակները դուրս հանելու համար մաշող հրա-
շակաւոր Անձելոյ Մայ ծիրանաւորը, երբոր վա-
տիկանեան մատենադարանին կրկնագիր գրչա-
գրացը մէջէն գտաւ սա ցանկալի երկասիրութեան
առաջին գիրքը գրեթէ ամբողջ, երկրորդին մեծ
մասը, երրորդէն, չորրորդէն և հինգերորդէն ալ
կարևոր հատուածներ: Վերջն երկուհարիւր տա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:58 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ըուանս մէջ իմաստնոց ջանքովն եղած հնագիտական ուսմանց ծանօթութեանցը մէջ՝ ասիկայ կրնայ սեպուիլ առջինն արժանապէս. և ինչն իսկ Մայ՝ որ ուրիշ շատ անծանօթ երկասիրութիւնք ծանօթացուց, գրեթէ միայն աս անգամ գլուխ գրուածոյ մը դանելու բաղդն ունեցաւ:

Հասարակապետութեան գլոց շարունակութիւն կամ լուծմն շարադրեր էր Կիկերոն Յաղագս օրինաց (De legibus) իրեք գիրքը: Առջինին մէջ հռովմայ հին սահմանադրութիւնքը գովեր էր. հարկ էր հռովմէական օրինաց գերազանցութիւնն ալ ցցընել: Ոմանք կըսեն թէ օրինաց տրամախոսութիւնը հինգ կամ վեց գիրք բաժնուած էր. բայց մեր ձեռքը հասածներըը միայն առջի իրեքն են, որ կերևնայ թէ ամբողջ ալ ըլլան: Խօսողները իրեք հոգի են. Կիկերոն, իր եղբայրը Կուինտոս, և Ատտիկոս իրենց բարեկամը: Աբելի իրաւագիտութեան կը վերաբերին իրենց զրուցատրութիւնքը քան թէ իմաստասիրութեան. և թէպէտ զանազան ընտիր հատուածներ կը բովանդակեն, բայց ամբողջութիւնին այնպէս հետաքնին չէ, մանաւանդ մեզի համար:

Ակադեմականը (Academicarum liber primus et secundus), իբրև նախաշաւիղ կամ պատրաստութիւն են Կիկերոնի ուրիշ իմաստասիրական գրութեանցը. ատոնցմէ մեկը կոփոլլոս և միւսը Լուկուլլոս կը կոչուի, մեջի գլխաւոր անձինքն անունք ըլլալնուն համար: Կիկերոն եաքը չորս գրքի վերածեց սա երկասիրութիւնն ու Վարրոնի ընծայեց: Առաջին գիրքը մասամբ ձեռքնիս հասած է. իսկ երկրորդն ամբողջ: Ատոյիկեանց դէմ կը ցցընէ թէ բացարձակ ստուգութիւն գտնելը անկարելի է, և թէ չենք կրնար զգայական պատկերաց միջոցներով իրաց բուն գոյութեանը խելամուտ ըլլալ:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:58 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Մինչդեռ օրինաց գիրքը շարադրելու եռանդ էր կիկերոն, նոյն միջոցին ուրիշ գրուածք մըն ալ հրատարակեց իսկական բարեաց և իսկական չարեաց վրայ, հինգ գրքի մէջ ամփոփուած. (De finibus honorum et malorum, ad M. Brutum). Ասոր մէջ կերևնայ Թէ իմաստասիրական ուսմանց որչափ խորը Թափանցեր էր կիկերոն: Իրաւամբք վար կը զարնէ եպիկուրեանց անարժան վարդապետութիւնքը. և կենդանի ճարտարխօսութեամբ կը ցցընէ Թէ ինչ բանի պիտի հետևինք և ուստի զգուշանանք: Բրուտոսի ընծայեր էր կիկերոն սա գրքերը:

Նոյնպէս իրեն ընծայեց նաև Տուսկուլեանք (Tusculanarum quæstionum), որոնք բարոյական այլևայլ խնդրոց վրայ զուցատրութիւնք են, ինչպէս յաղագս արհամարհելոյ զմահ, յաղագս ցաւոց, յաղագս անդորրութեան և խաղաղութեան Ի վիշս, և այլն: Յաղագս բնութեան աստուածոց (De natura Deorum, ad M. Brutum) ըսուած գրքին մէջ այլևայլ իմաստասիրաց կարծեացը վրայ կը խօսի՝ զոր ունեցան յաղագս գերագոյն էակին և նախախնամութեան. խօսողները մէկ եպիկուրեան, մէկ ստոյիկեան և մէկ ճեմական իմաստասէրք են: Ասոր շարունակութիւն կը սեպուին Յաղագս ըղձութեան (De divinatione) երկու գրքերը. և ասոնց ալ լուծին Յաղագս ճակատագրի (De fato) համառօտ գիրքը. յորում կիկերոն կը բացատրէ եպիկուրեանց և ստոյիկեանց ունեցած կարծիքները յաղագս բաղդի կամ ճակատագրի և անճնիշխանութեան:

Խօսքերնիս չենք ուզեր երկնցընել կոպտեր էրէց համար Յաղագս ծերութեան (Cato major, seu de Senectute), Լէլիոս կամ Յաղագս բարեկամութեան (Lælius, seu de Amicitia) տրամախօսութեանց, և Յա-

Generated on 2015-03-17 06:58 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ղագ. պարտաճէն (De officiis) ընտիր խմաստասիրական գրքերուն վրայ, որոնք այդչափ ծանօթ են ազգերնուս իրենց հայկական թարգմանութեամբը : Անոնցմով ազգերնիս Կիկերոնի խմաստասիրութեան ճաշակն առած կը սեպուի. բայց ճարտասանութեան միայն համբաւը լսած՝ ու դեռ անճաշակ է. ուստի և փափաքելի է որ բանասէր մը ցանկալի աշխատասիրութեան ձեռք զարնէ, Կիկերոնի արժանաւոր հայկական լեզուով իրեն ճառից թարգմանութիւնն ալ պատշաճ դպրութեան ընծայելով :

Կիկերոնի Նամակը. — Որչափ ալ ջանացինք Կիկերոնի վրայ համառօտիւ խօսել, ու իր այլևայլ երկասիրութիւնքը լռելով անցանք, սակայն չենք կրնար անյիշատակ թողնել ան Նամակը (Epistolarum ad familiares) զորս իր մտերմացը կը գրէր, և զորոնք բանասէր մը Կիկերոնի ամէն գրուածներէն գերազանց կը սեպէ : Որչափ որ պարզութեամբ և ընտանեկան ոճով գրուած են, այնչափ ալ մէջերնին լեզուի քաղցրութիւն և ժամանակին քաղաքակրթութիւնը կերևնայ : Ան Նամակներս կարգի վրայ առնող և յետնոց աւանդողն եղած է Տուղլիոս Տիրոն, ճարտարախօսին ազատագրեալը և իրեն գպրապետը :

Կիկերոնի ճարտարախօսութեան կրօվը և ոճը. — Առաջ զուրցեցինք թէ որչափ ջանք և փոյթ ունեցաւ Կիկերոն իր արուեստին մէջ կատարեալ ըլլալու համար. ուստի զարմանք չէ որ ջանքն ալ անկակուղութենէն վեր պահակուեցաւ : Կիկերոնի վրայ դատաստան ընելու համար հարկ չկայ իր ճառերը քննել. բաւական է որ պատմութեան հարցնենք, և իրմէ իմանանք ճառերուն ըրած արդիւնքը : — Հռոմ վտանգի մէջ կկնայ թէ ծերակուտին անհոգութեամբն և թէ արուաքին թշնա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:58 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մեաց պատերազմաց յաջախութեամբը: Կիկերոն ան ատեն դեռ պրետորի իշխանութիւնն ունէր. կիմանայ ասս վտանգը, և հասարակապետութեան անօրոք թշնամի զՄիհրդատ պոնտացին տեսնելով, կը յորդորէ զհռովմայեցիս որ անոր դէմ եղած պատերազմին զօրավարութիւնը Պոմպէոսի յանձնեն. ու մեկ կընեն Կիկերոնի: — Բդեշխութեանը ժամանակ՝ Լ. Ոլթոն անունով ազնուազգի մը հրաման կը հանէ որ Թատերական համայնքութեանց մէջ հասարակ ժողովուրդը աղնուականներէն հեռու կենայ: Հրամանն անիրաւ կը սեպուի, բոլոր ժողովուրդն Ոլթոնի դէմ կելլէ, ու Թատերախաղից ժամանակ կուզեն թէ զինքը և թէ իրեն պաշտպան կեցող ազնուականքը թրէք անցընել: Կը վազէ Կիկերոն, կը հանդարտեցընէ խառնաղանձ ամբոխը. ու Թատրոնէն՝ պելլոնայի տաճարը տանելով զնրենք, հետերնին կրսկսի խօսել. այնչափ ազդեցութիւն կընէ մրտքերնուն վրայ Կիկերոնի խօսքերը՝ որ բարկութեամբ ապաղակները կը լռեն, ու հանդարտութեամբ նորեն Թատրը կը դառնան: — Ժողովրդեան տրիբուն մը, Հռուլլոս, նոր օրէնք մը կառաջարկէ հռովմայեցւոց, որպէս զի Իտալիոյ ամենէն աւելի արգաւանդաձող դաշտերն իրեն ժառանգութիւն ըլլան. ու գրեթէ իեղճ ժողովուրդը կը խաբէ՝ ուզածն առաջ տանելու համար: Կիմանայ Կիկերոն ան օրինաց վնասները. կը խօսի ժողովրդեան հետ, Հռուլլոսի նենգութիւնը կը յայտնէ, ու սիրելի և բարեկամ սեպուած անձին՝ կատարեալ թշնամութիւնը կը բացատրէ: — Իր հզօր լեզուովը զյանդուգնն կատիլինա, հասարակապետութեան երդուեալ թշնամին, վախի և ահու մէջ կը ձգէ. անանկ որ թէ ինքն և թէ իրեն համախոհքը ստիպեցան Հռովմայէն ելլել: — Բայց

Generated on 2015-03-17 06:59 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

Կիկերոնի ամենէն աւելի փառաւոր յաղթանակը իր վիլլիպեան երրորդ ճառին մէջն է : ԾերուԹիւնը , փորձառուԹիւնն ու հասարակապետուԹեան բարւոյն համար կրած վշաերն աւելի մեծարգոյ և պատուական ըրեր էին զինքը ժողովրդեան գիմաց : Հազիւ Թէ սկսեր էր խօսել , ամբոխին մէջ աղաղակի ձայն մը եկաւ . ամենքը կը գովէին զինքը , և Ճշմարիտ պաշտպան ազատուԹեան կը կոչէին : Ճարտարախօսի մը ամենէն գեղեցիկ հանգամանքն ունէր Կիկերոն , ու ժողովրդեան սիրտը գրաւել :

Կիկերոնի մահը . — Բայց Կիկերոնի հրացայտ լեզուն , որով շատերն այրեր ու մրկեր էր , իրեն ալ մահաւիԹ եղաւ : Անտոնինոս՝ որ չէր կրցած մոռնալ՝ Կիկերոնի իրեն դէմ զուրցած նախատալից խօսքերն ու ԹշնամուԹիւնները , կեսարու մահուընէն ետքը եղած պատերազմին մէջ յաղթող եկաւ . և Հոկտաւիոսի ու Լեպիդոսի հետ եռապետուԹիւն մը հաստատելով՝ բոլոր իրեն իշխանուԹեանը դէմ կեցողները մահուան դատապարտեց . և ուղեց որ անոնց մէջ առջինը Կիկերոն ըլլայ : Կիկերոն փախստեամբն ալ չկրցաւ անոր ձեռքէն ազատիլ : Անտոնինոս անոր ձեռուընեն ու գլուխը , որոնցմով շատ անգամ հասարակապետուԹիւնը վտանգէ փրկեր էր , Հռոմ բերել տուաւ , ու անոր հրապարակախօսուԹեը բեմին վրայէն կախել հրամայեց : Բոլոր հռովմայեցիք ստոկացան այսպիսի անգԹուԹեան մը վրայ . ու Անտոնինեայ բռնաւորուԹենէն չվախնալով լացին հռչակաւոր Ճարտարախօսին մահը և զինքը գովելէն չդադրեցան :

Կիկերոնի անունը մեծարգոյ ու գրեԹէ սրբազան բան մը սեպուած էր հռովմայեցւոց առջև : Բայց քանի որ Օգոստոս կառավարեր , չէին համար-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:59 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ձակեր գրոց մէջ զԿիկերոն դրուատեալ. որովհետև զինքը գովելը՝ զՕգոստոս վար զարնել ըսել էր: Սակայն կայսեր մահուընէն եաքը՝ Կիկերոնի վրայ խօսել ամէն հին մատենագիրք գրեթէ իրենք իրենցմէ դուրս կելլեն երբոր վնիքն ուզենան գովել. ինչպէս Վէլլէյոս Պատերկուլոս, Պլինիոս երէցն, Կուինտիլիանոս և այլք:

Որ է առաջին ճարտարախօս, Կիկերո՞ն ըէ Դեմոսթենէս. — Յատին հռետորաց մէջ մէկը չկայ որ Կիկերոնի կարենայ հաւասարիլ թէ աղդու և թէ զօրաւոր պերճախօսութեամբը: Իսկ Յունաց մէջ միայն Դեմոսթենէս կրնայ Կիկերոնի հետ բաղդատուիլ: Ա՛ս երկու հռչակաւոր ճարտարախօսաց վրայը քիչ շատ նման են իրարու. երկուքն ալ զօրաւորք հասարակապետութեան մէջ, և իրենց զօրութիւնը ճարտարախօսութեամբ ստացան. նախանձաւորք ազատութեան հայրենեաց, և ամէն ջանքերնին ըրին հայրենիքն ընկճել ուզող բռնաւորաց դէմ դնել. երկուքն ալ քաղաքական երկպառակութեանց և հակառակորդաց նախանձուն համար սպիեցան երթալ յօտարութիւն, ու եաքն աւելի փառօք նորէն կանչուեցան. երկուքն ալ աւելի զօրաւորք խօսքով քան թէ զէնքով, որով և յաւերնի քան թէ 'ի պատերազմի յաղթականք. երկուքն ալ զոհք հասարակապետութեան. միայն ա՛ս տարբերութեամբ որ Կիկերոնի մահը փառօք եղաւ, իսկ Դեմոսթենէն յուսահատութենէն յանձնասպանութի՛ն մատաքերեց:

Բանասիրաց մէջ անվերջանալի վիճի նիւթ եղած է թէ ա՛ս երկու ճարտարախօսաց մէջ որո՞ւն տալու է առաջնութիւնը: Ա՛յսպիսի վէճերու մէջ շատ անգամ ճշմարտութիւնն երևան ելլելու տեղ՝ աւելի ևս կը մթընայ. որովհետև երկու կողմի պաշտպան անձինք ալ՝ դիմացինին թերու-

Generated on 2015-03-17 06:59 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

թիւնքը ցցընելու դիտմամբ՝ կատարելութեանցը փոյթ չեն ըներ. իսկ պաշտպանուած կողմին ալ լաւութեան քննութիւնը թող չի տար որ թերութիւնքը նշմարուին: Ասիկայ բնական փոս մըն է որ գրեթէ ամէն վիճողաց առջևը կը բացուի. երկուքն ալ միւս ծայրը կանցնին, ու լսողքը առակաւոր մէջ թողնելով գրեթէ ոչ երբեք ճշմարտութիւնը կը յայտնեն: Սակայն եթէ այսպիսի խառնախօսութեանց մէջ ընդհանուր կարծիք մը ուզենանք վնասուել, կը տեսնենք որ նախապաշարմանէ ազատ մտքերն առաջնութեան պարծանքը Դեմոսթենէի կընծայեն. "Ամենևին չեմ վախնար հաստատելու, կըսէ Ֆենելոն իր Յաղագս ճարտարախօսութեան ըսուած տրամախօսութեանցը մէջ, թէ Դեմոսթենէս գերազանց է քան զկիկերոն: Բայց միանգամայն աս ալ կըսեմ որ թերևս ոչ ոք ինծմէ աւելի կը յարգէ զկիկերոն: Ինչքան որ դպչի՝ կը գեղեցկացընէ, ու խօսքին փառաւորութիւն մը կու տայ... կարգէ դուրս աշխուժութիւն և ոճի ատակութիւն ունի, մանաւանդ երբոր կատիլինեայ, Վերրէսի, Անտոնինեայ դէմ կը խօսի: Բայց քանի մը թերութիւններ երևնան իրեն ճառիցը մէջ..: Դեմոսթեն ինքիրմէ դուրս կելլէ, ու հայրենիքէն զատ ուրիշ բան աչքին առջև չերևնար: Խելքէ դուրս է իրեն զարմանալի ոճը. խօսքն անանկ կը գործածէ, ինչպէս համեստ մարդ մը զգեստը՝ ինքզինքը ծածկելու համար. կորոտայ ու կը չանէ, հեղեղ մըն է որ ամէն բան կը տանի... Այս երկու ճարտարախօսաց վրայ կը հիանամ. բայց միանգամայն կը խոստովանիմ թէ կիկերոնի հզօր ճարտարախօսութիւնն այնչափ ազդեցութիւն չըներ վրաս, ինչպէս Դեմոսթենեայ արագաթռիչ պարզութիւնը,,:

ԿԻԿԵՐՈՆԻ ՆԱԽԱՀԱՏԸ. — Առաջ ալ յիշատակե-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 06:59 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կինք Թէ ինչպէս ընակիր և անուշ ոճով գրուած նամակներ ունի Կիկերոն : Հռչակաւոր Ճարտասանութեան բարեկամքն ալ աննշան մարդիկ չէին . հապա շատ անուանի գիտուններ , որունք նոյնպիսի Թղթեր կը գրէին առ Կիկերոն : Անոնք էին Ատտիկոս , Բրուտոս , Կասիոս , Կատոն , Կեկինա , Կուինտոս Կիկերոն , Հիրտիոս , Լաբիէնոս , Մասիոս , Ոպպիոս , Պոլլիոն , Սուլպիկիոս , և այլք : Պատմութենէ գիտենք Թէ ատոնցմէ ոմանք որչափ յարաբերութիւն ունեցած են Կիկերոնի հետ քաղաքական գործառնութեանց մէջ :

Կիկերոնի մտերիմներէն մեկն ալ էր Վարրոն , որուն վրայ առանձին գլխով խօսինք :

ԳԼՈՒԽ ԺԳ .

ՎԱՐՐՈՆ

Վարրոնի վարքը . — Գրուածքները և ոճը :

Վարրոնի վարքը . — Կիկերոնի բարեկամացը մէջ հռչակաւոր Մ . Տերենտիոս Վարրոն , ասպինալցւոց Ռէաթէ քաղաքը ծնած է Քրիստոսէ 116 տարի առաջ : Հարուստ և ազնուական անէ ըլլալով ծնողքն ամէն փոյթ ունեցան ընակիր դաստիարակութիւն մը տալու անոր , և հռչակաւոր վարժապետաց յանձնեցին զինքը : Ուսման ընթացքը լմընցնելէն ետքը՝ քաղաքական պաշտամանց մէջ սկսաւ մտնել Վարրոն , և ինչուան՝ ի բռնեշնութիւն ամբարձաւ : Պոմպէոսի առաջնորդութեան տակ հուդկահարաց դէմ եղած պատերազմին մէջ կռուեցաւ , և իրենց օգնականութիւն ընող

Generated on 2015-03-17 06:59 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

Յունաց նաւատորմին հրամանատար եղաւ։ Պոմպէոսի և հռովմէական հին սահմանադրութեանց վրայ սէր ունենալով, կեսարու սխեմիմ Հշնամի հրատարակեց ինքզինքը։ Կեսար իրեն երկու գըլխաւոր հակառակորդքը նուաճելէն ետքը՝ անձամբ Վարրոնի ալ գէմ գնաց, որ ան ատենները Սպանիա էր։ Վարրոն առջի քերան պատերազմիլ ուզեց. բայց տեսնելով որ ամէնքը զինքն երեսէ ձգեցին, սակայեցաւ խոնարհիլ յաղթականին առջև։ Կեսար որ հպարտութեանը հետ մեծանձնութիւն ալ ունէր, Վարրոնի կենացը վնաս մը չըրաւ. Թող տուաւ որ նորէն երթայ Պոմպէոսի հետ միանայ. բայց Վարրոն անկէ ետքը պատերազմներէ ու քաղաքական գործողութիւններէ բոլորովին հրաժարեցաւ, ինքզինքը ուսման տուաւ։ Կեսար պատուիրեց իրեն որ աերութեան վերաբերեալ դրքերը մէկդի դնէ, որովհետև կուզէր անոնց մասնաւոր հաւաքմունք մը ընել։ Բայց Անտոնիոս որ կեսարու ուսումնասիրութիւնը չուներ և զՎարրոն կատէր, սկսաւ նախ անոր ինչքը յափշտակել, ու ետքն ուզեց զինքն ալ աքսորել կամ սպաննել։ Ճարտարութեամբ ազատելով անոր ձեռքէն, տեսաւ որ մատենադրական գանձերն Անտոնիոսի անյագ զինուորացն աւար եղեր են, հազիւ կրցաւ քիչ մը բան նորէն ձեռք ձգել։

Սակայն երբոր Օգոստոս իշխեց և սկսաւ դըլխութիւնքը խնամել, ուզեց կեսարու մտածած խորհուրդն առաջ տանել, ու պետութեան մատենադարան մը հաստատել. և աս հոգը Վարրոնի յանձնեց։ Ինտուն տարուան ծանրացեալ հասակին մեռաւ Վարրոն. և ինչուան մահը գլխէը ձեռքէ չէր թողուցած։

Վարրոնի էրկասիրութիւնը. — Վարրոնի երկու դուստրքը հասան մեզի. մէկմէկ ճաշ յաղագս լատին

Բարբառոյ որ Լեռների է, և մեկմէն ալ ցաղափ էրէր-գործունէան ամրողջ : Լասին լեզուի վրայ շարադրած Ճառն առաջ քանըչորս գիրք բաժնուած էր . մենք վեցն ունինք , անոնք ալ շատ տեղ պակասաւոր են : Հռովմայեցւոց մէջ առջինն եղաւ Վարրոն՝ այսպիսի երկասիրութեան մը ձեռք զարնող . և որչափ որ ցամաք սեպուի քերականական ուսմունքը , Վարրոն կրցեր է անոր մէջ փիլիսոփայութիւն ալ խառնել , որ ամենահարկաւոր է այնպիսի գիտութիւն մը դիւրիմաց և դիւրըմբռնելի ընելու համար : Իրմէ առջի քերականքն ուղիղ բան չէին ըրած , բայց եթէ հռովմայեցի հին հեղինակաց գրքերը մեկնաբանել , կամ Ընեւիոսի , Եննիոսի , Պղաւտոսի և այլոց գրքերուն մէջ գըտնուած դժուարիմանալի և անսովոր բառից մեկնութիւնը տալ : Ձեռնարկես հասած գրոց մէջ Վարրոն ստուգաբանութեան և համեմատութեաց (analogie) վրայ կը խօսի : Ստուգաբանութիւնքը շատ տեղ ընդհանրապէս առանց ախորժակի են . բայց ըրած դիտողութիւնքն ընտիր , որով իրմէ ետքն եկող քերականաց աշխատութեան լաւ հիմ մը դրաւ : Ըօթանասունն տարուան էր Վարրոն երբոր աս գրքին վրայ կաշխատէր , որ և Կիկերոնի ընծայեց . որովհետև անուանի հռետորն ալ իր Ափոէմականթ ըսուած երկասիրութիւնքն անոր նուիրեր էր :

Բայց թէ որ Վարրոնի աս գիրքը միայն ձեռնարկես հասած ըլլար , ուղիղ և որոշ դատաստան մը պիտի չկարենայինք ընել անոր ոճին վրայ : Քերականական ուսմանց հետազօտութիւնը՝ հանճար և համառութիւն կրնայ ցցընել , բայց քիչ անգամ ոճի վայելչութեան նշանակ ըլլալ : Ինքն Վարրոն ալ աս բանս իմացեր էր , ուսոսի և երկրագործութեան վրայ գիրք մը չինելու սկսած :

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 07:00 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ա՛ս գրուածիս մէջ ոչ միայն իրեն երկրագործական հմտութիւնը, հապա նաև ոճը և արուեստը կերևնայ: Ուղիտուն տարուան հասակին ձեռք զարկաւ ասս երկասիրութեանը. միայն հմտութիւնը՝ ծեր կը ցցընէ գինքը գրուածքիս մէջ, ուրիշ ամէն հանգամանքը կուրիճ մարդու մը գործք. երևակայութիւնը քիչ, բայց ոճը զանազանեալ է, ուսաի և չի կրնար ձանձրացընել: Ծերունի նեստոր մըն է, որ դիւցազանց արժանի կեանքէ մը եաքը կը քաշուի իր գեղի տունը, և քնութեան գործքերը կրսկսի քննել: Ինքն իսկ Վիրգիլիոս հրաշագիծ Մշակականացը մէջ շատ աեղ Վարրոնի հետևեր է, Թէպէտև ինքը կը զուլցե Թէ հեսիոդեայ հետևողութեամբը չինած ըլլայ: Վարրոն առջի գրոցը մէջ բուն երկրագործութեան և ծառերը դարմանելու վրայ կը խօսի, որոնք Վիրգիլեայ Մշակականին առջի երկու գրոցը նիւթերն են: Երկրորդ գրոցը մէջ կենդանեաց վրայ պէտք եղած հոգը և փոյթը կը նշանակէ, ինչպէս Վիրգիլիոս իր Մշակականացն երրորդ գրոց մէջ: Երրորդ կամ վերջին գրքին մէջ մեղուաց վրայ կը խօսի, զոր Վիրգիլիոս իր չորրորդ գրոցը նիւթ ըրած է:

Տրամախօսութեան ոճով գրած է Վարրոն իր ասս երկասիրութիւնը

Մենիպպեան երգիծաբանութիւն. — Վարրոն երիտասարդութեանը ժամանակ այլևայլ գրուածք շարադրեր էր, կէս մը ոտանաւոր և կէս մըն ալ արձակ, և զանոնք Մենիպպեան երգիծաբանութիւն կոչեց: Չի գիտցուիր Թէ ինչ նիւթոց վրայ էին ասոնք. Կիկերոն կրսէ Թէ իմաստասիրական զուարճախօսութիւնք եղած ըլլան, և Թէ անոնց ընթերցուածն իրեն զբօսանաց նիւթ էին: Բայց Վարրոնի բանաստեղծութեան ունեցած քիչ յար-

Generated on 2015-03-17 07:00 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

մարութիւնը գուշակել կու տայ թէ ատենք իւրեն անուանն ու համբաւին այնչափ արժանաւոր եր- կասիրութիւնք ելած չըլլան :

ԳԼՈՒԽ ԺԴ.

ՑՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ

Յուլիոս կեսար. — կեսարու յիշատակարանները. — կեսար ճարտարախօս. — Գրուելեան ոճը :

Յուլիոս կեսար.— Լուկիոսի կեսարու որդին էր Գայիոս Յուլիոս կեսար, և Քրիստոսէ 98 տարի առաջ ծնած, ան Թշուառ ժամանակները՝ յո- լում հռոմ բռնաւորաց ձեռքն որս եղեր, ու պատերազմաց և անմիաբան դրդռումեանց հան- դիսարան դարձեր էր : Սիլլա իւրեն փառասէր խորհրդոյն արգելք առնելով զկեսար, ուզեց վնաք ան սպաննել. բարեկամները մէջ մտան, ու ա- ղաչանքով հազիւ թէ Սիլլայի բարկութիւնը հան- գարտեցուցին. բայց Սիլլա գուշակելով մը "Ան- պիտի մարդուն կենացը խնայեցի, ըսաւ, որ օր մը հասարակապետութիւնը պիտի կործանէ ,, :

Քաղաքական պաշտամանց և զինուորական ա- րուեստի մէջ նշանաւոր եղաւ կեսար. զինուցը յաջողութիւնը գուշակել կու տային թէ ատենօք մեծ մարդ պիտի ըլլայ : Բայց ինքը բաղդին ձեռն- տուութեամբը ոչ երբեք գոհ կըլլար. մեծին Ա- ղեքսանդրի արձանը տեսաւ օր մը, սկսաւ լալ. "Ափսոս, ըսաւ, որչափ ընդունայն ժամանակս կանցընեմ, մինչդեռ Աղեքսանդր իմ տարիքս ու- նեցած ժամանակը բոլոր աշխարհքի տիրեց ,, :

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 07:00 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ազատութիւն սիրող հռովմայեցիք չէին կրնար ուրախանալ կեսարու յաղթութեանցը վրայ. ա-նոր փառասիրութիւնը զնոնք կը սասանեցնէր. կը վախնային որ չըլլայ թէ մէկու մը գերի ըլլայ Հռոմ, բոլոր սիրելեաց դշնոյն իր աննկուն հա-ստատակամութեամբը: Իսկ կեսար թէ հայրե-նեաց և թէ անձին սիրով վառուած, կը տեսնէր թէ հաստատակամութիւնը պիտի չկարենայ դի-մանալ՝ ինչուան որ տեսչութեան կերպը չփո-խուի. ինքնակալութիւնը միակ դարման կը տե-սէր աս բանիս: Ուստի կիկերոնի և կատոնի պես հաստատակամութեան նախանձախնդիր մարդի-կը Հռոմէն հեռացուց. իսկ ուրիշ հռովմայեցիքը զբաղեցնելու համար՝ զինուականաց մեծամեծ պաշտօններ սկսաւ տալ. և հաստատակ ժողովուրդը հետ առած՝ ատիկա անդին պատերազմով կար-չուէր, և միշտ յաղթութեամբ կը պայծառանար:

Բայց հաստատակամութիւնք չէին դադրեր խ-րեն դէմ զինուելէն. ամէն ջանք կընէին ան ուժը խորտակելու որ զնոնք կահավեկէր: Առ երես իրեն խորհրդոյը հաւնիլ ցցուցին: Սկիպա առաջ կեսար, փառասիրութիւնը խոչընդոտ զինքը. Ան-տոնիոսի՝ իրեն խորհրդակցին ձեռքովն՝ արքայա-կան պատիւ ուզեց. անոր փոխարէն զանազան բա-րիք կը խոստանայր հայրենեաց: Ժողովուրդն ար-դէն կեսարու կողմը, հրամայեց որ ծերակոյտը ժողվուի, ու հանդիսով ինքնակալ օծեն ան մարդն որ միայն արժանաւոր էր այսպիսի փառաւոր ա-նուան: Բրուտոս, Կասիոս, Կիմբրոս, Տոլապելլա և ուրիշ կեսարու սիրելիմք՝ ծերակուտի տեղը գնացին: Կեսար ալ վրայ հասաւ. իրենց խոռո-վութիւնն ու տմբոխիլը տեսնելով՝ պատճառն ու-զեց իմանալ. "Ի՞նչ կուզէք" ըսաւ. "Քու մահդ" պատասխանեցին իրեն դաւակիցքը, ու

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 07:00 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

զարկին սպաննեցին : Աստիկով մեռաւ կեսարը , որ իր արդեանցը համար Թերևս լաւագոյն քաղաքի մը արժանաւոր էր :

Կեսարս Յիշատակարանները . — Երբոր կեսար գալիա գնաց պատերազմելու , սովորութիւն ունէր որ ամէն օրուան եղած դէպքերը կը նշանակէր : Աստիկով ձեւացան իր Յիշատակարանները , որոնց եօթը գիրքը գաղղիացւոց կամ կելտաց դէմ եղած պատերազմներուն կը վերաբերին , երկուքն ալ քաղաքական պատերազմաց : Իրմէն առաջ ալ կար տարեգիրք գրելու սովորութիւնը , ինչպէս վերը յիշատակեցինք , եւքէ եկող պատմչաց նիւթ պատրաստելու համար . բայց կեսար ատոնց կարգէն չէ , վասն զի իրեն հանճարոյն ալ անոնցմէ շատ վեր է : Իր առ գիրքն՝ ամէն ազգաց մատենադրութեանը մէջ գանուած հրաշալի յօրինուածոց մէկը կը սեպուի արժանապէս . պատմութիւն մըն է՝ կատարեալ իրեն տեսակին մէջ : Երբոր առ Յիշատակարանները հրատարակեց կեսար , ամէն հաւմայեցիք զարմացան իրեն հանճարին վրայ . անոնք ալ՝ որոնք իբրև քաղաքավար և զօրագլուխ կատէին զինքը , իբրև մատենագիր սկսան սիրել : Ինքն իսկ Կիկերոն կը զուրցէր . “ Յիշատակարանաց գիրքը գերազանց մատենագրութիւն մըն է : Պարզ ոճով , լի վայելչութեամբ , ամէն ընդունայն պերճութիւններէ Թօթափած . գեղեցկութիւն մը առանց զարդարանքի : Փուճ աշխատանք է թէ որ մէկն ուզենայ կեսարու համառօտ գրուածքն ընդլայնել . անոր գեղեցկութիւնը սիտի խանգարէ . վասն զի պատմութեան մը գլխաւոր հանգամանքն են ընտիր և լուսաւոր համառօտութիւնը ,, : Պոսիւէ ալ այնքայորդւոյն գատախարակութեանը վրայ գրած Թղթին մէջ “ Գաղղիոյ Թագաժառանգը , կըսէ , կը զարմանայ կեսարու վրայ . վասն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 07:01 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

զի գերազանց մարդ մը կը տեսնէ զինքը թէ՛ի գու-
ծել և թէ՛ի գրել. անանկ մարդ մը կը սեպէ,
ուսկից միայն արժան է պատերազմի արուեստը
սորվիլ ,, : Եւ յիրաւի. ոչ միայն արքայորդին,
հապա նաև Գաղղիոյ երկու երևելի կայսերքն ալ
Հենրիկոս Դ և մեծն Նափոլէոն մտադիւրութիւ
կը կարդային Կեսարու Յիշատակարանաց գիրքը:

Լսենք թէ ինչ գատաստան կընէ վրան մեզի ժա-
մանակակից անուանի պատմագիրն Յովհաննէս
Միւլլեր. ,, Ես ալ կխմանամ, կըսէ, թէ ինչպէս
Կեսար կըստիպէ զիս որ Տակիտոսէն վեր սե-
պեմ զինքը. Կեսարէն աւելի ճարտարուեստու
և ընտիր լեզուով պատմուիլն մը գրելը անկա-
րելի է: Անանկ ճշդութիւն և միայն հարկաւոր
բաներըը զուլցելու սովորութիւն ունի՝ որ մէկ
բառ մը ընդունայն տեղ չի գործածեր: Ինքը տե-
րութեան մարդ է, բայց գրուածքն առանց կրքի:
Տակիտոս խմաստասէր է, ճարտարախօս և մարդ-
կութեան նախանձայոյզ բարեկամ. և թէ որ կու-
րծքին իրեն վստահանամ, շատ հեռուն կրնայ զիս
տանել. բայց Կեսարու հետ ատ վախը չունիմ. ա-
նանկ յատկութիւններ ունի որ յամենայնի կը ճըշ-
մարտէ Տակիտոսի իրեն վրայ զուլցած խօսքը թէ
,, Աստուածայինն Յուլիոս, նա է մեծ քան զա-
մենայն մատենագիրս ,, : —Կեսարու վրայ ատ գո-
վեստները զուլցողն անանկ մարդ մըն է ուր դըպ-
րութեանց պատմութեանը մէջ նշանաւոր, և կըլ-
ցեր է հին պատմագրաց առաջնորդութեամբն ա-
նոնց արժանի խմբագրութիւն և չարունակութիւն
մը ընել:

,Կեսար Ճարտարախօս.— Դեռ քանըմէկ տարուան
երիտասարդ էր Կեսար, երբոր հռետորութեան
ձեռք զարնելով կնկոս Տոլապելլա անուանով մէկը
հզօր բանիւք ամբաստանեց. ,, Այն օրուընէ, կըսէ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 07:18 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Սուետոնիոս, այնչափ մեծարոյ եղաւ կեսարու ա-
նունն որ աստեղական հռետորաց գլխաւորները
մեկը սեպեցին զինքը ,, : Բդեշխ եղեր էր Տրա-
պեզիա, և իր ճարտասխօսութեամբը շատ անգամ
յաղթանակի արժանացած. ուստի երկուասարդ
աստեղախօսէ մը յաղթուիլն իրեն նախատինք սե-
պելով միտքը դրաւ վրէժ խնդրելու: Տեսաւ կե-
սար թէ գժուարին պիտի ըլլայ իրեն հռոմ քնա-
կիլը, այնպիսի անողոք և կարող թշնամի մը ունե-
նալէն եառքը, հարկ սեպեց քիչ մը աստեղուան
համար հոդոս քաշուիլ: Բայց գաշտնը Տրա-
պեզիայի սիրտը ձգեց. որովհետև իր ճառերը հրա-
տարակելով ամէն արդարատիրաց սիրտը շահե-
ցաւ, ու Տրապեզիայի ոխութիւնը ակարացուց.
որով տարիէ մը եառքը կրցաւ համարձակ հռոմ
դառնալ: Մէկէն Լուկուլլոսի առջևն ելաւ կե-
սար, ուզեց Յունաց ջատագով ըլլալ ընդդէմ
Պնտոսիոսի. ճառ մըն ալ դրեց ասնիւթիս նկատ-
մամբ, որուն միայն քանի մը տունչ մնայ հա-
տուածները ձեռուընիս հասան: Ասիանական
ճառ մըն ալ շարադրեց իրեն հօրքրոջը Յուլիայի
վրայ. ուրիշ մըն ալ բիւթանացւոց վրայ, որոնց եր-
կուքէն ալ կարևոր հատուածներ հասած են մեզի:

Հիներուն ուրիշ այլևայլ ճառեր ալ կաւանդեն
կեսարու անուամբը. բայց անոնց մէջ ամենէն ա-
ւելի հռչակաւորը կատոնի դէմ գրածն է: — Եր-
բոր կատոն հռոմայեցւոց պետութեան ախոյեանը
և գլխաւոր նեցուկն ինքզինքը սպաննեց, կիկերոն՝
անոր մեծ և սիրելի բարեկամը գովեստ մը շինեց
վրան ու հռովմայեցւոց առջևը կարդաց: Կեսա-
րու համար անկէ աւելի մեծ նախատինք չէր կըր-
նար ըլլալ. հարկ էր որ ինքզինքն արդարացընելու:
Բայց իր խօսքերուն ամէն ուժովն ալ չկրցաւ ա-
ւելի ընել զկատոն:

Generated on 2015-03-17 07:19 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

կեսարու ճարպիտհօսական ոճը. – Կիկերոն՝ ինչպէս կեսարու յիշատակարաններէն կը տեսնուի, սահմանէ անոր ճարտասիսօսութիւնն անաչառութեամբ կը գովէ ու կը փառաւորէ: Կուինտիլիանոս ալ "թէ որ կեսար, կըսէ, միայն ճարտասիսօսական հրահանգաց գբաղէր՝ Կիկերոն իրեն արժանաւոր նախանձորդը պիտի ունենար: Այնչափ ուժ և կրակ ունէր իր ոճը, որ ինչպէս պատերազմելուն՝ սահմանալ իսօսելուն սահեն միշտ յաղթող պիտի ըլլար": Փրոնտոն կեսարու ճարտասիսօսութիւնն արհամարհանքով կը կոչէ. և իր աշակերտացն անոր ճառերը կարգացընել կուտար, որոնք մեծ տպաւորութիւն ըրեր էին Մարկոս Աւրելիոս կայսեր սրտին վրայ, ինչպէս ինքն սա Փրոնտոն գրած նամակներուն մէկուն մէջ կը խոստովանի:

ԳԼՈՒԽ ԺԵ.

ՍԱԼՈՒՍՏԻՈՍ ԵՒ Կ. ՆԵՊՈՍ

Սալուստիոսի վարքը. – Հնոց գործոցը Սալուստիոսի վրայ. – Սալուստիոսի գրուածքները. – Սալուստիոսի ոճը. – Կոռնելիոս Նեպոս. – Վարք պատմագրաց նամանաւոր:

Սալուստիոսի վարքը. – Գայիոս Սալուստիոս Կրիսպոս՝ սահմնացոց Ամիրենա քաղաքը ծնաւ, Քրիստոսէ 86 տարի առաջ: Թէպէտ հասարակ տոհմէ էր Սալուստիոս, բայց մանկութեան հասակէն դասախարակութիւնը Հռովմայ մէջ առնելով՝ քիչ առենէն քաղաքական պաշտամունց մէջ սկսաւ մտնել: Քառնըեօղը տարուան համարակալ ա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 07:19 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նուաննեցաւ, և իրեք տարին հաքը տրիբուն ժո-
ղովրդեան: Ան պաշտաման մէջ էր երբոր կզո-
դիոսի մահուընէն հաքը խառնալանձ ամբոխը Մի-
լոնի և կիկերոնի դէմ գլդռեց: Բայց երբոր ա-
նոնք յայլեցին, Սալուստիոս իր պաշտամանէն
վռընտուեցաւ, ու վրան այլևայլ ամբաստանու-
թիւնք եղան: Երկու տարի ատանձնացաւ Սալուս-
տիոս, և ան հանգստեան ժամանակները գրեց իր
կոփլինեան պատերազմին պատմութիւնը:

Կեսար երբոր փարսալեայ յաղթութիւնն ստա-
ցաւ, նորէն առաջ քաշեց զՍալուստիոս, համա-
րակալ ու հաքը պրետոր ըլլաւ զինքը. և երբոր
Ցովպասյ դէմ պատերազմի գնաց, զՍալուստիոս
բդեշխ ու Լիբիոյ քալաքապետ անուանեց. և հոն
Ափրիկէի մէջ շարադրեց իրեն Յուգուրնեան պատ-
մութիւնը, ամէն փոյթ ունենալով ճշմարտապա-
տում սուտգութեանը:

Ափրիկէի ճոխութեամբը փառասորուած և
հարստացած՝ նորէն Հռոմ դարձաւ Սալուստիոս,
ու կուիրինեան բլրոց վրայ փառաւոր ալքունիք
մը չինեց իրեն գեղեցիկ պարտէզներով և զարմա-
նալի արուեստով: Ա՛ս պալատն հաքէն կայսերաց
բնակութիւն եղաւ: Հոն ամենազգի զեղխութեան
և հաճոյից մէջ անցուց Սալուստիոս իր կեանքը:
Ցիսունըմէկ տարուան էր երբոր մեռաւ, 30 տարի
Քրիստոսէ առաջ: Հռովմէական պատմութիւն
մը ակսեր էր շարադրել. բայց չկրնալով լմնը-
ցընել, միայն վերը յիշատակուած երկու գլքերը
թողուց:

Հնոց դպրոցականը Սալոպիոսի վրայ. – Զանազան
կարծիք և գատաստան ունեցեր են հինք Սալուս-
տիոսի մտաւորական ոճին վրայ: Իրեն ժամա-
նակակիցներէն ոմանք, որոնք հեռը բարեկամու-
թեամբ ալ էին, ինչպէս կեսար և Պոլլիոն, ծափ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 07:19 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Generated on 2015-03-17 07:19 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

խանգարիչ կը սեպէին : Կուբինաիլեանոս կը յիշատակէ Թէ վրան վերատեսութիւն մը չիներ էին այսպիսի իմաստով Թէ

Բաւից նախնոյն գոս կատոնի գժնեայ գոլ,
Յուգուբթական, կրնապէ, վնպայն յօրինող :

Իսկ ընդհակառակն Սենեկա՝ Թուկիդիդեսի հետ կը բաղդատէ զՍալուստիոս, և առաջնութեան պարծանքը լատին պատմագրին տալով, կը յաւելու Թէ " Ա խնդրոյս նկատմամբ տարբեր կարծեաց տէր էր Լիւիոս, և ծաղր կընէր զՍալուստիոս, որ ուզեր է Թուկիդիդեայ նմանիլ. — չէ Թէ Թուկիդիդեայ վրայ մեծ համարմունք մը ունենալուն համար, կըսէ Սենեկա, այլ վախնալով որ չըլլայ Թէ քան զինքը նախապատիւ սեպեն զՍալուստիոս ,, : Տակիտոս՝ հռովմէական պատմութեց ամենէն աւելի փառաւոր գրիչ կը համարի զՍալուստիոս. Մարախաղէս՝ ամէն պատմագրաց մէջ առջինը կը սեպէ. Կուինտիլիանոս ալ անոր համառօտախօս ոճին վրայ կըսքանչանայ :

Սալուստիոսի գրուածքները. — Սալուստիոսի առաջին երկասիրութիւնն է, ինչպէս առաջ ալ յիշատակեցինք, ան գաւառականութեան պատմութիւնն ուսակից Կիկերոն փրկեց զՀռոմ : Ա գործոյս ամբողջութեանը համար շատ բան կը պակսի մէջը : Որոշ կերպով մը չըսեր պատմիչը Թէ ինչ էր կատիլինեայ փափաքը, և Թէ ինչպէս կրցաւ սոսկական մարդ մը այնչափ կուսակիցք ժողվելու քաղաքացւոց վրայ ահաւոր սարսափ մը ձգելու : Ա բաներս յայտնի չբացատրելը՝ մեծ Թերութիւն կը սեպուի Սալուստեայ. որովհետև պատմութեան մը ամբողջութիւնը, և մանաւանդ նախընթաց և յարակից հանգամանաց տեղեկութիւնք՝

անհրաժեշտ հարկաւոր է եղածը լաւ ըմբռնելու համար :

Բայց Յունգուրթեան պատերազմին պատմութիւնը անհամեմատ վեր է քան զկատմիլնականը. ատոր մէջ մատենագրին միտքն աւելի ազատ և կրից գերութենէ զերծ է : Սալուստիոս անցած դարուս մը պատմութիւնը կընէր. վասն զի վաթսունն տարիէն աւելի էր քանի որ նումիդացի գիւցազնը Հռովմայ գէմ գլուխ և սիրտ վերուցեր էր, Յունգուրթայ, Բոկքոսի, Մարիոսի և Սիլլայի անուանքը գրեթէ միայն մտքի մէջ մնացեր էին : Սալուստիոս առ երկասիրութեանն ձեռք զարնելէն առաջ Մասսինիսայի, Միկիբսեայ և Յեմպսալայ Բ ի ժողված ձեռագիրքն աչքէ անցուց. նումիդացւոց հին ազանդութիւնքը քննեց, աեսաւ ան ամէն տեղերն ուր որ հռովմէական բանակը յաջողութիւն կամ ձախորդութիւն ունեցեր էր : Կառավարութիւններն ու տեղագրականն անանկ ճիշդ է, որ անկէց աւելին ոչ ոք կը պահանջէ : Ուսոի ամանք այնչափ կրնայ անհանգամանաց Սալուստեայ առ երկասիրութեան վրայ, որ հին մատենագրութենէ մնացած պատմական գրոց մէջ ամէնէն աւելի գերազանց կը համարին [1] :

Իսկ իրեն հռովմէական պատմութենէն միայն քանի մը հատուածք մնացած են. ուստի և վրան որոշ դատաստան մը չենք կրնար ընել : Հինգ գիրք էր ատ գործը, և ամէն մէկը բաւական ընդարձակութեամբ :

Սալուստիոսի ուրիշ երկու թուղթ կամ յի-

1 Սալուստիոսի առ երկու գրուածքը, Կապիտանեան ու Յունգուրթեան հայ թարգմանութեամբ ալ պատճէն է վէնետիկ 1856 աշխատութեամբ Հ. Աբրահամ վ. Ճարեան :

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 07:20 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ընտանեկան ալ կրնծայուն, որոնց համար կըսեն թէ առ ակռաւ գրած ըլլայ, մեկը փարատելու ուզատեւրացմէն առաջ, միւսն ալ Ալեքսանդրիոյ յաղթութենէն ետքը։ Ասոնց մէջ կառաջարկէ Աստուածոյս իր մտածած հնարքները՝ պետութեան վերանորոգութեանը համար. կաղաչէ կեսարուն՝ որ զՀռոմ փրկէ իր կործանմանէն, հաւատարութիւն հաստատէ ժողովրդոց մէջ, ազնուականութեան և բազկի ազդեցութիւնը խորտակելով։ Բայց բանաձեւք առ թղթոց հարազատութեանը վրայ կը տարակուսին։

Սալոպիոսի մասը.— Առաջ Սալուստեայ թէ թերութիւնքն և թէ կատարելութիւնքը յիշատակեցինք. բայց ինչպէս տեսանք, քիչ բան են իր թերութիւնքը կատարելութեանցը համեմատութեամբ. ուստի և մեզի կերևնայ թէ անոնք գատուորք են անոնք՝ որ զԱստուածոյս չափէն աւելի վար կը դասնեն լեզուին քանի մը պակասութեանցը համար, որ ժերևս աւելի ժամանակին թերութիւնքն են, ուսկից խոյս տալը գրեթէ անկարելի է։ Ի՛նչ ազնիւ գաղափարներ ունի առաքինութեանց վրայ, որոնք ինչպէս վարդքն կը գուշակուի, իր տրտմէն հեռու էին. կարգա երկու գրոցն ալ յառաջաբան նախաշուխլքը. և թէպէտ աեղւոյն յարմար չտեսնէս ան խորհրդածութիւնքը, բայց գրողին հանճարին ու խելամտութեանը վրայ կը զարմանաս։ Չամառօտ գիրք մը, բայց մէջը թէ ճարտասանութիւն, թէ իմաստասիրութիւն և թէ հոգեկան արուեստ կը նկատես։

Կոռնէլիոս Նեպոս.— Իտալիոյ վերջնա քաղաքէն կամ անոր ստհմանները էր Նեպոս, որուն վարքն անյայտ, և անունը իր գրուածքովը փառաւորուած է։ Ասիկայ է վարդ երեսնէն որոնց ըստուած գիրքը։ Թէ որ աս երկասիրութիւնս է ի-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 07:20 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

լեն մասայն և հանճարին ներկայացուցիչ պատ-
կերը, արժան է որ խոստովանինք Թէ Նեպոսի և
Սալուստեայ ու կեսարու մէջ մեծ և գրեթէ ան-
հուն տարբերութիւն մը կայ: Բայց հաւանական
կերևնայ ան կարծիքը Թէ Ձեռուընիս եղածը հա-
մառօտութիւն մը ըլլայ սկզբնագրին. և կաւան-
դեն Թէ աս բանս ընողը՝ Թէոդոսի Թագաւորու-
Թեան ժամանակ Եմիլիոս Պրոբոս անունով մէկն
եղած ըլլայ: Բայց որովհետև լեզուին մէջ չոր-
րորդ դարու խանգարումը չերևնար, ուստի և կը
Թուի Թէ Պրոբոս այնչափ չէ այլայլած Նեպոսի
սկզբնագիրը, այլ միայն համառօտած և շատ բան
դուրս ձգած: Անկէց է որ պատմութիւնն ընդ-
հանրապէս ցամաքութիւն մը առած է:

Նեպոսի գրոցը մէջ երկու վարք կայ, կատոնի
երիցուն և Ատտիկոսի, որոնք կերևնայ Թէ ամ-
բողջ ըլլան. որովհետև ուրիշներէն մեծ տարբե-
րութիւն ունին. մանաւանդ Ատտիկոսի վարքը,
որուն մէջ Ներկայն արժանաւոր կերևնայ Սա-
լուստեայ և կեսարու: Սակայն Նեպոսի բանա-
գատութիւնը (critique) քիչ է. և շատ անգամ
անանկ աղբիւրներու կը հետևի որոնք պատմագրի
մը ամենահարկաւոր տուեգախօսութիւնը չունին:

Իր գրուածքը՝ վարք արանց անուանեալ կոչեր է
Նեպոս: Պրոբոս եղաւ որ վարք էրհելի ջրավարայ
անուանեց: Հեղինակին առջի անունը դնելուն
պատճառն ան էր որ ոչ միայն զօրավարաց, հա-
պա նաև շատ անուանի մարդկանց պատմութիւնը
ըրեր էր, պատերազմոլաց, պաշտօնատեարց, ի-
մաստասիրաց, մատենագրաց և այլոց:

Ակն զատ Գիրք օրինակաց ըսուած երկասիրու-
Թիւն մըն ալ ուներ, և իրեք մատեանք Տուբէրո-
Նէանց, զորոնք ինքը ժամանակագրութիւն կոչեց: Բայց
ատոնք բոլորովին կորուսած են: Վարուցը վերջ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 07:20 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նշանաւոր բան մը չունինք աւանդելու, բայց միայն թէ կիկերոնի, Ատտիկոսի և կատուլլեայ բարեկամն էր, և ինչուան Ակտիոնի պատերազմը կեն-դանի [1]:

ԳԼՈՒԽ ԺԶ.

ՏԻՏՈՍ ԼԻՒԻՈՍ

Տիտոսի Լիւիոսի վարքը. — Հռովմէական պատմութիւնը. — Լիւիոսի մատենագրական ոճին գեղեցկութիւնը. — Իրեն ժամանակակից ուրիշ լատին պատմագիրք:

Տիտոսի Լիւիոսի վարքը. — Տիտոս Լիւիոս՝ բուն օգոստեան ընտանեաց գարուն կը վերաբերի, ու կիկերոնէ, կեսարէ, Սալուստիոսէ և Կուռնեղիոս Նեպոսէ եաքն է ժամանակաւ: — Իտալիոյ Պատաւիոն (Պատուա) քաղաքը ծնաւ Տիտոս Լիւիոս Քրիստոսէ 59 տարի և կեսարու մահուընէն տասնըհինգ տարի առաջ: Քանըզօրս տարուան հասակին հռոմ գալով հոն երկար տաեն կեցաւ, ու Օգոստոսի արքունեացը մէջ եղած անուանի մարդկանց պաշտպանութեամբը ինչուան կայսերական բարեկամ եղաւ. և կատանդեն թէ իրեն յանձնած ըլլայ կլոդիոս որդւոյն դաստիարակութիւնը: Ոչ բաղդի և ոչ իշխանութեանց փափաքող էր Լիւիոս. կեսարու մտերմութիւնը միայն ան

1 Նեպոսի վարք արտաց անուանեաց գիրքը հայկական ընտրգմանութեամբ ծանօթացուց պզիկ վէննայի Մխիթարեան ուխտին հաբտան Հ. Ղևոնդ Վ. Յովհաննէսեանց:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 07:20 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

բանին գործածեց որ հրաման ասյ իւրեն Հռովմայ հին մատենագրականները քննելու, որպէս զի շարադրել ուզած պատմագրութեան կարևորնիւթերը ժողվէ : Իր բոլոր կեանքն աս բանիս նուիրեց Լիւիոս. և քրտանցն և աշխատութեանց արժանաւոր երկասիրութիւն մը հրատարակեց, — Հռովմայ ընդհանուր պատմութիւնը, — անոր հիմնարկութենէն ինչուան գերմանացւոց պատերազմը և Դրուսոսի մահը : Ետևէ ետև գիրք գիրք կը հրատարակէր իր աս մատեանը. և քիչ ատենուան մէջ անմահական անուն ստացաւ, ու ժամանակին մատենագրացը մէջ գերազոյն տեղուեցաւ : Պլինիոս կրտսերն կը պատմէ թէ Սպանիոյ Գադիքս (Գատիչէ) քաղքէն մէկն եկաւ Հռոմ, միայն զինքը տեսնելու համար. ու տեսնելէն ետքը մէկէն նուիրեն իր հայրենիքը դարձաւ : Սուրբն Հերոնիմոս ալ կաւանդէ թէ շատ կերպով և սպանիացիք Հռոմ կու գային, ու հռչակաւոր քաղաքը մտնելով բուն քաղաքը կը փնտռէին (ըզԼիւիոս) :

Օգոստեայ մեռնելէն ետքը Լիւիոս նուիրեն իր հայրենիքը Պատաւիոն դարձաւ, և իր կենաց վերջի չորս տարիները հոն անցընելով մեռաւ 76 կամ 77 տարեկան, Քրիստոսէ 18 տարի ետքը : Լիւիոսի գրուածքը թէ որ քննենք, պարզ սրտի և ազնիւ բնաւորութեան տէր մարդ մը կը գտնենք զինքը : Ոճրոտը պատմութիւնն ալ աս կարծիքը կը հաստատէ. նոյն իսկ Օգոստեայ արքունեացը մէջ իրեն անկեղծութիւնը չկորսընցուց. առանց վախնալու գովեց զՊոմպէոս, զՔիկերոն և զՏատոն :

Լիւիոսի հռովմէական պատմութիւնը կամ իրեն Տիտոս Լիւիոսիանը, ինչպէս ինքը կը կոչէր, հարիւր քառ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 07:21 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

սուն գիրք բաժնուած էր, Հերոդոտեայ երկասիրութենէն տասուերկու համ տասնըհինգ անգամ ընդարձակ: Առաջին տասը գիրքն ամբողջ ունինք, ու քսանեւմոտդ գրքէն ինչուան քառասունը. միացածներէն կամ բոլորովին կորսուած, և կամ միայն քանի մը հատուած ձեռագրնիս հասած են:

Ոմանք կըսեն թէ Լիւիոս իր սա գրուածքը շարադրելու ատենն ուրիշ նպատակ ունեցած չըլլայ, բայց միայն իր ընտիր ոճը յայտնել. ուստի և գժուարութենէն կը քաշէն իրմէն պատմուածները հաւատալու: Բայց իրեն պատմագրութենը մտադրութեամբ քննողը՝ այսպիսի կարծեաց մը անհաւատարմութենը յայտնի կը տեսնէ: Փառաւոր մտաւնադարան մըն է իր սա երկասիրութենիը, յորում ընտիր ոճով յիշատակուած կը տեսնենք ամէն հին աւանդութենքը, քերթողաց պատմած առասպելքը, տարեգիրք շարադրողաց հատուածքը, և այլն: Այսչափ զանազան մտաւնադրաց գրքերուն խմբագրութենիը զարմանք չէ որ պատմութեանց տարբերութեանը պատճառ ըլլայ: Բայց Լիւիոս իր ամէն ջանքը բաներեցուցած է իսկական ճշմարտութենի աւանդելու: Իրաւ է որ իր թերութենքն ունի. բայց բարեմտանութեանց յաճախութենիը մտագիւրութենը աչք գոցել կու տան այնպիսի բաները չտեսնելու: Հայրենասէր ոգւով պատմիչ մը ըլլալով՝ հին հռոմայեցւոց նուաստութենն պատճառող դէպքերը չտեսնելու կամ չգիտնալու կը զայրնէ: Օրինակով մը զուրցածնիս հաւաստարմացընելու համար, ուրիշ պատմչաց խօսքերէն յայտնի կեղծիներ թէ Պորսենա և եսրուրացիք մուտն 'ի Հռոմ. Տակիտոս և Պլինիոս ինչուան դաշտնց գրերը կը յիշատակեն: Լիւիոս ան ամէն անցքերն անհա-

Generated on 2015-03-17 07:21 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ատարիմ կը սեպէ, իսկ Մուկիոսի Սկեւռոլայ ապրելեանը կը հաւատայ: Իրաս կարծէ դուրս ազգասիրութեանը համար է որ երբեմն անհաւատալի բաներ ալ կաւանդէ. բաւական է որ հռոմայեցոց փառացն ու պատուոյն նպաստաւոր դէպքեր ըլլան:

Լիւիոսի մոքենագրական գեղեցկութիւնը. — Կուինտիլիանոս՝ Լիւիոսի վրայ խօսելու առնը, գրեթէ կատարեալ ներբող մը կընէ. "Հերոդոտեայ, կըսէ, ծանր պիտի չգայ՝ եթէ Տիտոսի Լիւիոսի հետ զինքը բաղդատենք. որուն պատմական ոճը պարզ, լուսաւոր և հաճոյական է. իսկ մէջի եղած ատենաբանութեանց գերազանցութեանը խօսք չկայ. ամենայն ինչ թէ ժամանակին համեմատացը և թէ մարդկանց յարմար: Անհամեմատ է Լիւիոս պատմաշարժ և փափուկ իմաստներ բացատրելու մէջ. համառօտ ըսեմ, իրմէն աւելի կարեկան (pathétique) պատմիչ չկայ":—"Կուինտիլիանոսի աս գովեստը, կըսէ Նիզար գաղղիացին [1], Լիւիոսի գրոց մէջ գտնուած միայն ատենախօսութեանց համար չէ, այլ նաև իրեն պատմագրութեան այլևայլ կտորներուն: Լիւիոսի ըզգայուն սիրտն է որ կարծես թէ զինքը ժամանակակից ըլեր է ան դէպքերուն զոր կը պատմէ. կուրախանայ Հռոմայեցոց յաղթութեանցը վրայ. իսկ կրած վշտերուն համար կը ցաւի": Լիւիոս ան պատմագրաց դասէն է՝ որոնց համար իրաւամբ ըսած է Կուինտիլիանոս թէ "պատմագիրը պիտի ջանայ հաճոյ ըլլալ ընթերցողաց՝ ինչպէս ճարտասրախօս մը իր ունկնդրացը":

1 M. Nisard, որ շատ հին հռոմայեցի մատենագրաց երկասիրութիւնքն ընդհ. նայգմանութեամբ և ծանրութեամբ հրատարակած է:

Generated on 2015-03-17 07:21 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

Նոյն ինքն Կոնինակիանոս կաւանդէ թէ Լի-
եիոս նամակ մըն ալ շարադրած ըլլայ դաստիա-
րակութեան վրայ, յորում տղայոց ուսման և
հրահանգացը մէջ ինչ կարգ և ոճ բռնելուն վրայ
կը խօսէր : Ափսոս որ այսպիսի ծանրակշիռ գրու-
թիւն մը կորսուելով մեր ձեռքը չհասաւ : Խրատ
կու տար վարժապետաց որ ընակը գրուելիւնք
ատն իրենց աշակերտացը ձեռք, և չանան անոնց
հետևողութեամբը կամ նմանութեամբ շարա-
դրել : Կը պատմէր թէ վարժապետին մէկը երբոր
կը տեսնէր որ իր աշակերտեակքը պարզ և ամ-
փոփ խմատներով բան մը շարադրեր են, սրհա-
մարհելով վար կը զարնէր զիրենք . իսկ երբոր
խրթին և անիմանալի ոճով մը գրէին, կը գովէր և
կը վարձատրէր . “ Ապրիք, կըսէր, հիմա իմացայ
ձեր յառաջադիմութիւնը . այնպիսի բան մը շա-
րադրեր էք որ ես ալ չեմ հասկընար ,, :

Լի-իոսի ժամանակակից պատմագիր . — Տրոգոս Պոմ-
պէոս . — Լիւիոսի ժամանակ կը ծաղկէր նաև Տրո-
գոս Պոմպէոս, որ թէպէտ իբրև պատմագիր բա-
ւական համբաւ ունի, սակայն իբրև մատենագիր
շատ ստորև է քան զԼիւիոս : Կեղտաց աշխարհէն
էր Տրոգոս, բայց իրեն ընտանիքը՝ հռովմէական
քաղաքակրթութեան պատիւն ունէին . և կրսեն թէ
Հռովմայ մէջ շարադրեց իր պատմութիւնը, որ քառ-
սունըչորս գիրք բաժնուած և փիլիպպեան կը կո-
չուէր . վասն զի մէջը մակեդոնացւոց թագաւո-
րութեան հաստատութիւնը, մեծնալը և խնալը
կըստորագրէր՝ Աղեքսանդրի հօրը Փիլիպպեայ
օրերէն՝ մինչև Մակեդոնիոյ հռովմէական տէրու-
թեան մարզ մը սեպուիլը : Սակայն մէջն այլևայլ
պատմական և աշխարհագրական տեղեկութիւնք
ալ կային ան ազգաց վրայ՝ որոնք մակեդոնացւոց
հետ կռուեցան . որով Հերոդոտեայ, Թուկիդի-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 07:21 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

դեայ և քաեննոփմնտաեայ պատմութեանց չարու-
նակութիւնը կընալ սեպուիլ։

ՓՆՆԷՈՓՆԼԼՈ. — Լուկիոսի փեննեատեզլայ անու-
նովը գիրք մը հրատարակուեցաւ, հին հռոմայ-
եցւոց քրմապետական և իշխանական տեսչու-
թեանց օրինացը վրայ։ Բայց ասիկայ չորեքտա-
սաներորդ դարու խաբեբայ նոտարացոյ մը եր կա-
սիրութիւն ըլլալը յայտնուեցաւ։ Միայն հնոց
աւանդութեամբը գիտենք թէ փեննեատեզլա՝ տա-
րեգրութեի կամ հռոմայեցւոց ընդհանուր պատ-
մութիւն մը շարադրեր է, և թէ ինքը Լիւիոսի
ժամանակակից է, և իրմէ քանի տարի եաքը վախ-
ճանած։

ՕԳՈՍՏՈՍ ՒԵԱՐ. — Երկու խօսք ալ արժան է որ
Օգոստեայ կեսարու վրայ ընենք։ Վասն զի ինքն
ալ համառօտութիւն կամ խմբագրութիւն մը ը-
րած էր իր ամէն գործոցը, և մէկ քաղաքական
կտակ մը, որուն միայն քանի մը հատուածքը ձե-
ռնըկիս հասած են։ Իր մեռնելէն եաքն ատ գը-
րուածքս ծերակուտին յանձնուեցաւ. անիկայ ալ
պինդէ ատխատակի մը վրայ փորագրել տալով հրա-
մայեց որ չիրմին մէջ ամփոփեն։

Ւյն ամէն քաղաքները որոնք Օգոստեայ ատ-
տուածական պատիւ ընծայելով իրեն տաճարներ
կառուցին, նոյն կտակին ալ օրինակը մէջը կը
դնէին։ Հնագէտք Ւնկիւրիոյ մէջ եղած Օգոս-
տեայ տաճարին մէջէն գտան մեր ունեցած հա-
տուածները լատին սկզբնագրով և յունական
թարգմանութեամբ։

Generated on 2015-03-17 07:22 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ԳԼՈՒԽ ԺԷ.

ԼՈՒԿՐԵՏԻՈՍ ԵՒ ԿԱՏՈՒԼԼՈՍ

Բանասպեղծութեան նորէն ծաղիկը. — Լուկրետիոսի վարդը. — Կատուլլոսի վարդը. — Լուկրետիոսի էրինին. — Կատուլլոսի գրուածքները:

Բանասպեղծութեան նորէն ծաղիկը. — Մինչդեռ Կիկերոն, Կեսար, Սալուստիոս Ճարտարիսօսութիւնը, իմաստասիրութիւնն ու պատմութիւնը կը ծաղկեցընէին, ուրիշներ ալ եղան որ չուզեցին տխուր լռութեան մը դատապարտել ան քնարը՝ որ հռովմէական գարուն Թեանց նախնական կեանքը տուեր էր: Երկու հոգի երևցան ան առենները, Լուկրետիոս և Կատուլլոս, որոնք ոչ միայն չանգ ըրին որ լատին քերթուածիւնը յունականին հաւասարիմ արձագանգը կամ պատկերն ըլլայ, հապա նաև իր մանաւոր յատկութիւնն ունենայ:

Լուկրետիոսի վարդը. — Տիտոս Լուկրետիոս Կարոս ծնաւ 'ի Հռոմ, Քրիստոսէ գրեթէ հարիւր տարիի չափ առաջ. որով քանի մը տարի կրտսեր կըլլայ քան զԿիկերոն և զԿեսար, և երիցագոյն քան զՍալուստիոս: Ազնուական անէ և տոհմէ ըլլալով շատ դիւրին էր իրեն քաղաքական պաշտամանց մէջ մտնելը. բայց ուսումնական կենաց հանգըստութիւնն ու սիրելի զբաղմունքը լատագոյն սեպեց: Կատանգեն թէ Աթէնք ալ գնացած ըլլայ ուսմունքը կատարելագործելու համար, և թէ հոն Զենոն անունով epicուրեան իմաստասիրին աշակերտած. և հաւանական կերևնայ թէ ան ա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 07:22 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

աեղն իր Մեմմիոս բարեկամին խնդրանքը չար-
դրել է քերթուվիեն մը՝ եպիկուրեանց վարդա-
պետութիւնը բանաստեղծական լեզուով անոր
բացատրելու դիտաւորութեամբ: Կըսեն թէ Ա-
թենքէն չուտմ դառնալուն ժամանակ յիմարու-
թեամբ հիւանդացած ըլլայ: Բայց անով ալ բա-
նաստեղծութիւնը ձեռքէ չձգած. և թէ յիմա-
րութեան ատակութեանն աեղն ինքզինքը սպան-
նած ըլլայ՝ քաւսոնըչոյս տարուան հասակին մէջ:

Կափո-ւոսի վրթը. – Գայիոս Վալերիոս Կա-
տուլլոս ծնաւ ի Վերոնա, Սալուստեայ ծնած
տարին, Քրիստոսէ 86 տարի առաջ. որով և տաս-
ուերկու տարիի չափ աւելի կրտսեր կըլլայ քան
զնա կրնախոս: Կըսեն թէ հարուստ և տերութեա
մէջ արդիւնք ունեցող մարդու զաւակ էր Կա-
տուլլոս, և թէ կնատր ամէն անգամ որ Վերո-
նայէն կանցնէր, անոր հօրը տունը կիջնար հան-
պիստ առնելու համար: Ինչպէս ուրիշ շատերը,
տանկ ալ Կատուլլոս չուտմ եկաւ իր ուսմունքը
կատարելագործելու. և կատանգէն թէ հոն ինք-
զինքը շուայլ և անառակ կեանքի մը տուեր է:

Ընքերփոփոխք ունեցաւ աեսնելու անաչխարհք-
նեբին՝ ուր նախ ծալկեր են արուեստք և գպրու-
թիւնք. ուստի Գայիոս Մեմմիոս պրետորին հետ,
զոր առաջ ալ յիշատակեցինք, Բիւթանիա գը-
նաց, երկար ատեն կեցաւ ի յունաստան և Ա-
սիա, և հին աշխարհքին բոլոր հռչակաւոր քաղ-
քերը քաւեց. բայց Տրուադայի քով իր եղ-
բայրը կորսնցուց, և ան քանը մեծ ցաւ եղաւ ի-
րեն սրտին: Ամէն ունեցածը չունեցածը ծախեր
էր կատուլլոս իր աս ճանապարհորդութեանը
համար. ուստի աղքատաբար չուտմ դառնալով
հոն իր քառասնամեայ հասակին մէջ մեռաւ: —
Կատուլլոս թէպէտ սուր լեզուով շատին աեղի,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 07:22 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

բայց այլևայլ բարեկամներ ալ ուներ ժամանակին իմաստասիրութեան մէջ. ինչպէս կոտ-նեղիոս Նեպոս, որուն իր գրուածոց մէկ մասն ընծայեց. Կիկերոն՝ որ իր փառասէր և հասուն իմաստութեան ատենն ալ՝ առ աշխոյժ և ազատասիրտ երիտասարդին ընկերութիւնն ախորժելի կը համարէր. ինքը կատուլլոս ալ տեղ մը կը խոստովանի թէ մեծապէս պարտական պէտք է որ ըլլայ Կիկերոնի հանճարին. որով հասկնալի կը լինայ կարծելը թէ Կիկերոն առեղծուածքներն ալ պաշտպանած ըլլայ զինքը:

Լուկրետիոս էրիւրիենը. — Լուկրետիոսի գրքին երկասիրութիւնը Յաղագս բնութեան իրաց (De rerum natura) կրնանք. իմաստասիրական քերթուած մը, յորում Եպիկուրոսի՝ իրեն վարդապետին կարծեացը հետևելով՝ ամէն բանի ըսկիզբ նիւթը կը դնէ, և կուրանայ հոգւոյ գոյութիւնը, հանդերձեալ կեանքն և նախախնամութիւնը. կըսէ թէ աստուածք կան, բայց անանկ աստուածներ որ իրենց թէ չըլլային, անհոգ և անդործ արարածք:

Վէց գիրք բաժնած է Լուկրետիոս իր աս քերթուածին, և ամէն մէկ գիրքը հազար տողէն աւելի կը բովանդակէ: Առջի գրոցը մէջ կը ցցընէ թէ ոչինչէն բան մը չի կրնար գոյանալ, ուստի և բան մը չի կրնար դառնալ յոչնչութիւն. թէ բնութեան մէջ բայ՝ի նիւթէն և տարածութենէն ուրիշ իրական բան չկայ. թէ նիւթը անքաժանելի տարերք ունի. թէ հիւլէից թիւն անսահման է, և տիեզերաց և տարածութեան չափը չկայ:

Երկրորդ գրքին մէջ հիւլէից չարժման և ծութեան վրայ կը խօսի, և այլևայլ էակաց կերպարանաւորութեանը, որունցմով ձևացած կը համարի զաշխարհս. բնութեամբ այլևայլ զանազանու-

թիւնքը կը քննէ թէ՝ի հաստել և թէ յեղծանել, և ան մշտնջենաւոր մանկութիւնն արարածոց՝ ո՞ր ոճն վրայ կը ծիծաղի կրսէ և միշտ պիտի ծիծաղի բնութիւնը։

Երրորդ գրոց մէջ հոգւոյ բնութեան վրայ կը խօսի, և անոր ոչնչութիւնը կը ցցընէ իր խելքովը։

Չորրորդով կը մեկնէ եպիկուրեայց կարծիքը վասն սեռականելեաց և ուրիշ զգայարանաց յատկութեանցը. և մարդուս բանականութեանն ու մտաց վրայ խօսելով, կըսկսի երազոց և կրից էութիւնը բացատրել։

Հինգերորդ գրոց մէջ մարդուս ձակատագիրը կը ցցընէ՝ աչխարհքիս մէջ երևնալու առջի օրուընէն՝ի վեր, և թէ ինչպէս վայրենի գազանաց և ամենազգի թշուառութեանց հետ կը կռուէր. եռքը խօսքը լեզուի, արուեստից և ընկերութեան սկզբնաւորութեանը վրայ կը դարձընէ։

Իակ վերջին գիրքը մետեորախօսութիւն կրնայ սեպուիլ, յորում կը խօսի երկրաշարժութեան վրայ և հրաբղխից, և այլն։ Ջերմուկներէն ելած շոգիներն օդոց մէջ կը տարածուին կրսէ, և երկրիս վրայ մահ և թշուառութիւնք կը սփռեն. և հոն Ամենէքի ժանտամահին ստորագրութիւնը կընէ, Թուկիդիդեայ արձակ պատմութիւնը գեղեցիկ քերթողութեամբ զարդարելով։

Ոմանք կը համարին թէ Լուկրետեայ աս երկասիրութիւնն ուրիշ այլևայլ գրքեր ալ ունէր, կամ գէթ քերթողին մտքին մէջ կար շարադրելու. որովհետև վեցերորդ գիրքն ամենէն աւելի անկատարը կը սեպուի. վերջաբանութիւնը կամ աւարան ալ անյարմար է։ — Եկեղեցւոյ վարդապետներէն շատը, ինչպէս Տերտուղիանոս, Առնոբիոս, Լակտանտիոս և այլք շատ անգամ կը յիշեն զԼուկրետիոս, և իրեն քերթութիւններէն օրինակներ կը բերեն։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2015-03-17 07:23 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Կոռնելիոսի գրուածքները. — Կատուլլոսի յօրինած քերթուլթիւններուն միայն մէկ մասը ձեռնրնիս հասած է. և Աւլոս Գելլէոս կը վկայէ թէ իրեն ժամանակներէն՝ ի վեր անկատար և պակասաւոր էին Կատուլլեայ բանաստեղծական երկասիրութեանց օրինակները: Հռովմայեցի մատենագրաց գրքերը տպագրող բանասիրաց ջանքովէ է որ իրեն քերթուլթիւններէն քիչ մը բան ունինք, և ան քիչը Կատուլլոսի հանճարին և համբաւին արժանաւոր:

Կատուլլոսի գրուածոց մնացորդքը հարիւր տասնըվեց կտոր են, և ամէն մէկուն թէ նիւթը, թէ իմաստներն և թէ երկայնութիւնն իրարմէ շատ կը տարբերին: Ոմանք վիպասանական քերթուլթեանց կարգը կրնան սեպուիլ, ոմանք ալ քնարական, էղեգերգական կամ երգիծանական: Առնց մէջէն ոմանք երկու կամ իրեք տող են, ոմանք ալ ինչուան Վիրգիլեայ գրոց մէկ երգին երկայնութիւնն ունին, ինչպէս Հարսանեկան Պելէոսի և Թետիսայ, որ գիւցազնական մեծավէրջ չափով գրած է. իսկ մէկալ քերթուլթեանց չափը այլևայլ է, և լեսբացի քերթողաց հետևողութեամբ շինուած:

Հնոց պատասխանը Լուկրետիոսի և Կատուլլոսի վրայ. — Կուինտիլիանոս Վիրգիլեայ վրայ խօսելով "քերթող մը չկայ, կըսէ, որ հեռուանց իսկ նմանութիւն ունենայ անոր ոճին հետ. վասն զի Մագերայ և Լուկրետիոսի գրքերը իրաւ է որ արժանի են կարդացուելու, բայց գրուածն ոճ կամ ճարտարախօսութեան մարմինը ձևացընելու յատկութիւնը չունին: Երկուքն ալ մեծավայելուչ ոճ ունին իրենց նիւթին նկատմամբը. բայց մէկուն վսեմութիւնը կը պակսի, միւսին ալ գիւրըմբռնելիութիւնը":: Իսկ ընդհակառակն Որատիոս այնչափ աքանչելի կը համարի Լուկրետեայ քերթո-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 11:41 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

թիւնքը, որ "Իրեն վսեմ երգերը, կըսէ, ան ա-
ռեն պիտի կորսուին՝ երբոր բոլոր երկրիս անհե-
ատանալուն մէկ օր մը մնայ ,, : Վիրգիլիոս ալ ձան-
ցաւ անոր գերազանցութիւնը, երբոր Մշակակա-
նացը մէջ կը զուրցէր (Բ. 493)

" Երանի ուր պատճառաց էից գիտաց գոլ խե-
լամուտ ,
Եւ զարհաւիրս ամենայն և զանողոք ճակատա-
գիր
Եւ զանյագ ահատատուսի շռինդն և չըշուկ առ-
ուան եհար :
Նաև այնմ իսկ երանի որ զգաշտային ծանեաւ
ըզգիս ,
Ըզպան, ըզծեր Շահարիկ և զքոյր հարսուննա
յաւերժական ,, :

Լուկրետիոս առաջին եղաւ ի Հռոմ որ լաւին
լեզուով երգեց Հեսիոդեայ, Փսեւդոփոնուայ,
Եմպեդոկլի և Պարմենիդեայ քնարները. և Թէպէտ
կիկերոն հասարակապետութեան և օրինաց գրու-
յը մէջ իմաստասիրական զննութիւնք ըրեր էր,
բայց ոչ երբէք Լուկրետիոյ պէս խորունկ փիլի-
սոփայութեան տուած ինքզինքը : Սակայն գէշն
ան եղաւ որ Լուկրետիոս ամէն բան իմաստասի-
րութեամբ մեկնել ուզելով կամ կարծելով, այլ
եայլ անտեղի վարդապետութեանց մէջ ընկաւ :

Կատուլլոսի վրայ քիչ մատենագիրք կը խօսին,
Թէպէտև լեզուին քաղցրութեամբը և պարզու-
թեամբ իրեն նմանողներն ունեցաւ : Ովիդիոս հա-
ւատալ պարծանք կընծայէ Մանդուայի և Վերո-
նայի, որովհետև առջինը Վիրգիլեայ, երկրորդն
ալ Կատուլլոսի հայրենիք եղան. " Մանդուա
Վիրգիլեաւ կը պարծենայ, կըսէ, Վերոնա Կա-
տուլլոսիւ ,, : Վասն զի Կատուլլոս հանդերձ իր

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 11:41 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մէական գրականութեան ոսկեղէն դարուն արժանի լեզուով չարադրած է, և հին քերթութիւնը կատարելագործեր. որով և Որատիոսի և Վիրգիլեայ ձամբայ բացաւ՝ իրենց բարձրութեան հասնելու:

ԳԼՈՒԽ ԺԸ.

ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ ՓԵՐԹՈՒԹԻՒՆ ՆՆԻՈՍԻՆ ԻՆՁՈՒԱՆ ՎԻՐԳԻԼ

Բուն վիպասանական փերլուելեան հանգամանքը. — Օգոստեայ ժամանակակից վիպասան փերլոզ:

Բուն վիպասանական փերլուելեան հանգամանքը. — Ընթերցողը գիտէ թէ ինչ էր վիպասանական քերթուելիւնը Նեւիոսի և Ենիոսի գրուելեանց մէջ. թէ ինչպէս երկուքն ալ հատարակ պատմուելիւնը ոտանաւորի վերածեր էին, որով և իրենց քերթուելիւնը կէս վիպասանուելիւն էր և կէս պատմուելիւն: Տեսանք դարձեալ թէ ինչ էր վիպասանականը Յունաց և մանաւանդ Հոմերոսի գրոց մէջ: Իլիականը և Ոդիսականը ձեւացընելու համար հարկ չեղաւ մեծ քերթողահայրը Տրոյեայ ծագման պատմուելիւնը, և կամ Լայերտեայ որդւոյն (Ոդիսեւսի) վարքը կամ կենսագրուելիւնն ընել. — Աքիլլեսի բարկուելիւնն երգեց, և անոր հետևանքը. ահաւասիկ Իլիականը. — Ոդիսեւսի Տրոյեայէն դարձը յիշեալէ, և ձեւացաւ Ոդիսականը: Իրաւ է որ վիպասանական քերթուելիւնը պատմուելիւն է, բայց միանգամայն՝ ի

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 11:41 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

վեր քան զպատմութիւն. քերթողն սահպուած չէ անցեալը կամ ներկայն բուն իրենց գուներեւոյթը նկարագրել և կամ ժամանակագրական պատմութիւն մը ընել: Այլ անանկ բաներ կը պատմէ որ կրնային պատահիլ, առանց խորը մանելու անոնց ստուգութիւնը քննելու համար. մարդոց ծածուկ խորհուրդն ալ կը յայտնէ. շատ անգամ աստուածոց կամքն ալ իր գրչին կը հնազանդեցնէ: Նիւթին նկատմամբ պիտի գիտնայ քերթողը թէ ամէն առեն վիպասանական քերթուածեան նիւթ տուող անցքեր կրնան պատահիլ, բայց ամէն եղած դէպքերն՝ այնպիսի քերթուածեան մը յարմար չեն. այլ անանկ դէպք մը ընտրելու է որ լեզուին արժանաւոր ըլլայ: Էննիոս և Նեւիոս չկրցան աս կերպով վիպասանիլ, որով և իրենց երկասիրութիւնքը քերթողական պատմութիւն եղան:

Ըենք կրնար որոշ կերպով մը զուլցել թէ արդեօք իրենց յաջորդք ունեցա՞ն աստնք: Միայն Կեսարու առեն քանի մը անձինք կը յիշատակուին որ աս տեսակ քերթուածեան բարգաւաճելուն փոյթ ունեցան, ինչպէս Մասիոս՝ որուն համար կըսեն թէ Իլիականը լատին մեծավերջ չափի վայտուաս. Վարրոն ատակեցի, որ Ապոլոնիոս հռոդոսացւոյն Արգոնաւորդը ի լատին փոխեց, ու Կեսարու պատերազմները վայ վիպասանական քերթուածին մը չարտագրեց. Ոատիոս, որ Խստրիայի պատերազմունքն երգեց բաւական յաջողակութեամբ և հանճարով:

Օգոստեայ ժամանակէն վիպասանական բերդ. — Օգոստեայ և Վիրգիլիոսի ժամանակակցացը մէջ մէկը միայն եղաւ պատմաբանական վիպասանութեան եռանդ ինկոլ, Լուկիոս Վարիոս, որ ընտիր քերթուածեամբ պատմեց Օգոստեայ և Անդրիպտոսի յաղթութիւնքը: Թէպէտ Որատիոս զինքը

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 11:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

չատ կը գովէ, բայց անոր քերթուածներէն քան մը ձեռնըմխս չհասաւ: Հինգ մեծարանօք կը յիշեն նաև Տիտոս Հռուփոս անունով քերթող մըն ալ, և Վելլէյոս Պատերկուլոս՝ զգայիոս Ռաբենոս հաւատարմապատիւ կը սեպէ Վիրգիլեայ, որ բաւական հանճարով Ակտիոնի պատերազմին վրայ քերթուածներ մը շարադրեր էր: Բայց ատոնց և իրենց նմանեաց միայն անուանքը մնացեր են, ուստի և պարզ յիշատակութեամբ հարկ է որ գոհ ըլլանք:

ԳԼՈՒԽ ԺԹ.

ՎԻՐԳԻԼԻՈՍ

Վիրգիլիոսի վարքը. — Վիրգիլիոս իմաստասէր. — Տաղարծական կամ Անդերզական երկրաւոր. — Մշակական. — Մշակաց ոճը. — Վիրգիլեայ Էնէանը. — Էնէականին համառօտութիւնը. — Վիրգիլիոս և Հոմերոս. — Էնէականին դիւցազնութիւնը. — Էնէականին ոճը:

Վիրգիլիոսի վարքը. — Պուբլիոս Վիրգիլիոս Մարոն՝ Մանդուայի մօտ Անդէս գեղը ծնաւ, 70 տարի Քրիստոսէ առաջ: Իրեն ընտանիքը ոչ ազնուատոհմ էին և ոչ մեծատուն. բայց իրենց հարկաւոր եղածն ունենալով Վիրգիլիոսի լաւ և կատարեալ դաստիարակութիւն մը տալու խնամքէն ետ չկրկեցան: Նախ քանի մը տարի կրեմոնայի վարժարանաց մէջ հրահանգեցաւ, եոքը տասնըեօթը տարուան հասակին Մեդիոլան անցնելով այրական պատմուճանը հագաւ. իսկ իմաստասի-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 11:27 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

թուխինը և յունական լեզուն նէապոլսոյ մէջ սորվեցաւ։

Իր բոլոր հայրենական ժառանգութիւնը կորսընցուց Վիրգիլիոս, երբոր Հոկտաւիանոս կեսար հինաւուրց և արդիւնաւոր զօրավարացն և զօրաց բաժնեց Կրեմոնայի և Մանդուայի երկիրները։ Ան զինուանց դէմ բողոքելու համար Հռոմ եկաւ Վիրգիլիոս. վարիոս՝ Մեկենասայ յանձնեց գինքը, Մեկենաս ալ Օգոստէայ։ Անկէ ետքն երբեմն յԱնդէա կը կենար Վիրգիլիոս, երբեմն՝ ի Հռոմ, երբեմն ալ՝ ի Նէապոլիս, ինքզինքը զբօսվին ուսմանց տալով. իսկ աւագութեան կամ մեծութեան ամենևին փոյթ չունէր։ — Իր Մշնական (Georgica) ըսուած քերթուածքը՝ լատին բանաստեղծից մէջ գերազանց սեպուեցաւ. Ընդերգականը կամ Տաւարջականը (Bucolica) զրպս եաքէն չարադրեց, յունաստանի անուանի քերթողաց հաւասարեցուցին գինքը։ Անկէ վերջը Օգոստէայ խնդրանօքն սկսաւ Ընէականը (AEneidos) չարադրել, և վրան տասուերկու տարի աշխատեցաւ. բայց մահը թող չտուաւ որ վերջին ձեռքը դնէ։ Մահուընէն քիչ առաջ յունաստան ճամբորդութիւն ըրաւ Վիրգիլիոս, որպէս զի աչքով տեսնէ ան տեղերն ուր որ իր դիւցազնքը քալեցուցեր էր. ճամբորդութեանն տաքն հիւանդութիւն մը ունեցաւ՝ որ եռքն իրեն մահառիթ եղաւ։ Հազիւ թէ Իտալիա հասեր էր, ախորը զայրանալով մեռաւ ի Բրունդիսիոն (Պրինտիզի), կամ ըստ այլոց ի Տարենտոն, տասնըւեթը տարի ջեռ առաջ, յիսունուերկու տարեկան։

Փափուկ կազմուածք մը ունէր Վիրգիլիոս, և կարգէ դուրս բարեխառն կեանք. անուշ բնութիւն, սիրելի և ընտանի։ Բանաստեղծութիւնքը շարադրելու համար մեծ նեղութիւն կը քաշէր, կըսեն։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 11:27 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կուն զանոնք սրբագրելու պրպտելով՝ կը չանար որ առաջուան ամէն գրածները հինգ կամ վեց տո- ղի մէջ ամփոփէ. նմանելով, ինչպէս ինքը կըսէր, արջուն՝ որ իր անկերպարան ձագիւնը լզելով ձեւի կը բերէ:

Վիրգիլիոս խմաստասէր.– Ազէքսանդր Սեւերոս կայսրը՝ պղատոն քերթողաց կը կոչէր զՎիրգի- լիոս. և իր թանգարանին մէջ անոր պատկերը կի- կերոնի արձանին քով դրեր էր, իբրև իրեն հա- ւասարապատիւ խմաստասէր: Իրաւ է որ Վիրգի- լիոս՝ բուն կամ նեղքին մարդուս վրայ շատ լաւ և ընտիր առակութիւններ ունի, որ խմաստասիրու- թեան էական մասունքն են. բայց պղատոնի հետ բաղդատել՝ կամ կիկերոնի հաւասար սեպելն ալ չափէ դուրս պատիւ տալ մը կերևնայ:

Վիրգիլիոս Անդէողպականը.– Ա՛ս քերթուածքը կըսկսինք Վիրգիլիոս գրաւորական հանճարին վրայ խօսել, որ բոլորովին արժանի են իր համ- բաւին և հանճարին: Չուաւերգութիւնք են Վիր- գիլիոս Անդէողպականքը: Յունական դպրու- թեանց պատմութեանը մէջ խօսեցանք թէ ինչ- պէս բնական և ամենէն առեղծ պարզ է առ առ- տակ քերթուածիւնը. բայց պարզութեամբն հան- դերձ՝ քիչ հանճար գտեր է որ արժանի լեզուով մը բնութեան գեղեցկութիւնը երգեն: Յունաց մէջ հռչակաւոր հովուերգակ քերթող եղաւ Թէոկրիտոս. իրեն հետևեցաւ նաև Վիրգիլիոս հռովմայեցին, և Թերևս քանի մը բանի մէջ զինքը գերազանցեց: Ինքը Վիրգիլիոս Թէպէտ կը զսպէ թէ Եւփորիոն յոյն քերթողին հետևողութեամբը շարադրած ըլլայ, բայց Թէոկրիտեայ ոչ միայն լեզուին և քաղցրութեանն և բարուց կը նմանի, հապա շատ տեղ գրեթէ անոր նիւթերն ալ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 11:28 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Առաջ ալ յիշատակեցինք թէ Վիրգիլեոս առ երկասիրութեան մէջ Վալտոնի ոճին և մանաւանդ նիւթոց դասաւորութեանը հետեւեր է։ Մշակաց առաջին գրքին մէջ՝ բուն մշակութեան վրայ կը խօսի քերթողը. երկրորդին մէջ ծառ դարմանելու՝ և առանձինն այգեաց մշակութեան վրայ. երրորդին՝ անասնադարմանութեան, և չորրորդին մեղուաց վրայ ընելիք խնամքը կը բացատրէ։ Քերթողը հարկ չէ սեպած նիւթին պահանջած ամէն բանն իր երկասիրութեան մէջ խօսիլ. մանաւանդ թէ կամօք շատ բան ալ թողեր է, որոնց հետ անմիջական յարաբերութիւն մը չէ տեսեր։ Նոյնպէս ալ բուրաստանաց կամ պարտէզի վրայ չէ ուզած խօսիլ։

Մշականաց ոճը. — Վիրգիլեայ Անդէորդակատացը համար ըսինք թէ շատ գովելի յատկութեց հետ քանի մը թերութիւնք ալ ունին։ Բայց նոյնը չենք ըսուցեր Մշակականաց համար, որուն թէ նիւթը, թէ լեզուն և թէ ոճը՝ բոլորովին կարդատասկընէ Վիրգիլեայ հանճարը, և անոր հանճարը կը փառաւորէ։ Քերթողն այս երկասիրութեան մէջ կատարեալ և վեհագոյն վարժապետ է առուեստին։ Ոչ բանից կուտակութիւն կայ մէջը, ոչ խմաստից պակասութիւն, նաև ոչ բառ մը ընդունայն տեղ դրուած. նիւթէ նիւթ անցնիլն ալ գրեթէ անզգալի կերպով կընէ։ Իր գրչին տակ ամէն բան հոգի կառնէ, ինչուան ծաղիկ մը և կամ ծաղկին տերևն ալ. քերթուածին մը՝ որուն թէ վայելչութիւնը և թէ պարզութիւնն ամենակատարեալ է։ Բոլոր բանաստեղծութեանը մէջ տող մը չես կրնար գտնել որ իրեն գեղեցկութիւնը չունենայ. այսպիսի տող մը՝ Վիրգիլեայ Մշակականացը մէջ ընդունայն է փնտրուիլ։

Վիրգիլեայ Էնէականը. — Երանութիւնը, կամ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 11:28 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ըստ այլոց քառասուն տարուան էր Վիրգիլիոս եր-
բոր սկսաւ Ենէականը շարադրել. Մշակականնե-
րովը յայտնի իմացուեր էր քերթողին կատարելճե
չափը, և իրեն անդադար ուսմունքը պատրաս-
տեր էին ընդօրինակը վիպասանութեան մեծ գործքին:
Էին պատմութեանց հմուտացած, երկրին աս-
դուձիւնքը սորված, մէկ յունական և մէկ հռով
մէական մատենագրութեանց տեղեակ, քերթո-
ղաց մէջ ամենէն աւելի իմաստնագոյնը կրնար ե-
պատիլ: Որ և իսկ բանաստեղծական երկասիրու-
թեան ուժը մեծ կըլլայ, մէկ որ նիւթը հայրե-
նի յիշատակներէ առնուի. և աս ազդեցութիւնը
շատ աւելի կերևնայ վիպասանականին մէջ: Վիր-
գիլիոս ալ այն դիտմամբ հռովմայ սկիզբն և մեծ-
նալը նիւթ առաւ իրեն երգուցը:

Ենէականին նիւթը. — Տրոյեայ առնուելէն ետքը
Ենէաս իտալիա կուզէ գառնալ, ուր բաղդք իրեն
մեծութիւն և իշխանութիւն կը խոստանային: Իր
ընկերներովը ելօին ամիս ծովերուն վրայ թափա-
ռական պարտեզէն ետքը, Հերա՝ Ենէասայ դէմ
ատելութիւն ունենալով՝ հողմոց աստուծոյն կա-
ղաչէ որ իրեն եղած նախատանացը վրէժը խնդրէ:
Եւ ոչխս չի կրնար անոր աղաչանաց դէմ դնել. հրա-
ման կու տայ, և սաստկաշունչ հողմունք իրենց
անձաւներէն դուրս ելլելով՝ ահաւոր մրրիկ մը
կը հանեն ընդդէմ Ենէայ: Հաղիւ ծովերուն աս-
տուածը Պսիդոն ան խռովութիւնը կը դադրե-
ցընէ. բայց Ենէայ ընկերներէն շատը ցիրուցան
կըլլան՝ ծովուն բռնութեանը դէմ չկարենալով
դնել. իսկ Ենէաս եօթը նաւով Սիկիլիոյ քովե-
րէն Աֆրիկէի նաւահանգիստը կրնայ: Սիրոյ դի-
ցուհին Վասղիկ՝ ընչուան՝ ի Կարքեդոն կառաջ-
նորդէ անոր. հոն կը տեսնէ տեղւոյն թագուհին
Դիդէ, և անոր քով իր ընկերները զրոնք ծո-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 11:28 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

վոն ալեացը սաստկութեամբ կոբտուած կը հա-
մարէր : Ինքզինքը կը յայտնէ Դիդէի , և ամէն սէր
և մեծարանք կը տեսնէ իրմէն : Դիդէ մեծ խըն-
ջոյք մը կու տայ Ենէայ և ընկերակցացը , և սեղա-
նին վրայ Ենէաս կը պատմէ տրոյական պատե-
րազմին պատմութիւնն ու Իլիոնի առնուիլը . և թէ
ինչպէս Յոյնք տասը տարի անօգուտ կռուեցան
եաքն երբոր տեսան թէ զէնքով չեն կրնար ան
քաղաքը ձեռք ձգել , մտածեցին նենգութեամբ
սրտերնուն ուզածն առաջ տանել : Տրոյացւոց
հետ հաշտուիլ ձևացուցին . և գրուած խաղա-
ղութեանը մէնջենաւոր յիշատակ ուզեցին փայ-
տէ արուեստագործած հսկայաձև երիվար մը ըն-
ծայել քաղաքացւոց և իրենց պաշտպան աս-
տուածներուն . ան երիվարին մէջ հարիւրաւոր
զարանակալք պահուըտեր էին : Նոյն գիշերն եր-
բոր տրոյացիք առ հաշտութեանն վրայ կուրախա-
նային , մէջերնէն մէկը , որ առաջուց խօսք գրած
էր Յունաց հետ , ասիպէց զքաղաքացիս որ ան
երիվարը նեղս բերեն , և նշանաւոր տեղ մը կանգ-
նեն : Հաւանեցան իրեն տրոյացիք . բայց խա-
բուեբնին չուտով լմացան՝ երբոր զարանակա-
լք քաղաքացւոց անհոգութիւնն ու անկասկած հան-
գստութիւնն իրենց չարութեան առիթ առնելով՝
պահուըտած տեղերնէն դուրս ելան , ու զԻլիոն
հրով և սրով կործանել սկսան : Հեկաւոր տեսիլ-
քի մէջ երևցաւ Ենէայ , իրատեց որ չուտով ելլէ
փախչի քաղաքէն . բայց անիկայ վատութեամբ
փախուստը մահուընէ դառն տեսիլով՝ քալ ըն-
կերնեբ կը ժողվէ չորս բոլորը , կը մտնէ Յունաց
մէջ , և զանոնք չարդել կըսկսի : Բայց տեսնելով
թէ գլուխ չի կրնար ելլել , տուն կը դառնայ . Ան-
քիսես իր հօրը տալով անոյշին ընտանի աստուած-
նեբը (Թերափիք) , ուսին վրայ կառնէ իր ծերու-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 11:29 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ձի հայրը, և Ականիոս որդւոյն և կրեւսա կնոջը հետ կըսկսի փախչել: Սակայն Ճամբան կը կորսընցընէ զԿրեւսա. և երբոր զանիկայ գտնելու համար նորէն կուզէ ետ դառնալ, կը տեսանէ անոր ստուերը, և կիմանայ թէ ինչպէս կիւբեելէի ձեռքն ընկեր է ի փռիւգիա: Ան ատեն ենէասա կը մտածէ որ թէ զինքն և թէ իրեններըը ծովու փախուստեամբ ապրեցընէ:

Կը պատմէ Դիդէի ծովուն վրայ կրած վշտերը, և թէ ինչպէս բազմազգի նեղութիւններէն ետքը հազիւ կրցաւ Իտալիա հասնիլ, որուն համար ընտանի աստուածներէն լսեր էր թէ բուն հոն ըլլայ նախկին ետրուրացւոց իանձարուրքը: Դիդէ Ենէասայ իմաստուութիւնը, հանճարն ու վայելուչ կերպարանքը տեսնելով կուզէ հետը հարսնանալ. և երբոր իր Աննա քրոջը կը յայտնէ սա խորհուրդը՝ կը հաւանի Աննա, և հարսնիքը կը կատարուի: Բայց որովհետև Գետուլաց Յարբաս թագաւորին խոստացուած էր Դիդէ, իրեն եղած նախատանաց վրէժ կուզէ խնդրել ու Արամազդայ կինայ: Արամազդ անոր բողոքին իրաւացի ըլլալը տեսնելով՝ Հերմէսի ձեռքով կը ծանուցանէ Ենէայ որ Իտալիոյ հեռանայ: Ծանր էր սա հրամանն Ենէասայ, ևս առաւել Դիդէի համար. որն որ արտասուօք կաղաչէր երկանն որ զինքը չթողնէ: Բայց Ենէասայ բարեպաշտութիւնը մեծ էր քան զսէրը. ուստի ծածուկ ամէն բան պատրաստելով՝ գիշերանց իրեններովը նաւ կը մտնէ ու կը փախչի: Դիդէի սրտին ցաւն անպատում կըլլայ. ու չկրնալով ուրիշ կերպով մը մխիթարուիլ, կը հրամայէ որ խարոյկ մը պատրաստեն. վրան կելլէ, ու Ենէասայ սրունկը ինքզինքը կըսպաննէ:

Ենէաս սա Ճամբորդութեանն ատեն ալ նորէն ալէկոծութեան հանդիպելով Սիկիլիա կինայ,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 11:29 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ուր Ակեստէս որովացին սիրով և մեծարանօք կընդունի զնրեննք : Բայց որովհետև ենեասայ ճանապարհորդակից որովուհիք նաւարկութենէ ձանձրացեր էին , ուստի Սիկիլիայէն չհեռանալու հնարքը մտածելով նաւերուն կրակ տուին : Ձորս նաւ այրեցան . իսկ մեկալնունք սաստիկ անձրևով մը հազիւ ազատեցան : ենեասա ալ իր հօրն Անքիսեայ և այլոց խրատուցը մեկ ընելով ծերերն ու կանայք Սիկիլիա կը թողնէ , ու միայն կարիճ երիտասարդները հետը կառնէ : Անոնցմով Իտալիոյ կումա քաղաքը հասնելով , Դիփոբեա սիբիլլային քարայրը կը մտնէ , ու անոր խորհրդոյն և հաճութեամբ գժոխք կիջնայ . ուր դատապարտելոց մէջ կը տեսնէ նաև զԴիդէ : Ան ախուր տեղէն դուրս ելլելու ատեն աչ կողմը կը զարնէ , և հոն կը տեսնէ Էլիսեան երջանկավայր դաշտերը , և դիւցազնոց սուուերները . կը գանէ նաև Անքիսես հայրը , որն որ համառօտիւ մը կը պատմէ ենեայ թէ ինչ մեծ ազգ պիտի առաջ գայ իրմէ , և ինչ անուանի մարդիկ պիտի երևնան ինչուան Օգոստոս : ենեաս ուրախութեամբ դուրս կելլէ անկէց , և իրեններովը կայետա կը նաւէ :

Ան տեսնելով Իտալիոյ Աբորիգինայք ազգին վրայ Լատինոս անուանով մէկը կը թագաւորէր . ենեաս անոր միածին Լաւինիա աղջիկն իրեն հարս ուզեց . բայց Լաւինիա Հռուտուլոց Տուռնոս թագաւորին խոստացուած էր : ենեաս և իր ընկերները կրտիսին պատերազմ մը տալ , և Լատինի և Եարուբիոյ ազգերը մանակից կըլլան անպատերազմին ընդդէմ որովացւոց : Այլևայլ կռիւներ կըլլան առանց բան մը որոշուելու . վերջապէս ենեաս և Տուռնոս իրարու հետ կը մենամարտին , և յաղթողին վարձք կը սահմանուի Լաւինիա . ենեաս յաղթական կերևնայ :

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 11:29 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Հարկ չկայ ըսել թէ այսպիսի նիւթ մը ոչչափ հաճոյ պիտի ըլլար հռովմայեցւոց. վասն զի իրենց նման ազգ մը չկար հնուելեամբն և ազնուականութեամբ պարծող. ինչուան կայսերաց ժամանակ պատրիկներ կային, որ ցեղերնուն հնութիւնը ինչուան Ենէաս կը հանէին. Օգոստոս ինքզինքն Ենէայ ցեղէն կը սեպէր, Յուլեայ կամ Ականեայ աերուանդ:

Վիրգիլիոսի երգած վիպասանութիւնը կեղծ բան մը չէր, այլ իրական դիպուած, զոր այլք իրմէն առաջ պատմեր էին թէ ինչպէս Խաւլիա հասան տրովացիք, և սիրով ընդունեցաւ զնոքեանք Լաւինիոս. Տուռնոսի և Ենէայ իրարու հետ ունեցած գժտութիւնը, և տրովացւոց պատերազմին առանց վախնալու իրենց դէմ եղած ահաւոր ազգաց զօրութենէն: — Դիդէի և Ենէասայ մէջ եղած ժամանակին հեռաւորութիւնը՝ մեծ թերութիւն մը պիտի չսեպուի ատեղծաբան քերթողին. որովհետև, ինչպէս առաջ ալ յիշեցինք, իրեն պարտքը չէ ճշմարիտ պատմութիւն աւանդել, այլ ընթերցողքն օգտակարութիւն զուարճացընել:

Վիրգիլիոս և Հոմերոս. — Հոմերոսի ժամանակն աւելի յարմար էր իր վիպասանական քերթութեան ըրած ազդեցութիւնը աւանելու: Մինչդեռ Իլիականն ու Ոդիսականը կը շարադրէր, Աքիլլեսի, Հեկտորի, Ոդիսեայ և իր ուրիշ ամէն դիւցազանց անուանքը կենդանի էին ժամանակակից մարդկանց մտքին մէջ. ոչ իրենց յաջողութիւնն և ոչ ձախորդութիւնքը մոռցուեր էին. այլ ամենէն խելօք յոյնն ալ կրնար պատմել Տրովադայ պարսպակայ ատակ եղած պատերազմունքը, և յաղթող քաջազանց երկայնօրեայ դեգերանքն անսահման ծովերուն վրայ:

Բայց Վիրգիլիոսի հարկ էր ստեղծել, և հռով-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 11:32 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մայեցւոց մէջ եղած անկերպարան աստղու-
թիւնքը կարգի վրայ առնել: Անոր համար է որ
Վիրգիլիոս չէ կրցեր յոյն քերթողահօր Աքիլ-
լեայ, Հեկտորի և Ոդիսեւսի յատկութիւնքը տալ
իր դիցաբանցը: Ինքն ալ ըմբռներ էր աստղա-
րութիւնը, ուստի և անոր դէմ առնելու միակ
հնարք՝ Յունաց և մանաւանդ Հոմերոսի նմանիլը
համարեցաւ: Էնէականին առաջին վեց երգերը
Ոդիսականին համառօտութիւնը կամ մանրանը-
կարքն են. իսկ վերջին վեց երգը Իլիականին նը-
մանութեամբը յօրինուած: Բնական էր որ քեր-
թողն Էնէասայ ճամբորդութիւններն ան գունե-
րով նկարէր, որովք Հոմերոս Ոդիսեւսի ճանա-
պարհորդութիւնքն ստորագրեց. որոյացւոց՝ ի-
րենց Թշնամեացը դէմ տուած պատերազմունքն՝
Իլիոնի պարսպին տակ եղածները յիշեցնելին, և
Աքիլլեայ, Հեկտորի, Պատրոկլի, Էասայ բնաւո-
րութիւնքը նմանութիւն ունենային Տուռնոսի,
Պալլասայ և Վիրգիլիոսի ուրիշ ամէն դիցազան-
ցը հետ:

Բայց չէ թէ միայն զՀոմերոս՝ հապա ուրիշ
այլևայլ քերթուածք օրինակ առեր է Վիրգի-
լիոս իր վիպասանականը շարադրելու համար:
Յունաց մէջ այլևայլ քերթուածք կային՝ Դաշ-
կոչուած, որոնց մէջ կը պատմուէին Տրովայ պա-
տերազմին եղքը Յունաց գլխաւորներուն վրայ ե-
կած վիշտքն ու նեղութիւնները [1]: Հայնը (Heyne)
կենթադրէ, թերևս ոչ առանց հաւանականու-
թեան, թէ Վիրգիլիոս անոնցմէ շատէն օժանդա-
կութիւն գտեր է: Մակրոբիոս ալ կըսէ թէ Էնէա-
կանին տասներորդ գիրքը գրեթէ բառ առ բառ
օրինակուած է Պիսանդր անունով աղեքսան-

1 Տե՛ս էրե՛ս 15. 16:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 11:33 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

դրեան քերթողն մը վիպասանութենէն : Ջորրորդ գիրքն ալ շատ նմանութենի ունի Եւրիպիդեայ՝ Մէդէա ըսուած ողբերգութեանը հետ. նոյնպէս Եպքիլեայ, Սոփոկլի, Պինդարոս, Ապողոնեայ հռոդացւոյ մեծապէս պարտական է Վիրգիլիոս. որովհետև անոնցմէ մէկէն գաղափարած է եանա հրաբուղխ լեռան ստորագրութիւնը. մէկէն գիշերոյ խաղաղութիւնն ու ցաւած արիւնն սրտի տանջանքը. մէկէն բաղդատութիւն մը, մէկալէն մոտածութիւն մը, և այլն :

Իրեն հայրենակից քերթողացն ալ հետևիլն ամօթ չսեպեց Վիրգիլիոս, ինչպէս կատուլլեայ, Լուկրետեայ, Էննիոսի և այլոց : Սակայն Վիրգիլեայ հանճարը անոր վրայ է, որ զարմանալի ճարտարութեամբ իւրացուցեր է ամէն օտար և ընտանի մոտածութիւնք, ու այլևայլ գրքերէ քաղածները մէկին մէջ ամբողջացուցեր :

Էննէականին պիւոպոնդը. — Էննէականին գլխաւոր անձն է Էնէաս. բայց միայն անուամբ դիցացն. վասն զի իրեն ետևը ծածկուած է Հռոմ, և Հռովմայ ամէն ապագայ մեծութիւնքը. որով Էնէաս գործի մը կըլլայ նախախնամութենէ կամ աստուածոց ձեռքը : Մոտիւր կը հպատակի, երկնային հրամանաց. — Բարեպաշտութիւն —, ասիկայ է Էնէասայ գլխաւոր բարքը : Էնէականին մէջ ամէն բան Հռովմայ և իրեն պատմութենը կը վերաբերի. ուստի ան պատճառաւ ալ է որ ընթերցողը զԷնէաս չի գտներ դիւցազն ըլլալու արժանաւոր մարդ մը, այլ ցուրտ և գրեթէ առանց կրքի, թէպէտև քաղցրաբարոյ և ընտանի : Ասոր պատճառն է որ երբ Վիրգիլիոս իր վիպասանութիւնը կը շարադրեր, աշխարհք գրեթէ նորէն իր առջև հաւասարակշռութեանը մէջ սկսեր էր մտնել, և Օգոստեայ զօրաւոր ձեռացը տակ խա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 11:33 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ղաղուեթիւն և առատուեթիւն ափոխել։ Վիրգիլիոս, որ ինչպէս վերը տեսանք, քաղաքական պատեբազմաց պատճառաւը վշտեր ունեցեր էր, ան բարեաց առիթ զՕգոստոս կը համարեր, և աշխարհքի բարօրուեթեան համար նախատահմանեալ մարդ մը կը սեպեր զինքը։ Կը վախեր որ չըլլայ թէ ան մեծ գործը չըմընցուցած մահը վրան հասնի, և ամենայն ակնկալուեթիւնը խափանէ. անոր համար սրտեռանգն կաղաղակեր իր Մշակականացը մէջ (Ա. 513).

"Ով դիք հայրենաբոյնք և՛ Հռոմուլէ, և վեստա մայր
Որ զտոսկեանըն Տիբերիս և զՀռոմական պահես տաճարս,
Այսմ գէթ պատանեկի ձեռն'ի կործան տալ յաւիտեանս
Մի՛ կայք ընդդէմ, շատ իսկ արդ լուծաք յաղեան մեր ճապաղիս
Ըզվրէժ խարդաւանաց լաւմեդոնեանըն Տրովադայ,,։

Օգոստոս խաղաղացեալ աշխարհքի մը իշխան և կայսերուեթեան հաստատուեթէ տուող, թէ վիրգիլեայ և թէ ամէն հռոմայեցւոց առջին մեծ ուվեմ բնաւորուեթեամբ տէր անձ մը կը սեպուէր։ Վիրգիլիոս զԷնէաս ստորագրելու առեն՝ կարծես թէ առանց անդրադառնալու զՕգոստոս կը նկարագրէ։ Ան Էնէասը՝ որ աւելի խաղաղուեթեան քան թէ պատերազմաց մարդ է, և գրեթէ ամենայն կրից անծանօթ, որ կարծես թէ իր յանցանքովը կորընցուցած հարսին վրայ չի ցաւիր, ու Դիդէի վրայ այնչափ անզգայ սիրտ ունի, որ մինչեւ գեռ գժոխք իջնալով անոր ուրուականը կը տեսնէ. յուսահատ կատաղուեթիւնը կը լսէ, և սա ան-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 11:33 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

տալքեր սրտի յատուկ իսօքերը կարտաբերէ (Ե-նէական. Ջ. 651)

"Սուգիս ուրեմն, ով հէք Դիդէ, գուժեցար
ինձ մահ քոյին և գոլ սուսերը կենաղրատ:
Ասաղ, զի ես իսկ քեզ եղէ մահաբեր.
Երդուեալ'ի դիս և 'ի յատեղս անդ 'ի վեր,
Եւ ընդ երկրաւ'ի իսրս հաւատք ինչ լեն գոյ,
Ոչ կամաւ իսյս յափանցդ եաոս, ով գըշխոյ.
Այլ աստուածոց հրամանք, որ քուռն արդ առնեն
Շուրջ զըստուերօքս ինձ զայսոքիւք գալ աստէն
Յահեղ մըռայլ և 'ի գիշերս յայս խորին,
Նոքին իսկ զայն սաստիս ինձ հարկ արարին.
Եւ կասկածել իսկ չէր ինձ մարմ, զի հանգէտ
Ի չուոյ իմմէ քեզ պատրաստեալ կայր աղետ,,

սանակ անզգայ սիրտ մը քերթողին ժամանակակցը հաճոյ էր:

Վիպասանութեան մէջ յիշատակուած ուրիշ երկրորդական անձինքն ալ զարմանալի կամ յափշտակիչ բնաւորութիւնք չեն ներկայացներ. ինչպէս Աքատէս, որ միշտ հաւատարիմ կը մնայ. Գիտաս և կլովանէթ միշտ զօրաւոր: Ասոնց կարգէն դուրս հանելու է զՏուռնոս, որ Հոմերոսի Աքիլլէան ու Հեկտորն է, և զՊալլաս՝ որ Պելեայ որդւոյը բարեկամ զՊատրոկղ կը յիշեցնէ:

Վիրգիլիոս աւելի կանանց բնաւորութեան ստորագրութեանը մէջ ճարտար է: Հերայի բնաւորութիւնն աքանչելի է. իրեն բարկութիւնը, սրտին յաւիտենական կսկիծը, վայրենի հպարտութիւնն ու ահաւոր մեծանձնութիւնը. ասիկայ է Աբրամազդայ հարսին բարքը, մեծութեան հասած հպարտ կնկան մը: Դիդէի բնաւորութեան ստորագրութիւնն ալ Վիրգիլեայ պարծանքը կը

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 11:34 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

յաձախեն. նոյնպէս ալ Անդրոմաք, որ գերեզմանց է քան զհոմերեան և վէրգիլեան համանուն դչնոյն: Ասոնց գասէն են նաև կամիլլա, Ամասա, իրէն դուստրը, Լաւինիա, և այլն:

Ենէականին 36. — կաւանդեն թէ Վիրգիլիոս մեռնելէն առաջ հրամայեց տուած ըլլալ կտակաւ որ Ենէական քերթուածին այրեն, իբրև անկատար գրուածք մը, և աշխարհքիս մէջ ինալոր անարժան: Այսպիսի հրամանի մը պատճառ ոմանք ան կը սեպեն որ մէջը քանի մը անկատար տողեր ըլլան, զորս սրբագրել ուզէր է քերթողը, և չկրնալով փափաքը կատարել, կտակած ըլլայ որ բոլորովին մէջտեղէն վերցուի: Բայց ասպատճառս շատ բանասիրաց առջև անհաւանական կերեւնայ: Վիպասանական քերթուածին մը ինչպէս քանի մը տողով յարգ չառնեը, ասանկ ալ քանի մը տողն պատճառ յարգը չի կորսընցընել. ուստի և Վիրգիլիոս միայն ասոնց թերուածեանը համար չէր կրնար ուզել որ երկայն և գժուարին քրտանց արգասիք գործ մը մէջտեղէն վերնայ: Այլ այսպիսի հրամանի մը պատճառն ան կերեւնայ որ միտքը գրած էր Վիրգիլիոս բուն ոճը փոխելու. և չկրնալով կատարել, ուզեց որ այրուի: Բարեբաղդաբար այսպիսի կտակի մը գործադրուեան դէմ կեցաւ Օգոստոս. որն որ Վիրգիլեայ ասվիպասանութեանը վրայ աքանչացած, պատերազմաց ժամանակն ալ ձեռքէ չէր թողներ. և գիտէր թէ քերթողին չհաւնածը՝ իրաւամբք յետագայից զարմանալուն նիւթ պիտի ըլլար:

Մշակականքը գրող գերազանց հանճարը՝ չէր կրնար անկէ աւելի վեր ելլել Ենէականին մէջ: Բայց թէ որ վեր չելաւ Վիրգիլիոս, վար ալ չջնջուեցաւ. և ասիկայ մեծ պատիւ է իրեն: Վերջինին մէջ վիպասանական քերթուածին ոճը կատարե-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 11:34 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ըագործեց, ինչպէս առջինով վարդապետականին գերազանցութիւնը ցոյց եր էր: Լաւ գիտցաւ ըստորագրել գիւցազնական անցքեր, և նոյնպիսի կամ աւելի ճիշդ ըսենք, ընտրելագոյն յաջողակութեամբ երգել դաշտային վաստակներն և մղուաց խնամքը, որով և երկու քերթուածոց մէջ ալ միանգամայն զարմանալի է Վիրգիլեայ հանճարը:

Ինչպէս ուրիշ տեղ ըսինք, ուսումնական ճոխութեանց վրայ կոլմնասիրութեամբ դաստաստան ընելէն վերասակար բան չկայ: Ա՛ս ախտիս մէջ շատ անձինք ընկած են, որոնք զՀոմերոս Վիրգիլեայ հետ ուզեր են բաղդատել, և վիպասանական քերթութեան առաջնութիւնը տալ: Ո՛մանք զՎիրգիլիոս բարձրացընելու համար՝ զՀոմերոս իրեն արժանաւոր բարձրութենէն շատ վար առեր են. ո՛մանք ալ Հոմերոսէ զատ քերթող չի կրնար ըլլալ ըսելով զՎիրգիլիոս պարզ թարգմանիչ մը սեպեր են յոյն քերթողին աշխուժին և եռանդեան, և նուաստ ու խեղճ թարգմանիչ: Ասանկ բաղդատութեանց մէջ ամենէն աւելի հանճարաւոր մեզի կերևնայ Թրուպլէյ գաղղիացւոյն դատաստանը, զոր արժան կը սեպենք թարգմանել. "Հոմերոս, կըսէ, աւելի քերթող է. բայց Վիրգիլիոս աւելի կատարեալ քերթող մը: Առջինը բանաստեղծութեան պահանջած քանի մը յատկութիւնքը գերազանց կերպով ստացած է. երկրորդինները աւելի բազմաթիւ, բայց զօրութիւնները նուազ է. որով Հոմերոսի ընթերցումը զօրաւոր հաճոյութիւն կազդէ, Վիրգիլիոսինը քաղցր և անուշ տպաւորութիւն կընէ: Հանճար ունեցող մարդը Հոմերոսի վրայ կըսքանչանայ, ինչպէս ախորժակի (goût) տէր եղողն ալ Վիրգիլիոսի: Ոսկին աւելի շատ է Հոմերոսի գրոցը մէջ.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 11:34 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

իակ 'ի Վիրգիլիոս աւելի մաքուր և զուտ : Ենէականը գերազանց է քան զԻղիականը . բայց Հոմերոս գերազանց քան զՎիրգիլիոս . վասն զի Իղիականին Թերութիւնքը ժամանակին են , Ենէականինները Վիրգիլեայ ,, :

Մակրոբիոս Ճառ մը շարադրած է աս նիւթին վրայ , որ և մտադրութեան և ընթերցման արժանաւոր երկասիրութիւն մըն է . յորում կը ցցընէ Թէ ինչպէս Վիրգիլիոս շատ տեղ օրինակելու է զՀոմերոս , և շատ տեղ ալ ուրիշ յոյն և լատին քերթողաց նմաներ : Հանճարաւոր բաղդատութիւն մըն ալ կընէ Անտրէա , իր Ցաղագս սկզբան և յառաջդիմութեան ամենայն մտենագրութեանց (Dell' origine e progresso di ogni letteratura) *ըսուած ընտիր գրքին մէջ , և զՎիրգիլիոս նախադաս կը համարի քան զՀոմերոս , առանց յոյն քերթողին արդիւնքը ուրանալու* [1] :

1 Վիրգիլեայ ալնիւ գրչին համէմատ փնտռ ապգերնիս անոր հայերէն ընդիր Թարգմանութիւնը . Ենէականինը աշխատութեամբ փնտռն Հ . Եղուարդայ Հիւրմիւզեան արփեպիսկոպոսի , և Մշակականինը փնտռն Հ . Արսէն Վ . Բագրատունւոյ . պատ՛ի Վենետիկ , առջինը 1845 . երկրորդը 1847 :

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 11:47 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԼՈՒԽ Ի.

ՈՐԱՏԻՈՍ ՓԼԱԿԿՈՍ

Որապիոսի վարքը. — Որապիոս բարոյախօս. — Երկասիրութիւնը. — Որապեայ գրաբար կամ մատենագրական գիղեօկութիւնը. — Որապիոս առակախօս. — Որապեայ երգերը. — Երգիծաբան տերութիւնը. — Որապեայ ընդունելութիւնը. — Արուեստ տերունական:

Որապիոսի վարքը. — կուինտոս Որատիոս Փլակկոս ծնաւ Ապուլիոյ վենուսա քաղաքը, Լուկիոսի Աբելլոսի կոտտայ և Մանլիոսի Տորկուատոսի բգեշխութեան ժամանակ, Քրիստոսէ 65 տարի առաջ: Հայրը ազատագրեալց դասէն էր, և իր ճարտարութեամբը բաւական հարստութեան տէր եղած. ու երբոր Որատիոս տասուերկու տարեկան էր, հետն առաւ զինքն ու Հռոմ գնաց, որպէս զի քնարկութիւնը հոն հաստատելով, որգոյն ընտիր դաստիարակութիւն մը տայ: Անուանի վարպետներ բռնեց իրեն. և ամէն ջանքն ըրաւ անոր ուսումնական բարգաւաճանացը: Ուսման ընթացքը լմընցնելէն ետքը Որատիոս Աթէնք գնաց. հոն եպիկուրեան իմաստասիրաց դասախօսութիւնը լսեց, և Ճեմարանի հետևող կառնէադեայ և Արկեսիլայոսի աշակերտեցաւ: կսանդէն թէ հոն Աթենքի մէջ տեսած ըլլայ Բրուտոս, որուն հանճարին և արիութեանը վրայ սքանչանալով հետը միացաւ բռնաւորաց դէմ պատերազմելու: Բայց ետքը Օգոստեայ յաղթանակները տեսնելով, ձգեց վահանն ու անոր կողմն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 11:48 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

անցաւ. և անկէ ետքը զինուորական արուեստէ հրաժարելով սկսաւ ուսանաւորներ շարադրել, և քերթողական կենաց առջի երախայրիքը քանի մը երգիծաբանութիւնքն և երգերն եղան:

Մեկէն խմացուեցաւ իր աշխոյժը. Վիրգիլիոս և Վարրոն Որատեայ պաշտպանութիւն ընելով Մեկենասայ ներկայացուցին զինքը: Մեկենաս առջի տեսնելուն՝ անոր վրայ կարգէ դուրս կարողութեան նշան մը չնկատեց. բայց իրեն բարեկամ Վիրգիլիոսի խօսքը գետին չձգելու համար կայսերական խնամոց ոակին առաւ: Ինն ամիս անցնելէն ետքը զՈրատիոս նորէն իր առջևը հանել հրամայեց, ու ան օրէն ետքը մտերիմ բարեկամացը թուոյն մէջ անցուց զինքը: Որատիոս ան տաեն քսանվեց կամ քսանըեօթը տարեկան էր:

Երկու տարի անցնելէն ետքն իրեն պաշտպան Վիրգիլեայ հետ Բրունդիսիոն գնաց Որատիոս, ուր Հոկտաւիանոս և Անտոնինոս իրարու հետ պիտի հաշտուէին: Մեկենաս անոր արժանեացը համեմատ մեծարանք ընդունելով Օգոստեայ ներկայացուց զինքը, որն որ սաբինացւոց գաւառին մէջ Տիբուրի (Դիվոլի) մօտերն իրեն գիւղաքօս ղուարձութեան տներ և ագարակներ տուաւ: Որատիոս եթէ ուզեներ մեծնալ, Օգոստեայ արքունեացը մէջ շատ հարստութիւն կրնար գիզել. վասն զի կայսրը անոր հանճարին վրայ զարմացած՝ իւր տաենագպիրը կուզեր ընել. բայց Որատիոս հրաժարեցաւ: Կայսեր գժուարն եկաւ ասոր բանին համար. բայց քերթողին վրայ ունեցած համարումն և սէրը չպակսեցուց. մանաւանդ թէ մանաւոր թղթով մըն ալ գրեց իրեն. "Ուզեցիր իմ բարեկամութիւնս անարգել, սակայն գիտցիր որ քու արհամարհանացդ դէմ ես ալ արհամարհանք չեմ հատուցաներ,,: Օգոստոս եր-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 11:48 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

բոր աեսաւ Թէ աս Թղթին ալ պատասխանը չաւ-
ռաւ, նորէն գրեց իրեն. "Գիտցիր որ հետդ սըր-
դողեր եմ. արդեօք կը վախճա և չըն ուզեր որ
յետագայք իմանան Թէ դու իմ բարեկամս ես ,, :

Որսոխոս իր կենաց մեծ մասը գիւղային ա-
ռանձնութեան մէջ կանցընէր. ու ինչուան որ
Մեկենասէն ստիպողական հրաման չհասնէր, Տի-
բուրէն չէր հեռանար: Իր վեցերորդ երգիծա-
բանութեանը մէջ կըստորագրէ Թէ ինչպէս կան-
ցընէր օրերը, և Թէ ինչ էին իրեն զբաղմունքն ու
կերածը: Մեկենասի մահուընէն եաքը բոլորովին
առանձնութեան տուաւ ինքզինքը. խօսք տուեր էր
իրեն որ մահուընէն եաքը յերկարակեաց չըլլար.
այնչափ կըսիրէր զՄեկենաս. և յիրաւի, քսան
օրուընէ եաքն ինքն ալ մեռաւ յիսունըեօթը տա-
րուան հասակին մէջ: Կարճահասակ էր Որսոխոս
և հիւանդոտ աչուըներով. մահն ալ գրեթէ յան-
կարծական եղաւ. հազիւ ատեն ունեցաւ զուր-
ցեալու Թէ զՕգոստոս կը Թողնէ իրեն ժառանգ, և
Թէ աս կամքը գիր անցընելու ուժ և ժամանակ
ջունի: Մեկենասայ քով Թաղեցին զինքը եսկու-
լանեան լեռան վրայ:

Որոֆիոս Բարոյաբան. — Առաջ յիշատակեցինք Թէ
Որսոխոս Աթենքի մէջ եպիկուրեան վարդապե-
տութիւնը մտիկ ընելու գնաց: Բնական խառ-
նուածքն ալ նոյնպիսի վարդապետութեան մը
յարմարութիւն ունենալով մուտքերութեամբ
շատ բանի մէջ անոնց կարծիքն ընդունեցաւ, բայց
առանց կողմի մը գերի ըլլալու. անոր համար ալ
է որ երբեմն ծաղր կընէ Թէ զեպիկուրեանս և
Թէ զստոյիկեանս: Երբեմն ստոյիկեանց վարդա-
պետութենէն ալ անդին անցնելով գերագոյն
առաքինութեանց հետևող կերևնայ, և իր ան վի-
ճակին մէջ լաւ կերպով կըստորագրէ Թէ ինչպէս

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 11:48 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

պարտական ենք սիրել զՀայրենիս, արդարութե-
մէջ յարատևել աղքատութեան համբերել և ար-
համարհել զմահ: Որատեայ երգիծաբանութիւնքն
ահաւոր պատերազմունք կրնան սեպուիլ ընդդէմ
ամենայն ախտից, Հենոնի արժանաւոր արհա-
ոգւով մը: Իսկ թղթերը աքանչելարուեստ դա-
սեր են անընչաքրութեան և անշահախրութեան
վրայ. կը յորդորէ զամէնքն որ ընդունայն փառա-
սիրութենէ ետ կենան: Իր խնամատարութիւնն
աս երկու խօսքերուն վրայ հաստատուած էր. Ո՛չ
ման պլսփն. սկիզբ մը՝ որ թէ ախորժակի և թէ
բարօրութեան ամենայարմար է:

Ով աս բանծներէս աւելին ուզէ լսել Որատիո-
սի վրայ, բանա իր երկասիրութիւնքը. տեսնէ թէ
ինչպէս զգածմամբ կը խօսի իր բարեկամացը վրայ,
և առանձինն Մեկենասայ, որուն մահուընէն ետքն
ալ չուզեց ապրիլ, Վիրգիլեայ՝ զոր կէս հոգւոյ ի-
մոյ հաթոր կը կոչէ. քննէ թէ ինչպէս համարմուն-
քով մեծարանօք հօրն առաքինութեանցը վրայ
կը խօսի: Անոր համար զարմանք չէ որ ամէն ըն-
թերցող կը սիրէ զՈրատիոս, և նոյն իսկ թերուեցը
մէջ՝ անոնց զուգորդ առաքինութիւնքը կը տեսնէ:

Որոիոսի երկասրութիւնը. – Որատիոսի գրուածք-
ները երկու մասն կը բաժնուին, Քնարական էր-
կոներ և Պարզ էրկոներ, կամ ինչպէս հինք
կը բաժնեն Երգ (Carmina) և Ճառ (Sermones):
Ասոնց վրայ զատ զատ պիտի խօսինք, նախ իրեն
գրաւորական հանճարին վրայ երկու խօսք մը
ընելով:

Որոիոյ գրաւոր կամ մատենագրական գեղեցկու-
նը. – Կուինտիլիանոս Որատեայ երգիծաբանու-
թիւնները Լուկիլիոսինիներուն հետ բաղդատելով
շատ գերազանց կը գտնէ առջինը. որովհետև,
կըսէ, զարմանալի է Որատեայ բարուց ստորա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 11:48 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

գրուԹիւնը : Իսկ իրեն երգոցը վայ ասանկ կը զուրցէ . “ Քնարերգակ լաւին քերԹողաց մէջ՝ միայն Որատիոս է կարդալու արժանաւոր . որովհետև լի է ընորհօք և վայելչուԹեամբ ,, :

Որատիոս առաւելօս . — Որատիոս իր երգիծաբանուԹեանց և ԹղԹոց մէջ մարդկային կենաց վրայ շատ ընտիր խորհրդածուԹիւնք կընէ . և գիտնալով Թէ խրատին ազդեցուԹիւնը զօրաւոր ընելու համար հիներն առակին գործածուԹիւնը հնարեր են , շատ անգամ զանոնք կը գործածէ : Հնոց մէջ կրնանք ըսել Թէ Եզովբոսէ զատ մէկն եղած չէ՝ որ Որատիոսի պէս վայելուչ առակներ շարադրած ըլլայ : Իր ոճը ցցընելու համար՝ պատմական առակներէն մէկը յիշատակենք . — “ Ագռաւի մէջ ազնուական մարդ մը կար , կըսէ , որն որ երևակայուԹեանը մէջ դրած էր Թէ հարուստ Թատեր մը մէջ նատած և ընտիր ոդբերգուԹեանց հանդիսատես կըլլայ : Ա՛ս ԹերուԹենէն զատ տնական և քաղաքային կենաց հարկաւոր եղած ամէն յատկուԹիւնքն ունէր : Բարեկամներըը մեծ փուԹով և ծախքով զինքը բժշկեցին : Մարդը երբոր ինքնիրեն եկաւ , Ով բարեկամք , ըսաւ , զիս բըժշկելու տեղն սպաննեցիք՝ որովհետև այնպիսի հաճոյքէ մը զրկեցիք՝ որով մեծապէս կը զուարճանայի ,, : Ասանկ սովորական կարծուած առակներ՝ Որատեայ գրչին տակ մեծ ուժ և գեղեցիկ յատկուԹիւն առած են :

Որոփեայ երգերը (Carmina) . — Թէպէտև Որատիոս եղած չըլլայ՝ իւոլական քերԹուԹիւնքը հռովմէական բարբառով Խոալիոյ մէջ հնչեցընող , բայց իրեն պարծանքն ան է որ Յունաց քերԹողաց նմանողներուն և գրեԹէ հաւասարողներուն մէջ առջինն է : Յունական մատենագրուԹեանց պատմուԹեանը մէջ յիշեցինք Թէ ինչպէս

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 11:49 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ա.աջաբան մըն է ուրիշներուն, յորում հատուա-
ծուն բնաւորութիւն չունեցող մարդոց վրայ կը
խօսի, որոնք մեծութիւն և ինչք դիզելու եռանդ
եղած են:

Երկրորդին մէջ ծաղր կընէ ան ամէն կարծուած
արդելքները, որ սիրոյ մէջ գժուարին կերևնան:
Ազգի ազատութիւնն ինչուան չնականութեան
տարած է քերթողն ա.ս երգիծաբանութեա.ս մէջ:

Երրորդն ան մարդկանց դէմ է որ կարծես թէ
իրենց արուեստ ըրած են ուրիշներու վրայ խոր-
հիլ և խօսիլ՝ անպատեհ կամ ձեռնասկար հե-
տևանքներով:

Չորրորդով պատասխան կու տայ անոնց որոնք
առջի երգիծաբանութեանց դէմ խօսեր էին:

Հինգերորդը ստորագրութիւն է իր ճանապար-
հորդութեանը զոր Մեկենասայ, Վիրգիլիոսի,
Պլոտիոսի և Վարիոսի հետ ըրաւ Որատիոս դէպ
'ի Բրունդիսիոն:

Վեցերորդը գրեթէ իրեն պատմութիւնն է և
վարուցը նկարագիր, յորում կը պատմէ իր ծնունդը
և դաստիարակութիւնը, և թէ ինչպէս իր հօ-
րը փութոնքն անուանի մարդկանց բարեկամու-
թեանն արժանի եղաւ:

Եօթներորդը չինած է մէկ դատաստանի մը հա-
մար՝ զոր կատարել էր Բրուտոս՝ փոքրուն Ափոյ քա-
պաքապետը:

Ութերորդը կիւսից և հմայութեանց դէմ է:

Իններորդին մէջ շատախօս քերթողի մը անձա-
հութիւնները կըատրապրէ:

Տասներորդը զուտ բանադատական երգիծա-
բանութիւն մըն է, յորում Որատիոս կը պաշտ-
պանէ ան դատաստանը զոր Լուկիլեայ քերթու-
թեանց վրայ ըրեր էր:

Երկտող գլխին մէջ ուր երգիծաբանութիւնք
կը բովանդակին:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 11:49 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Առջինը զրուցատրութիւն մըն է Որատիոսի և Տրեբատիոս իրատագիտին մէջ, լի վայելչութեամբ և զուարճախօս ոճով: Պատասխան կու տայ քերթողն անոնց որ իր երկասիրութիւնքը արհամարհեր էին:

Երկրորդը հռովմայեցւոց շրայլ և վատնող բարքերը վրայ է: Սովորականէն աւելի աշխոյժ կը ցցընէ սատր մէջ Որատիոս. բայց խօսողն ինքը չէ, այլ Ոփեղլիոս անունով սաբինացի գեղջուկ մը:

Երրորդին մէջ սատիկեան իմաստասիրի մը կեղծաւորեալ խստակրօնութիւնը կը ծաղրէ:

Չորրորդը տրամախօսութիւն մըն է Որատիոսի և Գատիոս որովայնասպարարին մէջ:

Հինգերորդն անոնց դէմ է որ ծերերն ու հիւանդները կը չոլոքորթեն, որպէս զի անոնց աչքը մտնելով մեծութիւննին ժառանգեն:

Վեցերորդը գաշտորկից և գիւղական կենաց բարօրութեան վրայ գովեստ մըն է:

Եօթներորդին մէջ կը ձևացընէ Որատիոս թէ իր գերիներէն մէկը իր վարուց և բնաւորութեց պակասութիւններն երեսը կը զարնէ:

Ութերորդը խնջոյից մը նկարագիրը է՝ զոր ազնուական ագահին մէկը Մեկենասայ տուեր կը:

Երգիծաբանութեանց ոճը այլևայլ է, ինչպէս իրենց նիւթերը: Ամէն բանի կը գպչի քերթողը, ամէն բանի վրայ կը խօսի, և միշտ նիւթին յարմար եղանակաւ և լեզուով մը: Այսպիսի քերթուածներ ախորժելի և ընտանի ընելու համար հնարք չէ միացեր որ չգործածէ Որատիոս:

Որոպէս ընդհէրզ. — Որատեայ թղթերն ալ երգիծաբանութեանց ոճովը գրուած են, բայց աւելի աշխոյժ և ջանք կերևնայ անոնց մէջ: Թղթոցն առաջին գրոց նիւթերը բարոյական խնդրոց վրայ են. իսկ երկրորդ գրքինները գրաւորական ա-

Generated on 2016-05-05 11:49 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

խորհակի վրայ կը ձառեն: Առջի գրոց մէջ քան թուղթ կը բովանդակուին, որոնցմէ ոմանք ծանր՝ և աւելի շատերը զուարճախօս ոճով գրուած են: Երկրորդ գիրքն իրեք թղթով կը ձևանայ, զորս տալագրողք իրարու հետ միացուցեր, և Ընտեսպ բերղոզական (De arte poetica) կոչեր են:

Քերթողական արուեստը Որատիոս թղթի ձևով գրեր էր առ Պիսոնեանս, որոնք երկու եղբայրք էին և գրասուր պարապմանց եաւէչ եղողք: Ընտիր երկասիրութիւն մըն է ասիկայ, և ինչպէս հայկականին մեծարգոյ Թարգմանիչը կըսէ[1], բաղդ մը քերթողական ուսման՝ որուն կանոններն այսպիսի վեհագոյն վարժապետի մը ձեռքով աւանդուեր են: Ինչ որ Լոնգինոսի համար ըսինք, նոյնն աւելի վստահութեամբ նաև Որատեայ քերթողականին վրայ կերկրորդենք, թէ վարդապետութիւնն ու օրինակը միանգամայն աւանդեր է. ուսոտի և ընդունայն աշխատող և զրախօս կը սեպեն բանասէրք ան ամէնքն որ այսպիսի երկասիրութեան մը մէջ բծեր փնտրտելով իրենց խելքն ու բարակ դատաստանը կուզեն ցցընել, սակայն անով հանճարի և ուսման նուաստութիւննին կը յայտնեն:

1 Վէրգիլեայ Մշակականաց ճարտար Թարգմանիչը՝ նայն չափով ընծայեց ազգիս նաև Որպէսայ Քերթողական արուեստը. (Վենետիկ 1847). ընծայ մը՝ որուն աղնուութիւնն աւելի ան ապեն պիտի իմանայ ազգերնիս, երբոր գրասրական ախորժակը նրնուի:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 11:50 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԼՈՒԽ ԻԱ.

ԵՂԵՐՍԵՐԳԱԿ ՔԵՐԹՈՂԻՔ

Կալլոս. — Պրոպերփիոս և իր եղերերգութիւնը. — Տիբուլլոսի վրէժը. — Եղերերգակ երկասիրութիւնը:

Կալլոս. — Յունաց եղերերգակ քերթողացը հեռուներուն մէջ առաջին եղաւ Կաստուլլոս, որուն նմանեցաւ Կուռնելիոս Կալլոս՝ Վիրգիլեայ մտերիմ բարեկամ աստիճան մը: Քաղաքական կեանքի մէջ մտնելով այլևայլ ծառայութիւն ըրաւ Կալլոս Հոկտաւիանոսի, անոր յԱղեքսանդրիա տուած պատերազմին ժամանակ. Հոկտաւիանոս ալ Եգիպտոսի քաղաքապետ անուանեց զինքը: Ինչպէս ուրիշ շատ հռովմայեցի քաղաքապետք, Կալլոս ալ ան պաշտամանը մէջ չկրցաւ հարկաւոր չափաւորութիւնը պահել. ուստի իբրև մատնիչ ամբաստանուելով ետ կանչուեցաւ, ու մշտընջենաւոր աքսորանաց պատուհաս ընդունեցաւ: Սակայն այնպիսի պատժոյ մը խստութեան չկարենալով համբերել՝ ինքզինքը սպաննեց, Քրիստոսէ 26 տարի առաջ, իր քառասնամեայ հասակին:

Ձորս գիրք եղերերգութեանց շարադրեր էր Կալլոս, և հաւանական կերևնայ թէ անոնց մէջ աւելի շատ էր կիրքն և աշխոյժը, քան թէ լեզուի հարկաւոր յատկութիւնք. որովհետև Կուինտիլիանոս ալ կըսէ թէ խորթ ոճ մը ունէր: Կալլոսի անուամբը գտնուած հատուածներն անհարազատ են. և կը կարծուի թէ յետին դարուց քերականք չինած և անոր անունը վրան գրած ըլլան:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 11:50 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Պրոպերտիոս ի՞նչ էղեր էգ-ի-նէը. — Սեքստոս Աւրելիոս Պրոպերտիոս՝ Ումպրիոյ Միւանիա քա-ղաքը ծնած էր, Քրիստոսէ 52 տարի առաջ: Իր հայրը Օգոստոսի հոկտաւեայ քաղաքականու-թեան զոհ եղող մարդիկներէն մէկն էր. վասն զի Անտոնիոսի կողմը բռնած ըլլալով՝ երբոր հոկտա-ւիանոս զօրացաւ ու փէրուձիա քաղաքն առաւ, հրամայեց որ կեսարու յիշատակին ընծայած բագնին վրայ ուրիշ անուանի մարդկանց հետ զինքն ալ խղդեն: Բայց անոր որդւոյն Պրոպեր-տեայ վրայ մեծ սէր և համարմունք կը ցցընէին թէ հոկտաւիանոս և թէ Մեկենաս: կայսեր ար-քունեացը զարդերէն մէկն եղաւ նաև Պրոպեր-տիոս. բայց լրեն գլխաւոր թերութիւնն ան է որ իր հօրը գահիճը կը գովէ, թէպէտև Օգոստոս առջի հոկտաւիանոսը եղած չըլլայ, և նախկին գազանական վայրենութիւնը մարդասիրութեան փոխած: Հաւանական է թէ Ումպրիոյ մէջ մե-ռեր է Պրոպերտիոս, որովհետև ատեն անցնելէն ետքը հոն գերեզմանական քար մը գտնուեցաւ իր անուամբը:

Լահարփ գաղղիացին, որուն հնոց երկասիրու-թեանցը վրայ ըրած բանադատական քննութիւն-քը շատ անգամ մանաւոր մտադրութեան արժանի են, ասանկ կը խօսի Պրոպերտեայ քե-րթուածոցը վրայ. "Սիրոյ, և երբեմն նաև հե-ւտութեան ոգւով լցուած են, կըսէ, Պրոպեր-տեայ քերթութիւնքը. և նոյնը վկայեց Ովիդիոս երբոր կը զուրցէր թէ ցաճախ Պրոպերտիոս իր որ-ևէ ինծի պէտէ. (Sæpe suos solitibus recitare Pro-pertius ignes): Սակայն դիցաբանութիւնքը խիստ կը յաճախէ. անով է որ շատ անգամ իբրև հա-ստարակ տեղիք կը գործածէ ան ամէն բաները՝ ո-րոնց վայելուչ կիրառութեամբ ուրիշ քերթողք փառաւորուեր են":

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 12:00 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Պրոպերտեայ եղեերգուԹիւնքը չորս գիրք կը բաժնուին : Առջի իրեք գրոց հատուածները եղեերգո-ԻՒ-ն (Elegias) կը կոչուին. իսկ չորրորդ գրքիններները Երգ (Carmina) : Այսպիսի տարբեր անուանակոչուԹեան պատճառն է որ վերջիններուս ԹէպէԹ չափը եղեերգական, բայց իմաստները նոյն նիւԹին չեն վերաբերիր. այլ զանազան երգեր, ինչպէս Հռովմայ գովեստ մը, Տարպեան ժայռից վրայէն եղած պատուհասի մը պատմուԹիւն, և այլն :

Տիբուլլեայ վարք. — Տիբուլլեայ վարուցը վրայ նշանակուԹեան արժանի բան մը չի պատմուիր : Ոմանք կըսեն ԹԷ հազիւ երասան տարուան հասած ըլլայ. ոմանք ալ ԹԷ քսանըչորս տարուան եղած ատենը մեռեր է :

Պրոպերտեայ պէս ինքն ալ աստեղական ցեղէ էր, և քաղաքական պատերազմայ պատճառաւ իր հայրենի տացուածոց մեծ մասը կորսընցնելով, ծնացածովը կապրէր : ՊատանեկուԹեանն ատեն կորվինոս Մեսսալային հետ բարեկամացաւ, և անոր ընկերելով Ինչուան յԱկուիտանիա և յԱսիա գնաց : Ան ճամբորդուԹենէն դառնալու ատենը մեռաւ ըստ ոմանց՝ ի յունաստան, իսկ ըստ այլոց յԻտալիա : Չորս գիրք բանաստեղծուԹեանց ձգեց, կամ երասունըեօԹը պզտիկ քերԹուածներ, որոնց ամէնքն ալ, բաց ՝ի մէկէն, եղեերգական քերԹուԹեան չափով գրուած են, և աս մէկը Մեսսալային վրայ շարադրած նեըբոյն է՝ վեցաչափ դիւցազնական ոտքով : ՏանըեօԹը տարուան հասակին շարադրած է աս քերԹուԹիւնը :

Տիբուլլեայ եղեերգակ էլեոգեր-ԻՒ-ն. — "Տիբուլլեայ աշխոյժը Պրոպերտեայ ունեցածէն քիչ է, կըսէ Լահարպի, բայց աւելի գործական և փափուկ ոճ ունենալուն՝ իրաւամբ զգածման քեր-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 12:01 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

թող կը սեպուի : Իբրև մատենագիր՝ գերազանց է քան իւրեն ամէն նախանձորդքը . ոճն ընտիր , ախորժակը մաքուր , շարադրութիւնն անսագիաս: Բայատրութեան այնպիսի կերպ մը ունի՝ որ թարգմանիչ մը չէ կրցեր անոր քաղցրութիւնը իմաստն իր լեզուին փոխել , վասն զի միայն սլտով կիմացուի անոր աղնուութիւնը : Գեղեցիկ ներդաշնակութիւն մը՝ մարդուս սրտին մէջ խորունկ տպաւորութիւն կընէ ... Մինչ գեղեցիկ է բնութիւն , մանաւանդ երբոր անոր մէկ մասն առանձին նը կատենք ,, : Լահարպի կերևնայ թէ լաւ ըմբռներ է Տիբուլլեայ ոճին գերազանցութիւնը որով կըրցեր է ընտիր թարգմանութիւն մը ընել անոր մէկ եղերերգութեանը , որ ինչպէս լատին քերթողին , սանկ ալ գաղղիացի բանասիրին մեծ պատիւ կընէ :

ԳԼՈՒԽ ԻԲ .

ՈՎԻԴԻՈՍ ՆԱՍՈՆ

Ովիդիոսի վարքը . — Ովիդիոս եղերերգակ փերլոզ . — Վարդապետական փերլոզիւնք . — Անլսերպոզիւնք . — Մեղք :

Ովիդիոսի վարքը . — Պոբլիոս Ովիդիոս Նասոն Քրիստոսէ 43 տարի առաջ ծնաւ ի Սալմոնէ , հարուստ և ազնուական ցեղէ : Պատանեկութեան տեսիլը չդրամ իւրկուեցաւ , որպէս զի ուսումնական ընթացքը լմընցընելով կարենայ քաղաքական պաշտամանց ձեռք զարնել : Շատ անուանի վարժապետք ունեցաւ , որոնց մէջ կը յի-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 12:08 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

չատակուին Պորտիոս Լատրոն և անուանին Մեսսալա։ Ուսումը լմընցնելէն ետքը՝ ժամանակին ազնուական հռովմայեցւոց սովորութեանը համեմատ յոնաստան ճամբորդութիւն մը ըրաւ։ Ի դարձին՝ դատաստանի և ատենի վերաբերեալ գործոց պաշտօնեայ սահմանուեցաւ. և կրնար ինչուան ծերակուտին մէջ անցնիլ, բայց ինքն ուսման պարապելն ամէն բանէ վեր սեպելով՝ այնպիսի զբաղմունքներէ մտադիւրութեամբ հրաժարեցաւ։

Տկայութեան ատենէն ցցուցեր էր իր բանաստեղծութեան ունեցած յարմարութիւնը. ու քանի տարուան հասակին՝ ամենէն անուանի քերթողաց կարգը կը սեպուէր։ Ատենին ուսումնականացը բարեկամն եղաւ. մեծասիրտ իրենց պաշտպանութեան ուսկն առին. Օգոստոս ալ շատ բանի մէջ իր անոր վրայ ունեցած համարումն ու սէրը յայտնապէս ցցուց։ Քերթողութեան ամէն տեսակին մէջ հռչակաւոր էր Ովիդիոս. զինքը Էլեան Էղեբերգուներան կը կոչէին. այլևայլ վարդասեւոական կամ պատմական քերթուածիներ հրատարակեր էր, ինչպէս նաև ողբերգութիւն մը՝ որուն վրայ շատ համարմունք ցցուցեր էին հանդիսականք։

Երջանկութեան ծայրը հասած կը սեպէր ինքզինքն Ովիդիոս՝ երբոր յանկարծ Թշուառութեց խորունկ յատակն ընկաւ։ Յիսուն տարուան հասակին կայսրը հրամայեց իրեն որ Իտալիայէն հեռանայ, եւքսինեան Պոնտոսի վրայ եղած քաղաք մը երթայ բնակելու։ Ամէն կը կոչուէր ան քաղաքը, հռովմէական ընդարձակածաւալ պետութեան սահմանածայրն էր։ Ան աքսորանաց բուն պատճառը չի գիտցուիր. ոմանք կըսեն թէ տէրութեան վերաբերեալ բանի մը համար ըլլայ. ոմանք ալ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 12:08 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

քերթողին անառակ վարուցը համար կը կարծեն։ — Օգոստոսէն ետքն երբոր Տիբերիոս թագաւորեց, Ովիդիոս աղերսագիր մը տուաւ որ գէթ աւելի լաւ օդ ունեցող քաղաք մը զինքը փոխադրեն. բայց ձար չեղաւ. և հոն տրամութեամբ և վշտօք հալելով մաշելով՝ մեռաւ յիսունըրուինը կամ վաթսուն տարուան, Քրիստոսէ տասնըեօթը տարի վերջը։

Ովիդիոս առանց առաքինութեանց օրինակ մը ըլլալու, իր տկարութիւնքն և ախտերն ունեցաւ։ Սակայն բարքն ազնուական, և ընտիր զգածմանց տէր էր։

Ովիդիոս եղերերգակ տերևոց. — Յոյնք եղերերգութիւն կը կոչէին ան քերթուածքն որ իրեն սեպհական ոճով գրուած են. որով Ովիդեայ ամէն երկասիրութիւնքն եղերերգութիւնք կը սեպուէին անունց առջևն։ Բայց հռովմայեցիք յաւոց, ուրախութեան և մանաւանդ սիրոյ երգերուն կու տային ան անունը, և աստնց մէջ անհաւասար չափ կը բանեցընէին. այսինքն վեցչափ հառաչափ։ Սակայն կրնային նոյն չափն ուրիշ այլևայլ նիւթոց ալ գործածել. և քերթուածքն անկէց առնելով իր անունը՝ կը կոչուէր վիպասանական, վարդապետական և այլն։ Ար-ես ամատորիէ (Artis amatoriæ) ըսուածը՝ վարդապետական քերթուածն մըն է, ու եղերերգականին հետ բան չունի. նոյնպէս են նաև Ֆանակագրականը կամ Տրէգրականը (Fastorum libri XVI)։ Ովիդեայ եղերերգութիւնքը միայն աս չորսն են. Դիւցազնական նամակք (Epistolarum heroidum liber), Սէր (Amorum libri III), Ողբերգականք (Tristium libri V) և Նամակք ի Պոնտոս (Epistolarum ex Ponto libri IV)։

Սէր վրայ շարադրած երգերը՝ քերթողին պա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 12:08 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

տանեկուԹեան երկասիրուԹիւնքն են: Առաջ հինգ գիրք էին ատոնք. բայց եաքը Ովիդիոս անոնց մէջէն շատ բան դուրս հանելով իրէք գրքի վերածեց: Ա երգոց մէջ աւելի համարձակուԹիւն կայ քան Թէ կիրք, աշխոյժ քան Թէ դորով, որոնց մէջ զգայական և գեհհիկ մտաց աեր կը ցցնէ ինքզինքը Ովիդիոս, և անոր համեմատ կըստորագրէ սէրը. ուստի և կովինտիլիանոս իրաւամբք իրմէն գերազանց կը համարի զՊրոպերտիոս և զՏիբուլլոս:

Դիւցազնական կոչուած երգերուն վրայ շատ կը պարծենար Ովիդիոս: Ատոնց աս անուամբ կոչուելուն պատճառն էր որ հին դիւցազանց վրայ էին աս երգերը, ինչպէս Պարիսի կամ Հեղինեայ, Էնանդրի կամ Երոսի: Սիրոյը կամ սիրուհին՝ իրարու ԹղԹեր կը գրեն, որոնց կիրքը բացատրելով: Ատոնց մէջ ալ քերԹողական մեծ հանճար մը չերևնար. կամ Թէ աւելի ճիշդ ըսենք՝ հանճարին փառքը կը խաւարի՝ մտածմանց նուաստուԹեան առջև:

Տրմանի ըսուած հինգ գրքերը, և Թոմի ի Պոնտոսէ չորս գրքերը՝ Ովիդիոսի կենացը վերջին տարիներուն երկասիրուԹիւնքն են: Ատոնց մէջ քերԹողը մոռցած է իրեն առջի անհանճարուԹիւնքը. կրից գերի եղած սիրտը Թողեր է, ու կրակի խեղճուԹեանցն և տառապանաց վրայ գանգատիլ, կը լանայ զուրիչներն ալ իրեն բաղդին վշտակից առնել: Շատ լաւ ոճով գրուած են ատոնք, մանաւանդ Տրմանիայ առաջին երգը. յորում Նաւվմայ մէջ անցուցած վերջին գիշերը կը նկարագրէ Ովիդիոս, միայն Թէ տրամալի խօսքերուն յաճախուԹեամբը տաղտկալի գարձեր են, որով քիչ անգամ մարդուս սրտին վրայ տպաւորուԹիւն կընեն:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 12:08 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Իպիս. — Երգիծաբան քերթուղեան հանճար չունէր Ովիդիոս: Մէկ անգամ մը միայն սաստ փորձն ուզեր է ընել, գերուղեանն առջի տարի- նեերը: Անկաճը հասաւ թէ Հռովմայ մէջ ունեցած որսակից բարեկամներէն մէկը յանկարծ գվնա- ւոր ոսկան եղեր է, և թէ կը ջանայ զՕգոստոս աւելի խստացընել Ովիդիոսի դէմ, և ունեցածը չունեցածը յափշտակել: Ան ժամանակ շարադրեց քերթողն իր Իպիս կամ քաջկոծ կոչուած եր- գիծաբանուղիւնը. ու անոր առջի բարեկամու- ղիւնը մոռնալով, նախատինք չմնաց որ չզուրցէ վրան: Բայց անով ալ բան մը չյաղեցաւ:

Վարդապետական Տրիստիանոս. — Ովիդեայ վար- գապետական քերթուղեանց մէջ գվնաւորնե- րէն մէկն է վերը յիշատակուած Յաղագս արուես- տի սիրելոյ ըսուած երգերը. եաքէն իբրև շարու- նակուղիւն անոնց շարադրեց Դեղ սիրոյ (Reme- dium amoris) ըսուածները: Մենք սոնց վրայ խօսքերնիս երկընցընել չենք ուզեր. միայն անուն- նին բաւականէն աւելի անոնց նիւթերն և իմաստ- ները կը յայտնէ, ու միանգամայն կը խրատէ ըզ- գուշանալ յընթերցմանէ: — Ովիդեայ երկրորդ վարդապետական քերթուածքն են

Տրէգրոնիուս, որոնք գեռ չէր լմընցուցած երբոր աքսորանքի կերթար: Երկոտասան գիրք բաժնուած էին սոնք, տարուոյն նոյնչափ ամսոց թուովը: Հիմա սա գրքերէն վեցը միայն մնացած է. իսկ վերջի վեցը չորրորդ դարէն՝ի վեր կոր- ուսած էին: Քերթողն իր սա երկասիրուղեանը մէջ ստորագրած է հռովմայեցւոց զանազան սո- վորուղիւնքը, աւելորդապաշտուղիւնները, սո- նից սահմանադրուղիւնքը՝ տարուան օրերուն կարգաբը: Նիւթը հին պատմուղիւններէ և քեր- թուածներէ կը հաւաքէ. բայց իրեն յատկացնե-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 12:09 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

լով և գեղեցկացընելով. ան վաղեմի ճոխութեանց պարզութիւնն ու ցամաքութիւնը՝ բանաստեղծական գեղեցկութեամբ կը զարդարէ:

Ալէքսօ-ԻՒնտ. — Ովիդեայ գլուխ գրուածոց և հին արուեստի հոյակապ և կատարեալ շինքերէն մէկն է Ալէքսօ-ԻՒնտ (Metamorphoseon) կոչուած մեծ քերթուածը: Ազատութեան չգացած շարադրեր էր ասիկայ քերթողը. բայց երբոր գահն արցունքով և յուսահատութեամբ մը Հռոմէն կը հեռանար, իր ուրիշ գրուածոց հետ ասիկայ ալ կրակի տուաւ: Բարեբաղդաբար բարեկամացը քով օրինակները մնացեր էին. Ովիդեայ անունց ըրած աղաչանքը բանի չեկաւ. չուզեցին աս բանիս մէջ հնազանդիլ իրեն և կամքը կատարել:

Ա՛ս երկասիրութեամբն է որ Ովիդիոս առաջին կարգի քերթողաց դասն անցեր է: Բանաստեղծական չափն և քնարը վիպասանականի փոխելով, գրեթէ յանակնկալս Հոմերի և Վիրգիլեայ արժանաւոր ժառանգ երևցաւ: Իրաւ է որ այլևայլ թերութիւնք ալ ունի աս գործը, բայց անանկ պակասութիւնք՝ որ կատարելութեանցը քով բոլորովին կոչընչանան:

Տասնըհինգ գիրք բաժնուած են Այլակերպութիւնք, որոնց մէջ Ովիդիոս առասպելական ժամանակաց դիցաբանութիւնքը, աշխարհածնութիւնը, և հռովմայեցւոց հին աւանդութիւնքը կը յիշատակէ: Ամէն մէկ արուեստը (episode) զարմանալի ճարտարութեամբ իրարու հետ միացած են, և որ մեծ պատիւ կրնէ քերթողին հանճարին ու մտացը: Սակայն իրեն ամէն կատարելութիւններուն ալ անկարելի է որ Վիրգիլեայ հաւասարի:

Մէդէա. — Այլակերպութենց շարադրութեամբը յայտնապէս ցցուցեր էր Ովիդիոս թէ քերթո-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 12:09 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ղական արուեստի ամէն մասանցը կատարեալ տե-
ղեկութիւն ունէր: Բայց Ալլակերպութիւնը չէա-
րագրած՝ նոյնը Մէդէա ողբերգութեամբն ալ ե-
րևցեր էր: Վարիոս կըսէ թէ լատինական թա-
տերախաղից մէջ ամենէն գերազանցն ասիկայ է.
նոյնը կը վկայէ նաև Կուինտիլիանոս: Մենք որոշ
բան մը չենք կրնար զուրցել. որովհետև միայն
մէկ տողը ձեռնարկիս հասած է: Ովիդիոս աս եր-
կասիրութեան մէջ Յունաց հետևեր էր և Եւրի-
պիդեայ համանուն ողբերգութենէն լոյս առած:

Ասոնցմէ զատ Ովիդեայ անուամբն ուրիշ այլև-
այլ երկասիրութիւնք ալ կը յիշատակուին. բայց
հարազատութիւննին տարակուսական է:

ԳԼՈՒԽ ԻԳ.

ՕԳՈՍՏԵԱՆ ԴԱՐՈՒՆ ՈՒՐՒՆ ՓԵՐԹՈՂՔ

Վարիոս. — Մագեր. — Գրոպիոս Փալէոկոս. — Մանիլիոս. — Գերմանիկոս. — Քերնուածք յաղագս Եպնայ:

Վարիոս. — Յիշատակուած անուանի քերթող-
ներէս զատ քիչ մարդ ունինք աւելցընելու: Բայց
ան ալ իրաւ է որ Օգոստեայ դարուն մէջ՝ ան մեծ-
անձն իշխանին առաստասիրտ օժանդակութեամ-
բը վ իրգիլիոսէ, Որատիոսէ, Պրոպերտիոսէ, Տի-
բուլլոսէ, Ովիդիոսէ զատ ուրիշ քերթողք ալ ե-
րևցան. Թէպէտև ոչ անոնց պէս հռչակաւորք:
Ասոնց մէջ գլխաւոր կը սեպուի Վարիոս, որուն
անունն առնիլ ունեցանք ուրիշ քանի մը անգամ
ալ յիշատակելու, և որն որ անուանի եղաւ իր
Թիէսթէս ողբերգութեամբը: Ձենք գիտեր թէ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 12:09 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ինչ ոճ ուներ սակայ, որովհետև մեզի հասած չէ. բայց հաւանական կերևնայ թէ յունական քերթողաց հետևողութեամբը շինուած երկասխրութիւն մը ըլլայ: Հիներն Ովիդեայ Մէդէա ողբերգութեանը հաւասար կը սեպէին. "Աւինիա համ Մեսսալա մեկ գիրք մը չունին, կըսէ Կուինտիլիանոս, որ Ովիդեայ Մէդէա և Վարիոսի Թիէսթէս ողբերգութեանցը հաւասարին:

Վիրգիլիոսէ ետքը վիպասանական քերթող Լուկանոս է, փարսալեան կոչուած քերթուածին հեղինակը. բայց ամանք փեդոն Ալբինոբոս անունով մեկն ալ կը յիշեն, որ Ովիդեայ բարեկամին էր կըսեն, և՝ի պատիւ Գերմանիկոսի պատմական քերթուածիւն մը շարադրեց. յորում իրեն դէպ՝ի հիւսիսային Ովկիանոս ըրած արշաւանացը նկարագիրը կընէր: Բայց թէ որ Ենէականին հեղինակն անմիջական յաջորդքը կամ ժառանգները չունեցաւ, սակայն իրեն մշակականացը հետևողք գտնուեցան. որոնք թէպէտ ոչ Վիրգիլեայ, ոչ Ովիդիոսի և ոչ Լուկրետեայ կարենան հաւասարիլ, բայց իրենց չափաւոր արդեանցը համար ալ յիշատակութեան արժանի կը սեպուին:

Մագէր. — Եմիլիոս Մագեր վերոնացին՝ Նիկանդրի հետևող եղաւ, որն որ բուսոց յատկութեանը վրայ գիրք մը շարադրեր էր: Ա գրուածքը հիմա կորուսած է. իսկ իրեն անուամբն եղած քերթուածինքը հաւանական կերևնայ թէ երկրորդ գարուն համանուն քերթողի մը ըլլան, որովհետև ասոնց մէջ ոչ ոճ և ոչ հանճար կայ. ուր առաջինը Լուկրետեայ հաւասար կը սեպէ Կուինտիլիանոս:

Գրոֆիոս փալէոպս. — Հինգհարիւր տողէն աւելի բաղկացած պզտիկ քերթուածիւն մը ձեռուընիս հասած է, կ՚ենթադրեան կոչուած, որուն հե-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 12:09 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ղինակը Գրոտիոս Փաղիսկոս՝ Ովիդեայ ժամանակակից կերևնայ : Իրեն գլխաւոր թերութիւնքն իմաստից մթութենէն առաջ եկած է. որոնց տակ շատ անգամ քերթողին բուն միտքը կը ծածկուի : Դիտելու բան մըն ալ աս է որ Գրոտիոս ամենուն համար չէ շարադրած իր աս քերթուածը, այլ մանաւորաբար ուսորդաց, ուսոի և անոնց սովորական եղած բառերը գործածեր է : Սակայն ա- նով հանգերձ մէջն այլևայլ ստորագրութիւնք կը գտնուին, որոնց վրայ աքանչացած են բանասէրք. ինչպէս չան նկարագիրը, Հեփեստեայ անասունները բժշկելուն պատմութիւնը, և այլն :

Մանիլիոս. – Մարկոս Մանիլիոսի համար կասանգեն թէ Օգոստեայ կայսերութեան վերջին տարիները շարադրած ըլլայ իր ոտանաւորները : Եւ յիրաւի, իրեն ոճն ալ կը ցցընէ թէ անկման դարու երկասիրութիւն չէ : Բայց Մանիլիոսի ուր տեղացի ըլլալը, ճիշդ ժամանակն և կենաց հանգամանքն որոշ չի գիտցուիր : Իր անուամբը քերթուած մը հասած է ձեռագրնիս՝ Ասթրոնոմիկոն կոչուած, որ բաւական երկայնութիւն ունի. թէպէտ մեր ձեռքը պակասաւոր հասած է, կամ հեղինակն անկատար թողեր է : Հինգ գիրք բաժնուած է, ամէն մէկը վերջին մշակակատնաց գլուխերուն ընդարձակութեամբը : Մանիլիոսի աստեղաբաշխական գիտութիւնը չափաւոր, և ատոր համար կը մեղադրուի որ շատ անգամ աստեղագիտութիւնը մէջը խառներ է. ճշմարիտ գիտութիւն մը ստին հետ չի կրնար միաբանիլ : Բայց աս թերութիւնները քերթողական ոգւոյն վնասակար եղած չեն : Գլուխին ոճը պարզ, արտահայտութիւնք ընտիր, որոնք երբեմն իսրատական իմաստներով աւելի ուժ կառնեն. ատոնք են Մանիլեայ քերթուածոյն յատկութիւնքը, որոնք ա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 12:10 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ուղիին և հինգերորդ գրոց մէջ աւելի յաճախ կը գանուին : Իրաւ է որ աստուց մէջ վիրգիլեայ ոչ ուժը և ոչ աշխոյժը կայ. բայց միշտ կատարեալ բանաստեղծութիւն սեպուած է և կը սեպուի. վասն զի տաղաչափութիւնն ընտիր, իմաստքն ալ լի ուժով և զօրութեամբ : Ուսոյն և իրեն զանազան թերութեամբն ալ աստեղաբաշխական քերթուածը կրնայ հին լատինական լեզուին պատիւ ընող երկասիրութիւններէն մէկը համարուիլ :

Գերմանիկոս. – Գերմանիկոս ալ, ան առաքինի բայց դժբաղդ իշխանը, առանց մեծ բանաստեղծ մը ըլլալու, հաճոյական քերթուածներ կը շարադրէր, որոնց այլևայլ հատուածներն ինչուան մեր օրերը հասած են : Իրեն հեռևողութեան գաղափար՝ զԱրատոս յոյն քերթողն առեր էր :

Քերթուած յաղագս երկնից. – Երկնա կոչուած բաւական ընդարձակութեամբ քերթուածի մը կայ՝ որուն հեղինակ՝ հիներն զԿուռնելիոս Սեւերոս կը համարին. ոմանք ալ զԼուկիլիոս՝ Սենեկայի բարեկամը, զոր Կրատեր կը կոչեն, անուանի երդիծաբանէն որոշելու համար : Որուն ալ ըլլայ, նշանաւոր երկասիրութիւն մը չենք կրնար սեպել, և ոչ օգոստեան դարուն արժանաւոր, յորում բանաստեղծութիւնը շատ առաջ գնացեր և գրութեան ոճը ծալկած էր :

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 12:10 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԼՈՒԽ ԻԴ.

ՓԵԴՐՈՍ

Փեդրոսի վարքը. — Փեդրոսի սկզբնականութիւնը. — Իրեն առակաց հատափման պատմութիւնը:

Փեդրոսի վարքը. — Փեդրոսի վարուցը վասն որոշ տեղեկութիւն մը չունինք. ոմանք մակեդոնացի, ուրիշներն ալ Թրակացի կը համարին զինքը, ու նախ գերի, ետքը Օգոստեայ ազատագրեալն եղած ըլլայ. ինչպէս իր Առակաց գրքին խորագրին մէջ կը յիշատակուի: Ոմանք կըսեն թէ Տիբերիոսի ազատագիրն ըլլայ, որովհետև Օգոստոս անունը սեպհական էր ամենայն կայսերաց. բայց աս կարծիքն այնչափ հաւանական չերևնար:

Սէյանոս անունով մէկը փեդրոսի գրոցը մէջ առաքինութեան գովեստ և մոլութեան պարսաւ տեսնելով, կարծեց թէ քերթողը ծածուկ միտք մը ունեցած ըլլայ զինքը թշնամանելու և նախատելու. ուստի սկսաւ հալածել զինքն և վրան այլ ևայլ ամբաստանութիւններ ընել: Բայց փեդրոսի միտքն մը չկրցաւ հասցընել, որ ինչուան՝ ի խոր ծերութիւն ապրելով՝ կրնդեայ կայսերութեանը ժամանակ մեռաւ:

Փեդրոսի սկզբնականութիւնը (Originalité). — Որատեայ վասն խօսելու առեննիս չիշատակեցինք թէ ինքն ալ առակներ շարադրած ըլլայ բաւական հանճարով և աշխուժով: Թերևս Որատիոսէ առաջ ալ կար աս տեսակ մատենագրութիւնը, բայց փեդրոսի գլխաւոր արդիւնքն ան եղաւ որ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 12:10 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

անոնց պէս անկերպարան ոտղերով չչարտադրեց իր առակները, այլ բուն լատինական երկդանեղի չափով, զոր իրենք վէրսէնեան (vers senaires) կը կոչեին:

Փեդրոսի իննսուն առակները լատինական դրպրութեանց գեղեցիկ յիշատակարաններէն մեկը սեպուած են արժանապէս: Անոնց մէջէն շատը թարգմանութիւնք են, ինչպէս ինքն ալ կը խոստովանի. բայց շատերն ալ իր հանճարին արգասիքն են: Ոչ միայն Եզովբոսի, հապա նաև կալլիմաքեայ հետևած է Փեդրոս. բայց ընտիր նմանողութիւնը, ինչպէս ուրիշ տեղ ալ յիշատակեր ենք, քերթողին փառացը պակասութեան նշան չէ և չի կրնար ըլլալ: "Փեդրոսի ոճը, կըսէ գալլիացի նիշար բանասէրը, զուարճալի է և իմաստուն. և անանկ պարզութիւն մը ունի, զոր թերևս ուրիշ հռովմայեցի մատենագիր մը չէ կըրցած ստանալ. ամփոփ է, բայց միանգամայն դիւրիմաց. աշխատուած, բայց առանց պարզութիւնը կորսընցընելու... Մէջն նկարագրութիւնքը քիչ են, վասն զի Փեդրոս չափաւորութեամբ գործածէր զանոնք, գիտնալով թէ ոճի պարզութիւնն անոնց կարօտ չէ. և թէ ուր որ նկարագրութիւնքը բնական բերմամբ ըլլան, հոն աւելի հանճարի հարստութիւն և ընթերցողաց մտքին վրայ տպաւորութիւնը կերևնայ: Նոյնպէս քիչ են նաև գործածած փոխաբերութիւնքը, և իրաւունք ունի: Փեդրոսի մեծ գովութեան արժանաւոր համառոտախօսութիւնը՝ ոչ երբեք տաղտկութիւն կը բերէ կամ ցամաք կերևնայ: Խօսքի մը մէջէն ան ամէն բաները կը յապաւէ՝ որոնք իմաստը կերկընցընեն, առանց անոր լուսաւորութիւն կամ գիւրըմբռնելի յատկութիւն մը տալու,,:

Փէդրոսի առաջոյ հատորին պարունակը.— Քրիա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 12:11 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ասոի 1596 Թուականին հռչակաւոր իրաւագէտ գաղղիացին Փրանկիսկոս Փիթու գտաւ ան ձեռագիրն որուն վրայ իր եղբայրը Պետրոս Փիթու՝ Փեդրոսի առականերուն առաջին տպագրութիւնն ըրեր էր: Անկէ քիչ մը ետքն ուրիշ այլևայլ ձեռագիրք ալ գտնուեցան, որոնցմով առջինին մէջ եղած պակասորդքը լցուեցան: Բայց ան ամէն գըրչագիրքը չի գիտցուիր ինչպէս քիչ ատենի մէջ անհետացան, որով և Փեդրոսի անուամբը հրատարակուած առականերուն հարազատութենն ատուգութիւն մը չմնաց. և սկսան շատ քանասէրք տարակուսիլ, և զՓիթու և իրեն ընկերները շահասէր և խաբեբայ անձինք սեպել: Քննութիւնքը շատնալով գտան թէ Մանփրեատոնիոյ արքեպիսկոպոս Նիկողայոս Փէռոթիի անունով մէկը, որ հնգետասաներորդ դարուն վերջերը մեռեր էր, ինքը չարադրած ըլլայ սա առակաները, և կամաւ հին և անծանօթ մարդու մը անուն դրած վրան: Ուրիշներն ալ Փէռոթիին հարիւր տարի ետքն եղող Փեդրոս անունով մէկ մը հեղինակ սեպեցին ատոնց: Բայց լատին լեզուին հին կերպարանաւորութեանը և ոճին հմտութիւն ունեցող անձինք այսպիսի խնդրոյ մը մէջ չէին կրնար տարակոյս ունենալ. ուստի և գրեթէ չորս հարիւրէն աւելի տպագրութեանց մէջ հաստատեցին թէ բուն Օգոստեայ ժամանակակից է ան առակաց հեղինակը, և վերջին դարուց լատինագէտք անկարելի էր որ այնպիսի ոճ կարենային քանեցընել: Վէճը դեռ բոլորովին չէր լմընցած, երբոր 1830ին մատենադարանի մը խորչէն բուն ան ձեռագիրը գտնուեցաւ՝ որուն վրայէն Փիթու իր նախկին տպագրութիւնն ըրեր էր, և նմանահանութեամբ (fac simile) հրատարակուեցաւ: Ա՛ս գըրչագիրը տասներորդ դարուն էր, և Փէռոթիին

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 12:11 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կամ փեդրոսէ հինգ կամ վեց հարիւր տարի ա-
ռաջ. ուստի և անկէ ետքը մէկը չմնաց փեդրոսի
առակաց հարազատութեանը վրայ երկմտութիւն
ունեցող:

Վերջի տեեններս Մայ ծիրանաւոր բանասէրը
հին գրչագրաց մէջէն փեդրոսի այլևայլ առակ-
ներ գտնելով հրատարակեց[1]:

ԳԼՈՒԽ ԻԸ.

ԵՐԿՈՒ ՍԵՆԵԿԱՑԻ

Սէնէկա հայրն. – Երիցս Սէնէկայի երկախրատութիւնը. – Սէնէկա հրապերն կամ իմաստասէրը. – Սէնէկայի իմաստասիրական գրուածները. – Թուղթ առ Լուկիլիոս. – Սէնէկայի ոճերգութիւնը և անոնց հարազատութիւնը:

Սէնէկա հայրն. – փեդրոս՝ հանդերձ իրեն լատին լեզուի հմտութեամբը, անուշ ոճովը և իմաստիւքը կը ցցընէր թէ նոյն լեզուն սկսեր էր կամաց կամաց իր նախկին վայելչութենին և օգոստեան դարուն սեպհական փառքը կորսընցընել: Լեզու մը՝ որչափ ալ կատարելութեան հասնի, զարմանք չէ որ յանկարծ զանոնք բոլորովին կորսընցընելու վտանգի մէջ իյնայ: Ամեն ազգաց գպրութեան պատմութեանցը մէջ աս տխուր յեղափոխութիւնը կը տեսնուի: Հռովմայեցի բանասէրք ալ կերևնայ

1 Փեդրոսի Առակաց գրքին հայկական ընդհանրութիւնը փիլ ապեն է որ ազգերնիս սպասա՝ ջանասիրութեամբ Ար հիապափ- փեսան Հ. Եդուարդայ Հիւրմուղեան վարդապետին: Վենետիկ, 1855:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 12:11 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

թէ փեդրոսի ոճին մէջ ըմբռներ էին աս թեր-
թիւնը, և ան պատճառաւ կուինտիլիանոս յիշա-
տակութեան արժանի չի սեպեր զինքը:

Բայց լասինր լեզուին կործանման նախնական պատճառ եղողը Սենեկա երէցն կը սեպուի, և կամ ինչպէս լաւ կը զուրցէ հմուտ մը, սենե-կեանց ազգատոհմը. որովհետև ամէնքն ալ կար-ծես թէ մասնաւոր ջանք ունեցան ան պատերազ-մին և յեղափոխութեանը մէջ գործելու՝ յորում ախորժակը լեզուին հետ կորսուեցաւ: Իրենք մի-այն են մատենագիր օգոստեան դարուն ըմննա-լէն մինչև ի Փլաւեանց ժամանակը:

Սենեկա հայրն, (Մարկոս Աննէոս Սենեկա), Սպանիոյ կորդովա կամ կորդուբա քաղքէն էր. Օգոստեայ ժամանակ Հռոմ գալով և հոն եր-կան առեն կեցաւ. ուր բաւական յաջողութեամբ հռետորական արուեստի վարժապետութիւն ը-նելով, շատ ատակ դիզեց: Եղբը նորէն իր հայրե-նիքն Սպանիա դարձաւ, և Հելուիա ըսուած կնո-կան մը հետ ամուսնանալով՝ իրեք որդի ունեցաւ իրմէն: — Սենեկա՝ հանճարով և հմտութեամբ լի մարդ մըն էր. յիշողութիւնն ալ կարգէ դուրս, ինչպէս իր գրուածներէն կերևնայ: Ինքն իակ ի-րեն համար կատանդէ թէ կրնար երկու հազար բառ ետևէ ետև զուրցել՝ նոյն կարգաւ զոր դի-մացինէն լսեր էր: Ճառեր մտիկ ընելու կերթար, ու տուն դառնալով՝ լսածն ամբողջ գրի կանցընէր:

Երէց-ն Սենէկայի երկոտիրո-ներ. — Սենեկայի երիցուն անուամբն եղած գրուածոց մէջ առջինը կը սեպուի Յաղագս հակառակո-ղեանց De controversias), որ տասը գիրք բաժնուած էր, և մեր ձեռքը գրեթէ կէսը միայն հասած է, այսինքն առջի-նը, երկրորդը, եօթներորդը, ութերորդն և տասներորդը. անոնք ալ ոչ միշտ ամբողջ և անթերի:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 12:11 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ասոնք այլևայլ դատաստանական ձառեր են, զոր իրեն վարժուվեանը համար շարադրեր է Սենեկա։ Երկրորդ գրուածքն է Յուդոմոնի, որ միայն մէկ գրքի մէջ ամփոփուած էր, և մենք մէկ մասը միայն ունինք, և բաղնատհական (համոզիչ) ձառեր են, և գրեթէ նոյնպէս կեղծեալ։ Իրեն խորհրդածուվեանցը և ձառից մէջ տեղ տեղ նշանակուվեան արժանի հատուածներ և ընտիր մտածուվիւնք կերևնան։ Նիւեերն ընդհանրապէս աս տեսակ բաներ են. "Արդեօք արժան է որ Ագամեհան համոզուի իր աղջիկը ղոհելու. — Երբ հարիւր սպարապետ կրնային թերմոպիլեայ կիրճը ըռնել, երբոր ուրիշ Յունաց խախուտը պեաս. — Աղեքսանդր Ովկիանոսի վրայ ճամբորդուվիւն ըրաւ, և այլն։ Ինչպէս նիւեթոց առաջարկուվիւնքը նման են մեր աղգին մէջ խորհնացուցն անուամբը գտնուած պիպոյէց գրքին, սանկ ալ քիչ շատ ձարտարխօսական ոճը։ Բայց ինչպէս որ կերևնայ, Սենեկա չէր ըմբռնած թէ ինչ է բուն ձարտասանուվիւնը, և թէ ան գերազանց արուեստին յատկուվիւնքը՝ տղայական բառից խաղերու և իմաստից վրայ չէ. հապա զուրիչը համոզելու, և խօսքին ուժովը դիմայինին միտքը գերելու։ Ճարտասանուվիւնն աս վախճանիս չծառայելէն եաքը՝ արժանի չէ նոյն անուամբը կոչուելու։

Սենեկա երբոր կամ խմոպաէր. — Ղուկիոս Աննեոս Սենեկայի վարուց համառօտուվիւնը աւելի Հռովմայ քաղաքական պատմուվեանը կը վերաբերի։ Մենք միայն գլխաւոր պարագաները յիշատակելով գոհ ըլլանք։ Կորդուբայի մէջ ծնաւ Սենեկա, Քրիստոսի Թուականին երկրորդ կամ երրորդ տարուն, և տղայուվեան առեղը Հռոմ գալով՝ հոն սորվեցաւ հռետորուվիւնը և իմաստասիրուվիւնը, և քիչ ատենուան մէջ ձար-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 12:12 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

տարխօսութեան մեծ անուն հանեց, կալիգուլա կայսեր փառքը մթացուց. վասն զի ժամանակին Ճարտարախօսացը մէջ ամենէն աւելի հռչակաւոր ինքը կայսրը կը սեպուէր : Կաւանդեն Թէ երբոր օր մը ծերակուտին առջև կը խօսէր Սենեկա, կալիգուլա ամօթէն և նախանձէն ինքզինքը կուտէր. ուստի իրեն փառաց վնասակար եղող մարդը ուզեց մահուամբ վերցընել: Բայց կայսեր մտերիմներէն մէկը, որ միանգամայն Սենեկայի ալ բարեկամն էր, զինքը հանդարտեցուց, ու Ճարտասխօսին վատառողջ բնութիւնը յիշեցընելով՝ համոզեց զկայսրը Թէ քիչ ատենէն վաղամեռիկ կըլլայ, առանց կարենալու քաղաքական պաշտամանց մէջ մտնել : Բայց Սենեկա սուտ հանեց անոր գուշակութիւնը, և հնարքով մը համարակալութեան պաշտամանն հասաւ :

Կղոդիոսի կայսերութեանը ժամանակ ամբաստանութիւն եղաւ Սենեկայի վրայ Թէ Գերմանիկեայ դստերը՝ Յուլիայի հետ վերաբերութիւն ունեցած ըլլայ. ուստի և Կորսիկա կղզին աքսորուեցաւ: Հոն ութը տարի կենալէն ետքը՝ Ագրիպպինա նորէն Հռոմ կանչեց զինքը, ու պրետոր և իր որդւոյն Ներոնի դաստիարակ կարգեց : Նոյն պաշտամանն մէջ երկար ատեն կենալէն ետքը Սենեկա Ներոնի գազանային կատաղութենէն չկրցաւ ազատիլ. որն որ զինքը Պիսոնեանց դաւակցութեանը համախոհ սեպելով՝ հրաման տըւաւ որ մեռցընեն: Բայց երախտեաց յիշատակը տկար ազդեցութիւն մը ունեցաւ գթոյ անտեղեակ Ներոնի սրտին վրայ, մահուանը կերպը՝ դատապարտելոյն կամացը Թողուց. Սենեկա ալ ուզեց որ երակները բանան և անանկով մեռնի : Ան տարեն վաթանամեայ էր Սենեկա (65): Խմաստասիրին կինն ալ խեղճութեանը չկարենալով

աշխարհին այլևայլ քաղաքները, որ երբեմն երբեմն կայսերաց մանաւոր պատգամաւոր կը խրկէին, որպէս զի բոլոր քաղաքացւոց կողմանէ կայսեր բարեմաղթութիւն կամ շնորհակալութիւն ընէ: Պատգամաւորքն ալ իրենց գիտութեանը կամ հանճարին ներել տուածին չափ՝ ներբողեաններ կը շարադրէին:

Երրորդ դարուն մէջ այլևայլ պատմագիրք ալ ելան, որոնց գլխէն ամենուն ալ գրուածքը կորսուեցաւ. թէպէտև երկասիրութիւններն ալ ընդհանրապէս աննշան բաներ ըլլալով իրենց կորսուեամբը մեծ վնաս մը չբերին մատենագրական պատմութեան: Անոնց դասէն են Սեպտիմիոս Սևերոս, Լոլլիոս Ուրբիկոս, Մարիոս Մաքսիմոս, Փաբիոս Կեկիլիանոս, և այլք:

Նեմեսիանոս. — Մարկոս Ասրելիոս Նեմեսիանոս կարթագինեցի էր, ու կարոս, կարին և Նումերիանոս կայսերաց ժամանակը պայծառացած՝ ի Հռոմ: Նումերիանոս կայսրը, որ ինքն ալ քերթողութեան կը պարապէր, իր նախանձորդին վտանգը վրայ չնախանձեցաւ. և թէպէտ հրապարակական մրցանաց մէջ ալ յաղթուեցաւ անկէ, սակայն վտանգակ զինքն աքսորել կամ սպաննել տալու, ինչպէս որ ժամանակին զօրաւորացը սովորութիւն էր, սեպի պատիներ և հալոտութիւն պարգևեց Նեմեսիանոսի: Կարթագինեցի քերթողն ատանկ դիւրին կերպով ստացուած հարստութեան մը արժանի երևցաւ՝ զանիկայ այլոց բարիք ընելու գործածելով. Այսչափ է Նեմեսիանոսի վարուցը վրայ ունեցած տեղեկութիւնս: Ինչպէս ծննդեան, ատանկ ալ մահուան տարին չենք գիտեր:

Նեմեսիանոսի վարդապետական երկասիրքը. — Ի՞նչ վարդապետական քերթուածք շարադրեր էր

նեմեսիանոս. առջինը Որոյ, երկրորդը Զինոբոռ-
ընեան և երրորդը Նոռշէ-ընեան վերջ: Որոյ վերջ
գրած քերթուածէն բաւական մեծ կտոր մը ձե-
ռնընկա հասած է. իսկ մեկալնոցմէ՝ միայն քա-
նի մը տող քան: Մնացած հատուածներէն ինչ
որ կրնար հասկցուիլ, հեղինակը որոյ և ձկնոր-
սութեան վերջ գրած քերթուածոցը մէջ հե-
տևող էր Ոպպիանոսի. նաւարկութիւն կոչուածն
ալ կերևնայ թէ սկզբնագիր երկասիրութիւն մը
չէր. թէպետև չենք ալ գիտեր թէ որուն հետևո-
ղութեամբը չինուած:

Շատ տեղ արձակ և սովորական լեզու կը գա-
նեցընէ. ուժը պակաս, նկարագրութիւնքն ալ
յատկացուցիչ և մանաւոր յատկութիւն մը (carac-
téristique) չունին: Ա՛ս միայն իրաւ է որ յեղին և
անկման դարուց մատենագիրներուս շատն աւելի
ախորժակով կը գրէ. հոս է իր փառքը, և անով
իր անկատարութիւնքը քիչ մը կը դարմանէ: Ջանք
մը կերևնայ գրուածոցը մէջ՝ վիրգիլեան խօսքերը
իրեն յատկացընելու. և ա՛ս ջանքը ամէն անգամ
ընդունայն եղած չէ:

Ա՛ս քերթուածներէն զատ՝ հոն ալ հովուեր-
գութիւն շարադրած է Նեմեսիանոս՝ Վիրգիլեայ
նմանողութեամբը. բայց թէ ոճովը և թէ կիրթ
ախորժակաւ՝ մեծապէս կը զանազանի իրմէ:

ՁՈՐՈՐԴ ԴԱՐՈՒՆ ՊԱՏՄԱԳԻՐՔԸ. — Կայսերաց
վերջը գրող պոռիչ. — Ասանկ կը կոչուին ան ամէն
մատենագիրքը՝ որոնք հռոմէական կայսերաց
պատմութիւնը շարադրեր են Ադրիանոսէն մինչև
ի կարոս և իր որդիքը: Ա՛ս վերջուց բովանդակու-
թիւնը կրնայ շարունակութիւն մը սեպուիլ Սու-
ետոնիոսի գրուածոց: Նոյն պատմագրաց մէջ գըլ-
խաւորներն են

Ս. Եւթրոպ Պարբիանոս, Դիոկղետիանոսի ժա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 12:22 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մանակակից, որն որ Ադրիանոսի, Եվհոս Վերոսի, Դիդիոս Յուլիանոսի, Սեպտիմոս Սեւերոսի, Կարակալլայի և Գետասայ պատմութիւնքը շարադրեց:

Բ. Վուլգատիոս Կալլիգանոս, Աբիդիոս Կասիոսի պատմութեանը հեղինակ, զոր ամանք Սպարտիանոսի կը համարին: Եվհոսի ժամանակակից էր Վուլգատիոս:

Գ. Տրեբէլլիոս Պոլլիոն, որ երկուց Վալերեանց, երկուց Գալլերեանց և երեսուն բռնաւորաց պատմութիւնը գրեց: Ասոր գլխաւոր թերութիւնն է վատութիւնը՝ որով կը ջանայ չոլոքորթել զզօրաւորս:

Դ. Փլաւիոս Վոպիսկոս, սիրակուսացի, որ Կոստանդիանոսի ժամանակակից է: Ասոր երկասխրութիւնն է Աւրելիանոսի, Տակիտոսի, Փլորիանոսի, Պրոբոսի, Փիրմիոսի, Սատուռնինոսի, Պրոկոլոսի, Բոնոսի, Կարոսի, Կարինոսի և Նումերիանոսի վարքերը: Վոպիսկոս իբրև մատենագիր՝ առջիններէն շատ աւելի արդիւնք ունի. որովհետև վաւերական աղբիւրներ քննելու եռանդ եղեր էր, և պատմած անցիցը շատին ականատես: Պատմագրի մը անուան կրնար արժանի ըլլալ իրաւամբք՝ եթէ քիչ մը ոճի ընտրութիւն գործածէր: Ա թերութիւնը՝ իր յարգէն շատ բան պակսեցուցած է:

Ե. Եւիոս Լամբրիդիոս, զոր բազումք նոյն կը համարին Սպարտիանոսի հետ: Լամբրիտիոսի կընծայուին Կոմոդոսի, Հելիոգաբալոսի և Ալէքսանդր Սեւերոսի վարքերը:

Զ. Յուլիոս Կապիտոլինոս, Վոպիսկոսի և Տրեբէլլիոս Պոլլիոնի ժամանակակից, որն որ Անտոնինոս Պիոսի, Մարկոս Աւրելիոսի, Լուկիոս Վերոսի, Պերտինաքսայ, և այլն, վարքերը շարադրեց:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 12:23 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ա-ր-ե-լ-ի-ո-ս Վ-ի-կ-տ-ո-ր. – Աննշան մասնագիր մը չէ Աբրեվիոս Վիկտոր։ Կայսերաց պատմութիւնք երկասխրած է. որոնք Թէպէտ համառօտ ծանօթութիւնք են, բայց կերևնայ Թէ հեղինակին իր ամէն փոյթը բանեցուցեր է ընտիր և մաքուր լեզու գործածելու, և հաւատարիմ ալբերոյ հետևելու։ Վիկտորի կայսերաց պատմութեանը հատորները Օգոստոսէ կըսկսի, ու ինչուան Կոստանդիանոս կը հասնի։ Ասկէ զատ՝ Աբրեվիոսի ուրիշ այլևայլ երկասխրութիւնք կընծայուին, ինչպէս Սիկէրն ազգին հռովմայեցոց, որուն մէկ հատորն և գրեթէ աննշանական մասը ձեռնընիս հասած է. նոյնպէս վարք արանց անուանեաց հռովմայեցոց, որ Թերևս Նեպոսի գրքին համառօտութիւն է։ Ափրիկեցի էր Վիկտոր և աննշան ցեղէ. հռոմ գալով իր հանճարովն առաջ եկաւ. և Թէոդոսի ժամանակ՝ հռովմայ տեսուչ դրուեցաւ։

Եւտրոպիոս. – Փլաւիոս Եւտրոպիոս տասը գրքի մէջ հռովմէական պատմութիւն մը շարադրած է, հռոմուլոսի օրուընէն ինչուան՝ի Յովիանոս. որն որ բոլորովին անօգուտ երկասխրութիւն մը չէ, մանաւանդ Թէ յետին գարուց համար հարկաւոր և ճիշդ տեղեկութիւնք կը գըտնուին մէջը։ Ընդհանրապէս արժանահաւատ է Եւտրոպիոս, որովհետև հաւատարիմ պատմչաց կը հետևի. և երբոր բան մը կը տեսնէ հռովմայեցոց պատուոյն դէմ՝ աչքն լաւ կը տեսէ լռութեամբ անցնիլ՝ քան Թէ տուա խօսքերով անոնց տուգութիւնն երկբայութեան տակ ձգել։ Կանգնեն Թէ մեծին Կոստանդիանոսի քարտուղարն էր Եւտրոպիոս, եռքը Յուլիանոսի հետ դէպ՝ի պարսկաստան արշաւեց, և վաղեմի հրամանաւն աս պատմութեան գրքը շարադրեց։

Ամիանոս Մարկէլլինոս. – Վերը յիշատակուած

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 12:23 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

պատմագրաց խուժանին մէջ՝ միակ նշանաւոր և մոռադրութեան արժանի եղող անձը Ամմիանոս Մարկեղլինոս կը սեպուի իրաւամբք :

Յոյն էր ազգաւ . ուսաւ ոմանք զինքը նոյն կը համարին ան Մարկեղլինոսին հետ որն որ հեղինակեալ թուկիդիդեայ գրոցը վրայ գերազանց տեսութիւն մը շարադրած է : Ձորրորդ դարուն կիսուն ծաղկեցաւ Ամմիանոս : Պատանեկութեան տեղը զինուորական կեանց սէր ունենալով՝ կայսեր անձնապահպանութեան կարգը գրուեր էր . եաքն ալ արևելք և կեղտաց աշխարհին մէջ պատերազմելու գնաց : Վրիպակաւ բանասէրներէն ոմանք ուղեցին կարծել թէ հաւատքով քրիստոնեայ եղած ըլլայ : Ա՛ս սխալին պատճառը՝ Ամմիանոսի վեմ և անկողմնապէր միաքն եղած է , որով կրցեր է այդպէս իրաւամբք վարուիլ անոնց հետ՝ որոնցմէ իր կարծիքովը կը զանազանի : Ձափաւորութեամբ կը խօսի քրիստոնէութեան վրայ . կը գովէ նոր հաւատքը խոստովանողներուն առաքինութիւնն ու հաստատութիւնը . կը պատմէ թէ ինչպէս վուճ տեղը աշխատեցաւ Յուլիանոս՝ Սողոմոնի տաճարը նորէն կառուցանելու համար . Ժողովրդեան աւելորդապաշտութեանցը վրայ կը ծիծաղի , և իր ժամանակակցաց սխտեղն ու անօրէնութիւնքը համարձակ կը պարսաւէ : Բայց ինքը չի մեծարեր զքրիստոնէութիւնը . իր սէրը հին Հռովմայ վրայ է , ան քաղաքավարական և կրօնական սահմանադրութեանց՝ որոնք այնպիսի մեծութեան հասուցեր էին հռովմէական ազգը :

Ամմիանոս Մարկեղլինոսի գիրքը . — Մարկեղլինոսի երկասիրութիւնը կայսերութեան պատմութիւն է , վեսպեսիանոս ժամանակէն մինչև Վալեսի թագաւորութիւնը . Տակիտոսի պատմութեանց շարունակութիւնը , բայց ոչ իրեն հանճարովը , ևս ա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 12:23 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ռաւեալ ոճովը։ Վ՚ասն զի Ամմիանոսի լեզուն կէս բարբարոսական է. ասկէ զատ, աշխարհաբրական ուսման մէջ միշտ հարկաւոր ճշդութիւնը չունի։ Սակայն աս թերութիւնքը բան մը չեն՝ իր մեծամեծ կատարելութեանց բաղդատութեամբը։ Ճարտար և հաւատարիմ առաջնորդ մըն է, որուն կրնանք առանց վախի հետևիլ. վասն զի կրքէ և նախապաշարմունքէ ազատ միտք մը ունի։ Յամենայնի ճշմարտութիւնը փնտրտելու ջանք կը ցցընէ. Պոլիբիոսի պէս մարդկային սրտից գաղտնիքը քաջ են իրեն առջև. հմուտ է նաև զինուորական արուեստի։ Ափսոս որ անկման գարու մատենագիր եղաւ Մարկելլինոս. ապա թէ ոչ, իր աս հանճարովը Թուկիդիդեայ և Քսենոփոնի, կեսարու և Լիւիոսի արժանի պիտի ըլլար։

Վէրջին տպագրութիւն. — Ամմիանոս հռովմէական արտաքին մատենագրութեան ցուցակը կը գոցէ. իրմէ վերջն եղողներուն միայն անուններըը յիշատակենք, որ սոսկ են

Ամմաքոս
Մաքրոբիոս } արձակ գրող մատենադիրք.

Աւտոնիոս
Կլաւդիանոս
Հռուտիլիոս } քերթողք.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 12:24 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԼՈՒԽ ԼԵ.

ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Իմաստասիրութիւն ի Հռոմ. — Կիկերոն. — Սենէկա. — Եպիկտետոս. — Մարկոս Աւրելիոս:

Իմաստասիրութիւն ի Հռոմ. — Հռովմէական դըպրութեանց պատմութեանը վերջը հասնելով արժան սեպեցինք քանի մը խօսք ալ իրենց իմաստասիրութեանը վրայ աւելցընել: Ամէն բանի մէջ Յունաց հետեւող Հռովմայեցիք՝ հարկ էր որ անոնց իմաստասիրական դրութիւնքն ալ ընդունէին: Բայց պատմութիւնն ասոր հակառակը կը ցցընէ մեզի: Մինչդեռ Ելլադայի մէջ իմաստասիրութիւն մը տեսական և մը գործնական ուսումը կը յաճախէր, Հռոմ կու տայ ամէն ուժովը կը պատերազմէր անոնց դէմ: Բոլոր ազգաց զէնքին և զօրութեան դէմ դիմադրութիւն ապցը իմաստասիրաց լեզուն կը վախնար. որպէս զի չըլլայ մը բարեկարգութեան պատրուակաւ նոր բան մտնելով ընտանի խաղաղութիւնը վրդովէ: Իրեն աս վախը բոլորովին անհիմն չէր: Աչքին առջեւ կը տեսնէր Ընկերտա՝ այլեւայլ կողմնակցութիւն բաժնուած. և ան գերազանց ուսումը՝ զոր Պղատոնի, Սոկրատայ, Արիստոտէլի պէս մարդիկ փառաւորեցին, իրենց աշակերտաց և հետեւողաց բերնին և գրածոյը մէջ՝ դրեթէ խիստ շատ անգամ իր վեճվայելչութիւնը կը կորսընցընէր: Ան պատճառաւ էր որ հռովմայեցւոց մէջ խիստ ուշ, Կիկերոնի առեն, սկսաւ մտնել իմաստասիրական ուսումը:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 12:24 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կիներն. — Ան հռչակաւոր անձին և գրուածո-
ցը վրայ երկընկեկ խօսեր ենք. հոս միայն իւրև ի-
մաստասէր պիտի նկատենք վինչը:

Կիկերոն իր ամէն ուժովնքը յոյն վարժապե-
տաց ձեռքին տակ ըրած ըլլալով անոնց իմաստա-
սիրական հրահանգաց մէջ ալ վարժելու համար
նախ Հռոդոս, եաքը Աթենք գնաց, ուր մանա-
ւորաբար եանէ եղաւ ստոյիկեանց և Ակադեմիոյ
վարդապետութիւնը ստրվելու: Աթենքէն իբրև
Հռոմ դարձաւ, ինքզինքը բոլորովին պետութեան
գործոց տուաւ. և իր ժամանակին քաղաքա-
կան պատմութիւնը կը ստրվի մեզի իմ ինչ-
պէս ամէն բանի մէջ մտան ունէր, ընտանի պա-
տերազմաց, մտանութեանց և դիպուածներուն մէջ
ստիպուած ըլլալով պերճութեամբ բարոյական կեան-
քը նատատուն պահելու աշխատիլ:

Բայց իր ամէն ուժովն ու ճարտարախոսութեամբն
ալ չկրցաւ հասարակապետութեան անկումին ար-
գիլել: Ան վշտին վրայ ուրիշ մըն ալ աւելցաւ.
Տուլլիա դստերը մահը: Ինքզինքը սփոփելու հա-
մար ձեռք առաւ Կիկերոն իմաստասիրութիւնը.
և սկսաւ այլևայլ ճառեր շարադրել: Թէպէտ
Յունաց իմաստասէրներուն այլևայլ վարդապե-
տութեանցը տեղեկացեր էր, բայց իր մտանաւոր
բերումն առ Պլատոն յայտնի էր. ուստի շատ բա-
նի մէջ իւրեն հետևեցաւ. քանի մը սկզբունք ալ
եպէական կամ Ջենոնի վարժարանէն առաւ:

Կիկերոնի մտանաւոր ջանքն էր յորդորել ըզ-
հռոմայեցիս բարուցն ետևէ ըլլալու և մարդկու-
թեան պարտքերը ճիշդ կատարելու: Ան աշխուժա-
կան նպատակը միշտ աչքին առջևն ունէր թէ իր
առանձնական կենաց ատենն և թէ մանաւանդ
տերութեան պաշտամանց մէջ: Ուրիշ իմաստա-
սէրք աշակերտներ ժողվելով վարժարաններ կը

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 12:24 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

հաստատէին. ինքը՝ բոլոր հռովմայեցիքն ուզեց աշակերտել, և ան յաւերժական քաղաքը՝ բոլոր մարդկութեան լաստան սահմանել. "Իմաստասիրութիւնն իր գերազանց բարձրութեան հասուց, կըսէ Տըժէռանատօ. ցցուց Թէ ինչ պիտի ըլլայ անոր բուն նպատակը. ազնուական լեզու մը ընծայեց անոր, ու վարժարանաց մէջէն դուրս հանելով՝ ընկերութե Թատեր վայր հանդիսացուց. բոլորովին նոր կեանքով զինքն օգևորեց... Միայն Եպիկուրեայ երեսը չնայեցաւ կիկերոն. կարծես Թէ կը գուշակեր Թէ անոր իմաստասիրութիւնը ինչ գահավէժ վախերու մէջ պիտի ձգէր զմարդկութիւնը: Կը գովէ զՊիւԹագոր. գրեԹէ աստուածական պատիւ կուտայ Սոկրատայ. կը խոստովանի Թէ Պղատոնէն աւելի մէկը չկայ իրեն հաստատուն զարմանք պատճառող. կըսքանչանայ Արիստոտէլի վրայ, որ կրցեր է այնպիսի ակադեմիա մը հաստատել: Ա՛ս երկու վերջին իմաստասէրքն աւելի իրարու դաշնակից կը համարի քան Թէ նախանձորդ... Ամէն վարդապետութիւն կը քննէ, որպէս զի ընտրելագոյն իմաստասիրութիւն մը կազմէ անոնցմով,,:

Եպիկուրեան իմաստասիրութիւնն իրեն շատ հեռուէ գաւաՌ'ի Հռոմ. այնպիսի Թոյլ վարդապետութեան մը համար աս յաջողութիւնը զարմանք էր: Սակայն Լուկրեաիոսէն զատ ան աղանդին հետևող անուանի մարդ մը չերևցաւ. ոյն որ ինչպէս տեսանք, Քրիստոսէ 100 տարիի չափ առաջ, վարդապետական քերԹուածի մը մէջ Եպիկուրեայ կարծիքը բացատրեց:

Բայց նոյն խեղճութիւնը չունեցաւ նաև աոոյնական իմաստասիրութիւնը: Հռովմայեցւոց մէջ շատերն եղան անոր իրատուցը պաշտպան, ընտիր հանձարի և կարգի մարդիկ: Անոնց մէջ մենք իրենք

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 12:24 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

հոգի միայն յիշատակենք, Սենեկա, Եպիկտետոս և Մարկոս Աւրելիոս կայսրը։

Սենէկա. — Հարկ է ըսել՝ թէ գրուածոցն ու խրատուցը համեմատ վարք չունեցաւ։ Ներոնի դաստիարակն ըլլալով՝ չմընչացաւ Ագրիպպինայի չատագովութիւնն ընել, ու իւղձ և անմեղ Բրիտանիկոսի մահուանը պատճառ եղաւ։ Բայց իր ամէն չողոքորթութեամբ ու վատութեամբն ալ՝ մայրասպան կայսեր բարկութենէն չկրցաւ ազատիլ։ Սակայն աս ալ յայտնի է որ Սենեկայի գրոց մէջ շատ ուժով և զօրաւոր հատուածներ կան, և զանազան ուղիղ իմաստասիրական սկզբունք։

Եպիկտետոս. — Փռիւգիոյ Յիերապոլիս քաղաքը ծնած էր Եպիկտետոս, քրիստոնէութեան առաջին դարուն մէջ։ Իր բուն անունը չի գիտցուիր, որովհետև Եպիկտետոս՝ գերի կամ ծառայ ըսել է, ու իր վիճակէն առնուած է. վասն զի ալքատ և խեղճ ծնած ըլլալով՝ Եպափրոդիտեայ գերին եղաւ, որ Ներոնի ազատապրեալն և անոր անձնապահապետներէն մէկն էր։ Կաւանդեն թէ աս բիրտ և ապուշ մարդն իրեն պատրաստութեանը համար տովտութիւն ըրած էր խեղճ գերւոյն սրտնեղը դարձնել. "Աստիկով օր մը չէ նէ, օր մը ոտքս պիտի կոտրես,, ըսած Եպիկտետոս։ Ըսածն ալ կատարուեցաւ։ Իմաստասէրը հանդարտութեամբ "Ես աս բանս առաջուց քեզի ըսեցի,, ըսաւ։

Աստեն անցնելէն ետքն իր ազատութիւնն առաջ Եպիկտետոս. և երբոր Դոմետիանոս կայսեր հրամանաւն ամէն իմաստասէրք Իտալիայէն աքսորուեցան, Եպիկտետոս ալ՝ Եպիրոսի Նիկոպոլիս քաղաքը քաշուեցաւ. և կերևնայ թէ հոն լմընցուցած ըլլայ իր կեանքը։ Հոս՝ խեղճ և անդուռն հիւղի մը մէջ կը բնակէր. որովհետև ու-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 12:25 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նեցած բոլոր ինչքը՝ մեկ սեղանատախտակ ու յարդէ անկողին մըն էր։ Օր մը իր չափաւորութիւնը մտածելով՝ երկրէն լապաեր մը գնեց. և երբոր շաւով մը գոցուեցաւ, "Վայն, ըսաւ, երբոր գողը նոքէն դառնայ՝ շատ պիտի զարմանայ, երկրին սեղ հոդէ լապաեր մը տեսնելով,,։ Ա լապաերը իմաստասիրին մտածունէն եաքը բարձր գնով վաճառուեցաւ։

Եպիկտետոս մանաւոր գրուածք մը չձգեց, բայց իր աշակերտաց մէջ հռչակաւորը Արրիանոս իր վարդապետին խրատական համառօտ խօսքերը կարգի վրայ առնելով՝ Առիեանոյ Եպիկտետոյ կոչեց։ Համառօտ՝ բայց մեծ մտադրութեան գործ մըն է ասիկայ։ Մենք խօսքերնիս չենք ուզեր երկընդլնել արդէն ազգերնուս շատ ատենէ՝ ի վեր ծանօթ եղող գրքին վրայ՝ տաճկական ընտիր թարգմանութեամբ [1]։

Գեղի մըն էր Եպիկտետոս, և ատոյիկեան իմաստասիրաց վերջինը պիտի ըլլայ՝ եթէ իրեն հետևող չգտնուէր կայսերական աթոռի վրայ նստող ազնիւ անձ մը Մարկոս Աւրելիոս։ Ա անունս մեկէն կը յիշեցընէ մեզի վատ և անգութ կայսերաց շարքին մէջ հանդիպատատակեր մը։ Վատն զի իմաստասէր թագաւոր մը, առաքինութեանց զօրութիւնը ճանչցողը չի կրնար բռնաւոր ըլլալ, կամ իր մանաւոր կամքը հասարակաց բարիէն վեր դնել։ Մ. Աւրելիոս կայդաց ջենտի, կլեանթեայ, Եպիկտետոսի վարքն ու խրատները, ու կայսերական գահոյից վրայ իրենց արժանաւոր յաջորդ երևնալով շարադրեց խորհուրդս առ անձն ըսուած գիրքը. յորում՝ ի դէր անցուց մեծ հոգւոյ մը ամեն գաղանիքը, զօրաւոր և առատամիտ

1 Էպիկտետոսեան էնխիրիտիոն։

իմաստասիրութեամբ ուժ առած հոգւոյ մը : Ինքը Մարկոս Աւրելիոս եղաւ առջինը՝ Բարութեան տաճար կանգնողը. լսենք ինչ սրտով կը խօսի. “ պէտք է որ, կըսէ, սիրես զմարդիկ, վասն զի քու եղբարքդ են. տգիտութեամբ և առանց իրենց ուզելուն կը մեղանչեն. յիշէ որ քիչ առեն էն ա մենքնիս ալ սխալ մեռնինք. ինչ պիտի վաստակինք ան առեն ըրած վրէժխնդրութիւնները ս համար ,, : Ա պրովալիս գթութիւնը, ներող արդարութիւնը, ընդհանուր սէրը՝ ուրիշ բան չեն յիշեցներ մեզի՝ քան թէ քրիստոնէութեան կրօնքը հաստատող Աստուծոյն իրատները :

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 12:25 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Generated on 2016-05-05 12:26 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Digitized by Google

Original from
UNIVERSITY OF MICHIGAN

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑԱԿ

ՄԱՏԵՆԱԳՐԱՑ ՀՌՈՎՄԱՑԵՑԻՈՑ

ՔԵՐԹՈՂՔ

Ա. ԵՐԳԱԲԱՆՔ

Սալեանց երգք (Saliorum carmina).
Արվալեան եղբարց երգ. (Carmen fratrum Arvalium).
Եւկուպեան տախտակք.
Մահարձանք Սկիպիոնեանց.
Պոբլիոս Պատաւիանոս Պուբլիւբլիոս.
Կլաւդիոս Կլաւդիանոս.
Գ. Աւրելիոս Փրուդենտիոս.
Փլաւիոս Կրեսկոնիոս Կորիպպոս ափրիկեցի.

Բ. ԹԱՏՐԵՐԳԱԿՔ

ՈՂԲԵՐԳԱԿՔ

* *Լիւիոս Անդրոնիկոս տարենտացի.*
Կնէոս Նեւիոս հռովմայեցի.
Եննիոս.
Մ. Պակուվիոս բրունդուսիոնացի.
Լ. Ատտիոս կամ Ակկիոս.
Ովիդիոս.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 12:26 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Աստիվնոս .
Վարիոս .
Կ . Տիտոս Սեպտիմիոս .
* Սենեկա .
Պոմպոնիոս Սեկունդոս .
Կուրիատոս Մատեռնոս .

ԿԱՏԱԿԵՐԳԱԿՔ

Լիւիոս Անդրոնիկոս .
Կնէոս Նեւիոս .
Ենննիոս .
Պակուվիոս .
* Մ . Ատտիոս Պլաւտոս սարսինացի .
Սեքստոս Տուրպիլիոս .
Լիկինիոս Իմբրեքս .
Կեկիլիոս Ստատիոս .
Ուեկտիոս Տիտինիոս .
* Պ . Տերենտիոս Աֆեր կարթագինեցի .
Լուկիոս Լաւինիոս .
Կ . Տրաքէա .
Տ . Կուինտիոս Ատտա .
Լուկիոս Ափրանիոս .
Պոմպոնիոս .
Պլաւտիոս կամ Պլոտիոս .
Փաբիոս Դոսեննոս .
Լուկիոս Ակտիլիոս .
Յովենտիոս .
Սուտրիոս .
Սուետիոս .

ՄՆՋԿԱՏԱԿՔ

Դեկիմիոս Լաբերիոս .
Պուբլիոս Սիրոս .
Կնէոս Մատիոս .

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 12:26 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կալլիմաքոս.
փլակկոս Տիբուլլոս.
Լուկիլիոս.
Լուսասիոս կատուլլոս.
Պոբլիլիոս:

ՎԻՊԱՍԱՆ ՓՆՐԹՈՂՔ

Լիւիոս Անդրոնիկոս.
կնէոս Նեւիոս.
կնէոս Էննիոս հռոդացի.
փուբիոս Պիսաւրեսիոս.
կնէոս Մատիոս.
Տերենտիոս Վարրոն.
Լ. Վարիոս.
Տ. Վալգիոս Հռոդիոս.
Լեւիոս.
* Պոբլիոս Վիրգիլիոս Մարոնէ մանդուացի.
Հելուիոս կինննա.
կ. Հռաբիրիոս.
* Մ. Աննէոս Լուկանոս կորդուբացի.
Սալէոս Պասոս.
* կուինտոս Վալերիոս փլակկոս.
Սիլիոս Իտալիկոս.
Պապինիոս Ստատիոս նէապոլետցի.
* կլաւդիոս կլաւդիանոս.
Պինդարոս Թեբացի կամ Ցուս Պինդար. (Pseudo-Pindarus).
Հռեբոսիանոս.

ԵՐԳԻԾԱՆՈՒ

Լուկիլիոս սուեսսացի.
Պ. Տերենտիոս Վարրոն.
* Վալերիոս կատոնէ.
Որատիոս փլակկոս.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 12:26 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Պոթլիոս Ովիդիոս Նասոնէ.
* Աւլոս Պերսէոս Փլակկոս վոլաթերռասցի.
* Դեկիմոս Յունիոս Յուվենալիս (Յոթնաղ).
* Սուլպիկիա.

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆՔ

* Տ. Լուկրետիոս կարոս հռովմայեցի.
Մ. Տուլլիոս կիկերոն.
կ. Տուլլիոս կիկերոն.
Մ. Տերենտիոս վարրոն.
կ. Լուկիլիոս կրատեր. (կուռնելիոս Սեւերոս).
Եմիլիոս Մագեր վերոնացի.
Պոթլիոս Վիրգիլիոս Մարոնէ.
* Պոթլիոս Ովիդիոս Նասոն.
Մանիլիոս. (Մանլիոս, Մալլիոս)
կուինտոս Որատիոս Փլակկոս.
Տերենտիոս Վարրոն.
* Գրատիոս Փալիսկոս.
կեսար Գերմանիկոս.
Տերենտիոս Մաւրոս.
* Մարկոս Աւրելիոս Նեմեսիանոս.
կ. Սերենոս Սամոնիկոս.
կոլումելլա.
Հռուֆոս Ֆեստոս Աւիենոս.
* կլ. Հռուտիլիոս Նումատիանոս.
Մարկելլոս Եմբիրիկոս.
կլ. կլաւդիանոս.
* կ. Ֆիրմինիանոս Լակտանտիոս.
Տ. կեսիոս Տաւրինոս.
* Պրիսկիանոս.
* Սոլինոս կալլոս.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-05 12:27 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԱՌԱԿԱԽՕՍՔ

* Փեդրոս.
* Աբիանոս.
* Կաստոն.
Պոթինոս Սիրոս.

ՓՆԱՐԵՐԳԱԿՔ

Կ. Հորտենսիոս Հորտալոս.
* Լ. Վալերիոս Կատուլլոս.
Կ. Լիկինիոս Կալվոս.
Կ. Որատիոս Փլակկոս.
Վեստրիտիոս Սպուրինննա.
Կեսիոս Պասոս.
Սեպտիմիոս Սերենոս.
Պասպ. Սատուրիոս.
Կելիոս Փիլոմինիանոս Սիմպոսիոս.
Հոռափինոս.
Պալլադիոս.
Ասոնիոս.
* Պենդասիոս.
Սուլպիկիոս Լուպերկոս Սերուատուոս կրատերն.
Վենանտիոս Փորտունատոս.
* Պրոսպեր տիրոպկի.
Լինդինոս.

ԵՂԵՐԵՐԳԱԿՔ

Լ. Վալերիոս Կատուլլոս.
Կ. Կուռնելիոս Կալլոս.
Պարմենիոս Կասիոս.
* Ալպիոս Տիբուլլոս.
Սեքստոս Աբրելիոս Պրոպերտիոս.
Փեդոն Ալբինովանոս.
Ավ. Սաբինոս.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 05:41 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Պենդաախոս.
Դրակոնախոս.

ՀՈՎՈՒԵՐԳՅԱԿՔ

* Պոքլոս Վիրգիլիոս Մարոնէ.
* Տ. Կալպուռնիոս Սիկուլոս.
* Դեկիմոս Մագնոս.

ՎԵՐՏՅՈՒՈՒԹԻՒՆՔ

Նեւիոս.
Պակուվիոս.
Եննիոս,
Պլաւտոս.
Պորկիոս Լիկինիոս.
* Կ. Լուկաւտիոս Կաւտուլոս.
Լուկիլիոս.
Մ. Տերենտիոս Վարրոն.
Լ. Վալերիոս.
Հելուիոս Կիննա.
Կ. Լիկինիոս Կալվոս.
Լ. Պոմպոնիոս.
Մ. Տուլլիոս Կիկերոն.
* Տուլլիոս Լաբէօ.
* Կ. Կինիոս Մեկենաս.
* Անիոս Կալլոս.
* Փուրիոս Բիպակուլոս.
* Պուպիոս.
Վիրգիլիոս.
Պոմպոնիոս Ատտիկոս.
Տերենտիոս Վարրոն.
* Մ. Մարկոս Վալերիոս Մարտիալէս.
Կն. Կուռնելիոս Լենտուլոս Կեթուլիկոս.
Լ. Աննեոս Սենեկա.
Լուկանոս.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 05:41 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Վուլկանիոս Սեմիգիաոս.
Պետրոնիոս.
* Չառուփոս Վիրգինիոս.
Պլինիոս.
Փլորոս.
* Սուլպիկիոս.
Ապուլէոս.
* Պենդաոիոս.
* Գիտերիոս Սիդոնիոս.
Սիմմաքոս.
Կլաուդիոս Կլաուդիանոս.
Կելիոս Փերմիանոս Սիմպոսիոս.
* Մաուրոիոս.
Պրիսկիանոս.
Փոկաս.
* Մագն. Փելիքս Եննոդիոս.
* Փլորենդինոս.
* Փլաւիոս Փելիքս.
Եոեմոնոս.
Տուկկիանոս.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 05:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԱՐՁԱԿ ԳՐՈՂ ՄԱՏԵՆԱԳԻՐՔ

Ա. ՀԻՆ ԿԱՄ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐՁԱԿ ԼԵԶՈՒՈՎ

Տարեգիրք կամ գիրք նումայի Պոմպիլեայ.
Օրէնք երկոտասան տախտակաց.

Բ. ՏԱՐԵԳԻՐՔ ԿԱՄ ՊԱՏՄԱԲԱՆՔ

1. Հռովմայ մոպենագրուբէ սկիզբեն մինչ ի 3. կէսար.

Կ. Փաբիոս Բիկտոր.
Լ. Կինկիոս Ալիմենտոս.
Կ. Ակիլիոս Կլաբրիոս.
Ա. Պոստումիոս Ալբինոս.
Լ. Սկրիբոնիոս Լիբոս.
** Մ. Պորկիոս Կատոն.*
Սերուիոս Փաբիոս Բիկտոր.
Կասսիոս Հեմինա.
Կ. Փաբիոս Մաքսիմոս Սերուիլիանոս.
Լ. Կալպուռնիոս Պիսոնէ.
Կ. Փաննիոս.
Կ. Սեմպրոնիոս.
Կուռնելիոս Անտիպատեր.
Պ. Սեմպրոնիոս Ասելլիոս.
Մ. Եմիլիոս Սկաուրոս.
Սուլպիկիոս Գալբա.
Պ. Հռուտիլիոս Հռուֆոս.
Կ. Լուտատիոս Կատուլոս.
Լ. Կուռնելիոս Սուլլա.
Ի. Լուկուլլոս.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 05:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Լ· Կուռնելիոս Սիսեննա.
Վալերիոս Անտիաս.
Կ· Լիկինիոս Մագեր.
Մ· Պոմպիլիոս Անդրոնիկոս.
Տանուսիոս Գեմինոս.
Կ· Հորտենսիոս Հորտալոս.
Տ· Պոմպոնիոս Ատտիկոս.
Կ· Լուստատիոս.
Կ· Եվիոս Տուբերոս.
Լ· Լուկիոս Լուկկեոս.
Պրոկիլիոս.
Վենոնիոս.
Կ· Տելլիոս.
Կն· Գելլիոս.
Կլոդիոս Լիկինիոս.
* Մ· Տերենտիոս Վարրոն.

2· Յուլիոս կեսարն հինէ Օգոստոս թամանակին.

* Կ· Յուլիոս կեսար.
Ա· Հիրտիոս.
* Կ· Կուռնելիոս Նեպոս.
* Կ· Սալուստիոս Կրիսպոս.
Կ· Ասինիոս Պոլլիոն.
Տուլլիոս Տիրոն.
Կ· Յուլիոս կեսար Հոկտաւիանոս Օգոստոս կայսր.
Մ· Ագրիպպաս.
Մ· Վալերիոս Մեսսալա Կորվինոս.
* Տիտոս Լիւիոս.
Պոմպէոս Տրոգոս.
Լ· Փեննեատեսլա.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 05:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

3. Օթոպոսէն Եփրը։

Վ. Բրիտոս Փլակկոս.
Կրեմոնտոս Կորդոս.
Տիբերիոս Կայսր.
Յունիոս Սատուռնինոս.
* Մ. Վ. Ըլէյոս Պատերկուլոս.
* Վալերիոս Մաքսիմոս.
Կ. Կղոդիոս Կեսար.
Մ. Լիկինիոս Կրասոս.
* Կ. Կուռնելիոս Տակիտոս.
Կ. Վիտելլիոս Եւլոկիոս.
* Կ. Կուրտիոս Ռուֆոս.
* Կ. Սուետոնիոս Տրանկուիլլոս.
Լ. Աննէոս Փլորոս.
Ելիոս Սպարտիանոս.
Վուլկատիոս Կալլիկանոս.
Տրեբելլիոս Պոլլիոն.
Ելիոս Լամբրիտիոս.
Փլաւիոս Վոպիսկոս.
Կարպիլիոս Մարտիալէս.
Յուլիոս Կապիտոլինոս.
Կուինտոս Սեպտիմիոս.
Սեքստոս Աւրելիոս Վիկտոր.
Եւտրոպիոս.
Յուլիոս Վալերիոս.
Լուկիոս Ամպելիոս.
Սեքստոս Ռուֆոս.
Ամմիանոս Մարկելլինոս.
Որոսիոս.
Յուլիոս Եկտուալերանտիոս.
Յանուարիոս Նեպոտիանոս.
Յուլիոս Պարիս.
Ոնորիոս.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 05:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ՀՈԲԵՏՈՐՔ

* Մ. Պօղկիոս կաոան.
* Մ. Տուլլիոս Կիկերոն.
Հորաեննիոս Հորտալոս.
Սերուիոս Սուլպիկիոս Հուֆոս.
Յուլիոս Կեսար.
Աննէոս Կիմբեր.
Մ. Տերենտիոս Վարրոն.
Կ. Ասինիոս Պոլլիոն.
Մ. Կիլնիոս Մեկենաս.
* Հուռատիլիոս Լուպոս.
Մ. Պօղկիոս Լաետրոն.
Մ. Աննէոս Սենեկա.
Պալեմոն.
Կ. Կլոդիոս Կեսար.
* Մ. Փաբիոս Կունիտիլիանոս.
Կ. Պլինիոս Կեկիլիոս Սեկունդոս.
* Կալպուռնիոս Փլակկոս.
Մ. Կուռնելիոս Փրոնտոն.
Ակուիլա Հուռվմայեցի.
Յուլիոս Հուֆինիանոս.
Կլոդիոս Մամերտինոս.
* Լաինոս Պագատոս Դրեպանիոս.
Կասսիոդորոս.
* Յուլիոս Բիկտոր.
* Եննոդիոս Փեվիքս.

ԻՐԱՒԱԲԱՆՔ

Օրէնք՝ երկոտասան տախտակաց.
Մ. Պօղկիոս Կատոն.
Պ. Մուկիոս Սկեւոլա.
Կ. Մուկիոս Սկեւոլա (Pontifex).
Սերուիոս Փաբիոս Բիկտոր.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 05:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ակուիլիոս կալլոս.
Մ. Տուլլիոս կիկերոն.
Մ. Կոկկէոս Ներուա.
կասիոս Լոնգինոս.
Ներալտիոս Պրիսկոս.
Կ. Գերուխիոս Սկեւոլա.
Վէնուլէոս Սատուռնինոս.

ԻՄԱՍՏԱՍԷՐՔ

Կ. Եննիոս.
Լուկրետիոս կարոս.
Մ. Տերենտիոս Վարրոն.
* Մ. Տուլլիոս կիկերոն.
Կ. Սէքստիոս.
* Լ. Աննէոս Սենեկա.
Լ. Ապուլէոս.
* Եպիկտետոս.
Մ. կուռնելիոս Փրոնտոն.
* Մ. Աւր. Անտոնինոս կայսր.
Անիկիոս Մանլիոս Տորկուատոս Սեւերոս Բոյե-
տիոս.
Սիմմաքոս.
կասիոդորոս.

ԴՆՐԱԿԱՆՔ

* Մ. Տերենտիոս Վարրոն.
Սերուիոս կլոդիոս կիկերոն.
Կ. Յուլիոս Հիգինոս.
Վերրիոս Փլակկոս.
* Կ. Հոռեմինիոս Փաննիոս Պալեմոն.
* Մ. Վալերիոս Պրոբոս.
Ասկոնիոս Բեդիանոս.
* Տերենտիանոս Մաւրոս.
* Տերենտիոս Սկաւրոս.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 05:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Մ. կուռնելիոս փրոնտոն.
Աւլոս Գելլեոս.
Նոնիոս Մարկելլոս.
Դենատրինոս.
* Սեքստոս Պոմպէոս Փեստոս.
Եմիլիոս Ասքեր.
Ելիանոս Դոնատոս.
Կ. Մարկոս Վիկտորինոս.
Փլ. Մալլիոս Թէոդորոս.
Յուլիոս Սեւերոս.
Աւրելիոս Մակրոբիոս Ամբրոսիոս Թէոդոս.
Սեքստոս Պոմպէոս.
Սերուիոս.
* Սերուիոս Մաւրոս Հոնորատոս.
* Յունիոս Փիլարգիրոս.
Մարիոս Սերգիոս.
Կլեդոնիոս.
Փլաւիոս Սոսիպատրոս Գարիսիոս.
Դիոմեդէս.
Աւրելիոս Օգոստինոս.
Մարկիանոս Փելիքս Կապելլա.
Փլաւիոս Կասիոդորոս.
Պ. Կոնսենտիոս.
Հռուֆինոս.
Մագնոս Աւրելիոս Կասսիոդորոս.
Փոկաս.
Պրիսկիանոս կեսարացի.
Ամիլիոս Փորտունատիանոս.
Մարիոս Պլոտիոս.
Կեսիոս Պասս.
Եւտիքէս կամ Եւտիքիոս.
Ասքեր, կրտաերն.
Վ. Ֆլիոս Լոնգոս.
Անդուսիանոս Մեսսոս.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 05:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Փաբիոս Փուլգենտիոս.
Լ. Կեկիլիոս Մունիտիանոս Ապուլեոս.
Պլակիտոս.
Խիդորոս.

ԹՂԹԱԳԻՐՔ

Կուռնելիա մայր Գրակքեանց.
* Մ. Տուլլիոս Կիկերոն.
* Կ. Տուլլիոս Կիկերոն (Մարկոսի եղբայրը).
Կ. Պլինիոս երկրորդն կամ Կրտսեր.
Մ. Կուռնելիոս Փրոնտոն.
* Ովկիոս Տրայիանոս կայսր.
* Մ. Անտոնիոս Պիոս կայսր.
* Մ. Աւրելիոս Անտոնինոս կայսր.
Կ. Աւրելիոս Սիմմաքոս.
Մ. Աւրելիոս Կասսիոդորոս.

ՄՀԱԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՑ ԳՐՈՂՔ

Մ. Պորկիոս Կատոն.
Մ. Տերենտիոս Վարրոն.
Մ. Տուլլիոս Կիկերոն.
Կ. Յուլիոս Հիգինոս.
* Լ. Յունիոս Մոդերատոս Կոլումելլա.
* Պալլադիոս Հռուտիլիոս Տաւրոս Եմիլիանոս.
Կարկիլիոս Մարտիալէս.

ԱՀԽԱՐՀԱԳԻՐՔ, ՏԵՂԱԳԻՐՔ

Տակիտոս.
* Պոմպոնիոս Մելա.
Ճանապարհորդարան Անտոնինոսի Օգոստեայ.
Հռուտիլիոս Նումատիանոս.
Սէքստոս կամ Փեստոս Հռուֆոս.
* Վ. Ֆլաքոս Սեկուէնտեր.
* Պոմպոնիոս Վ. Ֆլաքոս.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 05:44 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ՐՆԱՊԱՏՈՒՄՔ

Ա. Հանճարեան.

Եմիլիոս Մագեր.
Անտոնիոս Մուսա.
* Ա. Կուռնեղիոս Կելսոս.
* Ապուլէոս Կելսոս.
Սուրանոս.
Լուկիոս Ապուլէոս.
* Կելիոս Աբթելիանոս.
Կ. Սերենոս Սամոնիկոս.
* Թէոդորոս Պրիսկիանոս.
Սեքստոս Պլակիդոս.
Կն. Մարկելլոս Եմբիրիկոս.
Կ. Պլինիոս Վալերիանոս.
Մարտեալոս Կալլոս.

Բ. Բնական պատմութիւն.

* Կ. Պլինիոս Սեկունդոս երէցն.
Յուլիոս Սոլինոս.

ՎԻՊԱԳՈՐՔ

Պ. Կ. Պեսրոնիոս.
Լուկիոս Ապուլէոս.

ԶԱՓԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

Ա. Զաբաթանութիան.

Նիգիտիոս Փիկուլոս պիւթագորեան.
Լուկ. Ապուլէոս.
* Յուլիոս Փիրմիկիոս Մատէռնոս.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 05:44 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Բ. Երիրալաֆոսիին.

* Սիկուլոս Փլակկոս.
Փրոնաինոս.
* Ագգենոս Ուրբիկոս.
* Հիգինոս.

Գ. Ասթեղաբաչխոսիին.

Պ. Նիգիտիոս Փիկուլոս.
Հիգինոս.
Մանիլիոս.

Դ. Ճարպարապէփոսիին.

* Մ. Վխորուվիոս Պոլլիոն.
Փրոնաինոս.
Պալլաս.
Լ. Վոլուսիոս Մեկիանոս.
Մ. Պորկիոս Կատոն.
* Սեքստոս Յուլիոս Փրոնտինոս.
Հիգինոս.
Ալբիոս Մենանդր.
Մոսեսդոս.
Փլաւիոս Հռեենադոս Վեգետիոս.

ԴԻՑԱԲԱՆՔ

Պ. Ովիդիոս Նասոնէ.
* Հիգինոս.
* Լակտանտիոս Պլակիդոս.
Փուլգենտիոս.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 05:44 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍՐԲԱԶԱՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 05:44 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Generated on 2016-05-06 05:45 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Digitized by Google

Original from
UNIVERSITY OF MICHIGAN

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՍՐԲՈՅՆ-ԼԱՒՈՑ ՎԱՆՔԱՅԻՆ
ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

ԳԼՈՒԽ Ա.

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏԵԱՆ

Աթոռածաղոնէ գիրք. — Սուրբ գրոց իրէք գլխաւոր ճաները. — Հոմերոսի և սուրբ գրոց բազդատութիւնը. — Համեմատութիւնք կէտերը, պարզութիւն, բարուց հնութիւն, պատմութիւն, նկարագրութիւն, նմանութիւնք, վեմ:

Աթոռածաղոնէ գիրք. — Սրբազան մատենագրութեան առաջին դարը կամ ժամանակը, աշխարհքիս ստեղծագործութեանը հետ կըսկսի. ան գրքով որ Թէպէտ մարդկանց ձեռքովն՝ այլ Աստուծոյ Թելադրութեամբը գրուած ըլլալուն՝ իրաւամբ Աթոռածաղոնէ կամ Սուրբ գիրք կը կոչուի: Այս անունը միայն ամէն գովեստներէ մեծ ըլլալով կարօտութիւն չունինք ունենալու վրան երկար բարակ խօսելու, մարդկային ուրիշ որ և իցէ արուեստներէն գերազանցութիւնը ցցնելու համար:

Աստուածաշունչը՝ ծննդոց գրքով կըսկսի և

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 05:45 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ցովհաննու աւետարանչին յայտնութեամբը կը վերջանայ: Որչափ որ սկզբնաւորութեան ոճը պարզ է, այնչափ ալ վախճանը բոլորովին նկարագրականի կը փոխուի: Մովսէսի գրոցը մէջ ամենայն ինչ իրեն պարզութեանը հետ մեծութիւնն ալ ունի. ինչպէս աշխարհքիս ստեղծագործութիւնը, և մարդկութեան սկզբնական անմեղութիւնը զորս կըստորագրէ: Ան պարզութիւնը՝ առանց իր մեծութիւնը կորսընցընելու՝ ահաւոր կերպարանք մը կառնէ՝ պատմիս կղզւոյն տեսլեանը մէջ. հոն գուշակուած է քաղաքակրթութեանց դադրիլը, տէրութեանց կործանիլը, քաղաքաց հիմնայատակ ըլլալը, տեսչութեանց տեղի ոտալը անոր առջև որ հրով պիտի ապականէ բոլոր աշխարհքս, և ինքն ան աւերակաց վրայ պիտի նըստի գատել զազգ մարդկան:

Ուրիշ հին ազգաց սրբազան գրքերը, ինչպէս Ջենտ-Աւեստա, Սանսքրիթ քերթուածիւնքը, Պրահմայց Վեսան, Տաճկաց Ղուրանը, Սկանտինաւեանց Եոտայն, կոնփուկիոսի խրատները այնչափ զմեզ չեն զարմացըներ, որովհետև մարդկային գաղափարաց հասարակ չղթան անոնց մէջ կը նկատենք: Միայն աստուածաշունչն է որ մեզ գրքի մը չի նմանիր: Քանի հեղինակք, ժամանակաւ այնչափ իրարմէ հեռու, սուրբ գիրքը շարադրեր են. և թէպէտ քանի զանազան ոճ ունին, բայց ամէնքն ալ աննման: Նոր կտակարանին ոճը թէպէտ հինէն տարբեր, սակայն անոր զարմանալի սկզբնականութիւնը (originalité) պահած է[1]:

1 Սուրբ գրոց վրայ ըրած համառօտ քննութիւններս նոյս մէջ ընդհանրապէս Շաթոպրիանի հետեր են, զոր գէղ իրեն Ոգի քրիստոնէութեան (Génie du christianisme) ուսանելի երկասիրութեան խօսքերը ձոխ առնելով:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 05:45 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Արդ սուրբ գրոց մէջ կը գտնուի
Աշխարհքիս սկիզբն և անոր վախճանին գուշա-
կութիւնը.
Ամենայն մարդկային գիտութեանց հիմը.
Քաղաքավարական (politique) ամենայն պա-
տուէրք, տանուտիրական տեսչութենէն ինչուան
միահեծան կառավարութիւնը. հովուական կե-
նաց պարզութենէն մինչև ապականութեան դա-
րը: Բարոյական պատուէրք, մարդկային որ և իցէ
դասակարգութեան և կենաց հանգամանքներու
յարմարած:

Գրաւորական ոճին ամենայն տեսակը, որոնք
թէպէտ իրարմէ տարբեր, այլ ամէնը մէկ ոճ մը
կը կազմեն, որ բոլորովին աստուածային է, ու
մարդկայնոյն ամենևին նմանութիւն չունի:

Ս՛ր գրոց էրէփ գլխաւոր ոճերը.—Գլխաւորա-
բար իրեք կարգի կը վերածուի սուրբ գրոց ոճը.

1). Պարզական, ինչպէս ծննդոց, երկրորդ օրէ-
նաց, Յովբայ գրքերուն մէջ, և այլն:

2). Սրբազան բանաստեղծութիւն, զոր օրինակ 'ի
սաղմոս, 'ի մարգարէս, և այլն:

3). Ա-էպարանական կամ նոր կտակարան, և այլն:

Պատմականը երբեմն անանկ վսեմութիւն կառ-
նէ որ վիպասանականին կը մօտենայ, ինչպէս
Յովսէփայ պատմութեանը մէջ. երբեմն քնարեր-
գակ քերթողութեան կերպարանք կառնէ, ինչ-
պէս կարմիր ծովուն անցքը. մերթ եղերերգու-
թեան՝ երբոր Յովբայ տխուր պատմութիւնը կար-
գաս, և մերթ հովուերգութեան՝ երբոր Հռու-
թայ գիրքն առջևդ առնես: Ան ընտրեալ ժո-
ղովուրդը, որուն համար արևն իր ընթացքէն ետ
կը կեցայ, ապառաժ լերինք ջուր կը բղխեն, եր-
կինք մանանայ կանձրևէ, այսպիսի ժողովուրդ մը,
կըսեմք, սովորական տարեգիր մը չէր կրնար ու-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 05:45 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Յովհաննու աւետարանչին յայտնութեամբը կը վերջանայ: Որչափ որ սկզբնաւորութեան ոճը պարզ է, այնչափ ալ վախճանը բոլորովին նկարագրականի կը փոխուի: Մովսէսի գրոցը մէջ առնայն ինչ իրեն պարզութեանը հետ մեծութիւնն ալ ունի. ինչպէս աշխարհքիս ստեղծագործութիւնը, և մարդկութեան սկզբնական անմեղութիւնը զորս կըստորագրէ: Ան պարզութիւնը՝ առանց իր մեծութիւնը կորսընցընելու՝ ահաւոր կերպարանք մը կառնէ՝ Պատմիս կղզւոյն տեսլեանը մէջ. հոն գուշակուած է քաղաքակրթութեանց դադրիլը, տէրութեանց կործանիլը, քաղաքաց հիմնայատակ ըլլալը, տեսչութեանց տեղի ուալը անոր առջև որ հրով պիտի ապականէ բոլոր աշխարհքս, և ինքն ան աւերակաց վրայ պիտի նըստի դատել զազգ մարդկան:

Ուրիշ հին ազգաց սրբազան գրքերը, ինչպէս Ջենա-Աւեսթա, Սանսքրիթ քերթուածիւնքը, Պրահմայց Վեսան, Տաճկաց Ղուրանը, Սկանդինաւեանց Եոտայն, կոնֆուկիոսի իրատուներն այնչափ զմեզ չեն զարմացըներ, որովհետև մարդկային գաղափարաց հասարակ շղթան անոնց մէջ կը նկատեինք: Միայն աստուածաշունչն է որ մեկ գրքի մը չնմանիր: Քսան հեղինակք, ժամանակաւ այնչափ իրարմէ հեռու, սուրբ գիրքը շարադրեր են. և թէպէտ քսան զանազան ոճ ունին, բայց ամէնքն ալ աննման: Նոր կտակարանին ոճը թէպէտ հինէն տարբեր, սակայն անոր զարմանալի սկզբնականութիւնը (originalité) պահած է[1]:

1 Սուրբ գրոց վրայ ըրած համառօտ քննութիւններս մէջ ընդհանրապէս Շաթոպրիանի հեղինակը եմ, զոր պէղ իրեն Ոգի քրիստոնէութեան (Génie du christianisme) ուսանելի երկասիրութեան խօսքերը ձոխ առնելով:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 05:45 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Արդ սուրբ գրոց մէջ կը գտնուի
Աշխարհքիս սկիզբն և անոր վախճանին գուշակութիւնը.
Ամենայն մարդկային գիտութեանց հիմը.
Քաղաքավարական (politique) ամենայն պատուէրք, տանուտիրական տեսչութենէն ինչուան միահեծան կառավարութիւնը. հովուական կեանց պարզութենէն մինչև ազգականութեան դարը: Բարոյական պատուէրք, մարդկային որ և իցէ դասակարգութեան և կենաց հանգամանքներու յարմարած:

Գրաւորական ոճին ամենայն տեսակը, որոնք թէպէտ իրարմէ տարբեր, այլ ամէնը մէկ ոճ մը կը կազմեն, որ բոլորովին աստուածային է, ու մարդկայնոյն ամենևին նմանութիւն չունի:

Ս-ըբ գրոց իրէն գլխաւոր ոճերը.—Գլխաւորաբար իրենք կարգի կը վերածուի սուրբ գրոց ոճը.

1). Պատմական, ինչպէս ծննդոց, երկրորդ օրինաց, Յովբայ գրքերուն մէջ, և այլն:

2). Սրբազան բանաստեղծութիւն, զոր օրինակ 'ի սաղմոս, 'ի մարգարէս, և այլն:

3). Ա-էպարանական կամ նը կպակցանի, և այլն:

Պատմականը երբեմն անանկ վսեմութիւն կառնէ որ վիպասանականին կը մօտենայ, ինչպէս Յովսէփայ պատմութեանը մէջ. երբեմն քնարերգակ քերթողութեան կերպարանք կառնէ, ինչպէս կարմիր ծովուն անցքը. մերթ եղերերգութեան՝ երբոր Յովբայ սխուր պատմութիւնը կարդաս, և մերթ հովուերգութեան՝ երբոր Հուդթայ գիրքն առջևդ առնես: Ան ընտրեալ ժողովուրդը, որուն համար արևն իր ընթացքէն եւս կը կեցնայ, ապառաժ լերինք ջուր կը բղխեն, երկինք մանանայ կանձրևէ, այսպիսի ժողովուրդ մը, կըսեմք, սովորական տարեգիր մը չէր կրնար ու-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 06:05 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նեննալ : Իր ամէն յեղափոխութիւնքը պատմուած են մերթ փողոց, մերթ քնարի և մերթ հովուական արնգի վրայ. պատմութեան ոճն ալ շարունակեալ հրաշք մըն է, որով մէջը բովանդակուած աքանչելեաց սուտգուեը վրայ տարակոյս չի մնար :

Ո՛րչափ գեղեցիկ է ծննդոց գլուխն սկզբնաւորութիւնը : Ան լեզուի պարզութիւնը՝ ուրն որ նիւթին մեծութեան բոլորովին հակառակը կը սեպուի, հանճարի վերջին ճիգն է.

“ Ի սկզբանէ արար Աստուած զերկինն և զերկիր.

Եւ երկիր էր աներևոյթ և անպատրաստ.

Եւ հոգի Աստուծոյ շրջէր ՚ի վերայ ջրոց :

Եւ ասաց Աստուած. եղիցի լոյս, և եղև լոյս.

Եւ եահս Աստուած զլոյսն զի բարի է.

Եւ մեկնեաց Աստուած ՚ի մէջ լուսոյն և ՚ի մէջ խաւարին ,, :

Այսպիսի ոճի մը գեղեցկութիւնն ըստ արժանւոյն չի կրնար բացատրուիլ. և թէ որ մեկն ուզենայ թերութիւն գտնել, չենք գիտեր ինչ պատասխան տալ այնպիսւոյն : Ա միայն ըսենք թէ Աստուած՝ որ կը տեսնէ զլոյս, և իբրև մարդ մը՝ իր ստեղծած բանին հաւնիլ կը ցցընէ, ասկայ մարդկային գործոց հասարակ կարգէն վեր է. անանկ բան մըն է որ մարդուս հանճարին մէջ բնականապէս չի կրնար գալ : Հոմերոս և Պղատոն՝ որ աստուածոց վրայ այնպիսի վսեմ ոճով մը կը խօսին, աս ծանր բնականութիւնը ոչ երբեք գուշածած են : Աստուած մըն է՝ որ իր հրաշքներն ըմբռնելի ընելու համար՝ մարդկային լեզուն փոխ կառնէ. բայց միշտ Աստուած է :

Երբոր կը մտածենք թէ Մովսէս բոլոր պատմչաց մէջ հնագոյնն է, երբոր կը քննենք որ իր պատմածներուն մէջ առասպել մը չէ խառնած,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 06:05 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

երբոր կընկատեինք զինքն ազատիչ մեծ ժողովրդեան մը, հեղինակ ընտիր օրէնադրութեանց, ուր վէհագոյն քան զամենայն մատենագիրս, զարմանք մը կու գայ վրանիս. մանաւանդ երբոր անոր ընկկիզքն ալ մտածենք. խեղճ տղայ մը՝ որուն օրոցքը Նեղոսի ջուրց մէջ կը ձգուի, երկար ատեն անասաներուս մէջ կը պահուըտի, ու յանկարծ ծովեզրը կը բաժնէ, քարերէն ջուր կը բղխեցընէ, ամպոց մէջ կը յափշտակուի՝ Աստուծոյ հետ խօսելու, ու լեռան մը ծայր մեռնելով՝ գերեզմանն ալ կը ծածկուի: — Բայց քրիստոնեայ սրտի համար՝ ուրիշ գեղեցկութիւն ալ ունի սուրբ գիրքը. երբոր կը մտածենք թէ իսրայէլացւոց պատմութիւնը՝ միայն հին աւենուան պատմութիւն չէ, այլ նաև արդի ժամանակաց նկարագիրը. թէ ամէն անգք՝ իրենց կրկին կերպարանքն ունին, մէկ մը իբրև պոպոնան ճշմարտութիւն և մէկ մըն ալ կոչհոդը. թէ հրեական ժողովուրդը խորհրդական մանրանկար մըն է մարդկային ազգի, և իր անցիցը մէջ կը նկարագրէ ան ամէն անցքերն որ եղեր են և պիտի ըլլան. թէ Երուսաղէմ՝ ուրիշ քաղաքի մը նկարագիրն է, Սիոն՝ ուրիշ լեռան մը, Աւետեաց երկիրն՝ ուրիշ երկրի մը, Աբրահամու կոչումն ուրիշ կոչման մը, երբոր կը խորհրդածենք թէ Բոլոյական մարդը՝ բնական մարդուն պատմութեանը տակ ծածկուած է, և թէ Ադամայ անկումը, Աբելի սպիանը, Քամայ իր հայրը ծաղրելը և անկէց անէծք ընդունիլն ինչուան հիմա ալ յայտնապէս կը տեսնուին՝ կանանց ցաւօք ծնանելուն, ան արեան գետերուն՝ որ կայենի եղբայրասպանութենէն ինչուան մեր օրերը զերկիրս կողողեն, ու Քամայ անիծեալ սերնդոյն դէմքին վրայ, ալ բերանիս խօսք չի մնար այսպիսի գրքի մը գերազանցութիւնը դրուատելու:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 06:06 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Մարդկային սիրտն ասկէց աւելի հառաչանաց և արտասուաց խորունկ ձայն արձըկած չէ։

Կը թողունք աս հրաշալի գրքին ուրիշ գեղացանց կատնները քննել։

Տ-ՎԻՒՆԻ ԳԻՐՔԸ.— Սուրբ գրոց պատմական մասին մէջ մեծ մտադրութեան արժանաւոր երկասիրութիւն մըն է Տովբիթայ գիրքը՝ իրեն ամենաբնական պարզութեամբը. անանկ որ պատմուած անցքերը կարդալուդ ատեն՝ կարծես թէ աչքովդ կը նկատես։ Ինչպէս երբոր ծեր հայրը կը տեսնէ՝ որ իր Տուբիային իրատաներ կու տայ. երբոր առաջնորդ մը կը փնտրուեն, ու Տուբիա՝ ՂԱզարիայէլ տուն կը բերէ, և այլն։ Բայց աս բնականութիւնը շատ աւելի աչքի կը զարնէ՝ տղուն հօրը տունը դառնալէն ետքը։

Տուբիա՝ Հռափայէլի հետ Հռագաս գացեր էր։ Ծնողքը՝ որ իրենց որդւոյն առաջնորդին հրեշտակ ըլլալը չէին գիտեր, տեսնելով որ ժամադրութեան ատենին չդարձաւ Տուբիա՝ սկսան հոգալ ու ցաւիլ։ Մայրը ամէն օր տնէն դուրս կելլէր, կը քալէր ան ճամբաներն՝ ուսկից կը կարծէր թէ կրնայ գառնալ իր որդին, ու ամէն անցնողին անոր վրայ տեղեկութիւն կը հարցնէր։ Կը հասնի ան երջանիկ վայրկեանը։ Նոյն օրը Աննա, Տուբիայի մայրը, բարձր լեռան մը ծայրը ելած աչուընները կը յոգնեցընէր տեսնելու իր ցանկալի որդին։ Ան անգամ յոյսը պարապ չելլեր. կը տեսնէ իր զաւակը, որ ընկերոջը հետ կը ջանար վայրկեան մը առաջ տուն հասնիլ։ Կը փութայ Աննա, տուն կը վազէ, ու քաղցր արտասուօք խառնած՝ ուրախութեան ձայնով մը աւետիս կու տայ անոր ծերութեն և կոյր հօրը. "Տուբիա որդիդ հոս է,, կըսէ. ու աչուընները երկինք վերցնելով՝ շնորհակալ կըլլայ Աստուծոյ՝ որ իր

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 06:06 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Մարդկային սիրտն ասկէց աւելի հառաչանաց և արտասուաց խորունկ ձայն արձակած չէ։

Կը թողունք աս հրաշալի գրքին ուրիշ գեղացանց կատնները քննել։

Տ-ՎԻՒՆԻ գիւղը.— Սուրբ գրոց պատմական մասին մէջ մեծ մտադրութեան արժանաւոր երկասիրութիւն մըն է Տովբիթայ գիրքը՝ իրեն ամենաբնական պարզութեամբը. անանկ որ պատմուած անցքերը կարդալուդ ատեն՝ կարծես թէ աչքովդ կը նկատես։ Ինչպէս երբոր ծեր հայրը կը տեսնէ՝ որ իր Տուբիային իրատաներ կու տայ. երբոր առաջնորդ մը կը փնտրուեն, ու Տուբիա՝ ՂՀուափայէլ տուն կը բերէ, և այլն։ Բայց աս բնականութիւնը շատ աւելի աչքի կը զարնէ՝ տղուն հօրը տունը դառնալէն ետքը։

Տուբիա՝ Հռափայէլի հետ Հռագաս գացեր էր։ Ծնողքը՝ որ իրենց որդւոյն առաջնորդին հրեշտակ ըլլալը չէին գիտեր, տեսնելով որ ժամադրութեան ատենին չդարձաւ Տուբիա՝ սկսան հոգալ ու ցաւիլ։ Մայրը ամէն օր տնէն դուրս կելլէր, կը քալէր ան ճամբաներն՝ ուսկից կը կարծէր թէ կրնայ գառնալ իր որդին, ու ամէն անցնողին անոր վրայ տեղեկութիւն կը հարցնէր։ Կը հասնի ան երջանիկ վայրկեանը։ Նոյն օրը Աննա, Տուբիայի մայրը, բարձր լեռան մը ծայրը ելած աչուընները կը յոգնեցընէր տեսնելու իր ցանկալի որդին։ Ան անգամ յոյսը պարապ չելլեր. կը տեսնէ իր զաւակը, որ ընկերոջը հետ կը ջանար վայրկեան մը առաջ տուն հասնիլ։ Կը փութայ Աննա, տուն կը վազէ, ու քաղցր արտասուօք խառնած՝ ուրախութեան ձայնով մը աւետիս կու տայ անոր ծերութեն և կոյր հօրը. "Տուբիա որդիդ հոս է,, կըսէ. ու աչուընները երկինք վերցնելով՝ շնորհակալ կըլլայ Աստուծոյ՝ որ իր

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 06:07 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

որդին տեսնելու արժանի եղաւ: Տնեցիքը բոլոր ոտք կը հանէ, որպէս զի պատրաստուին ընդ առաջ ելլելու:

Ճանապարհորդքն ան միջոցին տուն կը մտնեն. հետեւինին ընկերացող շունն անոնցմէ առաջ կը վազէ, ու իր ուրախութեան շարժմունքներովը կարծես թէ ծերունին սիրոյը հասկըցնել կուզէ որդւոյն հասնիլը: Տովբիթ մէկէն ոտք կելլէ, վազել կըսկսի. այնչափ է իր ուրախութիւնը որ կոյր ըլլալն ալ կը մոռնայ, և ասդիս անդին խարխափելու տեղն՝ քիչ կը մնայ որ վեցտասի: Բայց ծառայի մը առաջնորդութեամբ՝ որդւոյն ընդառաջ կելլէ, կը համբուրէ զինքը, մինչդեռ Աննա՝ որդւոյն վրայ ընկած, անոնց երկուքին ուրախութեան արտասուացը կցորդ կըլլար:

Ա՛ս արտաշարժ տեսարանէն ետքը կը նստին ամէնքն ալ: Տուբիա՝ ձկան լեղւովը իր հօրն աչքը կը բժշկէ. ան ուրախութեան տեսարանին մէջէն միակ սխրութեան առարկան ալ կանհետանայ. կը տեսնէ Տովբիթ, ու աչքն որդւոյն վրայ չվերցուցած՝ երկինք կամբառնայ Աստուծոյ շնորհակալ ըլլալու: Ետքն իր որդւոյն վրայ կը նայի, միւսանգամ կը համբուրէ, երբոր կինն ու հոն եղողները զԱստուած կը փառաւորեն: Կուզեն վարձատրել ան առաջնորդն որ իրենց այսչափ ուրախութեան պատճառ եղաւ. անիկայ ինքզինքը կը յայտնէ, ու անոնց զարմանքը յաշխատելուն ժամանակ կաներեւութանայ: Աանկով կը լմննայ Տովբիթայ արտաշարժ պատմութիւնը:

Ջուզեցինք խօսքերնիս երկընցընել՝ Աննայի իրեն ընկերոջը հետ ըրած կռիւներուն վրայ՝ որոնց բնականութենին ամէն զարմանք վեր է, և ան խեղճ Սառային ցաւոցը վրայ՝ զոր մխիթարեց Տուբիա, և այլն:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 06:07 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Սուրբ գրոց բանասպեղծական ոճը. — Աստուածաշունչի մեծ մասը սրբազան բանաստեղծութիւնը գրաւած է. ան վսեմ լեզուն՝ որուն վրայ քննութիւն ընելը՝ գրքուկիս չափը չի վերցներ: Ընթերցողը ձեռք առնէ մարգարէքը, կարդա անոնց խօսքերը, չափէ անոնց հանճարին մեծութիւնը. ուրիշ ամէն արուեստքին քերթողք՝ իրենց քով անհամեմատ պզտիկ կերևնան: Սաղմոսարանի վրայ երկու խօսք մը ըսենք, ան ոսկեղէն գրքին՝ որ ճարտար գրչով կը նկարագրէ Քրիստոսի մեծութիւնն, ու անոր եկեղեցւոյն յաղթանակները. կը յիշեցնէ՝ իսրայէլացւոց համար եղած այնչափ հրաշքները, երկնաւոր իմաստութեամբ լցուած գեղեցիկ խրատներ առջևնիս կը դնէ և արդարութեան ճանապարհին հետևելու կը յորդորէ:

Սաղմոսք՝ մարդկային սրտի համար մեծ մխիթարութեան և հաճոյից առիթք են: Վասն զի մեր մտաց խաւարը կը հալածեն, կը ցրուեն անխորհուրդներն որ շատ անգամ կը գառնանան մեզի. անհնազանդ կրքերնուս գոռոզութիւնը կընուաճեն, անմեղ բարեկամութեան քաղցր կապը կը հաստատեն, անմիաբան սրտերը մեկմեկու հետ կը հաշտեցնեն: Համառօտ ըսենք, երկայրի ղէնք մը կու տան ձեռնուին՝ մեր հոգւոյն թշնամեաց հետ պատերազմելու, և ոտնընուս տակ զանոնք ընկճելու:

Սաղմոսք՝ եկեղեցւոյ ձայնն ու լեզուն կը սեպուին, կրօնից հանդէսներուն զարդերն են. և երբոր հաւատացնիս զմեզ սիրութեան և տրտմութեան կը հրաւիրէ, և անցեալ կենաց յանցանքը արուեստօք կը յորդորէ քաւել, ան աւետն ալ մեր մխիթարութիւնը սաղմոսաց մէջ կը գտնենք:

Ե՞ր կոչուի ոճ. — Սուրբ գրոց երրորդ և վերջին ոճն է, ըսինք, նոր կտակարանին ոճը:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 06:07 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

հոս մարգարէից վեհմտութիւնը մեկէն գողար փափկութեան մը կը փոխուի. անոնց մէջ սէրն է խօսողը, իսկ հոս սէրը՝ ի՛նչ օծումն, ի՛նչ պարզութիւն: Փիչ խօսքի մէջ աւետարանական ոճին յատկութիւնքը կրնանք ամփոփել. — հայրենի իշխանութիւն մը, հայրենի գթոյ հետ խառնուած, աստուածային ողորմութեան մը հետ՝ որ զմարդ փրկելու համար յանձն առաւ անոնց որդի և եղբայր ըլլալ:

Սուրբ աւետարանաց չարունակութիւնք են նաև առաքելական թղթերը: Ջանանք, և մանաւանդ սրբոյն Պօղոսիններըը կարդացողը՝ կը զարմանայ թէ ի՛նչպէս վեհմ բաներն ընտանի ոճով մը կը բացատրեն, մարդկային սրտին խորը կը քննեն, և հանդերձեալը կը գուշակեն:

ՀՈՄԵՐՈՍԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆԸ. — Բաղդատութեան ձեփերը. — Սուրբ գրոց վրայ այնչափ գրուած և խօսուած է, որ աւօրուան օրս այնպիսի գրքի մը գերազանցութիւնը ցցընելու համար՝ բաւական կը սեպուի Հոմերոսի հետ բաղդատելը. ան գրքին հետ՝ որ արժանապէս հին և նոր աշխարհքի առջև աքանչելիք մը սեպուած է: Մենք աս բաղդատութիւնը՝ և մանաւանդ աստուածաշնչին՝ Հոմերոսի գրքերէն վեր ըլլալը՝ այլևայլ գլուխներով պիտի ցցընենք, աս բանիս մէջ ալ Շաթոպրիանի հետևելով: Բաղդատութեան կէտերն են

Պարզութիւն.
Բարուց հնութիւն.
Պատմութիւն.
Նկարագրութիւն.
Նմանութիւնք.
Վսեմութիւն.

ՊԱՐԶՈՒԹԻՒՆ. — Պարզութիւնն աւելի համառօտ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 06:07 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

և ծանր է աուրթ գլուց մէջ. իսկ՝ ի Հոմերոս՝ առա-
ւել երկան ու զուարթարար: Առջինը վճռական
կերպ մը ունի, և նոյն գարձուածները կը կրկնէ,
թէպէտև նորանոր բաներ զուրցելու համար. իսկ
Հոմերոս աւելի կը սիրէ բառերը յաճախել ու մի
և նոյն ոճերով կը կրկնէ արդէն զուրցածը: Սուրթ
գլքին պարզութիւնը՝ ծերունի քահանայի մը յա-
տուկ է, որն որ լի մարդկային և աստուածային
գիտութեամբք, արքունեան դաբիրայի մէջէն՝ ի-
մաստութեան ուղիղ պատգամները կազդէ: Իսկ
Հոմերոսինը՝ ծեր ճանապարհորդի մը պարզու-
թիւն է, որն որ զինքը ասպնջականողին վառա-
րանին քով նստած՝ երկան և բազմափորձ կեն-
ցը մէջ սորվածները կաւանդէ:

Բարոյ հնութիւն. — Թէ Իղևոնի Թագաւորին և
Թէ արևելից հովիւներուն որդիքը իաշնագարմա-
նութիւն կընեն. բայց երբոր Պարիս Տրոյեա կը
դառնայ, արքունիքը կերթայ բնակելու՝ բազմա-
թիւ գերեաց և հաճոյից մէջ. իսկ Յակովբայ որ-
դւոյ տունը՝ պարզ վրան մըն է, և անոր մէջին-
ները քանի մը ծառայք: Ասիկայ է իրենց ամէն
հարստութիւնը:

Հոմերոսի գլքերուն՞ մէջ կը կարդանք՝ որ երբ
հիւր մը կու գայ իշխանին տունը, խումբ մը կա-
նանց, երբեմն ինչուան Թագաւորին դուստրը՝
զինքը բաղնիք կը տանին. հոտաւէտ խնկեր կու
տան իրեն, ոսկեղէն և արծաթի անօթներ լուա-
ցուելու համար. վերջը ծիրանի կառնէ վրան,
կաքաւարանը կը մտնէ, փղոսկրէ գահոյից վրայ
կը նստի: Գերի աղջկունք՝ ջուրը գինւոյ հետ կը
խառնեն, ու Դեմեթրեայ պտուղներուն հետ ի-
րեն կընծայեն: Ետքը փառաւոր խնջոյք կը պատ-
րաստուի: Կերակուրն որ լմննայ, կը խնդրեն իր-
մէն որ պատմութիւնն ընէ: Իսկ երբոր երթալու

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 06:07 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ըլլայ՝ հարուստ ընծաները կու տան, երեսին կամ զգեստներուն խեղճութենն ամենևին չենթայիր. վասն զի կը համարին թէ աստուածներէն մէկն է անանկ նուաստ կերպարանքի մէջ, և կամ Աստուածայ սիրելի թշուառ մը:

Բոլորովին տարբեր է Աբրահամու վրանին մէջի ընդունելութիւնը: Ինքն իսկ նահապետը դուրս կելլէ հիւրին ընդառաջ. կողջունէ զինքն ու մէկէն Աստուծոյ աղօթք մը կընէ: Ընտանեաց ոյդիքն անձամբ ուղտերը կը բերեն, գաւաթներն ալ անոնց ջուր կու տան: Պանդուխին ոտուընները կը լուան, ան ալ կը հանգչի գետնին վրայ, ու լռութեամբ իրեն համար պատրաստուած կերակուրը կուտէ: Իր պատմութիւնը հարցընող կամ քննող չկայ. այլ ուզածին չափ կը կենայ՝ կամ իրեն ձամբան կը շարունակէ: Բայց վրանէն մեկնելու ատենը՝ հետերնին բարեկամութեան դաշն կը դնէ, ու վերկայ՝ քար մը կը կանգնեն: Ան պարզ ու անպաճոյճ վէմը՝ յետագայ դարուց պիտի քարոզէ՝ թէ հին աեն երկու հոգի կենայ ձամբուն մէջ իրարու պատահեցան, ու մէկմէկու հետ եղբօր պէս վարուեցան եւ՝ հեռացան, այլ զիրար տեսնելու յոյս չունենալով. ընդարձակ գաւառներ՝ իրարու չիրմները մէկմէկէ պիտի բաժնէին:

Դիտելու արժանի է որ անծանօթ հիւրը Հոմերոսի մէջ շփոթան կը կոչուի. իսկ սուրբ գիրքը զանիկայ պանդուխ կանուանեն: Որչափ զանազանեալ է մարդկային տեսութիւնը. Յոյնը՝ տեղական և քաղաքային գաղափար մը ունի, եբրայեցիին զգածմունքը բարոյական է և ընդհանուր:

Որ և իցէ քաղաքական գործառնութիւնք չքով և հանդիսիս կըլլան Հոմերոսի գրոց մէջ: Դատաւոր մը հրապարակաւ բազմամբոխ ժողովրդեան առջև բարձր ձայնով իր վճիռը կը զուլցէ. 'նեա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 06:08 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

տոր՝ ծովեզերյաց քով կը կատարէ իր զոհերն և առնախուզութիւնքը : Հարսանեաց հանդէսներու մէջ պակաս չեն ցուցք, ուրախութեան երգեր, ծաղկեայ պսակներ. Թագաւորի յաղթարկաւորութեան՝ խումբ մը զօրաց, ամբողջ ժողովուրդ մը ներկայ կը գտնուին :

Իսկ Յակոբ երբոր իր հովուացն արդարութիւն ուզենայ ընել, արմաւենւոյ մը շքին տակ կը նըստի : Հարսնիք մը կատարելու համար՝ բաւական են աղբիւրի մը քով զուրցուած երկու խօսքերը : Ծառան՝ հարսնցու տղկին իր տիրոջն որդւոյն կը բերէ. կամ թէ տիրոջն որդին իր անեղբօրը քով եօթը տարի կը ծառայէ՝ անոր աղջկին առնելու համար : Երբոր նահապետ մը մեռնի, որդիքը Եփրոնի դաշտը կը տանին զինքը, հոն իր հարցը քով կը թաղեն : Այսպիսի սովորութիւնք՝ Հոմերոսիններէն շատ աւելի հին են. որովհետև անոնցմէ անհամեմատ պարզ, և հոն չգտնուող հանդարտութիւնն ու պարզութիւնը հոս կերևնայ :

Պոմպոնիոս. — Հոմերական պատմութեան մէջ յաճախ արտուղութիւնք կը տեսնես. անօթոց, զինուց, գաւազանաց ստորագրութիւնք. դից, մարդկանց և իրաց ծննդաբանութիւն : Յաւուրկ անուանք միշտ իրենց պատուանունն ալ հետերնին ունին. դիւցազն մը միշտ կամ՝ ապտածայինն է կամ անմահից նման : Իշխանուհի մը միշտ իր գեղեցկութեան ունի. հասակը՝ Դելոսի արմաւենւոյն նման, վարսքը՝ խարխեայց ընծան :

Աստուածաշնչի պատմութիւնն առանց արտուղութեան է. վճռական խօսքեր անպակաս են մէջը. անձինքը ոչ երբեք շողոքորթութեամբ կը յիշատակուին : Անոնց հետ քիչ անգամ իրենց պատուանունը կը տեսնես. պարագայ մը՝ որով աւելի պրոց մէջի ընկերութիւնն աւելի մերձաւոր կերև-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 06:08 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նայ նախնական բնութեան քան թէ Հոմերոսինը։

Նկարագրութիւն. — Երկան են Հոմերոսի նկարագրութիւնքը, և կամ գողտր, կամ ահաւոր, կամ շնորհալի, կամ սխուր կամ ուժով կամ վսեմ բնաւորութեան կը վերաբերին։ Սուրբ գրոց մէջ ընդհանրապէս մէկ բնաւորութիւն կըտտագրուի. բայց առջինէն շատ աւելի ստաւորութիւն ընող։

Նմանութիւն. — Երկան են դարձեալ Հոմերոսի նմանութիւնքն ու բաղդատութիւնքը. ուր ընդհակառակն սուրբ գիրք ամենաքիչ բառ կը գործածեն. առիւծ մը, հելեղ մը, որոտում մը, կրակ մը, որ կը մռնչէ, կը գահավիժէ, կը կործանէ, կը ապառէ. ասոնք են սուրբ գրոց նմանութիւնքը։ Երբեմն ալ իր նմանութեանցը մէջ արևելեան կերպարանք կառնէ, օրինակ իմն՝ երբոր հպարտութիւնը՝ Լիբանանու մայրեաց կը նմանցընէ, ևն։

Վէմ. — Վսեմը Հոմերոսի մէջ ամէն մասանց միաբանութենէն կը ծնանի, ու աստիճանաբ իր վախճանին կը հասնի. իսկ սուրբ գրոց մէջ անակնկալ է. փայլական մը սէս վրայ կը հասնի, մինչդեռ ընթերցողն ուսոյն զարնուիլը չի գիտեր։ Հոմերոսի մէջ վսեմը՝ բառից և մասնութեանց մեծավայելչութեամբը կը ձևանայ. իսկ սուրբ գրոց մէջ՝ անոնց ամենամեծ անմիաբանութենէն առաջ կու գայ, որ է նիւթին մեծութեան առջև՝ զանիկայ բացատրելու բառին իեղճութիւնը։

Բայց յոյն քերթողահօր համարն նախատինք չէ յաղթուիլն այնպիսի հանճարներէ՝ որոնք երկնից անմիջական թելադրութեամբը գրեր են։

Քանի մը օրինակներ. — Ինչուան հիմա զուրցածնիս աւելի կերպով մը ընթերցողաց իմացընելի ընելու համար՝ քանի մը օրինակներ մէջ բերենք։

Ա. Նեմի նկատմամբ՝ նշանաւոր հատուածի մը կայ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 06:08 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Հռոմեական մէջ, երբոր Ակիլլէս իր սիրելի Պատրոկլին մահուընէն ետքը՝ յունական պատերազմաց վրայ ելլելով առանց զինու և ապառազինութեան, լոկ ձայնովը ահ կը ձգէ տրոյացւոց բանակը։ Ոսկեղէն ամպն որ Պելէսեան որդւոյն (Ակիլլեայ) ճակտին վրայ կը տեսնուի՝ անոր գլխոյն վրայ երևցող բոցը, սա բոցին համեմատութիւնը՝ պաշարուած աշտարակի մը ծայրը գիշեր ատեն վառուած լուսոյն հետ, Ակիլլեայ իրեք անգամ մռնչելն և իրեք անգամ Տեւկրեանց բանակին մէջ վախ ձգելը, — ասոնք ամէն պարագայքը հոմերական վսեմ մը ձևացընելնէն, որն որ՝ ինչպէս առաջ ալ ըսինք, գեղեցիկ պատահարաց և մեծավայելուչ խօսքերու կցորդութեամբ կը ձևանայ։

Լսենք ուրիշ բոլորովին տարբեր վսեմ մը.

“Չի՛ դու, չի՛ընդ քեզ. չի՛ եկէք դուք այժմ ամենեքին՝ ի տանիս նանրութեան։ Կացուք քաղաքդ գուժկանօք, քաղաքդ պերճացեալ. վիրաւորք քո՝ ոչ վիրաւորք սուսերի. և ոչ դիակունք քո՝ դիակունք պատերազմաց... Ահաւասիկ տէր զօրութեանց՝ հանցէ և սասանակեսցէ զքեզ, այր դու, և հանցէ զպատմուճան քո և զպատկդ փառաց քոց, և ընկեսցէ զքեզ յերկիրն մեծ և յանչափ, և անդ մեռանիցիս. և արասցէ զկառան քո զգեղեցիկս յանարգութիւն, և զտուն իշխանութեան քո՝ ի կոխումն...[1]”։

Ի՛նչպէս մեկ վայրկենի մէջ անծանօթ աշխարհք մը կը ձգէ զքեզ մարգարէն։ Ամէն մեկ խօսքը, ամէն մեկ տունը կարծես թէ իրմէն առաջ եղած խօսքէն ու անէն ահաբեկած է։ Քաղաքը ալ չի նուաճուց համագումար մը չէ. այլ խորհրդական

1 Եսայի ԼԲ, 1, 2...

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 06:08 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

անձ մը. Տանէտ վրայ կէլլէ ալխուրելու համար, և մարգարէն անոր կործանումը գուշակելուն ժամանակ՝ կերպով մը վշտացն ալ հայտրդ կըլլայ:

Անթիւ վեմ ոճեր ունի Հոմերոս քաւռն մահ նկարագրելու համար. բայց սուրբ գիրքը կը գերազանցէ զինքն ասիկա խօսքերովս. "Կերիցէք անդրանիկն մահու զգեղեցկութիւն նորա[1]":: Ահաւոր և դժնդակ վախճան մը մահուան անդրանիկ կոչելը՝ միայն սուրբ գրոց մէջ երևցած լեզու մըն է. և կը զարմանանք թէ ինչպէս քերթողը կրցեր է մտածել. այսպիսի վեմի մը հանելու համար հարկաւոր ճամբան անծանօթ է մեզի:

Յովբ երբոր ուզենայ Աստուծոյ մեծութիւնը յայտնել, ասանկ կաղապակէ.

"Սերկ են գժոխք առաջին նորա և չիք զգեստ կորստեան: Եթէ արգելցէ զՋուրա՝ ցամաքեցուցանէ զերկիր, և եթէ թոյլ տացէ՝ կորոյս զնա կործանեալ[2]":

Պենեղոպեայ խրախճանութեանց ժամանակ՝ երբոր Տէոկլիմենէս այլևայլ ճախորդութիւններ կը գուշակէ, ամէնքը կը զարհուրին անոր նկարագրած վշտացը խեղճութեամբ.

"Բաբէ, զինչ այդ, ո՛ խօլացեալք, ձեզ կիրքդ լցեն դըժընդակ.
Գիշեր ահա ըստուերամած ձեզ ըզգըլխովք ծածանի,
Ծունկք՝ ի ներքոյ ձեր բաբախեն, և լոյս դիմաց մըթագնի.
կոծ և գանչիւն դառըն գուժեաց, և արտասուօք այտք լընուն,

1 Յ-ՎՔ ԺԸ. 13, ըստ Եբրայական բնագրին. ներքին մէջ դրո-ած է մահատարաժամ:

2 Յ-ՎՔ ԻՋ. 6:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 06:08 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Որմունք չըքնաղք և միջնատունք արդ ցայտեցան 'ի յարիւն.
ԵՒի է գաւիթն, լի է և բակն արդ 'ի խօլաց ուրուականաց,
Որ հա՛ ձեզ տան և իջանեն անդ 'ի խաւարն երեքեան.
Հա՛ եղ արփին, եղ աստղադէմ եթող զերկնից ըզկայեան,
Եւ յաննըշոյլ 'ի մէգ, 'ի բաւ, ողջ տիեզերք պատեցան ,,[1]:

Որչափ որ ահաւոր է աս վեմը, սակայն Յովբայ գրոց մէջ երևցած տեսլեանը տեղիք կու տայ.

" Ընհաւիրք և բոմբիւնք գիշերականք. հասեալ ահ 'ի վերայ մարդկան, դողումն և աստկումն պատահեցին ինձ, և մեծապէս զոսկերս իմ շարժեցին: Եւ ելն հոլմն 'ի վերայ երեսաց իմոց. քաժնեցին հեզք իմ և մարմինք: կանգնեցայ և ոչ գիտացի. տեսի և ոչ էին կերպարանք առաջի աչաց իմոց. բայց միայն օդ և ստատիւն լսէի ,,[2]:

Իրաւ է որ աս կտորին մէջ Հոմերոսի ստորագրած արիւնը, խաւարն ու ստուերքը չկան. բայց ան անծանօթ ֆէրպոյանթը, ան օդը և ոստիւնը խիստ ահաւոր են:

Երբոր Հոմերոս ուզենայ Մենելաւեանց նետերէն զարնուած պատերազմող մը ստորագրել, գեղաբոյս ձիթենւոյ մը կը նմանցընէ զանիկայ, որն որ արևուն կիզիչ ճառագայթներէն հեռու՝ ցօղով և զեփիւռով պարարած դաշտի մը մէջ կը անկուի. և ահա յանակնկալս ահաւոր հոլմ մը իր ծննդեան երկրէն կը իյնէ զանիկայ, և իրեն հիւթ

1 Որթ. Նաֆնէյ. ւ: 2 Յովբ Դ. 13...

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 06:09 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մատակարարող ջուրերուն քովը կինայ։ Ահաւասիկ հոմերոսեան երկան նմանութիւն մը. իսկ աստուածաշունչն ան ամենուն տեղը միայն մէկ խօսք մը կը գործածէ.

"Անօրէնն իբրև զնսակակուռ՝ տարաժամ կթեացի. թօթափեսցի իբրև զծաղիկ ձիթենոյ"[1]։

Չենք կրնար ըսել թէ սուրբ գրոց մէջ ամենևին երկան նմանութիւնք չեն գտնուիր. մարգարէութիւնք՝ և մանաւանդ Յովբայ գիրքն աս բանիս նկատմամբ ալ այլևայլ գեղարուեստից օրինակներ կընծայեն մեզի.

"Յոյս ամպարշտի կորիցէ, անշէն լիցի տուն նորա. անցցէ իբրև զսարդիոսաւայն յարկ նորա։ Թէպէտև հաստատեսցէ զտուն իւր՝ մի կացցէ. յարկանել ձեռին նորա մի հանդարտեսցէ։ Չի խոնաւութիւն յարեգականէ է. և՝ի նեխութենէ նորա ելցէ չառաւիղ իւր։ Ի վերայ կարկառի քարանց ննջեսցէ, և՝ի մէջ մանրախիճ քարանց կեցցէ. եթէ ընկլցէ զնա տեղին՝ ատեսցէ։ Ո՞չ տեսեր այսպիսի ինչ. զի կործանումն ամպարշտի այսպիսի է, և յերկրէ այլ բուսցի"[2]։

Ո՛րչափ գեղեցիկ է աս նմանութիւնը, կամ մանաւանդ երկան նկարագրութիւնը։ Քարինք անգամ լեզու կառնեն. լուռ երկիրն ալ չուզեր ձանչնալ, կը մերժէ ան անօրէնը որ անմտութիւնը կը կարծէ արմատ ձգել անոր վրայ։ Անճնաւորութիւն մը՝ որ յոյն քերթողին մտքէն գժուարաւ կրնար անցնիլ. անոր՝ որ աքանչելի և աննման հանճարով՝ գեղափանց անգամ արցունք տուած է։

Եզեկիէլ՝ Տիւրոսի կործանումը գուշակելով կաղաղակէր.

1 Յովբ ԺԵ. 33։ 2 Յովբ Ը. 16...

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 06:09 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

գերագոյն հանձար սեպուած է : Աստուածա-
շունչ գիրքը ուրիշ նմանօրինակ տեսարան մը առ-
ջևնիս կը բանայ :

Անոնք որ վաճառեցին զՅովսէփ , ան կարող
մարդուն եղբայրքը , իրեն կը դառնան առանց գի-
քը ճանչնալու . և հետևյինին բերած են նաև զԲե-
նիամին .

"Եհարց զնոսա Յովսէփ և ասէ . զի՞րդ կայք:
Եւ ասէ ցնոսա , եթէ ո՛ղջ իցէ հայրն ձեր
ծերունի զորմէ ասացէք թէ տակաւին կեն-
դանի է : Եւ նոքա ասեն . ողջ է ծառայ քո
հայր մեր , տակաւին կենդանի է : Եւ ասէ .
օրհնեալ է այրն այն յԱստուծոյ : Եւ խոնար-
հեցան երկիր պագին նմա : Ամբարձ զաչս
իւր և ետես զԲենիամին զեղբայր իւր զհա-
մամայր և ասէ . այդ է եղբայրն ձեր կրտ-
սեր , զորմէ ասացէք ածել առ իս . և ասէ .
Աստուած ողորմեսցի քեզ , որդեակ : Եւ խուո-
վեցաւ Յովսէփ , և գալարէին աղիք նորա 'ի
վերայ եղբօրն իւրոյ , և ինդրեր լալ . մտեալ
'ի սենեակ անդր , եկաց : Եւ լուացեալ զե-
րեսս իւր՝ եել . պնդեաց զանձն և ասէ . ար-
կէք հաց ,, [1] :

Ահաւասիկ Յովսէփայ արցունքը՝ Ոդիսեւսի արտասուացը քով . նմանօրինակ , սակայն ո՛րչափ աւելի արտաշարժ գեղեցկութիւն մը : Յովսէփայ իր ապերախտ եղբայրքն և անմեղ Բենիամինը տես-
նելուն վրայ լալը , հօրը վրայ լուրեր հարցընելը , ան սքանչելի պարզութիւնն որ դառնութեան և քաղցրութեան հետ միացած է , կարգէ դուրս բաներ են , կարդալու առեննիս՝ աչուընիս ար-
ցունքով կը լեցուի , ու կարծես թէ մենք ալ Յով-
սէփայ պէս փափաք մը կըզգանք արտասուելու :

1 Ծննդոց խգ . 27 :

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 07:54 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ողջոյն ընդ այտս Ոդիսեւսին յորդ Թափէին արուառասուք.
Զոր նա ցայնվայր ժուժայր սանձէր, և պինդ ունէր ի ծածուկ [1]:

Տեսանեմք Թէ ինչպէս Յովսէփ ինքզինքն իր եղբարցը կը յայտնէ: Իր բաժակը Բենիամինի քրձին մէջ դնել տալով հրաման կու տայ որ Յակոբայ որդիքը բռնուին: Անոնք տակնուվրայ կըլլան. Յովսէփ կը ձևացընէ Թէ իր քովը կուզէ պահել կարծեցեալ յանցաւորը. Յուդա՝ Բենիամինի տեղ ինքզինքը պատանդ կառաջարկէ. կը պատմէ Յովսէփայ Թէ ինչ սրտաշարժ կերպով բաժնուեցաւ հայրն իր սիրելի որդիէն.

"Եւ ասէ ցմեզ ծառայ քո հայր մեր. դուք ինքնին գիտէք զի երկուս ծնաւ ինձ կին իմ. մին եւ յինէն և ասացէք Թէ գազանակուռ եղև, և ոչ ևս տեսանեմ զնա մինչև ցայժմ. արդ եԹէ զսա ևս առնուցուք յերեսաց իմոց, և պատահիցէ սմա հիւանդութիւն ի ճանապարհի, իջուցանէք զծերութիւնս իմ տրտմութեամբ հանդերձ ի դժոխս: Եւ արդ եԹէ երթայեմք առ ծառայ քո հայր մեր, և պատանեակս չիցէ ընդ մեզ, և նորա ոգին կախեալ կայ զդորա ոգւոյդ. և լինիցի իբրև ոչ տեսանիցէ ընդ մեզ զմանուկդ, վախճանիցի. և իջուցանիցեն ծառայք քո զծերութիւնս ծառայիցդ հօր մերոյ չարչարանօք հանդերձ ի գժոխս: Զի ծառայն քոյ առեալ է յերաշխի զմանուկդ ի հօրէ իւրմէ. ասեմ. եԹէ ոչ ածից զդա առ քեզ և կացուցից առաջի քո, յանցաւոր եղէց առ հայր իմ զա-

1 Ոդիսական, հատն ԺԲ:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 07:55 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

վենայն աւուրս : Եւ արդ կացից ես ծառայ քո փոխանակ մանկանդ առաւուն ի մոյ . և պատանեակդ ելցէ ընդ եղբարս իւր , քանզի զնա՛րդ ելանիցեմ առ հայրն իմ , եթէ պատանեակդ չիցէ ընդ մեզ . զի մի տեսից զչարիսն որ գտանիցեն զհայրն իմ : Եւ ոչ կարաց Յովսէփ ժոյժ ունել առաջի ամենեցուն որ շուրջ զնովաւն կային , այլ ասէ . հանէք զամենեսին արտաքս յինէն : Եւ չկայր ևս ոք անդ առ նմա յորժամ եւս ծանօթս եղբարց իւրոց : Եւ ձայն բարձեալ լալով հանդերձ՝ մինչ լուան եգիպտացիքն , և տղք եղև՝ ի տան փարաւոնի : Ասէ Յովսէփ ցեղբարսն իւր . ես եմ Յովսէփ . արդարև տակաւին կենդանի՞ է հայրն իմ : Եւ ոչ կարէին եղբարքն նորա տալ նմա պատասխանի , զի խառնեցան յերեսաց նորա : Ասէ Յովսէփ ցեղբարսն իւր . մօտ եկայք առ իս : Եւ ջոգան մօտ . և ասէ . ես եմ Յովսէփ եղբայրն ձեր , զոր դուք վաճառեցէք յԵգիպտոս . բայց մի՛ ինչ տրտմիք , և մի՛ խիստ թուեսցի ձեզ զի վաճառեցէք զնա այսր . քանզի՝ ի փրկութիւն առաքեաց զնս Աստուած առաջի ձեր . . . Արդ փութացեալ իջուցէք զհայրն իմ այսր : Եւ անկեալ՝ ի վերայ պարանոցին Բենիամինի եղբօր իւրոյ՝ լացաւ . և Բենիամին լացաւ՝ ի վերայ պարանոցի նորա : Եւ համբուրեաց զամենայն եղբարս իւր , և լացաւ՝ ի վերայ նոցա ,, [1] :

Ահաւասիկ Յովսէփայ հոչակաւոր պատմութիւնը , որն որ աստուածային կրօնքի մը հիմն եղող գլուխ մէջ կը գանուի : Քննենք թէ ինչպէս

1 Ծննդոց ԽԶ . 27 . . . ԽԵ . 1 . . .

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 07:56 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Յովսէփայ և իր հարազատացը զիրար ճանչնալն՝ անհամեմատ գերազանց է Ոդիսեւսին ինքզինքն իր Տելեմաք որդւոյն յայտնելէն։

Նախ մեզի կերևնայ Թէ Հոմերոս մեծ սխալման մէջ ինկած է, իր նկարին մէջ զարմանալին (merveilleux) խօսքերով։ Թատերական տեսարանի մը վրայ՝ երբ կրքերը շարժման մէջ են, և ամէն զարմանալիք պէտք է որ սրտէ առաջ գան, առաւօտուան մը վրայ հանդիսը՝ հանգէսը կը պատրաստենք. զգածմանց՝ առակի կերպարանք կու տայ, և քերթողին տեսլը կը տեսանուի. յորում նախ կը թուէր Թէ միայն պարզ ճշմարտութիւն մը կայ։ Ոդիսականին մէջ տեսարանը շատ աւելի սրտաշարժ կըլլար եԹէ դիւցազնը բնական կերպով մը՝ և ան իր հնոտեայը մէջ յայտնուէր։

Անոր համար ծննդոց գրքին մէջի յայտնութիւնը շատ աւելի բնական և վարպետ է։ Եղբօր մը սրտին արժանի խորամանկութեամբ՝ և անմեղ վհուժինդրութեամբ մը, անպարտ տղուն ցորենի պարկին մէջ ոսկեղէն բաժակ մը կը դրուի. յանցաւոր եղբայրքը մեծ տագնապի մէջ են, իրենց հօրը սրտին ցաւը մտածելով. և ան ցաւը, ծերուներն որդեկորոյս հօր մը արտասուքը, որ Թէ իրենց բայց ևս առաւել Յովսէփայ սրտին վրայ մեծ ծանրէս կազդէ, կըստիպէ ինքզինքը յայտնել։ Ան նշանաւոր է՝ Յ՚ենէ խօսքը՝ նոյն իսկ վրդովեալ պէս մարդուն աչքէն արցունք կը կաթեցընէր։ Ոդիսեւս հնազանդ և հաւատարիմ որդի մը կը գտնէ՝ ի Տելեմաք. Յովսէփ ան եղբարց հետ կը խօսի որ զինքը վաճառեր են, կըսէր Թէ է՛ս է՛ս եղբայրն իմ. միայն Յ՚ենէ անունն ամէն բան կը յիշեցընէ իրենց։ Ինչպէս Տելեմաք, առանկ ալ Յովսէփայ եղբարքը կը խռովին. սակայն փարաւոնի երկրորդին մեծութիւնը չէ զերեզք ա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 07:56 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

հաբեկոն՝ որչափ նեղքին ձայն մը, խղճմտանաց խայթ մը։

Ովհաեւա՝ երկան խօսակցութիւն մը կընէ՝ ցեղէմաքայ հաւատարմացընելու համար թէ ինքն առաջնոր հայրն է. Յովսէփ՝ Յակոբայ սրտուոյը հետ այնչափ երկան բարակ խօսելու հարկ չունի. կը մօտեցընէ զնորեղնք, և անիկայ որ քիչ մը առաջ բարձր ձայնով էս էմ Յ-ԼԷէ զուրցելը էր, կըսոխպուի կամացուկ մը դառն պարագայ մըն ալ առաջին և վերջին անգամ յիշեցընել նորեղնց, թէ "Ես էմ Յ-ԼԷէ եղբայր ձեր զոր վաճառեցէք յԵգիպտոս,,։ Ի՛նչ սրտի ազնուութիւն, որպիսի՛ պարզութիւն բարոյից։

Ամենայն ինչ մեծ է առ Աստուած. ինչպէս առանց անոր ալ ամէն բան կը պզտիկնայ. աս բանս ինչուան զգածմանց վրայ ալ կը տարածուի։ Ենթադրէ թէ տուրբ գրոց մէջ պատմուածին պէս՝ ամէն դէպքերը նոյնպէս պատահէին. Ովաքէլի որդին որչափ բարի և զգայուն սիրտ մը ունենար, և սակայն փիլիսոփայ ըլլար, և փոխանակ ըսելու թէ Աստուծոյ կամքն է որ ինծի հոս բերաւ, զուրցէր թէ բաղդը նպաստաւոր եղաւ ինծի, մեկէն առարկայք պիտի պակսէին, չըլլանն ամփոփուէր, և ալ սըրտաշարժ պիտի չըլլար։

Վերջապէս Յովսէփ կը համբուրէ իր եղբայրքը, ինչպէս Ովհաեւա զՏեղեմաք. բայց ինքը նախ բենիամինէն կըսկսի։ Նոր մատենագիր մը իր գիւցազնը բուն ողբերգութեան անձ ընելու համար՝ անշուշտ պիտի ձևացընէր թէ Յովսէփ ամենէն աւելի պարտաւոր եղբօրը տուած ըլլայ սիրոյ տուչը համբոյրը. բայց տուրբ գիրք ալ աւելի ճանչցած են մարդկային սրտին խորը։ Կինայ Յովսէփ բենիամինի պարանոցն ու կուլայ. բենիամին ալ ինքը բռնած՝ կարտասուէ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 07:57 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Յովսէփայ և իր հարազատացը զնրար Ճանչնալն՝ անհամեմատ գերազանց է Ոդիսեւսին ինքզինքն իր Տելեմաք որդւոյն յայտնելէն։

Նախ մեզի կերևնայ թէ Հոմերոս մեծ սխալման մէջ ինկած է, իր նկարին մէջ զարմանալին (merveilleux) խօթելով։ Թատերական առասարանի մը վրայ՝ երբ կրքերը շարժման մէջ են, և ամէն զարմանալիք պէտք է որ սրտե առաջ գան, աստուածածուխեան մը վրայ հասնիլը՝ հանդէսը կը պաղեցնէ. զգածմանց՝ առակի կերպարանք կու տայ, և քերթուլին սուրը կը տեսնուի. յորում նախ կը թուէր թէ միայն պարզ Ճշմարտութիւն մը կայ։ Ոդիսականին մէջ տեսարանը շատ աւելի արտաշարժ կըլլար եթէ դիւցազնը բնական կերպով մը՝ և ան իր հնոտեայը մէջ յայտնուէր։

Անոր համար ծննդոց գրքին մէջի յայտնութիւնը շատ աւելի բնական և վարպետ է։ Եղբօր մը սրտին արժանի խորամանկութեամբ՝ և անմեղ վեհժինդրութեամբ մը, անպարտ տղուն ցորենի պարկին մէջ ոսկեղէն բաժակ մը կը դրուի. յանցաւոր եղբայրքը մեծ տագնապի մէջ են, իրենց հօրը սրտին ցաւը մտածելով. և ան ցաւը, ծերուկին որդեկորոյս հօր մը արտասուքը, որ թէ իրենց քայլ և առաւել Յովսէփայ սրտին վրայ մեծապէս կազդէ, կըստիպէ ինքզինքը յայտնել։ Ան նշանաւոր է՝ էմ Յովսէֆ խօսքը՝ նոյն իսկ վրիժառու պէս մարդուն աչքէն արցունք կը կաթեցընէր։ Ոդիսեւս հնազանդ և հաւատարիմ որդի մը կը գտնէ՝ ի Տելեմաք. Յովսէփ ան եղբարց հետ կը խօսի որ զինքը վաճառեր են, կըսէր թէ էս էմ եղբայրն չէր. միայն Յովսէֆ անունն ամէն բան կը յիշեցնէ իրենց։ Ինչպէս Տելեմաք, սոսկ ալ Յովսէփայ եղբարքը կը խռովին. սակայն փարաւոնի երկրորդին մեծութիւնը չէ զիրենք ա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 07:57 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

հաբեկոլն՝ որչափ նեղքին ձայն մը, խղճմտանաց խայթ մը։

Ովհաննես՝ երկան խօսակցութիւն մը կընէ՝ ցեղէմնքայ հաւատարմացընելու համար թէ ինքն առնու հայրն է. Յովսէփ՝ Յակոբայ որդւոյը հետ այնչափ երկան բարակ խօսելու հարկ չունի. կը մտերցընէ զնրեննք, և անիկայ որ քիչ մը առաջ բարձր ձայնով էս էմ Յովէֆ զուրցեր էր, կրատիպան կամացուկ մը դառն պարագայ մըն ալ առաջին և վերջին անգամ յիշեցընել կրենց, թէ "Ես էմ Յովէֆ եղբայր ձեր զոր վաճառեցէք յԵգիպտոս"։ Ի՛նչ արտի ազնուութիւն, որպիսի պարզութիւն բարուց։

Ամենայն ինչ մեծ է առ Աստուած. ինչպէս առանց անոր ալ ամէն բան կը պզտիկնայ. առ բանս ինչուան զգածմանց վրայ ալ կը տարածուի։ Ենթադրէ թէ տուրբ գրոց մէջ պատմուածին պէս՝ ամէն դէպքերը նոյնպէս պատահէին. Ռաքէլն որդին որչափ բարի և զգայուն սիրտ մը ունենար, և սակայն փիլիսոփայ ըլլար, և փոխանակ ըսելու թէ Աստուծոյ կամքն է որ ղէս հոս բերաւ, զուրգեր թէ Բաղդը նպաստաւոր եղաւ ինծի, մեկէն առարկայք պիտի պահանջէին, ջրջանն ամփոփուէր, և ան արդ առաշարժ պիտի ջրլլար։

Վերջապէս Յովսէփ կը համբուրէ իր եղբայրքը, ինչպէս Ովհաննես զՏեղեմաք. բայց ինքը նախ Բենիամինին կրսկսի։ Նոր մատենագիր մը իր գիւցազնը բուն ողբերգութեան անձ ընելու համար՝ անշուշտ պիտի ձևացընէր թէ Յովսէփ ամենէն աւելի պարտաւոր եղբօրը տուած ըլլայ սիրոյ առջի համբոյրը. բայց տուրբ գիրք ալ աւելի ճանչցած են մարդկային սրտին խորը։ Կինայ Յովսէփ Բենիամինի պարանոցն ու կուլայ. Բենիամին ալ զինքը բռնած՝ կարտասուէ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 07:57 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ուրիշ շատ օրինակներ ալ կրնայինք գտնել ատոր գրոց մէջ, որոնցմով կարենայինք ցցընել ուրիշ ամէն մատենագրաց պզտիկութիւնը աստուածազգեցիկ լեզուի մը համեմատութեամբ: Սակայն թէ խօսքերնուս չափն և թէ դիտմունքնիս չերերելուն համար՝ զանց կընենք. միայն քանի մը գիտնալու արժանի բան ալ եբրայական բանաստեղծութեան վրայ խօսինք:

ԳԼՈՒԽ Բ.

ԵԲՐԱՑԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Բանաստեղծական արուեստին հնութիւնը էբրայեցւոց մէջ. — թէ քերթուածեան և թէ երաժշտութեան մշակութիւնը շատ հին է եբրայեցւոց մէջ: Դատաւորաց ժամանակ՝ մարգարէական դպրոցաց յիշատակութիւն կըլլայ, յորում կրթուողներուն գլխաւոր պարտքն էր ձայնաւոր գործեաց միաբանութեամբ Աստուծոյ օրհնութիւնն ընել: Սամուէլի կամ Թագաւորութեանց առաջին գրքին մէջ ալ կը տեսնենք աս մարգարէներէն խումբ մը որ Բամայէն կիջնային սրինգ, թմբուկ, փող և քնար ունենալով: Բայց Դաւթի Թագաւորութեանը ժամանակ թէ երաժշտութիւնը և թէ բանաստեղծութիւնն եբրայեցւոց մէջ շատ առաջ գնացին: Տապանակին ծառայութեանը համար չորս հազար ղեւտացիք սահմանուեցան, որոնք քսանըչորս դաս կամ պար բաժնուած՝ ուրիշ ըզբաղմունք չունէին, բայց եթէ՝ ի պատիւ Աստուծոյ երգ երգել, և հաստատակաց հանդիսից մէջ գործական երաժշտութեամբ անոնց աւելի փառա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 07:58 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ւորութիւն տալ. Աստի, Ցեման և Իդումեան՝ երբաժշտաց գլխաւոր վերակացուքն էին. և քանի մը սաղմոսաց վերնագրէն կերևնայ թէ սրբազան քերթուեթեանց գեղեցկանց յօրինողք էին: Մնացորդաց առաջին գլուխին մէջ կը կարդանք թէ Դաւիթ մանաւանդ կարգեր և սահմանադրութիւններ դրաւ սրբազան երաժշտութեան և բանաստեղծութեան համար. որոնց պէս մեծ ավելութիւն և բազմաձեւ կրօնական կարգեր թերևս ուրիշ ազգի մը մէջ չեն տեսնուիր:

Եբրայական բանաստեղծութեան կազմաւորութիւնը յատուկ և մանաւանդ կերպ մը ունի: Ամէն մէն՝ քիչ շատ իրարու հաւասար անդամներ բաժնուելուն վրայ կը ձևանայ, որոնք թէ երգին և թէ իմաստին մէջ իրարու նման են: Առաջին մասին մէջ կիրք մը կը բացատրուի. ու երկրորդը նոյն կրքին այլևայլ կերպով կրկնուիլը կամ ընդլայնիլն է: Սաղմոսք ընդհանրապէս եբրայեցւոց սրբազան բանաստեղծութեան կերպը: Հին կտակարանաց գլուխները բիւրաւոր օրինակներ առջևնիս կը բերեն: Սաղմոսին մէջ.

“ Օրհնեցէք զտէր յօրհնութիւն նոր. — օրհնեցէք զտէր ամենայն երկիր:

Օրհնեցէք զտէր և օրհնեցէք զանուն նորա. — աւետարանեցէք օր ըստ օրէ զփրկութիւն նորա:

Պատմեցէք՝ի հեթանոսս զփառս նորա.— յամենայն ժողովուրդս զսքանչելիս նորա:

Մեծ է տէր և օրհնեալ է յոյժ. — ահարկու է նա՝ի վերայ ամենայն կռոց,,:

Եբրայական սրբազան բանաստեղծութեան սոյնպիսի կերպ ունենալուն գլխաւոր պատճառը կրնանայ թէ իրենց տաղերուն երգոց հետ ունե-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 07:58 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ցած միաբանութեանէն է : Վասն զի երգեցու ա-
տեններին՝ երաժիշտք կընկերէին իրենց , և վերջէն
երգողաց և երաժշտաց խումբերը փոփոխակի ի-
րարու կը պատասխանէին : Օրինակ իմն , երբոր
մէկ կողմը կըսկսէր Տէր ողորմեաց , ուրախ եղիջի
երկիր , միւսը կը պատասխաներ . Ուրախ եղիջին կըղ-
պէ բաղմ : Առջինը կը շարունակէր . Ամպ և մէգ
շուրջ են նովա . երկրորդը Յերաւոնս և յարդարու-
թիւն հաստատեալ է աթոռ նորա :

Եզնի գրքին մէջ յայտնապէս կը զուրցուի թէ
ղևտացիք աս կերպով փոխ առ փոխ կերգէին . և
Դաւթի քանի մը սաղմոսները հաւանական կերև-
նան թէ աս կերպով երգուելու համար յօրի-
նուած են . մանաւանդ քսաներորդ երրորդ սաղ-
մոսը , որն որ անշուշտ տապանակը հանդիսով Սիոն
լեռը փոխադրելու ժամանակ շինուած է , և որուն
ազդեցութիւնը շատ մեծ եղած պիտի ըլլայ եթէ
աս կերպով երգուելու է : Ղևտացիք և երգիչք այլ-
ևայլ դասակարգութիւն բաժնուած , և երաժըշ-
տական ամէն գործեաց միաբանութեամբը՝ հան-
դիսին մէջ ամենէն առաջ կերևային : Սաղմոսին
առջի տուներն երգուելէն ետքը , երբոր Թափորը
սրբազան լեռան վրայ կելլէր , պարին մէկ մասը կը
հարցընէր . “ Ո՞վ եւցէ ՚ի լեառն տեառն , կամ
ով կայցէ ՚ի տեղւոջն սրբութեան ,, : Բոլոր պա-
րը կը պատասխաներ . “ Որ սուրբ է ձեռօք և ան-
բիծ սրտիւ , որ ոչ էառ զնանութիւն յանձն իւր ,
և ոչ երդուաւ նենգութեամբ ընկերի իւրում ,, :
Երբոր Թափորը սրբավայրին դրանն առջև կը հաս-
նի , պարն՝ ամէն երաժշտական գործեաց միա-
բանութեամբ կաղաղակէ . “ Ամբարձէք իշխանք
զդրունս ձեր ՚ի վեր . ամբարձին դրունք յաւի-
տենից և մտցէ Թագաւոր փառաց ,, : Հոս պարին
կէսը ցած ձայնով մը կընդհատէ անոնց խօսքը .

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 07:58 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

"Ո՞վ է սա Թագաւոր փառաց ,,: Եւ երբոր տա-
պանակը տաճարին մէջ կը մտնէ , գարձեալ պարը
կաղաղակէ . "Տէր կարող և հզօր , տէր կարող 'ի
պատերազմի ,,:

Կամք սա օրինակս մէջ բերելով իսկաբերնիս ե-
կընցուցինք . որպէս զի ցցընենք թէ որչափ յարդ
և գեղեցկութիւն կառնեն սրբազան տաղերն ե-
բոր անոնց չինուածքին մանաւոր պարագանելը
և հանդամանքը դիտենք :

Երաժշտական երգոց կամ քերթուածոց մէջ
սա չափը մտնելով դիւրաւ նոյն չափին ուրիշ քեր-
թուածոց մէջ ալ մտաւ , որոնք երգուելու հա-
մար չինուած չէին , ուստի և անոնց մէջ նոյն չա-
փը պահելու հարկ չկար : Ասանկ Եսայեայ մար-
գարէութեանը մէջ .

"Լուսաւորեաց լուսաւորեաց Երուսաղէմ
— զի հասեալ է լոյս քո . — և փառք աեա-
ռըն 'ի վերայ քո ծագեցին :
Զի ահա խաւար կալաւ զերկիր — և մառա-
խուղ զհեթանոսս . — բայց 'ի քեզ տէր
յայտնեսցի . — և փառք նորա 'ի քեզ ե-
րևեսցին :
Եւ գնասցեն Թագաւորք 'ի լոյս քո — և հե-
թանոսք 'ի ծագել լուսոյ քո ,, [1] :

Ա՛ս կերպ գրութիւնն եբրայական բանաստեղծու-
թեան յատուկ է , և տարբեր՝ մանաւանդ թէ հա-
կառակ յոյն և լատին քերթողաց :

Բաց 'ի սա յատուկ տարբերութենէն՝ սրբա-
զան բանաստեղծութիւնը կը զանազանուի նաև
ազգու , կարուկ , մեծավայելուչ և այլաբանական
գեղեցկութեամբը : Ազգն ու համառօտութիւնը
(concision) իր յատուկ նշանակն են : կարծես թէ

[1] Եսայ ո . 1 . . .

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 07:59 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

բնական կերպով մտածելով անանկ մը կերևնայ
թէ եբրայեցի քերթողաց այլևայլ կերպով ի և
նոյն իմաստն ընդլայնելն իրենց ուժը պիտի տա-
րացընէ : Բայց սա անպատեհութեանս դէմն առ-
նելը գիտցան : Իրենց վճիռները միշտ կարուկ են .
քիչ անգամ աւելորդ բառ կը գործածեն . և մի
և նոյն մտածութեան վրայ ոչ երբեք կանկ կառ-
նեն : Բացատրութեան ատ համառօտ և կարուկ
կերպէն ընդհանրապէս առաջ կու գայ իրենց վը-
ռեմ ոճին մեծ մասը . և ան ամէն մտեռնագիրք
որ վեռմ ոճ կուզեն բանեցընել, մեծապէս կօգ-
տին եթէ ան նկատմամբ հին կտակարանին ոճին
հետևին : Վասն զի գիտենք թէ վեռմի հակառա-
կող անանկ բան մը չկայ՝ ինչպէս ոճի ընդլայնու-
մը կամ աւելորդաբանութիւնը . որ և իցէ մեծ
գաղափար մարգուս վրայ այնչափ տպաւորութիւն
չընէը, բայց եթէ երբոր մէկ հարուածով մը զար-
նուի . տպաւորութիւնը երկընցընելն ուրիշ բան
ըսել չէ , բայց եթէ տկարացընել զանիկայ :

Գիրք մը չկայ որ աստուածաշնչէն պէս այնչափ
մեծավայելուչ և կենդանի նկարագրութեանց յա-
ճախութիւն ունենայ : Ա նիւթիս վրայ հարկ է
որ քիչ մը երկընկեկ խօսինք . որովհետև սուրբ
գրոց վարժութիւննիս շատ անգամ արդելք կըլ-
լայ մեզի անոր ոճին գեղեցկութեան չափն ըստ
արժանւոյն առնելու : Ցաճախ են անոր մէջ փո-
խաբերութիւնք, նմանութիւնք, այլաբանութիւնք
և անձնաւորութիւնք : Նոյն ձևերը գործածող
քերթողաց արժանի յարգը տալու համար հարկ
է , որ մոքնիս մէյմը հրեաստանի երկիրն անց-
նինք , և աչքնուս առջև բերենք ան ամէն տեսա-
րանները որոնց ընդելացած էին եբրայեցի քեր-
թողք : Նոյն մտադրութիւնը պէտք է նաև ուրիշ
ազ և իցէ ժամանակի և աշխարհի քերթողաց հա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 07:59 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մար. վասն զի ամէն ճարտար քերթողի նմանութիւնքը՝ բնութենէ և ժամանակին սովորութիւնները ընդօրինակուած են. և առանց անոր՝ չեն կրնար պէտք եղած տպաւորութիւնն ընել ընթերցողաց մտքին և սրտին վրայ:

Բնական տեսարանները, ինչպէս լոյս և խաւար, բոյսք և ծաղկունք, անտառք և դաշտք թէպէտև այլևայլ գեղեցիկ ձևեր կը թելադրեն, բայց անոնք կերպով մը նման են ամէն աշխարհաց և ժամանակաց քերթողներուն: Սակայն առարք գրոց մէջ բովանդակուած գեղեցիկ նկարագրութեանց ճաշակն առնելու համար պէտք է գիտնալ թէ շատերը հրէաստանի երկրին մասնաւոր հանգամանքները առաջ կու գան: Ամառուան ամիսներուն մէջ քիչ կամ ամենևին անձրև չըլլար հոն. որով երբոր տաքն երկարատև ըլլայ, բոլոր երկիրը կայրի. անոր համար ջրոյ պակասութիւնն իրաւամբք մեծ թշուառութիւն սեպուած է. և առատ անձրև մը բոլոր երկիրը կերպարանափոխ կընէր: Ուստի կը տեսնենք որ մարգարէք թշուառութիւն ստորագրելու համար շատ անգամ անջուր երկիր մը մէջ կը բերեն, ինչպէս թշուառութենէ՝ ի յաջողութիւն անցքն ալ անձրևի նմանութեամբ կընեն: Ասանկ Եսայի.

> “Ուրախ լեր անապատ ծարաւի. ցնծասցէ անապատն և ծաղկեսցէ իբրև զշուշան: —
> “Զի ջուր բղխեաց յանապատի և գետ՝ի ծարաւուտ երկրի. և եղիցի անջուրն յաղաւիւրս, և աղբիւր ջուրց՝ի ծարաւուտ երկրի,,[1]:

Նմանապէս երկիր մը ըլլալով հրէաստան, անձրևային ամիսներուն մէջ տեղատարափ հեղեղք

1 Եսայի ԼԵ. 1:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 07:59 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

շատ անգամ բոլոր երկիրը տակնուվրայ կընէին : Անկէց է սուրբ գրոց մէջ երևցած ջրին յաճախութիւնն ու բռնութեանը նկարագիրը. մեծ ալէտք մը ատորագրելու համար հեղեղաց նմանութիւնը մէջ կը բերուն, որն ոչ անշուշտ մեծ տպաւորութիւն պիտի ընէր լսողաց մտքի վրայ.

“ Խորք՝ի խորոց կարդացին առ քեզ՝ի ձայն սահանաց քոց ,,[1] :

“ Ամենայն զբօսանք քո և ալիք քո անցին՝ի վերայ իմ ,,[2] :

Երկրին մեծ և գլխաւոր լերինքն էին Լիբանան և կարմելոս. առջինը նշանաւոր իր բարձրութեան և անառառնելութեան ու կաղնեաքը. երկրորդն ալ գեղեցկութեամբն և արգաւաւորութեամբ, և մանաւանդ խաղողոյ և ձիթենեաց առատութեամբը : Անոր համար կարգէ դուրս յարմարութեամբ մը ամէն մեծ ու փառաւոր բանի պատկեր՝ Լիբանան մէջ կը բերուի, և գովարձալի բանեղու ալ կարմելոս.

“ Եւ փառքն Լիբանանու տացի նմա , և պատիւն կարմելայ ,,[3] :

Լիբանան լեռը շատ անգամ փոխաբերաբար դրուած է՝ Իսրայէլի ժողովրդեանը, տաճարին և Աստուց Թագաւորին տեղ. իսկ կարմելոս խաղողութեան և յաջողութեան : Սողոմոն՝ մէկու մը մեծավայելուչ ներկայութեանը վրայ խօսելով կըսէ.

“ Տեսիլ նորա որպէս զընտիր եղևնափայտից Լիբանանու ,,.

Իսկ օրիորդի մը գեղեցկութիւնը գովելու առն

“ Գլուխ քո՝ի վերայ քո իբրև զԿարմելոս ,,[4] :

1 Սաղմ. ԽԲ :
2 Յովնան Բ. 4 :
3 Եսայի. ԼՅ. 2 :
4 Երգ երգոց Ե. և Է :

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:00 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Դիտելու արժանի բան մըն ալ կայ որ սրբազան քերթողք ահարկու բաներ ստորագրելու առեն՝ իրենց նկարագրութիւնը յաձախ բնութեան ան տպաւորութիւններէն, ու տարերաց անանկ բռնութիւններէն կառնեն՝ զոր իրենց կլիմային մէջ կը տեսնէին։ Հրէաստան շատ անգամ չարժ կը պատահէր և կարկուտ, որոտմունք և փայլատակունք կը յաձախէին։ Եսայի երկրին համար կըսպառնայ թէ

"Շարժելով շարժեսցի իբրև զտաղաւար մըրգապահաց, իբրև զարբեանն և զխնալակ. գլորեսցի և մի կարասցէ կանգնել"[1]։

Սաղմոսաց մէջ ալ Աստուծոյ երևումն աս կերպով ստորագրուած է.

"Եւ ծուխ 'ի բարկութենէ նորա, և հուր յերեսաց նորա բորբոքեցաւ։

Խոնարհեցոյց զերկինս և էջ, և մէգ 'ի ներքոյ ոտից նորա։

Եւ 'ի քրովբէս և թռեաւ. սլացաւ նա 'ի թևս հողմոց։

Եդ զխաւար 'ի ծածկոյթ իւր, և շուրջ զնովաւ են յարկք իւր. և խաւարային ջուրք մինչև յամպս օդոց։

Ի փայլատակել նորա առաջի նոցա, ամպք անցուցին զկարկուտ, և զկայծակունս հուր։

Որոտաց ամէն յերկնից, և բարձրեալն ետ զձայն իւր 'ի կարկուտ և 'ի կայծակունս հուր։

Առաքեաց զնետս իւր և ցրուեաց զնոսա. յաձախեաց զփայլատակունս իւր, և խռովեցոյց զնոսա"[2]։

1 Եսայի ԻԴ. 20։ 2 Սաղմ. ԺԸ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:00 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ա՛ս ասելը թէպէտև կրնան կերպով մը Աստուածոյ սիրելական լեռն լինելուն յարմարիլ, սակայն հատանական կերևնայ թէ ատնկարտագիրքը՝ հեղինակին ծանօթ երկրին բնութէն վրդխ առնուած են։

Իրենց աշխարհին բնական տեսարաններէն զատ կը տեսնենք ու Հրեայք յաճախ կրօնքնեղինուն ապրուստնուիրելը, և առանին ընկերական կեանց պատուհասքն ու պարապմունքը հինն կառնեն նոյնանոր երևակայութեանց։ Իրենք մանաւոր կերպով մը եռանկ ընկած էին երկրագործութեան և խաչնագարմանութեան. և զոյունք մեծապէս պատուաւոր կը սեպէին, և ինչուան իրենց նահապետացը, Թագաւորաց և մարգարէից սիրելի պարապմունք։ Վաճառականութեան այնչափ սէր չունենալով, և օրէնքնեղինուն ու կրօնքնը համար գրեթէ աշխարհքիս ուրիշ մասերէն բաժնուած, քաղաքական պայծառութեան տեղնին ալ շատ լուսինն անծանօթ էր իրենց մէջ։ Ընկերց և հովուական կեանց յաճախ ակնարկութիւնը, դալարի դաշտաց, խաղաղ ջրոց, հովուի մը իրեն խաշանցը վրայ ունեցած խնամոյն ու սիրոյն։

Ա՛ս ամէն բաներնին կերևնայ թէ սրբազան քերթութեանց երևակայական մասը շատ բնական և ազգու է. վասն զի աչքընուս առջև եղած գաղափարներէն ընդօրինակուած է։ Կատարեալ իրեն մէջ, և ուրիշ շատ քերթողներու գրածէն աւելի՝ ազգային գաղափարաց և սովորութեանց վրայ հիմնած։ Գրուածքնին կարդալու տեղնիս կարծես թէ հրէաստանի մէջ ենք. արմաւենիքն և Լիբանանու կաղնիներն աչքընուս առջև. առջևնիս իրենց երկիրը, կլիմային յատկութիւնքը, ժողովրդեան բնաւորութիւնքն և իրենց կրօնին մեծավայելուչ արարողութիւնքը։

Սրբազան քերթողաց գործածած նմանութիւնքն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:00 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ընդհանրապէս չտեսած են: Աբելի նմանութեան մէկ կէտը կառնեն, ու չեն ուզեր պզտիկ արուեստութիւններով ընդլայնել նոյնը, որն որ ուրիշ քերթողաց յատուկ է: Եւ սա նկատմամբ Թերևս գերազանց քան յոյն և լատին քերթողքը՝ որոնք նմանութեանց երկայնութիւնը շատ անգամ պատմութեան ներկը կը կորչեն. ուր ընդհակառակն՝ եբրայեցի քերթողք, ինչպէս առաջ ալ յիշեցինք, ազգու երևակայութեամբը փայլական կը նմանին, որն որ յանախնկալս արագ կերպով մը կը զարնէ:

Այլաբանութիւնն ալ իրենց գրոցը մէջ գըտնուած յաճախ ձևերէն մէկն է: Ասոր գեղեցիկ օրինակ մըն է եօթանասներորդ ննեերորդ սաղմոսը՝ յորում Իսրայէլի ժողովուրդն այգւոյ մը կը նմանցընէ: Առակք ալ այլաբանութեան մէկ տեսակն են, և որոնցմով լի են սուրբ գիրք: Առակք՝ եթէ շատ տեղ մուծ երևնան մեզի համար, պէտք է յիշենք թէ հին սահմանն ընդհանուր սովորութիւն մըն էր արևելեան ազգաց մէջ որ և իսկ ճշմարտութեան խորհրդաւոր ծածկութեան կերպարանք մը տալ:

Բայց սուրբ գրոց ոճին ամենէն աւելի գեղեցկութիւն կամ վսեմութիւն տուողն անձնաւորութեան կամ դիմաստնութեան ձևն է: Իրենց պէս՝ ուրիշ արուեստքին քերթող մը չէ եղած սա ձևն ըստ արժանւոյն բանեցընող: Մեծ դիպաց մէջ՝ բնութեան ամէն մէկ մասին ոգի կու տան, մանաւանդ երկոր իսօքը Աստուծոյ վերայ ըլլայ:

> "Տեսին զքեզ ջուրք, Աստուած, և խռովեցան. — Երինք տեսին զքեզ և դողացին. — Ծով եռաց և փախեաւ. — Անդունդք ալաղակեցին և ձգեցին զձեռս իւրեանց,,:

Յովքայ գրոց մէջ իսօք կըլլայ նմասաւութիւն բուն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:00 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

առեղը գտնելու համար. քերթողը զանդունդս մէջ կը բերէ, որ լեզու կառնէ և կըսէ.

"Անդունդք ասացին Թէ չէ առ իս. և ծով ասաց Թէ չէ ընդ ինև... կորուստ և մահ ասացին. լուաք զփառաւորութենէ նորա"[1]:

Եսայի մարգարէն ալ երբոր վսեմ լեզուով մը ասորեստանի Թագաւորին անկումը կըստորագրէ, այլևայլ նիւԹերու անձնաւորութիւն կուտայ. Ն իբանանու մայրիքն և կալնիները կուրախանան անոր անկմանը վրայ. դժոխք իր յաւտակէն՝ մեռեալքը Թագաւորին ընդ առաջ կը հանէ. ու մեռած գնացած Թագաւորներ մէջ կու գան զինքը նախատելու համար: Նոյնպէս ազդու և կրաշարժ են մարգարէք երբոր յանկարծ անբարբառ նիւԹոց մը կը դառնան, և անոր հետ կըսկսին խօսիլ:

"Մինչև յերկր կոտորիցես սուրդ տեառն, կալտղակէ Երեմիա, մինչև յերկր ոչ դադարիցես. դարձիր 'ի պատեանս քո, դադարեա և վերացիր: Զիա՞րդ դադարիցէ, զի տէր հրամայեաց ընա 'ի վերայ Ասկաղոնի"[2]:

Սուրբ գրոց ոճին վրայ ըրած աս համառօտ տեսութիւններէն ետքն՝ ընդհանուր կերպով մը յիշատակենք անոնց մէջ գտնուած բանաստեղծութեան այլևայլ տեսակները:

Աստնց մէջ գլխաւորներն են վարդապետական, հովուական, եղերերգական և քնարերգական: Վարդապետականին՝ ամենագեղեցիկ օրինակ է առակաց գիրքը. որուն առաջին մասը գլուխներէն գերազանց բանաստեղծութիւնք են, և զանազան ձևերով և ընտիր բացատրութեամբ լեցուն: Տաճերորդ գլխէն՝ ոճը բոլորովին կը փոխուի, աւելի ատորին աստիճանի մը իջնելով զորն որ գրքին հե-

[1] Յ-վբ: [2] Երեմ. Խէ. 6:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:08 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

չուան վերջը կը պահէ. Թէպէտև միշտ ան վճռական և ազդու լեզուովը որ յատուկ է ամենայն եբրայական բանաստեղծութեանց: Վարդապետականին կը վերաբերի նաև ժողովողի գիրքը, ինչպէս նաև քանի մը սաղմոսք, և մանաւորապէս հարիւր ուեւտասաներորդը:

Եկեր երգական բանաստեղծութեան այլևայլ գեղեցիկ օրինակներ կը գտնենք սուրբ գրոց մէջ. ինչպէս Դաւթայ ողբն իրեն մեռելին Յոնաթանա նու վրայ, մարգարէական գրոց այլևայլ հատուածները, ու նեղութեան և վշտաց ժամանակ յօրինուած այլևայլ սաղմոսք. ինչպէս քառասներորդ առաջնեւրորդ սաղմոսն որ կարգէ դուրս գովական ոճ մը ունի: Սակայն սուրբ գրոց մէջ, և թերևս ուրիշ ամէն բանաստեղծական արուեստդրութեանց՝ ամենէն աւելի գերազանց են Երեմիայի ողբերը: Որովհետև մարգարէն աս գրքին մէջ՝ սաստկարին և սուրբ քաղաքին աւերմունքն և բոլոր տէրութեան տակնուվրայ ըլլալը կողբայ, ուստի այսպիսի սխուր նիւթի մը թեւադրած ամէն արուեստ չարժ պատկերները մէջ բերած: Յօրինուածը կարգէ դուրս վարպետութեամբ. փոփոխակի ներս կը մտնեն մարգարէն և Երուսաղէմ քաղաքն՝ իրենց ցաւը բացատրելու. և վերջապէս ժողովրդեան խումբ մը եւանդուն և ցաւագին պաղատանք կը մատուցանէ առ Աստուած:

Հովուական բանաստեղծութեան գեղեցիկ օրինակ է Սողոմոնի երգ երգոցը: Տարակոյս չկայ որ հոգևորական մեկնուվ նկատելով զանիկայ՝ խորհրդական այլաբանութիւն մըն է. բայց ձևին մէջ հովուական տաղերգութիւն մը կունայ աեպուիլ, կամ երկան ընտացատրութիւն մը հովուի բնաւորութիւնը կերպարանող անձանց մէջ, անոր հաճոյ սկիզբէն մինչև վերջը լի են դաշտային և հովուական նկարագրութիւնք:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:08 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Իսկ քնարերգական բանաստեղծութեամբ կրնանք ըսել թէ լի է հին կտակարանը։ Բայց՝ ի բազմաթիւ երգերին՝ զոր պատմական և մարգարէական գրոց մէջ կը տեսնենք, ինչպէս Մովսէսի, Դեբորայի և այլ սոնց նման ուրիշ երգերը, բոլոր սաղմոսաց գիրքը սրբազան երգոց հաւաքոյմ մը կրնայ տեսնուիլ։ Հոն երգոց ամէն տեսակը կը նկատենք. մերթ աշխոյժ, եռանդուն, յաղթական և մեծավայելուչ, և մերթ քաղցր և հաճոյական։

Աստուածաշունչը շարադրող հեղինակաց մէջ շատ տարբերութիւն կը տեսնենք ոճի և զուրցուածքի կողմանէ. և իրենց բնաւորութիւնքը գիտնալը շատ հարկաւոր է, գրուածքներնուն ընթերցումը աւելի օգտակար կերպով ընելու համար։ Սրբազան գրչաց մէջ ամենէն աւելի գերազանց քերթողք են Յովբ, Դաւիթ և Եսայի։ Որովհետև Դաւթի շարադրածներն ընդհանրապէս քնարերգութեան կը վերաբերին, ուստի և բնականաբար մեկնիչներն աւելի կը գանուի իր գրոցը մէջ ոճի և զուրցուածքի տարբերութեի։ Քաղցր, փափուկ և հաճոյական կերպ մը ունի Դաւիթ. իրաւ է որ իր սաղմոսաց մէջ ալ ուժգնիներ և վսեմներ կը գանուին, բայց ուժով ստորագրութեան մէջ աստիճն է քան զՅովբ, և՝ ի վսեմութեան քան զԵսայիաս։ Վասն զի ընդհանրապէս չափաւոր մեծութեան մը մէջ կը կենայ. և նորէն նոյն ոճին շուտով մը կը դառնայ՝ եթէ երբեմն ասկպուի անկէց բարձր ոճ գործածել։

Եսայի իր վսեմութեամբն ամենէն վեր է. նոյն իսկ Թարգմանութեանց մէջ, ևս առաւել հայկականին՝ աս բանս յայտնի կերևնայ։ Իր գլխաւոր յատկութիւնն է մեծավայելուչ բացատրութեան կերպ մը՝ զոր անփոփոխ գլխին սկիզբէն մինչև վերջը կը պահէ. թէ զուրցուածքի և թէ իմաստից մէջ՝

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:09 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

թիւնն է վասակ մը՝ որուն ջուրն ամիսս աաւեն կը ալակսի, և տոչորող կլիմային տակ թափառող ճանապարհորդութեանն ակնկալութիւնը՝ի դերև կը հանէ։

Իակ Յովբայ գրոց բանաստեղծութիւնը չէ թէ միայն հաւասար է ուրիշ ամէն սրբազան մատենագրաց, այլ նաև ամենէն ալ վեր՝ բաց յԵսայեայ։ Եւ ինչպէս Եսայի ամենէն վսեմ ոճ գործածողն է, Դաւիթ ամենէն փափուկ և գոլորշ, սաանկ ալ Յովբ՝ ամենէն աւելի բուռն երևակայութիւն ունեցողն է։ Ջուրցածներնուս սուրգութիւնը հաւաստարմացընելու համար՝ շատ օրինակներ կրնայինք մէջ բերել. սակայն իսկաքերնիս չուզելով երկընցընել՝ կը յիշեցընենք իր գրոցը ԺԸ և Ի գլուխները, որոնք բաւականէն աւելի գրուածքին յարգը կը յայտնեն։

ԳԼՈՒԽ Գ.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

Սուրբ գրոց սկզբնական բնագիրը. — Քաղդէական յարաւոութիւն. — Եօթանասնից թարգմանութիւն. — Ակուիլեան թարգմանութիւն. — Սիմմաքոսի, Թէոդիոնի և այլոց թարգմանութիւնը. — Աւորական թարգմանութիւն. — Խփրի թարգմանութիւն. — Հայկական թարգմանութիւն. — Լատինական թարգմանութիւնք, հին իտալական և վուլկանա։

Սուրբ գրոց սկզբնական բնագիրը. — Սուրբ գրոց հին սկզբնագիրը՝ եբրայական բարբառով գրուշմուած

է, այս ինքն ան ժոլովկեան լեզուովն որոնց հա-
մար կը գրուէր։ Եւրոպացի բանասէրներէն ո-
մանք կը համարին թէ հնգամատեանը Մովսէս
սամարացւոց լեզուով գրած ըլլայ. ուրիշներն ալ
աս կարծեաց դէմ կելլեն, թերևս առանց միտ
դնելու թէ եբրայական և սամարացի հնգամա-
տեանին լեզուն նոյն է, ու միայն գրերը տարբեր։
Մարդկութեան նախնական լեզուին վրայ թէպէտ
շատերն այլևայլ բան գրած են, բայց ինդիրն ին-
չուան հիմա անորոշ մնացած է. ոմանք նախա-
պատուութիւնը եբրայականին կու տան, ուրիշ-
ները քաղդէականին, այլք փիւնիկեցւոց, ոմանք
ալ Հայոց լեզուին։ Եվան այնպիսիք ալ որ Գրո-
տիոսի հետ կարծեցին թէ Ադամայ լեզուն կոր-
ուսած է, ու հիմակուան եղած ամէն գլխաւոր
կամ մայր լեզուները՝ Բաբելոնի աշտարակին կոր-
ծանմանէն ետքը ձևացած են։ Ինչ ալ ըլլայ, աս
յայտնի է որ Մովսէս իր ազգին լեզուովը գրեց
հնգամատեանը. ան լեզուով որ անարատ մնացեր
էր ինչուան գերութեան ժամանակը, և ան տառե-
քաղդէացւոց լեզուին հետ խառնուելով, ակսան
գրութեան մէջ ալ անոնց տառերը գործածել։
Անոր համար է որ մեր հիմակուան ունեցած հըն-
գամատեանը՝ եբրայական լեզուով ու քաղդէացի
տառերով է։ Իսկ սամարացիք Հրէից մէջ բաժնուած
ըլլալով՝ իրենց գրերն անփոփոխ պահեցին, որով
գիրքը նոյն՝ և լեզուն տարբեր եղաւ։

Քաղդէական Մէնռւնի. — Որովհետև, ինչպէս
ըսինք, եբրայեցիք բաբելոնական եօթանասուն-
մեայ գերութեան ժամանակ բուն իրենց լեզուն
մոռցան, ուստի երբոր նորէն Երուսաղէմ դար-
ձան, սկսան քաղդէացւոց լեզուն գործածել։
Ռաբունիները սուրբ գիրքը ժոլովկեան մեկնե-
լու համար՝ նոյն լեզուն կը բանեցընէին. և ասով

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:10 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ձևացաւ Քաղդէական մէնո-ռիւնը կամ Յարաո-ռիւնը (Paraphrase), որն որ ճիշդ թարգմանութիւն չէ, այլ սուրբ գրոց իմաստիցը բացատրութիւն: Ա՛ս յարաստութեանց մէջ աւելի յարգ ունեցողը՝ Ընքելսին էր, Մովսէսի հնգամատեանին վրայ: Հաւանականաբար թէ Ընքելսին և թէ Յոնաթանու և Յովսէփայ անուամբը գտնուած յարաստութիւնքը՝ քրիստոնէութեան վեցերորդ դարուն մէջ չինուած են:

Եօնաթանիյ նարգմանութիւն. — Բանասէրներէն ոմանք՝ կղեմայ ապէքսանդրացւոյն, Աբիատարու-լեայ ու Եւսեբիոսի քանի մը խօսքերէն կարծեցին թէ եօնաթանիյ թարգմանութենէն առաջ՝ ուրիշ յունական թարգմանութիւն մըն ալ կար սուրբ գրոց: Բայց ուրիշներն աւելի իրաւամբ կը մերժեն սա կարծիքը, և կը համարին թէ եօնաթանիյն եղաւ առաջին յունական թարգմանութիւն: Չերմնմուսէն զատ՝ ամէնքը նախ կը համարէին թէ եօնաթանասուն թարգմանիչք բոլոր հին կտակարանը թարգմանած ըլլան. բայց եսքը քննելով թէ շատ մատենագիրք, ինչպէս Փիլոն, Յովսեպոս հրեայք, և ինքն իսկ Աբիատեա՝ միայն օրինաց վրայ կը խօսին, և սուրբ գրոց թարգմանութեանը մէջ ոճի զանազանութիւն տեսնելով համարեցան թէ միայն հնգամատեանը թարգմանած ըլլան եօթանասունք: Ուշըր (Ուսերիոս) ալ կարծեց թէ անոնց թարգմանութենէն բան մը ձեռնուբնիս հասած չէ. որովհետև ինքը եօնաթանիյ կոչուած երկու թարգմանութիւնք կը թուէ, մէկը Պտղոմէոս եղբայրասիրի ժամանակ եղած, միւսն ալ Պտղոմէոս Փիւսկոնի. և թէ հիմակուան ունեցածնիս՝ սա վերջինիս ժամանակ աշխատասիրուած է: Բայց սա կարծեաց յայտնապէս գէմ կելլեն ուրիշ ամէն բանասէրք. իսկ ոճի տարբե-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:10 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

րութիւնը՝ Թարգմանչաց տարբերութենէն առաջ կրնար գալ բնականապէս։

Եօթանասնից Թարգմանութեան հարազատութեանը վրայ՝ ամբողջ Ճառեր շարադրած են Հոտի (Hody) Վան Տալէ (Wan Dale), Ուէլթըն (Walton) և Վոսիոս։

Ակուիլեան Թարգմանութիւն.— Ադրիանոսի կայսերութեան ժամանակ՝ Ակուիլանոս կամ Ակիւլաս անունով պոնտացի հրեայ մը քրիստոնէութիւնն ընդունելով, ու եռքէն նորէն հրէութեան դառնալով, աստուածաշունչ գրոց Թարգմանութիւն մը ըրաւ յեբրայականէն ՚ի յոյն։ Բայց եկեղեցւոյ սուրբ հարք՝ անհաւատարիմ կը սեպեն իր Թարգմանութիւնը։

Սիմմաքոս, Թէոդիոնի և այլոց Թարգմանութիւնը.— Սիմմաքոսի Թարգմանութեան նպատակն էր՝ սուրբ գրոց իմաստքը մեկնաբանել, և ոչ թէ բառերը Թարգմանել։ Հին հարք՝ աւելի Թէոդիտոնի Թարգմանութեանը վրայ համարմունք ունէին. որովհետև Որոգինէս՝ եօթանասնից մէջ պակաս՝ Դանիէլի մարգարէութեան քանի մը տեղւոյնքը անով լցացուց։— Ուրիշ քանի մը յոյն Թարգմանութիւնք ալ կային Որոգինեայ ժամանակ, զորոնք եռքը նոյն վարդապետին երկասիրութեանց վրայ իսօսելու առեն պիտի յիշատակենք։

Աւրական Թարգմանութիւն.— Եօթանասնից Թարգմանութենէն եռքն ամենէն հինը կը կարծուի աւտրականը. իրենցմէ ոմանք եղած են որ աս Թարգմանութիւնը Սողոմոնի ժամանակ եղած կը համարին՝ Տիւրոսի Քիրամ Թագաւորին խնդրանօքը։ Բայց աս կարծեաց անստուգութիւնը յայտնի պատճառներով կը ցցընեն Ուէլթըն, Միւլլէր, Վոսիոս և ուրիշ ամէն բանասէրք։ Ա յայտնի է որ հինգերորդ գալէն առաջ եղած է նոյն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:10 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

թարգմանութիւնը. որովհետև մեր ազգային պատմիչներն գիտեն թէ նոյնատեն հայկական թարգմանութիւն չըլլալուն պատճառաւ՝ եկեղեցական արարողութեանց և պաշտամունց մէջ յունական հետ ասոր լեզուն և գրքերը կը գործածէին: — Նոր կտակարանին ասոր թարգմանութիւնը շատ աւելի հին է, և հաւանականաբար որքան Մարկոսի աւետարանչին աշխատասիրութիւն. բայց՝ի Պետրոսի երկրորդ և Յովհաննու երկրորդ և երրորդ կաթուղիկեայց թղթերէն և յայտնութեան գրքէն, որոնց թարգմանութիւնն աւելի ետքն եղած կերևնայ:

Խփփ ՚ի թարգմանութիւն. — Ինչպէս ասորեստանի, պաղեստինու և ուրիշ մերձակայ գաւառաց մէջ ասորական թարգմանութիւնը կը գործածէին, ասանկ ալ եգիպտացիք՝ Խփտոց լեզուով եղած թարգմանութիւնը. և որովհետև Եգիպտոսի մէջ այլևայլ գաւառական բարբառներ կային, ասանկ ալ այլևայլ թարգմանութիւնք, ինչպէս Մէմֆական, Թէբայիդեան և այլն: Եօթանասանից վրայ եղած է նաև Եթովպական թարգմանութիւնը, որն որ շատ տեղ աղեքսանդրեան օրինակին հետ կը համաձայնի:

Չայկական թարգմանութեան վրայ՝ ազգային մատենագրութեան պատմութեանը կը թողունք:

Կը թողունք յիշատակել Արաբական, Պարսկական թարգմանութիւնքը. ևս առաւել տաճկաց, վրացոց, լեռերացոց և ուրիշ արևելեան ազգաց լեզուներով եղածները, որոնք նոր դարուց բաներ են, և առանց կարևոր փուճոյ և խնամոց եղած երկասիրութիւնք:

Լատինական թարգմանութիւն. — Սուրբ Օգոստինոս կաւանդէ թէ այնքան հին լատինական թարգմանութիւնք կային իր առեն՝ որոնց թիւը յու-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:11 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նականէն շատ աւելի կելլեր : Բայց այնչափ բազ մաթիւ Թարգմանութիւններէն ուրիշ բան հա սած չէ ձեռքերնիս՝ բայց միայն հին Իթալական կո չուածին հատուածքն ու Վուլկատան : Ինչպէս Յու նաց համար եօթանասնիցը , ասանկ էր նաև լատի նացոց՝ իտալականը , թէպէտև չէր գիտցուեր թէ որուն երկասիրութիւնն ըլլայ . ոմանք ինչուան ա ռաքելոց ժամանակ կը հանէին անոր Թարգմանու թիւնը : Ա կարծեաց հետևող եղած են Ուէլթէն և Փըթի Տիտիէ . բայց ուրիշները՝ սրբոյն Պիոսի առաջնոյ քահանայապետութեան ժամանակ է ղած կը համարին : Բանաձերք՝ որոշ բան մը չեն կրցած զուրցել : Ա միայն յայտնի է որ հին և կեղեցւոյ վարդապետաց առջև մեծապէս յարգի էր , ինչուան նոր քննիչք ալ կը զարմանան անոր հարազատութեանը վրայ . ոմանք ատոր հատուած նեն ինչուան յունական Թարգմանութիւններէ ալ նախամեծար կը համարին : Սակայն գրութեան ոճն ու լեզուն ընտիր չէր . և որովհետև յունական եօթանասնից Թարգմանութեան վրայէն եղած էր , ուստի տեղ տեղ իմաստներն ալ քնագրէն կը հեռանային : Հերոնիմոս աս միտաւն դարմանո ւզեց ընել՝ եբրայական քնագրին . հետ զանիկայ բաղդատելով և սրբագրելով :

Վուլկատ . — Բայց Հերոնիմոս այնչափով ալ գոհ չեղաւ . Թարգմանութիւն վրայէն եղած Թարգ մանութիւն մը՝ իր առջին յարգի բան մը չէր ե րևնար . ուստի ուզեց եբրայական քնագրին վրայէն նոր Թարգմանութիւն մը ընել : Ասանկով ձեռացու Հերոնիմեան Թարգմանութիւնը կամ Վուլկատ ը ստուածը . որուն մէջ աւելի իմաստից միտ կը գնէ քան թէ ոճի ընտրութեան :

Նոր ազգաց լեզուներով եղած Թարգմանու թեանց վրայ աս միայն ըսենք թէ անոնց մէջ հա

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:11 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ատարիմ էն որոնք սուրբ եկեղեցւոյ հաճու-
թեամբն եղած ըլլան: Եկեղեցին, սիւն և հաս-
տատութիւն ճշմարտութեան և աւանդատպահ սուրբ
գրոց, որչափ որ հին ազգաց լեզուներովն եղած
թարգմանութիւնքը կը մեծարէ և կը յարգէ, այն-
չափ ալ նորերէն կըզգուշացընէ, ինչպէս ամէն
բանի, ասանկ ալ աս արգելքին մէջ՝ հաւատացե-
լոց բարին և օգուտը դիտելով:

ԳԼՈՒԽ Դ.

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՀԱՐՑ

Կղէմէս հռովմայեցի. — Սրբոյն Կղէմայ գրուածներէն. —
Առաջին նուաղը առ կորնթացիս. — Նուաղը երիցուդ
առ կորնթացիս. — Նուաղիվ երկու առ կռսանս. — Բա-
նաբաս առաքեալ. — Հերմաս. — Հովիւ- գրոց նիւթը:

Առաքեալք և իրենց հայրապետական աթոռը
գրաւող առջի եպիսկոպոսունք՝ ընդհանրապէս
քիչ գրուածք թողուցին. և պատճառը յայտնի
էր: Քրիստոնէութիւնը մարդկային գիւտ մը չըլ-
լալով արտաքին հանճարի կարօտութիւն չէր ու-
նեցած. այլ աստուածային խնամքով թէ իր գոյ-
ութիւնը և թէ հաստատութիւնը գտեր էր: Բայց
որովհետև հովուաց և եպիսկոպոսաց հեռատեսու-
թիւնը կրնար սուրբ հաւատոյ թշնամեաց ձեռքը
զէնք մը ըլլալ՝ Քրիստոսի հետևողաց մէջ բարգա-
ւաճ սէրն ու միաբանութիւնը տակնուվրայ ընե-
լու, թէ առաքեալք և թէ իրենց յաջորդները կը
ջանային թղթովք խրախուսել զիրենք, և յորդո-
րել նոյն աստուածահրամանն ձամբուն մէջ անխո-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:11 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

տոր առաջ երթալու : Ա՛ս պատճառաւ երկուցած են եկեղեցական մատենագրութեան նախնի ե- րախայրիքը :

ԿՂԵՄԷՍ ՀՌՈՎՄԱՑԵՑԻ . — Առաքելական հարց մէջ առջինն է Կղեմէս Հռովմայեցի , որուն պատ- մութիւնն ընդհանրապէս մութ և անյայտ է : Ւ՛ան զի ատուգութեամբ վրան դիտցածնիս քիչ բան է . աւելի շատը տարակուսական , և ինչուան երբեմն առասպելախառն : Ւ՛կայագիրք կաւանդեն թէ սրբոց գլխաւոր առաքելոց Պետրոսի և Պօղոսի աշակերտ էր , և նոյն ան Կղեմէսին հետ զոր Պօ- ղոս կը յիշատակէ [1] և որուն վրայ կըսէ թէ աւե- տարանին քարոզութեանը համար շատ աշխատած ըլլայ : Ատոյգ է դարձեալ թէ առաքելոց ձեռնադ- րութեամբն եպիսկոպոսական իշխանութիւնն ստացած և Պետրոսի յաջորդեր է յեպիսկոպո- սութեան Հռովմայ . բայց այնչափ որոշ չէ յա- ջորդութեան կարգը . որովհետև ոմանք անմիջա- պէս սրբոյն Պետրոսէ ետքը զինքը կը դնեն . խակ ուրիշներ Լ՛ինոսէ և Անակլետոսէ ետքը :

Կղեմայ հայրապետութեան տարիները նշանա- ւոր բան մը չպատահեցաւ , բաց ՚ի կորնթոսի ե- կեղեցւոյն մէջ ծագած հերձուածէն , և ան պատ- ճառաւ գրեց Կղեմէս իր թուղթն առ կորնթա- ցիս : Մահուանը վրայ ալ որոշ բան մը չենք կըր- նար զուրցել . որովհետև ոմանք կաւանդեն թէ վկայական մահ ունեցած ըլլայ , ինչպէս Հռուփի- նոս և Զոսիմոս քահանայապետը . ոմանք ալ , ինչպէս սուրբն Երանոս և Հերոնիմոս՝ առ բանս ամենևին չեն յիշեր :

Սրբոյն Կղեմայ գրուածքները . — Առաքելոց առ- ջանաւոր հետևողին գրուածներէն միայն չորս

1 Փիլիպ . Դ . 3 :

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:11 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

թուղթ ձեռուընիս հասած է. երկուքն առ կորընթացիս, և ուրիշ երկուք ալ առ կուսանս. և ասոնց մէջ ալ միայն առ կորնթացիս գրած առաջին թղթին հարազատութենն ստոյգ է. իսկ մեկալնունք քիչ կամ շատ տարակոյսներու տակ ընկած:

Առաջին նամակն առ Կորնթոսի.—Ա՛ս հովուականն թուղթը թէ հին և թէ նոր եկեղեցւոյ մէջ շատ պատիւ գտաւ: Եւսեբիոս կաւանդէ[1] թէ շատ տեղ եկեղեցեաց մէջ կարդալու սովորութիւնը կար: Եւսեբիոսէ առաջ ալ սուրբն Երանոս մեծ գովութեամբ կը յիշատակէ, ինչպէս նաև կղեմէս աղեքսանդրացի, Որոգինէս և Հերոնիմոս:

Առաջ ալ յիշատակեցինք թէ ասթղթիս գրութեան պատճառ՝ կորնթոսի եկեղեցւոյն մէջ գըրգռուած երկպառակութենէ մը եղաւ. ինչպէս կղեմայ օրերէն քիչ տարի առաջ ալ նոյնպիսի անհամաձայնութիւն մը ծագեր, ու հազիւ սրբոյն Պօղոսի ջանքովէ ու իմաստութեամբ դադրեր էր: Բայց Պօղոսի մեռնելէն ետքն աւելի համարձակութիւն առած՝ սկսեր էին իրենց կողմնակից ալ ժողվել, և յատաքելոց գրուած եպիսկոպոսաց և երիցանց իշխանութիւնն արհամարհելով օտար րոտի վարդապետութիւն սերմանել: Ամով նոյն եկեղեցին կազմող հաւատացեալոց մէջ հերձուած մը սկսաւ զօրանալ, որով ոմանք ինչուան իրենց հոգւոյն փրկութեան և աւետարանական ճշմարտութենց վրայ տարակուսեր էին: Բայց մէջերնին իմաստնագոյնքն ու խոհեմագոյնքն աս վնասին առջևն առնելու միակ հնարք մտածեցին հռոմ պատգամաւորութիւն մը խրկել, և եկեղեցւոյ գլխոյն ամէն բան տեղնիտեղն իմացընելով իրմէն կարևոր գարմանը խնդրել: Հաւանեցաւ կղեմէս

1 Պաք. Եկեղեցւոյ գիրք Գ. 16:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:12 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

իրենց փափաքանացը. և երբոր Հռովմայ եկեղեցին հալածանաց առատութենէն քիչ մը ոգի առաւ, Մկիէն առ թղթիս գրութիւնը ձեռք զարկաւ։

Թուղթը երէցուց առ կոյնտոս. — Աղջնին հաւատարմութիւնը չունի ասիկայ. միայն ատոր է որ չորրորդ դարուն մէջ ալ կար. որովհետև Եւսեբիոս աղջնին հետ յիշատակելով՝ կը զուրցէ որ անոր պէս ընդունելի չէ. կերևնայ թէ հին հայրց մէջ գործածելու սովորութիւնը չկար։

Առաքելոց անուամբը գտնուած սահմանադրութեանց մէջ[1], նաև աս երկրորդ թուղթը իբրև կանոնական կը յիշատակուի. բայց որովհետև նոյն կանոնաց հարուածութիւնն արդէն երկբայութեան մէջ է, խնդիրն ինքիրմով կը լուծուի։

Թուղթ երկու առ կոտանս. — Աս անուամբ երկու չքնաղ թղթեր կը գտնուին, որոնց հեղինակ՝ հաստատակաց կարծիքը ղկղմէս հռովմայեցի կը համարի։ Բայց աս երկու թղթերն ալ անծանօթ էին հնոց, և միայն ասկէ 100 տարիի չափ առաջ ծանօթացան, երբոր 1752 Ուէթըլթէին (Wettstein) հրատարակեց, ասորի թարգմանութենէն՝ ի լատին փոխելով, և ուզեց անոնց հարազատութիւնը ցցընել։

Անոնց ժամանակին և հեղինակին վրայ որոշ բան մը չենք կրնար զուրցել. աս միայն ըսենք թէ Հերոնիմոս և Եպիփան իրենց գրուածոցը մէջ կը յիշատակեն աս թղթերը. և Եպիփան կըսէ թէ ինչուան եկեղեցեաց մէջ ալ կարդացուելու պատիւն ունէին։ Բայց թէ ինչպէս յոյն բնագիրը կորսուեր, ու միայն ասորականը մնացեր է, զարմանք չէ։

Անոնցմէ զատ ուրիշ այլևայլ գրութիւնք ալ

1 Առաքելական սահմանադրութիւն. 85։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:12 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կընծայուին կղեմայ, որոնց հարազատութիւնը տարակուսի տակ ձգած են քննադատք, ինչպէս Ճանապարհորդարան, Պափմուին կղեմայ, Գործք առաքելոյն Պետրոսի, Վիճաբանութիւն Պետրոսի ընդ Սիմոնի մոգի, Գիրք վճռոցն՝ տասը գիրք, զոր Ռոգինէս ալ կը յիշատակէ:

ԲԱՌՆԱԲԱՍ ԵՒԱԳԵԱԼ. — Եկեղեցական մատենագրութիւնն հին պատմութիւնն ուրիշ Թուղթ մըն ալ ձեռնընիս հասուցած է սրբոյն Բառնաբայ առաքելոյ անուամբը, որն որ առաքեալներուն մէջ Անտիոքայ եկեղեցին հաստատեց, և սրբոյն Պօղոսի գործակիցն եղաւ՝ ի քարոզութիւն աւետարանին:

Իրեն անուամբը գտնուած Թուղթը՝ Ռոգինէս ընդհանրական կը կոչէ: Հնոց մէջ տարբ հարապատութեանը վրայ մեկը չկայ տարակուսող. բայց վերջին տեղեր քննադատք սկսեր են կասկածութիւններ հանեցին, ուզելով վաւերականութիւնն ուրանալ. սակայն իրենց կարծեացը դէմ կեցեր հնութեան մեծարոյ մարդիկը, տուրբն Կղեմէս ալեքսանդրացի, Ռոգինէս իրեն աշակերտը, տուրբն Հերոնիմոս և այլք. ինչպէս Ռոգինէս կը յիշատակէ: Բայց ոմովհետև Եւսեբիոս կանոնական գրոց մէջ չի տեսեր, անոր համար եռքի բանասէրք ուզեցին մերժել, առանց միտ դնելու թէ Եւսեբեայ խօսքն անոր վաւերականութեանը վրայ չէ, այլ կանոնականութեանը:

Չի գիտցուիր թէ որոնց ուղղուած էր աս Թուղթը. բայց խօսքերէն կը մակաբերուի թէ հրեական օրինաց պահպանութեանը ջերմեռանդ քրիստոնէից գրած ըլլայ, որոնք չէին կրնար Քրիստոսի և Մովսէսի օրէնքներն իրարու հետ միաբանել, ու մեկը մեկալին եղծիչ կը համարէին: Առաքեալը

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:12 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կը ցցընէ թէ քրիստոսական վարդապետութիւնը լուսին էր մովսիսականին. և թէ հրէական օրէնաց ժամանակն անցած է Քրիստոսի գալստեամբը:

ՀԵՐՄԱՍ. – Հին եկեղեցւոյ մէջ մեծ պատիւ գտած էր Հ-Ա- (Pastor) ըսուած գիրք մը, որ ինչուան մեր ձեռքը հասաւ: Նախնիք ասոր հեղինակ զՀերմաս կը համարին, և զոր նոյն կը կոչեն անոր հետ զոր Պօղոս առ հռովմայեցիս գրած թղթին մէջ կոչնունէ: Բայց նոր քննիչք ասոր վրայ ալ տարակոյսներ հանեցին. և երբոր Հովհ. գրոց առաջին տպագրութիւնն եղաւ 'ի Հռոմ, ժամանակին անուանի բանասէրներէն մէկը Մուրատորի, հրատարակեց թէ անոր հեղինակն է Պիոս Ա հռովմայ քահանայապետին եղբայրը, որ Քրիստոսի 140–152 թուականին կկնայ: Մուրատորիէն եպէն եկող այլևայլ բանասէրք ալ իրեն կարծեսյը հետևուլ գտնուեցան: Բայց որովհետև Կղեմայ աղեքսանդրացւոյ և Որոգինէսի պէս մարդկանց կարծիքն ալ մերժելը դիւրին չէ, հաւանական կերևնայ թէ աս երկասրդ Հերմասը յոյնէն 'ի լատին փոխած րլլայ նոյն գիրքը, որով և կերպով մը հեղինակ սեպուած:

Հերմասայ կենաց կամ վարուցը վրայ ամենևին տեղեկութիւն չունինք: Գրուածքէն կիմանանք թէ նախ աշխարհք մնած էր, և թէ ապաշխարեչէն եռքը մեծամեծ ձգնութեանց և վշտաց տուած ինքզինքը, անցեալ կենաց մեղքերը քաւելու համար: Կղեմէս Ա քահանայապետին ժամանակակից էր, և'ի Հռոմ կամ անոր շրջակայքը կը բնակէր: Յունարէն շարադրեց Հերմաս աս գիրքը. բայց հիմայ սկզբնագիրը կորսուած և միայն լատինական թարգմանութիւնը մնացեր է:

Հ-Ա- գրոց նիւթը. – Աս գրքին Հ-Ա- կոչուելուն պատճառն այն է որ հովուի կերպարանքով

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:12 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կերևնայ Հերմասայ ան հրեշտակն որ զինքը կը հրահանգէ. վախճանն է առաջնորդել հեթանոսաց, և քրիստոնէական կրօնից վրայ ճիշդ գաղափար մը տալով սորվեցընել թէ ինչպէս պիտի ըլլայ բուն քրիստոնէի վարքը: Իրէք գիրք բաժնուած է, որունք Տեսիլք, Պատուէր և Նմանութիւն կը կոչուին. թէպէտև կերևնայ թէ աս բաժանումը հեղինակէն շատ ետքն եղած ըլլայ:

Առաջին գլուխ մէջ չորս անգամ կերևնայ Հերմասայ պատաս մը, որ նշանակ է եկեղեցւոյ. առջինին կը սորվեցընէ թէ ինչպէս պիտի ստանայ զմաքրութիւն և զսրբութիւն սրտի. ոյովհետև Հերմաս նախ ինքզինքն ամէն ախտից տուած, և անոնց մէջ հնացեալ կեանք մը անցուցեր էր. երկրորդին թէ մարդս ինչ պարտք ունի առ ամուսին իւր և առ որդիս. երրորդին աշտարակ մը կը ցցընէ իրեն, և թէ ինչ կերպով պիտի կարենայ անոր մէջ մտնել. իսկ չորրորդով գազան մը կերևցընէ, և քրիստոսի եկեղեցւոյն կրած վշտերն ու նեղութիւնները կըստորագրէ:

Երկրորդ գլուխ մէջ այլևայլ խրատք և պատուէրներ ամփոփուած են ճշմարիտ հաւատոյ, անմեղութեան, սրտի սրբութեան վրայ, և այլն:

Երրորդ գիրքն է Նմանութիւն, յորում հինգ առակք և նմանութիւնք կը բովանդակուին: Առջինն է ծառ մը՝ որուն վրայ հանգչած է պտղալից ոլոթ մը. և կը ցցընէ թէ ինչպէս մեծատան փրկութիւնն՝ աղքատին աղօթքէն կախուած է: Երկրորդին մէջ Հերմաս այլևայլ ծառեր կը տեսնէ, որունք տերևաթափ, ազտպուն և ցամքեալ ծառ են, և իրարու հետ քիչ շատ նմանութիւն ունին. և կիմանայ թէ աս աշխարհքիս մէջ չարք և բարիք իրարմէ դիւրաւ չեն կրնար զանազանուիլ. ինչպէս ձմեռուան ժամանակ՝ դժուարին է անպտուղ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:12 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ծառը պտղատուէն զատել. և թէ առ որոշումը հանդերձեալ կենաց մէջ պիտի ըլլայ: Հինգերորդին մէջ ալ կը ցցընէ պահոց յարգը նմանութեան ծառային որ իրեն վրայ դրուած պարտքէն ազատի աչխատած ըլլայ:

ԳԼՈՒԽ Ե.

Ս. ԻԳՆԱՏԻՈՍ ԱՍՏՈՒԱԾԱԶԳԵԱՑ

Ապոստածապգեղին վարքը. — Սրբոյն Իգնապիոսի ընդունելութիւնը. — Թուղթ առ Եփեսացիս. — Առ Մագնեսացիս. — Առ Տրալլիացիս. — Առ Հռովմայեցիս. — Առ Փիլադելփացիս. — Առ Պոլիկարպոս հայրապետ Զմիւռնիոյ. — Սրբոյն Իգնապիոսի մահը. — Անհարթապէս կամ էրկիւյեան ընդունելութիւնը. — Ապոստածապգեղին ընդհանուր հայկական նարգմանութիւնը:

Ապոստածապգեղին վարքը. — Սուրբ եկեղեցւոյ վարդապետաց մէջ նշանաւորներէն մէկն է սուրբն Իգնատիոս աստուածազգեաց, որընդհանուր կարծեօք առաքեալ Յովհան ասորի կը համարուի: Հին հարք, ինչպէս սուրբն Յովհան ոսկեբերան կաւանդեն թէ զՔրիստոս առաւ ուսած ըլլայ ի մարմնի, և թէ ինքն է այն երջանիկ մանուկը՝ զոր փրկիչն աշխարհի իրեն գիրկն առնելով օրհնեց ու դգուեց: Քրիստոսի յարութեան ետքն՝ անոր հաւատքը հոգւոյն սրբոյ գործակցութեամբ ծաւալող առաքելոյ աշակերտ եղաւ Իգնատիոս, և մանաւորաբար սրբոյ առաքեալներուն և Յովհաննու աւետարանչի. որոնք զինքը ետքէն Անտիոքայ եպիսկոպոս կարգեցին:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:13 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ան քաղաքին բազմաթիւ քրիստոնեայքը հո-
վուելու զբաղած էր, երբոր Դոմեթիանոս կայսրը
նոր հալածանքով մը սկսաւ ջարդարել զիրենք։
Հազիւ թէ հալածանաց դադրիլը տեսնելով՝ հա-
ւատացելոց վայելած աստուածատուր խաղաղու-
թեանը վրայ կուրախանար սուրբ հայրապետը,
Տրայիանոս կայսրը սկիւթացւոց և Դակաց վրայ
ըրած յաղթութեանցը համար աստուածոց շնոր-
հակալութիւն ընելու պատճառաւ խոստացաւ
քրիստոնէից հաւատքը մէջ տեղէն վերցընել. և ան
նոր կրօնից աշակերտեալքը պակսեցընելու նպա-
տակաւ՝ աստանդական հնարք մը մտածեց, անոնց
հովիւքն ու երիցունքը վերցընել։ Ա մտքով փո-
թաց Հռոմէն դէպ՚ի Ասիա երթալ (107), որով-
հետեւ միտքը դրած էր Հայոց և Պարթեւաց դէմ
ալ պատերազմ բանալ։

Անոր երբոր հասաւ, քննեց տեսաւ եղանե-
լի ծերունւոյն հաստատուն հաւատքն՚ի Քրիս-
տոս, և իրեն պաշտօնէից՝ հրամայեց որ առնեն
նաւով՚ի Հռոմ բերեն զինքը, որպէս զի գազա-
նամարտի հանդիսից ժամանակ առիւծներու առ-
ջև ձգուելով աստակամահ կորսուի։ Քրիստոսի
աշակերտ եղողն արժանաւոր մահուամբ մը՝ ա-
րիական քաջութեամբ կնքեց իր կեանքը սուրբն
Իգնատիոս, Հռոմայեցւոց ամփիթեատրոնին (colosseo)
մէջ. ու ինչպէս ինքը կը փափաքէր, առիւծուց
ժանեօքը մանրուեցաւ՝ Աստուծոյ ագարակին մէջէն
առնուած ընտիր և քաջասպառազէն ցորեանը։

Սրբոյն Իգնատիոսի նշխարք. — Առաքելոց պէս սո-
վորութիւն ըրած էր աստուածայինն Իգնատիոս՝
թղթեր գրել առ հաւատացեալս, և զիրենք յոր-
դորել՝ քրիստոնէութեան հաւատոց մէջ ամուր և
հաստատուն կենալու։ Սատանային՝ կայսերաց
ձեռքովն ընդդէմ եկեղեցւոյ տուած պատերազ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:13 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մին մէջ՝ կարօտ էին քրիստոնեայք իրենց հովուա-
ցը իրաւունական ձայնին։

Երբոր սուրբ հայրապետը Անտիոքէն հոմ
կերթայր, նաւուն այլևայլ տեղուանք հանդիպե-
լուն համար ճամբան շատ անգամ հարկ կըլլար
ցամաք ելլել։ Բոլոր հաւատացեալք՝ որոնք լսեր
էին սրբոյն քաջայաղթ հարցափորձը, և կը մոլոր-
քէին այնպիսի հայր և հովիւ մը կորսընցընելնուն
վրայ, ամէն քաղաքէ պատգամաւորք կը խրկէին
իրեն. ասոնցմէ շատը հանդիպեցան սրբոյն՝ ի
Զմիւռնիա և՝ ի Տրովադա, և իրենց եկեղեցւոյն վի-
ճակն ու հանգամանքը ծանուցին։ Սուրբն Իգնա-
տիոս Զմիւռնիայէն գրեց առ եփեսացիս, մագ-
նեսացիս, տրալլացիս և հռովմայեցիս. Տրովադայ-
էն առ փիլադելփացիս, զմիւռնացիս և առ Պողի-
կարպոս հայրապետ Զմիւռնիոյ։ Ա՛ս եօթը թըղ-
թերն ունինք սրբոյն Իգնատիոսի շարադրուածքը,
որոնք լի են օծուածեամբ սուրբ հոգւոյն, և զո-
րունք քրիստոնեայ մը չի կրնար կարդալ՝ առանց ի-
րեն հաւաքին վրայ համակրմունք և սէր ստանալու։

Թուղթ առ Եփեսացիս. — Ասիոյ եկեղեցեացն ա-
մէն կողմէն եկած պատգամաւորաց մէջ էր նաև
Ընեսիմոս, եփեսացւոց եպիսկոպոսը։ Սուրբ հայ-
րապետն երբոր լսեց իրմէ եփեսացւոց եկեղե-
ցւոյն բարեկարգութիւնն ու հաւատոց աճումը,
մեծապէս մխիթարուեցաւ. և Ընեսիմեայ ձեռքը՝
նուիրն իր վիճակը դառնալուն ժամանակ՝ թուղթ
մը տուաւ, որուն մէջ նախ եփեսացւոց հաւատ-
քը և հաստատուն սէրն ի Քրիստոս գովերով,
կը խրատէ որ ամէն ջանք ընեն եկեղեցական միու-
թիւնը պահելու։

Թուղթ առ Մագնեսացիս. — Մագնեսիոյ Դամա-
ստոս եպիսկոպոսը հետն առած զՄենանդր և ու-
րիշ երկու երիցունք և մէկ սարկաւագ մը, Զմիւռ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:20 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նախ գնաց սուրբ Հայրապետին հրաժեշտի ողջույնը տալու, և իր եկեղեցին անոր արժանաւոր աղօթիցը յանձնելու: Սիրով ընդունեցաւ զնրեն՝ սուրբն Իգնատիոս, և անոնց եկեղեցւոյն սրտաջարժ թուղթ մը գրեց: Նախ կըսկսի գովել իրենց սէրն և առաքելապաշտութիւնը, և կը յորդորէ յարատեւել ի նոյն. վասն զի ինչպէս որդիք աշխարհիս, կըսէ, տանկ ալ քրիստոնեայք իրենց սեպհական նշանակ պիտի ունենան զսէրը, և անով պիտի ժեծնայ և բարգաւաճի եկեղեցին Քրիստ:

Թուղթ առ փրաւոյիս. — Լիւգիոյ Տրալլես քաղաքին եպիսկոպոսը Պողիբիոս՝ խոստովանող հայրապետին այցելութենէ երթալով, իր վիճակին համար գրուած թուղթը տարաւ իրենց յանձնելու:

Թուղթ առ հռովմայեցիս. — Ա՛ս թղթիս պատճառն ուրիշ բան եղաւ: Իմացեր կամ գուշակեր էր Իգնատիոս թէ Հռովմայ մէջ գտնուած քրիստոնեայք մաքերնին դրեր էին ամէն ջանք և փոյթ ընել՝ որպէս զի վինքը մահուընէ խալըսեն: Ժամ մը առաջ Քրիստոսի հետ միանալ ցանկացող և անոր սիրովը տոչորող սիրտն երբոր ա՛ս լուրը լսեց, տակնուվրայ եղաւ. աճապարեց թուղթ մը գրել առ հռովմայեցիս. և եփեսացւոց յանձնեց՝ որպէս զի Ջմիւռնիոյ ճամբով շուտ մը իրմէն առաջ Հռոմ խաւրեն: Հրաշալի՛ և բոլորովին սըրտաչարժ է ա՛ս թղթիս նիւթը: Կատարէ, կը խնդրէ որ ելնէ զինքը կըսկրեն, Տրայիանոսի վշռոյն գոլոծադրութեանը դէմ չկենան. աշխարհքէ ձանձրացած սիրտ մը չի կրնար իր հանգիստը գտնել, ինչուան որ վերջի վախճանին չհասնի: "Թոյլ տուէք, կըսէ, որ աշխարհքէս անհետանամ, որ երթամ Քրիստոսի առնելու: Աստուծոյ ցորեանն եմ, հաց սուրբ ըլլալու համար հարկ է որ գազանաց ժանեաքը մանրիմ: Ան ատենը միայն Քրիստոսի

ձեմարիտ աշակերտը կըլլամ՝ երբոր աչխարհք ալ զիս չտեսնէ ,, : — Անանկ Թուղթ մըն է ասիկայ՝ որ ամէն գովեստէ վեր է. ընթերցողը կըզմայլի սուրբ հայրապետին հաւատոց հաստատուն Թեանը վրայ, կարտասուէ քաշած նեղութեանցը վրայ, և կը խրախուսի անխոտոր երթալ ան ճամբէն՝ զոր սուրբն իրեն արդեամբը բացեր է :

Թուղթն սա ֆիլոթեէոյիս. — Երբոր սուրբն Իգնատիոս Զմիւռնիայէն Տրովադա կերթար, մխիթարական լուր մը առաւ Թէ Յանտիոք քրիստոնէից դէմ եղած հալածանքն սկսեր է դադրիլ : Ուսան մեկէն իր Պիւռոս սարկաւագը խրկեց, կենկրիոյ փիլադելփիա քաղքին բնակչաց, և Զմիւռնիոյ և առ Պողիկարպոս գրած Թղթերով. որպէս զի իմացընէ անոնց իր սրտին ուրախութիւնը Անտիոքայ եկեղեցւոյն յաջողութեանը վրայ :

Բայց տեսնելով Թէ հարկ էր Ասիոյ ուրիշ եկեղեցւոց ալ խրատական Թղթեր գրել, և սա բռնձանքը կատարելու ժամանակ չունենալով, իրեն մնելովին և պաշտօնակցին յանձնեց նոյն բանը, Զմիւռնիոյ Պողիկարպոս հայրապետին : Ան վախճանաւ գրած է իր առ Պողիկարպոս Թուղթը :

Ոճը. — Յոյն լեզուով շարադրած է Իգնատիոս իր Թղթերը. բայց յունականն անոճ և լի է վրիպակօք : Սակայն Թէ որ լեզուն գրուածքն կերպէն ուզենանք զատել, աստուածաշունչ և յափշտակիչ ոճ մը կը տեսնենք իրեն Թղթոցը մէջ, լի կորովով, աչխուժիւ և երկնային սիրով : Քրիստոնեայ միտք և սիրտ ունենալու է՝ իրեն Թղթոցը գերազանցութեան ճաշակն առնելու համար :

Իգնատիոսի ընդհ. հրատարակութիւնը.—Ներքեն ամանք՝ որոյն Իգնատիոսի Թղթոցը մէջ շատ տեղ իրենց մոլորութեանցը հերքումն գտնելով, ուզեցին տարակուսիլ անոնը վաւերականու-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:20 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

թեանը վրայ : Բայց եկեղեցական պատմութիւնը քննողք՝ մեկէն կիմանան անոնց կարծեացը սուտ թիւնը : Որովհետեւ նախ սրբոյն Իգնատիոսի վկայաբանութեանց մէջ կը յիշատակուի թէ Թրոյթեր գրած է առ այլևայլ եկեղեցիս . և իրեն ժամանակակիցը և քարեկամ սուրբն Պողիկարպոս՝ առ փիլիպեցիս գրած թղթին մէջ կը յիշատակէ թէ անոնց փափաքն և աղաչութիւնը գոհ ընելու համար՝ սրբոյն Իգնատիոսի թղթերէն ինչ որ ձեռքն անցեր է՝ խրկեր է իրենց : Պողիկարպոսէն ետքը մեծարանօք կը յիշեն զսուրբն Իգնատիոս և իրեն թղթերը սուրբն Երանոս , Որոգինէս , Եւսեբիոս , Աթանաս , Ոսկեբերան , Թէոդորետոս , Հերոնիմոս և այլք :

Անհարազատ կամ երկբայական ընդհէր՝ սրբոյն Իգնատիոսի անուամբը . — Բայց ’ի յիշատակուած եօթը թղթերէն՝ ուրն ուրիշ թղթեր ալ կը գտնուին սրբոյն Իգնատիոսի անուամբը . բայց հատարակաց կարծիք է թէ անհարազատ կամ գէթ երկբայական ըլլան ատոնք : Ա՛ս թղթերէն իրեքը հարազատներուն հետ մէկտեղ մի և նոյն ձեռագրի մէջ գտնուելն , զորոնք Վոսիոս և Ոսեբիոս հրատարակեցին : Առջինը պատասխանի է կիլիկեցի Մարիամ կամ Մարիա անուն՝ով տիկնոջ մը թղթին . երկրորդն առ Յերոն սարկաւագ Անտիոքայ . երրորդն առ եկեղեցին Տարսոնի . չորրորդ թուղթ մըն ալ գարձեալ առ անտիոքացիս , և հինգերորդ մը առ փիլիպեցիս : Ուրիշ իրեք թուղթ ալ գտնուեցան առանց յոյն ակզբնագրի , և միայն լատինական թարգմանութեամբ . որոնցմէ երկուքը գրուած են առ Յովհաննէս աբեթարանիչ , և մէկն առ Մարիամ մայրն Աստուծոյ : Բայց ատոնց լեզուն , ոճն և իմաստները բոլորովին տարբեր են առջիններէն . մանաւանդ եօթի իրեքը , որոնց մէջ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:20 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

թեանը վրայ : Բայց եկեղեցական պատմութիւնը քննողք՝ մեկէն կիմանան անոնց կարծեացը սուտ թիւնը : Որովհետեւ նախ սրբոյն Իգնատիոսի վկայաբանութեանց մէջ կը յիշատակուի թէ Թրոյեր գրած է առ այլևայլ եկեղեցիս . և իրեն ժամանակակիցը և քարեկամ սուրբն Պողիկարպոս՝ առ փիլիպեցիս գրած Թղթին մէջ կը յիշատակէ թէ անոնց փափաքն և աստուածաշաւութիւնը գոհ ընելու համար՝ սրբոյն Իգնատիոսի Թղթերէն ինչ որ ձեռքն անցեր է՝ խրկեր է իրենց : Պողիկարպոսէն ետքը մեծարանօք կը յիշեն զսուրբն Իգնատիոս և իրեն Թղթերը սուրբն Երանոս , Որոգինէս , Եւսեբիոս , Աթանաս , Ոսկեբերան , Թէոդորետոս , Հերոնիմոս և այլք :

Անհարազատ կամ երկբայական ընդունէր՝ սրբոյն Իգնատիոսի անուամբը . – Բայց ’ի յիշատակուած եօթը Թղթերէն՝ ուրիշ Թղթեր ալ կը գտնուին սրբոյն Իգնատիոսի անուամբը . բայց հատարակաց կարծիք է Թէ անհարազատ կամ գէթ երկբայական ըլլան ատոնք : Ա Թղթերէն իրեքը հարազատ ներսէն հետ մեկտեղ մի և նոյն ձեռագրի մէջ գըտնուեցան , զորոնք Վոսիոս և Ասերիոս հրատարակեցին : Առջինը պատասխանի է կիլիկեցի Մարիամ կամ Մարիա անուանով սիկնոջ մը Թղթին . երկրորդն առ Յերոն սարկաւագ Անտիոքայ . երրորդն առ եկեղեցին Տարսոնի . չորրորդ Թուղթ մըն ալ գարձեալ առ անտիոքացիս , և հինգերորդ մը առ փիլիպեցիս : Ուրիշ իրեք Թուղթ ալ գտնուեցան առանց յոյն սկզբնագրի , և միայն լատինական Թարգմանութեամբ . որոնցմէ երկուքը գըրուած են առ Յովհաննէս աւետարանիչ , և մեկն առ Մարիամ մայրն Աստուծոյ : Բայց ատոնց լեզուն , ոճն և իմաստները բոլորովին տարբեր են առջիններէն . մանաւանդ հոգի իրեքը , որոնց մէջ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:28 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

վախճաք և եռանդն կը ցցընէ տեսնելու զկոյն Մա-
րիամ, որպէս զի՝ ի Քրիստոս Յիսուս ունեցած
հաւատոցը մէջ հաստատուի։ Բանաստէրք կը հա-
մարին Թէ հնգետասաներորդ գարուն մէջ յար-
մարցուցած են սոյնք. իսկ առջիններըը չորրոր-
դին կամ հինգերորդին։

Հինեըը Վարդապետ-ին սրբոյն Իգնապիոսի կո-
չուած գիրք մըն ալ կը յիշատակեն. Ուրիշ ալ
Պապարգամոցի մը կաւանգէ իր անուամբը։

Սրբոյն Իգնապիոսի Ընդհ հայկական Բարգմանու-
նը. — Մեր գրոց մէջ՝ բաց ՚ի սրբոյն Իգնատեայ
աստուածազգեցին հարազատ և ընտիր վկայաբա-
նութենէն՝ իր երկոտասան Թղթոցը Թարգմանու-
Թիւնն ալ ունինք. այսինքն՝ բաց ՚ի եօթն հարա-
զատներէն՝ ա՛ Մարիամ փիլին, ա՛ Յերոն (Ուրիոն)
արիա-ափ, ա՛ էկեղէցին Տարսոնի, ա՛ անտիոքացիս
և ա՛ փիլիպպոս գրած Թղթերուընը։ Թէպէտև,
ինչպէս ըսինք, սուրբն Իգնատիոս յունարէն չա-
րադրեց սա Թղթերը, բայց մեր Թարգմանու-
Թիւնը՝ հաւանականապէս կարծեօք ատորականին
վրայ եղած է, որն որ յունականին պէս ծանօթ
էր մեր եկանաչնորհ Թարգմանչաց։ Ահա կարծիքս
այլևայլ զօրաւոր պատճառներով ցոյցցած է գեր-
մանացի անուանի արևելագէտ բանաստէրը փեԹըր-
ման՝ իր սրբոյն Իգնատիոսի Թղթոց նոր և ճշմա-
րտուն հրատարակուԹեանը մէջ[1]։

1 Ա՛ն ընդդէմ էրիսոքրս-ին հրատարակուած է ՚ի
Լէյպզիկ յամի 1849։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:28 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

վախճաք և եռանդն կը ցցընէ տեսնելու զկոյն Մա-
րիամ, որպէս զի՝ ի Քրիստոս Յիսուս ունեցած
հաւատովը մէջ հաստատուի։ Բանաստէրք կը հա-
մարին Թէ հնգետասաներորդ գարուն մէջ յար-
մարցուցած են սոյնք. իսկ առջիններըը չորրոր-
դին կամ հինգերորդին։

Հինեըը Վարդապետ-Ի-ն սրբոյն Իգնապիոսի կո-
չուած գիրք մըն ալ կը յիշատակեն. Ուրիշ ալ
Պապարգամոցի մը կաւանգէ իր անուամբը։

Սրբոյն Իգնապիոսի Ընդոց հայկական Ընարգմանու-Ի-
ն. — Մեր գրոց մէջ՝ բաց ՚ի սրբոյն Իգնատեայ
աստուածազգեցին հարազատ և ընտիր վկայաբա-
նութենէն՝ իր երկոտասան Թղթոցը Թարգմանու-
Թիւնն ալ ունինք. այսինքն՝ բաց ՚ի եօթն հարա-
զատներէն՝ ա՛ Մարիամ փիլին, ա՛ Յերոն (Ուրիոն)
արիա-ափ, ա՛ էկեղէին Տարսոնի, ա՛ անտիոքացիս
և ա՛ փիլիպպոս գրած Թղթերուընը։ Թէպէտև,
ինչպէս ըսինք, սուրբն Իգնատիոս յունարէն չա-
րադրեց սա Թղթերը, բայց մեր Թարգմանու-
Թիւնը՝ հաւանականապէս կարծեօք աստրականին
վրայ եղած է, որն որ յունականին պէս ծանօթ
էր մեր երանաշնորհ Թարգմանչաց։ Ա՛ս կարծիքս
այլևայլ զօրաւոր պատճառներով ցոյցած է գեր-
մանացի անուանի արևելագէտ բանաստէրը փե-
Թըր-
ման՝ իր սրբոյն Իգնատիոսի Թղթոց նոր և ճշմա-
րտագոյն հրատարակութեանը մէջ[1]։

1 Ա՛ս ընդդէմ երկաբերութեան հրատարակած է ՚ի
Լէյպզիկ յամի 1849։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԼՈՒԽ Զ.

Ս. ՊՈՂԻԿԱՐՊՈՍ ԶՄՒՌՆԱՑԻ

Պողիկարպոսի վարքը. – Գրուածքները. – Անծանօթի մը նուիրած պիտոյքը. – Պապիաս:

Պողիկարպոսի վարքը. – Փոքրուն Ասիոյ Զմիւռնիա քաղաքին եպիսկոպոս էր Պողիկարպոս, և առաքեալներէն հայրապետին բարեկամն ու մոեռլիմ: Սուրբն Երենոս, որ Պողիկարպոսի աշակերտն էր, իրեն համար ալ կսեանդէ Թէ առաքելոց հետ կենցաղած ըլլայ, և աշակերտ սրբոյն Յովհաննու սեեռտալանչի, և Թէ իրմէն ընդուներ է զեպիսկոպոսութիւնն Զմիւռնիոյ: Եւսեբիոս ալ իր եկեղեցական պատմութեանը մէջ սրբոյն Երենոսի Թղթին մէկ հատուածն առ Փլորինոս կը յիշատակէ, Թէ ինչպէս իր տղայութեան առնը սեեռեր է զՊողիկարպոս, և իրեն առ Ժողովուրդն ըրած խօսակցութիւնքը մտիկ ըրեր՝ զորս Յովհաննէս սեեռտալանչին բերնէն լսած էր:

Ոչ միայն սրբոյն Իգնատիոսի բարեկամութեանը, հապա նաև իրեն հոգւոյն արժանաւոր եղաւ Պողիկարպոս: Չի գիտցուիր Թէ ինչ պատճառաւ Անտոնինոս Պիոսի կայսերութեան ժամանակ Հռոմ եկաւ սուրբն Պողիկարպոս և Անիկետոս քահանայապետին հետ տեսնուեցաւ (150–162), և հոն իրեն աստուածուսոյց խմաստութեամբը շատ մարդիկ դարձուց, որոնք Վալենտինեանոսի և Մարկիոնի ալանդին հետևեր էին: Տեսաւ հոն նաև զՄարկիոն հերետիկոսապետը, որն որ երբ հար-

Generated on 2016-05-06 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ցուց սուրբ Հայրապետին Թէ զինքը կը ճանչնայ, պատասխան առաւ Պողիկարպոս. "Այո, կը ճանչնամ զքեզ, իբրև անդրանիկ սատանայի,,: Անիկետոս քահանայապետին հետ խօսելու ժամանակ, խօսք եղաւ նաև արևելեայց պասէքը կամ զատկի օրը կատարելուն վրայ. և այդպատճառաւ զիրենք սուրբն Պողիկարպոս:

Երկար ժամանակ կառավարեց Զմիւռնիոյ եկեղեցին սուրբն Պողիկարպոս, և հարիւրամեայ ծանրացեալ հասակին՝ Մարկոս Աւրելիոսի ժամանակ փառաւոր վկայութեամբ պսակուեցաւ: Քրիստոսի 168 կամ 167 Թուականին էր՝ երբոր հռովմայեցիք տանելով որ քրիստոնեայք անեծկիւտութեամբ և մատղուս սիրով մահը յանձն կառնեն, կատղած սկսան աղաղակել որ զՊողիկարպոս առիւծուց առջևը ձգեն: Սուրբ հայրապետը Թէպէտ յօժարութեամբ աչք առած էր Քրիստոսի համար մեռնիլը, բայց կեանքը՝ հաւատացեալոց համար օգտակար սեպելով ուզեց ծածկուիլ: Դատն զինքը խնդրակիք, փոխանակի բդեշխին առջևը բերին, որ հրամայեց նզովել զՔրիստոս ու պաշտել զաստուածս: Մեծապետոյ ծերունին "Ութսունըվեց տարի է, ըսաւ, որ Քրիստոսի ծառայեր եմ, ու ինծի ոչգի վնաս մը չէ տուած. ի՞նչպէս կրնամ զինքն անիծանել և նզովել: Իշխանին ամէն հրապուրանքը, խաբէութիւնքն ու սպառնալիքը՝ չկրցան սուրբ ծերունւոյն մտացը հաստատութեան յաղթել. ուրախ և զուարթ մնաց ու պաշտեց զաստուածս: Մեծապետոյ ծերունին "Ութսունըվեց տարի է, ըսաւ, որ Քրիստոսի ծառայեր եմ, ու ինծի ոչգի վնաս մը չէ տուած. ի՞նչպէս կրնամ զինքն անիծանել և նզովել: Իշխանին ամէն հրապուրանքը, խաբէութիւնքն ու սպառնալիքը՝ չկրցան սուրբ ծերունւոյն մտացը հաստատութեան յաղթել. ուրախ և զուարթ մնաց հոգւով մը մեռաւ: Իրեն վկայաբանութիւնը եբեռեայ Եկեղեցական պատմութեան մէջ կը տեսնուի Թղթով մը զոր զմիւռնացիք գրած են առ հաւատացեալս Պոնտոսի: Եւսեբեայ գրողը մէջ եղածը միայն մէկ հատուածն է, բայց Ոսերիոս ամբողջը գտաւ և հրատարակեց:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Պոլիկարպոսի գրուածները.— Առաջ ալ յիշատակեցինք թէ սուրբն Իգնատիոս Հռոմ չգնացած՝ մանաւոր թղթով մը աղաչեց զսուրբն Պոլիկարպոս որ քանի մը թղթեր գրէ առ եկեղեցիս՝ որոնց ինքը չէր կրցած առաքելական ձայնը գարձընել, ժամանակ չունենալուն համար: Ըսեբիոս՝ Երանուսէն առնելով կաւանդէ թէ յիրաւի այլևայլ թղթեր գրեց Պոլիկարպոս առ մերձաւոր եկեղեցիս, հաւատոյ վերաբերեալ խնդրոց նկատմամբ. բայց այնչափ թղթերուն մէջէն միայն առ Փիլիպեցիս գրածը ձեռնընկա հասած է: "Պոլիկարպոս ընտիր թուղթ մը շարադրած է առ փիլիպեցիս, կըսէ սուրբն Երանոս, որն որ ճշմարտութեան վարդապետութիւնը սորվելու համար ամենահարկաւոր է,,: Հերոնիմոս ալ կը զուգէ թէ իրեն ժամանակին Ասիոյ եկեղեցեաց մէջ կը կարդացուէր. որով ինքնիրեն գեռին կկնան քանի մը նորագանդից առարկութիւնները՝ որոնք կուզեն ասոր վաւերականութիւնն ուրանալ:

Թղթիս գրութեան պատճառ փիլիպեցիք եղան, որոնք իրենց եկեղեցւոյն վրայ տեղեկութիւնները և սրբոյն Իգնատիոսի ճանապարհորդութեան պատմութիւնն ընելէն ետքն աղաչեցին որ առաքածագեաց հայրապետին ամէն թղթերն իրենց խրկէ: Խնդիրնին կատարեց Պոլիկարպոս, և միանգամայն զգուշութեան և խրատուց թուղթ մը գրեց՝ ընտիր և աքանչելի խմաստներով:

Թուղթ ԱՒ Դիոգնէտ.— Հին քրիստոնէութենէ ասանդ մնացած աս թղթին հեղինակ սուրբն Ցուստինոս կը համարուէր: Տիլլըմոն առջինն եղաւ որ վրան տարակոյս հանելով ցցուց թէ աս թուղթս շարադրողը պէտք է որ սրբոյն Ցուստինոսէ օրուընէ առաջ ըլլայ. և զուրցածը հաստատական պատճառներով կը հաստատէ: Նախ՝ որ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ղթին հեղինակն ինքզինքն առաքելոց աշակերտ
նուանէ, որն որ սրբոյն Յուստինոսի գժուա-
ս կընայ յարմարիլ. երկրորդ՝ որ քրիստոնեա-
ն կրօնքն իբրև նոր բան մը կըսատրապրէ,
նչդեռ Յուստինոսի ժամանակ հարիւր տարիէն
ւելի էր որ ծանօթ էր հեթանոսաց: Ատոնցմէ
ա ոչն ու լեզուն բոլորովին տարբեր է սրբոյն
ուստինոսի բանեցուցածէն:

Բայց չենք կրնար որոշ բան մը ըսել հեղինա-
ն ով ըլլալուն վրայ, և ոչ ալ թէ երբ շարա-
ուած է:

Հին հաւատացեալոց տուրք և անարատ վարքն ու
աչած նեղութեանց մէջ ունեցած ուրախու-
ւննին՝ հանելուկ մը կերևնար իրենց ժամանա-
կից հեթանոսաց առջև, որոնք քրիստոնէական
նից վրայ ծուռ գաղափար մը ունէին: Այս-
սինեբէն մկրը կերևնայ նաև Դիոգնէտ որ ա-
քեբոց աշակերտ եղող անձէ մը իր տարակու-
նաց լուծումը խնդրեց: Եւ ատոնք էին իր հարց-
նքը. Ո՞վ է ան Աստուածը զոր քրիստոնեայք
ւյսքան վեծարանօք և յուսով կը պաշտեն, և ա-
ր սիրոյն համար կարհամարհեն զաշխարհ, ըզ-
անա և զմահ. — ինչո՞ւ համար չեն ուզեր Յու-
ց աստուածները պաշտել, և հրէից աւելորդա-
շտութիւնքը կարհամարհեն. — թէ որ քրիս-
նէութիւնը ճշմարիտ կրօնք էր, ինչո՞ւ առաջուց
յտնուեցաւ:

Ատոնցմէ կուտայ իրեն թղթին հեղինակը՝
քրիստոնէութիւնն այնպիսի կրօնք մըն է, որ
ր ինչ ըլլալն ըմբռնելու համար՝ նախապաշար-
նք ազատ միտք և սիրտ ունենալու է. և ինչ-
ր ինքը նոր է, ասանկ ալ նոր միտք կը պահան-
կը ցցընէ թէ ինչո՞ւ համար քրիստոնեայք
Յանուանց աստուածները չեն ուզեր պաշտել,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

և թէ ինչպէս հակառակ է ուղիղ բանի նիւթական արարածոց երկրպագութեան տալ. և թէ հրէից աւետարանական աշխարհներէն ալ խորշելու իրաւունք ունին, որովհետև ան կրօնքին ալ յԱստուծոյ սահմանած ժամանակն անցեր է:

Վերջը քրիստոնէական կրօնից ներքսոյը կրսկսի յօրինել, նիւթին արժանի լեզուով և ճարտասրխոսութեամբ մը. "Քրիստոնեայք չեն զանազանիր, կըսէ, ուրիշ մարդկանցմէ աշխարհաւ, լեզուաւ և կամ քաղաքական օրինօք. որովհետև մէկ մասնաւոր քաղաքի մը մէջ չեն բնակիր, առանձին լեզու չեն գործածեր, և ոչ ալ ուրիշի զարմանքը յաճախելու՝ կարգէ դուրս վարուելու կերպ մը ունին: Միայն չեն թողներ որ բռնանայ իրենց վրայ ան ոգին որ աւետրոցաց կը փափաքի, և ուրիշներու պէս՝ մարդկային ակնածութենց և նախապաշարմանց այնչափ փոյթ չեն ըներ. բայց հաւատարապէս կը բնակին Յունաց և բարբարոսաց քաղաքներուն մէջ: Ուսուելու, հագնելու և կենաց ուրիշ պիտոյիցը մէջ ալ երկրին սովորութեանցը կը հետևին: Սակայն զարմանալի է իրենց կենցաղավարուելութեան կերպը. որովհետև հայրենեաց մէջ կը բնակին, այլ ինքզինքնին օտարական կը սեպեն. ամեն հարկաց մասնակից են իբրև քաղաքացի, և ամեն վշաց և նեղութեանց կցորդ իբրև օտարական. իրենց համար ամեն օտար աշխարհք հայրենիք է, և ամեն հայրենիք՝ օտարութիւն:... Ջամբնքը կը սիրեն, և ամենէն հալածեալք են. անծանօթք, բայց վրանին գատաստան կըլլուի. մեռած են և կենդանի. աղքատ՝ և ուրիշ շատերու հարստութեանը պատճառ. նախատուած՝ և նախատինքի ատենն ալ մեծարգոյ. կամբաստանուին՝ բայց յայտնի է իրենց արդարութիւնը. նախատինք կընդունին, և օրհնութիւն կու տան. բարիք

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նեն, և չարագործի պէս մահուան կը դատա-
արտուին. չարչարուելու առեննին կուրախա-
ան, իբրև թէ կեանք ստանային. Հրեայք իրենց
էմ կը պատերազմին. Յոյնք զիրենք կը հալա-
են, և երկուքն ալ չեն կրնար զուրցել թէ ինչ
իրենց Թշնամութեան կամ սուելութեան պատ-
սուը: Համառօտ ըսենք, ինչպէս հոգի՝ի մարմնի,
ատնկ են քրիստոնեայք յաշխարհի, հոգին տա-
ծուած է յամենայն անդամս, և քրիստոնեայք
ուած յամենայն քաղաքս: Մարմնոյ մէջ կը բնա-
հոգին, բայց՝ի մարմնոյ առաջ չի գար. ատնկ
քրիստոնեայք յաշխարհի կը բնակին, այլ
խարհքի չեն վերաբերիր: Հոգին աներեւութա-
ր կը բնակի՝ի մարմնի. քրիստոնեայք թէպէտ
խարհքի մէջ են, բայց իրենց բարի դիտումնքը
ծանօթ աշխարհքի: Մարմին կատէ և կը պա-
երազմի ընդդէմ հոգւոյ, որովհետև դէմ կը կե-
յ իրեն հաճոյացը. ատնկ ալ աշխարհս կատէ
րիստոնեայս, որովհետև կը հակառակին իրեն
շտութեանցը: Հոգին կը սիրէ զմարմինը, թէ-
տև իրեն Թշնամի ըլլայ. քրիստոնեայն ալ կը
ե իրեն Թշնամի: Հոգին փակեալ է՝ի մարմնի,
յց ինքն է մարմնոյ կենդանութիւն տուողը.
իստոնեայք ալ աս աշխարհքիս մէջ իբրև՝ի բան-
են, բայց իրենք են աշխարհս բռնողը: Հոգին
մնաւոր առագաստի տակ անմարմնապէս կը
ակի. քրիստոնեայք ալ սպասկանեալ աշխարհ-
մը մէջ կը նստին, և կրսպասեն անապականա-
լին: Պահօք կատարեալգոյն կըլլայ մարմինը.
նստոնեայք ալ ամէն օր մահուան կը դատա-
րտուին, և Թուերնին կը յաճախէ: Ատնկ
ակի մը սահմանած է զիրենք Աստուած, և չեն
ար առանց մեղանչելու նոյն վիճակէն հեռա-
յ:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Եոքը կը ցցընէ Թէ ինչպէս ասանկ գերազանց արարած մը արժանաւոր է աստուածելէն սիրոյն. և Թէ Բանն աշխարհք եկաւ զանիկայ փրկելու համար, ինչուան յօժարակամ մահն ալ մտադիւրութեամբ յանձն առաւ: Ուստի պէտք չէ, կըսէ, զարմանալ Թէ ինչպէս քրիստոնեայք իբրեւ միոյ հօր որդիք այնչափ կը սիրեն մէկզմէկ. և ինչքէն առաջ եկած է ան գերազանց սէրն առ Աստուած, որ մահերնին աչք կառնեն քան Թէ նշանախեղիւ վերպել՝ի հաւատոց:

Դիոգնէտ՝ քրիստոնէական կրօնէն վերջ սէր և համարում և ինչուան յօժարութիւն ցցուցեր էր ընդունելու, անոր համար Թղթիս հեղինակը կը դիւրէ իրեն զՃանապարհն փրկութեան: Եւ որովհետեւ ան առեղն այլեւայլ հերետիկոսութիւնք սկսեր էին երեւնալ, և առաքելական աւանդութիւնքն ուրքի տակ առնել, անոր համար կը սորվեցընէ Թէ մեր կամ ուր եկեղեցւոյն մէջ հարկ է որ փնտռուի ճշմարտութիւն:

ՊԱՊԻԱՍ. — Եկեղեցական հնութեան մէջ շատ նշանաւոր է Պապիասայ անունը, որն որ Քրիստոսի 118 Թուականին առեղնեցրը Ցերապոլսոյ եպիսկոպոս եղաւ: Ոմանք՝ի հարց զուրցած են Թէ Պապիաս աշակերտած ըլլայ սրբոյն Յոհաննու աւետարանչի և բարեկամ Պողիկարպոսի. բայց իր գրուածներէն կերեւնայ Թէ երբեր ինքն սկսաւ առաքելական աւանդութիւնքը կարդալ վերայ առնել, առաքեալք մեռած էին և միայն իրենց աշակերտքը կենդանի: Կաւանդէ Թէ աս երկասիրութեան ձեռք չզարկած՝ խորհրդակից եղեր է անոնց հետ որոնք տեսեր էին զառաքեալս. "Ինչ որ ըսին Անդրեաս, Պետրոս, Փիլիպպոս, Թովմաս, Յակոբոս, Յոհաննէս, Մատթէոս և այլք յաշակերտաց տեառն. և ինչ որ կըսեն Արիստոն և

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Յոհաննէս երէցն (presbitero) ,,... Ուսկից Եւ-
եբիոս իր եկեղեցական պատմութեանը մէջ կը
եաւգընէ թէ Յոհաննու երիցու աշակերտած
լայ, և ոչ աւետարանչին:
Պապիասայ աշխատասիրած գրուածքն էր Քրիս-
ոսի վարուցը վրայ բերնէ բերան անցած աւան-
ութեանց հաւաքումը: Ան գործքն ինչուան ժԴ
ար կը գանուէր. բայց անկէ ետքը կորսուեցաւ.
այն մէկքանի հատուածներըը մնացին, որոնք Ե-
ւնոսի, Եւսեբեայ և ուրիշ մատենագրաց գրուա-
ոցը մէջ կը բովանդակուին:
Նշանաւոր է Պապիաս նաև անով որ հազարա-
այց մօրուրեան պաշտպան (կամ ըստ այլոց՝
ղինակ) եղաւ. որոնք կըսէին թէ համաշխար-
ական յարութենէն ետքը Քրիստոս հազար տա-
պիսի թագաւորէ ընդ արդարս՝ ի վերայ երկ-
: Եւսեբիոս կը կարծէ թէ Պապիաս սա մօր-
ութեան մէջ ընկած ըլլայ՝ չկրնալով լաւ ըմբռն-
ը առաքելոց վարդապետութիւնը, ևս առաւել
Յհաննու աւետարանչին յայտնութեան գրոց
ի խօսքը [1]:

[1] Յայտ. Ի. 4:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԼՈՒԽ Է.

Ս. ՅՈՒՍՏԻՆՈՍ ԻՄԱՍՏԱՍԷՐ

Յուստինոսի վարքը. — Գրուածները. — Առաջին Ջատագովութիւն կամ պաշտպանութիւն. — Երկրորդ պաշտպանութիւն. — Տրամախօսութիւն ընդ Տրիփոնեայ հրէի. — Յուստինեայ էրէյական գրուածները. — Կորուած էրէսիրութիւնը:

Յուստինոսի վարքը. — Թէպէտև եկեղեցւոյ ուրիշ հին վարդապետաց իրենց վարուցը վրայ քիչ կամ ամենևին տեղեկութիւնք տուած չեն, բայց սա բանիս մէջ մեծապէս կը զանազանի իրենցմէ ստուրբն Յուստինոս, որ իր անձին վրայ չէ թէ միայն հարկաւոր՝ հապա նաև շատ հետաքրքրական բաներ կը պատմէ: Առաջին ապաստանատուութեանը մէջ այլևայլ տեղեկութիւններ կու տայ իր հայրենեացն և հօրը վրայ, որն որ Պրիսկոս կը կոչուէր կրսէ և պապը Բագինոս, որոնք Փլաւիա Նէապոլիս քաղաքը կը բնակէին, որ հին Սիւքեմն էր կամ Սամարիան, և հիմա Նապլուսա կամ Նէապոլիս Սորիոյ կը կոչուի: Իրենք յոյն էին ազգաւ, և հաւանական կերևնայ թէ Վեսպասիանոսի ատեն հռովմէական գաղթականութեան հետ հոն փոխադրուած ըլլան:

Երկրորդ դարուն սկիզբը ծնած էր Յուստինոս. և իր ծնողքը, ինչպէս կերևնայ, բաւական ունևոր ըլլալով՝ մանաւոր խնամք ունեցան իրեն դաստիարակութեանը: Պատանեկութեան ատենէն վիճակ մը ունէր Աստուծոյ և աստուածայ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նոց խելամուտ ըլլալու. ուսոի և յօժարութեամբ ինքզինքն իմաստասիրական ուսմանց տուաւ, յուսալով անոնց մէջ գտնել իրեն տարակուսանաց լուծումը: Նախ ստոյիկեան իմաստասիրի մը աշակերտեցաւ, և երկար ատեն անոր դասախօսութիւնքը մտիկ ընելով՝ բան մը չկրցաւ հասկընալ Աստուծոյ վրայ. որովհետև ինքն իսկ իմաստասէրը չէր գիտեր, և կը սպնդէր թէ գիտնալու բան մը չէ: Ուսոի թողուց զինքն ու գնաց ուրիշ պերիպատիկեան փիլիսոփայի մը, որուն հանձարին և իմաստութեանը վրայ շատ գովեստներ լսած էր. բայց տեսնելով որ ան ալ դաշն կուզէր դնել հետը և շատ ատակ կը պահանջէր, թողուց զինքն ու ուրիշ մը գնաց: Պիւթագորեանին մը՝ որ տեսնելուն հարցուց իրեն թէ երաժշտութենէ, աստեղաբաշխութենէ և երկրաչափութենէ կը հասկընայ թէ չէ. որոնք ամենահարկաւոր կը սեպէր բարձրագոյն ուսմանց եռանէ ըլլալու համար: Յուսահատ որովհետև ատ նախապրմանական ուսումնքներուն ամենևին տեղեկութիւն չունէր, բախտեցաւ անկէց ալ հեռանալով պղատոնական մը երթալ. և անոր քով ամէն օր յաճախելով ծանօթ յառաջադիմեց իմաստասիրական ուսմանց մէջ:

Երբոր պղատոնական վարդապետութիւնը լաւ միտք առաւ Յուստինոս, ուզեց քաշուիլ և առանձնանալ, ինքզինքը բոլորովին հայեցողական բաց տալու համար: Օր մը ծովեզերք երթալ ծերունւոյ մը պատահեցաւ, որուն դէմքին վրայ ամաչութիւնն ու բարութիւնը նշմարելի էր: Եւ երբոր իրարու հետ սկսան խօսիլ, Յուստինոս իմացուց թէ գիտութեան և մտածմանց տուած է ինքզինքը: Պատասխան տուաւ ծերունին, թէ ինքն աւելի գործնական կեանք կը

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

սիրէ քան թէ հայհոյողականը : Յուստինոս լսած թէ "Առանց փիլիսոփայութեան ուղիղ և Աստուծոյ հաճոյական բան չկայ . ուստի հարկ է որ ամէնքն իմաստասիրեն , և սա պարտամունքն ամէն քանէ աւելի հարկաւոր և օգտակար սեպեն . խակ ուրիշ որ և իցէ ուսմունք՝ երկրորդական բան մը , և իբրև առջինէն բղխած ,, : Ծերն ուզեց իմանալ թէ ինչ կը հասկընայ իմաստասիրութեն ըսելով , կամ թէ ինչպէս կը սահմանէ նոյն ուսումը : Պատասխան տուաւ Յուստինոս թէ "Իմաստասիրութիւնն է գիտութիւն էացուչիկն և ճանաչութիւն ճշմարտութեան . և թէ երանութիւնն է վարձք իրեն ուսմանցն և աշխատանաց ,, : Ծերունին հարցուց դարձեալ թէ Աստուած ըսելով ինչ կը հասկընայ : Յուստինոս պատասխանեց թէ "Աստուած է յաւիտենական և անկրական պատճառ. ամենայն իրաց ,, : Ան առեն ծերն իմացաւ թէ երիտասարդ իմաստասէրը բաւական ընդունակութիւն ունի բարձրագոյն բաներ ըմբռնելու . բայց միանգամայն զուրցեց իրեն թէ ունեցած գիտութիւնը բաւական և հաստատուն չէր՝ անոնց խելք հասցընելու : Ասով ուզեց ճամբայ մը բանալ առ քրիստոնէութիւն :

Յուստինոս իրեն պղատոնական իմաստասիրութեան սկզբանցը հեռևելով՝ սկսաւ գովել և աստուածութեան մտածութիւնը բարձրացընել : Երբոր ծերունին չէր կրնար ըմբռնել թէ ինչ մտածութեանց վրայ է խօսքը , Յուստինոս բացատրեց թէ անտարրական կամ հոգևոր մտածութիւնը կը հասկընայ : Ծերը հարցուց . " կրնա՞յ մէկը մտածել Աստուծոյ վրայ՝ առանց հոգւոյն սրբոյ : — Չեմ կարծեր , ըսաւ իմաստասէրը , որովհետև ամէն բանի պատճառը չի կրնար բացատրուիլ և ջննուիլ ,, : Ծերունին խօսքն առաջ տանելով

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ուսաւ իր մէկ քանի տարակոյսները զուրցել Յուս-
նոսի պլատոնական խմաստասիրութեանը վրայ,
ունց չկրցաւ պատասխան տալ. և խոստովանե-
ւ թէ ան խմաստասիրութիւնը բաւական չէ
ւրդուս սիրտը հանդչեցնելու համար: Հար-
ւց ծերունւոյն թէ աւելի հրահանգուելու հա-
ր որմն հարկ է որ դիմէ: Ինկայ ալ ցցուց ի-
ն զմարգարէս, զՔրիստոս և զառաքեալս, և
ւրդուեց որ ալօթք ընէ, և իր մտացը աչքերնե-
ւն լոյս խնդրէ յԱստուծոյ: Յուստինոս մեծ
ռով և եռանդեամբ սկսաւ մարգարէից և տուա-
ւոյց գլուածներըը կարդալ: Քիչ տեւնէն եր-
ւ հաւատացելոց դէմ մեծ հալածանք բացուե-
ւ, աեւսաւ քրիստոնէից հաստատուն հաւատքը
ելը, և միտքը դրաւ անոնց աշակերտիլ. զոր
տարեց ալ Քրիստոսի 133 թուականին, իր կե-
յն երեսնեւորդ տարին:
Քրիստոնէութիւնն ընդունեցաւ Յուստինոս,
ց խմաստասիրութիւնը ձեռքէ չձգեց. երկու
թամ հոտմ եկաւ, և հոն լսարան մըն ալ սահ-
ւեց: Ոմանք կը համարին թէ քահանայ ալ ձեռ-
ւրուած ըլլայ: Քրիստոնէութիւնը ծաւալելու
չանք ունեցաւ. և անանկ ուժով և ճարտա-
թեամբ պաշտպանեց նոյն սուրբ հաւատքը, որ
անոնները ամեհով ձգելով չկրցան ուրիշ
ռով սխեմնին առնել՝ բայց եթէ անոր մա-
սքը: Մարտիրոսական վկայութեամբ՝ իր ար-
աւոր կեանց ընթացքը կնքեց Յուստինոս:
Ասոնոսի գրածները. – Քրիստոնէութիւնն
անելէն եռքն իր ամէն գիտութիւնն ու հան-
ւ ուրիշ բանի չդործածեց Յուստինոս՝ բայց
նոյն հաւատքը պաշտպանելու, որուն հա-
այնչափ փոյթ և սէր ունէր: Ան սէրը և աս
ը նոր կորով մը տուաւ իր խօսքերուն, և շատ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

բանի մէջ քրիստոնէից իրաւունքը ճանչցուց ա-
նանիկ ատեաններու առջև որոնց ամենէն մեծ պար-
ծանքը քրիստոնէութիւնը ընդունիլն էր: Եւսեբիոս
շատ գրուածք կաւանդէ Յուստինոսի անուամբը,
որոնք մինչև իր ժամանակն անկորուստ էին. բայց
ամէնքը մեր ձեռքը չհասան: Ձեռնընիս եղած-
ներուն մէջ սրբոյն Յուստինոսի հարուստ երկա-
սիրութիւնք են, երկու Ջոփագոնիին քրիս-
տոնէութեան, և մէկ Տրամխոսնիին մը ընդ Տրի-
փոնեայ հրէի: Սոնացածները աւրակուսական են:

Ա-ՋԻՆ ՋՈՓԱԳՈՆԻՆ. — Վրիպակաւ կը կար-
ծէ Եւսեբիոս իր եկեղեցական պատմութեանը
մէջ թէ համառօտ ջատագովութիւնն առաջ գրած
ըլլայ և ընդարձակն ետքը: Բայց հակառակն է.
որովհետև առջինը և աւելի ընդարձակը Տիտոս
Անտոնինոս Պիոս կայսեր ներկայացուցած է հե-
ղինակը (138-161), թէպէտև չի գիտցուիր թէ ո՛ր
տարուան մէջ: Իրաւ է որ Յուստինոս պատաս-
խանատուութեանը մէջ կըսէ թէ Քրիստոսի ծնընդ-
եանէն ետքը 150 տարի անցեր է, բայց անով ալ
որոշ բան մը չի հասկըցուիր. որովհետև կրնայ ըլ-
լալ որ գրութիւնը մատուցմանէն տարիներով ա-
ռաջ եղած ըլլայ: Ա՛ս յայտնի է որ Պիոս Անտո-
նինոս մանաւանդ հրովարտակ մը չհանեց քրիս-
տոնէից դէմ, որոնք իրեն կայսերութեան առեն
խաղաղութեան և հանգստութեան մէջ էին:

Յուստինոսի պատասխանատուութեան դլխա-
ւոր յատկութիւնն ան զարմանալի քաջասրտու-
թիւնն է որ գրուածքին սկիզբէն մինչև վերջը կե-
ցեալ է: Նախ իր հօրն ու հայրենեաց անունը կը
յայտնէ Պիոս (Pius, բարեպաշտ) կը կոչէ ըզ-
կայսրն, և իմաստասէր (philosophus) անոր որդին.
և կը յիշեցնէ թէ այսպիսի անուանց արժանա-
ւոր ըլլալու համար հարկ է որ միայն ճշմարտու-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 08:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Միանը պատուհան, և իրենցմէ ոմն չկրնան ուրանալ զոր
ինքն արհամարհեն երբոր աներեսն Թէ Աշմարտու-
թեան զուգընթաց չէ: Սրովհետև խելքը կը տես-
նէցնէ որ ոչ միայն չհետևինք անոնց որ անիրա-
ւութիւն կը տովվկցնեն, հապա նաև կեանքերս
իս ալ դնենք Աշմարտութիւնն ու արդարութիւնը
յաշտպանելու համար: Կը խոստովանի Թէ իր
խոքը չողոքորթութիւն ընել չէ. այլ միայն ար-
արութիւնը շահիլ, և յորդորել զիրենք որ չըլ-
ոյ Թէ աւետրդապաշտ և կրից գերի եղած մար-
խինքրուն խօսքին հաւատալով՝ այնպիսի գաղա-
ան մը ընեն որ իրենց բարուցն և խղճմտանքու-
եան հակառակի:

Հեղինակին գլխաւոր նպատակն է ցցընել Թէ
էտք չէ պատժել զքրիստոնեայ՝ իրենց այսպէս
չնաեալն համար, որովհետև անուանն լսա ին-
եան բան մը չնշանակեր. և եԹէ իրենց մէջ
ր մարդիկ գտնուին՝ պատուհասել զիրենք ոչ
րև քրիստոնեայ, այլ իբրև չարագործ: Քրիս-
նեաները չատագովելով գոհ չըլլար, կը չա-
ր նաև զՀեԹանոսս աշակերտել հաւատոց. կը
նէ

Ա. Թէ քրիստոնեայք չեն գործել ամենևին ան
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

գտնուին հին քրիստոնէից առաջինի կենացն և նախնական եկեղեցւոյ առհմանադրութեանց վրայ :

2 . Ա՛ պէտ . — Պաշտպանողական վիճաբանական ճառ մը կերկուս գիրս : Հռունէպէք և Սէմլէր ասոր հարազատութեանը վրայ տարակոյսներ հանեցին . բայց իրենց կարծեացն անտեղութիւնը ցցնելու համար բաւական են Հերմիմեայ և Օգոստինոսի վկայութիւնքը : Նախընթաց երկասիրութեան հետ այլևայլ նմանութիւնք ունենալուն՝ հաւանական կերևնայ թէ մի և նոյն առեն շարադրած ըլլայ . միայն թէ առջինն աւելի առաձգաբար և խմաստուն մարդկանց ուղղած ըլլալուն՝ ի հարկէ մեռած է ոճոյ և խմաստից զանազանութիւն :

3 . Յաղագս վայրենի հոգւոյ . ուն որ թէպէտ համառօտ ճառ մըն է , բայց գեղեցիկ և խորունկ մտածութեամբ լեցուն : Գլխաւոր նպատակն է ցցնել , թէ քրիստոնէութիւնը մարդուս բնութեանը մէջ հաստատուած է . մտածութիւն մը՝ զոր իրմէ առաջ զուրցեր էին նաև Կղեմէս ալեքսանդրացի և Որոգինէս :

4 . Ա՛ Սկապուլա . — Տերտուլլոս Սկապուլան՝ Աֆրիկէի կարթագինէ քաղաքը փոխանակ բռնակալ էր . և քրիստոնէից վրայ ունեցած ատելութեամբը վառուած՝ անոնց դէմ խիստ և անողոք հալածանքներ կը յարուցանէր , մինչդեռ ուրիշ աշխարհաց հաւատացեալքը՝ խաղաղութեան և անդորրութեան մէջ էին : Տերտուղիանոս՝ Սկապուլայ բռնած կերպէն ատիպուելով՝ սա ճառս ուղղեց իրեն : Նախ կը ցցնէ թէ ան արիւնռուշտ բռնութեամբն ալ քրիստոնէից թուոյն վրայ ատելութիւն մը չի կրնար ընել , և թէ ոչ պատճառ և ոչ իրաւունք ունի՝ անոնց դէմ այսպիսի կերպ մը բռնելու : Կը յիշեցնէ քիչ օր առաջ երկընքին

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:28 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

երեսը տեսնուած ահաւոր նշանները. և թէ ինչ-
պիսի խեղճ վախճան ունեցան որոնք իրեն պէս
քրիստոնէից դէմ կը պատերազմէին:

5. ԸՆԴԴԷՄ ՀՐԷՒ. — Հրեայ մը քրիստոնէական
օրինից ճշմարտութիւնն ընդունելով քանի մը տա-
րուանց լուծումը ինդրեր էր: Տէրտուղիա-
նա կը բացատրէ նախ թէ ինչ տարբերութիւն կայ
հեթանոսական և հրէական կրօնից մէջ. և թէ ինչ-
էս աս վերջինս պատրաստութիւն է առ քրիս-
տոնէութիւն. և աս կարծեաց տուգութիւնը
դպարէից խօսքերովը ալ կը հաստատմանցնէ:

6. ՀԵՐՅԷՒՑ ԴԷՄ ՊԱՂՊԱՆՈՂԱԿԱՆ ԵՒ ՎԻՃԱԲԱՆԱԿԱՆ
ԱՌԸ.

1. ԸՆԴԴԷՄ ՀԷՐՅՈՍՓՈՂՈՍ. — Քրիստոսական ե-
ղեցին հեթանոսներէ աւելի հեռանալոց խնդէն
առատանք քաշելով եկեղեցւոց վարդապետք
նք ունեցան հաստատապէս երկուքին դէմ ալ
ր իրենց գրիչն ու հանճարը: Ա՛ս նպատակիս
մար շատադրած է Տէրտուղիանոս առաջնակա
ասիրութիւնս. և թէպէտ իրմէն առաջ ալ
պիսի գիրք մը շարադրեր էր սուրբն Երանոս,
պէս յիշեցինք, բայց Տէրտուղիանոս աւելի
ռձակ կերպով խօսեցաւ, և աւելի խորունկ
տասիրութեամբ և հանճարով:

2. ՅՈՂԱՓ ՖԼՈՐԻԱՆ. — Հեղինակին ուղղա-
ութեանն առեն գրուած: Ա՛ս երկասիրու-
նս պատճառ եղաւ կուինտիլլա անունով կին
ր սկսաւ ջրով մկրտութիւնը մերժել, Ա՛ս-
ոյ մեծութեանն անվայել սեպելով որ ա-
արտուքին և նիւթական նշանակաւ մը իր հո-
և պանծութեան չնորհս բաշխէ հաւատացեալոց:

ԸՆԴԴԷՄ ՀԷՐՄՈԳԵՆԷՍ. — Հերմոգենէս կար-
ինեցի նկարիչ մըն էր, որ զանազան հեթե-
ական կարծիքներ հնարեր էր, նիւթոյ և

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:28 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Աստուծոյ էութեան և աշխարհածնութեան վրայ. և այլևայլ իմաստականաւ առարկութեամբ կուզէր զԱստուած մանն սեպել աշխարհի, և զաշխարհս Աստուծոյ: Տերտուղիանոս իւրեն բնական դարձած ճարտասանութեամբն ու համոզութեամբն անոր դէմ ելաւ և յաղթահարեց:

4. Ընդդէմ վաղենտինեանց. — Երրորդ դարուն սկիզբը՝ գնոստիկեան աղանդաւորաց մէջ աւելնէն աւելի բազմաթիւն էին վաղենտինեանք, որոնք իրենց խորամանկ հնարքովն ու ձեռնարկութեամբ շատ հաւատացելոց կորստեանը պատճառ կըլլային: Տերտուղիանոս՝ վաղենտիանոսի աս խորհրդական կարծուած քօղը կը վերցընէ, և փոխանակ հերքելու, ծաղրու և արհամարհանաց նիւթ կընէ: Հաւանական կերևնայ թէ իր անկմանէն ետքը շարադրած ըլլայ աս ճառս որովհետև Պրոկղոս մոնտանեանին վրայ մեծ գովութեամբ կը խօսի, և քրիստոնեայ մատենագրաց պարծանք կը կոչէ զանիկայ:

5. Յաղագս հոգւոյ. — Տերտուղիանոս ասկէ առաջ ուրիշ ճառ մըն ալ շարադրեր էր հերմոգենեայ դէմ նոյն նիւթին վրայ, որն որ մեր ձեռքը հասած չէ. ետքը գնոստիկեանց դէմ ասիկայ երկասիրեց, որ աւելի ընդարձակ է: Շատ ուղիղ վարդապետութեանց հետ՝ այլևայլ սխալ կարծիքներ ալ ունի ատոր մէջ Տերտուղիանոս: Նախ պղատոնականաց դէմ կը ցցընէ թէ՝ ի սկզբանէ ստեղծուած էր հոգին. բայց ետքը կրսկսի հոգւոյ մարմնաւորութիւնը պաշտպանել:

6. Յաղագս մարմնոյն Քրիստոսի, որն որ Մարկիոնի, Ապելէսի և ուրիշ գնոստիկեանց դէմ ուղղուած է, որոնք Քրիստոսի իրական մարմին ունենալը կուրանային: Անոնց դէմ շարադրած է նաև

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:28 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

7. Յաչափս յարութեանն Մարկոս. — Որովհետև Քրիստոսի իրական մարմինն ունենալն ուրանալնէն ետքը, կըսկսէին այլևայլ տարակոյսներ հանել մարդկային մարմնոց յարութեանը վրայ. և որպէս զի բերնոց կարծեսցին ուժ տան, մարդկային մարմինը այլ կը զարնէին իբրև անարժան յարութեան և աստուածային մասնակցութեան: Տէրտուղիանոս ցցընէ իւրենց թէ պէտք չէ արհամարհել զմարմին մարդոյ. որ թէպէտ հոգի է, այլ Աստուծոյ ոգւոյն առնուած, և անոր խնամքովն ու փչմամբ րմին և հոգի ստացած: Աստուծոյ պատկերը, սէ, չի կրնար անարդ և արհամարհելի սեպուիլ. նաւանդ զի մարմինն է գործի հոգւոյ, և անով դունի զշնորհս երկնից, և մեռաւոր ու բարոյական բարեգործանք: Մարմնոյ պերազանցութիւնը յանապէս կը սեանուի կուսութեան առաքինութեան և վկայական մահուան մէջ. ապա ուրն ինչմէ պիտի չկարենայ պատկուիլ, ուր նորէն դանութիւն առնել: Կըցցընէ թէ բնութեան ամէն բան նորոգուելու համար կանցնի. օրը եռնի, և գիշերուան մէջ կը թաղուի, որպէս նոր ծագէն աւելի փառաք գուրս ելլէ: — Աոյ յաւիտենական մարգարէութիւն մըն է ութեան: Ամբողջ աս ճառը շատ նմանութ ունի Ա. Թեոդոտոսի հանդուն երկասիանը: Բայց զանազանութիւնն ալ պատ է՝ հակառակորդաց տարբերութեանը պատ սե:

Ընդէ՞մ Մարկիոնի. — Հինգ գիրք բաժնուած. Տերտուղիանոսի յաւուգովական երկասիանց մէջ ամենէն աւելի ընդարձակը կրնայ իլ: Կաթողիկէ եկեղեցւոյն միաբանութ բաժնուելէն ետքն աս գիրքը շարադրած ն վրայ ոչ ոք կը տարակուսի. որովհետև

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:28 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

յայտնապէս կը տեսնուի որ քրիստոնէայքը ի-
լենցմէ կը զատէ : Նիւթը՝ Մարկիոնի, Աստուծոյ
և Քրիստոսի վրայ ունեցած կարծեացը հերքումն
է . կը ցցընէ նախ Աստուծոյ միութիւնը, և Թէ ինչ-
է ան Աստուածը զոր հին կտակարանաց մարգա-
րէքը քարոզեցին, Աստուած բարի և արդար : Ե-
որովհետև Մարկիոնի մտացը մէջ հակառակութիւն
կը սեպուէր Աստուծոյ՝ ասս իրարու հակառակ
եւնցած ատրիպուտները, կատարեալ ցոյց տալու Տէրտու-
ղիանոս Թէ ասոնք չէ Թէ միայն իրարու հակառակ
չեն, հապա հարկաւորապէս միացեալք ընդ էու-
Թեանն Աստուծոյ :

Յ . Ընդդէմ Պրաքէայ . – Վիկտոր Հռովմայ քա-
հանայապետը պատրաստուեր էր զմոնտանեանս
ընդունելու ի հաղորդութիւն ուսրբ եկեղեցւոյ,
երբոր Պրաքէաս անունով փութկոտի մը Հռոմ
հասնելով՝ ան ալանդին նորահնար վարդապե-
տութիւնքը ցցուց քահանայապետին, և հաղոր-
դակցութեան համար իրկած Թղթերն ետ կան-
չեր տուաւ : Ան գործողութիւնէն քիչ մը ետքը ինքն
Պրաքէաս ալ մեծ մոլորութեան մէջ ընկաւ՝ եր-
րորդութեան խորհրդոյն նկատմամբ . և Թէպէտ
Հռովմայ մէջ մերժեց իր կարծիքը, բայց ետքը
դարձեալ ընդունելովը ցցուց յայտնապէս Թէ ան-
կեղծութեամբ չէր առջի դարձը : Ասոր դէմ գրեց
Տերտուղիանոս իր ասս ձառը :

Գործնական ձառեր . – Ասոնց մէջ գլխաւորնե-
րէն կը սեպուին Յաղագս ապաշխարութեան երկու
ձառ, Ա՛ Վայս, Յաղագս աղօթից, Ա՛ կին ի-ր, Յա-
ղագս բեռանաց, Յաղագս պաղատանաց հնոց, Յաղագս
պահոց, Յաղագս խոնարհութեան, Յորդոր յողջախոհութիւն,
Յաղագս հանդուրժութեան, և այլն և այլն :

Տէրտուղիանոսի ոճը . – Տերտուղիանոսի գրուածք-
ները եկեղեցւոյ վարդապետութեանց առատ և

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:28 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ամենահամ աղբիւրներէն մէկը կրնան սեպուիլ արժանապէս : Քրիստոնէութեան հաստատութեան համար՝ հարկ չի սեպեր իմաստասիրութեան ժուարին ճամբաներէն անցնիլ. “ Յիսուս Քրիստոսէ զատ ուրիշ հեատքննելու բան չունինք , կը՛ սէ . աւետարանը ձեռքերնիս ունենալնէս ետքը՝ անի մը կարօտ չենք ,, : Բայց երանի թէ Տերտուղիանոս հաւատոյ այն լուսաւոր ջահին հետևէր՝ որ Քրիստոս եկեղեցւոյ ձեռքը տուած է . ան տեն թէ յիշատակը աւելի պատուական և թէ հաստատութիւնքն օգտակարագոյն պիտի ըլլային :

ԳԼՈՒԽ ԺԶ.

ՄԻՆՈՒԿԻՈՍ ՓԵԼԻՔՍ

Նուիրա Փելիքսի վարքը. — Գրուածները. — Հոգիա. — Յաղափա ճակատագրի կամ ընդդեմ մանիքեանց :

Մինուկիոսի վարքը. — Հռովմայի մէջ իրաւագէտ և տաբան էր Մարկոս Մինուկիոս Փելիքս , բայց ծնած ըլլալն որոշ չի գիտցուիր , որովհետև ինք հռովմայեցի կը համարուին ղինքը , այլք ալ իկեցի : Հաւանական կերևնայ թէ նախ հեոս էր կրօնքով , և երկար տաեն նոյն մոլեան մէջ կեցած . և հռովմայ մէջ պետուն մատրդ , ինչպէս իր իսկ բերէն , և Լակտանի և Հերոնիմոսի վկայութենէն ալ կերևնայ : ուղիղ ժամանակի և Մինուկեայ Փելիքսի մէջ ոճոյ անալի մեծ տարբերութիւն կը տեսնուի . որով

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:34 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

և կերևնայ Թէ իրարու հետ վերաբերութիւն մը ունեցած ըլլան։

Փէվէսի գրածները. – Մինուկիոսի անուամբը տրամախօսութեան ձևով ընտիր քրիստոնէական կրօնից ջատագովութիւն մը հասած է ձեռնուընիս, Հոկտաւիոս կոչուած։ Երկասիրութեան պատճառն աս եղաւ։ Մինուկիոս փեղիքս երկու բարեկամ ունէր. ասոնցմէ մէկը, կեկիլիոս Նատալիս, որ ափրիկեցի կը կարծուի, Հռոմ իրեն հետ և նոյն տան մէջ կը բնակէր. և Թէպէտ մեծ մտերիմն էր, բայց կարգէ դուրս սէր մը ունէր հեթանոսական կրօնից. և շատ անգամ առիթը գալուն՝ քրիստոնէութեան դէմ ունեցած սուտ լութիւնն ու Թշնամութիւնը խօսքով ալ կը բացատրէր։ Իսկ միւս բարեկամը Յանուարիոս Հոկտաւիոս՝ Մինուկիոս փեղիքսի հետ Հռովմայ մէջ քրիստոնէութիւնն ընդուներ էր, բայց իրմէն հեռու՝ ուրիշ քաղքի մէջ կը բնակէր։

Աշնան ժամանակ այգեկութեքի տաեն՝ Հոկտաւիոս ուզեց քանի մը օրուան համար Հռոմ գալ, ու բարեկամին հետ տեսնուիլ։ Իրեք մտերիմք օր մը խօսք դրին Ոստիա երթալ, և ծովու ջրով բաղնիք մը մտնել։ Ճամբուն վրայ Սերապիս աստուծոյն արձանին հանդիպելով, կեկիլիոս՝ ի նշան մեծարանաց համբուրեց զանիկայ։ Ա բանէս Հոկտաւեայ դժուարն եկաւ, ու կերպով մը յանդիմանեց զՄինուկիոս՝ հետը այնպիսի բարեկամ մը ունենալուն համար, որուն աչուընները դեռ չեն բացուած՝ քարերէն աստուածոց աստուածութիւնն իմանալու համար։ Այնչափ ծանր եկաւ կեկիլեայ աս խօսքս, որ սկսաւ լուիկ ձամբան առաջ տանիլ, առանց բերնէն խօսք մը հանելու։ Ու երբոր տրտմութեանը պատճառն հարցուցին, համարձակ խոստովանեցաւ. և “Այն-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:34 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

չափ աւելի իրաւունք ունիմ դժուարելու, որ-
չափ ձեզմէ զօրաւոր զէնքեր կան ձեռքս կրօնքս
պաշտպանելու ,, : Հոկտաւիոս ասոր առաջարկու-
թիւնն ընդունեցաւ. և զՄինուկիոս սահմանեցին
իրաւունքն և արդարութիւնը վճռող դատաւոր :
Յամանակ անյիշելէն ետքը նոյն տրամախօսու-
թիւնը գրի վրայ առաւ Մինուկիոս Փեղիքս (217)
նտիր և ճարտասան ոճով մը. անանկ որ իր հա-
ւատոյթեանը մէջ անզուգական գանձ մը կրնայ
եպուիլ եկեղեցական մատենագրութեան :

Սլրթոյն Հերոնիմեայ աւետն՝ Մինուկիոսի անու-
վ ուրիշ գիրք մըն ալ կար Յաղագս ճակատագրի
ամ Ընդդէմ մաթեմատիկեանց (De fata, vel contra
ıtematicos). բայց ոճին տարբերութիւնը տես-
լով կը տարակուսի անոր հարազատութեանը
ջ : Մենք ձեռնըմխս հասած չըլլալուն հա-
ո՝ բան մը չենք կրնար զուրցել։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:34 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԼՈՒԽ ԺԷ.

Ս. ԿԻՊՐԻԱՆՈՍ

Կիպրիանոսի վարքը. – Գրուածքները. – Գիրք առ Դոնատոս կամ Յաղագս ընդհատն Ասպածոյ. – Յաղագս ընդունայնաբանեան կռոց. – Վկայաբանքն ընդդէմ Հրէից առ Կուիրինոս. – Վասն հանդերձից կռապանաց. – Յաղագս մեռանելեան էկեղեցւոյ. – Յաղագս անկելոց. – Յաղագս պերճանական աղօթից. – Յաղագս մահուան. – Առ Դեմետրիանոս. – Որիվ ճառելը և խրատելը. – Իրէն ժամանակակից էկեղեցական մարդիկ:

Կիպրիանոսի վարքը. – Կարթագինեցի ազնուական և հարուստ ընտանեաց զաւակ էր Տասկիոս Կեկիլիոս Կիպրիանոս, որն որ թէ իբրև հովիւ և թէ իբրև մատենագիր, եկեղեցւոյ գլխաւոր պարծանքներէն մէկն եղաւ: Տկլտութեան հասակէն մեծ եռանդեամբ հռովմէական և յունական մատենագրութեանց ուսմանը պարապեցաւ. եաքին հռետորութեան դասախօսութիւն ըլլաւ Կարթագինէի մէջ մեծ փառքով և պատուով: Արդէն հայրենի ժառանգութեամբ ստացած մեծութիւնը վրայ՝ աւով ալ ինչքը յաճախելով, ինքզինքը բոլորովին հաճոյից և վայելքի տուաւ: Ինքն իսկ ատրը հայրապետան ալ կը խոստովանի թէ երիտասարդական հասակը չէ զերծ 'ի մոգութենից. բայց նոյն հասակին մէջ աստուածային շնորհք առժանի եղաւ:

Կիպրիանոսի բնակակից էր Կեկիլիոս անուանով

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:34 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մեծարգոյ քահանայ մը, որն որ պատանեւոյն հան-
ձարը տեսնելով վրան աչք և համարմունք ունե-
ցաւ. և քրիստոնէութիւնը վարդապետելով իրեն
կը յորդորէր որ սուրբ գրոց ընթերցմանը պարա-
պի: Քահանային փոյթը և ինամքն անպտուղ չե-
ղան: Կիպրիանոս՝ հոգւոյն մարմնոյ դէմ տուած
պատերազմին երկար տաեն հանդիսատես ըլլալէն
ետքը, Աստուծոյ շնորհքէն յաղթուեցաւ. ու-
րեցածը չունեցածը ալքատաց բաժնեց, և մկրը-
տութեան խորհուրդն ընդունեցաւ (245 կամ 246):

Կիպրիանոս իր դերազանց բարեմասնութեան
ը համար՝ քիչ տաեն ետիպեցաւ քահանայ
եռնադրուիլ: Կարթագինէի Դոնատոս եպիս-
ոպոսին մահուընէն ետքն ալ՝ ինքն առաջարկուե-
ւ յաջորդ: Իրաւ է որ առաքելական տահմա-
դրութեանց դէմ էր՝ նորադարձ հաւատացե-
լ մը եպիսկոպոսութեան պաշտօնը յանձնել,
այց Կիպրիանոսի համար, յորում ամենայն ինչ
րգե դուրս կրնար տեսնուիլ, իրաւացի երեւցաւ
զանցառութիւնն ընել: Բայց ինքն ուրիշ կեր-
ով կը մտածէր. ուստի փախստեամբ ուզեց ծած-
իլ: Ժողովուրդը գտաւ զինքը, պաշարեց ան
նը յորում կը կենար. և այնչափ աղաչեց ու
հանձեց, որ ալ Կիպրիանոս չկրցաւ դէմ կե-
ը: Սակայն այսպիսի ընտրութեան մը վրայ՝ ա-
քը Ժողովրդեան գոհութիւնը չունէին: Փոր-
նատոս, Դոնատոս և ուրիշ հատակաւոր երի-
նք՝ ան պատուոյն կը բաղձային. Կիպրիանոս
Ջանաց անոնց սիրտը առնել. բայց իր սրտին
ն բարութեամբն ալ չկրցաւ փառասիրութեան
Թոյնը մը ձգել:

Կիպրիանոս իր դարձէն և մանաւանդ ժառան-
ոյաց մէջ մտնելէն ետքը՝ մեծ փութով սուրբ
ոմանան տուաւ ինքզինքը. և եկեղեցւոյ ո-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:34 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

գեղոյն կատարեալ տեղեկութիւն մը ստանալու դիտաւորութեամբ՝ իրմէն առաջ եղող ամէն եկեղեցական մատենագրաց գրուածները մտադիրութեամբ կարդաց : Անով սասացաւ իր եռանդը և փոյթը՝ եկեղեցւոյ փառաց և շահուն համար :

Մէկ տարիէն աւելի եպիսկոպոսական աթոռին վրայ չկրցաւ նստիլ Կիպրիանոս. անանկ հոգևոր և եռանդուն այցելուի մը իշխանութիւնը՝ հաճոյ չեղաւ հեթանոսաց. և երբոր 250ին Դեկոս կայսերական աթոռը գրաւելով՝ քրիստոնէից դէմ նոր հալածանք մը հանեց, կարթագինէի կրկիսին և ամփիթէատրոնին մէջ շատ անգամ կը լսուէր. Արիւնոտ պկնդրիանոս տոաջէ գոչանաց : փնտրուեցին զինքն ու չկրցան գտնել. աստուածային հրաման մը ազդեր էր սրբոյն որ առ ժամն ծածկուի հալածչաց ձեռքէն. բայց Թաքաւեան տեղէն ալ չէր դադրեր եռանդուն թղթերով յորդորել զչաւատացեալս և խրախուսել զնրեանք :

Դեկոսի կայսերութենէն առաջ քրիստոնեայք մեծ հանգստութեան և խաղաղութեան մէջ ըլլալով, սկսեր էին թուլնալ. որով Դեկոսի հալածանքը՝ ծանր ազդեցութիւն ընելով վրանին, ոմանք մարդկային տկարութեամբ ինչուան հաւատքէ ալ կելլէին : Ա՛ս խեղճութիւնս թէպէտ շատ տեղ, բայց աւելի կերպով մը կարթագինէի մէջ կը պատահէր : Շատերը կուռց կը ղրկէին. ոմանք ալ մանաւոր վկայական մը կը գնէին՝ կայսեր հրամանը կատարած ըլլալնուն համար : Բայց որովհետև ասոնք բանսի մէջ քրիստոսի հաւատոց համար վկայող մարտիրոսաց հետ ալ վերաբերութիւն ունէին, անոնց օրինակէն և խրատներէն դարձի գալով, կերթային յանձնաբարական Թուղթ մը կառնէին անոնցմէ, յորում վկայք կաղաչէին եպիսկոպոսաց որ անոնց մարգ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:34 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կային տկարութեանն աչք գոցելով՝ դարձեալ ե-
կեղեցւոյ հաղորդութեան մէջ ընդունուին : Ա-
բանս առնէ եղեր էր շատերուն իրենց հաւատո-
ցը մէջ թուլնալու : Կիպրիանոս այսպիսի առնէ
մը ամենայն քաջութեամբ դէմ կեցաւ . բայց իր
հին թշնամիքը՝ անոր աս իրաւացի խստութիւնը
պատճառ առին՝ իրենց օրինաւոր եպիսկոպոսին
դէմ ելլելու , հետերնին ունենալով նաև ան ամ-
բոխը՝ որոնց թուլութեանը դէմ կը կենար Կիպ-
րիանոս : Սուրբ հայրապետը՝ խռովութեան գլխա-
ւորները զատեց ի հաղորդութենէ եկեղեցւոյ .
և երբոր 251ին իր աթոռը դարձաւ , մեկէն մա-
նաւոր ժողովք մը գումարեց , որպէս զի ուրիշ ե-
պիսկոպոսաց խորհրդակցութեամբը քննէ թէ
ինչ կերպ բռնելու է Անկեաց (Lapsi) համար :
Որոն սահմանեցին այնպիսեաց հետ օրինաւոր խըս-
տութիւնը բանեցընել , ծանր ապաշխարանք դնե-
ով վրանին : Բայց աս բանիս դեռ դարման մը չը-
ած , Հռովմայ մէջ ուրիշ մեծ երկպառակու-
ին մըն ալ ծագեցաւ . վասն զի Նովատոս հա-
առականութ քահանայապետ ընտրուելով եւսէ-
ղեր էր Ափրիկէի եպիսկոպոսութը , և մանա-
նգ զԿիպրիանոս իրեն կոլմը ձգել . բայց անի-
ոյ չէ թէ միայն կուռնելիոսի՝ սրբոյն Պետրոսի
ինաւոր յաջորդին պաշտպան կեցաւ , հապա
և ամէն չանքը բանեցուց Ափրիկէի եպիսկոպո-
ոց մտքէն ալ սխալ կարծիքը հանել , և անով ե-
ղեցւոյ մէջ խաղաղութիւնը նորէն հաստատել :
Ա երկպառակութեանց և գժտութեանց վրայ
հատուածոմ մը և կալլոսի հալածանքը սեր-
ւ . որով ստիպեցաւ Կիպրիանոս դարձեալ
ղովք գումարել , և առջինին մէջ անկեղոց հա-
ր սահմանած կանոններուն խստութիւնը մեղ-
ցնել : Ինքն ալ մահուան պատրաստուեցաւ .

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:34 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

և իր օրինակովն և քանիւք խրախուսեց երկու մահացու վանգաց մէջ նստող հօտը, և յորդորեց պիրենք՝ի համակերպութիւն: Կարթագինէի մէջ մահատարաժամի խստութիւնը չափէն աւելի սաստկացաւ: Վախն ու տագնապը բոլոր ժողովրդեան սիրտը տակնուվրայ ըրեր էր. փախչիլ կըցողը՝ քաղաքէն կը հեռանար. դիակունք և կիսամեռ մարդիկ փողոցներու վրայ ընկած կը մնային. անոնց հոտէն օդն ապականելով՝ մահն ալ աւելի կը սաստկանար: Կիպրիանոս կանչեց իր ժողովուրդը, յիշեցուց իրենց քրիստոնէական սիրոյ պատուէրը, զոր առ հալածիչս անգամ պարտական ենք ցուցանել: Ուրբ հայրապետին խրախուսական խօսքերը՝ հաւատացեալց սրտին վրայ մեծ ազդեցութիւն ունեցան. հատարակաց ողորմութեան գործը մէջերնին բաժնելով, ոմանք ստակ կը ժողվէին, այլք հիւանդաց և կարօտելոց կօգնէին, ալ անկէ ետքը մահուընէ չէին վախնար. աւետարանական սէրը՝ հաւատացեալք և անհաւատք անխտիր իրարու մերձեցուց: Հեթանոսք անգամ՝ այսպիսի դիւցազնական սիրոյ մը վրայ սքանչացան: Բայց Կիպրիանոսի իրաւասութեան սահմանքը՝ իրեն սիրոյն սահմանը չեղան: Նումիդիոյ քանի մը եպիսկոպոսունք Կարթագինէ մարդ խրկեցին խմացընելու սրբոյն Թէ աւազակաց այլևայլ խմբեր քրիստոնէից եկեղեցիները մտնելով՝ զանոնք քանդի գերեր էին: Կիպրիանոս՝ իր իշխանութեան տակ եղող հաւատացեալներէն ստակ ժողվեց, և ան գերիներուն փրկանաւորութեանը համար 100,000 սեստերտ խրկեց (55,000 ֆռանք):

Վաղերիանոսի կայսերութեան ժամանակ երբոր հաւատացեալք նորէն խաղաղութիւն ստացան, Կիպրիանոս եռեք եղաւ ժառանգաւորաց կրթութեանն ու անոնց բարեկարգութեանը. և

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:35 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ու նպատակաւ այլևայլ երկասիրութիւնք աշխատասիրեց, և զանազան ժողովք գումարեց։ Այլ ու զբաղմանց ատենն ալ՝ ուղղափառ եկեղեցւոյ մէջ գարձեալ դժուարութիւն մը ծագեցաւ, Միրութեան խորհրդոյն նկատմամբ. որով կիպրիանոս քիչ մը ատեն չդովմայ անոնցմէ հեռաւորեցաւ. վասն զի Սահմանոս քահանայապետը կը պնդէր թէ հերձէլոց մատակարարութեամբն եղած միութիւնը վաւեր չէ. իսկ կիպրիանոս անոր հակառակը կը վարդապետէր։ Ան գժտութեան մէջ ունեցած պզտիկ արատը՝ վկայական առեամբը լուաց կիպրիանոս։

Տասը տարի էր որ կիպրիանոս մեծ փառօք իր հայրապետական պաշտօնը կը փառաւորէր, երբոր Վաղերիանոս կայսրը մանուսուր հրովարտակ մը քրիստոնէից դէմ հալածանք հանեց (257)։ Էփրիկէի փոխարքութեան Ասպասիոս՝ կանչեց կիպրիանոս, և յորդորեց որ կայսերաց հրամանին հնազանդի. և երբոր անոր մտացը հաստատութիւնը տեսաւ, հրամայեց որ աքսորուի։ Քիչ ատեն տարագրութեան մէջ կեցաւ կիպրիանոս. ան զի Ասպասիոսի յաջորդը, Գաղերիոս Մաքսիմոս, եւս կանչեց զինքը. և իր պարտիզին մէջ անապատ քնակութեան տեղ տուաւ անոր։ Սակայն ատ մարդասիրութիւնն երկարատև չեղաւ. ան զի Մաքսիմոս երբոր քրիստոնեայքը դատելու համար Ռոմիկէ գնաց, հրամայեց որ զկիպրիանոս ալ հոն կանչեն դատաստանի։ Սուրբ հայրապետը փութաքելով որ հոն մեռնի, ուր իր ովիդեան բարուցն համար այնչափ աշխատեր էր ատեն ծածկուիլ, ինչուան որ Մաքսիմոսին կատարմանին դարձաւ։ Ան ատեն յայտնի քրիստոնեան կիպրիանոս. և մեկէն բռնուելով անոնցմէ քոռեչների առջևը տարուեցաւ։ Երկ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:35 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

րորդ օրը դատաստանի կանչեց զինքը Մաքսիմոս. հարցափորձը կարճ եղաւ, վճիռն ալ յայտնի. սահմանեցին որ Դակիոս Կիպրիանոս եպիսկոպոսը գլխատուի. և երբոր սրբոյն առ վճիռը կարդացին, անհուով կերպով պատասխանեց. Գոհանի՛ն Աստուծոյ: Հրամանը մեկէն կատարուեցաւ (258):

Կիպրիանոսի գրուածները. — Առաջ ալ յիշատակեցինք թէ բոլոր եկեղեցւոյ երախտագիտութենը արժանի եղած է Կիպրիանոս թէ իբրև եպիսկոպոս և թէ իբրև մատենագիր: Վասն զի եկեղեցւոյ պիտոյքը լաւ ճանչցած, անոր օգտին և բարւոյն համար ունեցած փութոտութենէն զատ, որոնք քրիստոնէական մատենագրութեան հարուստ գործ և պարծանք պիտի ըլլան միշտ արժանապէս: Անոնց մէջ գլխաւորներն են

Ա. Գիրք առ Դոնատոս կամ Յաղագս ընդհանուր Աստուծոյ, որն որ Կիպրիանոսի առաջին երկասիրութիւնը կերևնայ: Ըմբռնուելու թէ ով է առ Դոնատոսը. միայն կը կարծուի թէ նորադարձ հաւատացեալ մըն է, զոր կը յորդորէ Կիպրիանոս՝ որ աշխարհային խաբէութիւններէ զգուշանալով՝ անմեղ և սուրբ սրտով ծառայէ Աստուծոյ:

Բ. Յաղագս ընդհանայնութեան կոյս. — Կիպրիանոսի երկասիրութիւնն ըլլալուն վրայ տարակոյս չկայ: Իրեք մսան բաժնած է. առջինին մէջ կառապաշտութեան սկզբնաւորելուն և էութեան վրայ կը խօսի. երկրորդը համառօտ բովանդակութիւն մըն է քրիստոնէական հաւատոց, Աստուծոյ միութեանը, հոգեղինութեանը և այլն. իսկ երրորդին մէջ Քրիստոսի մարդեղութեան և աստուածութեան խորհուրդը կը բացատրէ՝ մարգարէից խօսքերովը, հրաշքներով, Քրիստոսի յարութեամբ, մարտիրոսաց մահուամբը, և այլն:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:35 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Գ. Վ՚յոանիան ընդդէմ Հրէից առ Կոնիոս. — Իրեք գիրք՝ որ առջինին հետ շատ նմանութիւն ունի: Երեսմոս ասոր հարազատութեանը վրայ տարակուսեցաւ. բայց Հերոնիմեայ, Օգոստինեայ, Գեննադիոսի, Փուլգենտիոսի խօսքերը հաստատակը կը վկայեն: Առջի երկու գրքերը շատ գովութիւն են քրիստոնէական կրօնից ընդդէմ Հրէից. իսկ երրորդը, որուն շարադրութիւնը ետքէն եղած կերևնայ, սուրբ գրոց խօսքերէն քաղուած պատուէրներ են՝ քրիստոնէական կենաց արժանի վարք երևցընելու:

Գ. Վան հանդերձից Լուսանոյն. — Գեղեցիկ երկասիրութիւն մը զոր Հերոնիմոս և Օգոստինոս ալ կը յիշատակեն: Դեկոսի հալածանքէն առաջ շարադրեր է սա ճառս Կիպրիանոս: Եւ որովհետև ինքզինքնին Աստուծոյ նուիրած կուսանաց մէջ ալ ստգտանելու այլևայլ պակասութիւնք կը գըտնէ, հաւանական կերևնայ թէ քրիստոնէական նախնի խստակրօնութիւնը սկսեր էր թուլնալ, Աղեքսանդր Սևերոսի օրերէն ինչուան փիլիպպոս արաբացւոյն ժամանակ վայելած խաղաղութեանը պատճառաւ: Ան անկարգութեանց գարմանն ընելու եռեռ եղեր էր Կիպրիանոս:

Ե. Յաղափ Ֆռնէան Էնէղէոյ. — Երբոր թէ կարթագինէի և թէ Հռովմայ եկեղեցիք տակնուվրայ եղած էին Ֆէլիչիսիմոսի և Նովատիանոսի այլաձայն վարդապետութեամբը (251), ան աւետն շարադրեց Կիպրիանոս սա աքանչելի գիրքը, յորում պարզամիտքը խաբել ուզող նենգաւորաց պատրանքը խայտառակելու համար՝ կը ցուցնէ քրիստոնէութեան և եկեղեցւոյ միութեան սկիզբը: Իրեն ընտրեան գրած է սա խօսքս թէ Աբոտոյ Էնէղէոյ չիտ Ֆրնէան. և սա կարծեցաց հաստատութեանը համար հետևեալ պատճառները

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:35 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մէջ կը բերէ : Քրիստոս մէկ վարդապետութիւն մը միայն ստրվեցուց . և որովհետև անիկայ է միայն առաջնորդողն առ յաւիտենական փրկութիւն , ուստի հարկ է որ միայն անոր հետևինք : Կը ցցըներ թէ հնդհռուածոց և այլևայլ օտարոտի վարդապետութեանց երևնալուն վրայ ամենևին պէտք չէ խռովինք . Քրիստոսի ստրվեցուցած ճամբան միակ կը մնայ . բազմապատիկ վարդապետութենանց և եկեղեցեաց մէջ՝ մի է Քրիստոսի եկեղեցին , զոր գանելն ամենադիւրին է : Վասն զի Քրիստոս երբոր ուրիշ առաքելոց ալ իշխանութիւն և լիակատար իշխանութիւն տուաւ , մէկէն նոյն ատենն զՊետրոս կարգեց գլուխ և կեդրոն միութեան . և Պետրոսի աթոռին մէջ հաստատեց թէ առաքելութեան և թէ եպիսկոպոսութեան միութիւնը : Ա՛ս միութեան մէջ կենդանի է , կըսէ , եկեղեցին . կենդանի է ասլը . հոն է փրկութիւնը :

Այնչափ ազդեցութիւն ունեցաւ Կիպրիանոսի աս երկասիրութիւնը , որ շատ մոլորեալք արտասուօք իրենց յանցանքը քաւելով նորէն եկեղեցւոյ միութեան մէջ մտան [1] :

Զ . Յաղագս անկելոց . — Դեկոսի հալածանաց ըստուերներէն շատ հատատացելոց գայթակղիլը տեսնելով Կիպրիանոս՝ աս ճառս շարադրեց . որուն սկիզբը յիշելով Քրիստոսի եկեղեցւոյն խաղաղութիւնն ու անոր ծոցէն ելած վկայից բազմութիւնը , կուրախանայ . բայց աս բերկրութեան դէմ կելլէ կըսէ ան տխրմութիւնը , որով բազումք իրենց գայթակղելովը՝ Քրիստոսի եկեղեցւոյն խաղաղութիւնը կը վնասվին . “ Ա՛ս մեծ վէրքին վրայ լալու համար , խօսքէն աւելի արտասուք պէտք է ,

1 Հայերէն թարգմանութիւնը տպագրեալ ի Վենետիկ ի տպարանի Մխիթարեանց 1844 :

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:35 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կըսէ, և գեղաք արտասուաց: Կը ցաւիմ, եղբայրք, ձեր վրայ, իմ անձիս առողջութիւնը բաւական չըլլար՝ սրտիս տագնապը մեղմելու. հովիւ մը՝ հօտը վիրաւորուած տեսնելով՝ ինքն ալ կը վիրաւորուի. ապականիչ ժշնամւոյն նեաւելն իմ մարմինս ալ մտան. անոնց տուրը իմ սիրտս ալ վիրաւորեց,, : Ն. յայտնի խօսքերով կըստորագրէ՝ թէ ինչ փորձութեան մէջ ձգեց առաքեալ զհաւատացեալսն. որով չաւելցն՝ առանց դատաւորաց առջևն երևնալու, առանց տանջանաց և բանտի նեղութեան ճաշակն առնելու, յօժարութեամբ զոհեցին կառց. զոհեցին իրենց փրկութիւնը առանց սեղանոյն վրայ, ան մահուան բազնին վրայ՝ իրենց յոյսն ու հաւատքն այրեցին: Բայց սա ալ բաւական չէ. իրենցմէ չաւելը, կըսէ, առանց ապաշխարութեան, առանց իրենց մեղքը լալու, նորէն կուզեն եկեղեցւոյ հաղորդութեան մէջ մտնել. ,, Անդադիկը, կըսէ, առաքեալին բազնէն կը դառնան, և անոնց խնկերովքն և անմաքուր ու պիղծ ձեռներնով կուզեն սէրուբեան սրբարանին մօտենալ. գիւաց մահացուցիչ կերակուրը գեռ բերանին՝ Քրիստոսի մարմնոյն վրայ կիյնան,,:

Ե. Յաղագս պէրռնական աղօթից. — Առջիններէն քիչ եռքը չարադրած է սա պիտքս Կիպրիանոս, (252) վոր սուրբն Օգոստինոս շատ կը գովէ, և այլևայլ տեղեր անկէ վկայութիւն կը բերէ: Իրեք մտան կը բաժնէ սա գիրքը. նախ տէրունական աղօթից գերազանցութեանը վրայ կը խօսի. և թէ ինչպէս մեծ է անոր զօրութիւնը, մինչգեռ նոյն ինքն որդին Աստուծոյ է մեզի սորվեցնողը: Երկրորդ գիրքը Հայր մերի մեկնութիւն է. իսկ երկրորդն այլևայլ իրատներ կը բովանդակէ. օրինակ իմն, թէ ինչպէս արժան է որ մենք ալ Քրիստոսի նմանելով՝ ամենուն ու նաև մեր թշնամեաց համար ալ աղօթենք, և այլն:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:36 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ը. Յաղագս մահուան. — Առաջ ալ յիշատակեցինք թէ ինչպէս համաձարակ մահտարաժամ մը բոլոր քաղաքը տակնուվրայ ընելով ինչուան կարթափինէ ալ հասաւ, և քրիստոնեայքը զարհուրեցուց: Սուրբն Կիպրիանոս անոնց լքուելը և վախը տեսնելով՝ ջանաց առ գլխովս միխթարել զնոսա և քաջալերել, տրվելցընելով թէ քրիստոնէի մը համար մահը չէ թէ միայն երկիւղալի, այլ մանաւանդ թէ փափաքելի պիտի ըլլայ: 252–254ին առեննելը շարադրեց առ գիրքս:

Թ. Ն՝ Դեմետրիանոս. — Քրիստոնէական կրօնից ջատագովութիւն մըն է: Կարթագինեցի էր Դեմետրիանոս, ու նոյն քաղքին մէջ տէրութեան պաշտօնեայ. և քրիստոնէից դէմ անհնարին աւերութիւն մը ունենալով, չարչք չէր թողներ որ չգործեր: Կիպրիանոս շատ անգամ խօսեր էր հեռուն այն անգթութեանցը դէմ. բայց փոխանակ օգտի մը պատճառ ըլլալու՝ կարծես թէ աւելի կը գրգռէր զինքը: Նոյն առեննելն ընտանի պատերազմներով հռովմէական տէրութիւնը տակնուվրայ եղած՝ տովով ու հիւանդութեամբ ալ շատերը կը մեռնէին: Դեմետրիանոս առ ամէն աղէտից պատճառ քրիստոնեաները սեպելով՝ հատարակաց թշնամութեան և աւերութեան արժանի կը սեպէր զնոսա: Սակայն սուրբն Կիպրիանոս գրով անոր ամբաստանութեանց պատասխանը տալ՝ (253):

Անոնցմէ զատ գրած է Կիպրիանոս

Ժ. Վասն ընդդատութեան մարտիրոսութեան առ Փորփոնիոս, Փոլտունատոս եպիսկոպոսի մը խընդրանօք. բայց անկատար երկասիրութիւն կը սեպուի.

ԺԱ. Յաղագս գործոց և ողորմութեան.

ԺԲ. Յաղագս օգտի համբերութեան.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:36 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԺԳ. Վան նախանյա-օրութիան և նախանյա։ Թողլ իրեն ուրիշ ուրիշներ՝ որոնք լի են հոգւով Աստուծոյ և կրօնից։

Իրեն ժամանակակից մատենագիրքն են Նովատիանոս, Վիկտորինոս, Կոմմոդիանոս, Առնոբիոս, և այլն, որոնց վրայ չենք ուզեր խօսքերնիս երկընցընել։

ԳԼՈՒԽ ԺԲ.

ԼԱԿՏԱՆՏԻՈՍ

Լակտանտիոսի վրայ. — Գրուածները. — Յաղագս վարդապետութեան Աստուծոյ. — Սահմանադրութիւն աստուածայնոց. — Յաղագս բարութեան Աստուծոյ. — Յաղագս մահու հալածչաց. — Քրիստոնէութեան ինչուան երբոր դարուն վերջերը երեցած անհարազատ գրուիւնք. — Անհարազատ ատեփարանք. — Պատմութիւն Յովնէթայ դարբնոյն և հիւսանին. — Գիրք մանկութենէն Յիսուսի. Սիբիլլայք. — Կարգ երկարատեան նահապետաց։

Լակտանտիոսի վարքը. — Առնոբիոսի աշակերտ էր Փիրմինիանոս Լակտանտիոս, զոր ոմանք ափրիկեցի, ոմանք ալ Իտալիոյ Փիրմիոն (Firmium Ֆիրմիոն) քաղաքէն կը համարին, և ան պատճառաւ Փիրմինիանոս կոչուած։ Ինչպէս Առնոբիոս, սանկ հաւանական կերեւնայ թէ Լակտանտիոս ալ նախ հեթանոս եղած ըլլայ, ու իր վարդապետէն եաքը քրիստոնէութիւնն ընդունած։ Պատանեկութեան տեղն ուսումնական երկասիրութիւն մը չհրատարակելով այնչափ մեծ անուն ունեցաւ, որ Դիոկղետիանոս կայսրը Նիկոմիդիա

խրկեց զինքը, հոն ճարտասանութեան և հռետորութեան ուսումը սորվեցընելու համար: Բայց Նիկոմիդիա՝ Յունաց քաղաք ըլլալով, քիչ հռովմայեցիք կը գանուէին. ուստի Լակտանտիոսի աշակերտքն ալ սակաւաւոր ըլլալով, բովանդակ ժամանակը գրաւորական պարապմունքը կանցընէր, ինչպէս ինքն ալ կը վկայէ:

Տասը տարի այսպիսի կեանք մը անցուց Նիկոմիդիոյ մէջ, մինչդեռ քրիստոնեայք հալածանքի մէջ էին ոչ միայն կայսերաց և անոնց պաշտօնատեարց սրէն և կրակէն նեղուելով, հապա նաև բանիքեան հեթանոսաց դրչէն: Ան վերջիններուս նախատանացն և անիրաւ մեքատանութեանց դէմ զքրիստոնեայս պաշտպանելը պարտք սեպեց Լակտանտիոս. որովհետև համոզուած էր լեզուաքննութենէն շատը կը նախատեն զքրիստոնեայս առանց գիտնալու ճանչնալու, կամ վնասին կատարեալ տեղեկութիւն մը ունենալու: Նիկոմիդեայ էն կեղտաց աշխատելը կանչեց զԼակտանտիոս կատանգիանոս՝ իր կրնապոս որդւոյն դաստիարակ կարգելու համար. անկէ քիչ մը ետքը հանգիպեցաւ Լակտանտիոսի մահը:

Լակտանտիոսի գրուածները. — Իր հաստատուն համոզութեամբն ու հանճարին մշակութիւ՝ ժամանակին ամէն իմաստասիրութենէն վեր եղաւ Լակտանտիոս: Ինքն աշխատասիրեալ էր վիճակաւ և հռետորասրուեստիւ. բայց իր գրուածոց մէջ անանկ ոսուսմնական տեղեկութիւններ կը գտնուին որ կը զարմացընեն զընթերցողս. լեզուն բացայայտ, խօսքն ոճով և կարգաւորեալ, պարզ ճարտասրութիւն մը, առանց սրուեստասկութեան. անոր համար ալ է որ իրաւամբ Կիկերոն փրիսկոնեայ կոչուած է. որովհետև հին հարց մէջ մեկը չկայ, (բաց ի Ս. Ամբրոսիոսէ՝ իր մեկ քանի գրուածո-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:36 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ցը մէջ.) որ Լակոնականոսի ոճին գերազանցութիւնն ու խօսքերուն կարգաւորութիւնն ունենայ : Իրեն գրուածոցը մէջ գլխաւորներն են

Ա. Յաղագս վարդին Ասիոյ. – Քրիստոնէութիւնն ընդունելէն ետքը շարադրած երկասիրութեանց մէջ առջինը կը նկատուի այսկայ : Դէմեարիանոս անունով մէկու մը ընծայած է այս գիրքը, որ նախ իրեն աշակերտութիւն կընէր ու ետքը տէրութեե պաշտօնեայ : Գլխաւոր նիւթն է մարդկային բնութեան սկիզբը քննել, որուն վրայ շատ աշխատեցաւ, կըսէ, Կիկերոն՝ իր իմաստասիրական գրոց մէջ հաստատուն բան մը ըսելու. բայց չկրցաւ. ուստի իրեն Թերի Թողուցածն ուզեց Լակոնականոս կատարելագործել : Նախ ան կը ցցընէ Թէ ինչ համեմատութիւն կամ նմանութիւն կայ կենդանեաց և մարդուս բնութեանը մէջ. և Թէ ինչպէս աստուածատուր կարողութիւն մը տարածուած է ի վեր և գերազանց քան զամենայն բնական կարողութիւնս կենդանեաց : Դէմ կը խօսի ան իմաստասիրաց, և ի մանաւորի եպիկուրեանց, որոնք վմարդս անարգ և նուաստ արարած մը սեպեցին. և անոր սկիզբէն կամ ապրելագործութենէն կը ցցընէ նաև հոգւոյն և արարչին գերազանցութիւնը :

Բ. Սահմանաբանական ասպարէզին, ի նմին գիրս. – Ընդարձակ ջատագովութիւն մըն է քրիստոնէական կրօնից : Ան երկասիրութեան պատճառ իր մէկ մտածութիւնն եղած է, Թէ ինչպէս մարդիկ իրենց յանցանքովը ուղիղ ճանապարհէն մոլորեալ՝ չեն կրնար յաւիտենական կեանքն առնել. ուստի աս գրքովս կուզէ առաջնորդել իրենց առ այն ճանապարհը, և անոր մէջ եղած. նեերն ալ խրախուսել՝ անխոտոր առաջ երթալու : Մեծին կատանդիանոսի ընծայած է աս գիրքս,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:36 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

զորն որ մեծամեծ գովութեամբ կը դրուատէ՝ իբրև առաջին իշխան քրիստոնեայ և նորոգիչ արդարութեան: Ա՛ն ընդարձակ գրքին եռքը հա-մառօտութիւնն ալ շարադրած, և Բովանդակու-թի՛ւն սահմանադրութե՛ան կոչելով պենտատիտա անու-նով մկրտու մը նուիրած է, զոր իր սրդին կը կոչէ:

Գ. Յաղագս Բարսեղեան Աստուածոյ. — Ուրիշ անգամ ալ ըսինք թէ ինչպէս յունական խմաստասիրութիւնը, և իրեն հետևող գնոստիկեան խմաստասէրքը՝ չէին կրնար Աստուծոյ սաորոգե-լեաց մէջ անոր արդարութիւնն ու բարութիւնն իրարու հետ համաձայնեցընել: Ա՛յսպիսի սխալ կարծիք մը բժշկելու համար շարադրեց Լակտան-տիոս սա ճառը, որ նաև ըստ սրբոյն Հերոնիմեայ՝ շատ հմտութեամբ և ճարտասանական աշ-խուժով գրած է:

Դ. Յաղագս մահու հալածչոյ. — Բանասէրներէն ոմանք ուզեցին ցցընել թէ սա երկասիրութիւնս Լակտանտիոսի չէ. սլսվհետև միակ գրչագրին մէջ որ Վեռուրնիս հասած է, և որուն վրայէն Պալուտիոս առաջին տպագրութիւնն ըրաւ՝ի փա-րիզ (1679) Լուդովիկոսի կեսիլիոսի ընծայուած էր և ոչ Փիրմինիանոսի Լակտանտեայ: Բայց հարազա-տութիւնն երկբայելի ցցընելու բաւական պատ-ճառ չկայ: Հերոնիմոս՝ Լակտանտիոսի անուամբը Յաղագս հալածանաց գիրք մը կը յիշատակէ, և ո-րուն նիւթը կերևնայ թէ նման ըլլայ յիշատակած-նուս. ոճն ալ իրենն է. ուստի անուան տարբե-րութիւնն այնչափ մեծ սեպելու չէ. սլսվհետև ոմանք՝ի գրչագրաց՝ Լակտանտիոսի ուրիշ ա-նուանցը հետ կեկիլիոս կամ կեղիոս ալ կը յիշատակեն: — Ա՛ն գրքիս գլխաւոր նպատակն է պատ-մական ոճով քրիստոնէական կրօնից ճշմարտու-թիւնը ցցընել, և թէ ինչ ողորմելի և թշուառ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

վախճան ունեցան անոնք որ Քրիստոսի եկեղեցւոյն հետ կռուեցան։

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵՍԱՆ ԱՆՁՈՒԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՐՈՒՆ ՎԵՐՋԵՐԸ ԵՐԵՒՑԱԾ ԱՆՀԱՐԱԶԱՏ ԳՐՈՒԹԻՒՆՔ.— Առաջին քրիստոնեայ կայսերը մեծին Կոստանդիանոսի յաղթութեամբն արդէն հոգևարքի մէջ եղող հեթանոսութիւնը բոլորովին ընկաւ. իր սրինուածքը փորձերը դադրեցան, այնպէս որ քանց նոյն աստուածային կրօնքն անհետ ընել. ան առեն՝ եկեղեցւոյ խաղաղութեան օր մը սկսաւ։ Լակտանտիոս՝ քրիստոնէական մատենագրութեան միջոցը կը գոցէ. մենք ալ իրմով կը գոցենք ան մատենագրաց շարքը՝ որոնք քրիստոնէութեան՝ կայսերաց և ատտանային դէմ տուած պատերազմը ներսն ատեն երևցան։ Միայն կուզենք հետաքրքրքիր բանասիրաց համար երկու խօսք ընել ան քանի մը անհարազատ գրութեանց վրայ՝ որ սա միջոցներուն մէջ երևցան։

Անհարազատ ա-էպարխ.— Ատոնց մէջ գլխաւորը կը սեպուի Նիկոդեմոս ա-էպարխը։ Թէ որ մատենագրին խօսքին ուզենանք հաւատալ, սա գիրքս Նիկոդեմոս չարադրեց ու Հրէից քահանայապետին ընծայեց, զոր եաքը Անանիա անունով մէկն 'ի յոյն լեզու փոխեց։ Կըսկսի Քրիստոսի տեառն մերոյ Պիղատոսի առջև ամբաստանուելէն, և բաց 'ի սուրբ աւետարանաց մէջ պատմուածներէն այլևայլ ուրիշ պարագայք ալ կաւելցընէ։ Կը պատմէ թէ ինչպէս Քրիստոս յարութեանէն եաքը դժոխք ընջաւ. և լաւ կերպով կըսատրագրէ նահատակութեան ուրախութիւնը, դիւաց տագնապը՝ որոնցմէ առաւ Քրիստոս իրենց ամէն զօրութիւնը, ու զիրենք չղթայիւք կապկըպեց։

Պապոնիոս Յովհեփայ պարբնայն և հիւսանն.— կերևնայ թէ նախ աստրի լեզուով գրուած ըլլայ,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ուսկից եաքն արտաբերէն Թարգմանուեր է : ՊատմուԹիւնը , զոր իրաւամբ առակ կրնանք կոչել , ասէ : Քրիստոս օր մը ձիԹենեաց լեռան վրայ նստելով՝ աշակերտացը հետ կը խօսէր Թէ ինչուան երկընքին եկած է յերկիրը . և Թէ ինչպէս Ադամայ և իր որդւոցը համար պիտի մեռնի , և՝ ի կատարած աշխարհքի գայ՝ ի դատել զկենդանիս և զմեռեալս : — Ա՛ս խօսքերէս՝ մէկէն Յովսէփայ պատմուԹեանը կանցնի : Բարեպաշտ Հրեայ մը վրայ և կենացը մէջ՝ պարզուԹենէ զատ ուրիշ բան չի կրնար եղԹադրել : Նկարագիրք քիչ են ընդհանրապէս . աւելի շատ է բարոյականը :

Գիրք Մանուէլեան Յիսուսի . — Արտաքսուց լեզուով կը գտնուի ասոր գիրքը , ուսկի կերևնայ Թէ մեր լեզուովն ալ Թարգմանուեր է : Քրիստոսի ծննդենէն կըսկսի , և կը պատմէ ան ամէն դէպքերն որ տուրբ աւետարանաց մէջ կը բովանդակուին . բայց աւելի զարդարուն ոճով մը , մանաւանդ դէպ ի Յնգիպտոս ըրած ճամբորդուԹիւնը : Կը պատմէ Քրիստոսի դարձը ի ՆազարէԹ , և կը շարունակէ իրեն վարքը՝ մինչև երկոտասանամեայ՝ Երուսաղէմի տաճարն երԹալը : Ա՛ս է Գիրք Մանուէլեան Քրիստոսի կոչուածը , որն որ արժանապէս յիմարական գրուԹիւն մը կը սեպուի . և կարծես Թէ մարդեղուԹեան խորհուրդին հրաշալիքը ծաղր ընելու մտքով գրուած է հերձեալ կամ անհաւատ անձէ մը : Ասոր նման է նաև Թովմայի աւետաբերչին անուամբը գտնուած ա՛պոկրիֆոնը , ևն :

Սիբիլլայի . — Հին Յունաց և հռովմայեցւոց պատմուԹիւններէն գիտենք Թէ ով էին Սիբիլլայք : Ա՛րդարեւոհի աեսուած կանայք՝ հին հեԹանոսաց աչքին առջև աստուածոց գալանեայն և առնոնց խորհրդոցը խեղճուցուս , որով և մեծ արանաց արժանի անձինք կը սեպուէին : Հերոդոտոս կը

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մէջ հռովմէական տէրութեան սահմանադրութեանցը վերաբերեալ հարկաւոր տեղեկութիւնք կային, հրամայեց որ ամենայն խնամքով կապիտոլիոնի մէջ պահուին: Իսկ երբոր Սիլլայի և Մարիոսի ժամանակ կապիտոլիոն այրելով մէջի եղած գրքերն ալ փճացան, մանաւանդ մարդիկ խրկեցին հռովմայեցիք յԵրիտրէա, յԱփրիկէ և յԱսիա, որպէս զի Սիբիլլայից անուանքն եղած պատգամները ժողվեն, որոնք հազարի չափ ելան: Ան ատեն տէրութենէ սահմանուած այլևայլ անձինք՝ զանոնք քննելով մէջի եղած անհարազատ պատգամները դուրս ձգեցին:

Հիմա մեր ձեռքը հասած Սիբիլլայից պատգամներն ուրիշ գիրք են, որոնց վրայ Մայ իննեորդ մըն ալ աւելցուց, Միլանոյ ամբրոսեան գրատան մէջէն, զոր 1817ին հրատարակեց: Հռոմերական բարբառով և անոր գործածած վեցաչափ ոտքովը գրուած են. տեղ տեղ անոր գեղեցկութիւնքն ալ կը յիշեցընեն. բայց աւելի շատ տեղ մանաւանդ յատկութիւն մը չունին: Գրչագրաց այլևայլութեանը պատճառաւ՝ երբեմն անիմանալի կը մընան. և թէպէտ շատ աշխատեր են բանասէրք այնպիսի տեղւոյնքը պարզելու, բայց ամէն անգամ չեն յաջողած:

Տեսանենք թէ ինչ կը բովանդակեն ասոնք, որպէս զի ըստ այնմ կարենանք քննել իրենց հարազատութիւնը:

Առաջին գրոց մէջ (տող 295) Սիբիլլայն ինքզինքը Նոյի հարսը կը կոչէ, և թէ իրեն հետ տասը ալանին մէջն էր: Ուրիշ տեղ (Գ. 746) թէ Բաբելոնէն յառնաստան խրկուեցաւ և հոն Երիտրէա կոչեցաւ, որ անմօխ պոխօս ըսել է. և թէ հոն եղած ատենը սահմանեց զինքը Աստուած՝ անցեալը պատմել և հանդերձեալը գուշակել: Ուսոի կը

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

պատմէր արարչագործութեան պատմութիւնը, մարգկային ազգին նախահարցը վրայ կը խօսի, և թէ ինչպէս Նոյի առեն ջրհեղեղ պատահելով բոլոր աշխարհք ապականեցաւ: Նոյէն ետքն երկրորդ ապականութիւնն եղաւ յաշխարհի, երբոր չորս մեծ ասիական պետութիւնք երևցան: Կաւետարանէ փրկչին գալուստը յաշխարհ. իրեն հրաշքները, չարչարանքը, աշակերտացը քարոզ նեզութիւնքը, և այլն. մանաւոր և բացայայտ կերպով կը խօսի Հռովմայ, Եեռին և աշխարհի կատարածին վրայ:

Ա՛ս Սիբիլլայից գրքերուն հարազատութեանը վրայ ուզելով խօսիլ, դիտելու արժանի բան մը կը տեսանենք, որ երկրորդ և երրորդ դարուն քրիստոնեայ մատենագիրք՝ հին և նոր կտակարանաց վաւերական խօսքերուն վկայութիւններէն զատ ոտէպ կը յիշատակեն նաև աս սիբիլլեան պատգամները. որով կերևնայ թէ անոնց խօսքերուն կամ գրուածոց հարազատութեանը վրայ չէին տարակուսեր, այլ մանաւանդ թէ հարկաւոր կը սեպէին այնպիսի զէնքերով յաղթահարել զհեթանոս: Բայց չորրորդ դարուն՝ երբոր հեթանոսութեան քրիստոնէից դէմ տուած պատերազմը դադրեցաւ, ետքի եկող հայք՝ այնպիսի գրուածները մանաւոր մտադրութեան արժանի չէին սեպեր. ուստի և ոչ ալ վրանին խօսք մը կընէին: Իսկ սուրբն Օգոստինոս՝ իր Յաղագս քաղաքին Աստուծոյ կոչուած գրքին մէջ անհարազատ, և շատերը գնոստիկեան հերետիկոսաց խարդախութենէն կը սեպէ: Ետքի եկող թէ ուղղափառ և թէ նորալանդ բանասէրք՝ ոմանք իբրև անհարազատ կը մերժեն, ոմանք կընդունին. այլք ալ, թերևս աւելի հաւանականաբար, հարազատաց հետ անհարազատներն ալ խառն կը սեպեն:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կոչ էրիպատան Նահապէտոյ. – Ինչպէս Սիբիլլայից գրքերը քրիստոնէից ձեռքովը շարադրուեցան՝ հեթանոսքը դիւրաւ հաւատոց աշակերտելու համար, նոյն նպատակաւ՝ Հրէից համար շարադրեցան ոս կոտակքը: Ամէնքը միտձայն են թէ քրիստոնեայ մըն է ատոնց հեղինակը. և կերևնայ թէ Քրիստոսի 70 թուականէն ետքը շարադրած են, որովհետև Որոգինէս ալ կը յիշատակէ և ատոնց հնութիւնը կը մեծցնէ: — Ատոնց Թարգմանութիւնը մեր հայկական գրոց մէջ ալ կերևնայ:

ԳԼՈՒԽ ԺԹ.

ԵՒՍԵԲԻՈՍ ԿԵՍԱՐԱՑԻ

Եւսեբէայ վարքը. – ժամանակագրութիւնը. – Եկեղեցական պատմութիւն. – Նոյն Երկասիրութեան վերբերեալ այլևայլ գրուածներ. – Պարապմունքն աւետարանի. – Յուզումն աւետարանական ճշմարտութեանց:

Եւսեբէայ վարքը. – Եւսեբիոս՝ որն որ սրբոյն Պամփիլեայ վկայի մատենից ըլլալուն համար անոր անունն ալ վրան առաւ, պաղեստին ծնած է Քրիստոսի 264 թուականին, և իր ուսմունքն Ականի քաղաքին մէջ կատարելագործած. ետքէն պաղեստինու Կեսարիա քաղքին եպիսկոպոս ձեռնադրուելով (315). հոն մեռաւ (340): Իր գործոն ամէնէն աւելի գիտուն մարդկնեերուն մէկն եղաւ Եւսեբիոս, և զանազան երկասիրութիւնքն անուանի թէ իբրև պատմագիր և թէ նախանձաւոր պաշտպան եկեղեցւոյ: Իր պատմական երկասիրութիւնքն երկու կարգ կը բաժնուին. վան

ղի ոմանք ժամանակագրական և արուեստին պատմութեանց կը վերաբերին, իսկ այլք՝ եկեղեցական պատմութեան: Ամենքն ալ զատ զատ հատուածարանական երկասիրութիւններ ալ ունին:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ. — Եւսեբեայ ամէն ջանքն՝ իր դասընած հատուածին բարգաւաճանացը նուիրուած էր: Նոյն վախճանաւ ժամանակագրական ուսմանց ալ եռանդ ետաւ, որպէս զի ցցընէ թէ ինչպէս մեծ վաստակութեան արժանի են հին կատարածներուն պատմութիւնը շարադրող անձինք: Ասոր համար ըրած աշխատութիւնը մէկ գրքի մը մէջ ամփոփեց, ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ կամ ԸՆԴՀԱՆՈՐ ՊՕՊՄՈՒԹԻՒՆ անուանելով: Առջի մասին մէջ՝ զոր ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ կը կոչէ, ամէն ժողովրդոց և պետութեանց սկզբանն ու ծագման վրայ կը խօսի, աշխարհիս արարչութենէն մինչեւ Քրիստոսի 325 թուականը: Նոյն մասին մէջ այլեւայլ հին մատենագրաց գրուածներէն հատուածներ կը բերէ, որոնց ամբողջ երկասիրութիւնը մեր ձեռքը հասած չէ. զոր օրինակ Ալեքսանդր բազմավէպ, Բերոսոս, Աբիւդենոս, Մանեթոն, Կաստորը, և այլն:

Իսկ երկրորդ մասը՝ որ կանոն ԺԱՄԱՆԱԿՈՑ կը կոչուի, ժամանակագրական ախտանիշներ կը գրաւէն, Աբրահամու կոչմանէն (Քրիստոսէ 2017 տարի առաջ), մինչև իրեն ժամանակը: Եւսեբիոս այս ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆս շարադրելու համար իրեն առաջնորդ բռնեց Յուլիոսի Քաեստեայ Ափրիկանոսի երկասիրութիւնը, զոր որ գրեթէ ամբողջ ընդօրինակեց՝ թերի տեղւանքը Մանեթոնի, Յովսեպոսի Փլաւեայ և ուրիշ հին մատենագրաց խօսքերովը լցացընելով:

Եւսեբեայ ժամանակագրութեան լատինական թարգմանութիւն մը ունէին եւրոպացիք, զոր որ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

տուլքն Հերոնիմոս աշխատասիրած էր։ Բայց իրեն երկասիրութիւնը թարգմանութիւն չի կրնար սեպուիլ, այլ առ առաւելն նմանողութեամբ յօրինուած. որովհետեւ ոչ միայն ինչուան իր օրերը շարունակեր էր, այլ նաև բուն սկզբնագրին մէջ իրեն կարևոր երևցած փոփոխութիւնքն ըրեր էր։ Ցունարէն բնագիրը բոլորովին կորսուած է, և Թէպէտ Գէորգ Սիւնկելոս՝ իր համանուն երկասիրութեանը մէջ Եւսեբեայ գրքէն այլևայլ հատուածներ մէջ կը բերէ, ինչպէս նոյն ինքն Եւսեբիոս ալ Պոթրոպոլիտեան եպիսկոպոսի կոչուած գրքին մէջ, բայց բանասէրք սկսեր էին տարակուսիլ, և կարծել Թէ Եւսեբիոս միայն ժամանակագրական աղիւսակը շարադրած ըլլայ. իսկ առաջին մասն անստոյգ կամ անհաւաստի։ Սակայն անուանին Սգալիձէր ատոնց կարծեացը դէմ եղաւ. և հնոց այլևայլ գրքերուն մէջ գտնուած հատուածներուն մէկ գրքի մէջ խմբելով՝ ուզեց ցցնել Թէ Եւսեբիոս չէ Թէ միայն երկրորդ՝ հապա նաև առաջին մասին հեղինակն է։

Երբոր եւրոպացի բանասէրք այսպիսի երկբայութեանց մէջ էին, հայկական մատենագրութիւնն իրենց ամէն տարակոյսը փարատեց։ 1792ին կոստանդնուպոլսեցի հայազգի մը՝ Գէորգ Ցովհաննիսեան, ամբողջ գրքին հայերէն Թարգմանութիւնը գտնելով՝ վենետկոյ միխիթարեան միաձանց խրկեց։ Անոնց աշխատասիրութեամբը՝ Եւսեբեայ ասոնկալի երկասիրութիւնը, ու հայկական բնագրին հետ մեկտեղ բոլոր Եւրոպիոյ ծանօթացաւ[1]։

Եւսեբիոս իր ժամանակագրութեանն առաջին

1 Աշխատութեամբ Հ. Միքիթ Վրդապետի Աբգեբեան. Վենետիկ 1818։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

գրքին մէջ՝ մանաւոր յառաջաբանով մը կը ծանուցանէ թէ ինչ կարգ և ոճ բռնած է աս աշխատասիրութիւնը գլխաւորելու համար, և թէ ինչ դժուարութիւններ քաշած։ Գառնունքութիւը գլուխ բաժնուած է. առջի քսանուերկուքին մէջ քաղդէացւոց, Ասորւոց, Մարաց, Լիւդացւոց, Պարսից, Հեբրայեցւոց, Եգիպտացւոց պատմութիւնները կաւանդէ. ինչպէս նաև պտղոմեան Թագաւորաց շարքը։ Ան առջի մասին յունական սկզբնագրին մեծ մասը կը գանուի Սիւնկելղոսի ու Եւսեբեայ Պաֆրսոփոլիւն աւէփորանի գրքին մէջ։ Բայց երկրորդ մասը, կամ թէ ըսենք՝ քսաներորդ երրորդ գրքէն ինչուան վերջը, աւելի ճոխ է, և ինչուան մեր օրերն անծանօթ մնացած տեղեկութիւններ կը բովանդակէ։

Սէնթ-Մարթէն գաղղիացի բանասէրը՝ որ հայկական լեզուի ալ բաւական տեղեկութիւն ստացեր էր, ասանկ դատաստան մը կընէ Եւսեբեայ քրոնիկոնին վրայ. "Ան այլևայլ հատուածները, կըսէ, զորս Եւսեբիոս՝ Բերոսոսի, Աբիւդենեայ, Կեփալիոնի և ուրիշ մատենագրաց գրքերէն հաւաքեց, կամ թէ ըսեմ՝ բազմավէպն Ալէքսանդրի ժամանակագրութենէն գաղափարեց, մտադրութեան արժանի հատուածներ են. բայց գործածելը դժուարին, ինչպէս նաև ան ամէն տեղեկութիւնքը զորս հիմնեալը տուած են Ասորւոց, Բաբելացւոց և Մարաց վրայ. գրուածքին աս մասն աւելի և հարկաւոր տեղեկութիւնք կը բովանդակէ։ Ջեմ ուզեր խօսիլ ան Թագաւորաց վրայ՝ որոնց համար Բերոսոս կենթադրէ թէ հազարաւոր դարեր Թագաւորած ըլլան Բաբելոնի վրայ. վասն զի յայտնի է որ այդպիսի բաներ քննութեան արժանի չեն։ Բայց մանաւոր մտադրութեան արժանի են ան անցքերը զորս ետքը կա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ւանդէ : կըսէ թէ Շամիրամայ օրուընէն շատ ա-
ռաջ Մարք տիրած ըլլան Բաբելոնի . որոնք նախ
երկու հարիւր քառընչորս տարուան մէջ ունէր
Թագաւոր , և անկէց ետքը տասնըմէկ իշխան ու-
նեցան : Ասոնցմէ ետքն ալ ուրիշ չորս հարիւր
չիսունըուեթը տարուան միջոցի մէջ ալ՝ քառասու-
նըմինը քաղդէացի Թագաւորք իշխեցին . որոնց յա-
ջորդ եղան իններ արաբացի Թագաւորք՝ երկու հա-
րիւր քառասունըհինգ տարուան մէջ : Ասոնցմէ ա-
ռենէն ետքն իշխեց Շամիրամ . . . : Եւսեբիոսի չի-
շատակած այլևայլ մատենագրաց հատուածները
մեծապէս օգտակար են Թագաւորութեանց և
մարգարէից գրքերուն մութ տեղուանքը պարզե-
լու . և շատ լոյս պիտի ընծայեն Պողոմէոսի ա-
նուամբը գտնուած հռչակաւոր ժամանակագրա-
կան կանոնին : Նոր Եւսեբեայ պատմածներէն
յայտնապէս կիմացուի Թէ կանոնին մէջ չիշա-
տակուած Թագաւորները , մինչև ի Նաբուպաղ-
սար հայր Նաբուգոդոնոսորայ , Ասորւոց կամ
Նինուէի Թագաւորներուն հպատակքը կամ վի-
ճակաւորքն էին . ասոր բանս կը համաձայնի սուրբ
գրոց խօսքերուն , և Հերոդոտեայ պատմած այլ-
եայլ անցիցը հետ ,, :

Եկեղեցական պատմութիւն . — Տասն գրքի մէջ ամ-
փոփուած է աս երկասիրութիւնը , քրիստոնէու-
Թեան սկզբնաւորութենէն մինչև 324 Թուականը ,
կամ ուղղափառ եկեղեցւոյ յաղթութիւնը ի վե-
րայ արիոսեան աղանդոյ : Ան գիրքս վարդապե-
տութեան (dogme) պատմութիւն չէ , որովհետև
հեղինակին գիտաւորութիւնն էր , ինչպես ինքն
ալ կը խոստովանի առաջին գրոց մէջ , առաքելոց
յաջորդութիւնը ծանուցանել , և ան մարդկանց
պատմութիւնն ընել , որոնք եկեղեցւոյ գլուխ կե-
նալով՝ նշանաւոր եղան իրենց առաքինութեամբ

քը, և կամ գրուածքով աստուածազգեցիկ հաւատոց պաշտպանութիւն ըլլին. աւելկուելիւն մը ուսլ ան ամէն անձանց վրայ, որ սուտ և օտար բաձային վարդապետութիւն սփռելու եռանդ ունի. նկարագրել ան թշուառութիւնքը՝ որոնք հրէական ժողովրդեան վրայ հասան՝ ի պատուհաս անոնց Քրիստոսի դէմ ցցուցած անգթութեանը. և թէ ինչ դառն հալածանաց համբերեցին հաւատացեալք՝ երբոր կայսերաց մոլեգին նախանձայուզութիւնը զինուեր կը չարչարէր, ինչուան որ Կոստանդիանոսի թագաւորութեամբը քրիստոնէութիւնը յաղթանակեց: Եւսեբիոս աս պատմութիւնս շարադրելուն առեն՝ ուրիշ երկրորդական նպատակ մըն ալ ունեցաւ. ապագայից ծանուցանել ան ամենուն անուանքը՝ որոնք իրմէն առաջ սրբազան պատմութիւն շարադրելու եռանդ ելան: Բայց իր ամենէն մեծ ջանքն էր՝ ոչ այնչափ հրապանգել զհաւատացեալս՝ որչափ հեթանոսաց ձեռքն այնպիսի գործիք մը սալ՝ որով սուիպուին իրենց մոլորութիւնն ու նախապաշարմունքը մէկդի դնել: Ա կարծեաց ատուգութիւնը յայտնապէս անկէ ալ կը տեսնուի որ անանկ բաներ ալ կը գնէ՝ որոնք քրիստոնեայ հաւատացեալոց համար անծանօթ չէին, ինչպէս տուրբ գրոց վրայ պատմածներին՝ և տուրբ գրոց հարազատութիւնը ցցնելու ջանքը:

Որովհետև Եւսեբիոս՝ արիոսեան ալանդին տուրբ եկեղեցւոյ պատճառած նեղութեանց և վշտաց խօսքը չըներ, ուստի հաւանական կերևի նայ թէ իր աս պատմութիւնը՝ կենացը վերջի տասնըվեց տարուան մէջ չէ շարադրած, (որովհետև ինքն ինչուան Քրիստոսի 340 թուականն ապրեցաւ). այլ մինչև 324 հասցընելով հոն դադրեցաւ, Նիկիոյ տուրբ ժողովին գումարելուն նա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:44 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

իրենեաց տարին : Ա՛ս ենթադրութեանս ճշմար-
տութիւնն անկէց ալ կերևնայ որ Պաւլինոս՝ առ
որ տասներորդ գրոց յառաջաբանին մէջ կուղղէ
իր խօսքը , 325ին արդէն մեռած էր : Ուրիշ մէկ
պատճառ մըն ալ կրնար համոզել զԵւսեբիոս որ
Նիկիոյ ժողովքէն անդին չերկարունակէ պատմու-
թիւնը . որովհետև ինքը արիոսեան աղանդին
դէմ՝ սուրբ ժողովքը գումարող հայրապետաց
առեղութիւնը չունէր . մանաւանդ թէ՛ ի սկզբան
հակամիտութիւն ցցուցեր էր Արիոսի վարդապե-
տութեանը , և չէր ուզած նիկիական հանգանա-
կին տակ ձեռք դնել . թէպէտ ետքը համոզուե-
ցաւ : Բայց որովհետև իր ուղղափառ հաւատքն՝
եկեղեցւոյ պահանջած ճշդութեամբն ու խստու-
թեամբ չուզեց բացատրել , ուստի վրան իրաւամբ
կասկած եղաւ թէ գէթ կիսարիոսեանց աղան-
դին հետևող եղած ըլլայ :

Ա՛ս պատմագրութիւնս՝ Հռուփինոս անունով
ապուիլէացի երէց մը՝ չորրորդ դարուն մէջ՛ ի լա-
տին փոխեց . բայց թարգմանութեանը մէջ հաւա-
տարմութիւն չպահելով՝ այլևայլ տեղուանք բը-
նագրէն պակասեցուց , և տեղ տեղ ալ իր քովէն
աւելցուց . թող ինչուան մեծին Թէոդոսի մահը
շարայարելը :

Հայկական թարգմանութիւն մըն ալ ունինք ,
որն որ տեղ տեղ պակասաւոր է , գէթ մեր ձեռքն
եղած օրինակներուն մէջ : Աղգային դպրութեանց
նորոգիչ սրբոյն Մեսրովպայ առաջին աշակեր-
տաց չանիւքն եղած է սա երկասիրութիւնս , ինչ-
պէս ինքն իսկ խորենացին կը վկայէ պատմութիւ
գրոցը մէջ . “ Վկայ քեզ՛ ի մօտոյ երաշխաւորեա-
ցէ եկեղեսիաստէ գիւղք Եւսեբի կեսարացւոյ , զոր
եւս թարգմանել երանելի վարդապետին Մաշտոց
՝ն հայ լեզու . խնդիր արասցես՛ ի գեղաքունի՛ ի

գաւառին Սիւնեաց, և գտցես յառաջին հագնեցուցեալն (գիլք), յերեքտասաներորդ Թուին (գլուխ), զի վկայէ Յեդեսիայ դիւանին լինել ամենայն գործոց առաջին Թագաւորացն մերոց մինչև ցԱբգար, և վկային Աբգարոս մինչև ցԵրուանդ[1]»:

Քանի մը իսկ ալ Եւսեբեայ ուրիշ մանրմունդ գրուածոց վրայ ընենք, որունք անմիջական վերաբերութիւն ունին եկեղեցական պատմութեան հետ: Եւ սոսկք են

1. Վասն որոյ ի պաղէսթին վայելոյն, Դիոկղետիանոսի և Մաքսիմիանոսի հալածանաց ժամանակ, Քրիստոսի 303 Թուականէն մինչև 309:

2. Ճառ ի լրման ամաց էրէանից, որն որ մեծին Կոստանդիանոսի վրայ նեղլոզ է, անոր Թագաւորութեանն երեսնեւրորդ տարին զուրցուած (335):

3. Վասն ըստ Ասթուծոյ փաղաքաւորութեան երանելւոյ Կոստանդիանոսի Թագաւորին. Կոստանդիանոսի վարքը չորս գրոց մէջ ամփոփուած. Թէպէտև աւելի նեղլոզ է քան թէ կենսագրութիւն:

4. Հաստատուն պաշտօնեան վկայիցն սրբոց հնոց. որ Թէպէտ կորսուած է, այլ զանազան հատուածքը կան հին Ճառընտրաց և վկայաբանութեանց մէջ: Ասոր նման երկասիրութիւն մըն է Յաղագս որոց յայլասայլ ժամանակս ի փաղաս պաշերպազեան վասն ճշմարտութեան սրբոց վկայից:

5. Պամֆիլեայ վկային պաշտօնեին, որուն միայն մէկ մասը ձեռնընկիս հասած է:

Եւսեբեայ ուրիշ ասպետաբանական երկասիրութիւնը. — Եւսեբեայ ուրիշ աստուածաբանական երկասիրութեանց մէջ առջինը կը սեպուի իրաւամբք պաշտպանութիւն աւետարանական կոչուածը,

1 Խորենացի Բ. 10:

Generated on 2016-05-06 11:44 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

որն որ Թէոդոսեայ՝ Լաւոդիկեայ եպիսկոպոսին ընծայած է, և ատոնցմէ պիտի բաժնուած։ Հեղինակին դիտմունքն եղած է պարզ իմաստասիրական ցուցմամբք համոզել զանհաւանս՝ աւետարանական ճշմարտութիւնն ընդունելու. ուստի և ատ վախճանաւ՝ արտաքին մատենագրաց այլևայլ դրքերէն հաւաքած է, որպէս զի ցցընէ թէ քրիստոնէութիւնը որչափ գերազանց է քան զայլ ամենայն դրութիւնս հեթանոսաց։ Առջի վեց գրքին մէջ անոնց վարդապետութեան ատութիւնը կամ անհատատութիւնը կը յայտնէ. իսկ վերջի ինն գրքերուն մէջ ալ կը բացատրէ թէ ինչու համոյ քրիստոնեայք՝ աւելի հրեական աստուածաբանութեան հետևողք եղան քան թէ հեթանոսականին։

Առջի գրքին մէջ Եւսեբիոս կը դնէ հին Յունաց ունեցած կարծիքներն աշխարհքի սկզբանը կամ աշխարհածնութեան վրայ։ Ետքը մանաւորապես փիւնիկեցւոց աստուածաբանութիւնը կը քննէ, և անոր մէջ կը յիշատակէ Սանքոնիաւոնի հռչակաւոր հատուածը, որն որ փիւնիկեցւոց գլխաւոր կամ առաջին մատենագիրը կը սեպուի։ Երկրորդ գրքին մէջ եգիպտացւոց և Յունաց կրօնական վարդապետութեանց վրայ կը խօսի, առջիններուն համար՝ Մանեթոնի, իրենց հռչակաւոր պատմագրին խօսքերը քաղելով, իսկ Յոներուն նկատմամբ՝ Դիոդորի սիկիլիացւոյ, Եւեմերոսի և որբոյն կղեմայ ալեքսանդրացւոյն հետևելով։ Կը ցցընէ թէ Պղատոնի վարդապետութիւնը՝ ժողովրդական աստուածաբանութենէ մը աւելի յարգ չունէր, և թէ նոյն պատճառաւ հրեռվմայեցիք ալ մերժեցին Յունաց՝ իրենց դիցաբանութեանց տուած այլաբանական մեկնութիւնը։ Երրորդ գրքով կապացուցանէ թէ որչափ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:44 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ընդունայն աշխատեր են ան մոլորիկը որոնք ուզեր են եգիպտական և յունական առասպելքը քնական պատմութեամբ կամ բարոյականով մեկնել: Ձորրորդ և չինգերորդ գլքերն՝ ասոր շարադրութիւնքն են, թէ Յունաց պաշտամունն ուզոհից առարկայ եղողները դեք էին՝ յորոց Քրիստոս մաքրեց զաշխարհ: Վեցերորդ գլքովը կը ցրէ հեթանոսաց կարծիքները վար ունէին ճակատագրի (բաղդի) և երկնային մարմնոց մարդկային գործոց վրայ ունեցած ազդեցութեանը վրայ:

Եօթներորդ գլքով կը ուսկսի ցցընել թէ որչափ գերազանց էր Հրէից կրօնական դրութիւնը, և ինչ չանի վրայ հաստատուած: Ութերորդը՝ ասկրօնքին սկզբնաւորելուն պատմութիւնն է, յորում Եւսեբիոս՝ Արիստէասի հետևելով՝ եօթանասնից Թարգմանութեան պատմութիւնը կընէ: Իններորդէն ինչուան երեքտասաներորդին մէջ կը ջանայ ցցընել թէ աստաքին իմաստասէրք, և մանաւանդ Պղատոն, ինչ որ հաւատոյ նկատմամբ ընտիր և ուղիղ բան զուրցած են, բոլորն ալ սուրբ գլքէն առնուած են: Ձորեքտասաներորդ և հնգետասաներորդ գլքերուն նպատակն է ցցընել թէ ինչպէս Յունաց հին իմաստասէրքն իրարու հետ ալ անմիաբան են:

Ան երկասիրութեանն չարայարութիւն շարադրած է Եւսեբիոս՝ Յոյնոց աչքառնական ճշմարտութենէն կոչուածը, քանի գիրք, որուն միայն առջի տասը գլքերը ձեռնարկս հասած են: Հրէից դէմ յօրինած է ասա գիրքս Եւսեբիոս, որոնք վերը յիշատակուած գլքին մէջ կարդալով իրենց կրօնքին տրուած ճշմարիտ գովեանն՝ իրաւունք ունէին պահանջելու որ ամէնքը նոյն կրօնքին հետևին, որ իր գերազանցութեամբն և աստուածայնութեամբ ի վեր է քան զմարդային կրօնս:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:45 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ընդունայն աշխատեր են ան մոլորիկը որոնք ուզեր են եգիպտական և յունական առասպելքը քնական պատմութեամբ կամ բարոյականով մեկնել: Ձորրորդ և չինգերորդ գլքերն՝ ասոր շարադրութիւնքն են, թէ Յունաց պաշտամունն ուզոհից առարկայ եղողները դեք էին՝ յորոց Քրիստոս մաքրեց զաշխարհ: Վեցերորդ գլքովը կը ցրէ հեթանոսաց կարծիքները վար ունէին ճակատագրի (բաղդի) և երկնային մարմնոց մարդկային գործոց վրայ ունեցած ազդեցութեանը վրայ:

Եօթներորդ գլքով կը ուսկսի ցցընել թէ որչափ գերազանց էր Հրէից կրօնական դրութիւնը, և ինչ չանի վրայ հաստատուած: Ութերորդը՝ ասկրօնքին սկզբնաւորելուն պատմութիւնն է, յորում Եւսեբիոս՝ Արիստէասի հետևելով՝ եօթանասնից Թարգմանութեան պատմութիւնը կընէ: Իններորդէն ինչուան երեքտասաներորդին մէջ կը ջանայ ցցընել թէ աստաքին իմաստասէրք, և մանաւանդ Պղատոն, ինչ որ հաւատոյ նկատմամբ ընտիր և ուղիղ բան զուրցած են, բոլորն ալ սուրբ գլքէն առնուած են: Ձորեքտասաներորդ և հնգետասաներորդ գլքերուն նպատակն է ցցընել թէ ինչպէս Յունաց հին իմաստասէրքն իրարու հետ ալ անմիաբան են:

Ան երկասիրութեանն չարայարութիւն շարադրած է Եւսեբիոս՝ Յոյնոց աչքառնական ճշմարտութենէն կոչուածը, քանի գիրք, որուն միայն առջի տասը գլքերը ձեռնարկս հասած են: Հրէից դէմ յօրինած է ասա գիրքս Եւսեբիոս, որոնք վերը յիշատակուած գլքին մէջ կարդալով իրենց կրօնքին տրուած ճշմարիտ գովեանն՝ իրաւունք ունէին պահանջելու որ ամէնքը նոյն կրօնքին հետևին, որ իր գերազանցութեամբն և աստուածայնութեամբ ի վեր է քան զմարդային կրօնս:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:45 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կը ցցընէ թէ քրիստոսական կամ աւետարանի կրօնքը չի լուծաներ զմովսիսականն, այլ անոր կատարելութիւնը կամ ամբողջութիւնն է. վասն զի Քրիստոս է յակովբայ գուշակած ան հզօրն՝ որ Յուդայէն պիտի ծնանի, ու չէ թէ սրով՝ հապա աստուածային վարդապետութեամբ պիտի աշակերտէ զտիեզերս: Ան ճշմարտութիւնքա՝ բուն իսկ Հրէից գրքերով և աստուածաշնչի վկայութեամբ կը հաւաստէ Եւսեբիոս: Կը լուծանէ նաև ան առարկութիւնը զոր ոմանք նոյն ժամանակէն սկսեր էին տարածել, իբրև թէ աւետարանը՝ խարդախութեմ մը ըլլայ առաքելոց, և ստութեան գործի՝ բոլոր սիեզերքն իրենց կողմնակցութեան ձգելու համար:

Ասոնք են Եւսեբեայ գլխաւոր երկասիրութիւնքը. որոնց ամենուն մէջ յայտնապէս կերևնայ իր հանճարն ու լայնածաւալ հմտութիւնը:

ԳԼՈՒԽ Ի.

ՍՈՒՐԲՆ ԱԹԱՆԱՍ

Անանասի վարքը. — Գրուածները. — Պապմական երկասիրութիւնք. — Առաջին և երկրորդ ջոպափովութիւնք. — Թուղթ առ մէսանակէացս. — Գիրք ծողովոյ Հռիմնոյ և Սիկիւէոյ. — Գիրք սահմանաց ծողովոյն Նիկիոյ. — Այլ այլ ապոլոգիական գրուերը. — Անանասի մահը:

Անանասի վարքը. — Սուրբն Աթանաս՝ որ իրեն հաւատոցն ընդարձակութիւնէ և զեկեղեցին պաշտպանելու քաջասրտութեանը համար մեծ կսչութեան, Աղեքսանդրիա քաղաքը ծնած էր: Ոչ իրեն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:50 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ազգատոհմին և ոչ ալ ծննդեանը ճիշդ տարուն վրայ կրնանք որոշ բան մը ըսել. սա միայն յայտնի է որ Աղեքսանդրոս հայրապետը՝ տղայութեանը ժամանակէն ալ անոր վրայ կարգէ դուրս հանճար և եռանդ տեսնելով առ պաշտօնն Աստուծոյ, ծնողացը քովէն առաւ ու իր հայրապետական տեղին մէջ կը դաստիարակէր զինքը։ Ան սուրբ և իմաստուն հայրապետին չանիւքը սորվեցաւ Աթանաս աստուածային գիտութիւնքը, և սրբութեան վարուց հեւսուղութեան գալափարը։ Քահանայ ձեռնադրուելէն քիչ մը ետքը՝ եպիսկոպոսական տիճանի հասաւ Աթանաս. և թէպէտ ամէն աստիճանի մէջ նշանաւոր ելաւ իր եռանդեամբն ու աստուածսիրութեամբ, բայց մեծ փոյթ ցցուց իր սարկաւագութեանը՝ կամ մանաւանդ նախասարկաւագութեան աեւն։ Քրիստոսի 319 թուականին՝ ինքը դեռ սարկաւագ էր՝ երբոր Արիոս դատապարտուեցաւ. և տեսնելով որ ան հերետիկոսապետին աղանդը մեծապէս կը տարածուէր, ամէն չանքը բանեցուց՝ այլևայլ հոգեվից և աստուածաբանական թղթերով թէ զԱրիոս ըմբերանել և թէ յորդորել զհետևողսն այնպիսի մոլորութենէ ետ կենալու։ Ասոնցմով ամէն տեղ տարածուեցաւ Աթանասի համբաւը, և ինչպէս հայրապետք ալ մեծարանօք կը յիշատակէին զինքը։ Ուստի երբոր 325ին Նիկիոյ ընդհանուր ժողովքը գումարելով՝ Աղեքսանդրոս հայրապետան ալ հրաւիրուեցաւ, հետն առաւ նաև իրեն սարկաւագն զսուրբն Աթանաս, որն որ թէ իր գիտութեամբն և թէ խորհրդակցութեամբ մեծ օգնութիւն ըրաւ հոն ժողվուող հայրապետաց։ Քաջութեամբ դէմ կեցաւ Եւսեբեայ Նիկոմիդացւոյ, Թէոգնիսի և Մարիսի, որունք արիոսեան աղանդին գլխաւոր պաշտպաններն էին։ Աղեքսան-

Generated on 2016-05-06 11:50 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

դլուա՝ ժողովոյն արձըկուելէն եաքը Եգիպտոս դառնալով միայն հինգ ամիս ապրեցաւ. բայց մեռնելու ատենը (326) պատուիրեր էր որ հայրապետական աթոռին վրայ զԱթանաս նստեցընեն, որ ան ատեն հազիւ երսուն տարուան կար: Սրբոց առաքելական եղած խոնարհութեամբն՝ այսպիսի մեծ բեռէ մը ազատելու համար հեռու աեղ մը քաշուեցաւ Ալեքանաս: Երբոր ամէն կողմանէ Եգիպտոս գումարուած եպիսկոպոսունքը կը մըտածէին անոր հասակին նուազութեանը վրայ, բոլոր ժողովուրդը սկսաւ գիրենք որ ուրիշ եպիսկոպոս չեն ուզեր՝ բայց միայն զԱթանաս. օրն ի բուն, ինչուան գիշերները ալ եկեղեցիէն դուրս չէին ելլեր, ու միաձայն կաղաղակէին ու կը խընդրէին որ իրենց վիճակաւորը դէմ չկենան: Եպիսկոպոսունքն՝ Աթանասի առաքինութեանց քով պզտիկ արգելք մը սեպեցին իր հասակին պակասութիւնը, և յօժարութեամբ գինքն ընտրեցին: Աթանաս իր առջի տարիները խաղաղ օրեր ունեցաւ. բայց ետքն այլևայլ վշտեր յառաջեցին արիոսեանց նենդութեամբը, որոնց վրայ չենք ուզեր խօսքերնիս երկընցընել. որովհետև եկեղեցւոյ պատմութեան կը վերաբերին, և արդէն ծանօթ են սրբասիրաց[1]: Բայց ամէն նեղութիւններէն ետքն ալ Աթանաս յաղթող երևցաւ, ու նուիրեն իր աթոռը դառնալով հոն մեռաւ 78 տարուան, քառասունըմութը տարի եպիսկոպոսութիւն ընելէն ետքը (373). որով ծննդեանը տարին ալ հաւանականաբար կըլլայ Քրիստոսի 295 թուականը:

Սրբոյն Աթանասի գրուածները. — Եկեղեցւոյ այսպիսի հզօր վարդապետի մը անթիւ երկասիրու-

1 Ա-ֆեբեան վրդ. սրբոց. հատ. ա. 207–270:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:50 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

թեանց վայր առնիտեղը խօսիլը՝ մեր համառօտա-
խօսութեանն ու գրուածքիս չափին ձեռք չի տար,
մանաւանդ որ անոնցմէ ոմանց հարազատութիւնն
ալ տարակուսի տակ կը ձգեն քննադատք : Մենք
իրեք մասն կը բաժնենք Ալթանատի գլխաւոր ե-
կասիրութիւնքը, և անոնք կը խօսինք վրանին. զոր
օրինակ Պոփոխան, Վրդոպէփոխան և Խոր-
յոխան գրուածներն :

Պոփոխան էրխաէբ-ՌԻՒՆ. — Աստուց մէջ առաջին
տեղը կը բռնէն արժանապէս իր Ջոփոգ-վո-ՌԻՒՆ-
ը. որոնցմէ առջինը Ալեքսանդրիոյ աթոռէն մեր-
ժուելէն եսքը շարադրած է, և Կոստանդ կայսեր
ուղղած. ուր կը ջանէ ան ամէն զրպարտութիւնքը՝
որոնցմով իր հաշնամիքն ատելի երևցուցին զինքը
կայսեր առջևը : Կոստանդեայ սխրան իրեն ձգելու
համար՝ ձառին սկզբնաւորութենէն կրկին գրուա-
տել զինքը, և ձէ ինչպէս ուրախութեամբ անձին
պաշտպանութիւնը ձեռք կառնէր՝ մոռնալով
ձէ քրիստոնեայ թագաւորի մը առջև ինքզինքը
կը պաշտպանէ, որ իրեն նախնեացը պէս նշանա-
ւոր եղած է քաւն պաշտութեամբ և աստուածախ-
րութեամբ : Չարիք չի սեպեր ինքզինքն արդարացը-
նել և կեղեցական ամբաստանութիւններէն. որով-
հետև քաղմաձեռ և սիսկսպատանք իրեն անմեղու-
թիւնը ցցուցեր էին. և թշնամիներէն երկուքն ալ
զղջալով իրենց անարժան գործքին վրայ, հրա-
պարակաւ խոստովաներ էին ձէ քոլորովին առե-
լութեան և նախանձու արգասիք են Ալթանասի
վրայ եղած զրպարտութիւնները : Ասոնք առ չին
ամբաստանութիւնը թողնելով՝ կանցնի նորերէն ար-
դարացնելու. որոնցմէ առջինն էր ձէ առաջ հայ-
րապետը հայոց վրայ չարախօսութիւն ըրած ըլ-
լայ Կոստանդեայ կոստաս եղբօրն առջև : Ա-
յսպիսի ամբաստանութեան մը առթելանը զԱ-

Generated on 2016-05-06 11:51 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

տուած վկայ կը կանչէ, և թէ յիմար պիտի ըլլայ այդպիսի բան մը ընելու համար, և թէ անկարելի էր որ Կոստաս համբերէր իր եղբօրը դէմ գործուած նախատանաց: Երկրորդ ամբաստանութիւնն էր թէ Մագնենափոս բռնաւորին Թուղթ գրած ըլլայ, և կը պարծէին թէ ան Թղթին ակզբնագիրը ձեռնուրնին է: Աթանաս ասոնց ամբաստանութեան ալ ստութիւնն անկէ կը ցցընէ թէ ինքը ոչ տեսեր և ոչ ճանչցեր է զՄագնենափոս, ուստի և ոչ առիթ ունեցած իրեն հետ Թղթակցելու. մանաւանդ որ առջի ամբաստանութիւնը կը ցրէ զերկրորդը, մինչդեռ անկարելի էր որ Կոստասյ հետ այնպիսի բարեկամութիւն ունենար էն ետքն՝ անոր ոխերիմ թշնամւոյն կուսակից ըլլար: Իսկ Թղթին ակզբնագիրն ունենալնուն վրայ ամենևին չի տարակուսիր. կրնայ ըլլալ որ խաբեբայ մը այնպիսի ճարտարութիւն ըրած ըլլայ. և զարմանք չէ, որովհետև կը տեսնենք, կըսէ, որ Թագաւորաց Թղթերն ալ խարդախողք կը գրսնուին: Երրորդ ամբաստանութիւնն էր թէ չորբեպազանուած (չօծուած) եկեղեցւոյ մէջ սուրբ խորհուրդները կատարած ըլլայ: Ասոր ալ պատասխան կու տայ սուրբ հայրապետը թէ նոյն եկեղեցւոյն օծումը չէ ըրած. այլ կը խոստովանի թէ անկէ առաջ աստուածային պաշտամունքը կատարեր է: Բայց իր այս անկանոն սեպուած գործքին պատճառ կը բերէ ժողովրդեան խուռն բազմութիւնն որ զատկի օր Աղէքսանդրիայէն հոն թափեր էին: Կըսէ թէ հին եկեղեցիքը պզտիկ էին և տակաւին թէ. և ժողովուրդը թախանձանօք կը խնդրէր մեծ եկեղեցւոյն մէջ գումարուիլ, որպէս զի հոն կայսեր կենդանութեանը համար աղօթէ. և թէպէտ ինքը շատ աղաչեր և յորդորեր էր զնրեն որ մեկալ ուրիշ պզտիկ եկեղեցեաց մէջ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:51 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

քաժնուին , բայց ժողովուրդը չէ թէ միայն մոխիկ չէր ըրած՝ այլ նաև կըսպառնար Աղէքսանդրիայէն դուրս ելլել՝ դաշտի մը մէջ խմբուելու համար. որով ինքն ալ ստիպեցաւ նոյն մեծ հկեղեցւոյն մէջ կատարելու խորհուրդը : Կարդալացընէ ինքզինքը նաև արիոսեանց ամբաստանութիւններէն , որոնցմէ իրրև երկչոտ կարհամարհուէր . կըստորագրէ թէ իրենց թափովը ոչչափ չարեաց պատճառ եղան , ու այլևայլ եպիսկոպոսաց վըշաերը յաշախեցին . Յակոբայ , Մովսէսի , Դաւթի , Աղիայի , Պօղոս առաքելոյն և Քրիստոսի տեառն մերոյ օրինակներովը կը հաստատէ թէ խոհեմութեան համար երբեմն հարկ է հալածանաց աեղը փախչիլ . և թէ ասիկայ չատ անգամ աւելի օգտակար է՝ քան թէ ինքզինքը վտանգի մէջ ձգելը :

Երկրորդ Քափագովկիանը մէջ կը ցցընէ թէ որչափ անիրաւ էին իրեն դէմ եղած հին ամբաստանութիւնքը , Եգիպտոսի , Հռովմայ , Սարդիկէի մէջ գումարուած ժողովքներուն իրեն ՚ինը պատրաստած դատաստանները մէջ բերելով : Նոյն ժողովոյ երկայն թղթերն ալ ամբողջ կը գաղափարէ . որոնք նոյն ժամանակին եկեղեցական պատմութեանը համար ընտիր յիշատակներ են : Վասն զի անոնց մէջէն այլևայլ տեղեկութիւն կառնենք հին եկեղեցւոյ հրահանգացը վրայ , ուսնեցած սովորութիւններնուն , և այլն : Ա թղթերէն կը բերէ Սարդիկէի ժողովոյն ուրիշ երկու թղթերը , մէկն առ եկեղեցին Աղէքսանդրիոյ , և միւսն առ եպիսկոպոսունս ամենայն աշխարհի . որոնք սուրբ հայրապետին վարուցը լիուլի արդարացուցումն են : Թող ուրիշ այլևայլ եպիսկոպոսաց և կոսականդ կայսեր թղթերը , որոնցմով բոլորովին սուտ կը

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:51 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

հանէ Աթանաս սահելութեան և նախանձու իրեն դէմ գրգռած պատերազմը : Մելիտոսի և արիոսեանց հերձուածոյն սկզբնաւորութեանը պատմութիւնն ալ կընէ չատագովութեանս մէջ . սակայն համառօտ ոճով : Բուն ընդարձակ և տեղին տեղը խօսած է :

Թոդղի ա՜ հոյնակէաց կոչուած գլխին մէջ , յորում արիոսեանց պատճառաւ ծագած ամէն չփոթութեց սարսափելի ժողովքն ու Լիբերիոս քահանայապետին աքսորը . կը պատմէ թէ ինչպէս արիոսեանք չկնայեցին այնպիսի հասակի ու արքութեան մը , և ոչ ալ Հռոմ քաղաքը մեծարեցին , առաքելական աթոռին հանգստարանը . այլ իրենց յորդորանքովը Բիւզանդիոնի կայսրը եպիսկոպոս մը խրկեց ի Հռոմ , որպէս զի համոզեն զքահանայապետը որ զԱթանաս դատապարտէ . բայց Լիբերիոս մերժեց անոնց յորդորանքը , և ցցուց թէ օրինաց դէմ է պատժել հեռաւոր անձը , որն որ իրեն ի Հռոմ կեցած ատենն արժանաւոր երևցաւ եկեղեցւոյ հայրապետութեան : Եւ երբոր կայսեր կողմանէ խրկուած նեղքինին այլևայլ ընծաներով ի Հռոմ հասաւ , որպէս զի գէթ անոնցմով Լիբերիոսի խստութիւնը մեղմէ , նեղքինին արքայն Պետրոսի տաճարը մուտ , ուր եկեղեցւոյ պաշտօնէին յանձնեց ան ընծաները որպէս զի քահանայապետին ներկայացնէ : Լիբերիոս երբոր ընծաները տեսաւ ու պատճառը լսեց , խստիւ յանդիմանեց պաշտօնեային որ անանկ արքունական ընդունելը բապիկ նուէրքն ընդուներ էր . առաւ , ու առաքելապետին տաճարէն դուրս նետեց : Կայսեր ծանր եկաւ սա նախատինքը . զԼիբերիոս Հռոմէն կոստանդնուպոլիս բերաւ . բայց երբոր քահանայապետը հոն իրեն արքունեացը մէջ սկսել

խստութեամբ խօսեցաւ, հրամայեց որ աքսորեն. ուր որ Լիբերիոս քաջութեամբ երկու տարի դէմ կեցաւ եւ աքը՝ մահուընէ վախնալով տուպեցաւ ձեռք դնել: Կայսրը երբոր անով գոհ չեղաւ՝ Ղևվսիոս ալ կը բռնադատեր ան բանին, առաւածարեալ ծերունին սրտաշարժ թղթով մը պատասխան տուաւ իրեն: Յորդորեց զինքն որ զրպարտչաց մտիկ չընէ, յիշէ իր մահն ու վախնայ Աստուծոյ դատաստանէն. "Տէր արքայ, կըսէ իր պաշտամանն արժանի ծանրութեամբ մը, մենք չենք կրնար երկրաւոր պետութիւններ կառավարել. բայց դուն ալ սրբազան պետութեան մէջ իշխանութիւն չունիս,,:

Գիր ծղվեց Հռիփիոյ և Սելևկիոյ կոչուածը՝ ոչ միայն ան քաղաքաց մէջ գումարուած ժողովոյ պատմութիւնը կը բովանդակէ, հապա նաև հաւատոյ գլխաւոր հանգանակները զոր արիոսեան կոմնակցութեան եպիսկոպոսունք Նիկիոյ ժողովքէն ի վեր սփռեր էին: Համագոյակից կամ անոր համանիշ նոյն ինքն ի բնութենէ հօր բառին իմաստին վրայ ալ երկայն կը խօսի. կը պաշպանէ աս վարդապետութիւնն ընդդէմ արիոսեանց, բայց միանգամայն կը բողոքէ թէ պէտք չէ հերձուածող սեպել զանոնք որ աս բառս գործածելու դժուարութիւն ունին, թէպետև որդոյն Աստուծոյ աստուածութեանը կը հաւատան: Կը բացատրէ թէ ինչ մտքով նոյն բառը գտատպարտուեցաւ Յանտիոք՝ Պօղոս սամոսատացւոյն դէմ գումարուած ժողովքին մէջ:

Բաց ի աս գրուածներէն, որոնք նոյն ժամանակաց եկեղեցական պատմութիւնը կրնան սեպուիլ, ուրիշ այլևայլ երկասիրութիւններ ալ ունի տուրքն Ալեքանա՝ որ մանաւանդ անցքերու կը վերաբերին: Ասոնց մէջ առաջինն է Գիր ստհմանոյ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:51 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ծողովն Նիկիոյ կոչուածը, յորում այս սուրբ սիւնհոդոսին սահմանադրութիւնը կը պաշտպանէ: Կրսէ թէ հոն գումարուած եպիսկոպոսունքը որ 300էն աւելի էին, քաղցրութեամբ հրաման տըւին արիոսեանց որ իրենք զիրենք արդարացընեն. բայց հազիւ թէ անոնք բերաննին բացած սկսան վարդապետութիւնին մեկնել, ամէն եպիսկոպոսունքը միաբան դէմ դարձան: Ան ատեն արիոսեանք սպիպեցան լռել: Իսկ երբոր եպիսկոպոսունք հաւատոյ դաւանութիւն մը առաջարկեցով՝ սպիպեցին զեւսեբեանս որ անոր ձեռք դնեն, Եւսեբիոս կեսարացին նախ հրաժարեցաւ. բայց երկրորդ օրն ինքն ալ սրբոց հարց համամիտ գըտնուելով՝ ստորագրեց, ու իր բոլոր եկեղեցեացը մէջ հրատարակել տուաւ: Սուրբն Աթանաս ասիկէն բաներս պատմելէն ետքը՝ քաջութեամբ արիոսեանց մոլորութեանցը կը հակառակի, ու անոնց անհաստատութիւնը ցցընելով կը յորդորէ ուղղափառ միութեան հետևիլ:

Ասոր նման երկասիրութիւն մը կը սեպուի Ա- եպիփոպոսն Եպիփոպոսի գրած Թուղթը, յորում կըսատորագրէ արիոսեանց ընդդէմ ուղղափառաց ցցուցած անգթութիւնները. կը յորդորէ իրեն հաւատակիցքն՝ անոնց որոգայթներէն հեռու կենալ. անոնցմէ առաջարկուած որ և իցէ հաւատոյ դաւանութեան տակ ձեռք չդնել, թէպէտև 'ի վերին երեսս ուղղափառական ալ կարծուին. այլ հաստատուն կենալ Նիկիոյ ժողովոյն սահմանաց վրայ, որ զԱրիոս և իրեն համախոհքը դատապարտեց: Կը քաջալերէ զիրենք որ ուղղափառ հաւատքը մինչև ցմահ պաշտպանեն:

Նոյն նիւթերուն վրայ են Ա- ամենայն եպիսկոպոսաց ուղղափառաց, Ա- Լաւիէնոյ և Ա- Սերապիոնի գրած Թղթերը. վերջինին մէջ Արիոսի մահուան

գահ էր սուրբն Աթանաս . կը յորդորեն ան վի-
ճակաց եպիսկոպոսունքն որ արիոսեաններէ բաժ-
նուին , ու միաբան ըլլան ի պաշտպանել զհաւատս,
մարդկային շահու համար՝ ճշմարտութիւնը քա-
րոզելէն ետ չկենան :

Նոյն նպատակաւ գրուած է և Ա- ֆէրիկեցի-
թուղթը , յանուն սրբոյն Աթանասի և ութսուն-
եւերկու եպիսկոպոսաց Եգիպտոսի : Հոս ալ նկ-
կիոյ ժողովոյն հաւատքը կը քարոզեն , զոր իրեք-
հարիւր ութեւտասն եպիսկոպոսունք ընդունեցան,
և իրենցմով բոլոր տիեզերք տարածուեցաւ :

Ա- Յովհաննէս Ա Անտիոս գրած թղթին մէջ
իր ուրախութիւնը կը ցցընէ սուրբն Աթանաս՝ Ե-
րուսաղէմի եկեղեցւոյն հաւատացեալոցը բաղմա-
նալուն վրայ . կը յանդիմանէ զորոնք որ կը յան-
դգնէին զեկեղեցին վըդովիլ , սրբոյն Բարսղի
պէս մեծարանաց արժանի անձի մը վարդապե-
տութեանցը վրայ տարակոյսներ հանելով :

Ասոնք են սրբոյն Աթանասի պատմական եր-
կասիրութեանց գլխաւորները : Դառնանք հիմա
վարդապետականներուն :

Անոնց մէջ գլխաւոր կը սեպուին երկու ճա-
ռերն՝ որոնցմէ մէկը Ընդդէմ հեթանոսաց կը կոչուի,
իսկ միւսը Յաղագս մարմնաւորութեան բանին : Առջի-
նին մէջ կռապաշտութեան դէմ՝ կը խօսի , և ճըշ-
մարիտ Աստուծոյ պաշտամանն մեծութիւնը կը
յայտնէ : կը ցցընէ թէ կռապաշտութեան սկիզ-
բը՝ մարդկային սրտի ապականութենէն առաջ կու
գայ , որն որ թէպէտ ի պահպէր Աստուծոյ ստեղ-
ծուած գեղեցկանց էակներն է , բայց Ադամայ յան-
ցանքովն առ մեղս հակամիտութիւն ունենալով՝
շատ անգամ առանց Աստուծոյ շնորհաց օժան-
դակութեան ի չարիս կը յօժարի : Ան սկզբունքէն
հերետիկոսաց դէմ՝ կը հետևցընէ թէ հարկաւոր

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:52 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

չէ երկու Աստուած կամ սկիզբ դնելը, որոնցմէ մէկը բարի և բարւոյն արարիչ՝ իսկ միւսը չար և չարեաց պատճառ ըլլայ: Նոյն կարծեաց անտեղութիւնը թէ խելքով և թէ սուրբ գրոց խօսքերովը կը հաստատէ և կը ցցընէ թէ մեղքն ըստ ինքեան իր մը չէ, այլ առաջինն մարդոյն անկմամբը մնած յաշխարհ: Կը հերքէ կռապաշտութեան այլևայլ տեսակները, և կը ցցընէ թէ անկարելի է պաշտել կամ մեծարել իբրև զերկնայինս՝ ոչ քերթողաց աստուածները, ոչ գաշխարհ և ոչ ալ ա նոր մէկ մասը: Կռապաշտութեան դէմ կռուելէն եաքը՝ կը հաստատէ Ճշմարիտ Աստուծոյ գոյութիւնն ու պաշտօնը, և թէ ինչպէս կրնանք զինքը բնականապէս ալ ճանչնալ. նախ մեղմով այսինքն մեր խորհուրդը քննելով որ ոչ մարմնաւոր են և ոչ մահկանացու, և երկրորդ՝ սիեզերաց գեղեցկութեամբը՝ որ կը քարոզէ մեզ իրեն արարչին գոյութիւնն ու գերազանցութիւնը:

Երկրորդ ճառը ցաղափ մարմնաւորութեան բանին կը կոչուի. որովհետև նոյն խորհուրդին վրայ կը խօսի: Քրիստոսի մարմնաւորութեան խորհուրդը բացատրելու համար՝ սուրբն Աթանաս հարկ կը սեպէ ինչուան սկիզբն երթալ. կը ցցընէ թէ ըստ դիպուածոյ բան մը եղած չէ, այլ հայրն Աստուած՝ ի ձեռն բանին ստեղծեց զայս ամենայն: Մարդուս անկմանը վրայ կը խօսի, ա նոր՝ որ անցաւոր և ապականացու բարեաց անյագ ցանկութեամբն՝ իր կործանման և ապականութեան պատճառ եղաւ: Ան մարդկութեան անկումը, կըսէ, և նոյն վնասուն առջևն առնելու համար Աստուծոյ կամքը՝ պատճառ եղաւ մարմնաւորութեան բանին. որովհետև Աստուած գթալով մարդուն վրայ՝ միտքը դրաւ առաքել իր որդին առ՝ ի փրկել զնա, և կորսընցուցած անմա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:52 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

հուԹիւնը միւսանգամ ստանալ։ Ա՛ս սկզբան վըրայ կը հաստատէ սուրբն Ա՛Թանաս մարմնաւորուԹեան բանին հարկաւորուԹիւնը. և իրեն պերճախօս և աստուածաբան լեզուովը՝ նոյն խորունկ ովկիանոսին վրայ հանգարտ կը քալցընէ զընԹերցողը, երկընքի արժանաւոր լեզուով մը մըտաց անըմբռնելի խորհրդին վրայ ճառելով։

Սուրբն Ա՛Թանաս աս երկու ճառերն ալ ընդդէմ հեԹանոսաց շարադրեր էր։ Բայց աստնցմէ զատ երկասիրած է այլևայլ վարդապետական գըրքեր ընդդէմ արիոսեանց, և այլն և այլն։

Սրբոյն Անտոնի վարքը, որն որ Ա՛Թանասի բարոյական գրուածոց կարգը կրնայ սեպուիլ։ Անապատի զարդ ծերունւոյն պատմուԹիւնը՝ սրտաշարժ ոճով մը և գրչով շարադրած է։ Ամէն մարդու, բայց ևս առաւել սրբոյն Անտոնի հետևողաց համար գեղազանց իրատներ կը բովանդակէ աս գիրքս։

Ա՛Թանասի բարոյական գրուածոց կարգը սեպելու է նաև իր ճառը Յաղագս Ընէսպուենայ և ջրհեղեղ, յորում շաբաԹու սահմանադրուԹեանը վրայ կը խօսի, և կըսէ ԹէՀ նոյնը կատարելնուս գլխաւոր պատճառը հանգիստը չէ, այլ որպէս զի ճանչնանք զարարիչն։ Եւ ԹէՀ նոր օրինաց մէջ շաբաԹին աեղը կիրակիի հաստատուԹիւնն անոր համար է որ յիշենք ԹէՀ առաջինն արարչուԹիւնն անցաւ, և երկրորդն սկսաւ անոր ձեռքովն որ խաչվանեց զմահ։

Աւետրդ կը սեպենք սրբոյն ուրիշ ճառերուն վերնագրերը դնելն՝ և անոնց վրայ խօսքերնիս երկընցընելը. միայն քանի մը խօսք ոճին վրայ զուրցենք։

Սրբոյն Ա՛Թանասի ոճը. — Սրբոյն Ա՛Թանասի ոճը, կըսէ Փոտ, պայծառ, պարզ, լի է կորովով և ո-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:52 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

վ: Իր թղթերն և ջատագովութիւնքն ազ-
ւսական խմասանեերով չարտգրած էն. կարդա-
ցընէք ինքզինքն և ամբաստանութեանց առու-
խնը կը ցցընէ՝ առանց ոտքի տակ առնելու իր
սկառակուդաց համբաւը, որն որ քրիստոնեայ
ան և մեռած արժանաւոր առաքինութիւն մըն է:
ուրբ գիրքը մեկնելուն առեն՝ համառօտախօսու-
եան և ճշդութեանը հետ յայտնի լեզու մը կը
անեցընէ. պատմականները բնական և ընթացիկ
ճով գրած, իսկ վիճաբանականներն աչխուժով
. ուժով: Ջարմանալի արագասաւրութիւն մը ու-
լ հանճարի և դիւրութիւն խօսելու. խոլունկ
ուրամաքանութիւն մը ազնուական և զարդարուն
ոճի հետ խառնուած. ծանրաբարոյ, և բուն հան-
ճարաւոր մարդու արժանի դրիչ մը: Իր ամէն ել-
կասիրութեանցը մէջ՝ դիտէ լսողին մտքին յար-
մարել խօսքը, որն որ մատենագրի մը համար ա-
մենահարկաւոր է:

ԳԼՈՒԽ ԻԱ.

Ս. ՀԻԼԱՐԻՈՆ

Հիլարիոնի վարքը. — Գրուածքները. — Յաղագս սրբոյ
երրորդութեան՝ գիրք երկոտասան. — Գիրք ծաղկոց կամ
հատոր արհեստից. — Թուղթ Հիլարիոնի առ Կոստան
ին. — Հիլարիոնի գրուածոց ոճը:

Հիլարիոնի վարքը. — Գաղղիոյ Պիկտաւ (Փուա-
թիէ) քաղաքը ծնաւ սուրբն Հիլարիոն, ազնիւ՝
բայց հեթանոս ծնողաց զաւակ: Սուրբ գիրց ըն-
թերցմամբը Հիլարիոնի միտքը լուսաւորուեցաւ.
և որովհետև աշխարհք մտած էր, Թէ կինը և Թէ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:52 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

անկէց ունեցած միակ դուստրը լուսաւորութեամբ ամենքը միաբեղ մկրտուեցան : Ինքն իսկ կը վկայէ թէ ան նշանաւոր օրն իրեն համար անպատում ուրախութեան օր մը եղաւ . ու վերածնութեան շնորհքն անանկ առատաբար զինքը լուսաւորեց՝ որ առջի օրուընէն բոլոր քրիստոնէից բարեօրինակ մըն էր . անոր համար հաւատացեալոց միաձայն հաւանութեամբը Պիկտաւայ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ (353) : Արիոսեանց դէմ ուղղափառ ճշմարտութիւնը պաշտպանողներուն գլխաւոր ախոյեաններէն մէկն եղաւ Հիլարիոն . ու ան վախճանաւ ՚ի Միլան , ՚ի պէտիէ , յԱրեւլատ և ՚ի կոստանդնուպոլիս գումարուած ժողովքներուն ներկայ գտնուեցաւ : Կոստանդնուպոլսէն երբոր նորէն իր վիճակը Պիկտաւ դարձաւ , կեղտոց աշխարհքին մէջ այլևայլ ժողովքներ գումարեց , ու թէ ոգիութեամբ և թէ վախով քանի մը սխալներու մէջ ընկած եպիսկոպոսունքը յորդորեց ճշմարտութիւնը ճանչնալու : Անկէց Իտալիա անցաւ , ու Վալենտիանոս կայսեր առջև ամբաստանեց Միլանու եպիսկոպոսը զՕքսենտիոս , իբրև կեղծաւոր , անօրէն և արիոսեան . եաքը հայրապետական աթոռը գառնալով խաղաղութեամբ ինչուան մահը կառավարեց իրեն յանձնուած հաւատացեալքը (367) :

Հիլարիոնի գրուածքները . — Հիլարիոնի գրուածոց մէջ առաջին կը սեպուին Սաղմոսոց և Մոփսէի աւետարանին մեկնութիւնքը , որոնք իրենց տեսակին մէջ ընտիր երկասիրութիւնք են . բայց մենք վրանին խօսելու մասնաւոր բան մը չունինք :

Երէոպոան գիրք ՚ի վերայ երրորդութեան . — Ասոր մէջ Հիլարիոնի գիտմունքն եղած է հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ համագոյակցութիւնը ցցնել ընդդէմ ամենայն հերետիկոսաց , և մասնաւորա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:53 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

քար արիոսեանց և սաբէլեանց։ Փռիւգիոյ մէջ աքսորանաց տեղերը չարադրեց առ գիրքս Հիլարիոն, ինչպէս ինքն իսկ և իրմէ առքը տուրբն Հերոնիմոս ալ կը վկայեն։ Հինգերը մեծ համարում ունէին առ գրքին վրայ, և նոյն խորհրդին վրայ ճառող գրքերուն մէջ ամենէն աւելի գերազանց կը սեպէին։

Գիր ծաղկոյ կամ Հաւաք արձանագրութեան։ — Երբոր եկեղեցւոյ այլևայլ պիտոյիցը համար Հռիմինոյ և Անկիւրիոյ ժողովքները պիտի գումարուէին, առ գիրքս չարադրեց տուրբն Հիլարիոն ուղղակաց և Անդղիոյ եպիսկոպոսաց խրկեց։ Իրեք մասն կրնանք բաժնել առ երկասիրութիւնը. առջինին մէջ կը գովէ տուրբն Հիլարիոն կեղտաց աշխարհքին եպիսկոպոսունքը, և անոնց հաւատոյն անարատութիւնը կը դրուատէ։ Երկրորդին մէջ հակառակութեանց և նմանագոյնէից բառերուն վրայ կը խօսի. երրորդումն ալ առ վարդապետութեան դէմ կեցողներուն կարծիքը կը ջնջէ։

Թուղթ սրբոյն Հիլարիոնի առ դուստրն իւր. — Հիլարիոնի դուստրը աշխարհիս մէջ իրեն վիճակն ընտրելու ժամանակին հասած տեսնելով, մանաւանդ թզթով մը հօրը խորհուրդ կը հարցընէր։ Սուրբը խրատ կուտայ իրեն կուսութեան հետևողը ըլլալ. և ան թզթին հետ երկու երգ ալ կը խրկէ, մէկն առաւտեան՝ միւսն ալ իրիկուան համար։ Միայն առաւօտեան երգը ձեռնարկիս հասած է. և թէպէտ գիշերուան երգ մըն ալ կը յիշատակուի Հիլարիոնի անուամբը, բայց ամենևին իր ոճը չունի։ Ուստի առ թուղթս անհարազատ սեպեցին, ու անարժան այնպիսի եպիսկոպոսի մը ծանրութեան։ Իրաւ է որ սրբոյն ուրիշ գրուածներուն բարձր ոճը չի տեսնուիր անոր մէջ, բայց պէտքը չէ մոռնալ թէ նիւթն ալ չէր պա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:53 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

հանջեր. որովհետև տասուիրեք տարուան աղջկան մըն էր որ կը գրեր, և հայր մըն էր գրողը:

Հիլարիոնի գրածոյ ոճը. – Եկեղեցւոյ հարց շատը մեծասէս կը գովեն զսուրբն Հիլարիոն. գեղրաձանց վարդապետ մը կը համարին զինքը, խտրոնկ և վեհ մտաց տէր, պայծառ աստղ մը եկեղեցւոյ՝ որ իր լուսովը կը պայծառացընէր սուրբ գրոց մթին իմաստները: Հերոնիմոս՝ ֆողաֆոդ ընդգեմ արիոսեանց կը կոչէ զինքը, Հոդանոս (գետ մը) լատին պէրճախօսութեան (latinæ eloquentiæ Rhodanus): Սուրբն Օգոստինոս ալ կըսէ թէ ամէնքը կը ճանչնային աս մեծարգոյ եպիսկոպոսը, հաւատոց ճշմարտութեան աննկուն պատուարը: Եւ թէպէտ հիներէն ոմանք եղան որ իրեն պարբերութեանց երկարութեանը և իմաստից վսեմութեան համար շատ տեղ անիմանալի դատեցին իր դիրքը, բայց նոյն գժուարութիւնը՝ միջակ համոից համար կը զուրցէին, և ոչ անոնց՝ որ այսպիսի վարդապետի մը իմաքերուն նրբութեանը խեղամուռ ըլլալու յարմարութիւն ունին:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:53 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԼՈՒԽ ԻԲ.

ՍՈՒՐԲ ԹԱՐՍԵՂ

Բարսղի վարքը. — Երկոխրոնիանքը. — Վէցօրէից ...ք. — Հայերէն ի փեղ. — Ցաղագս հոգւոյն սրբոյ՝ ...ք ... Ամֆիլոքոս. — Պապարափամպոյց. — Բարսղի ...այլ գրուածները. — Ո՞ր է գրուելեան ...րդը. — ...րեղ երուսաղէմ։

Բարսղի վարքը. — Մեծն Բարսեղ կապադովկա... ...ոց կեսարիա քաղաքը ծնաւ Քրիստոսի 329 ...ականին, որով գրեթէ հասակակից կըլլայ ...ին մեծերիմ բարեկամին՝ սրբոյն Գրիգորի նա... ...անզացւոյ։ Մայրը կապադովկացի էր, իսկ հայ... ը պոնտացի. իր մամը՝ սրբուհին Մակրինա՝ Բարսղի հաւատոյ և առաքինութեան առաջնո... ...րահանգները տուաւ. ինքն եղեր էր նաև սրբոյն Բարսղի հօրը դաստիարակը՝ որ նոյնպէս Բարսեղ կը կոչուէր, ու չէ թէ միայն գիտութեամբը՝ հա... պա նաև աստուածապաշտութեամբը նշանաւոր. ինչպէս նաև իր ամուսինը Եմմելինա։

Հօրը քով ուսմանց նախնական կրթութիւնն առնելէն ետքը կեսարիա քաղաքն եկաւ Բար... սեղ, նոյն քաղքին վարժարանաց մէջ հրահան... գելու համար. անկէց կոստանդնուպոլիս անցնե... լով հոն աշակերտեցաւ հռչակաւոր Լիբանիոսի, որն որ պատանւոյն վրայ ծերունեւոյ արժանաւոր ծանրութիւն և իմաստութիւն մը տեսնելով կը ...ծարէր զինքը։ Կոստաղնուպոլսէն Աթէնք գը... նաց, բայց ան քաղաքը իրեն ըղձիցը և դիտաւո...

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:59 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԼՈՒԽ ԻԲ.

ՍՈՒՐԲ ԹԱՐՍԵՂ

Բարսղի վարքը. — Երկոխրոնիանքը. — Վէցօրէից ...ք. — Հայերէն ի փեղ. — Ցաղագս հոգւոյն սրբոյ՝ ...ք ... Ամֆիլոքոս. — Պապարափամպոյց. — Բարսղի ...այլ գրուածները. — Ո՞ր է գրուելեան ...րդը. — ...րեղ երուսաղէմ։

Բարսղի վարքը. — Մեծն Բարսեղ կապադովկա... ...ոց կեսարիա քաղաքը ծնաւ Քրիստոսի 329 ...ականին, որով գրեթէ հասակակից կըլլայ ...ին մեծերիմ բարեկամին՝ սրբոյն Գրիգորի նա... ...անզացւոյ։ Մայրը կապադովկացի էր, իսկ հայ... ը պոնտացի. իր մամը՝ սրբուհին Մակրինա՝ Բարսղի հաւատոյ և առաքինութեան առաջնո... ...րահանգները տուաւ. ինքն եղեր էր նաև սրբոյն Բարսղի հօրը դաստիարակը՝ որ նոյնպէս Բարսեղ կը կոչուէր, ու չէ թէ միայն գիտութեամբը՝ հա... պա նաև աստուածապաշտութեամբը նշանաւոր. ինչպէս նաև իր ամուսինը Եմմելինա։

Հօրը քով ուսմանց նախնական կրթութիւնն առնելէն ետքը կեսարիա քաղաքն եկաւ Բար... սեղ, նոյն քաղքին վարժարանաց մէջ հրահան... գելու համար. անկէց կոստանդնուպոլիս անցնե... լով հոն աշակերտեցաւ հռչակաւոր Լիբանիոսի, որն որ պատանւոյն վրայ ծերունեւոյ արժանաւոր ծանրութիւն և իմաստութիւն մը տեսնելով կը ...ծարէր զինքը։ Կոստաղնուպոլսէն Աթէնք գը... նաց, բայց ան քաղաքը իրեն ըղձիցը և դիտաւո...

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 11:59 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

թուլթեան յարմալ չտեսնելով նորէն կեսարիա դարձաւ, ամէն զինքը ճանչցողները մեծ ցաւի մէջ ձգելով, ևս առաւել զսուրբն Գրիգոր նազիանզացին։

Բարսեղ՝ կեսարիոյ Դիանէոս եպիսկոպոսէն մկրտութիւնն ընդունելով արևելքի և Եգիպտոսի վանքերը քալեց. և երբոր նորէն կեսարիա դարձաւ, ընթերցողի աստիճանն առաւ։ Բայց փափաքելով հետևիլ ան միայնակեցաց որոնց առաքինութեանցը ականատես եղեր էր, Պոնտոս քաշուեցաւ (358), ուր թէ հոն և թէ կեսարիա՝ ինքն եղաւ միանձնական կեանք խօթողը։

Քանի մը տարի հոն կենալէն ետքը՝ Դիանէոսի յաջորդը Եւսեբիոս զինքը քահանայ ձեռնադրեց (362)։ Բայց Եւսեբեայ հետ այլևայլ բաներու մէջ անհամաձայնութիւն ունենալով, նորէն Պոնտոսի անապատը քաշուեցաւ։ Իրեք տարիէն ետքը Բարսեղ Եւսեբիոսի հետ հաշտուելով կեսարիա եկաւ՝ իրմէն եպիսկոպոսական աստիճանն ընդունեցաւ (370)։

Սակայն իր աս պաշտամանը մէջ այլևայլ նեղութիւնք ունեցաւ սուրբը։ Վաղէս կայսրը սկսաւ ստիպել զինքը արիոսեանց աղանդն ընդունելու. բայց սուրբ հայրապետը ոչ անոր խոստմամբքը կակղցաւ և ոչ սպառնալիքներէն վախցաւ։ Կայսրը զարմացաւ այնպիսի հաստատութեան վրայ, որով իր ամէն իշխանութիւնն ոտքի տակ կառնէր. բայց զինքը հալածելէն չդադրեցաւ։

Ան աւեններուը Անտիոքայ մէջ երկու հակառակ. ածոռ ըլլալով, Մելիտոս և Պաւլինոս, քաղաքին եկեղեցին երկու հերձուած բաժնուեր էր. վասն զի Պաւլինոս՝ սրբոյն Աթանասի և ուրիշ արևմտեան եպիսկոպոսաց հաւատքն ունէր, իսկ Մելիտոս բաժնուած էր անկէ, Թէպէտ և ինքն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:00 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ոչ ուղղափառ, և վաւերական ձեռնադրութիւն
ունէր: Հերձուածը վերջնելու համար հարկ էր
Մելիտոս՝ Ասիանոսի և արևելեայց հետ միաբա-
նել: Սուրբն Բարսեղ աս բանս առաջ տանելու
համար իր ամէն ջանքը բանեցուց. բայց չկրցաւ
իւսիսքին հասնիլ, և խաղաղութիւնը մահուընէն
ետքը հաստատեցաւ:

Բարսղի մտերիմն էր Սեբաստիոյ Եւստաթիոս
եպիսկոպոսը, որն որ հաւատոց վարդապետու-
թեան մէջ քիչ շատ կասկածաւոր անձն սեպուած
էր: Բարսեղ ուրիշներուն մտքին մէջ անոր ուղ-
ղափառութեանը վրայ տարակոյս ձգելու համար՝
հաւատոյ գաւանութիւն մը առաջարկեց Եւս-
տաթեայ, և իրեն ստորագրութիւնն առնելով
Մելիտոսի և Թէոդոտեայ եպիսկոպոսաց ցոյց:
Անոնք պատասխան տուին թէ զԵւստաթիոս ան-
հաստատ և թերհաւատիս կը ճանչնան, ու անոր
ստորագրութեանը վրայ այնչափ մեծ վստահու-
թիւն չունին: Բայց երբոր Բարսեղ սկսաւ պաշտ-
պանել զԵւստաթիոս, այնչափ ծանր երևցաւ Թէո-
դոտեայ աս բանս, որ երբ Բարսեղ Նիկոպոլիս
եկաւ զինքը տեսնելու, հետը հաղորդակցութիւն
չուզեց ընել: Նոյն իսկ սրբոյն եղբայրը՝ Գրիգոր
Նիւսացի, մեղադրեց զինքն այնպիսի մարդու մը
ղօրաւոր պաշտպանութիւն ընելուն համար՝ որուն
թէ հաւատքն և թէ համբաւը կասկածելի էր:
Վերջապէս Եւստաթիոս ինքզինքը յայտնեց. Նի-
կիոյ ժողովքին հաւատոցը դէմ սկսաւ պատե-
րազմիլ, հոգւոյն սրբոյ աստուածութիւնը ուրա-
նալ, ու սրբոյն Բարսղի դէմ ելլել. որն որ խա-
բուիլը տեսնելով՝ Թէոդոտեայ հետ բարեկամա-
ցաւ, ու Եւստաթիոսի դէմ գրեց: 379 Թուա-
կանին յունուարի առջի օրը մեռաւ Բարսեղ՝ տա-
սը տարի եպիսկոպոսութիւն ընելէն ետքը: Յու-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:02 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

պարկաւորութեանը համար անթիւ բազմութիւնք դիմեցին. չէ թէ միայն քրիստոնեայք՝ հապա նաև հեթանոսք և Հրեայք ներկայ գտնուեցան, ու մեկզմեկ սիմելէն շատերը խղդուեցան. "Երանի կու տամ այնպիսեաց, կըսէ Նազիանզացին, որ Բարսղի պէս մեծ մարդու մը զոհ և ընկերակից եղան ի մահու":

Բարսղի էրկոխրոնիխնէը. — Կեսարացւոց հայրապետին երկասիրութեանցը մէջ ամենէն նշանաւորն է վէցօրէը կամ Յաղագս վէցօրեայ արարչութեան աշխարհի իննը ճառերը: Առջինը սուրբ գրոց ան խօսքին վրայ է թէ "ի սկզբանէ արար Աստուած զերկին և զերկիր". երկրորդը բացատրութեան է ան խօսքերուն թէ "Երկիր էր անեղրևոյթ և անպատրաստ". երրորդը հաստատութեան վրայ, չորրորդը ջուրց ժողովին, հինգերորդը երկրի արգասեաց, վեցերորդը լուսաւոր մարմնոց արարչութեան, եօթներորդը միջատաց, ութերորդը թռչնոց, իններորդը երկրային անասնոց: Սուիդաս՝ պատանեալու արժանի կը համարի աս գիրքը. նիւսացին ալ կը վկայէ թէ իր գեղեցկութեամբը սուրբ գրքէն վար չի մնար:

Ա ճառերուն մէջ Բարսեղ՝ սուրբ գրոց խօսքերուն մեկնութիւնը կընէ. բայց իր ճարտարիմաստութեամբ՝ նոյն չամաք կարծուած նիւթին՝ գեղեցիկ արգասաւորութիւն մը կու տայ: Ճարտար գոյներով, կենդանի և հաճոյական նկարագրութիւններով, Աստուծոյ արարչագործութենէ հրաշալիքը կը զարդարէ: Այլևայլ դժուարին կարծուած խնդրոց մեկնութիւնը կու տայ. ճարտարութեամբ կը բացատրէ սուրբ գրոց ան տեղուանքը՝ որ կարծես թէ իրարու հակառակ կերևնան. իմաստասիրաց և հերետիկոսաց՝ նիւթոյ յաւիտենականութեան, չար սկզբան կամ արարչի գոյ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:02 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ուԹեանը, լուսաւոր մարմնոց մեր վրայ ունեցած ազդեցուԹեան սխալ կարծիքներըը կը մերժէ։

Ընտիր գրուածք մըն է նաև Հայեաց՝ ի Էջ կոչուած ձառը, ան խօսքին վրայ՝ որ նաև շատ հին իմաստասիրաց խորունկ մտածուԹեանցն առիԹ տուեր էր։ Բայց Բարսեղ անունց խորհրդածուԹիւնքը՝ քրիստոնէուԹեան կը ծառայեցընէ. կը քարոզէ ԹԷ ինչպէս միայն իր հոգւոյն փրկուԹեանը խնամք պիտի ունենայ քրիստոնեային, ըզգուշանայ դատելէն՝ որով շատ անգամ աւելի իրեն քան ԹԷ այլոց վնասակար կըլլայ։

Յաղագս հոգւոյն մրճոյ՝ գիրս ա՝ Ամֆիլոքիոս.—Նորաղանդք տեսնելով որ աս գլուխին մէջ ամփոփուած վարդապետուԹիւնները իրենց բանին ձեռք չենտալ, ուզեցին հալածատուԹեանը վրայ տարակուսիլ։ Երասմոս՝ որ իրեն ախորժական չերևցած երկաախրուԹիւնքը դատապարտելուն մէջ նշանաւոր է, իր ԹարգմանուԹեանը յառաջաբանին մէջ մերժեց անոր հալածատուԹիւնը. վասն զի ԹէպԷտ այլևայլ կտորուանք կան, կըսէ, որքան Բարսղի արժանի, բայց շատ տեղ ալ բոլորովին իր ոճէն կը հեռանան։ Նորաղանդք Երասմոսի աս կարծիքը մեադիւրուԹեամբ ընդունեցան. սակայն Գազաւպոն, որ իրենց մէջ խոհականուԹեամբն և արդարակշռուԹեամբ անուանի է, Բարոնիոսի գէմ գրելու ատենը կը խոստովանի ԹԷ ինքն Երասմոսի հետ միաձայն չէ։ Աս յայտնի է որ Բարսեղ հոգւոյն սրբոյ վրայ ձառ մը շարադրած է, ինչպէս ինքն իսկ կըսէ ԹղԹերուն մէջ. Նազիանզացին, Հերոնիմոս և Սուիդաս ալ կը յիշատակեն. Թող իրենցմէ եղքն եկող ուրիշ մատենագիրներըը։ Երասմոսի և իրեն հետևողաց պատճառները այնչափ զօրաւորուԹիւն չունին՝ ատոնց խօսքը երկմտուԹեան տակ ձգելու համար։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:03 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Պապարգամապոյց. — Արևելեան ազգաց մէջ հին աւեանէ՝ ի վեր պատարագամատոյց մը կը յիշատակուի սրբոյն Բարսղի անուամբը, զոր Պոնտոսի եկեղեցիք կը գործածէին, և որն որ ինչուան հիմա կը գործածեն յակովբիկեանք, Մելքիթեցիները, Եգիպտոսի և Եթովպիոյ Խփտիք։ Ըստոտոյ իրաւամբ կը կարծէ թէ աս պատարագամատուցին երկասիրութիւնը բոլորովին սրբոյն Բարսղինը պիտի չըլլայ. այլ թէ անշուշտ յոյն եկեղեցւոյ մէջ կալը, ու ինքն այլևայլ աղօթքներով և երգովք զարդարեց։ Վասն զի ասոր ուրիշ հին պատարագամատոյցներու հետ ունեցած համաձայնութենէն կերևնայ թէ ամէնքը նախնական գաղափարի մը վրայ յարմարցուցած են, որն որ անտարակոյս առաքելական դարու երկասիրութիւն է։

Ինչպէս ոսկեբերանի, ասանկ ալ Բարսղի անուամբ գտնուած պատարագամատուցին հայկական թարգմանութիւնը ձեռնըմխս հասած է թարգմանչաց ժամանակէն։

Սրբոյն Բարսղի ուրիշ այլևայլ գրուածքներէն. — Խօսքերնիս չափէն աւելի պիտի երկրննար՝ եթէ ուզենայինք սրբոյն Բարսղի ամէն գրոցը վրայ հատմառօտիւ ալ խօսիլ. այնչափ շատ են թէ աստուածաբանական և թէ բարոյական գրքերը։ Ա՛ս միայն ըսենք թէ ընդհանրապէս աստուածաշնչի մեկնութիւնք են և ճառեր, նոյն ատեն եկեղեցին վրդովոլ հերձուածոց հետ պատերազմելու համար, և անոնց հետևողներուն խաբէութենէն զգուշացնելու ջոկողուրդը։ Ասոնցմէ զատ այլևայլ թղթեր ալ շարադրած է, լի աստուածեղէն ոգւով և ընտիր ոճով։

Բարսղի ոճը և գրուածքն կէրպը. — Նազիանզացին՝ Բարսղի արձանականին մէջ անոր գրուածք-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:03 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նելը լուսաւոր աստղի մը կը նմանցընէ, որ սահմանեալ է բոլոր երկրիս վրայ լոյս ծագել։ Ամէն ևկեղեցւոյ հարք և իրենց ժամանակակից անուանի անձինքն՝ իրաւունք տուին աստուածաբանին աս գովեստը. վասն զի Բարսղի գրքերը աստուածազգեցիկ հրահանգ էին ամենայն հաւատացելոց, իշխանաց, մանաւոր մարդկանց, միաբանակեցաց, աշխարհիս չփոթուելիներէն հրաժեշտ տուող սրտերու, և անոնց խակ՝ որ գեռ նոյն ալէտանջ ծովուն մէջ կը ծփան։ Մաքերնին դրած էին թէ Բարսղի գրքերը միայն քովերնին ունենալն՝ իմաստուն ըլլալ է։ Աստուածաբանը կը յաւելու. "Երբոր իրեն վեցօրէից ճառերը կը կարդամ, ինծի այնպէս կ'ելևնայ թէ սիերաց աստեղծողին քովն եմ, ու սրտալչութեան գաղտնեացը խնդամուս. երբոր հերետիկոսաց դէմ գրած գրքերը ձեռքս առնեմ, կը կարծեմ թէ զՍոդոմ ապականող կրակը կը տեսնեմ, որ ամէն անօրէն և չարախօս լեզուներն՝ի մոխիր գարձուց, և կամ թէ Բաբելոնի աշտարակը՝ որ խախուտ չէնք մը ըլլալուն համար քիչ առեղուան մէջ հիմնայատակ եղաւ. երբոր հոգւոյն սրբոյ գրածին վրայ կը խորհրդածեմ, անոր աստուածաբանութեանը վրայ մտքիս մէջ ամենևին տարակոյս չի մնար։ Ան գրուածներուն մէջ ալ՝ զորոնք հասարակ մարդկանց համար շարադրեր է, պարզ բառերուն տակ մեծ իմաստ մը կընկատուի։ Ի պատիւ մարտիրոսաց զուրցած ներբողներն՝ այհամարհել կու տան իմ մարմինս, ու կը խրախուսեն զիս այնպիսի պատերազմաց մէջ գտնուելու։ Իր բարոյական ճառերը՝ որոնք կեանց ընթացքի համար այնչափ գեղեցիկ կանոններ կը բովանդակեն, մեծ օգնութիւն են ինծի՝ մարմինս և սիրտս մաքրելու, որպէս զի արժանի տաճար ըլլամ Աստուծոյ ,,։ Փոտ ալ կըսէ

թէ ուրիշ մատենագիր մը չկայ որ այնչափ գեղեցիկ, այնչափ մաքուր, այնչափ նշանական և յըստակ ոճ ունենայ՝ ինչպէս սուրբն Բարսեղ. անանկ համոզիչ կերպ մը ունի՝ որ կրնայ ճարտասանութեան միակ օրինակ ըլլալ, առանց Պղատոնի և Դեմոսթենեայ կարօտութիւն ունենալու: Եթաամա կը վկայէ թէ Բարսեղ՝ ի վեր է քան զամենայն ճարտարախօսս ցոնաց, ու անոնց պակասութիւնները ազատ:

Կրօնքի վերաբերեալ նիւթ մը չկայ՝ որուն վրայ խօսած չըլլայ սուրբն Բարսեղ. երկրորդութեան, մարդեղութեան, սկզբնական մեղաց, բնութեան ապականութեան, չնորհաց հարկաւորութեան, եկեղեցւոյ հրահանգաց և վարդապետութեանը վրայ ընդարձակ խօսած է. որով իր գրուածքն՝ ամբողջ տեսական աստուածաբանութեան ուսումը կը բովանդակեն: Ժամանակին ամէն հերետիկոսացը դէմ խօսած և զանոնք ահաբեկ ըրած է. բայց որ զարմանալին է, կարծես թէ նկատեր է նաև իրմէն ետքն երևցող հերձուածները, ու անոնց ալ բերանն ուզեր է գոցել. նորայանդ մը չի կրնար կարդալ սրբոյն Բարսղի գրուածները, ու անոնց մէջ իր վարդապետութենէ հերքումը չտեսնել:

ԿԻՒՐԵՂ ԵՐՈՒՍԱՂԷՄՈՑ. — Անուանի և քաջահաւատ վարդապետ եկեղեցւոյ, որն որ Երուսաղէմի մէջ ծնաւ (315) և Մաքսիմոսի մահուընէն ետքը նոյն քաղքին հայրապետական աթոռը գրաւեց (345). և Թէպէտ Ակակիոսի կեսարիոյ եպիսկոպոսին գրգռութեամբն ան աթոռէն մերժեցաւ կիւրեղ, բայց եպիսկոպոսաց ժողովի մը մէջ ինքզինքն արդարացուց, և նորէն աթոռը դառնալով՝ խաղաղութեամբ կառավարեց ժողովուրդն ինչուան իր մահը (366): Մեռնելէն հինգ տարի առաջ՝ ի կատանդնուպոլիս գումարուած ընդ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:03 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

հանրական սիւնհոդոսին ներկայ գտնուելը էր, և իր նախանձովն ու երկնատուր իմաստութեամբը զամենքը զարմացուցած։

Գրուածներն են կ՚ըսեն ընծայուէան կոչուած երախայից հրահանգութեանը համար ընտիր եր-կասիրութիւնը, քսանուվրեք ճառ. որոնք ըստ մեծի մասին հանգանակի մեկնութիւնք են։ Սուրբ հաւատոց խորունկ խնդիրները՝ քրիստոսական լուսով նոր պայծառացող մտաց առջև իմանալի կերպով բացատրելէն ետքը, ժամանակին ամէն հերետիկոսաց մոլորութիւնքը հզօր և ազդու լե-զուով և երկնային գիտութեամբ կը յաղթահարէ. ան պատճառաւ ալ է որ նորադաստիրք ալ ուզեր են երկմտութեան տակ ձգել անոնց հարազատու-թիւնը։ — Ընծայութեան կոչմանէն զատ հեղի-նակ է կիւրեղ նաև թղթի մը առ Կոստանդ կայսր՝ յորում իր հայրապետութեանը ժամանակ երու-սաղէմի վրան երևցած լուսեղէն խաչին պատմու-թիւնը կընէ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:03 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԼՈՒԽ ԻԳ.

ԳՐԻԳՈՐ ՆՈՒԶԻԱՆԶՈՑԻ

Նապիանպաշոյն վարդը. — Գրուածքները. — Ճառ ի պասքա կամ ի հեղգուխին. — Ճառ առաջին ընդդէմ Յուլիանոսի. — Ճառ երկրորդ ի Յուլիանոս. — Ա՞ր հայրն իր և առ Բասիլիոս. — Ա՞ր Գրիգորիոս Նիւսէայ. — Աղերս կամ պաշտպանութեան. — Ի կեսարիա եղբայր իր. — Ի Գորգոնիա քոյր իր. — Ա՞ր հայրն իր լեալ և սգայեալ վասն հարուածոց կրկին — Յաղագս աղաչութեան. — Ի հայրն իր. — Ի Բասիլիոս. — Ի մահ Մաքսիմոսի ասութիւնին իւրոյ. — Ապաշաւանին ըղձերը և երկութիւնը. — Գրուելոյն ոճը:

Նապիանպաշոյն վարդը. — *Կապադովկիոյ Արիանզ կամ Նազիանզ քաղքէն էր սուրբն Գրիգոր, բարեպաշտ և աստուածասիրեալ ծնողաց զաւակ, որոնք սրբուհւոյն Գորգոնիայ և սրբոյն Կեսարիոսի ալ ծնողք եղեր էին: Սուրբն Գրիգոր հայրենի տանը մէջ աստուածպաշտութեան կարևոր ուսմանը հարկաւորագոյն հրահանգները ընդունելէն ետքը՝ ծնողաց թելադրութեամբ Պաղեստին անցաւ, որպէս զի հոն գտնուող հռչակաւոր վարժապետաց ձեռքին տակ ուսմանց ալ պարապի: Բայց Գրիգորի հանճարին համար՝ աւելի ընգարձակ ասպարէզ հարկաւոր էր. ուստի ստիպեցաւ Պաղեստին թողնել Աթենք անցնիլ՝ իր կենացը քսաներորդ տարին (350): Քիչ ատենէն*

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:04 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նոյնպիսի նպատակաւ մեծն Բարսեղ ալ Բիւզանդիոնէն Ա[illegible]նք եկաւ. հոն Գրիգորի հետ մտերմանալով զիւրարս կը խրախուսէին թէ մտաւոր և թէ հոգեկան հրահանգաց մէջ յառաջադիմելով եկեղեցւոյ օգտակար ըլլալ: Անոնց ընկերակից էր նաև Յուլիանոս, անիկայ՝ որ այսպիսի անձանց բարեկամութեանն արժանի ըլլալով, եռքը կրօնքն ու հաւատքը չէ թէ միայն մէկդի թողուց, այլ նաև ամէն ջանքն ու փոյթը բանեցուց՝ Աստուծոյ դէմ պատերազմելով՝ անոր որդւոյն աւետարանն աճումն և հաստատութիւն առած կրօնքն անհետ ընելու:

Նազիանզացին իր ուսոցը քսաներորդ ճօմնեռորդ տարւոյն ուսումնական ընթացքը լմընցնելով Ա[illegible]նքէն նուիրն իր հայրենիքը դարձաւ, ուր ան առեն՝ ինչպէս հաւանական կերևնայ, մկրտութիւնն ընդունեցաւ: Հարուստ և մեծատուն ծնողաց զաւակը վախնալով որ չըլլայ թէ աշխարհային ինչք՝ հոգևոր կենաց եռանդը սրտին մէջ հեղձուցանեն, ունեցածը չունեցածը կարօտեալոց և աղքատաց բաժնեց, իսկ ինքն սղ և հաց ուտելով կը բաւականանար. օրն ի բուն գրաւոր պարապմանց եռանդ ըլլալէն եռքը՝ գիշերն ալ սաղմոսիք և աղօթքով կանցընէր:

Իրեն ուսումնակից սուրբն Բարսեղ ալ՝ պոնտոսի մէջ առանձին տեղ մը քաշուելով, միայնութեան ափոփանքն և երկրաւոր կրքերէ զերծ մխիթարութիւնը կը վայելէր: Բայց փափաքելով որ այնպիսի երջանկութենէ զուրկ չմնայ նաև ընկերն ալ՝ յորդորեց զինքն որ քովը գայ՝ իր քաղցր և միխիթարական կենացն ընկերելու: Մտադրութեամբ յանձն առաւ Գրիգոր, և հոն սուրբ գրոց ընթերցման և աղօթից կը պարապէին: Բայց Նազիանզացին չկրցաւ երկար առեն կենալ. հայրն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:04 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

որ նոյն քաղքին եպիսկոպոսն էր, և օգնականի մը կարօտութիւն ունէր, մանաւանդ գրով աղաչեց որ քովը դառնայ. վասն զի կեսարիոյ որդին ալ, որ իրեն մեծապէս սատարութիւն կընէր և եպիսկոպոսը կրթելու կրզբաղէր, անակնկալ մահուամբ մը մեռնելով՝ թէ հայրն և թէ բոլոր հաւատացեալքը տրտմութեան մէջ ձգեց:

Հնազանդեցաւ Գրիգոր հրամանին, և իրմէն քահանայ ձեռնադրեցաւ (361): Արդէն նոյն սուրբ օծութիւնն ընդունելու համար ալ մեծամեծ գժուարութիւններ հաներ էր աստուածընտիր հոգին, իր անբաւականութիւնը մէջ բերելով: Բայց երբոր իմացաւ թէ հայրը միտքը դրած է իր եպիսկոպոսական աթոռին վրայ դնել զինքը, բոլորովին չփոթած՝ արցունքովն և աղաչանօք կը ջանար զանիկայ խորհրդէն ետ դարձընել. և տեսնելով թէ անկարելի է, ծածուկ և առանց մէկու մը բան ըսելու՝ ելաւ նորէն Բարսղի միայնարանը քաշուեցաւ: Սակայն երբոր լսեց եկեղեցւոյ տառապանքը Յուլիանոսի հալածանաց բռնութենէն, և թէ արիոսեանց դրգռութեամբն իր հօրը և կրօնաւորաց մէջ տեսակ մը երկպառակութիւն ընկեր է, փութաց նորէն դառնալ 'ի Նազիանզ, ուր իմաստուն անտեսութեամբն ամէն բան կարգի մէջ դրաւ:

Նոյն առեններէը սուրբն Բարսեղ կեսարիոյ եպիսկոպոս ընտրուելով՝ իր ուսումնակիցն ալ սամեցւոց եպիսկոպոս ուզեց դնել, որպէս զի իր և տիանացւոց եպիսկոպոս Անթիմոսի մէջ եղած իրաւաւթեան վէճը դադրի. բայց Գրիգոր տեսնելով որ սա կոչումը յԱստուծոյ է, սամեցւոց եպիսկոպոսութիւնն ընդունելէն հրաժարեցաւ, որպէս զի հօրը՝ իննանամեայ ծերունի եպիսկոպոսին օգնութիւն ընէ: Նազիանզու հաւատացեալ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:04 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ներն ալ սահմանեցին որ հօրը մահուընէն ետքն ինքն ըլլայ անոր հայրապետական աթոռին ժառանգը։

Արիոսեան և ապողինարեան հերետիկոսաց գրգռութեամբը՝ Բիւզանդիոյ եկեղեցին կործանման վերահաս վտանգի մէջ էր. հոն հաստատ Գրիգոր, և մոլորելոց պատրանքը իսպառ ակելով՝ անոնցմէ շատը նորէն ճշմարտութեան աշակերտեց։ Սուրբ երրորդութեան ամենամեծ խորհուրդն՝ անանկ նրբին տեսութեամբ բացատրեց, որ հակառակորդք նախանձու շարժած ուզեցին զինքը քարկոծել. և երբոր Աստուած հրաշքով զինքը փրկեց, Գրիգոր՝ նախավկային պէս անոնց դարձին համար Աստուծոյ աղօթք կընէր։ Հոն՝ի Բիւզանդիոն եպիսկոպոս ձեռնադրուելով (376), արիոսեանց հալածանացն առեն զարմանալի խնամատարութեամբ կառավարեց ան աթոռը, ինչուան որ նոյն քաղաքը ձգելով՝ Նազիանզ եկաւ (381), ուր հօրմէն ժառանգութիւն ընկած երկրին մէջ՝ առանձնական կենաց տալով ինքզինքը, խստակեաց միայնակեացի կեանք կանցընէր, մարմնոյն ակարութիւնը բանի տեղ չդնելով։ Իր աս կենացն հանգամանքը կրատորապէս շարադրած ոսանաւորներուն մէկուն մէջ. "Յայրերու և գազանաց մէջ կը բնակիմ, կըսէ. բնակութիւնս անձաւ մըն է, և հոն միայնակ կեանքս կանցընեմ. մէկ պատմուճան մը միայն ունիմ. ոչ կօշիկ և ոչ կրակ. յոտով կապրիմ։ Մարդկանց նախասինք և արհամարհանք եղած եմ։ Խոսիլ վրայ կը պահակիմ, ու վրաս ծանծկութիւն տեղ խորտ մը կառնեմ,,։

Նազիանզացւոյն գրուածները. — Յիսունըչինգ ճառ կամ յորդորակ շարադրած է սուրբն Գրիգոր աստուածաբան, այլևայլ թղթերը, և զանազան բանաստեղծութիւնք՝ որոնք ընդհանրապէս

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:04 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

համառօտ բանել են : Ոմանք իրեն կընծայեն ե-
զեկիէլի մարգարէութեան մեկնութիւն մը , ժո-
ղովողի գրոց կցորդք , թուղթ մը առ Եւոգորոս ,
և երկու ճառեր . բայց աս վերջիններուն հարա-
զատութեանը վրայ միաբան չեն քննաբանք :

Ճա՜ ՝ի պատ կամ ՝ի հէգումէն . — Պատեքի
տօնին օրն էր երբոր սուրբն Գրիգոր քահանայա-
կան պաշտաման հրաւիրեցաւ : Երկանիկ հոգին
ինքզինքն անարժան սեպելով այսպիսի բարձրու-
թեան մը , ինչպէս վարուցը համառօտութեան
մէջ ալ յիշատակեցինք , կը ջանար փախստեամբ
և հրաժարելովը զուրիչներն ալ համոզել որ զինքն
այնպիսի բեռան մը ծանրութենէն ազատեն : Հա-
ւատացելոց մէջէն շատերը զարմանալով գովեր
էին իր աս առաքինութիւնը . ոմանք ալ զարման-
քին հետ նաև գայթակղութիւն մը ունեցեր , իբ-
րև թէ Աստուծոյ ապաստարութենէն փախչիլ
ուզենայ : Ասոնց միտքը բժշկելու համար շարա-
դրեց և խօսեցաւ աս ճառս սուրբն Գրիգոր քա-
հանայ ձեռնադրուելէն երկու օր եառքը : Կը ցցը-
նէ քահանայութեան պարտքերը , գերազանցու-
թիւնն ու վտանգը . “ Քահանայի , կըսէ , մէկ սը-
կար կողմ մըն ալ պիտի չունենայ . որպէս զի ա-
մէն դիտց նկատողքն ալ իրեն անարատութիւնն
ու մաքրութիւնը տեսնեն . քահանայի վրայ պզտի
պակասութիւն մը կրնայ իշխանութեանը տակ ե-
ղողներուն կորաստանը պատճառ ըլլալ ,, : Անկէ
կանցնի քննելու թէ ինչ կերպով պիտի շահինք
զհոգիս , զոր որ արուեստ արուեստից և գերա-
գոյն քան զամենայն գիտութիւնս կը կոչէ : Հարկ
է որ , կըսէ , քահանայի կարևոր գիտութիւնն ու-
նենայ , ինքզինքն իրեն առաջնորդութեան հաւ-
ատացող անձանց ուղիղ ճամբայ ցցընելու , և թէ
ինչպէս վերատակար է այնպիսեաց ձեռքը յանձ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:05 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նել առանձին փափուկ պաշտօն մը՝ որոնց գիտութիւնը կամ սուրբ գրոց հմտութիւնը միայն առելւոյս է, և կամ թէ ամենաքիչ բան մը։ Ասոնց գժուարութիւններու նշանակելէն եաքը կը ցցընէ թէ ինչու համար էր հրաժարիլը։

ՃՁ. ընդդէմ Յուլիանոսի.— Երբոր Յուլիանոս ուրացող կայսրը Պարսից դէմ տուած պատերազմին ժամանակ չարամահ սատկեցաւ, հեթանոսք՝ ինչպէս բնական էր, մեծապէս ցաւեցան անոր մահուանը վրայ, և սկսան այլևայլ արձանականներով յիշատակը պատուել։ Ամենէն աւելի լեզուի ճարտասանութիւնը գործածեց Լիբանիոս իմաստասէր, այնպիսի անձէ մը զկուսելնուն համար, և թէ ինչպէս հարկաւոր էր անոր կեանքը՝ հաւատք, իմաստասիրութիւն և գիտութիւն ոտքի վրայ պահելու համար։ Իրենց դէմ ելաւ սուրբն Դրիգոր աստուածաբան. և իր իմաստուն տեսութեամբքն և խօսքերովը ցցուց թէ Յուլիանոս հաւատքի դէմ մաքառելով՝ փոխանակ աշխարհի օգուտ մը ընելու՝ մեծապէս վնասակար եղաւ, որովհետև մարդկային զէնքերով պատերազմիլ ուզեց աստուածահաստատ չինուածքի մը դէմ, ու անով թէ ինքզինքն և թէ իրեններելը տակտացուց։ Վնասակար եղաւ Յուլիանոս նաև գիտութեանց և փիլիսոփայութեան, վասն զի աս երկուքը՝ միայն ան աստեն կրնան օգտակար ըլլալ մարդկութեան՝ երբոր ճշմարտութիւնն ունենան իրենց խարիսխ. ընդհակառակն Յուլիանոս՝ ինքզինքը բոլորովին աստուածեանց աուած՝ մոգութեան և կախարդութեան մէջ կը փնտռտէր ճշմարտութեան լոյսը։

ՃՂ. ի Յուլիանոս.—Յուլիանոսի դէմ չարադրած երկրորդ ճառին նպատակն է նոյն ուրացող կայսեր թշուառ մահուան պատմութիւնն ընել։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:05 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կը պատմէ թէ ինչպէս քրիստոնէից դէմ ունեցած սիեր իմ ատելութեամբը վառուած՝ Քրիստոսի աեաուն մերոյ աստուածաստաստ վէիքը սուտ հանել ուզեց, տիրապետն Հրէից հրամայեց որ նորէն հրեաստան ժողվին, ու յարքունուստ մատակարարուած ծախքովը շինեն Երուսաղէմի տաճարը։ Բայց հիմերը ձգելու և քարեն իրարու վրայ չարելու աստենին, ան Աստուծոյն հրամանաւն՝ որ անդարձ վճռովը սպառնացեր էր թէ նոյն տաճարին քարը քարի վրայ չմնայ, գետնէն կրակ ելաւ, ու թէչ չէնքն և թէ շինողները այրեց լափեց։ Ասով ալ չզգաստացաւ Յուլիանոս. Պարթևաց դէմ պատերազմի գնացած ժամանակը խօսք տուաւ աստուածոց, որ եթէ յաղթութիւնն ատենայ՝ քրիստոնէի անունն ալ անհետ ընէ աշխարհիս վրայէն։ Ան պատերազմին մէջ ուրացելոյ արժանի յուսահատ և կատաղի մահ մը ունեցաւ կայսրը. և իրեն մահուամբը՝ քրիստոնէութիւնը իր առջի պայծառութիւնն առաւ։

Ա՜ հայրն ի՜ր և ա՜ Բասիլիոս. — Առանձնութեան տեղը շարադրած և անկէ խրկած է աս ճառս իր հօրն և սրբոյն Բասիլի, որունք անդադար յորդորանօք կըատիպէին զինքն եպիսկոպոսութեան պաշտօնն ընդունելու։ Իր մեծարանը կարմելա լեռան կը նմանցընէ սուրբն Գրիգոր՝ ուր Եղիա կը ճգնէր, կամ ան անապատին ուր Յովհաննէս Մկրտիչ մեկուսացեր էր. և այնպիսի խաղաղութենէ մը զրկուելուն վրայ կը դժուարի։

Ա՜ Գրիգո՜ր Նի-սա՜ցի. — Երբոր նազիանզացին եպիսկոպոսութեան աստիճանը բռնադատուեր էր ընդունելու, և այնպիսի ահաւոր պաշտօնի մը մեծութիւնը մտածելով կը սոսկար, Գրիգոր նիւսացի եկաւ զինքը մխիթարելու։ Իրեն սա սիրոյն համար ընդհակառակ կըլլայ սուրբն՝ ի պատիւ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:05 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կը պատմէ թէ ինչպէս քրիստոնէից դէմ ունեցած սիեր իմ ատելութեամբը վառուած՝ Քրիստոսի աեաուն մերոյ աստուածաստաստ վէիքը սուտ հանել ուզեց, տիրապետն Հրէից հրամայեց որ նորէն հրեաստան ժողվին, ու յարքունուստ մատակարարուած ծախքովը շինեն Երուսաղէմի տաճարը։ Բայց հիմերը ձգելու և քարեն իրարու վրայ չարելու աստենին, ան Աստուծոյն հրամանաւն՝ որ անդարձ վճռովը սպառնացեր էր թէ նոյն տաճարին քարը քարի վրայ չմնայ, գետնէն կրակ ելաւ, ու թէչ չէնքն և թէ շինողները այրեց լափեց։ Ասով ալ չզգաստացաւ Յուլիանոս. Պարթևաց դէմ պատերազմի գնացած ժամանակը խօսք տուաւ աստուածոց, որ եթէ յաղթութիւնն ատենայ՝ քրիստոնէի անունն ալ անհետ ընէ աշխարհիս վրայէն։ Ան պատերազմին մէջ ուրացելոյ արժանի յուսահատ և կատաղի մահ մը ունեցաւ կայսրը. և իրեն մահուամբը՝ քրիստոնէութիւնը իր առջի պայծառութիւնն առաւ։

Ա՜ հայրն ի՜ր և ա՜ Բասիլիոս. — Առանձնութեան տեղը շարադրած և անկէ խրկած է աս ճառս իր հօրն և սրբոյն Բասիլի, որունք անդադար յորդորանօք կըատիպէին զինքն եպիսկոպոսութեան պաշտօնն ընդունելու։ Իր մեծարանը կարմելա լեռան կը նմանցընէ սուրբն Գրիգոր՝ ուր Եղիա կը ճգնէր, կամ ան անապատին ուր Յովհաննէս Մկրտիչ մեկուսացեր էր. և այնպիսի խաղաղութենէ մը զրկուելուն վրայ կը դժուարի։

Ա՜ Գրիգո՜ր Նի-սա՜ցի. — Երբոր նազիանզացին եպիսկոպոսութեան աստիճանը բռնադատուեր էր ընդունելու, և այնպիսի ահաւոր պաշտօնի մը մեծութիւնը մտածելով կը սոսկար, Գրիգոր նիւսացի եկաւ զինքը մխիթարելու։ Իրեն սա սիրոյն համար ընդհակառակ կըլլայ սուրբն՝ ի պատիւ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:05 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մարտիրոսաց խօսած ճառին մէջ. որովհետեւ գլուխ խաւսոր նիւթը՝ սրբոց վկայից տօնը արժանապէս կատարելու վրայ է:

Աղէր կամ պարտականութիւն. — Ասանկ կը կոչուի սրբոյն Գրիգորի վեցերորդ ճառը, զոր ան որ քանի մը եպիսկոպոսաց, և առանձինն Բարսղի և սասիմացւոց պատգամաւորացն առջև խօսեցաւ, որոնք իրեն եպիսկոպոսական ձեռնադրութեանը ներկայ գտնուեր էին: Դարձեալ ինքզինքը կը ջատագովէ՝ թէ եպիսկոպոսութեան պաշտամանէն հրաժարելու միակ պատճառն իր ակարութեան մտածութիւնն եղած է և անոր դերազանցութիւնը: Խօսքն ունկնդիր եպիսկոպոսաց կը դարձնէ, և անոնց առաքինութիւնն ու առատաձեռն փոյթը յիշեցընելով՝ կը հնդկէ որ Քրիստոսի հօտը կառավարելու արուեստը չէ միայն օրինակաւ սովրեցընեն, հապա նաև աղօթիւք օժանդակեն:

Ա՛ կեսարու եղբայր է՞. — Արժանական ճառ մըն է՝ զոր կեսարուի՝ իր եղբօրը չերմին վրայ, և հօրն ու մօրն առջևը խօսեցաւ: Մկրտութիւնն ընդունելէն քիչ մը ետքը՝ ծաղիկ հասակին մէջ վախճաներ էր կեսարոս, և կատարս պատուիրած որ իր ամէն ինչքն աղքատաց բաժնուին: Ընտիր և արտաշարժ արձանական մըն է ասիկայ. հարազատական սէր և քրիստոնէական հաւատք՝ իրարու հետ կը մրցին, այլ առջինին ցաւը՝ երկրորդը մոռցընել կու տայ իր երկնաւոր միխիթարութեամբը: Արդարոյն մահը ուրախութեան արժանի կը սեպէ. աշխարհիս յուզմանցը մէջ ալեկոծ՝ թափառական նաւի մը իր հանգրուանը մտնելուն մէջ՝ տրտմութեան բան չի տեսներ: Կը գովէ իր եղբօրն առաքինութիւնքն, անոր հաւատքը՝ի Քրիստոս և սէրն առ աղքատս:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:06 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ի Գորգոնիա տայր Ի-ր. — Դեռ կեսարոսի մար-
մինը ցուրտ էր գինքն ամիսփող չերմին մէջ, գեռ
արտասուող աչուընները դագրած չէին անոր մա-
հը սգալէն, Նազիանզացւոյն քոյրն ալ Գորգո-
նիա երկանիկ մահուամբ աշխարհէ փոխուեցաւ:
Իր առաքինութեանց արժանի գովաբան երևցաւ
աստուածաբանն ատ արձանագանին մէջ. կը գովէ
անոր պարկեշտութիւնը, ամօթխածութիւնը, գի-
տութիւնը, իոհականութիւնը, խոնարհութիւնը,
Աստուծոյ կամաց համակերպութիւնը, և անոր
փառացը համար ունեցած նախանձը, որով տե-
րունեան տաճարը լեցուց բազմապատիկ ընծայիք,
և զաղքատս առատապարտութէ: Անկէ իրեն անա-
կան առաքինութիւնքը գրուատելու կանցնի. այ-
րատիրութիւնը, տղայոց գաստիարակութեան վը-
րայ ունեցած խնամքը, և ամէն առաքինութեանց
օրինակ ըլլալը:

Առաջ ալ ըսինք թէ Նազիանզու կրօնաւորաց
և իր հօրը մէջ պզտի տարաձայնութիւն մը ծագեր
էր, և սրբոյն Գրիգորի խնամքովը գադրեցաւ: Ա
հաշտութեան վրայ մանաւոր ձառ մը խօսեցաւ:
Գրիգորի հայրն՝ առաքինի լաւութեանցը հետ
չափազանց պարզմտութիւն մը ունենալով՝ արիո-
սեանց նենգութիւններէն խաբուեցաւ, և անոնց-
մէ առաջարկուած երկդիմի հաւատոյ դաւանու-
թեան մը տակ իր անունը գրաւ: Քաղաքին կրօ-
նաւորներն ատ բանիս վրայ մեծապէս գայթակղե-
լով՝ անոր իրաւասութեան տակ չուզեցին մնալ,
և ժողովրդենէն շատն ալ անոնց օրինակին հե-
տևեցան: Բաւական ատեն երկընցաւ ատ երկպա-
ռակութիւնը: Ճառին սկիզբն աստուածաբանը
իր սրտին իրաւացի ցաւը կը յայտնէ ժողովրդեան
և իրենց հովուապետին մէջ երևցած գժտութեա-
նը համար: Կրօնաւորաց առաքինութիւնները, ա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:13 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նոնց աղքատութիւնը, մահացուցման սէրը, լռութիւնը, պարկեշտութիւնը, խոնարհութիւնը, սէրը կը գովէ, և կը զարմանայ թէ ինչպէս սանկ անձինք Քրիստոսի հօտին և տուրբ եկեղեցւոյ խաղաղութիւնը վրդովեցին: Բայց կուրախանայ որ սատանային ծածուկ լարած որոգայթը խորտակեցաւ. Աստուած իր սիրելիքը փրկեց, և անոնց մէջ հաստատեց այն սէրն որ աւետարանական առաքինութեանց հիմն է:

Ա՜ հայրն ի՞ր՝ լռեալ և ագայեալ վասն հարուածոյ կոխին. — Ահաւոր կարկուտ մը նպղնանզուս և բոլոր մերձակայ քաղաքաց այգինեերն ու ծառերը զարկեր էր. սատուածաբան աս ձառովս ուզեց ժողովուրդը մխիթարել, և միանգամայն յորդորել զերեք որ ի մեզայ զգուշանան, վախնալով որ չըլլայ թէ անոնց համար իրկէ Աստուած այսպիսի պատիժներ: Խօսքը վերջին դատաստանին վրայ կը դարձընէ. Աստուծոյ թէ որ մէկ այցելութենն այսչափ ահաւոր է, կըսէ, հապա ինչ պիտի ըլլայ երբոր իր ամէն զօրութեամբը գայ ի դատել զկենդանիս և զմեռեալս:

Ցաղագս աղաչողութեան. — Սուրբն Բասիլեղ կեսարիոյ մէկ արուարձանին մէջ հիւանդանոց մը կառուցեր էր: Ժողովուրդն ան խեղճերուն օգնելու համար սա յորդորական ճառը շարադրեց սուրբն Գրիգոր: Կը ցցընէ թէ քրիստոնէական կրօնիս մէջ գերազանց առաքինութիւններէն մէկն աղքատասիրութիւնն է, և թէ մեր մարմնոյն պահպանութենէն աւելի մերձաւորաց վրայ խնամք պիտի ունենանք. որովհետև ամէնքնիս ալ մի ենք ի սէր, և ամենուս գլուխն է Քրիստոս: Խիստ սրտաշարժ կերպով ան խեղճերուն վիճակը կըստորագրէ, և մեծատանց փափկութիւնն ու շռայլութիւնը վար զարնելու ատեն՝ կը ցցընէ թէ սուրբ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:13 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

գիրք ինչպէս հնամով կը պատուիրեն մեզի որ ո-
ղորմութիւն ընենք :

Ի հայրն խոր . — Երբոր սրբոյն Գրիգորի ծերու-
նի հայրը լի արդեամբք և աւուրբք՝ լաւագոյն կե-
նաց փոխուեցաւ , կինն ու որդիքը և բոլոր ժողո-
վուրդն արժանապէս սուգ առին վրան : Սուրբն
Բասիլիոս ալ նազիանզ եկեր էր , ոչ միայն պատ-
ուոյքը միխիթարելու համար , այլ որպէս զի երջա-
նիկ եպիսկոպոսին Թաղմանն ալ ներկայ գտնուի
(374) : Անոր համար արձանականին սկիզբը Բարս
ղի վրայ է , ու եղբը հօրը կը դարձընէ : Այնպիսի
արժանաւոր անձ մը հռչակելու համար հարկ չէ
սեպել անոր հայրենիքը , ազգը , մարմնական ձիր-
քերն և արտաքին տեսիլքը մէջ բերել . մանա-
ւանդ որ , կըսէ , հեթանոս ծնողաց զաւակ էր ,
որոնք իրենց Աչմարիա ամէն մոռնալով հրոյ և լու-
սոյ երկրպագութիւն կը մատուցանէին : Բայց
Գրիգորի վրայ , կըսէ , հասաւ ան շնորհքն որ
կարենայ Աչմարտութիւնը ճանչնալ . եղաւ ընտիր
անօթ մը թէ սրբութեան և թէ առաքինութեան ,
որով արժանապէս գրաւեց եպիսկոպոսական ա-
թոռ մը , և գրաւեց փառօք : Աստուածաբանին
ընտիր ճառիցը մէջ ընտրելագոյններէն մէկն է ա-
սիկայ . ծնողաւէր փոյթն անանկ սրտաշարժ խօս-
քեր թելադրած է իրեն որ ընթերցողը կըզմայլի
թէ գովոզին Ճարտարութեանը և թէ գովելոյն
առաքինութեանը վրայ :

Ի սուրբն Բասիլիոս . — Աստուածաբան իր ազ-
գակցաց ամենուն վրայ արձանական խօսելէն ետ-
քը , սակայն նոյն հարկը մատուցանել նաև ի-
րեն սիրելի ուսուցմնակցին՝ սրբոյն Բասիլիոսի :
Կեսարիոյ բոլոր ժառանգաւորքն և ժողովուրդք
խմբեր էին իրենց սիրելի հովուին մահարձանին
[illegible] անոր յիշատակը պատասխանելու . հոն խօսե-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:14 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ցաւ սուրբն Գրիգոր աս արձանագիրը : Զարդա-
րուն և ճարտասանութեան ամէն ուժը կը բանե-
ցընէ աստր մէջ աստուածաբան , և մեծին Բարսղի
պարծանք ընող յատկութիւններէն մէկն ալ գուբս
չի ձգեր : Համառօտ կերպով մը անոր վարքը , աշ-
խատութիւնքը , փոյթը՝ մանաւանդ հալածանաց
ժամանակ , ուսումն և գիտութիւնը կը յիշատա-
կէ . ճարտասանութեան և հմտութեանը վրայ խօ-
սելու առնիը կրսէ . “ Թէ որ երբեմն Աստուծոյ
ձայնն ինչուան երկրիս մէկալ ծայրը հասած է ,
և կարգէ գուրս չարժուած մը վրան երևցած , աս
նշանակքը կրնան պաղատիլ մը տալ Բարսղի ճար
տասանութեանն ու հանճարին . որն որ այնչափ
մեծ է քան զհասարակ մարդիկ՝ որչափ առնք ’ի
վեր են քան զանբանս : Վասն զի ոչ իրեն չափ
լուսաւոր հանճար և ընդարձակ հմտութիւն ու-
նեցած է . ոչ իրմէն աւելի աստուածային գալո-
նեաց խորհունկը մտած ,, :

Ի մահ Մոփսիստի ասորհակին խօսքն . — Հերոն
կամ Մաքսիմոս անուանի խմաստասէրը սրբոյն
Գրիգորի աշակերտակիցներէն և սիրելի անձ մըն
էր : Հաւատոյ մէջ նշանաւոր առաքինութեամբքն
ալ եպիսկոպոսական աստիճանի պիտի հասնէր՝
թէ որ կանխաժաման մահուընէ չյափշտակուէր :
Ա ճառին հայկական թարգմանութեան միայն
մէկ մասը ձեռնընիս հասած է :

Կը թողունենք յիշատակել աստուածաբանին ու-
րիշ ճառերը :

Աստուածաբանին ընդհերը Ե փերնունիանոս . — Վե-
րը նշանակուած ճառերէն զատ այլևայլ մտերմա-
կան թղթեր ունի սուրբն Գրիգոր , որոնց մէջ իր
բարեկամաց խնդրանօքը՝ սուրբ հաւատոյ մասանց
և խորհրդոց վրայ ընտանի ոճով , որչափ որ իր մե-
ռաց բարձրութիւնը կը ներէր , կը խօսի : Իսկ քեր-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:14 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

թուԹիւնքը վերջին առանձնուԹեանն երկուԹիւններուն և զբաղմունքն են . որովհետև երբոր 387ին կոստանդնուպոլսոյ եպիսկոպոսական աԹոռէն հրաժարեցավ մանաւոր տեղ մը քաշուեցաւ , հոն իր սրբասէր մարմինն աւելի խոշտանգելու համար՝ սկսաւ ոտանաւորներ շարադրել , որոնց գրուԹեանը վրայ մեծապէս կաչխատէր , ինչպէս ինքն իսկ կը խոստովանի : Ընդհանրապէս սովորական բաներու վրայ են իր քերԹուԹիւնքը . և ԹէպէԹ ան կէղծիքը չունենան՝ որով արտաքինք քերԹող ըսուելու արժանի կըլլան , բայց անոնցմէ ալ շատ վար չեն մնար ԹէՀ խմաՀից վեհմուԹեամբն և ԹէՀ ոճին քաղցրուԹեամբ : Սուրբն Հերոնիմոս և Սուիդաս կըսեն ԹէՀ երեսուն հազար քերԹուԹիւնք շարադրած ըլլայ . բայց մեր ձեռքը հասածներըմ՝ հարիւր քառասունըչորս են Թուով , Թող երկու հարիւր քսանըուԹ վերստաւուԹիւնքն այլևայլ նիւԹերու վրայ :

Աստուածաբանին ոճը . — Նազիանզացին իր ժամանակին ամենէն աւելի հռչակաւոր ճարտասանն էր : ԲնուԹեամբ վառվռուն և արգասաւոր երևակայուԹեան տէր ըլլալով գերազանց հանճար մը ստացեր էր , Թափանցող սիրտ , առողջ և հաստատուն դատողուԹիւն , և որ զարմանալին է՝ բացատրուԹեան դիւրուԹիւն մը : Ա՛ս ամէն հանգամանքն իր գրուածոց մէջ յայտնի կերևնան երբոր մէկ կողմանէ նկատես իր արտաքին հմաստուԹեանց ընդարձակուԹիւնը՝ զոր Աղեքսանդրիոյ և ԱԹենքի վարժարանաց մէջ ստացեր էր , և մէկալ կողմանէ՝ ան խորունկ աեղեկուԹիւնն աստուածաշունչ գրոց՝ որով կրցաւ այնպիսի ճշդուԹեամբ մեր սուրբ հաւատոյ խորհուրդքը բացատրել և ոտոտաբանի կոչուելու արժանի ըլլալ : Հռուֆինոս կըսէ ԹէՀ Հերեսիկոս սեպուելու համար՝ բա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:14 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ւսկան է սրբոյն Գրիգորի մեկ խօսքին գէմ կեն-
նալը. Հերոնիմոս կը պարծենայ այնպիսի լուսա-
ւոր հանճարով վարդապետ մը ունենալուն վրայ.
սուրբն Բարսեղ ալ քիչ խօսքով անոր կատարեալ
գովեստը կընէ երբոր կը ղուրսկէ. " Անօթի փառաց
և ընտրութեան եղաւ իր բարուց անմեղութեամ-
բը. չտեմարան խորհունկ և ընդարձակ գիտութեե.
քերան Քրիստոսի. իշխան Հարտարախօսաց՝ խօս-
քերուն ուժովն և իմաստից վսեմութեամբ ,, :

Կարգաւորեալ և արուեստով գրուած են աս-
տուածաբանին Հառերը. բառերն ընտիր, բա-
ցատրութիւնը ազնուական, ձևերն այլևայլ, բաղ-
դատութիւնքը Հմտութիւն, իստակցութիւնը հաս-
տատուն : Թէ նեղբողեան շարադրելու մէջ, թէ
զուրիչը համոզելու ատեն, թէ հաւատոյ Հինա-
մինեքուն գէմ կռուելու ժամանակ՝ ոչ երբէք
նիւթէն վար կը մնայ : Ատուպագրութեանցը մէջ
Հիշդ է և ուժով. ոչ ախտից կը խնայէ և ոչ ախ-
տաւորաց. Թզիներէն շատը Թէպետև Հատուտօտ՝
բայց իրենց մէջ ամփոփուած իմաստներովը՝ եր-
կարութեան փափաք չեն ձգեր :

ԳԼՈՒԽ ԻԴ.

ԵՓՐԵՄ ԽՈՐԻՆ ԱՍՈՐԻ

Սրբոյն Եփրեմի վարքը. — Երկոսէրոնեանց համառօտ
ցուցակը :

Սրբոյն Եփրեմի վարքը. — Սիւրիոյ Եդեսիա քա-
ղաքը ծնաւ սուրբն Եփրեմ բարեպաշտ և ընտիր
առհմէ. որոնք Թէպետև ըստ մարմնոյ մեծութիւն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:14 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ւսկան է սրբոյն Գրիգորի մեկ խօսքին գէմ կեն-
նալը. Հերոնիմոս կը պարծենայ այնպիսի լուսա-
ւոր հանճարով վարդապետ մը ունենալուն վրայ.
սուրբն Բարսեղ ալ քիչ խօսքով անոր կատարեալ
գովեստը կընէ երբոր կը ղուրկէ. "Անօթ փառաց
և ընտրութեան եղաւ իր բարուց անմեղութեամ-
բը. չտեմարան խորհուրդ և ընդարձակ գիտութե-
բերան Քրիստոսի. իշխան Հարտարախօսաց՝ խօս-
քերուն ուժովն և իմաստից վսեմութեամբ":

Կարգաւորեալ և արուեստով գրուած են աս-
տուածաբանին Ճառերը. բառերն ընտիր, բա-
ցատրութիւնը ազնուական, ձևերն այլևայլ, բաղ-
դատութիւնքը Հմտութիւն, խօսակցութիւնը հաս-
տատուն: Թէ ներբողեան շարադրելու մէջ, թէ
զուրկը համոզելու ատեն, թէ հաւատոյ Հինա-
մինեներուն գէմ կռուելու ժամանակ՝ ոչ երբէք
նիւթէն վար կը մնայ: Ատորագրութեանցը մէջ
Հիշդ է և ուժով. ոչ ախտից կը խնայէ և ոչ ախ-
տաւորաց. Թզթերէն շատը Թէպետև հատուածո՝
բայց իրենց մէջ ամփոփուած իմաստներովը՝ եր-
կարութեան փափաք չեն ձգեր:

ԳԼՈՒԽ ԻԴ.

ԵՓՐԵՄ ԽՈՐԻՆ ԱՍՈՐԻ

Սրբոյն Եփրեմի վարքը. — Երկոսէրոնեանց համառօտ
ցուցակը:

Սրբոյն Եփրեմի վարքը. — Սիւրիոյ Եդեսիա քա-
ղաքը ծնաւ սուրբն Եփրեմ բարեպաշտ և ընտիր
առհմէ. որոնք Թէպէտև ըստ մարմնոյ մեծութիւն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:15 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

և հարստութիւն չունէին, բայց հաւատքով ա-
նուանի և հռչակուած. որովհետև իր կեղէն այլ-
եայլ անձինք՝ Դիոկղետիանոսի քրիստոնէից դէմ
տուած հալածանքին աատեն քաջութեամբ վկայե-
ցին Աստուածութեան, և մարտիրոսական մահուամբ
պսակուեր: Ծնողքը եէրեմ կամ եէրայէմ կոչեցին
իրենց զաւակը, որ պղծութիւն ըսել է. որովհետև իր
ծննդեանէն քիչ ետքը տեսիլք տեսան որ տղուն
բերնէն ոսկի մը դուրս կելլէր, վրան լեցուն պըտ-
ղովք. և աձելով բոլոր երկիրը ծածկեց, և ամէն-
քը կուգային անոր պտուղներէն ուտելու:

Եփրեմ տանրուելը տարուան հասակին մկըր-
տեցաւ, ու ծնողացն ապրուստ հայթելու համար
խաչնադարմանութիւն կընէր: Հօտին մէջէն ոչ-
խար մը կորսուեցաւ. աէրը կարծելով թէ եփ-
րեմն է յանցաւոր, առանց մտիկ ընելու իրեն, որ
կը ջանար ինքզինքն արդարացընել, բանտ դնել
տուաւ: Երեքտասանն օր բանտին մէջ կեցաւ Եփ-
րեմ, և ան միջոցին այլևայլ տեսիլք և երկնային
յայտնութիւն ունեցաւ, որով իր պատանեկու-
թեան այլևայլ տարակոյսները լուծուեցան, և ի-
մացաւ թէ ինչ աստիճանի սրբութիւն սրտի կը
պահանջէ Աստուած անոնցմէ՝ որ իրեն ծառայու-
թեանը կը փափաքին: Կատարելութեան փափա-
քով վառուած՝ բանտէն ելլելուն պէս մեկնեցաւ
պատա մը առանձնացաւ, ուր ինքզինքը հսկմանց,
պահոց և ամենազգի ապաշխարութեանց տուաւ:
Բայց որովհետև մերձակայ ժողովուրդը հրահան-
գելու զբաղեցուցիչ՝ անունը տարածուած էր, Մըծ-
բնայ հայրապետը տուրքն Յակոբ բանի զինքը տար-
կաւագ ձեռնադրեց, որպէս զի տեսլուն քաղցք
գալ, և իր աստուածուսոյց վարդապետութենէն
ջրկել զհաւատացեալս: Ակամայ հնազանդեցաւ
տուրքն Եփրեմ. և երբ անոր արդեանցը վայ աքան-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:15 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

չանալով եպիսկոպոսութեան աստիճանը կուզէին տալ. յիմարութիւն ձևացուց և անով հազիւ իրենդրակաց ձեռքէն ազատեցաւ, որոնք այսպիսի առաքինի մարդ վշտացընելու առիթ չուզեցին տալ: 373ին առենները կեսարիա գնաց, որբոյն Բարսղի հետ տեսնուելու. անկէց Եդեսիա դառնալով (380) նոյն տարուան սուրբն և հիւանդութիւնները չարչարուող ժողովրդեան օգնելու հնարք չմնաց որ չգործածէ. ինչուան ինքն ալ սիրոյ զոհ եղաւ, ամեն մը եռքը մեռնելով:

Եֆրեմ Էրիւթրոնի՝նը. – Սուրբն Եփրեմ այլևայլ գրուածք չարադրեց ասորի լեզուով. ասոնցմէ շատին սկզբնագիրը կորսուած է, և միայն հայկական թարգմանութիւնը կայ, շատին ալ ասորերէն բնագիրը կերևնայ և հայկականը կը պակսի: Հայերէն թարգմանութեան ոճէն և լեզուէն յայտնի կերևնայ որ սրբոյն մահուընէն քիչ տարի եռքը մեր գրականութեան ոսկեղէն դարուն մէջ եղած են յաւելի բնագրէ, ինչպէս հաւանական կերևնայ: Ւան ալ թէպէտ սրբոյն Եփրեմի գրուածները մէկէն յունարէն թարգմանուեցան, բայց մեր նախնիք որ հաւատարմապէս տեղեակ էին ասորի և յոյն լեզուաց, լաւ համարեցան բուն ասորի սկզբնագրին վրայէն թարգմանելը, ինչպէս յայտնի կերևնայ ոճէն, և մանաւանդ անուանց թարգմանութենէն: Հայերէն թարգմանութեան գանուածները տպագրած են՝ի Վենետիկ (1836) էրս հատորի մէջ ամփոփուած. բայց քանի տարուան միջոցի մէջ ժամանակին ուրիշ այլևայլ երկասիրութիւնք ալ երևցուց, որոնց մէջ գլխաւորը կրնայ սեպուիլ իր կեանքն ամբողջ, և պատարագի տուրքը խորհրդոյն վրայ սքանչելի ալօթքներ և կցուրդք:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:15 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԼՈՒԽ ԻԵ.

ԳՐԻԳՈՐ ՆԻՍԱՑԻ

Նիսացւոյն վարքը. — Երկոսիրութիւնը. — Ընդդէմ Եւնոմիոսի. — Յաղագս հոգւոյ. — Մէկնութիւն երգոց երգոյն. — Տրամախօսութիւն յաղագս հաւատոյ և յարութեան. — Յոն երանութենէն գիրք. — Յաղագս վհկին որ էր Սաուղայ. — Գիրք ընդդէմ բաղդի կամ ճակատագրի. — Յաղագս կուսութեան. — Նիսացւոյն ոճը:

Նիսացւոյն վարքը. — Մեծին Բասիղի կրտսեր եղբայրն էր սուրբն Գրիգոր Նիւսացի, և կատարդովկիոյ մէջ ծնած Քրիստոսի 331 թուականին: Թէպէտ իր բոլոր եղբարքը միայնութեան կենաց փափաքով աշխարհէ հրաժարեր էին, բայց Գրիգոր՝ նախ առաքինի օրիորդի մը հետ ամուսնանալով, երբոր Աստուծոյ կոչմամբը քահանայական պաշտամանն արժանի եղաւ, լծակցին հաւանութեամբն իրարմէ բաժնուեցան: 370ին աւետնեըը կատարդովկիոյ Նիւսա քաղաքին եպիսկոպոս եղաւ, բայց Վալէս կայսրը՝ անոր արիոսեանց դէմ ունեցած նախանձայուզութիւնը տեսնելով աքսորել հրամայեց (375): Իրեք տարի կենալէն ետքը նորէն Նիւսա դառնալով՝ ներկայ գտնուեցաւ Ընտիոք գումարուած ժողովքի մը, ուր գումարեալ եպիսկոպոսունքը Գրիգորի հնամոց յանձնեցին որ Արաբիա և Պաղեստին ճամբորդութիւն մը ընէ՝ հոնտեղի եկեղեցիքը կարգի մէջ մտցնելու համար: Չնազանդեցաւ իւրեանց Գրիգոր, և նախ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:15 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ալուսաղէմ անցնելով՝ յունկրատուԹիւն անուրինական տեղւոյն Քրիստոսի, անկէ լուեն համար սահմանուած առաքելուԹեան գնաց, և այնոյն ձգամիք աշխատելէն ետքն ալ՝ մէկ արգասիք մը չտեսաւ։ 381ին գումարուած կոստանդնուպոլսոյ հռչակաւոր ժողովքին ալ ներկայ էր. ուր իրեն յանձնեցին՝ Ընտիրքայ պատրիարքը՝ Մելետեայ արձանականին ընել։ Չեռւեալ տարին նորէն՝ ի կոստանդնուպոլիս եղած ուրիշ սինհոդոսի մըն ալ առաջնակայ էր, ուր որ որդւոյն Աստուծոյ և հոգւոյն սրբոյ աստուածուԹեան վրայ ընտիր ճառ մը խօսեցաւ. նոյնպէս՝ի կոստանդնուպոլիս չարտգրեց Փլակիլլա և Պուլքեբիա Թագուհեաց արձանականը (385)։ Չորրորդ ճամբորդուԹիւն մըն ալ ըրաւ՝ի կոստանդնուպոլիս 394ին գումարուած ժողովքին համար. և անկէ ետքն երկու տարի ալ ապրելով մեռաւ։

Նիւսացւոյն Եւսեբիոս.— Սրբոյն Գրիգորի նիւսացւոյ գլուածոյը մէջ գվնասուրներն են

Ընդէմ Եւնոմիոս.— Եւնոմիոս հերետիկոսապետն երբոր իր մոլորուԹիւնը սերմանելով հաւատացեալոց շատին գայԹակղուԹեան պատճառ կըլլար, սուրբն Բասիլիոս աս վնասին դէմն առնելու համար՝ իր բնական դարձած վարդապետուԹեամբն ու ճարտասանուԹեամբ՝ անոր հերձուածին Թուքն մը դրեր էր։ Եւնոմիոս տարիներով աշխատեցաւ սրբոյն պատասխանը տալու. բայց վախնալով անոր կենդանուԹեան ատեն այնպիսի անուճ գլուԹեամբ մը իր վարդապետուԹեանց յարգն աւելի նուաստացընել, սրբոյն մահուընէն ետքն սկսաւ իր դրուածքին օրինակները ափռել աշակերտելոցը մէջ՝ խոտիւ պատուիրելով որ չըլլայ Թէ ուղղափառաց ձեռքն օրինակ մը իյնայ։ Նիւսացին Թախանձանօք խնդրեց մէկէ մը. անիկ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:15 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կայ ալ Թէպէտ տուաւ, բայց եաքը վախնալով որ չըլլայ Թէ հոչակուի, մեկէն եաւ ուզեց. որով սուրբ Գրիգոր ատեն չունեցաւ ամբողջ գիրքը կարդալու: Բայց ան տասնըեօթը օրուան մէջ ալ՝ նիւսացին Եւնոմիոսի առջի գրքին հերքումը շարադրեց ճոխ և խմաստուն բանիւք: Այնչափ հաճոյ եղաւ իր աս երկասիրութիւնը ժամանակին հաւատացելոցը, որ սկսան աղաչել զինքն որ օրինակները շատցնելով՝ ուղղափառաց մէջ ցրուէ: Բայց նիւսացին ուզեց նախ աս բանիս վրայ իր սուրբն Պետրոս եպիսկոպոսը խորհուրդ հարցընել, որ փոքրուն հայոց Սեբաստիա քաղաքին եպիսկոպոսն էր: Անիկայ իրաւ տուաւ իրեն որ չհրատարակած՝ Եւնոմիոսի ամբողջ գիրքը ձեռք ձգէ, ու բոլորին հերքումն ընէ. որպէս զի չկարծուի Թէ հերձուածողին զօրաւոր համարուած ձեռնարկութեանը չկարենալով պատասխանել, հրաժեշտ տուած ըլլայ: Նիւսացին մոխիկ ըրաւ իրեն, ու Եւնոմիոսի սմին մոլորութեանը դէմ երկուասան գիրք շարադրեց:

Տրամախօսութիւն մըն ալ յօրինած է Գրիգոր իր և Մակրինա քրոջը մէջ, որն որ Յաղագս հաւատոյ և յարուցեան կը կոչուի: Սրբոյն հարսին մահը մեծապէս ազդեցութիւն ըրեր էր նիւսացւոյն վրայ. քոյր և եղբայր՝ զիրար մխիթարելու համար աս ուրամախօսութիւնս կընեն. որուն մէջ սուրբն Գրիգոր՝ իբրև քրիստոնեայ կը հաւատայ հոգւոյ և յարութեան, բայց իբրև խմաստասէր՝ քանի մը տարակոյսներ կառաջարկէ: Մակրինա՝ Թէ բնական և Թէ հոգեկան տեսութեամբք իր ամէն երկմտութիւնքը կը փարատէ:

Յաղագս հոգւոյ. — Առջինէն տարբեր է ասկայ, և խմաստասիրութեան պատմութեանը համար մեծապէս օգտակար. որովհետև մեծ ճշդութեամբ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:15 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

և մտաց նրբութեամբ կը հաւաքէ սուրբն Գրիգոր հին իմաստասիրաց ունեցած այլևայլ կարծիքնե-րը հոգւոյ վրայ։

Մէնոռնէն էրգոյ էրգոյն. — Առաջ գրութեանը պատճառ՝ Ալոմպիադա ազնուական տիկինն է-ղաւ, որն որ իր երկանէն այրի մնալով բոլոր ու-նեցածը չունեցածին աղքատաց և եկեղեցիներու բաժնեց։ Նախան քաղքին եկեղեցին ալ մանա-կից եղաւ իւրեն առատաձեռնութեանը. որով հետև մեծ գումար մը դրամոց սրբոյն Գրիգորի ձեռքը հասաւ աղքատաց բաժնելու համար։ Բա-րեպաշտան տիկնոջը ձեռքէն ասա բարիքն ընդունե-լէն ետքն՝ երբոր սուրբն Գրիգոր կոստանդնու-պոլիս գնաց, հոն Ալոմպիադա՝ սրբոյն հետ ծա-նօթանալով՝ խնդրեց իրմե որ Եւգոց երգոյն մեկ-նութիւնը շարադրելու ձեռք զարնէ։ Նոյն ատեն-ները Բիւզանդիոնի մէջ սովորութիւն կար, ինչ-պէս մեր նահապետացին ալ կը յիշատակէ, որ եր-գոց երգոյն իմաստանալուն բարակութեանը խելք հասցընել չկրցող մարդիկ՝ աշխարհական գիրք մը կը սեպէին, ու այնպիսի հանդէսներու և տօնե-րու մէջ երգի վրայ առած՝ քնարով և տաւղով կերգէին։ Ալոմպիադայի փափաքն էր այդպիսի սուրբ գրքի մը մեկնութեամբ՝ անանկ գայթակղա-կան սովորութիւնը վերցընել։ Յանձն առաւ Գրի-գոր, և ընակր ոճով մը Սողոմոնի նոյն գրքին մեկ-նութիւնը շարադրեց։

Ինն էրանոնէնց. — Քրիստոսի աճառն մերոյ Լե-ռան վրայէն զուրցած ինն երանական խօսքերուն մեկնութիւնն է, զոր նիւսացին իւրեն հօտին հա-մար շարադրեց, իւրաքանչիւր երանութեան վրայ մանաւոր ճառեր յօրինելով։ Աստուց հայրապե-տութեանը վրայ տարակոյս չկայ. որովհետև թէ Եփեսոսի ժողովոյն հարքը, թէ Թէոդորետոս և թէ սուրբ Յովհան դամասկացին կը վկայեն։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:16 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Յաղագս վկային որ էր Սաւուղայ. — Թղթիւ ձևով շարադրած է առ Թէոդոսիոս եպիսկոպոս, ղոր որդի Խոր կը կոչէ, և ինչ Տիմոթէոս. որով հաւանական կերևնայ թէ իր աշակերտին եղած ըլլայ: Ան ձառին մէջ նախ կը զուրցէ թէ շատերն իրմէն առաջ խօսած են նոյն նիւթին վրայ. ջնդունիր, և իրաւամբք, թէ վէնուկն ինքիրմով կըրցած ըլլայ երևցընել Սաւուղայ զՍամուէլ. որով հետև ըստ աւետարանին ալ՝ Աբրահամու գոգին և դժոխոց մէջ եղած միջոցը վիհ մըն է, և չի կրնար դատապարտեալ մը իրեն կամքը խառվել աղարին հանգիստը: Ուստի ինքը կը կարծէ թէ սատանան էր, որ Սամուէլի կերպարանքն առաւ՝ Սաւուղայ հետ խօսելու:

Գիր ընդդէմ Բազէի կամ ճակոփափրի. — Երբոր նիւսացին կոստանդնուպոլսոյ մէջ էր, այլևայլ արտաքին իմաստասիրաց հետ ծանօթացաւ, ու զիրենք յորդորեց որ յունական աւետրոդատաշտու. Թիւնը մէկդի ձգած՝ քրիստոնէական կրօնից ճշմարտութեան հետևին: Անոնք պատասխան տուին սրբոյն թէ մեր ձեռքը չէ սա բանը. մարդս իր անձին վրայ իշխանութիւն չունի. հարկ մը կամ ճակատագիր կայ աշխարհիս մէջ, և անիկայ է մեր ամէն գործոցն ուղղիչ և սրամադրող: Նիւսացին հետևեալին խօսեցաւ, ու Աստուծոյ շնորհաց սատարելովը՝ անոնց շատին աչքը բացաւ: Ան իմաստասիրաց մէջ մէկը կար Եւսեբիոս անունով ծերուն մը, որ իմաստասիրութեանը հետ աղանդին մէջ հնցած էր, ու անկարելի կերևնար զինքը համոզելը: Բայց իր սուտ գիտութեամբը չկրցաւ ընդդիմացին յաղթահարել. հարկ եղաւ որ ինքն ալ մէկալնոց օրինակին հետևի: Ան դարձն այնչափ զարմանք ազդեց կոստանդնուպոլսոյ հաւատացեալց վրայ, որ շատերը թախանձեցին զնիւ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:16 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ասցին ու անոնց հետ ըրած խօսակցութիւնը գրի վայ առնէ : Ան առեն շարադրեց Գրիգոր աս գիրքը :

Յաղագս կուսութեան . — Ասոր թէպէտ թէ ոճն և թէ դրութեան կերպը բոլորովին նիւսացւոյն յատուկ է , բայց եղան ոմանք ալ որ ուղեցին անհարազատ սեպել , և աս իրենց կարծեացը հաստատութիւն՝ երկու պատճառ մէջ կը բերէին . նախ թէ հեղինակն ինքն իրեն համար կը զուրկէ թէ աշխարհք մուած է . և երկրորդ՝ իր հայրը բարեպաշտ եպիսկոպոս կը կոչէ . ուր յայտնի է թէ նիւսացւոյն հայրը ոչ երբէք աս աստիճանին ընդունեցաւ : Աշխարհք մուած ըլլալուն տարակոյսը բոլորովին ընդունայն է . որովհետև իրեն վարուցը ամէն պատմիչքը կը յիշատակեն թէ Թէոսեպիտա անունով օրիորդի մը հետ ամուսնացած ըլլայ , ինչպէս մենք ալ վերն յիշատակեցինք : Իսկ իրեն հայրն եպիսկոպոս կոչելուն համար՝ նշանակելու արժանի է թէ մանուկներու ծնողաց համար չէ խօսքը , այլ հոգևորին՝ սրբոյն Բասիլեոսի , զոր ուրիշ տեղ ալ իր վարդապետը կը կոչէ , ու մեծապէս կը պատուէ զինքը : Թող որ ուրիշ թղթի մէջ յայտնապէս իր հայրը կը կոչէ զԲասիլեոս : Կուսութեան գովեստ է աս գիրքս , և թէ ինչպէս Աստուծոյ հաճոյական առաքինութիւն է թէ որ մէկն արժանապէս կատարէ ան պարտքերը՝ որոնցմով աւելի հրեշտակաց նման կը սեպուի քան թէ մարդկան :

Անոնցմէ զատ նիւսացին ուրիշ գրոց և տոմոսաց այլևայլ մեկնաբանական տեսութիւններ ունի , և բարոյական նիւթոց վերայ բազմաթիւ ճառեր :

Նիւսացւոյն ոճը . — Վարդապետութեամբն ու խօսքին ուժովը՝ ուրիշն Գրիգոր նիւսացի կը հաւասարի իր եղբօրը Բասիլի . բայց իրմէն շատ աւելի ճոխաբանութեան ուսմանը պարապած ,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:16 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ու ձառերն ան ալուեսային յատկութեամբը յօ-
րինելու ջանք ունեցած, որով առանց վախի՝ հնու-
թեան անուանի ճարտարախօսաց հետ կրնանք
զինքը զուգակշռել: Ոճը մաքուր է և ընթացիկ,
քաղցր, հաճոյական, լի առատ և ճշգրիտ բաղ-
դատութեամբ: Խիստ ախորժելի է կարդալ ի-
րեն գամրանական ճառերը Պուլքերիոս և Պլա-
կիլլա իշխանուհեաց վրայ. ի պատիւ նախավկայ-
ին գրած ներբողը, սրբոյն Մելիտոսի և Բարսղի
վրայ շարադրած գովեստները. մանաւանդ արձա-
նականներուն մէջ՝ առաջին կարգի ճարտարախօս
է: Նիւսացւոյն ուրիշ գրուածներըն՝ հեղինակին
խորունկ և ընդարձակ համառօտութեանը նշանակներ
են: Մէկն եղած չէ որ իրեն պէս ճարտարութեա
հերքած ըլլայ զԵնոմիոս՝ ամենէն աւելի վտան-
գաւոր և նրբամիտ իմաստակը. սուրբն Գրիգոր
Թէ զինքն և Թէ վարդապետութիւնը գեհին կը
զարնէ ու կը խորտակէ՝ իմաստասիրութիւնը աս-
տուածաբանութեան հետ խառնելով, որովհետև
հակառակորդացը բռնած կեցուն ալ ան էր: Ե-
փեսոսի ժողովին հայրը՝ արժանաւոր եղբայր
սրբոյն Բարսղի կոչեցին զինքը, և զարմացան ա-
նոր հաւատոցը հաստատութեան, բարուցն անա-
րատութեան և իմաստութեան վրայ. իր գրուած-
ներըն բաւական տեղեկին՝ի հաստատութիւն նախ-
նի վարդապետութեան եկեղեցւոյ, ու նեստորի
ձայնակից եղածը դատապարտելու համար. Նիկիոյ
երկրորդ ժողովքին հայրապետքն ալ հայր հարցն
կոչեցին զինքը: Որոգինէսի վրայ ունեցած համար-
մունքը՝ բանի մը տեղ պէտքը չէ տեսնել. վասն զի
Նիւսացին՝ հոգւոյ նախագոյութեան կարծեաց
դէմ գրեց, որն որ Որոգինէսի գլխաւոր մոլորու-
թիւններէն մէկը կը սեպուի:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:16 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԼՈՒԽ ԻԶ.

ՍՈՒՐԲ ԱՄԲՐՈՍԻՈՍ

Ամբրոսիոսի վարքը. — Ամբրոսիոսի էրկասիրութիւնքը. — Յաղագս արարչութեան, գիրք վեց. — Յաղագս պրախային. — Հին օրինաց մեջ նշանաւոր այլաբանութիւնք վրայ ճառը. — Յաղագս պաղատանց. — Յաղագս կոյսութեան առ Տոյր իւր Մարիէլլինա. — Առ Գրատիանոս Օգոստոս՝ յաղագս հոգւոյն սրբոյ. — Սրբոյն Ամբրոսիոսի դամբանականները. — Արձանական ի մահն Թէոդոսի. — Ամբրոսիոսի մահը։

Ամբրոսիոսի վարքը. — Ընտիր և իշխանական տոհմէ էր սուրբն Ամբրոսիոս, Գաղղիոյ Տրեւ քաղաքը ծնած՝ Քրիստոսի 340 թուականին։ Իր հօրն ու նախնեացը պէս ինքն ալ քաղաքական պաշտամամբք փառաւորուած՝ կայսերաց ու ամէն զինքը ճանչցողներուն առջին պատիւ ու մեծարանք գտեր էր. ինչուան Իտալիոյ Միլան կամ Մեդիոլան քաղքին ընդհանուր քաղաքապետ կարգեցաւ, ու արդարասէր վարմունքն և իմաստուն կառավարութեամբ ամենուն հաճոյացաւ։ Նոյն օրերը քաղքին Օքսենտիոս եպիսկոպոսը մեռնելով հաւատացելոց մէջ մեծ շփոթութիւն ծագեցաւ. որովհետև Արիոսի մոլորութեան հետեւողքը ինչուան հոն ալ քազմացեր ու ժողովրդեան մէջ հերձուած ձգեր էին. որով ամանք արիոսեան եպիսկոպոս մը կուզէին դնել, ուրիշներն ալ ուղղափառ մը, ու մէջերնին չէին կրնար միա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:16 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

բանիլ: Ամբրոսիոս անոնց չփոթումին տեսնելով հարկ սեպեց իբրև քաղաքապետ անձամբ երթալ քովերնին, ու զիրենք միաբանութեան յորդորել: Հազիւ թէ քանի մը խօսք սկսեր էր ցուցնել, թէ արիոսեանք և թէ ուղղափառք սկսան միաձայն աղաղակել և զինքն ուզել իրենց եպիսկոպոս: Հարկ չէ ըսել թէ որչափ մեծ եղաւ Ամբրոսիոսի զարմանքը. առաջ բռնութեամբ ուզեց զիրենք վախցընել. բայց երբոր տեսաւ թէ քանի կերթայ աղաղակը կը բազմանայ, թողաւ ու տուն քաշուեցաւ. սակայն ժողովուրդը զինքը հանդարտ չթողաւ:

Ամբրոսիոս չկրցաւ անոնց փափաքանացը, ևս առաւել Աստուծոյ կամքին դէմ կենալ. հարկ եղաւ որ հնազանդի. և որովհետև դեռ երախայ էր, մկրտուեցաւ՝ ու կարգաւ եկեղեցական աստիճաններն ընդունելով 374ին դեկտ. 7ին եպիսկոպոս ձեռնադրուեցաւ: Մէկէն իր ամէն ինչքն եկեղեցւոյն տուաւ Ամբրոսիոս, ու անկէ ետքն ուրիշ մտածութիւն չունեցաւ՝ բայց եթէ այսպիսի հրաշալի կերպով մը ընդունած պաշտամանպարտքերն ըստ արժանւոյն կատարելու: Այլևայլ ժողովքներ գումարեց, եկեղեցւոյ մէջ խաղաղութիւնը նորէն հաստատելու ու հերձվածոց մոլորութիւնները դատապարտելու համար: 380ին Մաքսիմոս ինքզինքը կայսր հրատարակելով Լուգդունի (Լիոն) քով ըրած պատերազմին մէջ գրաւիանոս սպաննեց, ու դէպ՚ի Իտալիա սկսաւ արշաւել: Վալենտիանոս կայսրը չէր գիտեր ինչպէս անոր դէմ դնել. զսուրբն Ամբրոսիոս իրեն խրկեց որ խաղաղութիւնը դաշինք առաջարկէ: Յանձն առաւ հայրապետը, բռնաւորին հետ աներկիւղ համարձակութեամբ մը խօսելու, յանդիմանեց զինքն սաստարութեանցը և անիրաւութեամբ

կայսերական աթոռը յափշտակելուն համար։ Այնպիսի աստուածատուրեալ ճարտարախօսութեան մը չկրցաւ դէմ կենալ Մաքսիմոս։

Արևելեան և արևմտեան կայսերութեանց մէջ գրգռուած ընտանի կռիւները իրենց առիթ առին հեթանոսք, և սկսան յորդորել զՎալենտիանոս որ նորէն կռոց պաշտօնը հաստատէ. իրենց գլուխ կեցեր էր անուանին Սիմմաքոս, որ ժամանակին ամենէն դռչակաւոր ճարտարախօսը կը սեպուէր, և կը կարծուէր թէ խօսքին ուժովը պիտի յաղթէ Վալենտիանոսի մտաց հաստատութեանը. միայն Ամբրոսիոս կրցաւ անոր դէմ ելլել, ու այնպիսի ճարտարախօսութիւն և կրակ մը գործածեց իրեն համատակութեանցը դէմ, որ կայսրը հռոմէն հրամայեց աքսորել զՍիմմաքոս։ Հազիւ թէ հեթանոսք ընկճեցան, արիսեանք գլուխնին վերուցին, ու Յուստինէ կայսրուհւոյն և անոր որդւոյն պաշտպանութեամբը իրարհուսած, զէնք առին ձեռնին, ու կըսպասէին զԹագաւորն որ իրենց համար մանաւոր եկեղեցիք շնորհուին. բայց իրենք ալ չկրցան Ամբրոսիոսի դէմ դնել։ — Ծանօթ է՝ Թէոդոսի զԹեսաղոնիկեցիս փուճ պատճառի մը համար սրէ անցընելը. և երբոր ան անիրաւութիւնն ընելէն ետքն ալ՝ Աստուծոյ տունը կուզէր մտնել, սուրբ հայրապետը ոչ անոր թագաւորական ուժէն և ոչ փառքէն վախցաւ. մահն աչքառած եկեղեցւոյ դուռը վազեց, յանդիմանեց զինքը խստիւ, ու Թոզ չտուաւ որ ներս մտնէ։ Ապաշաւեց Թէոդոս, զարմացաւ այնպիսի քաջութեան մը վրայ, ու խոստովանեցաւ թէ Ամբրոսիոսի պէս ուրիշ եպիսկոպոս մը չտեսաւ աշխարհիս վրայ։ Յիսունըեօթը տարուան մեռաւ Ամբրոսիոս (397)։

Ամբրոսիոսի երկասիրութիւնք. — Սրբոյն Ամբրո-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:22 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

սիոսի գլուսածոց մէջ միայն գլխաւորները յիշատակելով գոհ ըլլանք:

Յաղագս վէցօրեայ արարչութեան, գիրք վէց. – Մեզնիոլանոս հաւատացեալքը հրահանգելու և արարչութեան խորհուրդը բացատրելու համար սա գիրքս շարադրեց սուրբն Ամբրոսիոս՝ Քրիստոսի 389 Թուականին, ինչպէս հաւանական կերևնայ: Հերոնիմոս կասանդէ Թէ սուրբը վարդապետը իր սա երկասիրութեան մէջ շատ սեղ Որոգինէսի, Հիպպոլիտայ և սրբոյն Բարսղի խօսքերն և իմաստները գործածեց: Առջի երկուքին՝ վեցօրեայ արարչութեան վրայ գրած ճառերը ձեռքը. նիս հասած չըլլալուն՝ չենք կրնար ոտոշ բան մը ըսել. իսկ սրբոյն Բարսղի խօսքերէն շատ բան առած է Ամբրոսիոս, բայց ոչ Թէ նիւթապէս գաղափարելով, այլ բոլորովին իրեն սեպհականելով: Պլինիոսէն և ուրիշ արտաքին մատենագիրներէն ալ շատ բան առած է:

Յաղագս դրախտին, գիրք դոկ. – Հաւանականապար Քրիստոսի 375 Թուականին գրած է սա գիրքս, ան տարուան՝ յորում քաղաքապետութենէն քահանայական պաշտամանն ելաւ. որով Ամբրոսիոսի երկասիրութեանցը մէջ ասիկայ կըլլայ առաջինն: Սուրբ վարդապետիս չանքն եղած է ցցնել Թէ ուր էր դրախտը, և Թէ ինչ կրնէին անոր մէջ նախածնողք, և սատանան ինչպիսի հնարքով պատրանաց մէջ ձգեց զնոսա: Մանաւորապէս կերպով արիսաեանց և Հրէից դէմ շարադրած է սա ճառս, և ան վախճանաւ փիլոնի հեթրայեցւոյն այլևայլ իմաստները գործածած. ինչպէս նաև կայենի և Աբելի, Նոյի, Աբրահամու և Իսահակայ վրայ շարադրած գրքերուն մէջ:

Յակոբ կամ Յաղագս էլիայի կենաց. – Առջիններէն եաքը շարադրած է սա գիրքս սուրբն Ամբրո-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:22 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

սիոս, ու 387ին պատեքսատոնին իր հաւատացեալոց քարոզած։ Կը յորդորէ բարի վարուց փոյթ ունենալ, և թէ մեր մեղաց պատճառ կամքերնիս է և ոչ մարմինը. որովհետև աս վերջինը պարզ մըն է յԱստուծոյ ստուած, որով ըստ ինքեան չի կրնար մեղաց պատճառ ըլլալ՝ եթէ մենք կամքերնիս սանձելու յօժարութիւն ունենանք։ Կը ցցըներ թէ պատրաստ ինչ է ուղիղ հաւատոյ վրայ հաստատուն կենալ, ու որ և իցէ գժբաղդութիւն՝ ձշմարիտ աստուածասէր անձ մը չի կրնար զատել՝ ի Քրիստոսէ։ Օրինակ կը բերէ Եղիսաբեայ ծերութիւնին, մանկաբարեացոյ մէջ յիշատակուած եօթն եղբարցն և իւրեանց բարեպաշտոն մայրը Շամունէ։

Ի նահապետն Յովսէփ.— Վասն նախանձու կայսեր սղաչանքով Մաքսիմոսի հետ դաշինք դնելէն ետքը երթալ ետ գարձաւ (387), ան աստեն խօսեցաւ աս ձառը։ Յովսէփ նահապետին գերազանց մարդութեանը գովեստ է, և թէ ինչպէս իր ուրիշ ամէն գործոցը մէջ՝ Քրիստոսի նախագուշակիչ և օրինակն էր։ Ոմանք աստր երկրորդ գիրքը կամ մաս կը սեպեն Յաղագս օրհնութեանց նահապետաց կոչուածը։ Ուրիշ վանական ձառեր կամ գրքեր ալ շարադրած է Եղիայի, Նաբովթայ յեզրայէլացոյ ու Յովբայ վրայ. ինչպէս նաև ընդարձակ մեկնութիւն մը սաղմոսաց և սրբոյն Ղուկայ աւետարանին։

Յաղագս պալատանց, գիր ԷԲ.—Կիկերոնի պատճառաւ գրքին նմանութեամբը յօրինած է աս գիրքս Ամբրոսիոս. անով է որ հռովմայեցի իմաստասիրէն շատ տեղ փոխ կառնէ և կընդօրինակէ։ Բայց ինքն իսկ կըսէ թէ հեթանոս մատենագրին ուղիղ սկզբանցը հետևելու աստեն՝ ամէն ջանք ըրած է անոր սխալները սրբագրելու։

Յաղագս խոստանաց աստ ծոյր ի՛ր Մարիէլլինա.—

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:23 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ամբրոսիոս՝ ինչպէս ուրիշ սուենախօսութեանց
մէջ, սաանկ ալ կուսութեան վրայ խօսելու ա-
տենն այնպիսի զօրաւոր լեզու և հանճար մը բա-
նեցուց, որ շատերը նոյն արբանկոն վարուց հե-
տևելու փափաքով վառուած՝ աշխարհքէ կը հրա-
ժարէին. ինչուան մարք ալ և աղջկունք՝ քրիստո-
սական սիրով մը զմայլած՝ արդեւական կեանքն
ամէն բանէ վեր կը սեպէին: Ա բաներս երբոր
լսեց սրբոյն քոյրը Մարկելլինա, խնդակցութեան
Թուղթ գրեց իցեն, և ապաչէց որ կենդանի ձայ-
նով զուրցածները գրի վրայ առնէ և իրեն իսըր-
կէ, որպէս զի ինքն ալ չահի: Այսպիսի բարի ա-
ռաջարկութեան մը դէմ չկրցաւ դնել Ամբրո-
սիոս, և աս գիրքս շարադրելով իրեն իսրկեց
(377): Ակէ զատ է Յաղագս կուսութեան կոչուած
գիրքը, և նոյն նիւթին վերաբերեալ ուրիշ այլ
եւայլ երկասիրութիւնքը:

Ա- Գրաֆիանոս Օգոստոս՝ յաղագս հոգեւոր սրբոյ.—
Հաւատքի խնդրոց վերաբերեալ գիրք մը շարա-
գրեր ու Գրատիանոս կայսեր ընծայած էր սուրբն
Ամբրոսիոս: Կայսրն ան երկասիրութեան ոճին
և գրութեան կերպին հաւնելով խնդրեց իրմէ որ
հոգեւոյն սրբոյ աստուածութեան վրայ գիրք մը
յօրինէ: Ինչպէս տեսանք, նոյնպիսի նիւթոյ վրայ
գրած էին Բարսեղ, Աթանաս, Գ. նիւսացի և
այլք: Ամբրոսիոս սաոնց ամենուն գրուածքէն օգ-
տակարագոյն և հարկաւոր բաները քաղելով սա
սքանչելի գիրքս շարադրեց (381) ընտիր ոճով մը
և գեղեցիկ կարգաւ, ինչպէս նաև Յաղագս մարմնա-
ւորութեան բանին Ճառը:

Ամբրոսիոսի պամբանականները.— Բարոյական և
հոգևոր Ճառերէն զատ, որոնց գլխաւորները մի-
այն յիշատակեցինք, սուրբն Ամբրոսիոս արձակ
նականներ ալ շարադրած է: Առնց մէջ առջինն

է Մխիթարոնիան յաջափա Մահուան Վաղենտիանոսի։ Վաղենտիանոս կրոսեր երբոր Գաղղիայէն Իտալիա կը գառնար, Վեննա քաղաքին մէջ Արբոգաստոսի ներկայութեամբը սպաննուեցաւ (392)։ Քիչ առենէն Մարմինը Մեդիոլան բերելով Թէոդոս կայսեր հրամանաւը փառաւոր յուղարկաւորութիւն ըրին դժբաղդ՝ բայց առաքինի իշխանին, որ իր քանամեայ հասակին մէջ ալ մեծ յոյս կու տար թէ պետութեան և թէ կրօնից օգտակար ըլլալու։ Ամբրոսիոս աս արձանականովս անոր առաքինութեանց յիշատակն անմահացուց։

Արքանական՝ Մահն Թէոդոսի.— Երբոր մեծն Թէոդոս Մեդիոլանու մէջ վախճանեցաւ, Պնորիոս իր որդին, որ հօրը հիւանդութեան գոյժը լսած ըլլալով՝ արևելքէն հոն հասեր էր, ուզեց մարմինը Կոստանդնուպոլիս փոխադրել, ու մեծութեանն արժանի մահարձանով մը անոր յիշատակն անմահացընել։ Բայց աս փոխադրութենէն առաջ ուզեց որ Մեդիոլանի մէջ անոր մահուանը քառասնօրեայ յուղարկաւորութիւն ըլլայ։ Ան հանդիսին մէջ և Պնորիոս կայսեր առջևը խօսեցաւ Ամբրոսիոս աս արձանականը։

Ադոնցմէ զատ այլևայլ թղթեր ալ շարադրած է սուրբն Ամբրոսիոս։

Սբ. Ն Ամբրոսիոսի ոճը.— Սրբոյն Ամբրոսիոսի գրուածները աս յատուկ ձիրքն ունին որ հաճոյական և հրահանգիչ են միանգամայն։ Մեծավայելչութիւն, կուրուկ և աշխոյժ ոճով մը, և իր սրտին յատուկ քաղցրութեամբ մը՝ ուղիղ կրօնից թէ տեսականն և թէ բարոյական ամէն մասանց վրայ կը խօսի։ Ընդհանրապէս սուրբ գրոց բարոյական և այլաբանական իմաստքը կը մեկնաբանէ. բայց բառական իմաստքն ալ զանց չըներ։ Հաւատոյ վրայ դրած երկասիրութեանց մէջ ընդհանրապէս կար-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:23 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

գէ գուրա ձշդուԹիւն մը կը տեսնուի : Լաւ կերպով կը բացատրէ ամէնատուրը երրորդուԹեան խորհուրդը , հոգւոյն սրբոյ բղխումը Ի. Հօրէ և Յորդւոյ , սկզբնական մեղքը , մարդեղուԹիւնը , երկու բնուԹեանց միուԹիւնը յանձն Քրիստոսի , և այլն և այլն : Բարոյականն ալ ընտիր է , և ատ բանիս նկատմամբ գրած ձառերը՝ գերազանց երկասիրուԹիւնք : Բայց կարծես Թէ ինքիրմէ ալ վեր է հարիւր ուԹսուտանեւորդ սաղմոսին մեկնուԹեան մէջ . բարոյական ձշմարտուԹեանց գանձարան մըն է , ձարտարիմաստուԹեան , աստուածային նախանձու և բարեպաշտուԹեան հետ միացած : Ոձն ու լեզուն ալ իր գլուածոց և սրտին արժանի են :

ԳԼՈՒԽ ԻԷ .

ՍԱՒՐԲ ՀԵՐՈՆԻՄՈՍ

Հերոնիմեայ վարքը . — ԵրկասիրուԹիւնքը . — Գրաւորական ոճը :

Հերոնիմոսի վարքը . — Դամասոսիոյ և Պաննոնիոյ մէջ եղած Սորիգոն պզտի քաղաքը ծնաւ սուրբն Հերոնիմոս , Քրիստոսի 331 Թուին : Իր հայրը Եւսեբիոս հարուստ մարդ մը ըլլալով , որդին Հռոմ խրկեց , ուսկից զն հոն հռչակաւոր Դոնատոսի առաջնորդուԹեամբը գեղեցիկ դպրուԹիւն սորվի : Հերոնիմոսի պատանեկուԹեան հասակին անտագիւտ չեղաւ . բայց եռքը Աստուծոյ շնորհօքը լուսաւորուած՝ ձանչցաւ իր յանցանքն ու բոլոր սրտով ապաշխարեւով՝ մկրտուԹեան սուրբ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:23 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

խորհուրդն ընդունեցաւ 'ի Հռոմ՝ գլուխ իր եւ րեանեւրորդ տարուան հատակին :

Ուսմանց հրահանգներն առաջ տանելու գիտաւորութեամբ Հռոմէն Ալգուխլէա անցաւ , ուր նոյն տեն շատ անուանի մարդիկ կը գտնուէին . հոն երկար տեն կենալէն ետքը՝ Սուլիգոն իր հայրենիքը դարձաւ , ու առաջադրեց սրսեւելք երթալով տեղ մը քաշուիլ , ու առանձնական կեանքով օրերը լմընցընել : Թէպէտ հոն բոլորովին հոգեւորական կենաց եւ սուրբ գրոց ուսման տուաւ ինքզինքը՝ բայց սատանային լարած որոգայթներէն ազատելու համար հարկ եղաւ որ պահքն ու հրակումները չատցընէ . ան վախճանաւ ալ սկսաւ եբրայական դժուար լեզուն սորվիլ : Նոյն տեներըը Անտիոքայ եկեղեցւոյն մէջ այլեւայլ հերձուածք կային . ոմանք Մելիտոսի կողմը կը բռնէին , այլք Պաւլինոսի , ուրիշներըը Վիտալէսի , և ամենքն ալ կը ջանային իրենց կուսակից ունենալ զՀերմինիոս : Սուրբն անոնց ձեռքէն ազատելու համար Անտիոք դարձաւ , իր Եւագր բարեկամին քով , և հոն սկսաւ զՊաւլինոս պաշտպանել . Պաւլինոս ալ զինքը քահանայ ձեռնադրեց , բայց առանց պարտաւորութիւն մը դնելու վրան աս կամ ան քաղաքը կենալու կամ միայնական կեանքը թողնելու (376) :

Քահանայ ձեռնադրուելէն ետքը Հերմինիոս սուրբ աեղեաց այցելութեան ելաւ . ուր երկար տեն կենալէն ետքը Կոստանդնուպոլիս գնաց (380) , միտք ունենալով նավկանգացոյն առաջնորդութեամբն աստուածաբանական ուսմանց պարապիլ :

Դամասոս քահանայապետը՝ Անտիոքայ եկեղեցւոյն մէջ ծագած հերձուածը վերցընելու համար՝ մանաւոր ժողովք մը գումարեց 'ի Հռոմ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:23 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

(382). Հոն եկաւ նաև Հերոնիմոս՝ սրբոյն Եպիփանու և Պաւլինոսի հետ. որոնք ամբողջ ձմեռ կենալէն ետքը՝ նորէն արևելք գարձան. իսկ սուրբն Հերոնիմոս գրեթէ իրիք տարի Հռոմ անցուց, ու քահանայապետին կօդներ՝ արևելք և արևմուտք իրկած թղթերուն չարադրութեանը: Դամասոսի մահուընէն ետքը (384) սոխակեցաւ Հերոնիմոս Հռոմէն հեռանալ, հետն առնելով նաև Պաւլինիանոս կրօսեր եղբայրն և ուրիշ քանի մը անձինք: Երբոր Երուսաղէմ հասան, Հերոնիմոս ղերենք հոն ձգեց, ու ինքը Եգիպտոս անցաւ, Նիտրիոյ անապատներուն այցելութիւն ընելու համար: Անկէց նորէն Երուսաղէմ եկաւ, ու Բեթղեհէմի մէջ առանձնանալով սկսաւ նորէն եբրայական լեզուին ուսումն առաջ տանիլ: Քրիստոսի 410 թուականին էր՝ երբոր անակնկալ դիպուածէ մը հարկադրեցաւ իրեն սիրելի ուսմունքը նեբէն ետ կենալ. Ալարիկոս բռնաւորը Հռովմայ վրայ վազելով տակնուվրայ ըրեր, շատերը սպաներ, շատերուն ալ ինչքը գրաւեր ու զերեզք քաղաքին դուրս վռնտեր էր: Հերոնիմոս չկրցաւ արցունքը բռնել՝ երբոր տեսաւ Հռովմայ աղնուականքն սոդիս անգին թափառած, և անթիւ հարբասութեան տէր եղող մարդիկն՝ իրմէն հաց և նասելու խրճիթ կուզէին: Ասոնց օգնելու համար իր ամէն նախանձն ու փոյթը բանեցուց Հերոնիմոս. բայց հետևեալ տարին ինքն ալ հազիւ կրցաւ ազատիլ բարբարոսաց ձեռքէն, որոնք Եգիպտոս, Պաղեստին, Փիւնիկէ և Ասորիք արշաւեցին: Ասկէց հինգ տարի ետքն այլևայլ հալածանք ալ պեղագեանցմէ կրեց. վասն զի Պեղագիոս իրենց առաջնորդը հետևողներէն խումբ մը կազմած Բեթղեհէմ իրկեց, որպէս զի Հերոնիմոսի ձեռքին տակ եղող բոլոր կրօնաւորքը ցրուեն: Անոնք

ալ սրտով ու կրակով եկան՝ ոմանք սպաննեցին, շատերը վիրաւորեցին, ու բնակութիւննին քանդեցին։ Ն. յատկսկ նեղութեան մը վրայ յերկրաշարժեաց չըլլալով սուրբն Հերոնիմոս, մեռաւ Քրիստոսի 420 թուականին։

Հերոնիմոսի երկասիրութիւնը.— Սրբոյն Հերոնիմոսի երկասիրութեանցը մէջ առաջինն է աստուածաշունչի լատինական թարգմանութիւնը, զոր արևմտեան եկեղեցիք կը գործածեն, և իրենց լեզուովը Վուլկատա (Vulgata) կամ հրապարակեալ կը կոչուի։ Դիտելու արժանի պարագայ մը կայ որ հին կտակարանին ամէն գրքերուն թարգմանութիւնը սրբոյն Հերոնիմոսի երկասիրութիւններէն չէն։ Սաղմոսաց գրքին հին թարգմանութիւն մը գտեր էր Հերոնիմոս և Որոգինեայ վեցկնեան օրինակին հետ բաղդատած. նոյնպէս հին են նաև Բարուքայ, իմաստութեան, Ժողովողի և մակաբայեցւոց գրքերուն թարգմանութիւնքը, ինչպէս նաև ջրոց աւետարանաց, զոր Հերոնիմոս Դամասոս քահանայապետին հրամանաւը յունականին հետ բաղդատեց։

Սուրբ գրոց թարգմանութիւնը լմընցնելէն ետքն ուրիշ աշխատութեան մը ձեռք զարկաւ Հերոնիմոս, այսինքն հին և նոր կտակարանի մէջի անուանց ստուգաբանութեանը։ Յառաջաբանին մէջ կըսէ թէ Եւսեբիոս կեսարացւոյն է սա երկասիրութիւնս, և թէ ինքն ուրիշ բան չէ ըրած՝ բայց եթէ՝ի յունականէն՝ի լատին փոխել։ Սուրբ գրոց այլևայլ դժուարին տեղերուն մեկնութիւն ըրած է Հերոնիմոս, ու զանազան թղթերով իր բարեկամներուն ուղղած։ Կը թողնենք յիշատակել իրեն ուրիշ թղթերն ալ, ինչպէս նաև մարտիրոսութեանց և աւետարաններուս և առաքելականաց թղթոց մեկնութիւնը։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:24 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Հերոնիմեայ գրաւորական ոճը. — Սուրբ հարց մէջ ամենէն աւելի համառօտութիւն ունեցողը Հերոնիմոս է. վասն զի իրմէն առաջ եղող ամէն եկեղեցական մատենագրաց գրուածներն աչքէ անցուցեր էր, ու մեծ համառօտութիւն ստացեր գրեթէ ամէն ուսմանց մէջ, բայց ամենէն աւելի եկեղեցական և արուսաքին պատմութեան: Ոճն ընտիր, ազնուական, կենդանի և հաճոյական է. գրեթէ օգոստեան դարու մատենագիր մըն է: Սուրբ գրոց մեկնութիւնքն իր բոլոր երկասիրութեանցը մէջ ամենէն աւելի պարզ ոճով գրուածներն են. վիճաբանականներուն մէջ կրակոտ գրիչ մը կը գործածէ, որուն զօրութիւնն երբեմն չափէն աւ անդին կանցնի. իսկ թղթերը լեզուի գեղեցկութեան օրինակ կրնան սեպուիլ և գանձարան մը հմտութեանց:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:24 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԼՈՒԽ ԻԶ.

ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ

Ոսկեբերանի վարդը. — Երկոսիրութիւնը. — Ա՜ն՝ կեան թէոդորոս. — Ընդդէմ այնոցիկ որ պիծակեցան նեղլէն. — Յաղագս կուսութեան. — Յաղագս փառասիրութեան. — Յերանելին Բաբելաս և ընդդէմ Յուլիանոսի և հեղինակացոյն. — Ճառ յորժամ ի՛նանապրեցաւ փառասյ. — Յեպրոպիոս ներփինի. — Անդրիանոպոլսոյ. — Սաղմոսաց մեկնութիւն. — Եսայեայ մեկնութիւն. — Մեկնութիւն յաւետարանագիրն Մատթէոս. — Գործոց մեկնութիւն. — Մեկնութիւն ընդհոյն Պօղոսի. — Յովհաննու մեկնութիւն. — Ներբողներ. — Ոսկեբերանի ոճը և գրութիւն կերպը:

Ոսկեբերանի վարդը. — Քրիստոսի 347 թուականին ծնաւ սուրբն Յովհան ոսկեբերան Անտիոք քաղաքին մէջ, ազնուական ծնողաց զաւակ: Հայրը Սեկունդոս՝ նշանաւոր էր Սիւրիոյ մէջ իր վնասուորական պաշտամանքը. իսկ մայրը Անթուսա կը կոչուէր: Ճարտասիսօսութիւնը Լիբանիոսի ձեռքին տակ սորվեցաւ Յովհան, իսկ իմաստասիրութեան վարդապետն էր Անդրագաթէս, երկուքն ալ նրեանց արուեստին մէջ նշանաւոր անձինք: Մեծ համբաւ սկսաւ ունենալ իր ծաղիկ հասակին մէջ ալ՝ յատենական ուսմունս ունեցած յաջողութեամբը. բայց ինքը քան տպրուան եղած սաեհնն՝ ամէն աշխարհային ակնկալութիւններէ հրաժարելով ուզեց բոլորովին Աստուծոյ և իրեն ապատաւորութեան ընծայել ինքզինքը: Անտիոքայ

եպիսկոպոսը Մելիտոս՝ հրահանգեց զՅովհան, ու միտեալով ընթերցողութե՛ս առաւելանոր։ 373ին Անտիոք քաղքին մերձաւոր լերանց մէջ քաշուելով ճգնաւորի մը առաքինորդութեան յանձնեց ինքզինքն և հոն չորս տարի կեցաւ։

Բայց Յովհաննու պէս փափուկ մարմին ունեցողի մը համար անկարելի էր այսպիսի ճգնութե՛ց դիմանալ. հոգւոյն փրկութեան փափաքով՝ մարմնաւոր առողջութիւնը կորսընցուցեր էր. ուստի ստիպեցաւ Անտիոք դառնալ, ուր Մելիտոս զինքը սարկաւագ ձեռնադրեց (380)։ Մելիտոսի յաջորդը Փլաբիանոս՝ քահանայական աստիճանը տուաւ իրեն (385) ու քարոզիչ կարգեց, որն որ ինչուան ան առեն եպիսկոպոսաց յատուկ պաշտօն մըն էր։ Յովհաննու առաքինութեանց և գիտութեանց համբաւն անանկ տարածուած էր բոլոր արեւելքի մէջ, որ երբ կոստանդնուպոլսոյ Նեքտարիոս պատքիարքը մեռաւ (397), ամէնքը մէկբերան զինքն ուզեցին անոր յաջորդ, առանց իրեն չթաժարելուն նայելու։ Եպիսկոպոսութեան պաշտօնը վերան առնելուն պէս՝ աէրունեան հօտին քալ հովիւ մը երեւցաւ։ Արքունեաց մէջ յաճախած անկարգութիւնը տեսնելով՝ Արկադէոս կայսեր և Եւդոքսիա թագուհւոյն այլեւայլ խրատներ տուաւ. ժառանգաւորաց բարեկարգութեանը համար ամէն փոյթ գործածեց, ու աղքատները լանալու և անկեալոցներ կառուցանելու պատճառաւ՝ ինքը ժուժկալ ու չափաւոր կեանք մը կանցընէր. անոր համար ալ էր որ իր ամէն ուժովը մեծատանց հպարտութեան, շռայլութեան, պատկառելի և հպարտութեան դէմ կը կռուէր։ Ա յսպիսի քարոզութեամբն իրեն դէմ գրգռեց ընտրուհիոս՝ կայսեր սիրելին, զկարնան՝ զօրաց սպարապետը, զԹէոփիլոս՝ Աղէքսանդրու պատրիարքը,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:24 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

զԵդեսքսիա Թագուհին ու գզերքին ալ մէկ մասը։ Ասոնք ժողովակ մը գումարեցին Քալկեդոնի մեաեալը (403), ու հայրապետական իշխանութենէն զինքը ձգելով Բիւթանիա աքսորեցին։ Նոյն օրն որ Յովհան Կոստանդնուպոլսէն հեռացաւ, ահաւոր գետնաշարժէ մը բոլոր քաղաքը տակնուվրայ եղաւ. ինքն իսկ Թագուհին, որ սրբոյն աքսորման գլխաւոր պատճառն եղած էր, չտարակուսեցաւ Թէ աստուածային վրէժխնդրութիւն մըն էր ասիկայ. ու Թագաւորէն հրաման հանել տուաւ որ նորէն իր աթոռը գարձնէ։ Չազիւ Թէ հասնելուն ձայնը լսուեցաւ, բոլոր վրդովմունքի երեսը նաւակներով լեցուեցաւ. ամէնքը վազելու էին իրենց սիրելի հովուին ընդ առաջ ելլելու։

Ոսկեբերան նորէն ձեռք առաւ իր պաշտօնը, նոյն արիութիւնն ու նոյն եռանդը բանեցընելով. որով քիչ տաեներէն երկրորդ մըրիկ մը յարոյց լրեն գէմ։ Սրբուհւոյն Սոփիայ տաճարին մօտերը Թագուհւոյն արծրեթէ արձանը կանգնեցին. և աս հանդիսին մէջ այնչափ մեծցաւ խառնաղանջ ամբոխին աղազակն որ աստուածային պաշտամանց արգելք ըլլալով, սուրբ հայրապետը չկրցաւ իր եռանդը սանձել՝ այնպիսի անկարգութեան մը գէմ խօսելով։ Եւդոքսիա նախատինք սեպեց իրեն ասը բանս, ու երկրորդ անգամ ալ սուրբ հայրապետը աքսորել տուաւ։ Ան երկրորդ տարագրութեան տեղն էր որ սուրբ հայրապետը կսկիծներէն անցնելու ժամանակ՝ քաղքին հայազգեաց բնակչաններն մեր սուրբ Գրիգոր լուսաւորչին վրայ հետրոտ մը խօսեցաւ. Յունաց՝ լատինեան գաւանապարտած լեզուն՝ Հայք իրենց հօրը գովութեան գործածելին։ Բայց ճամբորդութեան վշտերն սկսան ծանրանալ վրան. կումնայէն քիչ մը անդին հիւանդացաւ. ուստի տեխուեցով նորէն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:25 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

քաղաք դառնալ, հոն հաղորդութեան սուրբ խորհուրդն ընդունեցաւ, ու սրտաշարժ աղօթքով մը իր Աստուծոյն հետ խօսելով իրեն աս սովորական մաղթանքն ալ ասելցուց. "փառք քեզ տէր, փառք քեզ. յաղագս ամենայնի տէր փառք քեզ,,: Ասանկ երջանիկ մահուամբ մը մեռաւ, գրեթէ վաթսուն տարուան հասակին, ինը տարի եպիսկոպոսութենէ ետքը (407):

Ոսկէբերանի էրիսիրոմէ-նը. — Գէորգ և նիկեփորոս յոյն պատմիչք ոսկեբերան հայրապետին համար կաւանդեն թէ հազար գրքէն աւելի շարադրած ըլլայ: Ասոնք ամէնքը ժամանակը մեր ձեռքը հասուցած չէ. բայց ունեցածնիս ալ շատ բան է, ու բոլորն ալ այնպիսի սուրբ վարդապետի մը գրչին և սրտին արժանի: Պատմութեանս համառօտութիւնը կըստիպէ զմեզ որ միայն գլխաւորութեան վրայ խօսինք:

Ա՟ ան՟ էաւն Թէոդորոս. — Կիլիկիոյ եպիսկոպոս էր Թէոդորոս, և սրբոյն Յովհաննու աշակերտակից: Անիկայ իրեն պատանեկութեան աստենը միայնակեցութեան փափաքով վառուած՝ հրաժարեր էր յաշխարհէ. բայց երկրաւոր պատրանաց դէմ դնելու բաւական արիութիւն չունենալով ընտրած վիճակէն ետ կեցեր էր: Իմացաւ սուրբն ոսկեբերան, և մեծ վիշտ եղաւ իրեն աս բանս. ուստի երկու գիրք գրեց առ Թէոդորոս յորդորելով որ յիշէ Աստուծոյ տուած խօսքն և իրեն դառնայ: Գանոնք երկու տարուան էր ոսկեբերան երբոր աս գիրքերը շարադրեց, որով իրեն երկասիրութեանցը մէջ առաջինն կրնան սեպուիլ (369). բայց աքանչելի ճարտարախօսութիւն մը մէջը կը տեսնուի, աստուածասէր սիրտ ու միտք մը, և ընկերին բարւոյն համար եռանդուն նախանձ. որով իր վախճանին ալ հասաւ ոսկեբերան: Ան

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:25 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

զի Թէոդորոս իմացաւ ան պատրանքը՝ որուն մէջ Թակարդեր էր զինքը բանտարկուն , որ նորէն Աստուծոյ ծառայութեան ձեռք զարկաւ :

Յաղագս խոստովանեան . – Աս գերազանց առաքինութիւնը , ինչպէս ասեանք , եկեղեցւոյ ուրիշ այլևայլ վարդապետաց ալ գրչին և վարդապետութեանը նիւթ եղեր էր : Անոնցմէ մէկէն վար չմնաց ոսկեբերան իր աս ճառին մէջ . մանաւանդ Թէ ամենէն գերազանց երևցաւ , ամուսնութեան սուրբ խորհրդոյն յարգը չզլանալով և կուսութեան գերազանցութիւնն անով աւելի ցցընելով : կամ յԱնտիոք չարադրեց աս գիրքս ոսկեբերան և կամ իր առանձնութեան ատենը . բայց ժամանակին կամ ասոնց վրայ որոշ բան մը չենք կրնար ըսել :

Ընդդէմ այնոցիկ որ չիայնակեացն նեղէն . – Ոսկեբերանի առաջին երկասիրութիւններէն սեպելու են նաև աս գրքերը : Վաղեմի իշխանութեան ժամանակ՝ արիոսեանք կրօնաւորաց դէմ ատելութիւն ունենալով կայսեր անունէ հասկցուցեր էին Թէ վանքերն անպիտան մարդիկներու բոյն են , և Թէ լաւ է զանոնք ցրուելը . ուստի Վաղեսի հրամանատը կերթային խեղճ միայնակեացքն իրենց հանգստարանէն գուրս կը հանէին , կը կեղէին կը չարչարէին , և ինչուան երբեմն ալ կը մեռցընէին : Ասոնց դէմ չարադրեց ոսկեբերան իր աս ճառերը . ինքը գեռ միայնակեցութիւնն ընդունած չէր , բայց փափաքը սրտին մէջ վառուած . գիտէր նոյն հրեշտակային կարգին ազնուութիւնն ու իրեն ժամանակի կրօնաւորաց վարուց ազնուութիւնը . ձգնարարութիւնը հզօր լեզուով պաշտպանեց իր աս գրքին մէջ :

Յաղագս փառասիրեան . – Ամեն ժամանակաց աւելի իրաւամբ չնաշխարհիկ երևցող քահանայու-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:25 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թեան գլխին նպատակն էնոյն անտուածային պաշտաման դերապանցուԹիւնը և մեծուԹիւնը ցցելնել: Բասիլիոս անուանով բարեկամ մը ունէր ոսկեբերան, որն որ միայնակեցական վարքաքով վառուած՝ կուզէր աշխարհէն հեռանալ, և կը յորդորէր զՅովհան որ իրեն ընկերանայ: Սրբոյն ալ ուզածն ան էր, բայց տարիքն առած մօրն ալ սպասանացը չկրցաւ դէմ գնել, որ կը խնդրէր մայրենի տանը մէջ կատարել իր ամէն ձգնուԹիւնքը, բայց զինքը չԹողուլ ինչուան որ մեռնի: Անոր մահուընէն եաքը Բասիլիոս նորէն սկսաւ իր յորդորանքը. ոս երկուքը մէկտեղ առանձին տեղ մը քաշուեցան: Բայց ուրիշներն անոնց ազդեցութեան համբաւովը շարժած՝ մէկերնին ուզեցին եպիսկոպոս ձեռնադրել: Երկուքն ալ մէկմէկու վրայ կը ձգէին, մէկմէկու առաքինուԹիւնը դրուատելով՝ անձանց անարժանուԹիւնը մէջ կը բերէին: Ոսկեբերան հնարքով մը զինքը փիլոգաղնեբուն ձեռքէն պահուըտեցաւ, որով Բասիլիոս սպիսկոպոսական պաշտօնը յանձն առնել: Բասիլիոս երբոր գանգատանաց ԹուղԹ գրեց առ ոսկեբերան, սուրբը տրամախօսուԹեան ձևով քահանայուԹեան սքանչելի գիրքը շարադրեց, յորում պաշտաման գերապանցուԹիւնը յիշեցնելով՝ հրաժարելուն իրաւունքը կը յայտնէ:

Յերոնէին Բաբելաս, և ընդդէմ Յուլիանոսի և հեթանոսաց. — Նուաճրիանոս կայսրը՝ հաւատացեալոց պաշտամանը ժամանակ Ասուծոյ տաճարն ուզելով մտնել, երբոր սուրբն Բաբելաս դէմ կեցաւ, բարկուԹենէն հրաման տուաւ որ սպաննեն զինքը: Անոր քաշայաղԹ նահատակուԹեան պատմուԹիւնն աս Ճառիս մէջ տորտպրած է ոսկեբերան. և մէկ կողմանէ երանելի եպիսկոպոսին

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:25 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

արուեստները դրուատելու ժամանակ՝ հեթանոսաց և մանաւանդ յունաց դէմ կը խօսի :

Ճառ յորժամ ՅՆոանդրէացս տհանայ . — Երբոր փլոքիանոս քահանայ ձեռնադրեց զինքը , սա ճառս խօսեցաւ ոսկեբերան , որ իր հրապարակախօսութեանը մէջ առաջինն է : Ինչպէս վարուցը համառօտութեան մէջ ալ յիշատակեցինք , ինչուան ոսկեբերանի ժամանակ քահանայք չէին կրնար քարոզ տալ ժողովրդեան . բայց որովհետև իրեն գիտութիւնն ու տառուածասէր փոյթը ծանօթ էր ամենուն , եպիսկոպոսը հրաման տուաւ իրեն : Ճառին սկիզբը՝ արքասէր հոգւոց արժանի խոնարհութեամբ մը՝ իր անձին վրայ քահանայական աստիճանին արժանաւորութիւն չտեսնելով զարմացմամբ կըսկսի իր խօսքը , եղածն երազ մը կը կարծէ կամ խաբկանք , ապա թէ ոչ , ինչպէս կարելի էր , կըսէ , ինծի պէս խեղճ մը՝ այսպիսի բարձրութեան հասցընել : Կը գովէ փլոքիանոս եպիսկոպոսին առաքինութիւնքը , և եկեղեցւոյ բարեկարգութենէ համար ունեցած փոյթը :

Յեաբրոպիոս նէրփինէ . — Ոսկեբերանի գլխաւոր ոսոխներէն մէկը Եւտրոպիոս , որ կայսեր հաճոյացած ըլլալով թէ կրօնից և թէ արքոյն դէմ մարտընչելէն չէր զգուշացած , յանկարծ կայսեր և ժողովրդեան ընդհարքէն ընկաւ , ու ամէնքը միաբերան անոր գլուխը կուզէին : Յուսահատեցաւ Եւտրոպիոս , կառաղի ամբոխի մը ձեռքէն չէր գիտեր ուր փախչիլ . միակ ապաստանարան գաւաւ եկեղեցին որուն դէմ այնչափ մաքառեր էր : Բայց ամբոխը թէպէտ արքունիքին պատիւը պահելով՝ ներս չէր մտներ , սակայն եկեղեցւոյն դրանը քովտեսիչ պէս կը մնայէր՝ անոր դուրս ելլելուն սպասելով : Իսկ Եւտրոպիոս վախէն թալկացած , ու գողգոջուն ձեռներով Աստուծոյ սուրբ

ին սեղաններէն բռնած՝ կը խնդրէր սուրբ հայրապետէն որ իրեն պաշտպանութիւն ընէ : Ամպիոնն ելաւ ոսկեբերան . Թշուառ իշխանին հանգամանքը , զամէնքը սարսափեցընողին գողալը , ամենուն վրայ իշխող անձին՝ արտասուօք իր կեանքը խնդրելը՝ յիշեցուցին իրեն Սողոմոնի այն ամենաճշմարիտ խօսքերը . “ Ողնայնութիւն ողնայնութեանց՝ ամենայն ինչ ընդունայն է ,, : Եւ քը խօսքը Եւտրոպիոսի դարձուց , ու գթած հօր մը պէս որ յանցաւոր որդին միանգամայն կը յանդիմանէ ու կը խրատէ , յիշեցուց աշխարհային վայելչութեանց անցաւորութիւնը , և թէ ինչպէս խաբուեցաւ՝ անոնց մէջ իր անձին երջանկութիւնը փնտրտելով . “ Ահաւասիկ , կըսէ , Թատերք , հաճոյից տեղիք , շողոմարար ամբոխն որ եռևէդ առջևէդ կը պարէին , ամէնքն ալ զքեզ Թողին . ու անիկայ միայն գրկեց՝ որուն դէմ բոլոր օրերդ պատերազմելով անցուցիր . եկեղեցին՝ զոր կը հալածէիր , անիկայ եղաւ քու վերջին ապաստանարան ,, : Վերջէն ժողովրդեան կը դառնայ . կը խնդրէ որ ներեն իրեն , նմանին մեր անիրաւութիւնքն իր արեամբը սրբող Աստուծոյն : Զարմանալի ազդեցութիւն մը ունեցան սրբոյն խօսքերը հոն ժողովելոց վրայ . Եւտրոպիոս , դէթ առ ժամն , ազատեցաւ իրենց կատաղի վրէժխնդրութենէն :

Անդրիանոպոլի . — Թէոդոսի իշխանութեան առեներ անախորժութիւնք փուճ պատճառի մը համար կայսեր վրայ բարկանալով , օր մը հրապարակը վազեցին , ու թէ իրեն և թէ Պուլքերիա Թագուհւոյն արձաններըը կոտրտեցին : Կրակ կտրեցաւ Թէոդոս երբոր սա անարգանքը լսեց . երդուցաւ՝ իր արհամարհուած քարէրէն արձաններուն վրէժը՝ բոլոր քաղաքէն ու մէջի բնակիչներէն առ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:37 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նել : Ժողովուրդը սարսափած՝ ինչ ընելիքը չէր գիտեր. զՓլաբիանոս իրենց հայրապետան աղաչեր խրկեցին առ կայսրն, ու ահուդողով անոր պատգամատուութեան ելիքը կըսպասէին : Ըսյն առեննելը խօսեցաւ ոսկեբերան իր աս անդրիանդականքը. ու Ժողովրդեան իրաւացի վախն իրեն առիթ առնելով ցցուց որ եթէ երկրաւոր թագաւորի մը դէմ ելած նախատինքն այսչափ ահաւոր բարկութիւն կը ծնանի, հապա ինչ պիտի ըլլայ երկնաւորին սրտմտութիւնը, երբոր մենք մեղքոնելս այնպիսի բարութեան մը դէմ պատերազմինք : Անդրիանդականքը քսանըմէկ են Թուով :

Աղմուսոյ ՀԻՆՈՒԻՆ. — Սաղմոսաց ընդարձակ մեկնութիւն մը շարադրած է սուրբն ոսկեբերան. ափսոս որ այսպիսի գրուածքի մը իրեքին մէկ մասը միայն ձեռնընիս հասած է. վասն զի 58 սաղմոսաց մեկնութիւն ունինք, իսկ մեկալ 92ը կը պակսին : Անոնք ալ մէջ շարադրեց աս ընտիր երկասիրութիւնս, երբոր աւելի հանգիստ վիճակի մը մէջ էր, ու Կոստանդնուպոլսոյ չփոթութիւնները չէին և հալածանքները ազատ : Հոն շարադրած կերևնայ նաև Եսայեայ մարգարէութեան առաջին ութ գլխոց մեկնութիւնը : Հաւանական է թէ առանձնութեան կամ սարկաւագութեանը ժամանակ սկսեր է շինել աս գիրքը, բայց քահանայական պաշտամանց հոգէն՝ աւեն չէ ունեցեր լրացընելու : Կը Թողնենք ուրիշ մարգարէից այլևայլ խօսքերուն մեկնութիւնը, որոնք անթիւ են, և մեր սահմանած համառօտախօսութիւնը չներեր մեզի վրանին խօսքերնիս երկընցընել :

Մէնոլիան յաւելուածոփրն Մափթէոս. — Ոսկեբերանի երկասիրութեանցը մէջ հրաշալիները մեկն է ասիկայ, և թերևս գերազանց քան զամենեսին : Առ Ժողովուրդն Անտիոքայ խօսած է

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:37 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ան Ճառերը, որբոյն Մատթէի խօսքերուն բուն իմաստը մեկնաբանելով անոնց, և վերջէն յորդորակ մը ուղղելով։ Ճառերուն մէջ սուրբ Հայրապետին գերազանց հմտութիւնը, և առաքինակրօն քաղաքավարութեան հրահանգը յայտնապէս կը տեսնուին. իսկ յորդորակները՝ անոր բուն առաքելական ոգին կը ցցընեն։ Աշխարհէն զզուած անձ մըն է ոսկեբերան. անոր խաբէութեանց պատրուակը բաց են իրեն առջին. ուստի ամէն ուժովը կը պատերազմի ան որոգայթներուն դէմ որոնցմով բանաւրկուն կորսոյ զհաւատացեալս։ Ճոխից դէմ կը խօսի անոնց ագահութիւնը, վաշխասիրութիւնը. անառակութիւնը վար զարնելու առեն՝ չի վախնար գժոխոց սրհաւիրքն առջևնին բանալ։ Թատերք իրեն համար առտնայի բնակութիւնք են. հոն յաձախողներուն դէմ կը սրճ իր լեզուն, առանց փոյթ ունենալու թէ իշխանք և թագաւորք ալ կը գտնուին մէջերնին. վասն զի իր առջևն անիկայ է մեծ՝ որ Աստուծոյ օրէնքը կը պահէ. անիկայ է թագաւոր՝ որ ախտից վրայ իշխած է։ Անոր համար կարեկցութեան աչք կը նայի աղքատաց վրայ. իրենց քաշած վշտակրութեանցը փոխարէն պատրաստուած բարիքը կը ցցընէ, ու անանկով խեղճերը կը փափաքէ։ Ա գրքին բարեմասնութեանցը վրայ այնչափ զմայլեր էր սուրբն Թովմաս հրեշտակային վարդապետը, որ արժանի կը սեպէր բոլոր փարիզ քաղքին գնովը զանիկայ ստանալ։ Կը ցաւինք որ մեր հայկական թարգմանութեան ամբողջ օրինակը ձեռնուընիս չէհասաւ։ Յունական սկզբնագրին մէջ իննսուն Ճառք են, ու չորս մասն բաժնուած. մենք միայն առջի երկու մասն ունինք ամբողջ. երրորդէն ալ հատուածներ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:37 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Գործոյ Մենուխեան. — Ոսկեբերանի ուրիշ գլուածոց մէջ տեսնուած ոճն ու ճարտարիոսութիւնն աստղ մէջ չերևնալուն, շատերն անհարազատ կը սեպեն: Հայկական մատենագրութեան պատմութեանը մէջ պիտի տեսնենք թէ Յովհաննու աս եկեղեցիրութեանն ալ թարգմանութիւնը՝ այլոց հետ հինգերորդ գարուն մէջ եղած է, սըրբոյն մահուընէն քիչ ետքը. որով անհարազատութեան տարակոյսն իր ուժը կը կորսընցընէ: Մեր ունեցած հայերէն թարգմանութիւնն առ այժմ քանի մը հատուած է միայն. բայց ինչպէս սրբոյն ուրիշ շատ գլուածոց թարգմանութիւններն եւս եւ եւս գուրս ելան, նոյնպէս ժամանակն աստ ալ ամբողջը յայտնէ:

Մենուխեան Եղնոյն Պօղոսի. — Գրեթէ սրբոյն Պօղոսի ամէն թղթոցը մեկնութիւն շարադրած է սուրբն ոսկեբերան, ինչպէս հռոմայեցւոց, կորնթացւոց, գաղատացւոց, եփեսացւոց, փիլիպեցւոց, կողոսացւոց, Թեսաղոնիկեցւոց, առ Տիմոթէոս, առ Տիտոս, առ Փիլիմոն և առ եբրայեցիս գրած թղթերուն: Ասոնք այլևայլ ճառեր են, զորս Մատթէի մեկնութեան պէս ժողովրդեան բացատրած է. բայց ի գաղատացւոց թղթէն՝ որ միանուագ ճառեր բաժնած չէ, այլ անընդհատ մեկնութիւն սուրբ առաքելոյն պատուիրանացն և խրատուց: Առիթը գալուն՝ դէմ կը խօսի անաստուածներ, մարկիոնեանց, մանիքեցւոց և Անոմոքայ մէջ քնակող քրիստոնեաներէն ոմանց, որոնք նախապաշարմամբ մը Հրէից պատերն ու շաբաթը կը պահէին, ու հեթանոսաց այլևայլ սովորութեանց կը հետևէին:

Յովհաննու Մենուխեան. — Աստուածբանութիւնը ճառ շարադրած է ոսկեբերան՝ սրբոյն Յովհաննու աւետարանին մեկնութիւն: Այս ճառիցը մէջ մատ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:37 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թէոսեան մեկնութեան կերպը բռնած չէ ոսկեբերան, որովհետեւ անոր մէջ քնագրին խօսքերը մեկնելէն եաքը՝ ընդարձակ յորդորակ մըն ալ կը յաւելու, քրիստոնէական առաքինութեանց կիրառութիւնը սորվեցընելու համար: Ընդհակառակն Յովհաննու մեկնութեանը մէջ համառօտ կերպով մը կը լուսաբանէ աւետարանչին խօսքերը, խիստ քիչ բարոյական անդրադարձութիւն ընելով. գլխոյն վերջը գրած յորդորակներն ալ համառօտ՝ և առջիններուն ուժն ու կորովը չունին: Ա տաբեթութեան պատճառը յայտնի է. ոսկեբերան հաւատացեալոց համար շարադրած չէ աս գիրքս, հապա անոնց դէմ որ Քրիստոսի աստուածութիւնը կուրանային. ուղղափառաց ձեռքը զէնք մը տալով ճշմարտութիւնը պաշտպանելու համար:

Ներբողներ. — Ոսկեբերանի նշանաւոր երկասիրութիւններէն կը սեպուին նաև ի պատիւ սրբոց շարադրած ներբողեաններըը, զորս թէ՛ յԱնտիոք և թէ՛ ի Կոստանդնուպոլիս խօսած է: Նոյն սիրտն ունոյն գրիչն է ատոնց մէջ ալ՝ ինչ որ իր ուրիշ գրքերուն: Գլխաւորներն են մակաբայեցւոց, Բաբեղայ, սրբոց մարտիրոսաց, աստուածազգեաց հայրապետին վրայ խօսածները: Ատոնցմէ շատ ատորին ոճ ունի լուսաւորչի վրայ խօսածը՝ զոր վերն յիշատակեցինք:

Ոսկեբերանի ընդունի և գրուելան կերպին վրայ պատմութիւն. — Եկեղեցւոյ վարդապետաց մէջ ամենէն աւելի ճարտարախօս լեզու ունեցողն է սուրբն Յովհան, ուստի և արժանապէս ոսկեբերան կոչուած: Ոճը պարզութեան և բնականութեան հետ վսեմ բարձրութիւն մը ունի, զուրցուածքն ալ հաճոյական, խորհրդածութեանց, այլաբանութեանց և հանճարաւոր նմանութեանց պատ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:37 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ձառաւս։ Հօր և հովուի պէս կը խօսի. բայց սիրելի հայր մըն է, գթած հովիւ մը, որ անուշութեամբ կը սորվեցընէ, և ամենայն ունկնդրաց փափաքելի կընէ առաքինութիւնը։ Գիւտերը շատ են. նիւթը ուզածին պէս կը փոփոխէ. ու իրեն վախճանին հասնելու համար անանկ ճամբաներ կը գործածէ՝ որոնց երբք չէս գիտեր, ինչուան որ հոն հասնիս։ Հրեից և ուրիշ հերետիկոսաց դէմ ալ քրիստոնէական կրօնքի ճշմարտութիւնը կապացուցանէ. հաւատար ճարտարութիւն ունի թէ՛ի հերքել զմոլորութիւն և թէ՛ի հաստատել զճշմարտութիւն։ Եպիսկոպոսութեան պատիւ երաշաւ, սիւն եկեղեցւոյ, իմաստուն մեկնիչ գաղտնեաց Աստուծոյ, արեգակն տիեզերաց։

ԳԼՈՒԽ ԻԹ.

ԿԻՐԵՂ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻ

Կիւրղի աղեքսանդրացւոյն վարքը. — Կիւրղի երկասիրութիւնքը. — Յաղագս պաշտաման հոգւով և ճշմարտութեամբ. — Եսայեայ, երկրպաւան մարգարէից և յովհաննու աւետարանչին մեկնութիւնք. — Գանձուց գիրք. — Մեկնութիւն նիկիական հանգանակին. — Ընդդէմ Նեստորի. — Սրբոյն Կիւրղի ոճը. — Թէոդորէտոս եպիսկոպոս Կիւրղիոյ. — Ելեղէական պատմութիւնը։

Կիւրղի աղեքսանդրացւոյն վարքը. — Աղեքսանդրայի էր ստուրբն Կիւրեղ, և ազնուական ծնողաց զաւակ. և որովհետև նոյն քաղքին թէոփիլոս եպիսկոպոսին քեռորդին էր՝ անոր մահուընէն ետքն

ինքն եղաւ անոր յաջորդ (412)։ Կիւրղէն առաջ ե-
ղող Աղեքսանդրիոյ եպիսկոպոսաց՝ մեծ իշխա-
նութիւն և իրաւասութիւն կը բանեցընէին. ուստի
ինքն ալ զանոնք հաստատուն պահելու համար ա-
մէն ջանքը գործածեց։ Նախ նովատեան հերե-
տիկոսներուն վրայ սկսաւ ցցընել իր իշխանու-
թիւնը. անոնց եկեղեցիները գոցեց, և գործա-
ծած ամէն արբունեան անօթները գրաւեց. Թէո-
պեմպտոս եպիսկոպոսին ալ ամէն իշխանութե-
նէ և ունեցածէն չունեցածէն զրկեց։ Անկէ քիչ
ետքը քաղքին Հրեայքը միաբանելով ձեռնարկին
զէնք առած գիշեր ատեն քրիստոնէից վրայ վա-
զեցին, ու անոնցմէ շատն սպաննեցին։ Օրը լուս-
նալուն պէս՝ Կիւրեղ ամբոխ մը մարդկան խրկեց
անոնց ժողովարանը, զերեզք քաղքէն վռընտեց,
և հրաման տուաւ քրիստոնէից անոնց ինչքը գրա-
ւելու։ Աղեքսանդրիոյ Որեստէս քաղաքապետը
շատ նեղացաւ Կիւրղեայ ասոր բռնած կերպին վրայ.
արդէն չէր կրնար քաշել եպիսկոպոսաց չափա-
զանց իշխանութիւնը նաև քաղաքական բաներու
մէջ, որոնց տեսչութիւնն իրեն կը պատկանէր. ուստի
կայսեր գանգատանաց թուղթ մը գրեց, թէ Կիւ-
րեղ ինքիր գլուխն՝ քաղաքը բնակչաց մեծ մասէ
մը զրկեց. Կիւրեղ ալ իր կողմանէ ուրիշ թուղթ
մը գրեց, Հրէից անիրաւութիւնքը ստորագրե-
լով։ Պաղեստինա Թագուհին, որ կրտսերոյն Թէո-
դոսի անուամբը տէրութիւնը կը կառավարէր, և
միշտ եկեղեցւոյ պաշտպանութիւն կընէր, արդա-
րացուց զԿիւրեղ։ Որեստէս սկսաւ ան առեղծ
յայտնի ցցընել իր առերեսութիւնը սուրբ հայրա-
պետին դէմ. Նիտրիոյ լերանց կրօնաւորքը՝ իրենց
պատրիարքին պաշտպան կենալու համար՝ սկսան
նախատել զՈրեստէս. իրենցմէ մէկը քարով մըն
ալ ճակատակար կերպով վիրաւորեց անոր գլուխը,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:38 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

և ալիսի սպաննեին ալ՝ եթէ ժողովուրդն սրգելք ջըլլար : Հիւպատոս անունով հռչակաւոր հեթանոս իմաստասէր կին մը կար. և որովհետև Որեստէս անոր հետ շատ անգամ կը տեսնուէր, ժողովուրդը կարծեց թէ քաղաքապետին՝ սրբոյն Կիւրղի դէմ ունեցած տաեղուծիւնը անոր գըրգռութենէն է, ուստի օր մը իմաստասիրուհւոյն վրայ վազեցին, ու քաշկըռտելով ինչուան եկեղեցւոյն դուռը՝ հոն չարտամահ սպաննեցին : Այս բռնութիւնները Կիւրղի կամայը դէմ էին բոլորովին. ուստի յանիրաւի ոմանք զինքը կը սեպեն պատճառ :

Ալեքսանդրացւոցն տաճն երևցաւ Նեստորիոս հերետիկոսապետը : Ասիկայ հայրապետ էր Կոստանդնուպոլսի, և նշանաւոր իր աստուածպաշտութեամբն ու նախանձով. բայց օր մը եկեղեցւոյն մէջ քարոզեց թէ անկարելի է զսուրբ կոյսն Աստուածամայր կոչել, որովհետև ինքը կին մըն էր, ու չէր կրնար ծնանել զԱստուած : Սուրբն կիւրեղ՝ որ Նեստորի բարեկամն ու անոր ընտրութեան վրայ ուրախացողներէն մէկն էր, առջինն եղաւ իրեն մոլորութիւնը հերքելու : Այս վախճանաւ գրեց իր Թուղթը առ միայնակեացս. որովհետև Նեստորի գրուածներն այսպիսի մոլորութեան մը վրայ ինչուան Եգիպտոս տարածուեր էին : Չանք ըրաւ կիւրեղ զնեստոր ալ հոմոզելու. բայց երբոր տեսաւ թէ այնպիսի յամառ ու հպարտ անձ մը շահիլն անկարելի է, Թուղթ գրեց առ կայսրն և Թագուհին, և կեղեստինոս Հռովմայ հայրապետին հաձութեամբը՝ անոր վարդապետութեանցը դէմ երկոտասան Նզովից գիրքը յօրինեց : Բայց անով ալ խնդիրը բոլորովին չմընացաւ. հարկ եղաւ ընդհանուր ժողովք մը գումարել Եփեսոս (431), ուր նախագահ նստաւ կիւրեղ. հոն Մարիամու աս-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:38 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

տուածամայրութեան վարդապետութիւնը հաստատուելով՝ նեստոր իր հայրապետական իշխանութենէն զրկուեցաւ։ Յաղովին լմընալէն ետքը՝ Անտիոքայ հայրապետը Յովհաննէս Եփեսոս հասաւ. և լսելով նեստորի հայրապետական պաշտամանէ զրկուիլը՝ զայրացաւ. հետեւողք եպիսկոպոսներուն հետ ինքն ալ ժողովք մը գումարեց, ուր կիւրեղ և Մեմնոն՝ իբրև հերձնակք խառվութեան՝ իրենց աթոռէն մերժուեցան։ Թէոդոս կայսրը թէ սանց և թէ նեստորի անկումը հաստատեց. բայց ետքն իմացաւ բանին ստուգութիւնը, և զկիւրեղ նորէն պաշտամանը մէջ հաստատելով՝ Աղեքսանդրիա դարձուց (431)։ Հոն մեռաւ կիւրեղ, Աղեքսանդրիոյ եկեղեցին գրեթէ երեսունուերկու տարի կառավարելէն ետքը (444)։

Կ. Աղեքսանդրացւոյն երկասիրութիւնը. — Աղեքսանդրացւոյն գրուածոցը մէջ գլխաւորներէն մեկը կը սեպուի Յաղագս պաշտաման հոգւով և ճշմարտութիւնեմբ կոչուածը, եօթնևւտասան գիրք։ Հարատեւութեանը վրայ ամենևին տարակոյս չկայ. ոյովհետև իրեն յատուկ լեզուէն զատ՝ կը վկայեն հին մատենագրաց շատը, ինչպէս Ղեւոնդ բիւզանդացի, Անդրեաս սամոսատացի, Եփրեմ անտիոքացի և Փոտ։ Տրամախոսութեան ձևով շարադրած է սա գիրքը, և զրուցատրութիւն ընդուներ են ինքն սուրբն կիւրեղ և Պալլադիոս անունով մեկը։ Հերձնակին նպատակն է ցցընել թէ մովսիսական գրոց (Հնգամատեանին) սահմանած ամէն օրէնքներուն, սահմանադրութեանց և արարողութեանց վախճանն է՝ աւետարանին պատուիրած պաշտօնը հոգւով և ճշմարտութեամբ։

Մենոնիեան Եսայեայ. — Սրբոյն կիւրղի գրուածոց մէջ կը յիշատակեն նաև սա երկասիրութիւնը՝ Ղեւոնդ բիւզանդացի և Եփրեմ անտիոքացի։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:38 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Աբելի բաւական մեկնութիւն է ասիկայ քան թէ նկարագրական. ինչպէս նաև Երկոփասան փոքր Մարգիոյը: Բայց առանկ չէ Յովհաննու ապէսթանէին մեկնութիւնը. ժամանակին հերձուածողաց նեղգլուխներուն առանելով բարեպաշտօն եպիսկոպոս մը, զոր մեկնութեան սկիզբը էղբայր կը կոչէ կիւրեղ, խնդրեր էր իրմէ որ ստորբ աւետարանին մեկնութիւնն ընէ, ու միանգամայն Քրիստոսի աստուածութեան և հաւատքի ուրիշ մասանց ճշմարտութիւնը ցցընելով հերետիկոսքը ըմբերանէ: Տասուերկու գիրք բաժնած էր ան մեկնութիւնը. մեր ձեռքը հասածները միայն տասը գիրք են, վասն զի եօթնեորդին և ութերորդին միայն հատուածներն ունինք:

Դանիէլ փիլ. — Գանձարանին մէջ եւսեբիոս հինգ առաջարկութիւն կը բովանդակուին աստուածութեան և բնութենակցութեան որդւոյ և հոգւոյն սրբոյ, ընդդէմ արիոսեանց ու եւնոմեանց: Ասոնց իր մատենադարանին մէջ կրսէ թէ կիւրղի գրուածոց մէջ ընտրելագոյններէն մեկն է ասիկայ, և յիրաւի գանձ մը ուղղափառ հաւատոյ: Երբորդութեան խորհրդոյն վրայ գրած է եօթն տրամախօսութիւնք. իրեք ալ Աթդէղութեան վրայ. որոնցմէ վերջինին մէջն է իր ան ուղղափառական մասք ըսած խօսքն ալ Մի է բնութիւն բանին մարմնացելոյ, որ եղաւ այլևայլ վիճակաց և գժտութեանց պատճառ եղած է:

Մենութեան նիկիական հանգանակին. — Մաքսիմոս անունով սարկաւագ մը ծանոյց սրբոյն կիւրղի թէ Նեստորի կուսակիցքը՝ իրեն մոլորութիւնքը Թէոդորի մոպսուեստացւոյն անուամբն արևելքի մէջ կը սփռեն, և շատերուն գայթակղութեանը պատճառ կըլլան՝ հաւատացընելով թէ նիկիական հանգանակին խօսքերն ալ իրենց կարծեացը հետ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:39 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

միաբան են : Իրեն խնդրանքը ձեռք զարկաւ կիւրեղ նոյն առաջ ժողովքին հարց միաքը բացատրել, և թէ ինչպէս մոլորեցուցչաց դէմ են նոյն հանդանակին մէջ ամփոփուած խօսքերը : Գրուածքը գվնասաւորելէն եառքը՝ արևելքի եպիսկոպոսաց և կրօնաւորներուն խրկեց . և գրեթէ ամենէն գովեստ և հաճութիւն ընդունեցաւ :

Ընդդէմ Նեսթորի . — Վերը յիշատակուած գիրքը բաւական չսեպեց կիւրեղ Նեստորի մոլորութեանց չար հետևանքը խափանելու : Բուն ուղղակի անոր կարծեացը դէմ ալ գրեց : Իմացաւ թէ Նեստոր իր մոլորութեան չատագովութեանը համար շարադրած բոլոր ճառերը մէկ գրքի մէջ ամփոփեր ու ինչուան հեռաւոր գաւառներ ցրրուել սկսեր է : Օրինակ մըն ալ կիւրղի ձեռքն անցաւ : Իր ամէն հանճարն և ուժը թափեց կիւրեղ առ գիրքը չարադրելու, և վախճանին ալ հասաւ . Թող չառաւ որ Արիոսի մոլորութեան պէս բոլոր կայսերութեան գաւառացը մէջ ծաւալի, ինչուան արքունեաց մէջ ալ մուտ գտնէ :

Ալևայլ թղթեր ալ չարադրած է կիւրեղ առ զանազան անձինս, և մանաւորաբար առ կայսրն և Թագուհին, հաւատոյ այլևայլ խնդրոց նկատմամբ :

Սբ. Կիւրղի ոճը . — Վսեմ ու խորունկ հանճարի տէր էր կիւրեղ . իրեն յատուկ ոճ մը ունի՝ որ այլևայլ բարեմտանութեանցը հետ բոլորովին անմտան չէ 'ի թերութենէ : Մեկնաբանականներուն մէջ աւելի պարզ և դիւրըմբռնելի ոճ կը գործածէ . իսկ վիճաբանականներուն մէջ խոտոնկ և կլոակոտ հանճար ու գրիչ մը : Մեծ հմտութիւն ունի թէ եկեղեցական և թէ արտաքին մատենագրաց . անոր համար հակառակորդաց ներքաշուելիքն առանց դժուարութեան կը

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:39 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

խայտառակէ, ու մանաւանդ թէ իրենեւրովը զանոնք կը շփոթէ: Իր ատ յաւակութիւնքն աւելի կերևնան Նեստորի գէմ և Գանձուց գլխին մէջ:

Թէոդորէտոս էպիսկոպոս Կիւրիոյ. — Անտիոքայ մէջ ծնաւ Թէոդորետոս (393), ու մոպսուեստացւոյն և Յովհաննու ոսկեբերանի աշակերտեցաւ: 423ին առանց իր ուզելուն՝ Ասորւոց Կիւրիա քաղաքին եպիսկոպոս ձեռնադրուեցաւ: Եվեսոսի սիւնհոդոսն իբրև հերետիկոս դատապարտեց զինքը (449), որովհետև առանց Նեստորի յայտնի պաշտպանութիւնն ընելու, Եվեսոսի ընդհանուր ժողովոյն դէմ գրեր էր. բայց Քաղկեդոնի ժողովքը զինքն արդարացուց:

Թէոդորետոսի աստուածաբանական գրուածոց մէջ անուանի է իր Եկեղեցական պատմութիւնը, հինգ գիրք. 325էն մինչուան 429, Թէոդորոսի մոպսուեստացւոյն մահուանը տարին: Հեղինակս ալ վարուա, որ Թէոդորետոսէ գրոց տպագրութիւնն ըրած է, կը համարի թէ իրեն ատ գիրքը շարադրելուն գլխաւոր նպատակն եղած ըլլայ Սոկրատայ և Սոզոմենեայ գրոցը մէջ երևցած պակասը լրացընել. իսկ փաճէի կը կարծէ թէ ընդհակառակն ատ իրեք հեղինակներն ալ մի և նոյն ժամանակ շարադրած են իրենց երկասիրութիւնքը, և թէ Սոկրատ և Սոզոմենոս՝ կոստանդնուպոլսոյ եկեղեցւոյն պատմութիւնը յօրինեցին. իսկ Թէոդորետոս, որուն հմտութիւնը մեկնութեան շատ էր, և տեսութիւնքն աւելի ընդարձակ, անոնց սխալները սրբագրեց, ու արևելեան եկեղեցւոյ ամբողջ պատմութիւն մը տուաւ: Ամենայն վստահութեան արժանի անձ է Թէոդորետոս. իր կարծիքը չափաւոր են, և պատմութեանը մէջ անաչառ տեղեկութիւնք կը գտնուին՝ որ առանց իրեն անծանօթ պիտի մնային:

Generated on 2016-05-06 12:39 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

Ասիոածասէր պապմաւրիւն կոչուած ուրիշ գիրք մըն ալ շարադրեր է Թէոդորետոս. երանուն Ա-այնակեցաց կենսագրութիւն, որոնցմէ տասը ան-ձամբ ճանչցեր էր:

Քաղկեդոնի ժողովոյն կայսերական գործակա-տարին, Սպորատիոսի խնդրանքը, Հերմոածոց պատմութիւն մը շարադրեց Թէոդորետոս (415), հինգ գիրք, որ սրբոյն Եպիփանու համանուն եր-կասիրութենէն աւելի ընտիր է:

ԳԼՈՒԽ Ի.

ՍՈՒՐԲ ՕԳՈՍՏԻՆՈՍ

Ս. Օգոստինեայ վարքը. — Գրուածքները. — Ընդդէմ Մանիքէացոց. — Յաղագս վարդապետի. — Յաղագս ազա-կաց անչնիչեան կամաց. — Հրաժարութիւն ընդ փու-պանապետաց Մանիքէացոց. — Հրաժարութիւն ընդ դռնա-պետաց. — Թուղթ առ Սիմպլիկիանոս. — Մեկնամարգա-րիւն տրիսդոնեի. — Գիրք ընդդէմ Պարմենիանոսի. — Հրաժարութիւն ընդ Փելիքս Մանիքէացոյ. — Յաղագս տառութեան մեղաց. — Յաղագս բնութեան և ընդհակ. — Յաղագս սրբոյ երրորդութեան. — Յաղագս տաղտկին Աստուածոյ. — Սրբագրութիւնք կամ եպս կոչոնի. — Օ-գոստինեայ մահը:

Օգոստինոսի վարքը. — Ափրիկէի Նումիդիոյ գա-ւառին Տագաստէ քաղաքը ծնաւ սուրբն Օգոս-տինոս, ազնիւ և հարուստ ծնողաց զաւակ (354), և իր առջի ուսմունքը Մադուրա քաղաքին մէջ ը-րաւ: Պատանեկութեան հասակէն իր հանճարին

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:39 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նշաններըը յայտնապէս կը տեսնուէին թէ խօսքե-
րուն և թէ մանաւանդ գրուածներուն մէջ. քայց
նոյն եռանդուն հաստակն առիթ եղաւ որ, այլև-
այլ սխալմանց մէջ իյնայ, ինչուան որ Աստու-
ծոյ շնորհքը հասաւ վրան, երբոր Մեդիոլանու
մէջ սրբոյն Ամբրոսիոսի խօսքերովը շարժած՝
ան հաւատքն ընդունեցաւ որուն դէմ այնչափ
մաքառեր էր: Ամբրոսիոսի ձեռքէն մկրտութիւնն
ընդունելէն հետը (387), ուղեց նորէն իր հայրե-
նիքը դառնալ. քայց նախ երկար աուն Հռոմ կե-
ցաւ. և երբոր Ւփրիկէ երթալու համար Ոստիա
գնացեր էր, հոն մեռաւ մայրը սրբուհին Մոնի-
կա: Տրտմութեամբ շարունակեց Ճամբան Օգոս-
տինոս (388), ու կարճագինէ հասնելով քանի
մը տարի կեցաւ, ինքզինքը բոլորովին պահոց, ա-
ղօթից և աստուածպաշտութեան հրահանգաց
տալով: Երբոր Հիպպոնա անցաւ (391), քաղա-
քին եպիսկոպոսը Վաղերիոս՝ ուզեց քահանայ
ձեռնադրել զինքը: Օգոստինոս չատ դէմ կեցաւ.
բայց տեսնելով որ անկարելի է զինքը համոզել,
աղաչեց որ գէթ ձեռնադրութենէն ետքը քանի
մը օր տայ իրեն պատրաստուելու. սուրբ խոր-
հուրդքն արժանապէս պաշտելու համար: Երբոր
սահմանուած օրերը լմընցան, Վաղերիոս չէ թէ
միայն հրապարակաւ՝ հապա նաև իր առջևը հրա-
մայեց որ քարոզէ: Օգոստինոս՝ քաղքի գլխաւոր
եկեղեցւոյն մօտ մենաստան մը հաստատեց, ու հոն
այլևայլ բարեպաշտ անձինք ժողվելով՝ անոնց հետ
մէկտեղ առաքելոց ժամանակի քրիստոնէից կեան-
քը կանցընէին: Իր աշակերտներն էին Ալիբիոս,
Եւոդիոս, Պոսիդոնիոս և այլք. որոնք ետքը ե-
պիսկոպոսութեան աստիճանին արժանի սեպուե-
ցան: Ան տեսնելն էր որ սուրբն Օգոստինոս
սկսաւ թէ խօսքով և թէ գրուածներով մանիքե-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:39 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ցոց, գոնատեանց, Թափառականաց, պելագեանց և ուրիշ հերետիկոսաց դէմ կռուիլ. ո՞րոնք ան առեններըը զօրացեր ու եկեղեցւոյ մեծապէս վնասակար կըլլային: Առնց ըրած չարեացը դէմ առնելու համար՝ կարթագինէի մէջ ժողով մը գումարեցաւ (393), հոն էր նաև Օգոստինոս: Գումարեալ եպիսկոպոսունքը սիրեցին զինքն որ իրենց առջև խօսի. ինքն ալ անանկ իմաստութեամբ և ճարտարախօսութեամբ մեկնեց հաւատոյ հանգանակը, որ ամէնքը մեկբերան՝ առաջ եկեղեցւոյ մէջ բարձրագոյն աստիճանի արժանաւոր սեպեցին զինքը: Վալերիոս վախնալով որ այնպիսի մեծ անձէ մը չզրկուի, իրեն օգնական առաւ յեպիսկոպոսութեան. ու Աֆրիկէի եպիսկոպոսաց գրելով և անոնց հաւանութիւնն առնելով Հիպպոնայ եպիսկոպոս ձեռնադրել տուաւ, Մեղալիոս Նումիդիոյ նախագահին (395): Ձեռնադրութեան չնորհքն առնելի եռանդով մը վառեց զՕգոստինոս. ամէն ուժովը հերետիկոսաց դէմ մաքառիլ սկսաւ, ու չատերը չկրնալով իրեն դէմ դնել, սիրեցան իրենց մոլորութիւննեըրէն հրաժարիլ: Այլևայլ ժողովքներու ներկայ գտնուեցաւ, ու անոնց գրեթէ ամենուն հոգին և կեանքն եղաւ, ինչպես՝ ի կարթագինէ (398), ՚ի Աֆրիկէ (401), և այլն և այլն:

Վանդալք Աֆրիկէի մէջ շատցեր էին, ու հրով և սրով ամէն տեղ ապականութեան արհաւիրքը կը տարածէին. Օգոստինոս երբոր տեսաւ որ Հիպպոնայի ալ կը մօտենան, խնդրեց յԱստուծոյ որ կամ իր ժողովուրդն ան բարբարոսներէն փրկէ և կամ զինքն աս աշխարհէս ազատէ: Իրեք ամիս հոգը ջերմ մը ունենալով, քանի մը օրուան մէջ վախճանեցաւ (430), 76 տարուան հասակին, 35 տարի եպիսկոպոսութիւն ընելէն հաքը:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:45 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Գրուածները. – Ձէ թէ միայն իր եռանդուն փութով ու նախանձայուզութեամբ, հապա նաև երկասիրութեանցը բազմութեամբն ալ նշանաւոր եղաւ Օգոստինոս: Մանաւոր հատոր մը պէտք էր եթէ իրեն գրուածոցը վրայ համառօտիւ ալ ուզենայինք խօսիլ: Մենք միայն նշանաւորները յիշատակելով գոհ ըլլանք:

Երբոր Մկրտութիւնն ընդունելէն ետքը նորէն Ափրիկէ դարձաւ, առջի երեքամեայ առանձնութեանն աւեն չարադրած գրքերուն. Հոգին աւրբ իր աստուածահրաշ ազդեցութեամբն սկսեր էր լեցընել անոր սիրտը, և յանկնայն ուռնայնասիրութենէ սրբել: Նոյն առանձնութեանն աւեն չարադրեց Ցաղափ վերտպէի կոչուած գիրքը, յորում աւրբը կը ցցընէ թէ Քրիստոսէ զատ մէկը չկայ որ այնպէս ուժով և աքանչելի կերպով ուսուցանէ:

Ցաղափ աղաչ կամ անչիչեան կամայ. – Սրբոյն Օգոստինոսի իրեն ժամանակակից հերետիկոսաց դէմ չարադրած ամէն գրուածոց մէջ մանաւանդ մտադրութեան արժանի եղողը Աղափ կամ անչիչեան կամայ վրայ յօրինածն է, իրեք գիրք: Թէպէտ եպիսկոպոսութենէն առաջ չարադրած է, բայց մէջը բովանդակուած հատուածոն և ճիշդ սկզբունքները՝ կատարեալ հերքումն են մարդկային ազատութեան դէմ մեքառող ամէն հերետիկոսաց մոլորական կարծիքներուն: Մանիքեցւոց աղանդը բոլորովին տակնուվրայ ընելու համար՝ անկախ՝ ի սկզբնական մեկուց երկու ազգ չարութեաց կը զանազանէ. այսինքն պատժոց և յանցանաց, որոնցմէ մէկը կը չարչարէ և միւսը կատարեանէ: “ Աստուած, կըսէ, պատճառ է առաջ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-05-06 12:45 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041475701
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նոյն, առանց իր բարուքիւնը կորսընցընելու. վասն զի բարի ըլլալուն համար է որ կը պատաժէ զչարագործս... իսկ մեկալին, այսինքն մեղաց, իւրաքանչիւր մարդուն իր կամքն է պատճառ,,: Ա ճառին մէջ է որ բանաւորութեան հասակը չունեցող և առանց մկրտութեան մեռնող մանկանց վրայ կը խօսի, և անոնց հանդերձեալ աշխարհին մէջ ունեցած վիճակին: Նիւթիս վրայ մանաւոր բան մը տահմանած չէ եկեղեցին. սակայն աս յայտնի է որ արդարոց փառքէն զրկուած են, բայց մեղաւորաց պատիժն ալ չունին. երկուքին մէջ կայան մը, զուրկ ի տեսութենէն Աստուծոյ, բայց առանց ըմբռնելու զԱստուած.

